

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ս. Ա. ՇՏԻԿՅԱՆ

ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(1851-1865)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1983

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն¹

«Քանզի ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանագրութեան»

(Մ. Խորենացի, Պատմություն հայոց, Բ., ՁԲ)

«Գրականությունն ու ժամանակագրությունը երկու աչքերն են պատմության»

(Վ. Հյուգո)

Ընթերցող և գիտական հասարակայնության ուշադրությանը ներկայացվող «Հայ նոր գրականության ժամանակագրության» ներկա՝ երկրորդ գիրքը, ուղղակի շարունակությունն է այդ նույն խորագիրը կրող մեր աշխատության առաջին հատորի, որն ինչպես հայտնի է հրատարակվել է Երևանում, 1973 թվականին: Նյութի ընդգրկման, նրա՝ ըստ ամենայնի ներկայացման, զանազան բնույթի բացատրականներ տալու և այլ՝ այս կարգի խնդիրները, ինչ խոսք իրենց հետ բերեցին որոշակի առանձնահատկություններ, որոնք առկա են այս երկրորդ գրքում, բայց դրանք, նախորդի համեմատությամբ էական տարբերություն չունեն, և այստեղ նրանց բնութագրման վրա ծանրանալը ավելորդ է: Մի կարևոր հանգամանք, սակայն, որն իրենով որոշ իմաստով պայմանավորում է «Հայ նոր գրականության ժամանակագրության» երկրորդ գրքի ոչ միայն կառուցվածքը, այլև ներքին բովանդակությունը, արժանի է փոքր-ինչ հանգամանալից քննության, քանզի նա բանալի է հանդիսանում սույն ժամանակահատվածի գրական-մշակութային կյանքը ավելի ճիշտ հասկանալու համար: Ինչպես հայտնի է, նախորդ հիսնամյակի նման հայ ժողովրդի հոգևոր-հասարակական կյանքը դարձյալ չէր զարգանում Հայաստան աշխարհի տարածքում, այլ շատ ավելի հեռուներում, ընդունված տերմինով ասած՝ գաղութներում: Իսկ XIX դարի երկրորդ կեսին, հասարակական-քաղաքական մի շարք պատճառների հետևանքով, մեր գաղթաշխարհներում զգալի տեղաշարժեր էին կատարվել: Ասպարեզից հիմնականում և ըստ ամենայնի դուրս էր եկել դարի առաջին կեսի նշանավոր մշակութային-մտավոր կենտրոններից մեկը՝ հնդկահայ գաղութը: Չկար այդ գաղութի պահապան հրեշտակը՝ հախուռն, անհանգիստ ու եռանդաշատ Մեսրոպ Թադիադյանը, որն իր գրական, թարգմանական, խմբագրական և հրապարակախոսական գործունեությամբ և երբեմն էլ գրեթե մեն-մենակ (մի բան, որ բազում առիթներով արձանագրել է նաև ինքը) կարողանում էր կազմակերպել ամբողջ հնդկահայության գրական-հասարակական կյանքը և համագային

¹ «Հայ նոր գրականության ժամանակագրության» ներկա հատորի ներկայացված էլեկտրոնային տարբերակում ներգրավված է միայն փաստագրական նյութը: Մեջբերումները միտումնավոր կերպով դուրս են թողնված, էլեկտրոնային ծավալը խնայելու նպատակով:

անուն ու ճանաչում ապահովել նրա համար: Թաղիադյանի մահվանից հետո (1858 թ., Պարսկասանի Շիրազ քաղաք), չնայած այդ համայնքը կաղն ի կաղն շարունակեց իր գոյությունն ու մշակութային գործունեությունը, հրատարակվեցին մի քանի ինքնուրույն և թարգմանական բնույթի գեղարվեստական ստեղծագործություններ, չնայած այն բանին, որ շարունակում էր իր կրթական գործունեությունը դեռ 1821 թ. հիմնադրված Կալկաթայի Մարդասիրական ճեմարանը, որը 60-ականներին նույնիսկ նշանակալից բարգավաճման էր հասել ու որպես այդպիսին մեծ անուն ու հեղինակություն էր ձեռք բերել հայաշատ վայրերում, սակայն իրադրությունը չփոխվեց: Հնդկահայ համայնքը, XIX դարի երկրորդ կեսից սկսած աստիճանաբար հետընթացք ունեցավ և իր գործունեությամբ այլևս չկարողացավ որևէ կայուն հետք թողնել Ժամանակի հայկական գրական-մշակութային կյանքում:

Դրությունը սակայն բոլորովին այլ էր Զմյուռնիայի հայկական գաղութում: Դեռ անցյալ դարի վերջերին թե՛ գրական-մշակութային և թե՛ հասարակական-քաղաքական առումով իր գոյությունն ազդարարած Զմյուռնիայի գաղթօջախը, մեր «Ժամանակագրության» ներկա գրքում արդեն հանդես էր գալիս իր ամբողջ ձայնով: Իր «անստերյուր ընթացքն» էր շարունակում Ղուկաս Պալոզարյանի «Արշալույս արարատյան» շաբաթաթերթը, որը կայուն հետևողականությամբ բարձրացնում էր հայ ժողովրդի հետագա քաղաքական ճակատագրի, նրա զարգացման հեռանկարների, նրա՝ առ Օսմանյան կայսրությունն ունեցած իրավունքների ու պարտավորությունների հետ առնչվող բազում «ազգապահպան» խնդիրներ, ոչ սակավ դեպքում հրատարակում էր ինքնուրույն և թարգմանական այլևայլ բնույթի գեղարվեստական ստեղծագործություններ: Շուտով նրան իր ձայնը միացրեց Հարություն, Կարապետ և Սարգիս Տետեյան եղբայրների համատեղ խմբագրությամբ հրատարակվող «Արփի արարատյան» գրական, բանասիրական, «ազգային և ուսումնական» ամսագիրը, որը սակայն, ի տարբերություն հասարակական հարցեր բարձրացնող իր «քույր» շաբաթաթերթի, ուներ որոշակի գրական թեքում. զբաղվում էր հիմնականում գեղարվեստական գրականության հրատարակությամբ ու թարգմանությամբ: «Արփի արարատյանի» էջերում էր, օրինակ, որ առաջին անգամ, Տետեյանի անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն արձակ թարգմանությամբ ու ծանոթագրություններով, հրատարակվեց Վ. Շեքսպիրի «Կատակերգություն սիսալանաց» գործը, Հակոբ Ոսկանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, Ռուժե դը Լիլի «Մարսելյոզը»: Զմյուռնիայի հայկական համայնքը, վերջապես, ունեցավ «Թուֆակ Հայկազյան» և ապա, սրա շարունակությունը հանդիսացող «Բողբոջ» պատանեկան-աշակերտական պարբերականները, որոնք լույս էին տեսնում տեղի Մեսրոպյան վար-

Ժարանի բարձր դասարանի աշակերտների ջանքերով, ունեցավ «Ափեղցփեղ» և «Դիմակ» հանդեսները, որոնք ըստ ամենայնի երգիծական բնույթ ու նպատակաուղղվածություն ունեին, ունեցավ կանացի հագուստների ու նորաձևությունների «Հավերժահարս» ամսագիրը և այլն:

Պարբերականների ու հրապարակախոսության բնագավառներում ծայր առած այս արթնացումը լրացվում ու ինչ-որ տեղ նաև ամբողջացվում էր գրական-ստեղծագործական և թարգմանական բնույթի եռանդաշատ գործունեությամբ: Այս առումով իզմիրահայ գաղութը, համանման բնույթի մեր մյուս օջախների համեմատությամբ, թերևս առաջին էր, որ արդեն ուներ թե՛ իր «մասնագիտացված» բանաստեղծները, արձակագիրներն ու դրամատուրգները և թե՛ իր թարգմանիչները: Դրանցից՝ Թովմաս Ըփհայմի «Տարերք մտավորական փիլիսոփայության» աշխատության Ղազարոս Պողոսյանի կատարած արևմտահայերեն թարգմանությունը (Զմյուռնիա, 1851 թ.), 1853 թ. Տետեյան եղբայրների ջանքերով հրատարակված «Պատմություն Օսմանյան...» աշխատությունը, որտեղ բերված ուշագրավ փաստերը չեն հնացել առ այսօր, նույն Տետեյաններից՝ Տիգրան-Հարություն Տետեյանի՝ Մովսիսի «Ագահն», «Ակամա բժիշկ», «Սերը բժիշկ է» կատակերգությունների՝ բնագրերից կատարված արևմտահայերեն թարգմանությունները (Անդ, 1854-1855 թ.թ.), գալիս են մեր ասածն ապացուցելու: «Իզմիրահայ գիտուն» Գալուստ Կոստանդյանի ստեղծած «Հասարակաց թանգարան» մատենաշարը, որը բաղկացած էր 16 հատորիկներից և որտեղ գիտահանրամատչելի մակարդակով քննվում էր բնական և հասարակական կյանքի այլևայլ երևույթները (օրինակ՝ Կենդանաբանություն, Բուսաբանություն, Երկրաբանություն համառոտ, Առողջապահություն և այլն), Հովհաննես Վանանդեցու «Տեսարան հանդիսիցն Հայկայ, Արամայ և Արայի», գեղարվեստական ստեղծագործությունը (Անդ, 1856 թ.), որը նույն հեղինակի գրչին պատկանող «Արփիական Հայաստանի» (Անդ, 1836 թ.) և «Ոսկիդար Հայաստանի (Անդ, 1841 թ.) գործերի հետ միասին, եկավ հավաստելու հայկական կլասիցիզմի՝ իզմիրահայ թևի վերջնականապես ամբողջացման և որպես այդպիսին իր ինքնուրույն գոյությունն ազդարարելու փաստը, բավարար հստակությամբ ի ցույց են հանում հասարակական-գեղագիտական հարցերի այն համախումբը, որոնք իր ուշադրության կենտրոնում էր պահում Զմյուռնիայի հայկական համայնքը:

Այս ամենի փոխարեն, XIX դարի 50-60-ականների մեր մշակութային-մտավոր շարժման անդաստանում, ավելի ու ավելի կայուն հետևողականությամբ, սկսում են իրենց գաղափարական փայաբաժինը բերել մեր «նորածին» գաղթօջախները: Այս տեսակետից զարգացում և պատմահասարակական յուրօրինակ վարքագիծ դրսևորեց Փարիզի հայկա-

կան համայնքը: 19-րդ դարի նույնիսկ 30-ական թվականներին, նրա մասին մեր պարբերականներում տպագրվող զանազան տեղեկությունները հիմնականում զետեղվում էին «Մանրալուրք» բաժնում և սահմանափակվում տեղական այս կամ այն դպրոցում հայ ուսանողների տված ավարտական քննությունների նկարագրության, կամ «համազգի երբայրների» կազմակերպած հերթական «հանդես-ճաշկերույթի» կամ որևէ նշանավոր «ազգայինի» Փարիզ գալու և տեղի «արյունակից բարեկամներին» հանդիպելու մասին տրվող մի քանի տողանոց կարճառոտ հաղորդումներով: Մակայն հետագայում փարիզահայ համայնքը սկսեց այնպիսի եռանդուն վերելք ու զարգացում ապրել, որ արդեն կարողացավ որոշիչ, իսկ ինչ-որ տեղ նաև վճռական դեր ունենալ ամբողջ հայ ժողովրդի թե գրական-մշակութային, և թե հասարակական կյանքում: Քննության ենթակա ներկա ժամանակահատվածում, փարիզահայ համայնքն արդեն ուներ իր սեփական հրատարակչական կենտրոնը, որն էր Ճանիկ Արամյանի հանրահայտ տպարանը և որտեղ, անհրաժեշտության դեպքում, կարող էին շարվածքներ կատարել նաև ֆրանսերեն լեզվով, ուներ իր երկու տպագիր պարբերականները՝ Գաբրիել Այվազովսկու «Մասյաց աղավնի» հայերեն-ֆրանսերեն երկլեզու ամսագիրը և Ստեփան Ոսկանյանի «Արևելք», ապա «Արևմուտք» կիսամյա հանդեսները: Նկատի ունենանք, որ վերջիններս հայկական-հասարակական երկու տարբեր հոսանքների ձայնավողերն էին: Համայնքը, վերջապես, ուներ դեռ 1849 թ. սկզբներին հաստատված և այս ժամանակաշրջանում իր եռանդալից գործունեությունը շարունակող կրթալուսավորչական «Արարատյան ընկերությունը» (նախագահներ՝ Հակոբ Արզումանյան, Հովսեփ Շիշմանյան-Ծերենց, Կարապետ Ութուջյան և այլն), ինչպես նաև 1855 թ. օգոստոսից Գ. Այվազովսկու տեսչությամբ իր գոյությունն սկսած «Արևելյան բազմալեզու վարժարանը», որը ծաղկուն ժամանակ մինչև 40 աշակերտ ունեցավ: Չմոռանանք, որ այդ տարիներին իր ոչ պակաս եռանդուն գործունեությունն էր ծավալել նաև Վենետիկի Միխիթարյան միաբանության տնօրինության ներքո գտնվող և շուրջ 20 աշակերտ ունեցող Մուրատյան վարժարանը: Այսպիսին է «Գաղղիո դժխո մայրաքաղաքին մեջ» հայազգիների ծավալած գործունեության համառոտակի նկարագրությունը:

Գրեթե նույնը պետք է ասել նաև Մոսկվայի հայկական համայնքի մասին, որը նույնպես, մեր քննելիք ժամանակահատվածում, արդեն լրիվ ձայնով ազդարարում էր իր գոյության փաստը: Այստեղ էր, որ 1858 թ. հունվարից, Ստեփանոս Նազարյանցի խմբագրությամբ սկսեց հրատարակվել հանրաձանաչ «Հյուսիսափայլ» ամսագիրը, որն առաջին իսկ համարից սկսած, վստահորեն իր ձեռքը վերցրեց ազգի մտավոր զարգացմանը տոն և ուղղություն տալու պարտականությունը և անվարան կերպով այն առաջ տարավ իր ամ-

բողջ գոյության ընթացքում: Այստեղ, Մոսկվայում էր, որ իր գիտական և թարգմանական գործունեությունն էր ծավալել նույն Ստեփանոս Նազարյանցը: Մոսկվայում և «Հյուսիսափայլի» էջերում էր, որ ձևավորվեց և իր «այրական կերպարանքին հասավ» մեր գրական-մշակութային կյանքի մյուս մեծությունը՝ Միքայել Նալբանդյանը: «Հյուսիսափայլի» հետ միաժամանակ, նույն 1858 թվականին էր, վերջապես, որ Ջարմայր և Մսեր մագիստրոս Մսերյանցների խմբագրությամբ, իր գոյությունն սկսեց կղերապահպանողական «Ճռաքաղ» ամսագիրը: Նման փաստեր կարելի է էլի բերել, սակայն ասվածն էլ հստակորեն գալիս է արձանագրելու Մոսկվայում հայկական համայնքի՝ մանավանդ դարի երկրորդ կեսին անուրանալի առաջընթաց ապրելու փաստը:

Այսպիսին է, համառոտակի, հայկական գաղութների կյանքում տեղի ունեցած պատմահասարակական տեղաշարժերի ընդհանուր բնութագրությունը, որի հետևանքով ծայր առած գրական-մշակութային բնույթի երևակումները չէին կարող իրենց համապատասխան անդրադարձումը չգտնել «Հայ նոր գրականության ժամանակագրության» ներկա հատորում:

* * *

1850-60-ական թվականների ժամանակահատվածը, որը կազմում է մեր «Ժամանակագրության» ներկա՝ երկրորդ հատորի տարողությունը, մասնագիտական գրականության մեջ գրեթե միանման գիտական գնահատականի ու բնութագրության է արժանացել: Այդ տարիները համարվել են որպես «Հայ ժողովրդի արթնացումն ու ակնառու վերելքը ցույց տվող մի շրջան» (Ե. Տառլե), որպես «Խոշոր չափեր ընդունող մտավոր շարժման տարիներ» (Լեո), որպես «Գրական-իդեական զարթոնքի ու հեղաբեկման մի ժամանակամիջոց» (Աշ. Հովհաննիսյան) և այլն: Այդպիսի է եղել նաև հայ գրականության պատմաբանների, արվեստի տեսաբանների, մեր հասարակական կյանքի այլևայլ հետազոտողների, տեսական-փիլիսոփայական մտքի ներկայացուցիչների՝ վերոհիշյալ տարիներին տրված բնութագրականները: XIX դարի 50-60-ական թվականներին ծայր առած հասարակական-քաղաքական նշանավոր դեպքերը, ինչպես նաև այն ներքին հեղաբեկումները, որոնք աստիճանաբար խմորվելով ու հասունանալով մեր ժողովրդի մտավոր ընդերքում կարողացան ամբողջ ուժով ու ներքին թափով դրսևորել իրենց և դրանով իսկ որակական նորանոր փոփոխություններ ապահովել ամբողջ ազգի զարգացման համար, գալիս են իսկապես ապացուցելու, որ աննախադեպ վերելքի ու գրական-մտավոր-մշակութային զարթոնքի մի մեծ շարժում էր ծայր առել:

Այդ շարժումը ծնող քաղաքական պատճառներից թերևս ամենակարևորն այն էր, որ հայ ժողովուրդը վերոհիշյալ ժամանակահատվածում, գրեթե չներգրավվեց մեծ տերությունների սանձազերծած աշխարհավեր պատերազմների մեջ: Եթե նախորդ՝ 1801-1850 թվականների շրջանում Կովկասի տարածքում ապրող հայությունը տեսավ երկու ռուս-թուրքական (1806-1812 և 1828-1829 թթ.) և երկու ռուս-պարսկական (1804-1813 և 1826-1828 թթ.) պատերազմներ, որոնք հիմնականում մղվում էին հայկական բնաշխարհում և որոնք բանակների կոխան դարձրեցին ամբողջ երկիրը, իրենց հետ բերելով կոտորածներ, սով, արյուն-ավեր և վճռականորեն կասեցրեցին մտավոր-մշակութային առանց այն էլ աննախանձելի մակարդակ ունեցող մեր երկրի զարգացումը, ապա այս առումով իրադարձությունները բոլորովին այլ ձևով են ներկայանում մեզ, ներկա՝ 1850-60-ական թվականների ընթացքում: Այս ժամանակահատվածում հայկական աշխարհի անդորրը խախտվեց միայն մեկ պատերազմով, որը հետագայում, պաշտոնական գրականության մեջ ստացավ «Ղրիմի կամ արևելյան պատերազմ» անվանումը, որը տևեց շուրջ երեք տարի (1853-1856 թթ.), և որն իր առջև ծառայեց խնդիրների ու նպատակների տեսակետից, բոլորովին այլ առաջադիր իրականացնելիքներ ուներ, քան նախորդները: Այդ պատերազմը ամբողջ աշխարհին և առաջին հերթին իրենց՝ Ռուսական միապետության կայսրությանն ու օսմանյան թագավորությանը ամենայն հստակությամբ ցույց տվեց նրանց կատարյալ հետամնացությունն ու երկրի ղեկավարության հարցում բթամտության հասնող ապաշնորհությունը: Հետևանքն այն եղավ, որ երկու տերությունների ղեկավարներն էլ անհապաղ ձեռնամուխ եղան իրենց երկրի հասարակական առաջընթացը կազմակերպելու աշխատանքներին: 1856 թվականին Կ. Պոլսում հրատարակված «Խաթթի հումայուն» անունը կրող արքայական հրովարտակը և 1861 թվականին Պետերբուրգում տրված հանրածանոթ «Մանիֆեստը», որն ազդարարում էր Ռուսաստանում ճորտատիրական կարգերի վերացման փաստը, եկան ապացուցելու, որ երկու վիթխարի տերություններն էլ, լավ-վատ, բռնել էին իրենց ներքին օրինաչափությունների թելադրությամբ պայմանավորվող զարգացման ուղին:

Ի թիվս մյուս ազգությունների, Թուրքիայի և Ռուսաստանի տարածքում ապրող հայ ժողովրդի համար էլ համեմատաբար տանելի պայմաններ ստեղծվեցին գրական-հասարակական առաջընթացը կազմակերպելու համար: Համազգային այդ եռքը նախ սկսվեց արևմտահայության մեջ և դրա իրավական դրսևորումը եղավ ազգի սահմանադրական կանոնադրություն ստեղծելու գաղափար-մտահղացումը, որը երկարատև քաջքուկներից, ավելացում-պակասացումներից հետո նյութական կերպարանք ստացավ 1863 թ. մարտի 17-ին, «Ազգային սահմանադրություն» անունով:

Իհարկե, ազգայնորեն նշանավոր այս երևույթը շատ շուտով ծնեց նաև իր հակադիր մտայնությունը: Հայ ժողովրդի քիչ ավելի հեռատես զավակները, որոնք ի վիճակի էին երևույթները քննել վերլուծող ուղեղներին բնորոշ սթափ տրամաբանությամբ, կարողացան կանխատեսել «Ազգային սահմանադրության»՝ ազգի համար ընդամենը մեղրածոր խոստում լինելը, և շտապեցին հանդես գալ նախազգուշացնող բնույթի ոչ քիչ թվով հողվածներով, բացեիբաց հրատարակելով իրենց տարակույսները: Ոսկանյանն օրինակ, «մեռելածին» անվանեց «Ազգային սահմանադրությունը», Նալբանդյանը՝ «թլպատված», Սվաճյանը՝ «թղթե օդապարիկ», Պարոնյանն այն կոչեց «ազգային սանձադրություն»: Այս բնութագրականները տարբեր առիթներով նրանք կրկնեցին հետագայում էլ: Բայց սկզբնական շրջանում, այսինքն սահմանադրության «մեղրամիսային» տարիներին, երբ հայ ժողովրդի մի ստվար հատվածը իր մեծ ու փոքր պարբերականների բերանով փառք ու օվսաննա էր գոչում թուրքական «առատագութ» ու «հայասեր» սուլթանի հասցեին, այս հակառակ մտայնությունը չկարողացավ որևէ վճռական դեր ունենալ և, հետևաբար, նկատելի ազդեցություն թողնել: Դեռ տարիներ էին անցնելու, դեռ գալու էին 80 և մանավանդ 90-ական թվականները, երբ պատմական դեպքերի անկասելի ընթացքը ի վերջո ակնբախորեն ցույց էր տալու, որ նրանք էին ճշմարիտն ու իրավացին:

«Ազգային սահմանադրության» հետ առնչվող դեպքերին քիչ ավելի մանրամասն անդրադառնալու պատճառն այն է, որ ըմբռնելի լինի արևմտահայության ներսում ծայր առած համազգային վերելքի հիմնական շարժառիթները: Դրա առաջին ու ամենացայտուն արտահայտություններից մեկը եղավ տարապայման սերն ու մղումը դեպի ուսումն ու ուսումնառությունը: Ազգային զարթոնքի հատկանշական գծերից մեկն էլ ազգային գիրգրականությանն ու մշակույթին զարկ տալու հակումն է, այսինքն՝ ուսումնական-կրթական գործի խթանումը: Այս միտքը իր առավել հրաշալի դրսևորումն է գտնում բոլոր այն դեպքերում, երբ քննում ենք արևմտահայության և արևելահայության հոգևոր արթնացումը ծնող ներքին շարժառիթները: Նորանոր դպրոցներ բանալու, բացվածները հովանավորելու ու գոյությունը մշտնջենական դարձնելու համար ջանքեր թափելու, գործող դպրոցներն ավելի բարեկարգելու և ուսուցչական կազմը հնարավոր բարձրորակ ուժերով համալրելու և այլ՝ այս կարգի աշխատանքները դառնում են XIX դարի երկրորդ կեսի մեր հասարակական կյանքի ամենաբնորոշ երևույթներից մեկը: Բավական է ասել, որ 1860-ականներին, Կ. Պոլսում արդեն գործում էր 30 հայկական դպրոց, որից շուրջ 6-ը իգական, Թիֆլիսում՝ 25, Բաքվում՝ 12:

Կրթական-դպրոցական գործի այս վերելքը, իհարկե այս դեպքում էլ, ուներ իր սոցիալական խորքը, և, հետևաբար, ծանրակշիռ պատճառաբանությունը: Հայաբնակ վայրերում հայկական դպրոցների՝ դարասկզբին նկատվող սակավությունը, իսկ որոշ դեպքերում էլ գոյություն չունենալը մի կողմից, ալիք-ալիք աճող հայազգի «պարմանիներին» ուսման տալու արդեն արթնացած կենսական պահանջը մյուս կողմից, աստիճանաբար սկսեց հանգեցնել այն անցանկալի երևույթին, որ հայկական ընտանիքներում ծնված և մեծացած հայ երեխաները ստիպված եղան ուսումնառության համար հաճախել ֆրանսիական, անգլիական, հունական, ռուսական, իսկ հետագա տարիներին՝ նաև գերմանական դպրոցներ: Հիշյալ՝ 1860-ական թվականներին օրինակ, երբ ինչպես ասացինք, հայությունը Կ. Պոլսում ուներ 30 ազգային դպրոց, հույները նույն այդ ժամանակահատվածում ունեին 77, իսկ հրեաները՝ 52 համանման հաստատություններ, և սա այն դեպքում, երբ թե՛ հույները, և թե՛ հրեաները Կ. Պոլսի հայության համեմատ քանակական փոքրամասնություն էին կազմում: Օտարադավան դպրոց գնալու և, հետևաբար, ազգայինից ու սեփականից խորթանալու, իսկ հազվագյուտ չէին նաև դեպքերը, վերջիններիս նկատմամբ թշնամությամբ ու արհամարհանքով լցվելու՝ ավելի ու ավելի որոշակի կայունությամբ նկատվող փաստերը տազնապ ու ներքին անհանգստություն առաջացրին այլևայլ քաղաքներում ապրող հայկական մատավորականության մեծ ու փոքր ներկայացուցիչների մոտ, որոնք շտապեցին իրենց վրա վերցնել այդ գործի կազմակերպումը: Դպրոցների հետ կապված կազմակերպչական հոգսերը, ավանդվող առարկաների ընտրությունը, տարբեր դպրոցներում՝ կապված նրանց տեղի ու պայմանների հետ, առարկաների տեսակների ու քանակի որոշումը, ուսուցչական կազմի ապահովումը և այլն, Էջմիածնի տնօրինությամբ իր վրա վերցրեց հայկական հոգևորականությունը: Դպրոցների կազմակերպման ու բացման՝ թեկուզ վերևում բերված օրինակները փոքր-ինչ ուշադրությամբ նայելիս, աչքից չի վրիպում այն հանգամանքը, որ նման բնույթ ունեցող աշխատանքների՝ ըստ ամենայնի խթանման գործում իրենց զգալի փայաբաժինն ունեն հոգևորականները, իսկ նրանցից՝ Աբել Մխիթարյանի, Կարապետ Շահնազարյանի, Գևորգ Վեհապետյանի, Սուքիաս Պարզյանցի, Խորեն Ստեփանեի, Վահան Բոստամյանցի, Մեսրոպ Սմբատյանի, Սարգիս Զալալյանի և էլի ուրիշների անունները առընդմիջտ կապված են XIX դարի երկրորդ կեսի հայկական դպրոցական-կրթական շարժման հետ:

Այս գործերը ավելի հաստատուն և տևական հիմքերի վրա դնելու պահանջը աստիճանաբար ծնեց, իսկ այս ժամանակաշրջանում արդեն տիրապետող երևույթ դարձրեց հասարակական-կազմակերպչական մի այլ ղեկավար մարմնի գոյությունը, այն է՝ մշակու-

թային ընկերության: Ժամանակագրական առումով սկիզբը դարձյալ դրեց արևմտահայու-
թյունը: Կ. Պոլսում հիմնված «Ընթերցասիրաց» (1852 թ. հիմն. Նիկողայոս Պալյան), «Մենե-
քերիմյան» (1852 թ. հիմն. Հ. և Գ. Օդաբաշյաններ), «Ազգասիրաց» (հիմն. 1853 թ.), «Բաժա-
նորդական» (1858 թ. հիմն. Գր. Օտյան) ընկերություններին, աստիճանաբար լրացնելու
եկան Տրապիզոնի «Գայանյան» (1852 թ. հիմն. Աղաջան Հովհաննիսյան), Ալեքսանդրապոլի
«Բարենպատակ» (հիմն. 1869 թ.) և բազում ուրիշ, այդ բնույթի հաստատություններ: Տարբեր
էին նրանց անվանումները և առավել քան տարբեր աշխատանքային գործունեության
նրանց մեթոդները, բայց բոլորի մոտ, առանց բացառության, հիմնական «կետ-նպատակ-
ներից» մեկը, որպես կանոն, նշվում էր «սատարել ազգին լուսավորությանը», «նպաստել
դպրոցին աշխատանքներուն», «օգտակար ըլլալ ազգին կրթությանը», «սատարել գիրքե-
րուն հրատարակությանը» և այլն:

Կրթական-մշակութային այս վերելքը, սկսած դեռ 1840-ական թվականներից, մի
ուրիշ երևակում էլ ունեցավ, որի համառոտակի քննությունը դարձյալ մտնում է մեր
խնդիրների մեջ: Դա՝ ընդհանուր ձևով ասած, դեպի ժամանակի առաջավոր մտավորական
կենտրոնները ուսումնառության մեկնելն էր: Այս երևույթը նախապես դարձյալ ծայր առավ
արևմտահայության մեջ, և այն ծնող սոցիալական պատճառները հասկանալու համար
պետք է հիշենք հետևյալը: Օսմանյան անձայրածիր կայսրության մեջ, սկսած 1789 թ. սուլ-
թան Մելիմ Գ-ի հրովարտակից, որով պաշտոնապես խրախուսվում ու խթանվում էր
ուսումնառությունը «գյավուրներին», այսինքն այլազգիներին, թուրքական որևէ բարձրա-
գույն ուսումնական հաստատություն ընդունվելն արգելված էր: Եվ միայն 1841 թ. սուլթան
Աբդուլ-Մեջիդի պետական հրովարտակով թույլատրվեց, որ «հայոց, հունաց ու հրեից ազ-
գերն ալ աշակերտ առնվի» Կ. Պոլսում, դեռ 1826 թ. իր գոյությունն սկսած միակ բարձրա-
գույն ուսումնական հաստատությունը՝ Զինվորական բժիշկների բարձրագույն վարժա-
րանն էր, որ ընդունում էր այլազգիներին (որտեղ ի դեպ, դասավանդումը կատարվում էր
ֆրանսերեն լեզվով), թեև այդ էլ կապվում էր «գյավուրների» մեծ խոչընդոտների ու սահ-
մանափակումների հետ: Իսկ եթե հավելենք, որ միայն 1851 թ. հրատարակվեց թուրքերեն
լեզվի առաջին քերականության դասագիրքը, իսկ 1858 թ. բացվեց թուրքական առաջին
իգական տարրական դպրոցը, եթե չմոռանաք, որ 1882 թ. հրատարակվեց թուրքական
գրականության պատմության առաջին դասընթացը և սկսած 1885 թվականից միայն՝ լույս
տեսավ թուրքերեն առաջին աշակերտական հանդեսը «Օրինակ առաջադիմության» վեր-
նագրով, իսկ հազիվ դարավերջին, այսինքն 1900 թ., սկսեց իր առաջին ուսումնական տա-

րեշրջանը Ստամբուլի համալսարանը², ապա հասկանալի կդառնա, թե ինչպիսի աննախանձելի վիճակում էր գտնվում կրթությունը Օսմանյան կայսրության մեջ, և թե ինչու արևմտահայ երիտասարդությունը իր ազգային դպրոցներում ուսում ստանալուց հետո, կայսրության տարածքում հնարավորություն չունենալով ավելի բարձր գիտելիքների հաղորդակից լինել, կամ ընդունված ոճով ասած՝ «կրթության երկրորդ աստիճան ստանալ», պետք է մեկներ Եվրոպա, ավելի ճիշտ՝ հիմնականում Փարիզ: Դա մի կատարյալ ուխտագնացություն էր, գիտելիքներ ձեռք բերելու համար արվող մի իսկական զոհողություն, որի նմանը հայ հասարակական կյանքում նկատվում է գերազանցապես այս ժամանակահատվածում: Առանց ուտելիքի ու հանդերձանքի, թողած հարազատներին ու սիրելի վայրերը, ցավագնորեն հաշտված այն սև մտքի հետ, որ ճակատագրական բաժանումը տևելու է տարիներ, հույսը դրած Փարիզում ապրող ծանոթ-բարեկամների օգնությանը, ապավինելով որևէ հայ «մեծատունի» առատաձեռն խոստմանը, քիչ ծանոթ լինելով ֆրանսերենին և բոլորովին անծանոթ փարիզյան բարքերին ու հասարակական կյանքին, հայազգի «պարմանիները» մեկը մյուսի հետևից հայտնվում էին Փարզում: Եվ դա՝ բացառապես հանուն ուսման, հանուն գիտելիքների:

Ուսումնառության մաղախը, ըստ մեզ հայտնի տվյալների, 19-րդ դարում առաջին անգամ իր ուսն առավ Հակոբ Կրճիկյանը, որը 1825-43 թթ. (ընդհատումներով) կարողացավ հասարակագիտություն ու լեզվի դասեր լսել Սորբոնում և որի հետևանքով պետական աչքի ընկնող գործչի ճանապարհի հարթեց իր համար: Ապա որոշ ընդմիջումներով իրար հաջորդեցին Սերովբե Վիչենյանը՝ հետագայի հասարակական գործիչ Սերվիչենը (1834-1839 թթ., ավարտել է Փարզի Բարձրագույն բժշկական համալսարանը), Նահապետ Ռուսինյանը (1840-1843 թթ., «Սենտ-Բարպ» վարժարան, ապա 1844-1849 թթ. Փարիզի Բարձրագույն բժշկական համալսարան), Հարություն Սվաճյանը («Սենտ-Բարպ» վարժարան), Հարություն-Գարեգին Տատյանը (1844-1848 թթ. ավարտել է Փարիզի Բարձրագույն տեխնիկական համալսարանը), սրա հետ գրեթե միաժամանակ՝ Նիկողայոս Զորայանը (1844-1847 թթ. ունկնդրել է Փարիզի համալսարանի բարձրագույն տնտեսական դասընթացները), փոքր-ինչ անց, Փարիզի ճանապարհը բռնեցին Նիկողայոս և Սարգիս Պալյան եղբայրները, որոնք տեղի Գեղարվեստից բարձրագույն դպրոցն ավարտելուց հետո, Կ. Պոլիս վերադարձան որպես ճարտարապետ շինարարներ և վիթխարի ավանդ ներդրեցին այդ գործում, ապա՝ Ճանիկ Արամյանը, որը Փարիզում այլևայլ ուսմունքների հետևեց ամբողջ 16 տարի (1846-1862 թթ.), Ստեփան Ոսկանյանը (1846-1852 թթ., «Սենտ-Բարպ», ապա Սորբոնի հա-

² Желтяков А.Д., Петросян Ю.А., История просвещения в Турции, М., 1965, стр. 168-170.

մալսարանի պատմության և գրականության բաժին), քիչ հետո՝ Կարապետ Ութուջյանը (1848-1851 թթ., ավարտել է Փարիզի «Առևտրական բարձրագույն վարժարանը»), Հովսեփ Շիշմանյանը՝ հետագայի հանրահայտ պատմավիպասան Ծերենցը (1848-1853 թթ., ավարտել է Փարիզի Բարձրագույն բժշկական համալսարանը), ապա Ավետիս և Թովմաս Խորասանձյան եղբայրները, որոնք հետագայում պետք է հայտնի դառնային իրենց մշակութային-հասարակական գործունեությամբ և ուրիշներ:

Վերոհիշյալ անունները բերված են առանց որևէ նախնական ընտրության, կամ առավել հայտնիները առաջին հերթին ներկայացնելու ընդունված սկզբունքի: Բայց անունների այս ցանկը թեթևակի նայելիս անգամ, արդեն ընդունելի է դառնում այն մեծ դերը, որը արևմտահայ գրական-մշակութային կյանքում կարողացան կատարել «Փարիզյան դպրոցի» հայազգի ներկայացուցիչները և որը, ի պատիվ իրենց, նրանք կատարեցին առավել քան ջանասիրությամբ ու եռանդով:

Փոքր-ինչ պակաս չափերով, բայց դրությունը հիմնականում նույնն էր նաև Արևելյան Հայաստանում. ուսման նկատմամբ ծայր առած համազգային եռքը այստեղ էլ խոշոր չափով զգացնել էր տալիս իրեն: Իսկ քանի որ վերևում հիշատակված «Ղրիմի կամ արևելյան պատերազմում» եվրոպական պետությունները և մասնավորապես Ֆրանսիան, Անգլիան ու Իտալիան հանդես էին գալիս ի պաշտպանություն թուրքիայի և ընդդեմ Ռուսաստանի և այդ քաղաքականությունը հետևողականորեն շարունակվեց նաև պատերազմից հետո, բնականաբար արևելահայ երիտասարդության՝ Եվրոպա ուսումնառության մեկնելու հարցը ասպարեզից դուրս էր գալիս: Մնում էր Ռուսական կայսրության՝ այդ իմաստով նշանավոր քաղաքները՝ Դորպատը, Պետերբուրգն ու Մոսկվան, և սկսած 1840-ական թվականներից, մտքի այդ կենտրոններում էլ իրար հետևից սկսում են հայտնվել արևելահայ երիտասարդության առաջին ներկայացուցիչները: Հիմքը XIX դարում դնում են են մեր մշակույթի երկու մեծերը՝ Խաչատուր Աբովյանն ու Ստեփաննոս Նազարյանցը, որոնցից առաջինը Դորպատում ուսանեց ամբողջ 6 տարի (1830-1836 թթ.), իսկ երկրորդը՝ 5 (1835-1840 թթ.), և որոնց կատարած վիթխարի դերը մեր ժողովրդի հոգևոր կյանքում հանրահայտ է: Ժամանակի առումով փոքր-ինչ ավելի ուշ Մոսկվա ուսումնառության մեկնողների պարագլուխները եղան Միքայել Նալբանդյանը (1853-1859 թթ.) և Ռափայել Պատկանյանը (1852-1855 թթ.): Այնուհետև իրար են հաջորդում վերոհիշյալ քաղաքներում սովորող հայազգի երիտասարդների ոչ պակաս հանրաճանաչ այնպիսի անուններ, ինչպիսիք են Պետրոս Սիմոնյան (Դորպատ, 1851-1853 թթ., տնտեսագիտության ֆակուլտետ), Քերովբե Պատկանյան (Դորպատ, 1851-1852 թթ., նույնը), Նիկողայոս Ալադաթյան (1852-1855 թթ.,

Մոսկվա, բժշկական ֆակուլտետ), Անանիա Մուլթանշահ (Մոսկվա, 1856-1861 թթ., նույնը), Հովհաննես Գուրգենբեկյան (Մոսկվա, 1856-1859 թթ. իրավաբանական ֆակուլտետ), Գևորգ Դոդոխյանց, (1852-1859 թթ., Դորպատ, դիվանագիտական ֆակուլտետ), Գաբրիել Տեր-Հովհաննիսյան (1860-1865 թթ., Մոսկվա, բժշկական ֆակուլտետ), Գրիգոր Արծրունի (Մոսկվա, 1863-1864 թթ., Պետերբուրգ, 1864-1865 թթ. երկու դեպքում էլ բնագիտական ֆակուլտետ) և այլն³: Եվ եթե ավելացնենք, որ Մոսկվայի համալսարանում էր, որ խմորվեց և աստիճանաբար հասունացավ §Գամառ-Քաթիպա⁴, գրական ընկերությունը, որը 1855 թ. Պետերբուրգում իր հրատարակած առաջին տետրակով ոչ միայն ազդարարեց հայ նոր գրականության պատմության մեջ նշանակալից ավանդ հանդիսացող նոր երևույթի առկայության փաստը, այլև հռչակեց հայ մի նոր դասականի ծնունդը, և եթե չմոռանանք, որ Մոսկվայի համալսարանում հայազգի ուսանողների կատարմամբ տրվող հայկական ներկայացումները իր տեսակի մեջ առաջինը լինելով՝ մշակութային վիթխարի գործ կատարեցին, շուրջ 10 տարվա գոյության ընթացքում յուրացնելով 8 անուն նոր գործի բեմադրություն (չհաշված այդ բեմադրությունների կրկնությունները), իսկ այդ ներկայացումների մասին Նալբանդյանի և Նազարյանցի դրվատական կարծիքները հանրահայտ են, ապա այս կապակցությամբ մեր ասելիքը կամբողջանա:

Այսպիսին է առ Եվրոպա և առ Ռուսական կայսրության մտավոր լուսավորական կենտրոնները արևելահայ և արևմտահայ երիտասարդության՝ ուսումնառության մեկնելու հարցի մասին համառոտ պատմությունը և այն ծնող սոցիալ-քաղաքական ու հասարակական պատճառների բացատրությունը:

Հարցը սակայն ամեննին էլ չէր սպառվում սոսկ ուսումնառությամբ, այս հասկացության գիտաակադեմիական իմաստով: Ուսանելու մեկնած հայազգի երիտասարդությունը, շփվելով ժամանակի տիրապետող մտայնության հետ, կարողացել էին լավ-վատ մարսել ազգային առաջադիմության, լուսավորության՝ իբրև գիտակցված անհրաժեշտության, կրթությանը զարկ տալու և այն սոցիալապես խրախուսելու, կղերականության կատարած պահպանողական դերի և նրա դեմ պայքար ծավալելու և այլ՝ նման բնույթի այն նոր ու բարձր գաղափարները, որոնցով այնպես լիովին հագեցած էին Փարիզը, Մոսկվան, Դորպատն ու Պետերբուրգը: Այդ գաղափարները կլանվում էին ազահ հետաքրքրությամբ, նրանց շուրջը կրթոտ վեճեր ու եռանդալից բանախոսություններ էին տեղի ունենում հայազգի սովորողների զանազան ուսանողական խմբակներում, երիտասարդ ու աշխույժ

³ §Լուումա⁵, 1903 թ. № 6, (§Գերմանական Դորպատ համալսարանը և նրա հայ ուսանողները!), §Հանդես Ամսօրյա⁶, 1941 թ. №№ 1-6, 7-12 (§Դորպատի հայ ուսանողությունը!), **Արշարունի Ա.** Մոսկվայի համալսարանը ու հայ առաջավոր ինտելիգենցիան, Երևան, 1955:

մտքերը աշխատում էին գտնել տվյալ հարցի ամենաբանական, հետևաբար ամենաճիշտ լուծումը, այսինքն՝ ի վերջո աշխատում էին ըստ ամենայնի ավելի խորանիստ ու ավելի բազմակողմանիորեն ուսումնասիրել տվյալ նոր մտայնությունը կամ նրա այս կամ այն հասարակական դրսևորումը: Այս գաղափարներով էլ զինված նրանք վերադարձան իրենց հայրենի բնօրրանը և, որ կարևորն է իսկույն ու անհապաղ ձեռնամուխ եղան այդ նոր գաղափարները հայկական հասարակական կյանքում ներդնելու աշխատանքներին: Այս էլ էր նորություն և հանդիսանում էր XIX դարի երկրորդ կեսի հայկական հասարակական կյանքը բնութագրող ինքնատիպ երևույթներից մեկը. մի բան, որ իր նախորդը չունեի ոչ դարի առաջին կեսին, և ոչ էլ նախորդ ժամանակաշրջանում: Իրենց հայրենի երկիրը վերադարձած բոլոր երիտասարդները, անկախ մասնագիտությունից, զբաղեցրած հասարակական տեղից ու դիրքից, թե Արևելյան Հայաստանում և թե Արևմտյան Հայաստանում, դեմառդեմ հանդիպեցին ազգային հետամնացության, կրթական-մշակութային միանգամայն աննախանձելի վիճակի, ոչնչով չհիմնավորվող ու չպատճառաբանվող բռնությունների և մեծ կորոզվող ու ավյունող ձեռնամուխ եղան այդ ամենը իրենց կարողությունների ու հնարավորությունների սահմաններում վերացնելու աշխատանքներին: Թե այս կապակցությամբ ինչեր կարողացան անել Նահապետ Ռուսինյանը, Հարություն Սվաճյանը, Նիկողայոս Զորայանը, Ստեփան Ոսկանյանը, Ստեփանոս Նազարյանցը, Ռաֆայել Պատկանյանը, Գրիգոր Արծրունին և էլի ուրիշներ, ասված է ու բազում անգամ վերլուծված: Նշենք միայն, որ դարի երկրորդ կեսին, ազգի մեջ ծայր առած համընդհանուր վերելքի շարժումը, բարեբախտաբար հենց սկզբից իսկ գտնվեց հուսալի ձեռքերում և նրանք էլ, Եվրոպայում կրթություն առած «ազգայինները», հիմնականում կարողացան ճիշտ ուղղություն տալ և առավել քան բանիմացությամբ ներքին բովանդակություն հաղորդել այդ շարժմանը:

Այդ մեծ վերելքը, երբ խոսքը վերաբերում է մշակութային գործունեությանը, ակնհայտորեն երևում է, երբ նախ՝ քննության ենք առնում հայկական մեծ ու փոքր պարբերականների հրատարակությունների հետ կապված հարցերը: Եթե 1801-1850 թվականների ժամանակաշրջանում հայկական թերթերի ու ամսագրերի աշխարհագրական տարածվածությունը հիմնականում տեղակայվում էր Օսմանյան և Ռուսական կայսրությունների տարածքներում և այն էլ մեծ մասամբ սահմանափակվում էր մեկ-երկու միավորանուններով, ապա պատկերը շեշտակիորեն փոխվում է հաջորդ տարիների ընթացում: Իրար հետևից հայալեզու պարբերական օրգաններ են սկսում հանդես գալ Զմյուռնիայում («Արփի արարատյան», 1853-1856 թթ.), Փարիզում («Արևելք», 1855-1856 թթ. «Արևմուտք», 1859, 1864-1865 թթ.), Վանի արվարձանը հանդիսացող Վարազում («Արծվի Վասպուրա-

կանի», 1856-1864 թթ.), Փարիզ-Թեոդոսիայում («Մասյաց աղավնի», 1855-1865 թթ.), Վիեննայում («Եվրոպա», 1858-1863 թթ.), Մոսկվայում («Հյուսիսսփայլ», 1858-1864 թթ., «Ճռաքաղ», 1858-1862 թթ., «Համբավաբեր Ռուսիո», 1861-1864 թթ.) և այլն: Արդեն չենք խոսում Կ. Պոլսի մասին, որը, ինչպես նախորդ հիսնամյակում, ավելի մեծ չափով, մանավանդ այս ժամանակաշրջանում, իր վրա էր վերցրել հայկական ժուռնալիստիկայի գործի առյուծի բաժինը: 1850-60-ական թվականներին հրատարակվող հայագիր պարբերականների թիվը մոտենում էր մինչև 30 անվան, իսկ նրանցից «Բանասերի» (1851-1852 թթ.), «Մասիսի» (1852-1908 թթ.), «Մեղվի» (1852-1908 թթ.), Հ. Չամուռճյանի «Երևակի» (1857-1866 թթ.), «Մուգայք Մասյացի» (1857-1858 թթ.), «Փունջի» (1860-1907 թթ.) և էլի ուրիշների անունները հանրահայտ են ու հանրաճանաչ, իսկ նրանց կատարած գործը մանավանդ, այսօր էլ հանդիսանում է, մասնագետների անընդմեջ քննության և ըստ ամենայնի ուսումնասիրության առարկան: Չմոռանանք նաև այն հանգամանքը, որ դարի երկրորդ կեսին, իրենց ամբողջ կարողությամբ և ներքին հնարավորությունների ու ունակությունների լրիվ դրսևորմամբ շարունակում էին հանդես գալ մեր այն պարբերականները, որոնք կյանքի են կոչվել դեռևս նախորդ հիսնամյակին, այսինքն՝ «Արշալույս արարատյան» շաբաթաթերթը (հիմն. 1840 թ.), «Բազմավեպ» հանդեսը (հիմն. 1843 թ.) և այլն:

Բայց սա հարցի մի կողմն էր միայն, եթե կարելի է այսպես ասել, ժամանակաշրջանի մշակութային երևակման սոսկ քանակական դրսևորումը: Այդ քանակի՝ իր հետևից որոշակիորեն նոր որակի բերելն անմիջապես նկատելի է դառնում, երբ սկսում ենք թեկուզ ընդհանուր ծանոթության սահմաններում, քննության առնել մեր պարբերականներին նյութեր մատակարարող անձանց ցանկը և մանավանդ նրանց գիտական-մասնագիտական պատրաստվածության չափը: Այդ նոր մակարդակը ավելի հեշտությամբ պատկերացնելու համար միտ առնենք, որ Զմյուռնիայում, դարի 40-ական թվականներին սկսելով իր «Արշալույս արարատյանի» հրատարակությունը, խմբագիր Ղուկաս Պաղազարյանը ամենատարբեր առիթներով ու հաճախ էլ առանց առիթների հորդոր էր կարդում ի «համագրի եղբայրներին» չքաշվել իր շաբաթաթերթին թղթակցելուց, առանց վախի ու ներքին անհարմարության, հակադրվել տիրող «հետախաղաց մտադրությանը», այսինքն՝ տարածված հետադիմական կարծիքին, ըստ որի «կազեթաճիությունը ամոթ կսեպվի եղեր»: Բազմաթիվ դեպքեր նշեց և մեկից ավելի օրինակով «փաստեց», որ եվրոպական դասական գրականության շատ ներկայացուցիչներ իրենց գրական բեմելն սկսել են պարբերականներին

թղթակցելուց, մինչև իրենց կյանքի վերջին օրերին իսկ չեն հրաժարվել դրանից, և, որ կարևոր է՝ այդ անելը միշտ էլ պատիվ ու հպարտություն են համարել իրենց համար և այլն⁴:

Այսպիսին էր ընդհանուր իրավիճակը XIX դարի 30-ական թվականներին, որը հաստատուն հետևողականությամբ բարեփոխվեց հետագա տարիների ընթացքում: Եվրոպական երկրներում իրենց դաստիարակությունն ստացած և պարբերականների՝ որպես հասարակության վրա անմիջաբար ներգործելու կոնկրետ միջոցի՝ բարձր գիտակցությունն ունեցող հայ երիտասարդությունը, աստիճանաբար այս ասպարեզում էլ կարողացավ իր ձեռքը վերցնել տիրապետող բարձունքները, կարողացավ այդ տրամադրություններով էլ վարակել տեղական ազգայիններին և հայրենական լրագրագիտության բնագավառում իրեն դրսևորել հրապարակախոսական, գրական-գեղարվեստական, գրականագիտական, պատմաբանասիրական և այլ բնագավառների այնպիսի նշանավոր անուններով, որոնք այսօր էլ կայուն ու անընդմեջ հետաքրքրություն են պահպանում իրենց նկատմամբ: Դրանցից՝ Ստ. Նազարյանցի, Մ. Նալբանդյանի, Աբ. Հովհաննիսյանի, Հ. Սվաճյանի, Գալուստ Կոստանդյանի, հայր և որդի Մսերյանների, Մ. Թաղիադյանի, Նիկ. Ջորայանի, Կ. Ութուջյանի, Մկրտիչ Խրիմյանի և շատ ուրիշների անունները և նրանց կատարած մեծ գործը հանրահայտ է: Այստեղ հավելենք, որ նրանց գործունեությունը նոր լիցք ու շարժում հաղորդեց հայկական հասարակական կյանքին, նպատակաուղղեց այն դեպի զարգացման մինչ այդ անհայտ հորիզոններ և այդ բոլորի հետևանքով որակային ավելի բարձր մակարդակ ապահովեց նրա համար:

Այս ամենը շատ որոշակի է դառնում և բացահայտվում առավել քան ցցուն ձևով, երբ ի մոտոք քննում ենք հարցերի այն համախումբը, որոնք իրենց թերթերում և ամսագրերում բարձրացնում էին հայազգի հողվածագիրները: 1852 թ. «Եվրոպան» (№ 6), «Խորհրդածությունք ազգային լեզվի վրա» հողվածով քննում էր լեզվի ու մտածողության փոխհարաբերության հարցերն ու դրանց դրսևորումները հայ գրականության մեջ, իսկ «Բանասերը» (№ 11), իր «Յաղագս սկզբնաւորութեան թատերական արուեստին այլ և այլ ազգս» ուսումնասիրությամբ, եվրոպական դրամատուրգիայի համառոտ ու խորանիստ բնութագրությունը տալուց հետո, առանձին մի հատված էլ նվիրում է հայ թատրոնի պատմությանն ու այդ հենքի վրա՝ նրա առաջիկա անելիքներին: 1851 թ. նույն «Բանասերը» (№ 2), տպագրեց «Լեզվի և գրության (իմա՛. գրականության- Մ.Շ.) վրա» հողվածը, որտեղ վերլուծության առարկա են դարձված արդի գրականության մի քանի հարցերը, 1852 թ. «Նոյան աղավին» (№ 40) հրատարակեց Նիկողայոս Ջորայանի «Վիպասանության վրա խորհրդածություն»

⁴ «Արշալույս արարատյան», 1847, N 299 («Ազգային»):

լրջմիտ «քննաքանությունը», որտեղ մատնանշեց հայ գեղարվեստական արձակի զարգացման ուղիները առաջիկայում, իսկ «Եվրոպան» նույն թվականին (№ 34), ի դեպ արդեն մի քանի անգամ հարց հարուցեց՝ հավաքել, վերծանել և ուսումնասիրել Հայաստան երկրի տարածքում հանդիպող «սեպակերպ արձանագիրները»: Չանցած մի քանի տարի, նույն «Եվրոպան» (№ 3), «Հայերեն տեսակ-տեսակ գրքերուն... համեմատությունը» հոդվածով, պահանջում էր ազգի հոգևոր պիտույքների համար ապահովել գիտատեսական, գործնական և գրական-գեղարվեստական բնույթի գրականությունը, «Մասիսը» (№ 58), նույն ուղղակիությամբ հայ մտավորականությունից պահանջում էր զբաղվել ազգային հնօրյա ձեռագրերի ուսումնասիրությամբ, «Բազմավեպը» (№ 7) Խ. Գալֆայանի «Բանաստեղծություն» հոդվածով քննում էր եվրոպական էպիտաֆիկ գրականության բնորոշ առանձնահատկությունները և այլն: Հարցեր և խնդիրներ էին սրանք, որոնք գրեթե չէին կարող արծարծվել դարի առաջին կեսին, կամ լավագույն դեպքում կարող էին արծարծվել մասնակի ու թեական ձևով, բայց որոնք բարձրացվում էին այս ժամանակաշրջանում և այն էլ ամբողջ ուժով ու ներքին լիակատար բովանդակությամբ: Մենք գիտակցաբար չենք խոսում Ստ. Նազարյանցի, Մ. Նալբանդյանի, Հար. Սըվաճյանի և այս խմբին դասվող մեր մյուս մտավորականների մասին, որոնց ծավալած գրական-հրապարակախոսական գործունեությունը ազգային ձև և դիմագիծ տվեց մեր ժողովրդին:

Ազգային զարթոնքը նախապատրաստող և այն խրախուսող ու խթանող հայ գործիչները բավականին հեշտությամբ գտան այդ ամենին է՛լ ավելի զարկ տալու թերևս ամենաբանական ձևը, այն է՝ հայ ժողովրդին եվրոպական գեղարվեստական մտքի դասական ներկայացուցիչների հետ թարգմանաբար ծանոթացնելը: Այդ բանն անելը նրանց համար ինչ-որ տեղ համեմատաբար ավելի հեշտ էր, որովհետև Փարիզում, Մոսկվայում կամ Իտալիայում ուսում ստանալու հետևանքով, նրանցից յուրաքանչյուրը ոչ միայն գրական-գեղագիտական որոշակի ճաշակ ու ըմբռնումներ էր մշակել իր համար, այլև կարողացել էր «զինվել» եվրոպական երկու-երեք լեզուներով. մի բան, որն այս դեպքում ամեննին էլ երկրորդական չէր: Ժամանակի երիտասարդ մտավորականությունը այս բնագավառում էլ աննախադեպ գործունեություն ծավալեց, և հետևանքը եղավ չափածո ու արձակ թարգմանական ստեղծագործությունների, մեծ ու փոքր հոդված-ուսումնասիրությունների այնպիսի մի պատկառելի ու բազմակողմանի քանակություն, որը նույնիսկ դժվար էր սպասել, և որը, անվերապահորեն, կազմում է այդ ժամանակաշրջանի մեր գեղարվեստական գրականության ամենաուշագրավ մասը: Իրար հետևից աշխարհ եկած «Շիլլեր» («Բազմավեպ», 1851, № 1, հեղ. Ղ. Ալիշան), «Հովհաննես Ռասին» (Անդ, 1852, № 9), «Կարոլոս Գոլդոնի»

(Անդ, № 13), «Պետրոս Կորնել» (Անդ, № 16), «Աղեքսանդր Դյումա և յուր Կոմս Մոնտե-Քրիստոն» («Նոյան աղավնի», 1852, № 8), «Գուլիլեմո Շեքսպիր» («Բազմավեպ», 1853, № 6, հեղ. Խ. Գալֆայան), «Միքելիջ (ի՛մա. Միցկևիչ – Ս.Շ.) բանահյուսը» («Արևելք», 1855, № 12, հեղ. Ստ. Ոսկանյան), «Վիկտոր Ալֆիերի» («Բազմավեպ», 1855, № 4), «Բուալո բանաստեղծը» (Անդ, № 22) և այլն, որոնցում ըստ հոդվածագիրների կարողության ու հնարավորության և ըստ տվյալ պարբերականի թելադրած հասարակական-աշխարհայացքային պրոֆիլի, բնութագրվում էր տվյալ դասականն ու վերլուծվում նրա գործունեությունը, ոչ պակաս առատությամբ իրար հաջորդած չափածո և արձակ թարգմանությունների հոսքը, որոնցից՝ Աղեքսանդր Դյումայի «Մոնտե-Քրիստո» վեպի թերթնային թարգմանությունը («Նոյան աղավնի», 1852, № 8, մնացել է անավարտ), Վիկտոր Հյուգոյի «Աղոթք հասարակաց» («Բազմավեպ», 1853, № 12, թարգ. Խ. Գալֆայան), «Յոյս Աստուած» (Անդ, № 17), Լամարթինի «Հովիտ» («Արփի արարատյան», 1853, № 5) բանաստեղծությունների գրաբար և աշխարհաբար թարգմանությունները, Վոլտերի «Զատիկ կամ նախախնամություն» և ապա՝ «Ճերմակ ու սև» վիպակների՝ Մ. Մամուրյանի «բնագիրեն կատարված հայեցումը» («Մասիս», 1854, № 106 ... և 153 ...), որոնք այնքան լայն վեճերի պատճառ դարձան, Գյոթեի «Գիշերական երգ» («Եվրոպա, 1854, № 16), Ֆելիցիտե Լամընյեի «Արի զինվոր» և «Վտարանդի» («Արևելք», 1855, № 1, թարգ. Ստ. Ոսկանյանի), Պետրարկայի «Լաւրա երկինս», «Տեսիլ», «Խոնարհութիւն առաջի աստուծոյ», «Զիղջ» («Բազմավեպ», 1853, № 11), Հ. Հայնեի «Անմխիթարքն» և «Բարեաւ մնայք» (Անդ, № 12) չափածո ստեղծագործությունները և մանավանդ 1854 թ. Հակոբ Ոսկանի գրաբար թարգմանությամբ հրատարակված «Երգ հայրենի ազատութեան» բանաստեղծությունը, այսինքն՝ հանրաճանաչ ու հռչակավոր «Մարսելյոզը» («Արփի արարատյան», № 12), արդեն գեղեցիկ կերպով խոսում են իրենց մասին և միաժամանակ ցույց տալիս հոգևոր սնունդի այն բարձր աստիճանը, որը մատուցվում էր դարի երկրորդ կեսի հայ ընթերցող հասարակությանը:

Այս բոլորից հետո արդեն հասկանալի է, որ իր ամբողջ ձայնով պետք է հանդես գար ժամանակի հայկական գրական-գեղարվեստական միտքը: Եթե նախորդ ժամանակահատվածում չափածո և արձակ գեղարվեստական ստեղծագործությունները հայ ժողովրդի մտավոր կյանքում այնքան էլ որոշիչ ու վճռական որակ չէին կազմում և գերազանցապես սահմանափակվում էին անկայուն հաջորդականությամբ հրատարակվող միավոր թվով գրաբար բանաստեղծություններով ու արձակ գեղարվեստական ստեղծագործություններով, ապա այս տասնհինգ տարիների ընթացքում դրությունը դարձյալ նկատելիորեն փոխվում է: Հայկական գեղարվեստական խոսքն աննախադեպորեն աճում է՝ թե՛ քանակական,

և թե՛ որակական իմաստով: Հանդես եկող հեղինակներին, արդեն առանց վերապահության կարելի է բնութագրել «բանաստեղծ» և «արձակագիր» հասկացություններով: Մտածողության դրսևորման ձևը՝ գրաբար լեզուն, այժմ աստիճանաբար ավելի ու ավելի էր զիջում իր դիրքերը, և այս բոլորի հետևանքով հայ բանաստեղծությունն ու արձակը, մի բուռ ընտրյալների սեփականություն ու նրանց «անհատական» գործը լինելուց, ինչպես որ էր առաջ, դարձել էր հայկական ավելի լայն զանգվածների սեփականությունը և այդ առումով շատ ավելի էր մոտեցել ժողովրդին: Ժամանակի պարբերականներում շարունակում էր տպագրվել Հարություն Ալամդարյանը, որի «Յամսուավերջն ապրիելի...» և «Սոխակ ի հոգեվարս» բանաստեղծությունները («Նոյան աղավնի», 1853, № 45), որոնցից վերջինը, հեղինակի մասին դրվատական խոսքով արտատպեց «Արփի արարատյանը» (1854, № 9), գալիս էին ապացուցելու, որ նրան սիրում ու կարդում էին նախկին ուժով: Մեծապես տպագրվում էին նաև Սրապիոն Հեքիմյանն ու Թովմաս Թերգյանը, հայ ընթերցողների սեղանից անպակաս էին Ղևոնդ Ալիշանի բանաստեղծությունները, որոնք պարբերաբար հրատարակվում էին «Բազմավեպի» էջերում և որոնցից «Նահապետ» ստորագրությունն ունեցող ընդամենը ինն անուն գործերը (հետագայում՝ տասնմեկ), արդեն վաթսուհինյակյան թվականներին համազգային բանաստեղծի անկապտելի անուն և հայ պոեզիայի Նահապետի հոչակ բերեցին նրան: 1851 թվականին, «Բազմավեպը» հրատարակում է ոչնչով աչքի չընկնող գրաբար մի բանաստեղծություն «Երգ մօր ի վերայ մանկանն ննջելոյ» խորագրով, որը, սակայն, ուներ «Մկրտիչ Պեշկյթաշյան, յաշակերտաց Մուրատեան վարժարանին» ստորագրությունը և որն իրենով ազդարարեց հայ նոր դասականի ծնունդը: Գրեթե նույնը, նույն թվականին կրկնվեց նաև Կովկասում, երբ Գաբրիել քահանա Պատկանյանը իր խմբագրած «Արարատ» շաբաթաթերթում, ի թիվս այլ գործերի, չափածո և արձակ գրական ստեղծագործությունների, հրատարակեց մի շարքային գրաբար բանաստեղծություն «Ժամանակ» խորագրով և նրան կցված «Միքայել Նալբանդեանց, յաշակերտութենէ տեառն Գաբրիել Պատկանեան ի Նոր-Նախիջևան» բավականին երկարաշունչ ստորագրությամբ: Չանցած մի քանի ամիս, նույն «Արարատը» իրար անմիջապես հաջորդող երկու համարներում (№№ 23, 24), տպագրեց «Առավոտյան երգ շինականաց» և «Երեկոյան երգ շինականաց» աշխարհաբար բանաստեղծությունները «Ռափայել Պատկանյան» ստորագրությամբ: Այստեղ ի պատիվ Գաբրիել քահանայի նշենք, որ հին մանկավարժի և բանաստեղծի իր փորձված աչքով, նա կարողացել էր նկատել իր որդու և դպրոցի իր սիրասուն սանիկի՝ գեղարվեստական գրականության բնագավառում վառ արտահայտված կարողությունները և անվարան ու համար-

ձակորեն ասպարեզ էր կոչել նրանց. քահանայի ծառայությունն այս իմաստով, դժվար է գերազնահատել:

Մեր գեղարվեստական մտքի զարթոնքի բնագավառում իր ինքնատիպ խոսքն ասաց նաև Մոսկվան: Գործի գլուխ այս անգամ կանգնած էր ժամանակի ամենաջղուտ մտավորականներից մեկը՝ Ստեփաննոս Նազարյանցը, իսկ «լուսավոր գաղափարների մուտքը ազգի մեջ» իրականացնելու միջոցը դարձյալ ընտրված էր պարբերականը, որն էր հանրահայտ «Հյուսիսսփայլը»: Ժամանակի գրական-գեղարվեստական խոսքը կազմակերպելու, նրան եվրոպական դասական գրականագիտության չափանիշներով տոն և ուղղություն տալու, եվրոպական, ռուսական և արևելյան մեկից ավելի հեղինակներին թարգմանաբար հայերին ներկայացնելու բնագավառում հիացնող ճաշակ և ընտրության զարմանալի շրջահայեցություն ցուցաբերելու հարցում Ստ. Նազարյանցի կատարած գործը արժանի է ամենաբարձր գնահատականների միայն: «Հյուսիսսփայլ» էջերում էր, որ աստիճանաբար որպես այդպիսին ձևավորվեցին Սմբատ Շահազիզն ու Բաֆֆին, սկսեց տպագրվել Քերովբե Պատկանյանը, որպես բանաստեղծ ու թարգմանիչ հասունացավ Գևորգ Բարխուդարյանը, իրենց ինքնուրույն գործերով ուշադրության արժանացան Մովսես Բուդաղյանը, Հովհաննես Քուչուբեկյանը, Ռուբեն Հասան-Ջալալյանը, Երեմիա Սահակյանը և էլի ուրիշներ, իր ավագ ընկերոջ ու խորհրդատուի՝ Ստեփաննոս Նազարյանցի հետ միասին, ինչպես ինքնուրույն, այնպես էլ թարգմանական բնույթի ուշագրավ ստեղծագործություններով, պարբերաբար հանդես էր գալիս Միքայել Նալբանդյանը: «Հյուսիսսփայլ» էջերում էր, որ սկսեց հրատարակվել ժամանակի արձակի ընտիր գործերից մեկը՝ Մոսկվայի համալսարանի ուսանող Գաբրիել Տեր-Հովհաննիսյանի «Տեր Սարգիս» ազգային վիպասանությունը (1861, № 5), որը, չնայած իր թերատությանը, իր վրա հրավիրեց ժամանակի առաջադիմական մտքի շատ ներկայացուցիչների, այդ թվում նաև Միքայել Նալբանդյանի ուշադրությունը: «Հյուսիսսփայլ» թարգմանությունների բաժինն էր, վերջապես, որ հայ ընթերցողներին էր ներկայացնում Բերանժեի «Վայր ընկնող աստղեր», «Աղքատ կին», «Մեծ մայր» (թարգ. Մ. Նալբանդյան), Կարամզինի «Խեղճ Լիզա» (թարգ. Հ.Բերբերյան), Շիլլերի «Թուրանդոթ», «Մեսսինական հարսը» պիեսները (թարգ. Ստ. Նազարյանց) և այլ բանաստեղծություններ, Ալֆիերիի «Փիլիպոս երկրորդ, թագավոր Սպանիայի», Պուշկինի «Օ՛հ, իմ երջանիկ օրերը», «Այո, ես սիրում էի ձեզ» (թարգ. Գ. Բարխուդարյան), Հայնեի «Գրենադերներ» (նույնի թարգմանությամբ) և շատ ուրիշների գեղարվեստական գործերի թարգմանությունները, իհարկե կրճատված կամ հարմարեցված ժամանակի գեղագիտական ոգուն ու հասարակական-գրական պահանջմունքներին: Իսկ ամսագրի 1864 թ. № 1-ում հրատարակվեց

րակված Մ. Լերմոնտովի «Դևի»՝ Մանուկ Սադաթյանի կատարած արևելահայերեն չափա-
ծո թարգմանությունն այնպիսին էր, որ գրական առիավետ անմահություն բերեց թարգ-
մանչին: Եվ վերջապես ավելացնենք, որ «Հյուսիսափայլի» լույս աշխարհ գալու գրեթե սկզբ-
բից, 1858 թ. № 4-ից, սկսեց հրատարակվել Մ. Նալբանդյանի «Հիշատակարան Կոմս Էմմա-
նուելի օրագրական թերթերից» հրապարակախոսական-հուշագրական երկը, որը «իր նմա-
նը չունի ոչ միայն Նալբանդյանի ստեղծագործության, այլև իր ժամանակի ամբողջ հայ
գրականության մեջ»⁵, իսկ նույն «Հիշատակարանի» շարունակության՝ 1859 թ. № 9-ում,
լույս տեսավ հռչակավոր «Երգ ազատության» բանաստեղծությունը:

Այս կապակցությամբ հարց է ծագում. գրական-գեղարվեստական ի՞նչ սկզբունքներ
էր դավանում Ստեփաննոս Նազարյանցը:

Նախ՝ սերտորեն համերաշխվելով ժամանակի առաջադեմ մտավորականության
հետ, Նազարյանցը զարգացնում ու գիտականորեն հիմնավորում էր այն միտքը, որ հայ
մշակույթի հին ձևը, այսինքն՝ գրաբար լեզուն, արդեն չի կարողանում համապատասխա-
նել նոր բովանդակությանը, այսինքն՝ գրական-գեղարվեստական այն նոր գաղափարաբա-
նությանը, որը XIX դարի կեսերից ավելի ու ավելի էր մտնում իր հասարակական իրա-
վունքների մեջ, և ուրեմն, պետք է աստիճանաբար զիջի իր տեղն ու իրավունքները: Պատ-
մական նախորդ ժամանակաշրջանում այդ հին ձևն, անշուշտ, կատարել է իր անվիճելի-
որեն մեծ դերը, բայց վերոհիշյալ ժամանակաշրջանից սկսած, նա սոսկ և միայն հնացած կա
է հանդիսանում:

Հին ձևի, այսինքն գրաբար լեզվի հետ մեկտեղ, Նազարյանցն անվերապահորեն բա-
ցատում է նաև հին բովանդակությունը, իր իսկ բառերով ասած՝ «հայկական կլասիկական
գրականությունը»: Իր արժանի գիտական տուրքը տալով կլասիցիզմին, որպես հայ գրա-
կանության՝ մի որոշակի շրջանն արտացոլող գրական ուղղության, Նազարյանցը դրանով
հանդերձ գտնում էր, որ այն ևս, որպես մտածողության հնացած որակ, պետք է աստիճա-
նաբար և առանց մնացորդի դուրս գա հայ գրականության ու գեղագիտության ասպարե-
զից: Իսկ դրա փոխարեն, շարունակում է իր միտքը զարգացնել Նազարյանցը, գոյություն
ունի հայ ժողովրդի մտածողության «նորածին գոյավիճակը», այսինքն՝ ռոմանտիկական
գրական ուղղությունը, որը լինելով պատմականորեն ավելի նորն ու առաջադիմականը,
աստիճանաբար և հետևողականորեն կարողանում է նվաճել գրականության տիրապետող
բարձունքները, նոր ժամանակի մտածողության նոր բովանդակությունը դառնալու համար:
Եվ Նազարյանցի համակրանքը ոչ միայն նորածին ռոմանտիկական գրական ուղղության

⁵ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. առաջին, Երևան, 1945, էջ 525:

կողմն է, այլև նա որոշակիորեն գտնում է, որ անհրաժեշտ է ըստ հնարավորին եռանդուն պայքար մղել բոլոր տիպի հնամուլների դեմ, այդ ուղղությունը հնարավորին չափ շուտ հայկական կյանքում հաստատելու համար⁶:

Ռոմանտիկական գրականությունը պաշտպանելու, այն որպես պատմականորեն նորը դիտելու Նազարյանցի այս եզրահանգումներին առատորեն կարելի է հանդիպել նրա երկու աշխատություններում, իսկ այս հանգամանքը մի անգամ ևս գալիս է հավաստելու, որ նա իրոք և առանց որևէ զիջման կանգնած էր ժամանակի առաջադիմականորեն տրամադրված մեր գործիչների առաջին շարքերում:

Այսպես մտածող, գրական-գեղագիտական այս աշխարհայացքն ունեցող և գրականության հարցերն այսպիսի տեսանկյունով քննող ու մեկնաբանող մարդու համար արդեն դժվար չի լինի ասել, թե ինչ ուղղության պետք է դավանել նրա հիմնադրած և խմբագրած «Հյուսիսսփայլ» ամսագիրը: Բավական է թեկուզ թեթևակիորեն նայել այդ պարբերականում լույս տեսած ինչպես ինքնուրույն, այնպես էլ թարգմանած բնույթի՝ չափածո և արձակ ստեղծագործությունների վերևում հիշատակված անունները, համոզվելու, որ Նազարյանցը իր մոտ տպագրվելու համար, անվիճելի գերակշռությամբ իրավունք էր տալիս այն գործերին, որոնք պատկանում էին ռոմանտիկական գրական ուղղությանը: Այստեղ հավելենք, որ «Հյուսիսսփայլի» էջերում, ռուսական գրողներից, օրինակ, արևելահայերեն թարգմանությամբ, Նազարյանցը հայազգի ընթերցողներին էր ներկայացնում Կարամզինին, Բենեդիկտովին, Պուշկինին, Լերմոնտովին, սակայն նույն «Հյուսիսսփայլի» էջերում երբեք տեղ չգտան, ասենք, Դերժավինը կամ Սումարոկովը կամ Տրեդիակովսկին: Գերմանական գրողներից թարգմանաբար ներկայացվեցին Վիլհելմ Հաուֆը, Էրնեստ Հոֆմանը, Հայնեն և մանավանդ Շիլլերը, որը ոչ միայն բացարձակ հեղինակություն էր Նազարյանցի համար, այլև գրական այն նախօրինակն էր, որի «նմանողությամբ» կամ «հետևությամբ» աշխատում էին ստեղծագործել հայ հյուսիսսփայլականները: Սակայն նույն այդ գերմանական գրականությունից «Հյուսիսսփայլի» էջերում տեղ չգտան ո՛չ Լեսսինգը, ո՛չ Կլոպշտոկը, ո՛չ Ավգուստ Կոցերուն, ո՛չ Հերդերը: Ֆրանսիական գրականությունից, վերջապես, ներկայացվում էր Շատոբրիանը, Լյուդովիկոս Դելարտը, Կլեմանս Ռոբերտը, իսկ ավելի հաճախ և ավելի սիրով Բերանժեն – սրա ազդեցությունը ևս այնքան մեծ էր, որ իրեն «հետևողաբար» գրողների մի ամբողջ համախումբ ուներ, այսինքն՝ հեղինակներ, որոնց գրական ուղղության հարցը որևէ տարակույս չի վերցնում և ընդհակառակը, «Հյուսիսսփայլի» էջերում իզուր կլինի որոնել ֆրանսիական գրականության կլասիցիստական թևի ներկայացուցիչներին:

⁶ Назарянц Ст., Обзорение истории Гайканской письменности..., стр. 148 и пос.

Մեր գրականության այս նոր շարժումը խրախուսելու և նրան որոշակի ուղղություն ու տեսական-գրականագիտական հագեցվածություն հաղորդելու գործում իր ինքնուրույն խոսքն ասաց նաև Փարիզի հայկական համայնքի մտավորականությունը: Համայնքի ինքնաստիպություններից մեկն էլ, ի դեպ, կայանում էր նրանում, որ ճշգրտությամբ հայտնի են նրա՝ որպես գրական-մշակութային միավորի ձևավորման և որպես այդպիսին ամբողջանալու տարիները: Այն համընկնում է 1830-1890-ական թվականներին, իսկ ընդհանուր պատմությանը ծանոթ ամեն ոք գիտե, որ Ֆրանսիայի հասարակական-քաղաքական կյանքում ինչ դեր ունեին հատկապես այդ թվականները: Ամբողջ Ֆրանսիան, և մանավանդ, նրա մտավոր-քաղաքական կենտրոնը՝ Փարիզը, եռում-բորբոքվում էին հին ու նոր գաղափարների պայքարից, գրականության հին ու նոր ուղղությունների կատաղի բախումներից, որոնք հաճախ վերածվում էին պայքարի, այս հասկացողության ամենաուղղակի իմաստով: Հախուռն ու եռանդաշատ ֆրանսիացիք «Կորչի՛»-ներով և «Անկցի՛»-ներով էին մերժում գրական նախորդ ուղղությունը՝ կլասիցիզմը, և դրոշ դարձրած Վիկտոր Հյուգոյին, Լամարթինին, Ալֆրեդ Մյուսյեին, Ալեքսանդր Դյումային, բարձրաբարբառ ազդարարում էին պատմականորեն ավելի նոր ու առաջադիմական՝ ռոմանտիկական գրական ուղղության առկայության փաստը: Ժամկետանց հնի և իր իրավունքները որոշակիորեն ազդարարող նորի անզիջում պայքարը հիմնավորապես համակել էր նաև ֆրանսիական գրականագիտական միտքն ու այդ մտքի ներկայացուցիչներին:

Այս բոլորից հետո ըմբռնելի է, որ գրական-հասարակական նման փոթորկուն իրադարձությունների շրջապատյտում գտնվող Փարիզի հայկական համայնքի քիչ ավելի հասուն ներկայացուցիչները պետք է հարեին ռոմանտիկական գրական ուղղությանը, ապա և՛ դառնային այդ ուղղության ջատագովներն ու հայկական իրականության պայմաններում նրա ջերմ հովանավորողներն ու խրախուսողները: Եվ հասկանալի է, թե ինչու, սկսելով իր «Արևելք», ապա և «Արևմուտք» պարբերականների հրատարակությունը, փարիզահայ համայնքի նշանավոր դեմքերից մեկը՝ Ստեփան Ոսկանյանը իր պարբերականների միջոցով պետք է ամեն կերպ խրախուսեր այդ ուղղությանը դավանող ինչպես ֆրանսիացի, այնպես էլ հայ հեղինակներին ու մանավանդ նրանց ստեղծագործությունները: Այս կապակցությամբ Ոսկանյանի տեսակետը որևէ երկբայության տեղիք չի տալիս: Վերլուծելով ֆրանսիական ռոմանտիկական գրական ներկայացուցիչ, արձակագիր, դրամատուրգ և թարգմանիչ Ժերար դե Ներվալի ստեղծագործությունը, նա գրում է. «Մինչ այս, մինչ այն, Ֆրանսիայի գրագիտության մեջ ահագին բանակոծիվ մը կճաթի: Մեկ կողմե հին, սինլքոր դասականները (classique) և մեկալ կողմե արի ու անվեհեր վիպականները (romantique) իրարու

վրա երամովին կղիմեն, ամեն զենք կշարժեն, ամեն պատնեշ կինարեն, որ իրար կործանեն ու բանի մը չեն խնայեր, մանավանդ վիպականները: Ժերար սա ետքիներու կողմը կրօնե, արիաբար կնետվի բանակովին մեջ և իր ազդու գրիչե վիրավորված շատ դասականներ, հինումին գիրքերու փոշիին վրա կտապալին և կիսամահ կմոռան»⁷:

Այսպես, «անվեհեր վիպականները», այսինքն՝ ռոմանտիկները, անխնա ու անզիջում պայքար են մղում գրական նախկին ուղղության՝ «սինլքոր դասականների», այսինքն՝ կլասիցիստների դեմ և ի վերջո, անողոք կործանման են դատապարտում այնպես հիմնովին, որ սրանց ուրիշ ոչինչ չէր մնում անել, քան «հինումին գիրքերու փոշիին» ապավինել և ապա «կիսամահ մոռալով» ընդունել իրենց անվերապահ պարտությունը: Եթե ուրիշ ոչինչ էլ նկատի չունենանք, ապա գրական ուղղություններին տրված Ոսկանյանի պիտակավորումները արդեն բավական են աներկբայորեն գալու այն եզրակացությանը, թե վերջինս դրանցից որի ջատագովն ու հովանավորողն էր հանդիսանում: Այստեղ ավելացնենք, որ «Արևելքում» և «Արևմուտքում» թարգմանաբար հրատարակվելու պատվին էին արժանանում Վիկտոր Հյուգոն, Լամարթինը, Ֆելիցիտե Լամընյեն, Շատոբրիանը, կոմսուհի Դուրան, Ժան-Պիեր Ֆլորիանը և ֆրանսիական գրականությունից էլի ուրիշները, որոնց «տեսակությունը» որևէ տարակույս չի վերցնում: Այս առումով, այսինքն իրենց վարած գրական քաղաքականության տեսակետից, Ոսկանյանն ու Նազարյանցը ընթանում էին ոտն ընդ ոտն:

Գրական-գեղարվեստական և թարգմանական գրականության այս համընդհանուր վերելքի պայմաններում իրեն շուտով ի հայտ բերեց նաև հայկական գեղարվեստական արձակը: Դարասկզբին համեմատաբար լայն տարածում ստացած և Ղուկաս Ինճիճյանի կողմից նույնիսկ տեսության մակարդակի բարձրացված այն մտայնությունը, որ հայի գեղարվեստական մտածողությունը իր առավել ճշմարտացի ու բանական դրսևորումը գտնում է միայն չափածո ձևի մեջ, որի հետևանքով էլ հայերը հիմնականում «բանաստեղծասեր» ազգ են⁸, դարի երկրորդ կեսից սկսած, աստիճանաբար ու հաստատուն կերպով սկսեց վերածվել իր հակադրությանը: Այս իմաստով առաջին օրինակը տվեց «Բանասերը», որի լույս աշխարհ գալու (1851) առաջին իսկ համարից, սկսում է հրատարակվել խմբագրի՝ Մ. Հիսարյանի «Խոսքով և Մաքրուհի» վեպը: Ապա, սրան հաջորդած գեղարվեստական մեծ ու փոքր արձակ ստեղծագործությունների թվում, հիշատակելի են Ստ. Ոսկանյանի «Հայր Ագուլիկ» («Արևելք», 1855, № 2 և հտն.) և «Հայ դյուցազնուհի մը» («Արևմուտք», 1859, № 3 և հտն.) գործերը, Կ. Պոլսում 1856 թ. հրատարակված և իր ժամանակ

⁷ «Արևելք», 1885, № 2 («Ժերար դը Ներվալ»):

⁸ Ղ. Ինճիճյան, Գիտելիք բանասիրականք, յաղագս բանաստեղծութեան, «Եղանակ Բիւզանդեան», Վենետիկ, 1813 և հտն.:

աշխույժ ասուլիսի տեղիք տված՝ անհայտ հեղինակի «Էդուարդ» վիպասանությունը (Ա. հատոր), Հ. Սըվաճյանի՝ «Մեղվում» հաջորդաբար հրատարակվող «Թոքախտավորի մը վերջին ժամը և իր կնոջը ըրած պատվիրանները» («Մեղու», 1856, № 1 և հտն.), «Պանդուխտն ի պանդոկ մահու մահճին մեջ» (Անդ, 1857, № 9...), «Քաթինկա (ճշմարիտ պատմություն մը)» (Անդ, 1858, № 7 և հտն.) վիպակները, որոնց հեղինակը, ինչպես ենթադրվում է, Հարություն Սըվաճյանն է: 1856 թ. Փարիզում հրատարակված Գրիգոր Խապարաճի Կարապետյանի «Ընծա, հորդորանք միաբանության» երգիծական վիպակը, որը որպես այդպիսին իր կայուն տեղն ունի մինչպարոնյանական շրջանի հայ երգիծական գրականության մեջ, և որի շուրջ ծայր առած աշխույժ բանավեճը ուշագրավ է առ այսօր, Մ. Նալբանդյանի «Մեռելահար-ցուկը» («Հյուսիսափայլ, 1859, № 8), որին այնպես էլ վիճակված չէր ամբողջանալ, Ա. Հայկունու «Էլիզա կամ վերջին Արևելյան պատերազմի ժամանակ տեղի ունեցած իրական դեպք մը» երկհատորանոց վեպը (Զմյուռնիա, 1861, 1862): Վերջապես, 1862 թ. հունվարից, «Բազմավեպ» ամսագրում «Հայադիր»⁹ ընդհանուր խորագրի ներքո հրատարակվող՝ Ղևոնդ Ալիշանի պատմագեղարվեստական արձակ ստեղծագործությունը, որին հետագայում վիճակված էր ամբողջանալ երկու առանձին հատորներում «Հուշիկք հայրենյաց հայոց» ընդհանուր խորագրի ներքո (Վենետիկ, 1896 և 1870), գալիս է հիմնավորապես հավաստելու, որ դարի երկրորդ կեսին հայկական գեղարվեստական արձակ միտքը արդեն կարողացել էր ամենայն որոշակիությամբ բացահայտել իրեն:

Հայ գեղարվեստական գրականության զարգացման տեսակետից բախտորոշ նշանակություն ունեցավ 1858 թվականը: Այդ թվականին Թիֆլիսում աշխարհաբար լեզվով հրատարակվեց Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» պատմավեպը և Վենետիկում, գրաբար լեզվով՝ Արսեն Բազրատունու «Հայկ Դիցագն» վիպերգությունը: Նույն ժամանակաշրջանում հրատարակված այս երկու գործերը, սակայն, մեկը մյուսի տրամաբանական բացասումն են հանդիսանում: «Հայկ Դիցագնը» գալիս էր իրենով ազդարարելու գրական նախորդ ուղղության՝ կլասիցիզմի վերջնագիծը հայ գրականության մեջ, այդ ուղղության «ավարտը»: «Վերք Հայաստանին» հրապարակում էր հայկական գրականության մեջ մի նոր ուղղության՝ ռոմանտիզմի առկայության փաստը, ազդարարում էր մեզ մոտ այդ նոր ուղղության սկիզբը. այս հանգամանքը սկզբից իսկ որոշիչ դեր խաղաց նրանց գրական ճակատագրերի հարցում: Տրամագծորեն տարբեր էր նաև «Հայկ Դիցագնի» և «Վերք Հայաստանի» կատարած գրապատմական դերը այն ուղղությունների գեղագիտական կյանքում,

⁹ Մեր եկեղեցական տոների և հիշատակության արժանի աշխարհիկ իրադարձությունների ցուցակ, դասավորված հայկական ամիսների հերթականության կարգով:

որոնց առավել բնութագրական ներկայացուցիչներն էին հանդիսանում դրանք: «Հայկ Դիւցազնը» լույս աշխարհ եկավ այն ժամանակ, երբ հայկական կլասիցիզմը, որպէս գեղարվեստական մտածողության ձև, որպէս հասարակական կյանքի արտացոլման որոշակի գեղագիտական սիստեմ, արդեն սպառել էր իրեն և մեր իրականության պայմաններում արդեն որևէ դեր չէր կատարում: Եվ իր գրական ուղղության «վերջում» հրատարակված «Հայկ Դիւցազնը» ոչինչ չկարողացավ անել հայկական կլասիցիզմին գեղագիտական սկզբունքներ թելադրելու, նրան որոշակի հասարակահայեցությամբ դաստիարակելու հարցում:

Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանին», ընդհակառակը, հանդես եկավ այնպիսի մի ժամանակ, երբ նոր-նոր էր սկսում ձևավորվել գրական նոր ուղղությունը՝ հայկական ռոմանտիզմը, դեռ մշակվելու ընթացքի մեջ էին գտնվում այդ ուղղության թե՛ գեղագիտական և թե՛ հասարակական սկզբունքները: Այս առումով, Աբովյանի պատմավեպը թե՛ գրական կերպարների ստեղծման, թե՛ ստեղծագործության համար անհրաժեշտ թեմայի ընտրության և բազում այլ հարցերի կապակցությամբ, որոշակի ու հաստատուն սկզբունքներ թելադրեց իր մոտակա ու հեռավոր հաջորդներին, գեղագիտական որոշակի սիստեմի բերեց նրանց գրական մտածողության համակարգը, այսինքն՝ իրենով կարողացավ ձևավորել ու ամբողջացնել հայկական ռոմանտիկական գրական ուղղությունը: Այս իմաստով «Վերք Հայաստանի» պատմավեպին վիճակվեց իր գրական ուղղության դրոշակակիրը լինելու մեծ ու բարձր պատիվը:

1859 թվականին, Աբովյանի գլուխգործոցի փայլուն դրվատական գրախոսականով փարիզյան իր «Արևմուտքում» հանդես եկավ Ստեփան Ոսկանյանը և անվերապահ պաշտպանության ներքո առավ թե՛ «Վերք Հայաստանին», և թե՛ նոր գրական ուղղությունը: Հազիվ կես տարի անց, «Մեռելահարցուկի» իր հայտնի ծանոթագրության մեջ, «Վերք Հայաստանի» պատմավեպին անդրադարձավ նաև Միքայել Նալբանդյանը: Նալբանդյանն էլ արեց տեսական-գրականագիտական մի ոչ պակաս ուշագրավ դիտարկումներ՝ կապված «Վերք Հայաստանի» և նրա գրական ուղղության հետ:

Իրադարձությունների հետագա զարգացումը մեզ տանում է Վենետիկ, դեպի համբավվոր Միսիթարյան միաբանությունը և կապվում է ժամանակաշրջանի համար շրջադարձային հանդիսացած երկու կարևոր գրական երևույթների քննության հետ, որոնք, սակայն, միահյուսվում են միևնույն անձնավորության՝ Ղևոնդ Ալիշանի անվանը: 1852 թվականին Վենետիկում հրատարակվեց փոքրիկ մի գրքույկ «Հայոց երգք ռամկականք» խորագրով, որը պարունակում էր ընդամենը տասնինը ժողովրդական ստեղծագործություններ, և

որոնք հավաքել, անգլերեն թարգմանել և համապատասխան առաջաբանով ու հայերեն-անգլերեն ծանոթագրություններով ամբողջացնելով, հրատարակության էր պատրաստել Ղևոնդ Ալիշանը: Գրքույկը էլի երեք վերահրատարակություն ունեցավ՝ ամեն անգամ ուղեկցվելով մեծագույն դրվատանքներով ու տարփողումներով, նրանցում եղած «ռամկական» երգերը նախանձելի փութաջանությամբ ու համապատասխան ներբողականներով սկսեցին արտատպել մեր այլևայլ մեծ ու փոքր պարբերականները, նրանց մասին դրվատական գրախոսականներով հանդես եկան «Բոստոն Պոստ», «Բոստոն Էդվերթայզեր», «Չիկագո պոստ» և ուրիշ ամերիկյան թերթեր, իսկ այդ երգերի մեր ժողովրդի կյանքում կատարած պատմահասարակական դերի ու ազգային նշանակության մասին առանձին գրքույկով հանդես եկավ ֆրանսիացի հայագետ Էդուարդ Դյուլյորիեն: Ո՛չ գրքույկին վերագրված մեծ դերը, և ո՛չ էլ նրա առթիվ եղած գովասանքը չափազանցություն չէին, և այդ ամենը ի մոտո հասկանալու համար չպետք է մոռանանք հետևյալը:

Իր գեղագիտական իրավունքների մեջ վերջնականապես հաստատված նախորդ ուղղությունը՝ հայկական կլասիցիզմը, անուշադրության չմատնեց նաև ազգային-ժողովրդական ստեղծագործությունները և այս առիթով էլ ունեցավ ասելու իր բավականին ինքնատիպ խոսքը: Ըստ հայ կլասիցիստների զարգացրած տեսության, ժողովրդական ստեղծագործություններն ընդհանուր առմամբ, դրանց մեջ իհարկե, ներառած նաև ազգային-հայկականը, ստեղծագործող-ինտելեկտուալի կողմից չպետք է համապատասխան ուշադրության արժանանան, առավել ևս՝ քննության կամ ուսումնասիրության նյութ դառնան, քանզի հասարակության «ցածր» խավը, գտնվելով մտավոր-գեղագիտական զարգացման «ցածր» մակարդակի վրա և ելնելով իր այդ գոյավիճակից, չի կարող ստեղծել չափածո այնպիսի արժեքներ, որոնք կարողանային արժանի լինել «բարձր» ժանրի ներկայացուցիչների, այսինքն՝ բանաստեղծի քննությանն ու ուշադրությանը: Տեսությունն, ինչպես հայտնի է, նոր չէր և գալիս էր եվրոպական կլասիցիզմի հոգևոր հորից՝ Բուալոյից, որը և ջանասիրաբար կրկնում ու տարածում էին նրա մեծ ու փոքր հաջորդները¹⁰: Այդ էլ ապա, գրական ուղղության հետ ժառանգեցին Բուալոյի հայազգի աշակերտները և փոքր-ինչ ձևափոխելով հայկական միջավայրի ու պայմանների համեմատ, ներկայացրեցին հայ հանրությանը: «Ռամկորեն» արհամարհական բառիկով էր որակված հայկական ժողովրդական բառ ու բանը, նրանց անդրադառնալը՝ անիմաստ ու անկարևոր աշխատանք, իսկ նրանց ուսումնասիրե-

¹⁰ «Այդ անճոռնի, անտաշ գյուղացիները, – գրում էր գրականության տեսաբար Պանայեն, – կեղտոտ կենդանիները, գոմանոցների աղբահոտը, անձև ժայռերը... ծառերի անկանոն խմբերը, որոնք թողնված են բնության կամքին, կաղամբների բանջարանոցները, – դրանց վրա չի կարող կանգ առնել բարեկիրթ մարդու ուշադրությունը»: (Լեո, Հայոց պատմություն, հատ. 3-րդ, Երևան, 1946, էջ 930):

լը կամ քննության նյութ դարձնելը՝ ժամանակի անտեղի ու անօգտավետ կորուստ: Այսպիսին էր ժողովրդական բառ ու բանի վերաբերյալ հայկական կլասիցիզմի տեսակետը XIX դարի 40-ական թվականներին, սակայն հասարակական-քաղաքական նոր դեպքերի արդյունքը հանդիսացող ռոմանտիկական մտածողությունը եկավ աստիճանաբար խարխուլելու, ապա և տապալելու հայկական կլասիցիզմի նաև այս հիմնասյունը:

Խստիվ ժամանակագրական իմաստով առաջինը՝ Ղուկաս Պալղազարյանի՝ Իզմիրյան «Արշալույս արարատյան» շաբաթաթերթն էր, որն իր 1843 թ. ապրիլյան համարում մի մեծ հոդված հրատարակեց հայկական ժողովրդական երգ ու տաղի արժեքավորության մասին և «ընթերցող ազգայիններուն» տեղեկացրեց, որ նման բնույթի գործեր ստանալու դեպքում իրենք կհրատարակեն: Պալղազարյանն, իհարկե, ո՛չ այդ ստեղծագործությունների գիտական արժեքավորողն էր, և ոչ՝ էլ նրանց պատմական դերի ու հասարակական նշանակության բացահայտողը. նա պարզապես ջանասեր խմբագիր էր, որն աշխատում էր հնարավորին չափ շատ ու բազմաբնույթ նյութեր հավաքել իր «Արշալույս արարատյանի» համար, նրա «բանասիրական» բաժնից նյութերն անպակաս անելու պարզ տրամաբանությունից ելնելով: Իսկ քանի որ հայկական ժողովրդական երգն ու խոսքը Օսմանյան կայսրության կամ նրա հավատի դեմ ոչ մի վտանգավոր միտք կամ նկրտում չէր պարունակում, այսինքն այն տպագրելը ոչնչով չէր սպառնալու շաբաթաթերթին, ուստի Պալղազարյանը այդպիսի մի քանի գործեր հրատարակեց իր մոտ, թեև այդ աշխատանքները լայն ընթացք չստացան ու շատ շուտով էլ դադարեցին:

Հարցին ըստ ամենայնի իրենց պարբերականի՝ «Բազմավեպի» միջոցով անդրադարձավ Ալիշանը: Հենց առաջին տարվա՝ 1843 թ. նոյեմբերի համարում հրատարակվեց քսաներեքամյա երիտասարդ վարդապետի «Ազգային երգերու և ուրիշ ավանդներու վրա» հոդվածը, որտեղ հեղինակը վճռական կոչ էր անում «ազգայիններին» պարբերաբար և հետևողականորեն զբաղվել ժողովրդական բառ ու բանը հավաքելով ու հրատարակելով: Չանցած մի քանի տարի, Ալիշանը դարձյալ անդրադառնալով այդ երգերին, տալիս է նրանց միանգամայն անվերապահ գիտական արժեքավորումը, այսինքն՝ «Այսպիսի երգերը շատ անգամ ավելի լավ կիմացնեն ազգին հանճարը, քան թե ծանր գրվածներ և կգտնվին անոնց մեջ անանկ սքանչելի գրուցվածք, որ միայն իրենց ռամկական անունին համար հասարակ բան մը կկարծվին, բայց ճշմարիտը՝ գերագույն գրվածոց կարգը անցնելու են»¹¹: Նման օրինակներ կարելի է էլի բերել բնութագրելու համար ինչպես Ալիշանի, այնպես էլ «Բազմավեպի» մշակած գեղագիտական վարքագիծը մեր ազգային բառ ու բանի նկատմամբ, որն

¹¹ «Բազմավեպ», 1847, № 6 («Ազգային երգեր»):

իր հերթին գալիս է մատնանշելու այն առաջադիմական դերը, որը նրանց վիճակվեց կատարել այս բնագավառում:

Ալիշան գեղագետն իր հաջորդ նորարարական խոսքն ասաց 1857 թվականին, երբ հայ ընթերցող ու գիտական հասարակայնության սեղանին սկսեցին հայտնվել նրա գրաբար բանաստեղծությունների ու պոեմների ժողովածուների հատորները «Նուագք» ընդհանուր խորագրի ներքո և մանավանդ այդ ժողովածվի երրորդ հատորը, որ նաև ուներ «Հայրունի» ենթախորագիրը: «Նուագք»-ների թե՛ առաջին, և թե՛ երկրորդ հատորները հիմնականում նոր բան չսովեցին հայ ժողովրդի ոչ հոգուն և ոչ էլ սրտին: Այստեղ իր գրական նախորդներից ոչնչով չտարբերվող Մխիթարյան միաբանության վարդապետն է, որն ունի ոգևորության ու ներշնչանքի նույն աղբյուրները, ունի վաղուց արդեն ընտրված և իր համար սիրելի թեմաները, ունի նույնիսկ պատկերավոր մտածողության ու աշխարհայացքի գեղարվեստական համակարգի՝ իր ավագների կողմից արդեն հիմնավորապես հղկված ու ճշգրտված ձևային դրսևորումները:

Այսպես սկսեց Ալիշանը, քայց այս չէր Ալիշանը: Նա մի շարքային, սովորական բանաստեղծ չէր, որը պետք է զբաղվեր իր նախորդ հայրերի գրական ավանդների ծանրատաղտուկ կրկնությամբ, կամ հանդիսանար նրանց գործի կարծրամտորեն-ավանդապահ շարունակողը: Նա իր խոսքն ուներ ասելու աշխարհին՝ նախորդներից միանգամայն տարբեր ու ինքնուրույն խոսքը, որով պետք է չտրորված ուղիներ հարթեր ինչպես Մխիթարյան, այնպես էլ XIX դարի հայ գեղարվեստական գրականության անդաստանում: Գրական այդ շրջաբեկման սկիզբը 1847 թ. հունիսին էր, երբ «Բազմավեպը» առ այդօր անհայտ ու անանուն «Նահապետ» կեղծանունով, հրատարակեց նշանավոր «Հայոց աշխարհիկ» բանաստեղծությունը, որին աստիճանաբար հաջորդեցին «Պլպուլն Ավարայրի» պոեմը, «Ողբամ զքեզ հայոց աշխարհ», «Հրագդան», «Մասիսու սարերն», «Լուսընկայն գերեզմանաց հայոց» և մյուս ստեղծագործությունները, որոնք հրճվալից խանդավառությամբ ընդունվեցին հայ հանրության կողմից, անհապաղ արտատպվեցին հայկական պարբերականներում և գետեղվեցին այլևայլ բնույթի ժողովածուներում, արժանացան մեր գրականության մեծերի հիացական գնահատականներին և որոնք լեզվառճական բնույթի որոշ վերամշակումներից հետո, «Երգք Նահապետի» ընդհանուր խորագրով, գետեղվեցին 1857 թ. հրատարակված «Նուագք»-ների երրորդ հատորում: Թե հայկական կյանքում գրապատմական ինչ անփոխարինելի դեր կատարեցին «Երգք Նահապետի» բանաստեղծաշարը մասնավորապես և «Հայրունի» հատորում գետեղված ազգային-հայրենասիրական հրաշունչ բանաստեղծություններն ու պոեմները ընդհանուր առմամբ, անհրաժեշտ խորությամբ ու խնամքով մեզ

մոտ արդեն քննված է¹²: Այստեղ արձանագրենք միայն, որ Ալիշանն այն բանաստեղծը եղավ, որը նաև այս բնագավառում կարողացավ հիմնավորապես խարխիլել հայկական կլասիցիզմի հաստահիմն շինությունը և ճանապարհի հարթել գրական հաջորդ ուղղության՝ ռոմանտիզմի համար: Այսպիսով, գրական այդ ուղղությունը 1852 թ. կարողացավ հավաստել իրեն ժողովրդական բանահյուսության բնագավառում և լայն ճանաչման արժանանալ. կարողացավ հավաստել իր գոյությունը 1857 թ. գեղարվեստական չափածոյի բնագավառում և այստեղ էլ ապացուցել, որ նորի և հետևաբար առաջավորի իրավունքով իրեն է պատկանում ասպարեզը. վերջապես 1858 թ. Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» պատմավեպով, որոշակիորեն ցույց տվեց, որ գեղարվեստական արձակի բնագավառը նույնպես «նվաճված» է իր կողմից: Մնում էր այդ ամենի հենքի վրա հայկական ռոմանտիզմի տեսությունը մշակելը, որով, ինչպես ասացինք, հիմնավորապես զբաղվում էին Ոսկանյանի «Արևելքն» ու «Արևմուտքը» և Նազարյանցի «Հյուսիսափայլը»:

Իհարկե, հայկական ռոմանտիկական գրական ուղղությունը եվրոպականի՝ ընդամենը մեխանիկական տեղափոխությունը չէր և այդպիսին չէր էլ կարող լինել: Մեր պայմաններում նա ունեցավ իր ինքնուրույն դրսևորումները, ստեղծագործական ու հասարակական-մեթոդոլոգիական իր ինքնատիպ առանձնահատկությունները: Այս առիթով քննության արժանի է մի երևույթ, որը կազմում է ժամանակի առանձնահատկություններից մեկը և հայտնի է «լեզվապայքար» հավաքական անունով:

Ասել ենք, թե գրական-հասարակական ինչ պայմանների թելադրության ներքո էր, որ հայկական կլասիցիստական գրականությունը, որպես իր մտածողության համար առավել բնութագրական ձև, նախընտրեց գրաբարը, որը և, աստիճանաբար դարձավ նրա «սեփական» արտահայտչամիջոցը¹³: Արդ՝ հերթափոխության եկած գրական հաջորդ ուղղությունը՝ ռոմանտիզմը, ինչպես և պետք էր սպասել, աշխարհ բերեց նոր թեմաներ, նոր ու նախորդից տարբեր գրական մտածողություն, գրական կերպարների ստեղծման ու նրանց հասարակահայեցության միանգամայն նոր եղանակներ և այլն: Այս նոր մտածողությունը շատ շուտով բախվեց հին ձևին՝ գրաբար լեզվին և աստիճանաբար ու հիմնավորապես հակադրվեց նրան: Նորը, ռոմանտիկական գաղափարաբանությունը, վճռականորեն պահանջում էր երևակման իր և նախորդից հիմնավորապես տարբեր ձևը. հարցեր, որոնք այնպես ուղղակիորեն բարձրացնում էին Աբովյանը, ապա և՛ Բաֆֆին, իրենց վեպերի հանրածանոթ առաջաբաններում: Այս նոր գաղափարաբանությունը համեմատաբար հեշտությամբ գտավ

¹² Սարիկյան Ս., Հայկական ռոմանտիզմ, Երևան, 1966, էջ 211-262: Շտիկյան Ս., Ալիշանի գեղարվեստական ստեղծագործությունը, Երևան, 1967, 220 էջ:

¹³ Շտիկյան Ս., Հայ նոր գրականության ժամանակագրություն (1801-1850), Երևան, 1973, էջ 33-34:

իրեն համապատասխանող դրսևորման ձևը, որն էր աշխարհաբար լեզուն, որն էլ աստիճանաբար դարձավ հայկական ռոմանտիկական գրականության (իսկ հետագայում՝ նաև ռեալիզմի) «սեփական» լեզուն: Քանի որ ասպարեզում կար հինը՝ գրաբարը, որը ճիշտ է, ոչ 30-40-ական թվականների միահեծանությամբ, բայց դեռևս շարունակում էր իշխել և անգամ տիրապետող բարձունքներ ունենալ, ապա «ատելի նորելուկը» ի վերջո տապալեց նրան, այսինքն՝ նաև գեղարվեստական մտածողության այն համակարգին, որն արտահայտվում էր նրա միջոցով: «Հին ձևը, – այս առիթով պատգամում էր Ստ. Նազարյանցը, – որն այլևս չի կարողանում համապատասխանել նոր առաջացած գոյավիճակին, և որը կտրվել է ժողովրդական կյանքից ու հասարակական կիրառությունից, արդեն կորցրել է իր նշանակությունը և չի կարող ժամանակակից հայորդիների համար նոր բովանդակության հաղորդիչը հանդիսանալ: ...Մի խոսքով, պահանջվում է մեր դարի պահանջները բավարարող նոր ազգային գրականության զարգացումը»¹⁴: Իսկ Նալբանդյանի տեսակետներն այս կապակցությամբ, հանրաձանոթ են:

Այսպիսով, մեր գրական-գեղագիտական մտածողության երկու ձևերը՝ կլասիցիստական և ռոմանտիկական երկու ուղղությունները, ունեցան իրենց երևակման «սեփական» և իրար տրամագծորեն հակադիր արտահայտչամիջոցները՝ գրաբար և աշխարհաբար լեզուները: Այս ինքնատիպությունը իր հետ քննության արժանի մի երևույթ էլ բերեց, որը դարձյալ առկա է միայն մեզ մոտ: Եվրոպական գրականության մեջ, օրինակ, ռոմանտիկական գրական ուղղությունը, բացասելով կլասիցիզմին բնութագրական թեմատիկան, ոչ միայն չբացասեց այդ գրականության ձևը, այսինքն նրա լեզուն, այլ նույնությամբ և ինչոր տեղ հարգալից շնորհակալությամբ վերցրեց այն, իր գաղափարաբանությունն արտահայտելու համար¹⁵: Ֆրանսիացի ռոմանտիկներ Լամարթինը, Շատոբրիանն ու Վիկտոր Հյուգոն գրում էին այն նույն ֆրանսերենով, որով իրենց ժամանակին գրել էին կլասիցիստներ Պիեր Կորնելլն ու Ժան Ռասինը, անգլիական ռոմանտիկներ Շելլին ու Բայրոնը ստեղծագործում էին նույն անգլերենով, որով ստեղծել են իրենց գործերը կլասիցիստներ Ջոն Միլտոնը, Ալեքսանդր Պոպն ու Ջոն Դրայդենը, վերջապես, ռուսական ռոմանտիկները՝ Պուշկինը, Ժուկովսկին կամ Լերմոնտովը գրում էին այն նույն ռուսերենով, որով գրում էին

¹⁴ Назарянц Ст., Обзорение истории Гайканской письменности..., Казань, 1846, стр. 148.

¹⁵ Խոսքն այստեղ վերաբերում է լեզվի՝ որպես մտածողության մի որոշակի համակարգի դրսևորմանը և նրա, մեկը մյուսով փոխարինվելու հետ կապված օրինաչափություններին և ոչ թե անհատ հեղինակի արտահայտչամիջոցին: Դժվար չէ հասկանալ, որ որպես ստեղծագործող անհատներ, Պուշկինի լեզուն չէր կարող իր լեզվաճական տարբերությունները չունենալ Ժուկովսկու լեզվից, կամ Կորնելի լեզուն՝ Ժան Ռասինի լեզվից: Լեզվաբանների անմիջական քննության առարկան հանդիսացող և նեղ-մասնագիտական բնույթ ունեցող այս հարցը չէ, որի մասին խոսք է գնում մեզ մոտ:

Վասիլի Տրեդիակովսկին, Կանտեմիրը, Սումարոկովը, Միխայիլ Լոմոնոսովը և այլն: Այսպիսին էր դրությունը եվրոպական երկրներում ու Ռուսաստանում, սակայն ամեննին էլ այդպես չեղավ մեզ մոտ: Ռոմանտիկական գրականության ներկայացուցիչ Խաչատուր Աբովյանը ամեննին էլ չէր գրում այն լեզվով, ինչ գրում էր Մեսրոպ Թադիադյանը, Սմբատ Շահազիզը, երբեք չգրեց այն լեզվով, ինչ գրում էր Մանվել Ջախջախյանը, Պետրոս Դուրյանը չէր ստեղծագործում Արսեն Բագրատունու լեզվով և այլն: Այսպիսին էր մեր իրականության ինքնատիպ առանձնահատկությունը: «Ժամանակագրության» այս հատորից օգտվողը հեշտությամբ կարող է նկատել գրաբարալեզու ստեղծագործությունների և հետևյալ կլասիցիստական գրական դպրոցին պատկանող գործերի՝ կայուն հետևողականությամբ և տարեցտարի քանալը ու ընդհակառակը, աշխարհաբարով գրված և նոր՝ ռոմանտիկական ուղղությանը դավանող ինչպես չափածո, այնպես էլ արձակ գեղարվեստական ստեղծագործությունների համամասնությամբ ավելանալը:

Վերևում ասվածից հետո, արդեն դժվար չէ մակաբերելը, թե ինչու դարի երկրորդ կեսին, հայկական գեղարվեստական-գեղագիտական կյանքում հաստատվելու, ապա և՛ աստիճանաբար տիրապետող բարձունքների էր հասնելու ռոմանտիկական գրական ուղղությունը: Այն քննության առարկա դարձրած գրեթե բոլոր տեսաբանները (Ելիստրատովա, Ռեիզով, Սարինյան), ամենատարբեր հարցերի ու այլևայլ դրույթների կապակցությամբ բանավիճելով իրար հետ, մի հարցում միայն կետ առ կետ համերաշխում են՝ ռոմանտիզմը, համառոտակի ասած, բնութագրական ուղղություն է հանդիսանում այն ազգերի համար, որոնք գաղափարական զարթոնք ու համընդհանուր վերելք են ապրում: Քննեցինք արդեն, թե քաղաքական ու հասարակական բարենպաստ պայմանների հետևանքով ինչպիսի արթնացում, գրական-գեղարվեստական ինչպիսի աշխուժացում ու մտավոր եռք էր սկսվել հայ ժողովրդի կյանքում, ուստի զարմանալի չէ, որ հենց այդ պայմաններն էլ պետք է առավել քան նպաստավոր հող ստեղծեին ռոմանտիկական գրական ուղղության՝ մեզ մոտ հաստատվելու ու կայունանալու համար: Հետևաբար այս նոր պայմաններն ու «վերելքային» տրամադրությունները գեղարվեստական գրականության մեջ արտացոլելու համար արդեն չէին կարող պիտանի լինել կլասիցիստական գրականության անկենդան, մարմարիոնի պես սառը, ասես քանոնով ու կարկինով գծված հերոսները: Նոր պայմաններին ու իրավիճակին համապատասխան՝ անհրաժեշտ էին հախուռն, կյանքով ու կրքով լի կերպարներ, որոնք գիտեին հուժկու կերպով սիրել, բայց և գիտեին կատաղորեն ատել, որոնք ահարկու են ու մոլեգին իրենց զայրույթի պահին, բայց և կանացիորեն քնքույշ են ու թուլության հասնող գթասիրտ: Հասարակական այս նոր իրավիճակն արտահայտելու համար նույնպես

չէին կարող պիտանի լինել կլասիցիստական գրականության միագիծ, սխեմատիկ տրամաբանության օրինաչափություններով կառուցված սյուժեները, դեպքերի սկզբնավորման, զարգացման ու ավարտի իրենց որոշակիորեն գծագրված անփոփոխ հաջորդականությամբ, որտեղ ամեն ինչ կանխորոշված է ի սկզբանե և որտեղ ամեն ինչ զարգանում է միայն ժամանակի և ոչ թե տարածության մեջ: Այստեղ արդեն անհրաժեշտ էին բազմապլան սյուժետային կառույցներ, դեպքերի զարգացման ու հաջորդականության խստիվ արտահայտված զիգագավորումներ, ընթերցողի զգայական աշխարհի վրա ներգործող խորհրդավոր դրվագների ու կասկածաձին իրադարձությունների պատկերումներ և այլն: Այս էր պարտադրում հայկական ռոմանտիկական գրականության պոետիկան, էլնելով այն նոր իրավիճակից, որի մասին խոսվեց, և այդպես էլ եղավ:

Համազգային ու համընդհանուր վերելքը հստակորեն ի հայտ է գալիս, երբ քննում ենք ժամանակաշրջանի գրական արտադրանքը: Իր ազգային-քաղաքական հասունացումն ապրող ժողովրդի համար, առաջնահերթորեն կարևոր խնդիր-նպատակներից մեկն էլ դառնում է ինչպես իր պատմական անցյալի քննական ուսումնասիրությունը, այնպես էլ առաջիկա զարգացման համար նորանոր ուղիների մատնանշումը: Հայ ժողովրդի պատմական անցյալի փառքը կազմող մեծությունների (Խորենացի, Եղիշե, Փարպեցի և այլն) անընդմեջ հրատարակությունների, այդ անցյալն արտացոլող գեղարվեստական գրականության (վեպեր, դրամատուրգիա, դյուցազներգություն), գեղարվեստական բնույթի ամենազանազան թարգմանությունների կողքին, որոնցից բազում օրինակներ կարելի է գտնել ներկա հատորում, հիշյալ ժամանակաշրջանում սկսում են հանդես գալ գործեր, որոնք հենց այդ մտայնության արտահայտություններն են: 1853 թ. Կ. Պոլսում հրատարակվում է Ս. Վահանյանի «Սկզբունք քիմիական գիտության...» ծավալուն (395 էջ) աշխատությունը, որի վերնագիրն արդեն խոսում է նրա խնդիրների ու նպատակների մասին, 1861 թ. Ա. Կրճիկյանի «Առողջաբանություն կամ առողջ ապրելու մասնավոր և ընդհանուր կանոններ» գիրքը, որի երեք պրակներում հեղինակն անդրադառնում է մաքուր օդի, համապատասխան ֆիզիկական վարժությունների, ջրային լոզանքների և այլ միջոցներով առողջությունը պահպանելու խնդիրներին, Ճանիկ Արամյանը 1864 թ. Կ. Պոլսում հրատարակում է «Խնդիր ազգային եկամտի» գիրքը, պահանջելով հիմնել «պանքաներ և դրամատուներ» ազգի ֆինանսական կարիքների համար, 1862 թ. Թիֆլիսում հրատարակված Հ. Մամիկոնյանի «Արվեստ քաղցրավենի շինելու» խոհարարական ձեռնարկը եկավ ապացուցելու, որ վերելք ապրող ազգի համար կենսականորեն անհրաժեշտ պահանջումներից մեկն էլ իր ներքին-անհատական կյանքի ճիշտ կազմակերպումն է և այլն: Չենք խոսում

Արմենակ Հայկունու գրական ժառանգության մասին, որի գերակշիռ մասը բժշկական-առողջաբանական բնույթի ուսումնասիրություններ են:

Այսպիսին էր իրադարձությունների այն համախումբը, որոնք իրենց ամբողջ հստակությամբ ի հայտ են գալիս, երբ քննում ենք մեր կյանքի ներկա ժամանակահատվածը: Թվում էր, թե ամեն ինչ հնարավորին չափ բարեհաջող էր դասավորվել հայկական գրական-հասարակական կյանքի՝ էլ ավելի զարգացման ու բարգավաճման համար, երբ ազգային-քաղաքական բնույթի մի իրողություն ազդարարեց հետադիմական մի պայքարի սկիզբը հայկական կյանքում: Այն կապվում էր գերազանցապես մի մարդու՝ Անտոն Հասունյանի անվան հետ:

Անտոն Յաղուբ իբն Հուսեֆ Օղլու Հասունյանը (այսպես էր զրվում նա սկզբնական շրջանում, որովհետև հոր կողմից ասորի էր), իր գործունեությունն սկսեց դեռ 1846 թ., երբ կարողացավ ընտրվել Կ. Պոլսի կաթոլիկ հայոց պատրիարք և հետևաբար քիչ ավելի ազատ կերպով ծավալել իր տեսական-հոգևորական «դրությունները»: Սկզբնական շրջանում այդ «դրությունները» գուրկ չէին համոզելու տրամաբանությունից և հիմնականում հանգեցվում էին հետևյալին: Հայ ժողովրդի այն հատվածը, որն արդեն ընդունել է կաթոլիկ հավատը, որպես իր համար քաղաքական ու սոցիալական հենարան ունի ամբողջ կաթոլիկ աշխարհը: Իսկ ո՞րն էր լուսավորչական հայության քաղաքական հենարանը, հարցնում էր Հասունյանը և ոչ առանց հեզմանքի պատասխանում. «Հնաբույր ու կիսակործան էջմիածիններ»: Այստեղից էլ արվում էր պարզ եզրակացություն. իրենց հասարակական գոյությունն ըստ ամենայնի ապահովելու համար, հայերը պետք է զինվորագրվեն կաթոլիկ հավատին, և որքան շուտ, այնքան լավ:

Հասունյանի այս տեսությունը 50-60-ական թվականներին բավականին լայն տարածում ստացավ, ունեցավ հայ համակիրների ամեննին էլ ոչ փոքր մի քանակություն, բաղկացած հիմնականում Կ. Պոլսի, Ջմյուռնիայի և մերձակա գավառների հայության վերնախավերից, և այդ հենքի վրա էլ իր ձևավորումն ու հասարակական ամբողջացումն ստացավ ժամանակին ոչ անհայտ «Հասունյան կուսակցությունը»:

Սակայն իրադարձությունները տակն ի վեր փոխվեցին 1860-ական թվականներից, երբ Հասունյանը, դարձյալ անազնիվ ու խարդախ եղանակների օգնությամբ ընտրվեց կաթոլիկ հայոց կաթողիկոս (1867 թ.) և արդեն սկսեց հանդես գալ առանց նախկին զգուշությունների ու համապատասխան դիվանագիտական պաճուճանքների: Իրար հաջորդեցին իր կամ իր անմիջական մասնակցությամբ գրած գրքերի, կոնդակների, բանադրանքների, ամենազանազան բնույթի «նկատողությունների» այնպիսի պատկառելի մի քանակու-

թյուն (դրանցից մի մասը օտար լեզուներով), որի նմանը հազվադեպ է հայ կաթոլիկ հոգեվորական գործիչներից նույնիսկ ամենաբեղմնավորի կյանքում: Այստեղ էր Հասունյանն ուներ իր «դրությունը», այսինքն՝ գործունեության ու աշխարհայացքային իր ծրագիր-սիստեմը, որը հիմք ու ակունք հանդիսացավ ամբողջ արևմտահայության մեջ արդեն ծայր առած բզկտուքին նոր թափ հաղորդելու համար և որը հիմնականում հանգում էր հետևյալին: Կաթոլիկությունն ընդունած հայերը, քանի որ տիրացել են գաղափարական առումով ավելի բարձր հավատի, ուրեմն նրանք բոլորովին նոր ազգային որակ են հանդիսանում (Հասունյանը սրանց անվանում էր «ֆրանկ») և հետևաբար ոչինչ ընդհանուր չպետք է ունենան լուսավորչական հայերի հետ, որոնք էլ իրենց հերթին որակվում էին ամենավիրավորական ածականներով («հերձվածողներ», «խավարամիտներ», «հետամնացներ» և այլն): Հասունյանը լրջորեն պահանջում էր կաթոլիկ հայերից չգնալ այն եկեղեցիները, որտեղ գտնվում էին հայ-լուսավորչականները, մասնակցություն չբերել ազգային այն բոլոր գործերին, որոնք նախաձեռնել կամ որոնցում մաս ունեին «հերձվածողները», չուղարկել իրենց երեխաներին այն դպրոցները, որոնք գտնվում են լուսավորչական հայերի տնօրինության ներքո, և նույնիսկ պահանջում էր աղջիկ չտալ «ի կնություն» կամ կին չվերցնել «ի ընտանիս» այն դեպքում, եթե այն առնչվում է «հերձվածողի» հետ և այլն:

Ապա. Հասունյանի և նրա կողմնակիցների հատուկ «ուշադրությանն» էր արժանանում Վենետիկի Մխիթարյան միաբանությունը: Վերջիններս մեղադրվում էին այն բանում, որ գոյության կոչված լինելով նախ և առաջ որպես կաթոլիկական հաստատություն, սկսած XIX դարի սկզբներից և մանավանդ այդ դարի կեսերին, մեծապես շեղվել էին իրենց այդ հիմնական ուղղությունից և զբաղվում էին «կաթոլիկ հավատին վնասող» գործունեությամբ, այն է՝ հայագիտությամբ, լեզվաբանությամբ, հայ պատմիչների քննական հրատարակությամբ, բառարանագրությամբ և այլն. մի բան, որն ամենևին չպետք է մտնի միաբանության աշխատանքային նկարագրի մեջ, քանզի նրա դերը սոսկ և միայն հավատի սպասավորներ պատրաստելն է: Այս տեսանկյունից էլ քննադատվում էին Մխիթարյան միաբանության տնօրինության ներքո գտնվող դպրոցները (Կ. Պոլսում, Զմյուռնիայում) և մանավանդ նրանց Մուրատյան և Ռափայելյան վարժարանները: Այսինքն՝ փոխանակ զբաղվելու առաջին հերթին կաթոլիկ հավատի դասավանդմամբ, հայ երեխաներին այդ ոճով ու տրամաբանությամբ դաստիարակելու համար, Մխիթարյանների դպրոցները ավանդում էին ազգային ու հայկական առարկաներ (հայ գրականություն, հայ ժողովրդի պատմություն, մայրենի լեզու, աշխարհագրություն և այլն), երեխաների մոտ խրախուսում էին «ազգասիրական տրամադրություններ» ու «գրգռում» այդ բնույթի մտքերը: Հետևանքն այն է լինում, որ այն-

տեղ գերակշիռ մեծամասնությամբ աճում են ոչ թե կաթոլիկ «մյուզիոնարներ», այլ հայագետներ, բանասերներ, մտավորականներ և այլն. մի բան, որը դարձյալ չպետք է մտնի Մխիթարյանների դպրոցական գործունեության խնդիրների մեջ:

Հասունյանի ուշադրությունից չվրիպեց նաև հայ գրականությունը: Նա պահանջում էր գեղարվեստական ստեղծագործության հերոսների բերանով դրվատանք հյուսել Վատիկանի, Հռոմի պապերի ու նրանց հավատի վերաբերյալ, դրականի ու բարոյականի մարմնացում դարձնել այն կերպարները, որոնք դավանում էին կաթոլիկական «ուղղափառ» հավատին և ընդհակառակը՝ բացասական երանգի ամենախիտ գույներով ներկայացնել բոլոր նրանց, ովքեր «հերձվածողներ» էին, այսինքն՝ հետևում էին էջմիածնական ուղղությանը: Ոչ մի այլ մոտեցում, այս հարցադրումների նկատմամբ որևէ ուրիշ տեսակետի կամ անհատական կարծիքի դրսևորում Հասունյանը չէր ընդունում և չէր հանդուրժում. հակառակ դեպքում պատրաստ էր բանադրանքի, իսկ ոչ սակավ դեպքերում՝ Հռոմի պապին ու «Հավատո քննության խորհրդին» («Պրոպագանդա ֆիդելի») «տեղյակ դարձնելու» և այդ ձևով տվյալ ստեղծագործությունն արգելելու ու խափանելու՝ իրեն վաղուց արդարացրած ձևը: Հիշենք թեկուզ Էոժեն Սյուի «Թափառական հրեայի» արևմտահայերեն թարգմանության (թարգ. Ստ. Ոսկանյան) առաջին հատորի հետ կապված պատմությունը, երբ իմանալով նրա հրատարակության մասին, Հասունյանը շտապեց «տեղեկացնել» այդ մասին Պապ Պիոս 9-ին (Հասունյանն անձամբ ծանոթ էր նրան և վայելում էր «գերապայծառի» հովանավորությունն ու պաշտպանությունը), որն էլ հատուկ շրջաբերականով «անդրադարձավ» այդ «որոմնացան» գործին: Հիշենք Հովսեփ Վարդանյանի «Ազգայիի պատմությունը» վեպի ճակատագիրը. մի վեպ, որը հրատարակվելուն պես բանադրեց ինքը՝ Հասունյանը, ապա հավաստիանալով իր բանադրանքի անուժության մեջ, դարձյալ աճապարեց Հռոմ, նրա մասին դարձյալ տեղեկացրեց «ուր որ անկ էր», և վեպն արժանացավ «Հավատո քննության խորհրդի»՝ նրա տարածումն ու ընթերցումն արգելելու մասին հրահանգավորմանը և այլն: Պատրաստ էր նաև ուրիշ՝ աշխատանքային ավելի գծուծ եղանակ, որից դարձյալ չէր խորշում ասորական ծնունդ ունեցող հայոց կաթողիկոսը, այն է՝ մատնությամբ բանտարկել տալու, թուրքական կառավարության բարձրաստիճան ներկայացուցիչներին մեծ կաշառքներ տալու միջոցով իր համար անցանկալի անձնավորությանը կործանելու և այլ, այս բնույթի գործունեության եղանակը, որը նույնպես, Օսմանյան կայսրության պայմաններում վաղուց արդարացնում էր իրեն...¹⁶:

¹⁶ Տե՛ս **Ասկերյան Հ.**, Հասունյան քաղաքականություն, Տիֆլիս, 1868, էջ 528:

Մենք միայն ամենաընդհանուր գծերով շարադրեցինք Իբն Հուսեֆ Օղլու Անտոն կաթողիկոսի աշխատանքային ու ազգային-հասարակական գործունեությունը, սակայն սավաճն էլ բավական է այն որոշակի եզրակացության գալու համար, որ կարելի է որակել միայն «ազգային հետադիմություն» արտահայտությամբ: «Արյունով օտար, սրտով պապական, հոգով ճիզվիթ» (Հր. Աճառյան) այդ մարդը կաթողիկական աշխարհին յուրայիններին ստորադասելու, հետևաբար պոլսահայության (և ոչ միայն պոլսահայության) մեջ ազգային գույնն ու ոգին ոչնչացնելու իր վարած ձախլիկ քաղաքականությամբ, աննախադեպ աղմուկ ու կրքերի բախում առաջացրեց. մի քաղաքականություն, որը մեր մեծ երգիծաբանի՝ Հակոբ Պարոնյանի դիպուկ բնութագրմամբ հանգեցնում էր սուկ «իրենց ազգային իրավունքները Ս. Պապին հողաթափերուն մեջ տեսնել, քան իրենց ձեռներուն մեջ» անհեռամիտ տրամաբանությանը:

Հետևանքը նախ այն եղավ, որ «Հասունյան» կուսակցությունից անջատվեց նրա քիչ ավելի առաջադիմական թևը, և աստիճանաբար ձևացնելով նոր՝ «Հակահասունյան» կուսակցությունը, անհապաղ բողոքի աղմուկ բարձրացրեց իրենց իսկ կաթողիկոսի վարած կաթողիկամոլ քաղաքականության դեմ, ի դեպ, կիրառության մեջ դնելով պայքարի հենց այն ձևերն ու եղանակները, որոնք իր զինանոցում ուներ Հասունյանը: Իսկ քանի որ այդ պայքարը չէր սահմանափակվում սուկ և միայն երկու հակընդդեմ կողմերի նեղ-կրոնական բախումներով, այլ ընդգրկում էր ամբողջ հայության և մանավանդ պոլսահայության ազգային և գրական-հասարակական շահերը, ապա այն, ինչպես այդ եղավ Գաբրիել Այվազովսկու կապակցությամբ, շուտով տեղափոխվեց նաև գրականության ու մամուլի բնագավառը: Գրականության գրեթե բոլոր ժանրերին պատկանող գործերով սկսեցին հանդես գալ մեր գրողներն ու մտավորականները, քննվեց ու վերլուծվեց Հասունյանի «դրությունների» աջն ու ահյակը, մատնացույց արվեց այն ամեն բացասականը, որն իր հետ բերում էր Հասունյանի ծավալած գործունեությունը և այլն: Քիչ էր կաթողիկ-լուսավորչական դավանաբանական պայքարը, որը ներկա հատորի ժամանակագրական տարածքում շարունակում էր տևել և բորբոքվել նոր ուժով, քիչ էր Այվազովսկու և նրա համախոհների հետ առնչվող իրադարձությունների աղմկաշատ պատմությունը և ահա մի նոր ազգային խառնակում էլ, զարդարված բավականին ճոռոմ՝ «Հասունյան-հակահասունյան գաղափարական պայքար» անունով, եկավ լրացնելու պակասը: Այս դեպքում էլ՝ նյութերի մի զգալի մասը արտացոլված է «Ժամանակագրության» ներկա հատորում, և օգտվողները հեշտությամբ կարող են նկատել, թե ինչպիսի մտքի աշխատանք, գրական-գիտական կարողություններ ու եռանդաշատ ջանքեր էին վատնում հայոց մեծերը, ընդհանուր առմամբ ոչ մի արժեք չներկա-

յացնող ու ժամանակավրէպ այդ պայքարներում: Եվ այս ամենը տեղի էր ունենում XIX դարի ընթացքում ու առավելապէս նրա կեսերին, երբ աշխարհին էր հայտնի, թէ ինչպիսի բարձունքների էր հասել եվրոպական գիտական միտքը, որն իր դարակազմիկ ու հռչակավոր դրսևորումներով՝ ինչպիսի հպարտությամբ էր ազդարարում համայն մարդկության նոր առաջընթացի մի ավելի նոր և բարձր աստիճանի առկայության փաստը, երբ հենց այդ դարն էր, որ նրա բոլոր մեծ ու փոքր և ամենատարբեր բնույթի քննասիրողների կողմից գրեթէ միաբերան որակվել էր խիստ բնութագրական «Լուսավորության դար» ձևով: Եվ լուսավորության այդ դարում, մամուլում, հայերը միանգամայն լրջորեն զբաղված էին բանավիճելով այնպիսի «գիտական» հարցերի մասին, թէ հայ լուսավորչական ընտանիքի երեխան կարո՞ղ է արդյոք հայ կաթոլիկի ընտանիքի երեխայի հետ միասին հաճախել նույն դպրոցն ու նստել դպրոցական նույն նստարանին: Թե Այվազովսկու ու նրա համախոհների վերադարձը իրենց մայրենի եկեղեցու գիրկը չի՞ կարող արդյոք երկու կողմերի տեսանկյունից էլ դիտվել որպէս բացասական երևույթ, և հետևաբար խարխուլել երկու հավատների էլ ժողովրդի մեջ ունեցած հենարանը: Թե արդյոք ճի՞շտ վարվեց արքունի վառոդապետ Պոդոս ամիրա Տատյանը, որը Փարիզի արքեպիսկոպոսի հետ ունեցած իր գրույցի ժամանակ հայ ժողովրդին որակեց որպէս «մի լեզու և մի հավատ ունեցող», քանզի հայ ժողովուրդն այդ ժամանակ դավանում էր ոչ թէ մի, այլ երկու հավատների և այլն:

Մրանք են հիշյալ ժամանակաշրջանի գրապատմական բովանդակությունը կազմող դէպքերի համառոտ բնութագրությունը, որոնց «Հայ նոր գրականության ժամանակագրության» ներկա հատորի ընդհանուր բնույթից ու խնդիրներից էլնելով, համառոտակի անդրադարձանք:

* * *

«Հայ նոր գրականության ժամանակագրության» առաջին հատորի հրատարակության առիթով մեր (և ոչ միայն մեր) պարբերականներում հրատարակվեցին գրախոսականներ, որոնց հեղինակները արձանագրելով հատորի դրական առանձնահատկությունները, նշեցին նաև որոշ թերություններ, վրիպումներ ու բացթողումներ: Անաչառորեն արված դիտողությունները մեծապէս օգտակար են եղել մեզ համար, և դրանք նկատի ենք ունեցել «Ժամանակագրության» երկրորդ գիրքը պատրաստելու ժամանակ:

Հունվար. Պոլսում, Հովհաննես Հիսարյանի խմբագրությամբ, արևմտահայերեն սկսում է հրատարակվել «Բանասեր» ազգային բանասիրական և քաղաքական ամսագիրը: Իր գոյությունը շարունակում է մինչև տարվա վերջ:

Հունվար. Պոլսում, Սուրբ Սահակյան վարժարանի աշակերտների ջանքերով, արևմտահայերեն սկսում է հրատարակվել «Բուրաստան Սուրբ Սահակյան» խորագիրը կրող ամսագիրը: Իր գոյությունը շարունակում է մինչև 1852 թ. հուլիսը:

Հունվարի առաջին կես. «Բազմավեպը» (№ 1) արևմտահայերեն հրատարակում է Ղևոնդ Ալիշանի «Շիլլեր» հոդվածը:

Տրված է Ֆրիդրիխ Շիլլերի համառոտ գիտական կենսագրությունը, ապա վերլուծված են նրա գրական-գեղարվեստական ստեղծագործությունները, հատկապես շեշտը դնելով թատերական գործերի վրա:

Հունվարի 5. «Արշալույս արարատյանը» (№ 380) գրաբար հրատարակում է Արմենակ Սարգիս Պալապանյանի «Ի սրբազնասուրբ ... Ներսէս Ե, ի մուտս նորոյ տարւոյ» ներբողականը:

Հունվար. «Բանասերը» (№ 1) արևմտահայերեն սկսում է հրատարակել Հովհաննես Հիսարյանի «Խոսքով ու Մաքրուհի» վիպասանությունը: Ավարտ՝ № 10 (հոկտեմբեր):

Նույն համարում. ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակվել Բեռնարդեն դը Սեն-Պիերի «Հնդկաստանի տնակը» վիպակը (ավարտ՝ № 6, հունիս): Թարգմանչի մասին «Ծանոթության» մեջ նշված է. «Առաջիկա թարգմանությունը աղջկա մը գործ է, որն որ կուզե անծանոթ մնալ»:

Նույն համարում. արևմտահայերեն սկսում է հրատարակվել Հովհաննես Հիսարյանի «Վեցհազարյակ հայտնյալ կամ տեսություն ռամկական սնապաշտությանց վրա» ուսումնասիրությունը, որը շարունակվում է մինչև տարվա վերջ: Քննության են առնված հայկական ժողովրդական հավատալիքները (կռապաշտություն, սատանա, վիուկ, հմայություններ, երազագիտություն, հուռութք, առլեզ, մեռելոց ոգի, ձեռնահմայություն և այլն):

Հունվարի 6. «Արարատը» (Թիֆլիս, № 17) արևմտահայերեն հրատարակում է Մսեր Մսերյանի «Վասակ» հոդվածը և նույնի «Վասակ ի դժոխս» գրաբար բանաստեղծությունը:

Հունվարի 15. «Արարատը» (Թիֆլիս, № 18) աշխարհաբար հրատարակում է Ռափայել Պատկանյանի «Ազգասիրական հանդեսը» հոդվածը, Ավետիք Խազեզյանցի «Ի ծնունդ Քրիստոսի յամի 1851» և «Գանգատ զչարաշուք բաղդէ» գրաբար բանաստեղծությունը և Երեմիա Իսահակյանցի՝ ռուսերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, Ի. Կոչիլովի «Գառն և գայլ» առակը:

Ավետիք Խազեզյանցը հետագայում հրատարակել է «Ելք նախաստեղծից ի դրախտէ» (№ 26, մարտի 10), «Աշխարհ» (№ 31, ապրիլի 14) և ուրիշ ստեղծագործություններ:

Երեմիա Իսահակյանի (նաև՝ Սահակյան) գործերը հետագայում հրատարակվել են հետևյալ հաջորդականությամբ. «Եղծ բաղդի» (արևմտ., № 20, հունվարի 27), «Դրուատ, ասացեալ ի մեծաշուք հանդիսի հարցաքննութեան Ներսիսեան վարժարանի...» («Արշալույս արարատյան», 1852, № 407, հունվարի 18, գրաբար), «Էզուց արի» («Մեղու Հայաստանի», 1858, № 9, մարտի 1, արևմտ.) «Անձկայրեաց Հայաստանի» («Ճռաքաղ», 1859, № 5, մայիս), «Խորհուրդ մկանց» (№ 6, հունիս, աշխ.), «***» («Գարշ, աղտեղի մկան անսաս...», № 9, սեպտեմբեր, գրաբար), «Ի հիշատակ հանգուցյալ Ստեփաննոս նորընծա քահանայի Սահակյանց» (1860, № 8 հոկտեմբեր, աշխ.), «Ներսիսյան դպրոց» (№ 10, դեկտեմբեր, աշխ.), «Տեսիլ» (1861, № 11, հունվարի առաջին կես, արևմտ.), «Ալեկոծություն» (№ 12, հունվարի երկրորդ կես, աշխ.), «Կական» («Կռունկ Հայոց աշխարհին», 1861, № 3, մարտ, աշխ.), «Առանձնություն», «Տեսիլք», «Կյանք» («Հյուսիսափայլ», 1861, № 6, հունիս, արևմտ.), «Երգ նժդեհի» (№ 9, սեպտեմբեր, աշխ.), «Արձագանք Մասիսի» (1862, № 2, արևել. պոեմ, անավարտ) և այլն:

Հունվարի 16. «Եվրոպան» (№ 4), գերմաներեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Ավագակաց այրը, կամ անօրենն իր փորած խորխորատին մեջ կիյնա» վիպակը: Ավարտ՝ № 15 (ապրիլի 3):

Հունվարի 20. «Արարատը» (Թիֆլիս, № 19) արևելահայերեն հրատարակում է Ղազարոս Կարախանյանցի «Բաղդ» բանաստեղծությունը:

Վերջինս հետագայում հրատարակել է «Լեզու» (№ 22, փետրվարի 10), «Միտք և մեղու» (№ 23, փետրվարի 17) և ուրիշ ստեղծագործություններ:

Փետրվար 17. «Արարատը» (Թիֆլիս, № 23) աշխարհաբար հրատարակում է Հովհաննես Սայաթնովյանցի «Վիճակ մարդո» և Ռափայել Պատկանյանի «Առավոտյան երգ շինականաց» բանաստեղծությունները (տե՛ս **Ռ. Պատկանյան**, Երկերի ժողովածու, հատ. առաջին, Երևան, 1963, էջ 11, 267):

Նույն համարում, գրաբար հրատարակվում է Հ. Տեր-Շմավոնյանցի «Շնորհագարդ հայր» նամակ բացատրականը: Բանավիճելով «Բազմավեպի» հետ, որն իր ընթերցողներին ներկայացնելով «Թշուառութիւն սոխակի» գրաբար բանաստեղծությունը, այն համարել է մեր նախնիների ստեղծագործություն (տե՛ս «Բազմավեպ», 1850, № 22, նոյեմբերի երկրորդ կես), նամակագիրն ապացուցում է, որ «Թշուառութիւն սոխակի» ասացել բանաստեղծությունն տպեալն ի «Բազմավեպ» օրագրի, չէ նախնեաց, այլ սեփական աշխատասիրութիւն է հանգուցեալ Յ. վ. Ալամդարեան»:

Փետրվարի 19. Թավրիզում, Սահակ արքեպիսկոպոս Սադունյանցի նախաձեռնությամբ, հիմնվում է արական չորսդասյա դպրոց, որը ստանում է «Թավրիզի Արամյան դպրոց» անվանումը: Դպրոցն ուներ 115 աշակերտ, ավանդվում էր հայոց լեզու, հայոց պատմություն, պարսկերեն, կրոն, իսկ հետագայում ավելացվեցին ֆրանսերեն և ռուսերեն: «Թավրիզի Արամյան դպրոցը», որոշ ընդհատումներով, գոյություն ունի առ այսօր:

«Մեղու Հայաստանի», 1874, № 8 («Մեծապատիվ խմբագիր»), № 12 («Մեծապատիվ խմբագիր»), № 35 («Դավրեժ»), 1875, № 36 («Դավրեժ»): «Մշակ», 1913, № 29 («Թավրիզի Արամյան դպրոցի...»), № 43 («Արամյան դպրոցի 60-ամյակի առիթով»):

Տեր-Վարդանյան Ա., Համառոտ պատմություն Թավրիզի Արամյան դպրոցի 60-ամյա գոյության, Թավրիզ, 1913, 48 էջ, **Գևորգյան Կ.**, Ամենուն տարեգիրքը, Բեյրութ, 1958, էջ 418-426:

Փետրվարի 24. «Արարատը» (Թիֆլիս, № 24) աշխարհաբար հրատարակում է Ռափայել Պատկանյանի «Երեկոյան երգ շինականաց» բանաստեղծությունը (տե՛ս **Ռ. Պատկանյան**, Երկերի ժողովածու, հատ. առաջին, Երևան, 1963, էջ 12, 267):

Մարտ. «Բուրաստան սուրբ Սահակյան» ամսագիրը (№ 3) աշխարհաբար հրատարակում է Մարգիս-Վահագն Շամլըյանցի «Աղվես և որսորդ» կամ չարականության պատիժը» առակը, իսկ № 12-ում (դեկտեմբեր) «Տարի առ Բուրաստան» բանաստեղծությունը:

Մարտի առաջին կես. «Բազմավեպը» (№ 5) գրաբար հրատարակում է Ղևոնդ Ալիշանի «Յաղագս Մովսիսի Խորոնեցոյ Դ. անուանեալ գրոցն պատմութեան» հոդվածը:

Հայ մատենագիրների և մասնավորապես իր՝ Մովսես Խորենացու «Պատմութիւն հայոցի» հաղորդած տվյալների քննությունից հետո, հոդվածագիրը ներկայացնում է, որ Խորենացու հիշյալ երկասիրությունը ունեցել է չորրորդ գիրք կամ դրվագ ևս, որը, սակայն մեզ չի հասել:

Մարտի 15. Գլազգոյում ծնվեց շոտլանդացի հայագետ Վիլիամ Ռամզեյը (William Ramsay): Վախճ. 1939 թ. ապրիլի 20-ին:

«Հանդես ամսօրյա», 1947, № 1 («Մահվան հունձը հայագիտական դաշտի վրա»):

Մարտի 17. «Արարատը» (Թիֆլիս, № 27) հրատարակում է Միքայել Նալբանդյանի «Բանաստեղծական» գրաբար ստեղծագործությունը («Մի՛ այլ յաստեղս լուսաճաճանչս Ուրանիա սիգասցի...»), որն ունի «Միքայել Նալբանդեանց, յաշակերտութենէ տեառն Գաբրիելի Պատկանեան ի Նոր-Նախիջևան» ստորագրությունը (տե՛ս Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հատ. 1, Երևան, 1945, էջ 17, 491-492):

Նույն համարում, տպագրված է նաև Մովսես Զոհրապյանի «Այցելու գերեզմանատան» գրաբար պոեմի առաջին հատվածը: Մյուս հատվածները, նույն վերնագրի պահպանումով, հաջորդաբար հրատարակվել են № 28 (մարտի 24), № 29 (մարտի 31), № 30 (ապրիլի 7), № 32 (ապրիլի 21) և № 33 (ապրիլի 28)-ում:

Մարտի 24. «Արարատը» (Թիֆլիս, № 28) գրաբար հրատարակում է Մսեր Գրիգորյան Զմյուռնիացու (իմա՛. Մսեր Մսերյան) «Յաղթանակ հաւատոյ մեծին Վարդանայ» պոեմը (ավարտ՝ № 31, ապրիլի 14) և Դավիթ Մամիկոնյանի «Վասն յարութեան և համբարձման ... ըստ առակի հարսին և փեսայի» բանաստեղծությունը:

Մարտի 29. Յարական կառավարության հրամանագիրը («Указ») Անդրկովկասում լույս տեսնող գրքերն ու այլ հրատարակությունները պաշտոնական գրաքննության ենթարկելու մասին: Ստեղծվում է «Կովկասյան գրաքննական կոմիտեն»:

«Акты, собранные Кавказскою археографическою комиссиею, под редакцией Адольф Берже», Тифлис, 1885, т. X, стр. V, 897¹⁷.

Ապրիլի 7. «Արարատը» (Թիֆլիս, № 30) գրաբար հրատարակում է Հովհաննես Սայաթնովյանցի «Զգուշութիւն մարդկային» և «Թշուառութիւն աշխարհի» բանաստեղծությունները:

Ապրիլ. «Բանասերը» (№ 4) արևմտահայերեն հրատարակում է Սրապիոն Հեքիմյանի «Կինն Զարմայրի» պոեմը:

Ունի հետևյալ ծանոթագրությունը. «Առաջիկա տաղը կամ հանկերգությունը նմանություն մըն է «Արարատ» անուն Թիֆլիսի օրագրին մեջ (թիվ 18, 1850 թ.) հրատարակված «Մահ Զարմայրա» քերթվածոյն, որն ... սքանչելի քնարերգական կտոր մըն է (վերջինս Ռափ. Պատկանյանի ստեղծագործությունն է – Ս.Շ.), և որուն, ահա, գովելի հետևությամբ, ուշիմ երիտասարդ մը շարունակություն կամ պատասխան կու տա մեզի»:

Ապրիլի 12. Թիֆլիսում, մեծ հանդիսավորությամբ, իր գոյությունն է սկսում Գաբրիել Հովհաննեսի Թամամշի քաղաքային թատրոնը: Հիմնադրման աշխատանքներն սկսվել էին 1847 թ. ապրիլի 15-ից (փոխարքա Մ.Ս. Վորոնցովը նախագիծը հաստատել էր 1846 թ. հոկտեմբերի 12-ին), գլխավոր ճարտարապետ՝ Սկուդիերի:

Թատրոնում իրենց ներկայացումներն են տվել ռուսական, վրացական, իտալական, հայկական բազմաթիվ խմբեր, բալետային մենապարուհիներ, եվրոպական նվագախմբեր:

Акты..., т. XI, стр. 880 (док. № 849). **Հարությունյան Շ.**, Հայ ժողովրդի պատմության համառոտ ժամանակագրություն, Երևան, 1955, էջ 95:

Ապրիլի 13. «Արշալույս արարատյանը» (№ 387) գրաբար հրատարակում է Վահան Հովհաննես Սիմոնյանի «Ի դիմաց հայկազն պատանույ, չարագան ի կենաց վճարեալ» և Տիգրան Հարություն Տետեյանի «Արագաթոյ՛չ վայրկեանք կենաց» բանաստեղծությունները:

¹⁷ Այսուհետև «Акты...»:

Ապրիլի 14. «Արարատը» (Թիֆլիս, № 31), Սոլունոն Վարձելյանցի՝ գերմաներենից կատարած աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակում է Լոնգոսի «Դափնիս և Քլոյա» հովվերգությունը:

Ապրիլի առաջին կես. «Բազմավեպը» (№ 7) արևմտահայերեն հրատարակում է «Հակոբ Դըլիլ» (իմա՛. Ժակ Դըլիլ. Jacques Delille) հոդվածը, որտեղ վերջինիս կյանքի և գրական-հասարակական գործունեության բնութագիրը տալուց հետո, ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, գետեղվում է նրա «Անմահութիւն հոգւոյ» պոեմը:

Նույն համարում. «Ազգային կամ հայախոս առածք» ընդհանուր խորագրի ներքո, սկսում է հրատարակվել հայկական ժողովրդական ասացվածքների առաջին փունջը, որը խմբագրությանն էր ուղարկում Աբել Մխիթարյանը: Որոշ ընդհատումներով, հրատարակությունը շարունակվում է մինչև տարեվերջ:

Ապրիլի 21. «Արարատը» (Թիֆլիս, № 32) աշխարհաբար հրատարակում է Միքայել Նալբանդյանի «Հիմարաց՝ ուսման վրա ունեցած կարծիքը» բանաստեղծությունը, որն ունի «Միքայել Նալբանդեանց, աշակերտ տեառն Գաբրիելի Պատկանեան ի Նոր Նախիջևան» ստորագրությունը (տե՛ս Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հատ. 1, Երևան, 1945, էջ 18, 491-492):

Ապրիլի 24. «Եվրոպան» (№ 18), արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Դեղձանիկ կամ հույսն աստծու վրա դնողը չամչնար» վիպակը: Ավարտ՝ № 32 (հուլիսի 31):

Ապրիլի 27. «Արշալույս արարատյանը» (№ 388), Աբել Մխիթարյանի՝ հունարեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Եզովպոսի «Խոհարար եւ շուն», «Նապաստակք եւ գործք», «Բու եւ գիշերահավ», «Աղուէս եւ շուն» և «Ոչխար եւ շուն» առակները:

Ապրիլի 28. «Արարատը» (Թիֆլիս, № 33) գրաբար հրատարակում է Միքայել Նալբանդյանի «Հերքումն յիմարական կարծեաց, զոր անմիտք ունին ի վերայ ուսման» բանաստեղծությունը, որն ունի «Միքայել Ղ. Նալբանդեանց, յաշակերտութենէ տեառն Գաբրիելի Պատկանեան ի Նոր-Նախիջևան» ստորագրությունը (տե՛ս Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հատ. 1, Երևան, 1945, էջ 19-20, 491-492):

Մայիսի 8. «Եվրոպան» (№ 20) հրատարակում է «Ռուսաստանի հայոց առաջնունքը» հոդվածը: Ավարտ՝ № 24 (հունիսի 5):

Մայիս. «Բանասերը» (№ 4) արևմտահայերեն հրատարակում է «Բանաստեղծություն» հոդվածը, որտեղ քննվում և գիտական վերլուծության են ենթարկվում Գողթան երգերը: Վերջում զետեղված է դիցաբանական Արտավազդին փառաբանող Գողթան մի երգ:

«Նորագյուտ Գողթան երգ» խորագիրը կրող կրքոտ պատասխան-հոդվածով հանդես է գալիս «Եվրոպան» (№ 33, օգոստոսի 7), և Արտավազդին վերագրված Գողթան երգը հանգամանորեն վերլուծելուց հետո, ապացուցում է, որ այն գրական կեղծիք է: Նորից հանդես գալով «Հնությանց հարգն ու արժեքը» վերնագրով «ընդդիմախոսությամբ», «Բանասերը» (№ 8, օգոստոս) պնդում է իր տեսակետը և հավելում, որ ժողովրդական բառ ու բանի հենքի վրա կատարվող վերարտադրությունը չի կարելի պախարակելի երևույթ համարել:

Մայիսի 8. Պոլսում (Խասգյուղ) ծնվեց հրապարակախոս, պատմաբան, գրականագետ, բանաստեղծ, խմբագիր Եղիա Կարապետի Տեմիրճիպաշյանը: Վախճ. 1908 թ. հուլիսի 6-ին, իր ծննդավայրում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Գրասեր Ատոմ», «Նուրանիա», «Մելանիա», «Թևանիո», «Մոնագն», «Հուր Հայրան», «Ճգնավոր», «Ճին Հակոր», «Մշակ», «Ա.Ազատախոհյան» (նաև՝ «Ազատախոհյան»), «Զ. Խայթունի», «Շարժենց» և այլ կեղծանուններով:

1884-1888 թթ. Պոլսում խմբագրել է «Երկրագունդ» հանդեսը, 1883-1888 թթ.՝ «Գրական և իմաստասիրական շարժում» ամսագիրը (1885-1888 թթ. ամսագիրը կոչվել է «Շարժում գրական և իմաստասիրական»):

«Հանդես ամսօրյա», 1900, № 2 («Ազգագրություն Տեմիրճիպաշյանց»), 1909, № 1 («Զգալի կորուստներ»), «Բազմավեպ», 1908, № 12 («Կենսագրականք»), 1948, № 11-12... («Եղիա Տեմիրճիպաշյան»), **Մամիկյան Ռ.**, Եղիա Տեմիրճիպաշյան, Պոլիս, 1909, 31 էջ: **Էսաջանյան Լ.**, Եղիա Տեմիրճիպաշյան, Պոլիս, 1908, 15 էջ: Հայ նոր գրականության պատմություն, պատ. 3, Երևան, 1964, էջ 650-664:

Մայիսի 17. Թիֆլիսում ծնվեց հրապարակախոս, բանասեր, հոդվածագիր (հայերեն և ռուսերեն լեզուներով) Գրիգոր Ավետիսի Ջանշյանը (Ջանշին): Վախճ. 1900 թ. հուլիսի 17-ին, Մոսկվայում:

«Արարատ» (Էջմիածին), 1900, № 8-9 («Գրիգոր Ջանշյան»), «Մշակ», 1900, № 132 («Գրիգոր Ջանշյան»), 1910, № 160 («Մարդասեր հրապարակախոսի հիշատակին», «Անգուգական մարդը...»):

Մայիսի 20. Պոլսում ծնվեց հայ դասական բանաստեղծ, դրամատուրգ, հրապարակագիր Պետրոս Աբրահամի Դուրյանը: Վախճ. 1872 թ. հունվարի 21-ին, իր ծննդավայրում:

Էքսերճյան Բ., Ընդարձակ կենսագրություն բարեհիշատակ Պետրոս Դուրյանի, Պոլիս, 1893, 114 էջ, **Չոպանյան Ա.**, Պետրոս Դուրյանի կյանքն ու գործը, Երևան, 1967, 243 էջ: **Շարուրյան Ա.** Պետրոս Դուրյան (կյանքը և գործը), Երևան, 1972, 359 էջ:

Հունիս. «Բանասերը» (№ 6) «Բանաստեղծություն» ընդհանուր խորագրի ներքո, արևմտահայերեն հրատարակում է ուսումնասիրություն հայկական ժողովրդական երգերի մասին: Վերջում բերված են քառյակներ Նահապետ Քուչակից:

Հունիսի 22. «Արշալույս արարատյանը» (№ 392) իտալերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակում է «Առակ» ստեղծագործությունը:

Հուլիսի 3. «Եվրոպան» (№ 28) հրատարակում է «Ազգային հնությունք» ուսումնասիրությունը: Ավարտ՝ № 30 (հուլիսի 17):

Հուլիս. «Բուրաստան սուրբ Սահակյան» ամսագիրը (№ 2) արևմտահայերեն հրատարակում է Միքայել Առանձար Մարգարյանի «Արձանագիր Հենրիկո Ճեկինս» բանաստեղծությունը:

Վերջինիս ստեղծագործությունները հետագայում հրատարակվել են հետևյալ հաջորդականությամբ. «Ո՛ հայր» (գրաբար, № 11, նոյեմբեր), «Մեղու և մանուկ» (առակ, գրաբար), «Եղերերգութիւն» (գրաբար, № 12, դեկտեմբեր), «Անմեղութիւն» (գրաբար, 1852, № 2, փետրվար), «Երգ առաւոտեան» (գրաբար, № 5, մայիս), «Քոյրք» (գրաբար, № 7, հուլիս. որպէս բնաբան այստեղ բերված է մի քառյակ Շեքսպիրից) և այլն:

Հուլիսի երկրորդ կես. «Բազմավեպը» (№ 14) արևմտահայերեն հրատարակում է Ղևոնդ Ալիշանի «Հովհաննես վարդապետ Երզնկացի» հոդվածը:

Օգոստոս. «Բուրաստան սուրբ Սահակյան» ամսագիրը (№ 8) արևմտահայերեն հրատարակում է Հեթում Սմբատ Եղիայանի «Ծեր և առույգ աղվեսք կամ ագահության պատիժը» առակը:

Վերջինս հետագայում հրատարակել է. «Երկու գայլ և մեղուք», 1852, № 2 (փետրվար), «Քնար հայկական ի մահ մեծին Միհրդատ», 1852, № 6 (հունիս), «Ամառ» (գրաբար), «Երգ օրորոցի», «Երգ փոքրիկ մանկական կորուսելու» (արևմտահայերեն, № 7, հուլիս):

Օգոստոսի 31. «Արշալույս արարատյանը» (№ 397), արևելահայերեն հրատարակում է «Հարգո հրատարակիչ» հոդվածը (հեղ. «Ոմն ի ազգասիրաց»): Քննարկված է Փավստոսի ազգության, Քսենոֆոնի պատմության, Մովսես Խորենացու ժամանակաշրջանի և Աստվածաշնչի հայերեն թարգմանության հետ առնչվող մի քանի հարցեր:

Վիճարկելով հոդվածի որոշ դրույթները, նույն պարբերականում (№ 401, հոկտեմբերի 26) հանդես եկավ Հովհաննես Պրուսացի Չամուռճյան-Տերոյենցը, որին իր հերթին նորից պատասխանեց «Ոմն ի ազգասիրացը» №№ 403-408-ում (նոյեմբերի 23-28), մասնավորապես կոնկրետանալով Փավստոսին առնչվող հարցերին:

Սեպտեմբերի 6. Պոլսում ծնվեց գրականագետ-բանասեր, թարգմանիչ (հունարենից և ֆրանսերենից՝ հայերեն) Արսեն Սուքրյանը (նաև՝ Սուքրի) Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1873 թ. օգոստոսի 24-ից, վախճ. 1882 թ. օգոստոսի 7-ին:

Սկզբնական շրջանում «Բազմավեպում» հանդես էր գալիս «Ա.Ս.» ստորագրությամբ:

«Բազմավեպ», 1932, № 8-9... («Արսեն Սուքրի»):

Սեպտեմբեր. Պոլսում ծնվեց գրական-մշակութային գործիչ, լրագրող, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Գևորգ Ութուջյանը: Արմաշի միաբանության անդամ էր 1875 թ., վախճ. 1945 թ. փետրվարին, իր ծննդավայրում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Հայաստանցին» կեղծանունով:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1914, էջ 234-237: «Հայաստանի կոչնակ», 1945, № 27 («Հայ ազգային կյանք»):

Սեպտեմբերի 14. «Արշալույս արարատյանը» (№ 298) հրատարակում է Մեսրոպ Թադիադյանի «Ազգասէր արարատեան, այս երրորդ անգամ» գրաբար հոդվածը:

Հեղինակը տեղեկացնում է, որ արդեն երրորդ տարին է, ինչ ինքը մեծ դժվարությամբ հրատարակում է իր «Ազգասեր արարատյան» պարբերականը (ինչպես հայտնի է, վերջինս սկսել էր հրատարակվել 1848 թ. սեպտեմբերից) և նախագուշացնում է, որ գրական-հասարակական-տնտեսական բնույթի այլևայլ արգելքների պատճառով, նրա հետագա գոյությունը լուրջ սպառնալիքի տակ է դրվում:

Սեպտեմբեր. «Բանասերը» (№ 9) գրաբար հրատարակում է «Յաղագս սրբազան քանաստեղծութեան առ հայս» ուսումնասիրությունը և «Ռամկական երգեր» ընդհանուր խորագրի ներքո՝ «Երգ յարոջ», «Գինի» ժողովրդական քանաստեղծությունները:

Սեպտեմբերի 18. «Եվրոպան» (№ 39), գերմաներեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Քրիստափոր Շմիդտի «Փերդինանդոս կամ խղճմտանքի զորությունը» վիպակը: Ավարտ՝ 1852 թ. № 15 (ապրիլի 1):

Հոկտեմբերի երկրորդ կես. «Բազմավեպը» (№ 20) գրաբար հրատարակում է Ղևոնդ Ալիշանի «Առանձար սեպուհի Ամատունի, հայոց գնդին հեծելապետ» քանաստեղծությունը: Լեզվաճական որոշ փոփոխություններից հետո, արտատպվել է «Նուագքի» Գ («Հայրունի») հատորում (Վենետիկ, 1867, էջ 104-107):

Հոկտեմբեր. «Բանասերը» (№ 10), արևմտահայերեն հրատարակում է «Լեզվի և գրության (իմա. գրականության – Ս.Շ.) վրա» ուսումնասիրությունը:

Նոյեմբերի 6. «Եվրոպան» (№ 46), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Վիկտոր Լանգլուայի «Ռուբինյան թագավորներուն մինչև հիմա չհրատարակված դրամները» հոդվածը: Ավարտ՝ 1852 թ., № 16 (ապրիլի 8):

Նոյեմբերի առաջին կես. «Բազմավեպը» (№ 21), Կարապետ Ուրթուջյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ալֆոնսո Լամարթինի «Լոնտրայի մեջ առավոտ մը, կամ պահպանողական ու աշխարհակործան ընկերականություն» ուսումնասիրությունը:

Որոշ ընդհատումներով, շարունակվում է մինչև «Բազմավեպի» 1852 թ. № 8-ը (ապրիլի երկրորդ կես):

Նոյեմբերի 26. Վենետիկում վախճանվեց բանաստեղծ, աշխարհագրագետ, բանասեր, թարգմանիչ (անգլերենից, ֆրանսերենից, ռուսերենից՝ հայերեն) Մինաս Մանուկի Բժշկյանը: Ծնվ. 1777 թ. հոկտեմբերի 15-ին, Տրապիզոնում, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1804 թ.:

«Բազմավեպ», 1852, № 10 («Փոխումն այստեացս... Մինասս Բժշկեան...»), Մխիթարյան հոբելյան, Վենետիկ, 1901, էջ 220:

Նոյեմբեր. «Բանասերը» (№ 11) գրաբար հրատարակում է «Յաղագս սկզբնաւորութեան թատերական արուեստին յայլ և այլ ազգս» ուսումնասիրությունը:

Հունական, իտալական, ֆրանսիական, գերմանական և այլ երկրների թատրոնների համառոտ բնութագրականները տալուց հետո, մի առանձին հատված էլ հատկացված է հայ թատրոնի պատմությանը:

Դեկտեմբերի 21. Սամսոնում (Հյուս. Թուրքիա) ծնվեց հրապարակախոս, արձակագիր, գրականության պատմաբան, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Արփիար Փիլիպոսի Արփիարյանը: Վախճ. 1908 թ. փետրվարի 12-ին, Կահիրեում:

1884-1887 և 1889-1891 թթ. Պոլսում խմբագրել է «Մասիս» լրագիրը, իսկ 1890-1893 թթ.՝ «Հայրենիք» օրաթերթը: 1902-1903 թթ. Վենետիկում խմբագրել է «Հայ հանդես» կիսամյակը, 1905-07 թթ. Կահիրեում՝ «Շիրակ» ամսագիրը:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «***», «Հայկակ», «Հ.», «Հրագդան», «Հրպետ», «Սկեպտիկ» կեղծանուններով:

Ստեփանյան Գ., Արփիար Արփիարյան, Երևան, 1955, 284 էջ:

Վերջեր. Կարինում, Գրիգորիս վարդապետ Զորաբաբեյանի նախաձեռնությամբ, հիմնվում է կրթական-լուսավորական «Արծնյան ընկերությունը»: Որոշ փոփոխություններից հետո, ընկերությունը հարատևեց մինչև 1870-ական թվականները:

«Հանդես ամսօրյա», 1958, № 11-12 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

-Տրապիզոնում ծնվեց պետական գործիչ, դիվանագետ, հայության կրթական-մշակութային գործունեության սատարող Արամ Հովհաննեսի Երեմյանը: Վախճ. 1926 թ. նոյեմբերի 17-ին, Պոլսում:

«Բազմավեպ», 1927, № 1 («Հիշատակ Արամ Երամ էֆենդիի»):

-Այնթափում (Հար. Թուրքիա) ծնվեց գրական-մշակութային գործիչ, հայ եկեղեցու պատմաբան, լրագրող Սարգիս Լևոնյանը: Վախճ. 1909 թ. ապրիլի 15-ին, Ադանայում (Հար. Թուրքիա):

«Վկա» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1910, էջ 377-378:

-Վերին Ագուլիսում իր գործունեությունն է սկսում «Ագուլիսի առևտրական ուսումնարանը»: Ուսումնարանը գտնվում էր Կովկասյան դիրեկցիայի տնօրինության ներքո, ուներ քսանմեկ հոգուց բաղկացած հոգաբարձություն, մասնագիտական առարկաներից բացի ավանդվում էին հայերեն, ռուսերեն և պարսկերեն լեզուներ: Այն փակվեց 1864 թ.:

«Մեղու Հայաստանի», 1859, № 28 («Տեղեկություն...»), 1865, № 30 («Հարգո խմբագիր»):

-Պոլսում ծնվեց թատերական գործերի հեղինակ, Պ. Դուրյանի մտերիմ ընկեր Վարդան Թաղևոսի Լյութֆյանը: Վախճ. 1871 թ. մայիսի 22-ին, իր ծննդավայրում:

«Մասիս», 1871, № 1091 («Ազդ»), **Դուրյան Պ.**, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1971, էջ 191-192, 348-350, 357:

-Կալկաթայում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, հողվածագիր (հայերեն և անգլերեն լեզուներով), թարգմանիչ (հայերենից՝ անգլերեն) Կրեկորի Մարգարը (Գրիգոր Մարգարի Գրիգորյան): Վախճ. 1920 թ. Լոնդոնում:

1913 թ. Լոնդոնում հիմնել և մինչև 1918 թ. խմբագրել է «Ararat» անգլերեն ամսագիրը:

«Բազմավեպ», 1917, № 8 («Գնդապետ Գ.Մ. Կրեկոր»): **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, Երևան, 1973, էջ 260: «Կոչնակ Հայաստանի», 1920, № 40 («Գնդապետ Գ.Մ. Կրեկորի»):

-Կեմերեկ գյուղում (կենտր. Թուրքիա, Մերաստիայից հարավ-արևմուտք) ծնվեց գրական-մշակութային գործիչ, լրագրող (հայերեն և անգլերեն լեզուներով), խմբագիր Անդրանիկ Այվազյանը: Վախճ. 1919 թ. Նյու-Յորքում:

1875-1884 թթ. Պոլսում խմբագրել է «Ավետաբեր» շաբաթաթերթը:

Սահակ-Մեսրոպ, Հայուն տարեցույցը, Պոլիս, 1913, էջ 250-251: **Պոստոյան Մ.**, Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 143:

-Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական, ՀՍՍՀ) ծնվեց մշակութային գործիչ, թարգմանիչ (անգլերենից, ֆրանսերենից, գերմաներենից՝ հայերեն) Ավետիք Եզեկյանը: Վախճ. 1916 թ. նոյեմբերի 26-ին, Թիֆլիսում:

«Մշակ», 1916, № 266 («Ավետիք Ս. Եզեկյան»), № 268 («Ա. Եզեկյանի մահվան շուրջը», «Զույգ սիրելիներ»), № 273 («Ավ. Եզեկյանի մահվան առիթով»):

- Պոլսում ծնվեց գրական-մշակութային գործիչ, բանասեր, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Նշան Ճիվանյանը: Վախճ. 1933 թ. հոկտեմբերին:

«Հորո» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Հորո, Թարթափումներ գրական հանելուկներու շուրջ, հավելյալ կենսագրական նոթեր, Պոլիս, 1926, 36 էջ: «Հայաստանի կոչնակ», 1933, № 42 («Հայ ազգային կյանք»), № 47 («Հորո»):

-Թիֆլիսում ծնվեց դերասան, թատերական քննադատ, արձակագիր Հովհաննես (Վանո) Գրիգորի Տեր-Գրիգորյանը: Վախճ. 1931 թ. իր ծննդավայրում:

«Վանո», «Հ.Տ.Գ.», «Անհայտ» և այլ կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Զմշկյան Գ., Իմ հիշատակարանը, Երևան, 1953, էջ 224: **Սունդուկյան Գ.**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Երևան, 1951, էջ 639:

-1851 (?) Ադրիանապոլսում (Եվրոպական Թուրքիա) ծնվեց գրական-մշակութային գործիչ, լրագրող Սահակ Պարթևյանը: Վախճ. 1900 թ. հոկտեմբերի 7-ին, Տենիզլիում (Հարավ-արևմտյան Թուրքիա):

«Բյուզանդիոն», 1900, № 1229 («Գրագետ քահանայի մը մահը»):

-1851 (?) Սեբաստիայում (Կենտր. Թուրքիա) ծնվեց մշակութային գործիչ, լրագրող (հայերեն, թուրքերեն և ֆրանսերեն լեզուներով) Պողոս Պառնասյանը: Վախճ. 1902 թ. մայիսի 2-ին, Պոլսում:

«Վաղարշակ-Պողոս Պառնասյան», «Վ.Պ. Պառնասյան», «Վաղարշ» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Մասիս», 1902, № 18 («Մահ»), № 19 («Պառնաս Պողոս էֆենդի»):

-1851 (?) Պոլսում ծնվեց թարգմանիչ (թուրքերենից և ֆրանսերենից՝ հայերեն), լրագրող Տիգրան Ադամյանը: Վախճ. 1908 թ. փետրվարի 12-ին, իր ծննդավայրում:

Պոլսում խմբագրել է «Ճերիտեյի շարգիտ» (իմա՛. «Արևելյան լրագիր») հայաստան թուրքերեն թերթը:

«Բյուզանդիոն», 1908, № 3461 («Մահագույժ»), № 3463 («Վաղեմի խմբագիր...»), **Թեոդիկ**, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1910, էջ 16: **Դուրյան Պ.**, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1971, էջ 160-183, 324-345, 356:

-1851 (?) Խարբերդում ծնվեց գրական-մշակութային գործիչ, հայերեն և թուրքերեն դասագրքերի հեղինակ, լրագրող Սարգիս Գասապյանը: Վախճ. 1907 թ. Պարտիզակում:

Պարսամյան Մ., Ակն և ակնեցիք, Փարիզ, 1952, էջ 690:

-1851 (?) Շուշիում (Լեոնային Ղարաբաղ) ծնվեց բանասեր, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն), մշակութային գործիչ Գրիգոր Տեր-Մեքեյանը (կեղծանունը՝ «Սերմնացան»): Վախճ. 1908 թ. ապրիլի 7-ին:

«Մշակ», 1908, № 79... («Գրիգոր Տեր-Միքեյան»):

-1851 (?) Պոլսում ծնվեց երգիծաբան-գրող, խմբագիր Անտոն Սազայանը: Վախճ. 1927 թ. փետրվարի 19-ին:

1875-1877 թթ. Պոլսում խմբագրել է «Միմոս» եռօրյա հայերեն-թուրքերեն պարբերականը:

«Հայաստանի կոչնակ», 1927, № 13 («Գաղութներ»), **Թեոդիկ**, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1928, էջ 644:

-1851 (?) Ախալցխայում (այժմ՝ Վրացական ՍՍՀ) ծնվեց մշակութային գործիչ, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն) Ալեքսանդր Աբրահամի Ղազազյանը (մասնագիտությամբ՝ բժիշկ): Վախճ. 1913 թ. հունվարի 31-ին, Թիֆլիսում:

«Մշակ», 1913, № 25 («Բժիշկ Ալ. Ղազազյան»), № 26 («Մահախոսական»), № 28 («Հանգուցյալ Ալ. Ղազազյանի հիշատակին»):

-1851 (?) Տիգրանակերտում (Հարավ-արևելյան Թուրքիա) ծնվեց ամերիկահայ կրթական-մշակութային գործիչ, դրամատուրգ Արմենակ Շիշմանյանը: Վախճ. 1911 թ. օգոստոսի 3-ին, Ուեստ Հոպքընում (ԱՄՆ):

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1912, էջ 358:

-1851 (?) Պոլսում ծնվեց գրական-մշակութային գործիչ, լրագրող, թարգմանիչ (անգլերենից՝ հայերեն) Հովհաննես Կրճիկյանը: Վախճ. 1912 թ. աշնանը, իր ծննդավայրում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1914, էջ 301:

-1851 (?) Արաբկիրում (Հարավ-արևելյան Թուրքիա) ծնվեց հողվածագիր, թարգմանիչ (գերմաներենից՝ հայերեն) Հակոբ Չրաքյանը: Վախճ. 1910 թ. օգոստոսի 19-ին, Պոլսում:

«Բյուզանդիոն», 1910, № 4212 («Մահագր»): **Թեոդիկ**, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1911, էջ 377:

-1851 (?) Կամարակապ գյուղում (Ակնի շրջ. Արևել. Թուրքիա) ծնվեց լրագրող, արձակագիր, ազգագրագետ Արմենակ Շփիկյանը: Վախճ. 1913 թ. Պոլսում:

Ազատյան Թ., Ակն և ակնցիք, Պոլիս, 1943, էջ 79:

-1851 (?) Ծնվեց լրագրող, գրական-մշակութային գործիչ, թարգմանիչ (գերմաներենից՝ հայերեն) Գրիգոր Խարիտոնի Շահբուդաղյանը: Վախճ. 1913 թ. նոյեմբերի 6-ին, Թիֆլիսում:

«Մշակ», 1913, № 248 («Մահախոսական»), № 249 («Գրիգոր Շահբուդաղյանի թաղումը»):

-Վենետիկում արևմտահայերեն հրատարակվում է Ամբրոսիոս Գալֆայանի «Համառոտություն ժամանակակից պատմության» աշխատությունը: 237 էջ:

-Վենետիկում գրաբար հրատարակվում է Վրոյր Որմզդանի (Էդ. Հյուրմյուզյան) «Բուրաստանք» պոեմը: 83 էջ:

Հետևելով Վիրգիլիոսին, որն իր «Գեորգիկայում» գյուղացուն բացատրում է հողագործության օրենքներն ու օրինաչափությունները, Հյուրմյուզյանն էլ տվել է պատմական Հայաստանի տարածքում գտնվող ծաղկատեսակների նկարագրությունը, ապա և՝ «Խրատք առ ի խնամա...»:

-Վենետիկում գրաբար վերահրատարակվում է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմը: 600+66 էջ: («Շարք ընտիր մատենագրաց նախնյաց», հատ. Ե):

Գիրքն ունի «Գրիգորի Նարեկայ վանից վանականի ողբերգութիւն» վերնագիրը: Վերջում, «Աւետարանք բժշկութեան» խորագրի ներքո գետեղված են Քրիստոսի վարքը նկարագրող զանազան հատվածներ չորս ավետարանիչների գործերից:

-Վենետիկում գրաբար հրատարակվում է Եփրեմ Սեթի «Իրավագիտութիւն. բնական օրենք գրաւական, տոհմային ու ազգային իրաւունք» աշխատությունը: 656 էջ:

-Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Եփրեմ Չագճյանի «Պատմություն հայոց, հայկազանց տերության սկսելեն մինչև մեր ժամանակները» աշխատությունը: 483 էջ: («Մատենադարան Արամյան ընկերության», հատ. Դ):

Նույնը՝ 1872 թ., որոշ կրճատումներով: 420 էջ:

-Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Կղեմես Սիպիլյանի «Տրդատա առանձնանալը, վերջին օրերն ու մեռնիլը» ստեղծագործությունը: 51 էջ: («Կրթական և զբոսայի տետրակներ», հատ. ԺԱ):

«Տրդատա առանձնանալն ու մահը» խորագրով, հատվածաբար հրատարակվում էր Վիեննայի «Եվրոպա» հանդեսում, 1851, № 13-ից (մարտի 20) մինչև № 26 (հուլիսի 19):

-Վիեննայում, ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն ազատ թարգմանությամբ, հրատարակվում է «Արևելյան հիշատակագիրներ նամակներե քաղված» ժողովածուն: 90 էջ: («Կրթական և զբոսայի տետրակներ», հատ. ԺԲ):

-Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Ղևոնդ Հովհանյանի «Մեծն Ներսես և Հայաստանի վրա ունեցած ազդեցությունը» աշխատությունը: 82 էջ: («Կրթական և զբոսայի տետրակներ», հատ. ԺԹ):

Հատվածաբար հրատարակվում էր «Եվրոպայում», 1851, հունվարի 26-ից (№ 27) մինչև սեպտեմբերի 25-ը (№ 40):

-Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Հովսեփ Գաթրճյանի «Պատմություն մատենագրության հայոց» աշխատությունը: 62 էջ: («Կրթական և զբոսայի տետրակներ», հատ. Ի):

Ընդգրկում է հեթանոսական անգիր շրջանի բանաստեղծությունները («Երկներ երկին», «Քեզ ասեմ այր քաջ Արտաշէս», «Վարդգէս մանուկ» և այլն, վերլուծված են նրանց գրականագիտական, տաղաչափական, լեզվաոճական առանձնահատկությունները:

-Վիեննայում, Կղեմես Սիպիլյանի ազատ փոխադրությամբ, հրատարակվում է «Փեռնանդ Գորդեզ (իմա՛. Էռնան Կորտես – Ս.Շ.) կամ Մեքսիկոյի առնվիլը» վեպը: 218 էջ:

-Վիեննայում, Փիլիպոս Ճամձյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն համառոտ թարգմանությամբ, հրատարակվում է Մորից (Մավրիտիոս) Վագների «Ճանապարհորդություն ի Հայաստան» աշխատությունը: 218 էջ:

Ուինի «Մասն Ա.» նշումը, սակայն հետագա մասերը չեն հրատարակվել: Վերջում (էջ 161-218) տրված է Հայաստանի օդերևութաբանական, բուսական և կենդանական աշխարհի նկարագրությունը:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Նիկողայոս Զորայանի «Վարժություն ընթերցանության ի պետս դպրոցաց» աշխատությունը: 266 էջ:

-Պոլսում հրատարակվում է Սեբեոսի «Պատմութիւն ի Հերակլն» աշխատությունը: Բնագրային աշխատանքները, գրաբար առաջաբանն ու ծանոթությունները Թադևոս Միհրդատյանցի: 241 էջ:

-Պոլսում հրատարակվում է Գրիգոր Օտյանի «Առաջարկություն աշխարհաբար լեզվի վրա» գրքույկը: 12 էջ (տե՛ս 1852 թ. ապրիլի 11):

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Արշալույս արարատյան լրագրին 377 թվոյն մեկ հոդվածին ու անոր մեջը տպված նամակին վրա ճշմարտասեր անձի մը խորհրդածությունները» գրքույկը: 34 էջ:

«Արշալույս արարատյանի» հիշյալ համարում (1850 թ. նոյեմբերի 24) հրատարակված է կարդինալ Ֆրանսոնիի ուղերձը Անտոն Հասունյանին, Պոլսի «Համագոյաց ընկերության» գործունեությունն արգելելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու մասին և «Հարգո հրատարակիչ» խորագիրը կրող մի նամակ (ունի «***» ստորագրությունը), որտեղ դրվատվում է այդ ընկերությունն ու նրա կատարած ազգօգուտ գործը:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Զատագովություն Համագոյաց ընկերության, ճշմարտախոս անձե մը գրված» աշխատությունը: 43 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Մկրտիչ Խրիմյանի «Հրավիրակ երկրին ավետյաց» չափածո ստեղծագործությունը: 143 էջ:

Նույնը՝ Երուսաղեմ, 1892 թ., փոփոխումներով ու լրացումներով, ԺԶ+159 էջ:

- Շամախիում, Մովսես Զոհրապյանի գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է «Գիտութիւն շնորհաց» աշխատությունը: 166 էջ:
- Կալկաթայում գրաբար հրատարակվում է Ներսես Լամբրոնացու «Ատենաբանութիւն վասն միութեան եկեղեցոյ և ճառք ի համբարձումն Քրիստոսի և ի գալուստ հոգւոյն սրբոյ» աշխատությունը: Գիրքը հրատարակության է պատրաստել Մեսրոպ Թաղիադյանը: 121 էջ:
- Զմյուռնիայում արևմտահայերեն հրատարակվում է «Լեռներուն վրայի գյուղը» պատմվածքը: 32 էջ:
- Թիֆլիսում հրատարակվում է Միքայել Պատկանյանի կազմած ընթերցարանը՝ «Պարզև մանկանց» խորագրով: 116 էջ:
Նույնը՝ 1856 թ., 111 էջ:
- Մոսկվայում գրաբար հրատարակվում է Ստեփաննոս Նազարյանցի «Յաղագս փորձական հոգեբանության ճառ» աշխատությունը: 80 էջ:

1 8 5 2

Հունվար. Պոլսում (Գումգաբու), Նիկողոս Պալյանի սատարմամբ, իր գոյությունն է սկսում կրթական-մշակութային «Ընթերցասիրաց ընկերությունը», որն իր առջև նպատակ է դնում «ազգի մեջ գրքեր տարածել և ընթերցասիրություն սերմանել»: Ընկերությունը 1870-ական թվականներին դեռ գոյություն ուներ:

Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հ. Ա, Վիեննա, 1957, էջ 609-612:

Հունվարի 25. Նոր-Բայազետում (այժմ՝ Կամո, ՀՍՍՀ) ծնվեց լրագրող, բանասեր Սարգիս եպիսկոպոս Փիլոյանը: Էջմիածնի միաբանության անդամ էր 1873 թ., վախճ. 1915 թ. հոկտեմբերի 12-ին, Սևանում:

«Արարատ» (Էջմիածին), 1915, № 9-10 («Սարգիս եպիսկոպոս Փիլոյան»):

Հունվարի 29. «Եվրոպան» (№ 6) սկսում է հրատարակել «Խորհրդածությունք ազգային լեզվի վրա» ուսումնասիրությունը: Շարունակվում է մինչև № 30 (հուլիսի 14) և մնում է անավարտ:

Փետրվարի 2. Պոլսում, Կարապետ Ութուջյանի խմբագրությամբ, արևմտահայերեն սկսում է հրատարակվել «Մասիս» ազգային, քաղաքական, տնտեսական և բանասիրական լրագիրը: Պարբերականության և հասարակական-քաղաքական ուղղության որոշ փոփոխություններով, իր գոյությունը շարունակում է մինչև 1908 թ.:

Մինչև 1884 թ. Ութուջյանը իր լրագիրը խմբագրել է միայնակ (1863-1865 թթ. «օգնական խմբագիր» ունենալով Ազարիկ-Միհրդատ Գևորգյանին), որից հետո, ինքը մնալով որպես «արտոնատեր», խմբագրի պարտականությունները հաջորդաբար վարել են Գրիգոր Զոհրապը (սկզբում՝ Հրանտ Ասատուրի հետ), Տիգրան Արփիարյանը, Միքայել Շամտանճյանը, Բյուզանդ Քեչյանը, Հրանտ Ասատուրը, Տիգրան Արփիարյանը (երկրորդ անգամ), Ենոք Արմենը:

Փետրվարի 23. Պոլսում հրատարակվում է Անտոն Հասունյանի կոնդակը, որով նա բանադրում և արգելված գիրք է հայտարարում Հովսեփ Վարդանյանի «Ազապի հիքյայեսի» («Ազապի պատմությունը») հայատառ թուրքերեն վեպը:

«Արշալույս արարատյան», 1852, № 411 («Ազգային»), «Տեղեկագիր», 1955, № 8 («Մի պարզաբանում «Ազապի» կապակցությամբ»), 1956, № 11 («Նոր պարզաբանումներ «Ազապի» վեպի մասին»):

Փետրվարի 28. Պոլսում, Գրիգոր Մարկոսյանի և Սահակ Ապրոյանի համատեղ խմբագրությամբ, արևմտահայերեն սկսում է հրատարակվել «Նոյան աղավնի» քաղաքական, ազգային, բանասիրական և առևտրային շաբաթաթերթը: 1853 թ. օգոստոսի 8-ին, հրատարակելով իր 74-րդ համարը, «Նոյան աղավնին» դադարում է:

Շաբաթաթերթի հրատարակությունն ազդարարող «Հայտարարությունը» հրատարակվել է 1851 թ. դեկտեմբերի 20-ին: 1853 թ. մարտի 14-ից, «Նոյան աղավնին» սկսում է հրատարակվել Արապյան տպարանում (մինչ այդ հրատարակվում էր իր սեփական՝ «Նոյան աղավնու» տպարանում):

Փետրվարի 29. Պոլսում ծնվեց գրահրատարակիչ, գրական-մշակութային գործիչ, լրագրող Կարապետ Ա. Պարոնյանը: Վախճ. 1915 թ. սեպտեմբերի 7-ին, իր ծննդավայրում:

«Դիմակ» և «Ապտակ» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում, մասնավորապես, «Մամուլ» շաբաթաթերթում:

Թեոդիկ, Տիպ ու տառ, Պոլիս, 1912, էջ 105-106: Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1921, էջ 322:

Մարտ. «Բուրաստան սուրբ Սահակյան» ամսագիրը (№ 3) գրաբար հրատարակում է Հովհաննես Վահան Կրճիկյանի «Ի մեծն Իսահակ պարթև, աստուածարեալ հայրապետ» բանաստեղծությունը:

Հետագայում հրատարակել է «Մանկունք և մեղուք» (առակ, արևմտահայերեն, № 4, ապրիլ), «Երգ ի շնորհաբեր այցելութիւն... Գեորգ ամիրայի Երամեան» (գրաբար, № 5, մայիս) և այլ գործեր:

Մարտի 22. «Մասիսը» (№ 8), հաշվի առնելով ընթերցողների ցանկությունը, ստեղծում է հատուկ ենթաբաժին «Լրագիր տղայոց» խորագրի ներքո, որտեղ, անկանոն պարբերականությամբ, սկսում է հրատարակել ինքնուրույն և թարգմանական բնույթի գեղարվեստական փոքրակտավ ստեղծագործություններ: Ենթաբաժինը դադարում է 1854 թ. սկզբներին:

Ապրիլի 10. «Նոյան աղավնին» (№ 7), Սմբատ Սարգսյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ժան Ռասինի «Ի մահ արքային Բաբիլոնեան» բանաստեղծությունը:

Ապրիլի 11. «Արշալույս արարատյանը» (№ 413) արևելահայերեն հրատարակում է Գրիգոր Օտյանի «Առաջարկություն աշխարհաբար լեզուն կանոնավորելու և հասարակաց լեզու ընելու վրա» հոդվածը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Ապրիլի 17. «Նոյան աղավնին» (№ 8), Հարություն Տետեյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Ալեքսանդր Դյումայի «Կոմս Մոնտե Քրիստո» վեպը: Աննշան ընդհատումներով շարունակվում է մինչև տարվա վերջը և մնում անավարտ:

Ապրիլի 23. «Մասիսը» (№ 13) արևմտահայերեն հրատարակում է «Նորագյուտ հայերեն մատյան մը» գրախոսականը (հեղ. Հ.Հ.Գ.): Գրախոսված է Սեբեոսի «Պատմութիւն ի Հերակլն» գիրքը:

Ապրիլի 24. «Նոյան աղավնին» (№ 9) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Կոստանդնուպոլսո մեջ և շրջակայքը գտնված ազգային ուսումնարաններուն վրա տեղեկություններ» հոդվածը: Որոշ ընդհատումներով շարունակվում է մինչև № 30 (սեպտեմբերի 28):

Ապրիլի 28. Սուլթան Աբդուլ Մեջիթի կարգադրությունը՝ օտար լեզվով (ոչ թուրքերեն) հրատարակվող գրքերի համար նախապես պետության համապատասխան մարմիններից անհրաժեշտ թույլտվություն ստանալու մասին:

«Նոյան աղավնի», 1852, № 10:

Ապրիլ. «Բուրաստան սուրբ Սահակյան» ամսագիրը (№ 4) գրաբար հրատարակում է Թովմա-Գեղամ Պալճյանցի «Գարուն» բանաստեղծությունը: «Հայաստանի ռամկական երգ մը» խորագրով, ժողովրդական լեզվով, տպագրված է նաև ազգային մի բանաստեղծություն («Ըմ սիրուն կառնուկ, էմեն հեղ էտպես»):

Պալճյանցը հետագայում հրատարակել է «Շանը ունեցած բնական ձիրքերը» (արևմտահայերեն, № 5, մայիս), «Նուագ» (գրաբար, № 6, հունիս) և այլ բանաստեղծություններ:

Ապրիլի 29. «Եվրոպան» (№ 19), արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Վրեժխնդրություն» վեպը: Ավարտ՝ 1853 թ. № 8 (փետրվարի 9):

Մայիսի առաջին կես. «Բազմավեպը» (№ 9) արևմտահայերեն տպագրում է «Հովհաննես Ռասին» (ի՛մա Ժան Ռասին) հոդվածը:

Մայիսի 12. «Եվրոպան» (№ 21) արևմտահայերեն հրատարակում է «Սեբեոս եպիսկոպոս պատմագիր» ուսումնասիրությունը: Ավարտ՝ № 31 (հուլիսի 21): Վերջին հատվածն ունի «Բանասիրական հայեցված մը Սեբեոսի պատմագրության վրա» ենթավերնագիրը:

Մայիս. «Բուրաստան սուրբ Սահակյան» ամսագիրը (№ 5) Գարեգին-Հովհաննես Տեր-Կարապետյանի՝ անգլերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակում է Ալեքսանդր Պոպի «Բանք քրիստոնէի ի կէտ մահուան եղելոյ առ հոգին» բանաստեղծությունը:

Մայիսի 22. «Նոյան աղավնին» (№ 13) Արմենակ Պալապանյանի՝ իտալերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, տպագրում է Կեսար Քանդուի «Բարեկիրթ մարդ» պատմվածքը: Ավարտ՝ № 21 (հուլիսի 17):

Մայիսի 23. Հռոմում վախճանվեց հայ եկեղեցու պատմաբան, արվեստի տեսաբան, բանասեր Իգնատիոս Փափազյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1786 թ. հունվարի 4-ից, ծնվ. 1765 թ. դեկտեմբերի 26-ին, Պոլսում:

«Բազմավեպ», 1852 թ. № 14 («Հանգիստ... Իգնատիոսի Փափազյան»), Մխիթարյան հոբելյան, Վենետիկ, 1901, էջ 219:

Մայիսի 25. Պոլսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, արձակագիր, լրագրող (հայերեն և անգլերեն լեզուներով) Միհրան Բաղդասարի Բաղդասարյանը: Վախճ. 1927 թ. ապրիլի 23-ին, Թավրիզում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Ականատես» կեղծանունով:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 362:

Հունիսի 1. Թեփեղուլեկում (այժմ՝ Արևիկ, Ախուրյանի շրջ., ՀՍՍՀ) ծնվեց բանասեր, գրականագետ Բարսեղ Սարգիսյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1878 թ. ապրիլի 21-ից, վախճ. 1921 թ. օգոստոսի 1-ին Վենետիկում:

«Բազմավեպ», 1921 թ. № 8 («Հանգիստ Բարսեղ Սարգիսյանի»):

Հունիսի 5. «Նոյան աղավնին» (№ 15) գրաբար հրատարակում է Մսեր Սսերյանցի «Մուկն եւ ձագ իւր», «Մուկն եւ գորտ» առակները և «Բանասեր ոմնի» «Բանասիրական տեղեկությունն ի վերա նորատիպ պատմությանն Սեբեոսի» գրախոսականը՝ արևմտահայերեն:

Հուլիսի 3. Պոլսում ծնվեց հասարակական գործիչ, հայկական գրական-մշակութային կյանքի տեսաբան, հոդվածագիր (հայերեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներով), թարգմանիչ (հայերենից՝ ֆրանսերեն), խմբագիր Մինաս Գրիգորի Չերազը (Չերազյան): Վախճ. 1929 թ. մարտի 27-ին, Մարսելում:

1889 թ. Լոնդոնում հիմնադրել և մինչև 1908 թ. խմբագրել է «Z' Armenie» ֆրանսալեզու (երբեմն՝ անգլերեն հավելվածով) քաղաքական և գրական թերթը:

Ալպոյաճյան Ա., Մինաս Չերազ (իբ կյանքը և գործը), Կահիրե, 1927, 368 էջ: **Ճանաչյան Մ.**, Պատմություն արդի հայ գրականության, Վենետիկ, 1953, էջ 349-351:

Հուլիսի առաջին կես. «Բազմավեպի» № 13-ում տպագրվում է «Կարոլոս Գոլդոնի» հոդվածը:

Օգոստոսի 4. «Եվրոպան» (№ 33), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Մուրացիկ մը» պատմվածքը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Օգոստոսի 10. Դավալու գյուղում (այժմ՝ ք. Աբովյան, ՀՍՍՀ) ծնվեց հայ իրավունքի տեսաբան, արձակագիր (գրում էր հայերեն և ռուսերեն լեզուներով), պրոֆեսոր Սողոմոն Ադամի Եղիազարյանը (Եղիազարով): Վախճ. 1935 թ. հոկտեմբերի 15-ին Քիշնևում (այժմ՝ Մոլդովական ՍՍՀ):

Պոստոյան Մ., Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 674, 959: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 300-301:

Օգոստոսի 11. «Եվրոպան» (№ 34) արևմտահայերեն հրատարակում է «Պարսից Վշտասայան Դարեհ թագավորին Հայաստանի կամ հայոց հին պատմության վերաբերյալ սեպակերպ արձանագիրները» հոդվածը: Ավարտ՝ № 41 (սեպտեմբերի 29):

Օգոստոսի 29. Մարզվանում (Թուրքիա) ծնվեց գրական-մշակութային գործիչ, լրագրող (հայերեն և անգլերեն լեզուներով), պատմաբան-բանասեր, հասարակական գործիչ Կարապետ Թումայանը: Վախճ. 1939 թ. հոկտեմբերի 19-ին, Լոնդոնում:

«Հայաստանի կոչնակ», 1930, № 9-10 («Հոբելյար պրոֆ. Կարապետ Թումայան»), № 15 («Պրոֆ. Կարապետ Թումայան»), 1939, № 47 («Պրոֆ. Կ. Թումայանի մահը»), № 49 («Պրոֆ. Կ. Թումայան»):

Օգոստոսի երկրորդ կես. «Բազմավեպը» (№ 16) արևմտահայերեն հրատարակում է Գևորգ Հյուրմյուզյանի «Պետրոս Կոռնել» (իմա՝ «Պիեր Կոռնել») հոդվածը: Հաջորդ համարում, նույնի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակվում է մի հատված (4-րդ արարվածը) Կոռնելի «Պոլիկտոս» ողբերգությունից:

Սեպտեմբեր. Պոլսում ծնվեց մաթեմատիկական դասագրքերի հեղինակ Մեսրոպ Սահակյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1873 թ. օգոստոսի 24-ից, վախճ. 1918 թ. մարտի 22-ին, իր ծննդավայրում:

Մխիթարյան հոբելյան, Վենետիկ, 1901, էջ 225: **Քոսյան Հ.,** Գերեզմանատուն կաթողիկե հայոց Կ. Պոլսո, Վիեննա, 1931, էջ 63:

Սեպտեմբերի 12. «Արշալույս արարատյանը» (№ 424) գրաբար հրատարակում է Հակոբ Ոսկանի «Առ գերապատիւ նախագահ արհիեպիսկոպոս հայոց հռովմեականաց Ա. Հասունեան...» երգիծական բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 20. «Եվրոպան» (№ 44) արևմտահայերեն հրատարակում է «Կարս քաղաքն ու համանուն կուսակալությունը» ուսումնասիրությունը: Ավարտ՝ № 48:

Նոյեմբերի 8. «Նոյան աղավնին» (№ 36) հրատարակում է մի հատված Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն աղուանից» գրքից:

Տպագրված է «Մահ օրհասական Ջիւանշիր մեծի իշխանին» հատվածը: Հաջորդ համարում (№ 37, նոյեմբերի 15) զետեղված է Դավթակ քերթողի «Ողբ ի մահն Ջուանշիրի մեծի իշխանին» պոեմը: Ավարտ՝ 1853 թ. № 53 (ապրիլի 18):

Նոյեմբեր. Պոլսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, իրավական-օրենսգետ Գաբրիել Գրիգորի Նորատունկյանը: Վախճ. 1936 թ. նոյեմբերի 26-ին, Փարիզում:

«Հանդես ամսօրյա», 1898, № 8-9 («Նորատունկյան Գաբրիել էֆենտի»): Ընդարձակ տարեգիրք ազգային հիվանդանոցի, Պոլիս, 1937, էջ 409-410: «Բազմավեպ», 1937, № 1 («Գաբրիել Նորատունկյան»):

Դեկտեմբերի 6. «Նոյան աղավնին» (№ 40) արևմտահայերեն հրատարակում է Ո.Բ.-ի (Նիկողայոս Զորայան ?) «Վիպասանության վրա խորհրդածություն» հոդվածը և Մատթեոս Հալեպյանի՝ իտալերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ՝ «Ամանթոս և յուր սիրահարը» պատմվածքը:

Տարեվերջ. Պոլսում Հովսեփ և Գևորգ Օդաբաշյանների սատարմամբ, իր գոյությունն է սկսում մշակութային «Սենեքերիմյան ընկերությունը»: Վերջինիս նպատակն էր «Սեբաստիո մեջ գտնված ազգային երկսեռ վարժարանները բարեկարգել... և ձեռնատուլինել Սեբաստիո վիճակին մեջ գտնված գյուղերուն վարժարանաց»: Ընկերությունը, որոշ ընդհատումներով, գոյություն ունեցավ մինչև 1922 թ. վերջը:

«Հանդես ամսօրյա», 1960, № 10-12 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

-Տրապիզոնում իր գոյությունն է սկսում կրթական-մշակութային «Գայանյան ընկերությունը»: Իր նոր շրջանն է սկսում 1856 թ. սկզբներից, երբ գործի գլուխ է անցնում Աբել Միխթարյանը: «Գայանյան ընկերությունը» գոյություն ունեցավ մինչև 1860-ական թվականները և ծաղկուն ժամանակ ուներ մինչև 500 անդամ:

«Հանդես ամսօրյա», 1964, № 10-12 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

-Բաղդադում, Մեսրոպ քահանա Դավթյանի ջանքերով և Մանվել Դիլանյանի տեսչությամբ, իր գոյությունն է սկսում տեղի արական դպրոցը, «Սուրբ թարգմանչաց վարժարան»

անունով: 1917 թ. Վիկտորիա Փափազյանի նախաձեռնությամբ «Սուրբ թարգմանչաց վարժարանը» միացվում է տեղի «Զապելյան աղջկաց վարժարանի» հետ (հիմն. 1895 թ.), դառնում է ութամյա «Թարգմանչաց-Զապելյան երկսեռ վարժարան» անունով: 1948 թ. հիշյալ վարժարանին միացվում է նաև երրորդ՝ «Սըվաճյան վարժարանը» (հիմն. 1921 թ.), տրվում է նոր՝ «Թարգմանչաց-Սըվաճյան միացյալ վարժարան» անվանումը, որը գոյություն ունի առ այսօր, ունենալով հազար աշակերտ և 42 ուսուցիչ:

Գրիգորյան Կ., Ամենուն տարեգիրքը, Բեյրութ, 1957, էջ 405-415, 433-435:

-Պոլսում (?) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, ճշգրիտ գիտության դասագրքերի հեղինակ Երվանդ Գարթայանը: Վախճ. 1922 թ. հունվարի 4-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1923, էջ 413:

-Պոլսում (?) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, լրագրող Թագվոր Կարազյոզյանը: Վախճ. 1918 թ. մայիսի 23-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1921, 324:

-Պոլսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, ֆելիետոնիստ Սարգիս Փափազյանը: Վախճ. 1907 թ. մայիսի 30-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1908, 257:

-Պոլսում ծնվեց մշակութային գործիչ, լրագրող (մասնագիտությամբ բժիշկ) Հովհաննես Արշակունին: Վախճ. 1925 թ. օգոստոսի 1-ին, Նյու Յորքում:

«Կոչնակ Հայաստանի», 1925, № 33 («Դոկտոր Հովհաննես Արշակունի»):

-Պոլսում ծնվեց գրական-մշակութային գործիչ, լրագրող, թարգմանիչ (հայերենից՝ թուրքերեն), խմբագիր Տիգրան Ճիվեկեյանը: Վախճ. 1907 թ. փետրվարի 14-ին:

Եղել է «Թերճիմանը Էֆքյար» («Մտքերի թարգման», 1878-1884 թթ.), «Ճերիտեյի շարգիե» («Արևելյան լրագիր», 1885-1907 թթ.) հայատառ թուրքերեն թերթերի և «Սուրհանդակ» (1899-1907 թթ.) օրաթերթի հիմնադիրն ու խմբագիրը:

Թեոդիկ, Տիպ ու տառ, Պոլիս, 1912, էջ 111-112: Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1908, էջ 225: «Հանդես ամսօրյա», 1907, № 4 («Ծաղկեփունջ»):

Մայիսի 1. Վաղարշապատում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, լրագրող, արձակագիր, բանաստեղծ (մասնագիտությամբ բժիշկ) Բագրատ Աբրահամի Նավասարդյանը: Վախճ. 1934 թ. Թիֆլիսում:

Փարսադանյան Ռ., Հայ բժշկության պատմությունից, Երևան, 1958, էջ 147-150: **ՉԱԳԱԹ**, Բ. Նավասարդյանի ֆոնդ:

-Պոլսում ծնվեց արձակագիր, պատմաբան, աշխարհագրագետ, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Գրիգոր Մարգարյանը: Վախճ. 1922 թ. սեպտեմբերի 15-ին, իր ծննդավայրում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Տիշլեկյան» ծածկանունով:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1923, էջ 418: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Բ, Երևան, 1981, էջ 303-304:

-Պոլսում ծնվեց գրական-մշակութային գործիչ, լրագրող Գրիգոր Ավետիսի խան Շամտանճյանը: Վախճ. 1907 թ. փետրվարի 1-ին:

Ընդարձակ օրացույց Ս. Փրկյան հիվանդանոցի, Պոլիս, 1908, էջ 453-454:

-Վաղարշապատում ծնվեց եկեղեցական երաժշտության մասնագետ, լրագրող Ղևոնդ Հովակիմյանը: Էջմիածնի միաբանության անդամ էր 1873 թ. մայիսի 12-ից, վախճ. 1915 թ. սեպտեմբերի 14-ին:

«Ղևոնդ վարդապետ» և «Ղևոնդ եպիսկոպոս» ստորագրություններով հանդես էր գալիս «Արարատում»:

«Արարատ», 1915, № 9-10 («Ղևոնդ եպիսկոպոս Հովակիմյան», Մատենագիտություն «Արարատ» ամսագրի (կազմեց Ս. Կոծիյան), Երևան, 1970, էջ 242:

-Թիֆլիսում ծնվեց մանկավարժ, թարգմանիչ (ռուսերենից և ֆրանսերենից՝ հայերեն), լրագրող Գայանե Հարությունի Մատակյանը (Հովհաննիսյան): Վախճ. 1900 թ. սեպտեմբերի 28-ին, Պոլսում:

«Բյուզանդիոն», 1900, № 1212-1216 («Տիկին Գայանե Մատակյան»): «Էջմիածին», 1858, № 8 («Հայրենանվեր մանկավարժուհի Գայանե Հովհաննիսյան-Մատակյան»):

-Թիֆլիսում ծնվեց երաժշտագետ, բանասեր, լրագրող, խմբագիր Եզնիկ քահանա Հարությունի Երզնկյանը: Վախճ. 1919 թ.:

1906 թ. Թիֆլիսում հիմնել և մինչև 1910 թ. խմբագրել է «Հովիվ» շաբաթաթերթը, որը 1910 թ. վերանվանվելով «Հովիտ», շարունակել է իր գոյությունը մինչև 1917 թ.: Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Ե.ք.Ե.» ստորագրությամբ:

ՉԱԳԱԹ, Եզնիկ Երզնկյանի ֆոնդ: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, Երևան, էջ 311:

-Թիֆլիսում ծնվեց արձակագիր, դրամատուրգ, մանկավարժական աշխատությունների հեղինակ, լրագրող Էմմանուել քահանա Նազարյանցը: Վախճ. 1912 թ. հոկտեմբերի 12-ին, Մոսկվայում:

«Լուսա», 1912, № 10-11 («Էմմանուել քահանա Նազարյանց»): «Արարատ», 1912, № 10-11 («Մահացուցակ»): «Մշակ», 1912, № 229-232 («Էմմանուել Նազարյանց»):

-Երևանում ծնվեց գրական-մշակութային գործիչ, լրագրող (հայերեն և ռուսերեն լեզուներով), գրական քննադատ Պողոս Իզմայիլյանը: Վախճ. 1895 թ. մարտի 5-ին, Մոսկվայում:

«Մշակ», 1895, № 27 («Պողոս Ա. Իզմայիլյան»): **Զմկյան Գ.**, Իմ հիշատակարանը, Երևան, 1953, էջ 215: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Բ, Երևան, 1981, էջ 311:

-Դամասկոսում ծնվեց լրագրող, գրական-եկեղեցական գործիչ Ղևոնդ Մաքսուդյանը: Երուսաղեմի միաբանության անդամ էր 1877 թ., վախճ. 1922 թ. ապրիլի 15-ին Երուսաղեմում:

Մկրտիչ Աղավունի, Միաբանք և այցելուք հայ Երուսաղեմի, Երուսաղեմ, 1929, էջ 233:

-Զալալօղլիում (այժմ՝ Ստեփանավան, ՀՍՍՀ) ծնվեց լրագրող, հոդվածագիր (հայերեն և ռուսերեն լեզուներով) Միքայել Եգորի Սաղաթեյանը: Վախճ. 1910 թ. հունվարի 17-ին, Թիֆլիսում:

«Մշակ», 1910, № 11 («Մահախոսական»), № 13 («Միքայել Սաղաթեյան»):

-Քարաշեն գյուղում (ՀՍՍՀ, Գորիսի շրջան) ծնվեց գուսան (ստեղծագործել է հայերեն և թուրքերեն լեզուներով), ժողովրդական երգերի կատարող, ՍՍՀՄ գրողների միության անդամ (1939 թ.) Աթանը (Աթանես Սուջոյի Սայիլյան): Վախճ. 1942 թ.:

Խաչատրյան Հ., Գրական տեղեկատու, Երևան, 1981, էջ 14-15:

-1852 (?). Կարսում ծնվեց հասարակական գործիչ, լրագրող, բանաստեղծ, հուշագիր Խաչատուր Ավետիսի Ղորխմազյանը: Վախճ. 1911 թ. հուլիսի 26-ին, Բաքվում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Կոռ» կեղծանունով:

«Մշակ», 1911, № 171 («Խաչատուր Ղոբխամազյան-Կոռ»):

-1852 (?). Կերմիրում (Կեսարիա, Կենտր. Թուրքիա) ծնվեց մշակութային գործիչ, լրագրող, թարգմանիչ (անգլերենից, ֆրանսերենից, թուրքերենից՝ հայերեն) Հարություն Նշանյանը: Վախճ. 1908 թ. Կեսարիայում:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, հ. Ա, Կահիրե, 1937, էջ 1222:

-Վենետիկում գրաբար հրատարակվում է Մխիթարյան միաբանության բանաստեղծների չափածո ստեղծագործությունների ժողովածուի Ա. հատորը, «Տաղք մխիթարեան վարդապետաց» խորագրով: 260 էջ:

Երկրորդ հատոր. 1853, 196 էջ:

Երրորդ հատոր. 1854, 175 էջ:

-Վենետիկում արևմտահայերեն հրատարակվում է «Վենետիկու Մխիթարյան անանուն պարսավագրին դեմ» աշխատությունը: 115 էջ:

1852 թ. մայիսին Պոլսում իտալերեն հրատարակվեց Անտոն Հասունյանի «Վենետիկի Մխիթարյանները» գիրքը, որտեղ հեղինակը դատապարտում էր Մխիթարյաններին, որ վերջիններս կաթոլիկ-դավանաբանական գործունեություն ծավալելու և այդ բնույթի գրքեր հրատարակելու փոխարեն, զբաղվում են հայագիտական, բանասիրական, լեզվաբանական և այս բնույթի աշխատանքներով: Վերոհիշյալ աշխատությունը պատասխան է Հասունյանի գրքին:

-Վենետիկում արևմտահայերեն հրատարակվում է «Ջատագովություն շատ անգամ Մխիթարյանց վրա եղած զրպարտություններուն պատճառները բացատրելով» գրքուկը: 34 էջ:

-Վենետիկում հրատարակվում է «Հայոց երգք ռամկականք» ժողովածուն: Բանաստեղծությունների ընտրությունը, անգլերեն թարգմանությունը, անգլերեն առաջաբանն ու ծանոթագրությունները Ղևոնդ Ալիշանի:

-Վենետիկում, անգլերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ և անգլերեն-հայերեն համատեղ տեքստերով, հրատարակվում է «Ծաղկաքաղ քերթողաց անգղիացւոց» ժողովածուն: 233 էջ:

-Վենետիկում գրաբար վերահրատարակվում է Եղիշեի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» աշխատությունը: Բնագրագիտական աշխատանքները, առաջաբանն ու անվանացանկը Արսեն Բագրատունու: 392 էջ:

Վերջում (էջ 369-378) գետեղված է նույնի՝ «Բան իրատու յաղագս միանձանց» ճառը:

-Վենետիկում, Ղևոնդ Ալիշանի՝ իտալերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ալֆոնսո Լիգուորիի «Պատրաստություն մահուկամ խորհրդածությունք ի վերա հավիտենական ճշմարտությանց» աշխատությունը: 585+63 էջ:

Նույնը փոքրադիր, 1855 թ., 318 էջ և 1893 թ.:

Վերջում գետեղված են գրաբար բանաստեղծություններ «Ալֆոնսուի երգք զղջականք առ Հիսուս և առ Մարիամ» խորագրով:

-Վենետիկում, գրաբար մեկնաբանություններով, հրատարակվում է Արսեն Բագրատունու «Հայերեն քերականութիւն ի պետք զարգացելոց» աշխատությունը: 744 էջ:

Վերջում գրաբարով (էջ 1-22) գետեղված է «Յաղագս հնչման և է տառից մերոց» ուսումնասիրությունը:

-Վենետիկում գրաբար հրատարակվում է Գաբրիել Այվազովսկու «Տեսութիւն կարծեաց տեառն Արսենի Բագրատունույ, յաղագս հնչման Ղ և Լ տառից» աշխատությունը, 33 էջ (տե՛ս նախորդը):

-Վիեննայում Սամվել Գաթըրճյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն ազատ թարգմանությամբ, հրատարակվում է Բրունի «Տարվոյն չորս եղանակները, կամ նկարագիր սքանչելյաց բնության» գիրքը («Կրթական և զբոսալի տետրակներ», հատ. ԻԱ): 384 էջ:

-Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Սահակ Թոռնյանի «Արտաշեսյան Արտավազդա բարքն ու վախճանը» վիպակը («Կրթական և զբոսայի տետրակներ», հատ. ԻԳ): 84 էջ:

«Արտավազդ արտաշեսյան» խորագրով հատվածաբար հրատարակվում էր «Եվրոպայում», 1852 թ. մարտի 18-ից (№ 13) մինչև օգոստոսի 18 (№ 35):

-Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Ղևոնդ Հովնանյանի «Միրզայան Մանուկ պեյին վարուց պատմությունը» գրքույկը («Կրթական և զբոսայի տետրակներ», հատ. ԻԷ): 91 էջ:

-Վիեննայում, Եփրեմ Չագրճյանի՝ լատիներեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Մարկոս Տուլիոս Կիկերոնի «Ղեղիոս կամ վասն բարեկամութեան առ Պոմպիինոս Ատտիկոս» գիրքը: 50 էջ:

-Վիեննայում, գերմաներեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ֆերդինանդ Շմիդտի «Վարդուհի Եղնաբերդյան կամ դյուցազնական հայրենասիրություն» վիպակը: 180 էջ:

Նույնը անփոփոխ՝ 1861 թ., 184 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Նիկողայոս Զորայանի «Ընթերցասիրություն կամ գիրք կարդալու միջոցով մտավորական մշակության հասնելու օգտակար խրատներ» աշխատությունը: 401 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Ավետիս Պերպերյանի «Իտալերեն և հայերեն պարսավագրքերուն հերքումը» գրքույկը: 58 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Հռովմեական հայ ճամբորդի մը հայտարարությունը Մխիթարյան միաբանութենեն Հ[այր] Պետրոս Մինասյանի վրա» գրքույկը:

Գրքույկի գոյությունը հավաստում են թե՛ Գ. Զարբհանալյանը (Հայկական մատենագիտություն, Վենետիկ, 1883, էջ 362) և թե՛ Ա. Ղազիկյանը (Հայկական նոր մատենագիտություն..., էջ 1614): Այն գտնել մեզ չի հաջողվել:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Ավետարանին վարդապետությունը ու բողոքականներուն կարծիքները բողոքականներուն դեմ» աշխատության առաջին գրքույկը (հեղինակ՝ «Մ.Տ.Ս.»): 62 էջ:

Երկրորդ գրքույկ՝ 1853, 90 էջ:

- Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Քանի մը խոսք անունով Վենետիկի Մխիթարյանց վանքեն հրատարակված տետրակի մը առաջին պատասխանը» (հեղինակ՝ «Ուն յազգասիրաց»): 17 էջ:
- Պոլսում գրաբար վերահրատարակվում է Գրիգոր Նարեկացու «Մատենանոց տպագրության» պոեմը: 430 էջ:
- Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Երկպառակություն սիրող հոովմեադավան հայերուն և անոնց ուսուցչացը դեմ վերջաբանություն մը» գրքույկը (ունի «Յետին տերտիրոջներեն մեկը» ստորագրությունը): 16 էջ:
- Պոլսում, արևմտահայերեն մեկնաբանություններով, հրատարակվում է «Բառատետր կամ ժողովածու հայերեն պիտանի բառերու» գիրքը:
- Պոլսում, գրաբար առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է Թովմա Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց» աշխատությունը: 398 էջ:
- Մոսկվայում, ռուսերեն և գրաբար զուգահեռ բնագրերով, հրատարակվում է Հարություն Կոկչյանցի «Ծանօթութիւն յաղագս կենաց զօրագլխի Պօղոս Մովսիսեան Մելիքեանց» գրքույկը: 29 էջ:
- Մոսկվայում, ռուսերեն և գրաբար զուգահեռ բնագրերով, հրատարակվում է «Բարձրագոյն հրովարտակք, կանոնադրութիւնք և ցուցակ Լազարեանց ճեմարանի Արևելեան լեզուաց ի Մոսկով, և կանոնք նորին բարձրագոյնս հաստատեալք» խորագիրը կրող փաստաթղթերի ժողովածուն: 109 էջ:
- Մոսկվայում հրատարակվում է Սայաթ-Նովայի ստեղծագործությունների առաջին ժողովածուն «Սայաթ-Նովա, լուս զցած աշխատասիրութենով» խորագրով: Բնագրագիտական աշխատանքները, ընդարձակ առաջաբանն ու ծանոթագրությունները Գևորգ Ախվերդյանի: 172 էջ:

Ախվերդյանը նախատեսել էր պարբերաբար հրատարակել հայ աշուղների ստեղծագործությունների ժողովածուները, այդ պատճառով էլ գիրքն ունի նաև «Գուսանք Ա.» ընդհանուր խորագիրը: Այդ մտադրությունը, սակայն, չի իրականացվել: «Գուսանքի» Բ. գիրքը լույս է տեսել 1903 թ. Մանե Ախվերդյանի ջանքերով:

- Երուսաղեմում, Գաբրիել Գևորգյան Փողիշանցու՝ իտալերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Մելքորի «Տարեգիրք իմաստասիրութեան ի պէտս համբակաց» աշխատությունը: 180 էջ:
- Երուսաղեմում գրաբար հրատարակվում է Պողոս քահանա Յոսեմիշցու բանաստեղծությունների ժողովածուն, «Հայելի վիրաց, որում ցուցանին յոռութիւնք եօթանց մահացու մեղաց» խորագրով: 220 էջ:
- Կակաթայում գրաբար հրատարակվում է Գևորգ Զաքարյան Ջուղայեցու «Ջավա» աշխատությունը: 340 էջ:
- Զմյուռնիայում, անգլերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Աշխատալի գիշեր, կամ ընտանեկան պատմություն հարավային օվկիանոսի կղզիները առջի խրկված քարոզիչներուն աշխատությանցը» ստեղծագործությունը: 369 էջ:

Երեսուն անգլիացի միսիոներներ 1796 թ. Լոնդոնից մեկնում են Տաիտի կղզի (որտեղ հասնում են 1797 թ.), տեղացիներին «օգտակար բաներ սորվեցնելու համար» (էջ 15): Այս հենքի վրա տրված են կղզու պատմաաշխարհագրական նկարագրությունը, բնակիչների վարքն ու բարքը, նրանց սովորությունները, նկարագրված են նրանց ազգային կենցաղը, հավատալիքները, նրանց լեզուն ու ստեղծած մշակույթը, տրված է նրանց երգերի, պարերի, ժողովրդական բանահյուսության նկարագրությունը:

1 8 5 3

- Հունվարի 3.** «Նոյան աղավնին» (№ 44) գրաբար հրատարակում է Աբել Մխիթարյանի «Ողբերգութիւն այլաբանաբար, ի դարձ անառակ որդւոյն» պոեմը: Պոեմում հեղինակը ի նկատի է ունեցել Ստեփան Ոսկանյանին:
- Հունվարի 5.** «Եվրոպան» (№ 3) արևմտահայերեն հրատարակում է «Հայերեն տեսակ տեսակ գիրքերուն իրարու հետ կարճառոտ համեմատությունը» ուսումնասիրությունը:
- Հունվարի 17.** «Նոյան աղավնին» (№ 45) հրատարակում է Հարություն Ալամդարյանի «Ասացեալ Յարութիւն վարդապետէ Ալամդարեանց ի լինել նորին ի վասն Հաղբատայ յուսահատեալ» («Յամսավերջն ապրիլի, զպատուհանս բացի...») և («Սոխակ ի

հոգևարս») բանաստեղծությունները: Հրատարակված է նաև Թեոդորոս Խատամյան Ղրիմեցու «Խորհրդածութիւն զԱնի քաղաքէ» պոեմը: Այն թերթի խմբագրությանն է ներկայացրել Աբել Մխիթարյանը:

Հունվարի 20. Բիթասում (նաև՝ Պեյթաս. Մուսալեռի շրջ. Կիլիկիա, Հար. Թուրքիա) ծնվեց հասարակական գործիչ Հ. Ֆիլյանը: Վախճ. 1942 թ. հուլիսի 23-ին, Լոս-Անջելեսում (ԱՄՆ):

«Հայաստանի կոչնակ», 1942, № 34 («Վեր. Հ. Ֆիլյանի մահը և հուղարկավորությունը»):

Հունվարի 24. «Նոյան աղավնին» (№ 46) հրատարակում է Հարություն Ալամդարյանի «Կոկովանք վարդի» և «Վարդակորոյս» բանաստեղծությունները: Թիֆլիսի բարբառով հրատարակված է նաև «Առյուծ և էջ» առակը:

Հունվարի 28. «Մասիսը» (№ 53) արևմտահայերեն հրատարակում է Կարապետ Ութուջյանի «Հարսնացու աղջկան մը օղերը կամ տնական կառավարության վրայոք խրատներ» պատմվածքը: Ավարտ № 57 (փետրվարի 25):

Հունվարի 30. «Արշալույս արարատյանը» (№ 434) արևմտահայերեն հրատարակում է Արամ-Կարապետ Տետեյանի «Բարեկենդանի անցածամեր. հանելուկք առ հետսամուտս» ուսումնասիրությունը: Ավարտ՝ № 437 (փետրվարի 25):

Քննության են առնված հայկական ժողովրդական հանելուկները, առեղծվածները, բառախաղերը, առածները, բերված են ինքնուրույն և թարգմանական բազմաթիվ օրինակներ:

Փետրվարի առաջին կես. «Բազմավեպը» (№3) արևմտահայերեն հրատարակում է Բառնաբաս Եսայանի «Հին լատինացոց մատենագրությանը վրա տեղեկություն» ուսումնասիրությունը: Ավարտ՝ № 8 (ապրիլի երկրորդ կես):

Փետրվարի 13. «Արշալույս արարատյանը» (№ 453), Գարեգին-Հովհաննես Տեր-Կարապետյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Երկնավոր ցնծության ճաշակ մը» պատմվածքը:

Փետրվարի 18. Ղարասուբազար քաղաքում (այժմ՝ Բելոգորսկ, Ղրիմի մարզ) ծնվեց երաժշտական-հասարակական գործիչ, երգահավաք, խմբավար Քրիստափոր Մարգարի Կարա-Մուրզան: Վախճ. 1902 թ. մարտի 27-ին, Թիֆլիսում:

Մուրադյան Մ., Քրիստափոր Կարա-Մուրզան և բազմաձայնության արմատավորումը հայ երաժշտության մեջ, Երևան, 1956, 285 էջ: **Շահվերդյան Ալ.**, Հայ երաժշտության պատմության ակնարկներ, Երևան, 1959, էջ 267-290:

Փետրվարի 28. «Նոյան աղավնին» (№ 51), Հայկ-Կոստանդ Գրիգոր Կոստանդյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ալֆոնսոս Լամարթինի «Արապ մը և յուր ձին» նովելը: Նույնի՝ արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է նաև «Նախախնամություն» պատմվածքը:

Իզմիրահայ գործիչներ Կոստանդյանների ընտանիքի և նրանց ստորագրությունների բացահայտման մասին տե՛ս մեր հոդվածը «Բանասիրական ճշգրտումներ» խորագրով («Լրաբեր», 1979, № 6, էջ 85-92):

Մարտի 4. «Մասիսը» (№ 58) արևմտահայերեն սկսում է հրատարակել Մատթեոս Այվառյանի «Ձեռագիրներու խուզարկության առաջարկություն մը և քանի մը հին ձեռագիրներու վրա տեղեկություն» գրականագիտական-բանասիրական հոդվածը: Ավարտ՝ «Մասիս» № 62 (մարտի 31):

Մարտի 13. Խարբերդում (Արևել. Թուրքիա) ծնվեց մշակութային գործիչ Հարություն Հակոբյանը: Երուսաղեմի միաբանության անդամ 1877 թ., վախճ. 1920 թ. օգոստոսի 20-ին, Կահիրեում:

Մկրտիչ Աղավունի, Միաբանք և այցելուք հայ Երուսաղեմի, Երուսաղեմ, 1929, էջ 345:

Մարտի 13. «Արշալույս արարատյանը» (№ 437), արևմտահայերեն հրատարակում է Գալուստ Կոստանդյանի «Արագիլ և օձ» առակը:

Մարտի երկրորդ կես. «Բազմավեպը» (№ 6) արևմտահայերեն հրատարակում է Խորեն Գալֆայանի «Գուլիլեմոս (իմա՛. Վիլյան – Ս.Շ.) Շեքսպիր» հոդվածը:

Մարտի 13. «Եվրոպան» (№ 13) արևմտահայերեն հրատարակում է «Պզտիկ գաղափար մը Լեհաստանի հայոց առաջվան վիճակի վրա» հոդվածը:

Տրված է լեհահայոց հասարակական-քաղաքական և գրական կյանքի նկարագիրը 1060-1672 թթ. ընթացքում:

Ապրիլի առաջին կես. «Բազմավեպը» (№ 7) արևմտահայերեն հրատարակում է Խորեն Գալֆայանի «Բանաստեղծություն» ուսումնասիրությունը:

Հեղինակը քննության առարկա է դարձրել եվրոպական մի քանի բանաստեղծների մերձիմահ գրված բանաստեղծությունները:

Ապրիլի 4. «Նոյան աղավնին» (№ 56), Հայկ-Կոստանդ Գրիգոր Կոստանդյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Աքիլլեյի կրթությունը» պատմվածքը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Ապրիլի 10. «Արշալույս արարատյանը» (№ 439), գրաբար հրատարակում է Հակոբ Ոսկանի «Առ սուրբն Սահակ» և «Երգ» բանաստեղծությունները:

Ապրիլի 15. «Մասիսը» (№ 64) արևմտահայերեն հրատարակում է Թադևոս Միհրդատյանցի «Սեբեոսի նորագյուտ մատենին վրա մինչև ցայժմ երևցած դատաքննություններուն վրայոք քանի մը խոսք» հոդվածը:

Ապրիլի 19. «Նյու-Յորք դեյլի տրիբյուն» թերթում («New-York Daily Tribune») հրատարակվում է Ֆր. Էնգելսի «Թուրքական հարցը» հոդվածը, որտեղ հեղինակը դրվատանքով է խոսում հայ ժողովրդի՝ Թուրքիայում ծավալած հասարակական-քաղաքական գործունեության մասին:

К.Маркс, Ф.Энгельс, Сочинения, т. 9, Москва, 1957, стр. 20-27.

Մայիսի 2. «Նոյան աղավնին» (№ 60) արևմտահայերեն հրատարակում է Ստեփան Ոսկանյանի (?) հոդվածը:

Հոդվածագիրը դրական է գնահատում Հովսեփ Վարդանյանի՝ ֆրանսերեն բնագրից թուրքերեն կատարած Ալեն Լեսաժի «Կաղ սատանայի» թարգմանությունը և պաշտպանում է Վարդանյանի «Ագապի հիքյայեսի» («Ագապիի պատմությունը») հայատառ թուրքերեն վեպը Անտոն Հասունյանի բանադրանքից (տե՛ս 1852 թ. փետրվարի 23):

Մայիսի 4. «Եվրոպան» (№ 20) արևմտահայերեն հրատարակում է «Ազգային» հոդվածը, որտեղ հասարակական-քաղաքական կյանքի ֆոնի վրա վերլուծված է տվյալ ժամանակաշրջանի գրականությունը:

Մայիսի 5. Պոլսում վախճանվեց կրոնական մատենագիր, կրթական-մշակութային գործիչ Պողոս Գրիգորյանը: Ծնվ. 1763 թ. Ադրիանապոլսում (Եվրոպական Թուրքիա):

Օրմանյան Մ., Ազգապատում, մասն երրորդ, Երուսաղեմ, 1927, էջ 3438-3440, 3444-3450, 3541-3543, 3894-3896:

Մայիսի 8. «Արշալույս արարատյանը» (№ 441) արևմտահայերեն հրատարակում է Տետեյանի (Արամ ?) «Ջայլ և հույժույք սոխակին որոգայթելո» երգիծական պոեմը:

Նույն համարում արևմտահայերեն հրատարակվում է Մկրտիչ Պեշիկթաշյանի՝ Անտոն Հասունյանի դեմ գրված «Հանելուկ» երգիծական բանաստեղծությունը («Թե որ կուզես զիս ճանչնալ, վերարկուես մի խաբվիր...»), տե՛ս **Պեշիկթաշյան Մ.**, Տաղեր, Երևան, 1961, էջ 86:

Մայիսի առաջին կես. «Բազմավեպը» (№ 9) արևմտահայերեն հրատարակում է Համազասպ Թերճիմանյանի «Համառոտ տեսություն մը անգղիացվոց մատենագրության և ուսումնական վիճակին վրա» հոդվածը:

Բնութագրված են IV-XVII դարերի անգլիական գրական-մշակութային և գիտական կյանքի ներկայացուցիչները:

Մայիսի 23. «Նոյան աղավնին» (№ 63) արևմտահայերեն վերահրատարակում է Մկրտիչ Պեշիկթաշյանի՝ Անտոն Հասունյանի դեմ գրված «Հանելուկ» երգիծական բանաստեղծությունը, և այդ բանաստեղծությունը վերծանող Հակոբ Տետեյանի «Լուծումն»-ը:

Հունիսի 5. «Արշալույս արարատյանը» (№ 443) «Բարոյական պատմությունք» ընդհանուր խորագրի ներքո, արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է յոթ նովելներ:

Հունիսի 6. «Նոյան աղավնին» (№ 65) արևմտահայերեն հրատարակում է մեկական առակ Մխիթար Գոշից և Եզովպոսից, երեք առակ Արմենակ Պալապանյանից:

Հունիսի 8. Թիֆլիսում ծնվեց քերականագետ, թարգմանիչ (իտալերենից՝ հայերեն) Հուսիկ Մեհրաբյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1874 թ. մայիսի 24-ից:

Մխիթարյան հոբելյան, Վենետիկ, 1901, էջ 225:

Հունիսի առաջին կես. «Բազմավեպը» (№ 11), Խորեն Գալֆայանի՝ անգլերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է մի հատված Վիլյամ Շեքսպիրի «Հուլիոս Կեսար» ողբերգությունից (երրորդ գործողություն, երկրորդ

պատկեր): Սկզբում տրված է ողբերգության համառոտ բովանդակությունը և ներկայացվող հասվածի թարգմանության հանգամանքները:

Հունիսի 8. Տրապիզոնում ծնվեց հայագետ-բանասեր, թարգմանիչ (իտալերենից և ֆրանսերենից՝ հայերեն) Արիստակես Հովսեփի Գասգանտիլյանը: Վենետիկի Միսիթարյան միաբանության անդամ էր 1874 թ. մայիսի 24-ից, վախճ. 1942 թ. հունվարի 19-ին, Վենետիկում:

«Բազմավեպ», 1924, № 6, «Հիսնամյա հորեյան քահանության Արիստակես Գասգանտիլյանի...», 1942, № 1-2 («Հանգիստ... Արիստակես Գասգանտիլյանի»):

Հունիսի երկրորդ կես. «Բազմավեպը» (№ 12), Խորեն Գալֆայանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Վիկտոր Հյուգոյի «Աղօթք հասարակաց» բանաստեղծությունը:

Հուլիսի 1. «Նյու-Յորք դեյլի տրիբյուն» թերթում («New-York Daily Tribune») հրատարակվում է Կ. Մարքսի «Անգլիայի բարգավաճումը. գործադուլներ. Թուրքական հարցը, Հնդկաստան» հոդվածը: Անդրադառնալով Թուրքիային, Մարքսը բնութագրում է Լոնդոնում ապրող, համայն հայության անունից հանդես եկող իշխան Լևոն Լուսինյանին և մեջ է բերում նրա ուղերձը ուղղված հայ ժողովրդին:

К.Маркс, Ф.Энгельс "Сочинения", т. IX, М, 1957, стр. 136-144.

Հուլիսի 3. «Արշալույս արարատյանը» (№ 445) արևմտահայերեն հրատարակում է Գալուստ Կոստանդյանի «Գալ և գառիք» առակը:

Հուլիս. Զմյուռնիայում արևմտահայերեն սկսում է հրատարակվել «Արփի արարատյան (օրագիր բանասիրական, ազգային, տնտեսական և ուսումնական)» ամսագիրը: Այն խմբագրում և հրատարակում էին Կարապետ, Սարգիս և Հարություն Տետեյան եղբայրները: Հրատարակության մասին ծանուցումը հրապարակվել է 1853 թ. մայիսի 2-ին: «Արփի արարատյանը» հրատարակվել է մինչև 1855 թ. վերջը:

Հուլիս. Պոլսում (Խասգյուղ), Մատթեոս Մամուրյանի տեսչությամբ, իր գոյությունն է սկսում աղջիկների հինգդասյա դպրոցը: Ավանդվում է հայերեն, ճարտասանություն, պատմություն, ֆրանսերեն, թվաբանություն, գրահաշիվ, աշխարհագրություն, երաժրշտություն և վայելչագրություն: 1854 թ. դպրոցը դառնում է երկսեռ: 1955 թ. տե-

սուչն էր Ա. Չալրիսյանը (դպրոցի մասին 1955 թ. հետո տեղեկություններ գտնել չենք կարողացել):

«Մասիս», 1853, № 77 («Ազգային»), 1854, № 143 («Ազգային»), 1857, № 259 («Մեծարգո տնօրեն...»), «Հայաստանի կոչնակ», 1955, № 18 («Պոլսո հայ վարժարանները»):

Հուլիսի 11. «Նոյան աղավնին» (№ 70) գրաբար հրատարակում է Արմենակ Պալապանյանի «Մովսես Խորենացի» հոդվածը:

Նույն համարում արևմտահայերեն հրատարակվում է «Վիեննայու» «Եվրոպա» լրագիրը՝ անստորագիր գրախոսականը, ի պաշտպանություն Ստ. Ոսկանյանի «Ներքին հուզումն» գրքույկի:

Հուլիսի 31. «Արշալույս արարատյանը» (№ 445) արևմտահայերեն հրատարակում է Գրիգոր Խապարաճի Կարապետյանի «Յունկ փիլիսոփային՝ իր Նարսես աղջկանը մահվան վրա ողբ...» պոեմը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Օգոստոս. «Արփի արարատյանը» (№ 2) անգլերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Էդիսոնի «Տեսություն Միրզայի» պատմվածքը և Ջարմայր Ազշեհիրցու (նաև՝ Ջարմայր Ստեփան Ազշեհիրցի, Ջարմայր Ստեփան Չախրբյան, Ջ.Ս.Ա.) «Ի մեծագոր կայսրն օսմանեան» գրաբար բանաստեղծությունը:

Վերջինս հետագայում հրատարակել է «Ի մահ Տ. Գալստեան գերապատիւ Գալուստ աւագերեց քահանայի Զմիւռնիոյ» (Անդ, № 10, 1854 թ., ապրիլ): Ի սգալի մահ մեծահամբաւ Ռուբեն Անդրեաս Փափագեան... («Արշալույս արարատյան», 1857, № 542, ապրիլի 5): «Ուրդերձ առ ... Տէր Մատթէոս կաթողիկոս» (Անդ, № 582, հոկտեմբերի 17): «Ի մահ Քրիստոսի» (հեղ. Էմիլ դը Ժիրարդեն, թարգ. Ֆրանս. բնագրից գրաբար. Անդ, 1859, № 594, ապրիլի 3) և ինքնուրույն ու թարգմանական այլ ստեղծագործություններ:

Օգոստոսի 5. «Մասիսը» (№ 80), Վահագն Տեր-Բարսեղյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Օսթ քաղաքին բորոտը» պատմվածքը: Շարունակվում է մինչև № 84 (սեպտեմբերի 2):

Օգոստոսի առաջին կես. «Բազմավեպը» (№ 15) աշխարհաբար հրատարակում է Ղևոնդ Ալիշանի «Անոթի որսորդ» պոեմը: Լեզվաոճական որոշ փոփոխություններից հետո

գետեղվել է Ալիշանի «Նուագքի» երրորդ՝ «Մաղթունի» հատորում (Վենետիկ, 1857, էջ 142-146):

Օգոստոսի 26. Նոր-Ջուղայում, Բատավիա քաղաքի նախկին բնակչուհիներ Մարիամ Հարությունյան և Թագուհի Մանուկյան քույրերի սատարմամբ, իր գոյությունն է սկսում «Մանուկ Հարությունյան» արական ուսումնարանը: 1883 թ. սրան է միացվում «Հայկական հայրենասիրական ուսումնարան» կոչվող արական դպրոցը (հիմն. 1844 թ. Հովհան Գալստյանի և Հարություն Աբգարյանի ջանքերով, ունեին հարյուր աշակերտ), ամբողջ հաստատությանը տրվում է նոր՝ «Ազգային կենտրոնական դպրոց» անվանումը: «Ազգային կենտրոնական դպրոցը» գոյություն ունեցավ մինչև 1935 թ. վերջերը:

«Եղբայրասեր», 1862, № 8 («Դպրատունք ի Ջուղա»): «Արշալույս արարատյան», 1861, № 662 («Կանոնադրութիւնք Մանուկ և Հարությունյան ուսումնարանին...»): **Գևորգյան Կ.**, Ամենուն տարեգիրքը, Բեյրութ, 1958, էջ 477-480:

Սեպտեմբերի առաջին կես. «Բազմավեպը» (№ 17) ֆրանսերեն բնագրերից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Վիկտոր Հյուգոյի «Յոյս յԱստուած» բանաստեղծությունը և Հովսեփ Մաքաստյանի համառոտ թարգմանությամբ, Ֆրանսուա Ֆենելոնի «Ճանապարհորդություն հաճոյից կղզու մեջ» պատմվածքը: Սկզբում տրված է Ֆենելոնի կյանքի և գործունեության բնութագրությունը:

Սեպտեմբերի 25. «Արշալույս արարատյանը» (№ 451), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Չկա երջանկություն առանց առաքինության» պատմվածքը: Ավարտ՝ № 453 (հոկտեմբերի 9):

Սեպտեմբերի երկրորդ կես. «Բազմավեպը» (№ 18), Ղևոնդ Ալիշանի՝ անգլերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ն. Ուիլյիսի «Ազար յանապատի» բանաստեղծությունը:

Սեպտեմբերի 30. Եղիսաբեթպոլսում (այժմ՝ Դումբրըվեն, Ռումինիա) ծնվեց գրական-մշակութային գործիչ Թեոդորոս Գոգոչայանը: Վախճ. 1895 թ. մարտի 6-ին:

«Հանդես ամսօրյա», 1907, № 11 («Թեոդորոս Գոգոչայան»):

Հոկտեմբերի առաջին կես. «Բազմավեպը» (№ 19) գրաբար հրատարակում է Խորեն Գալֆայանի «Ի սուրբն Դաւիթ Դունեցի, տաղ» բանաստեղծությունը:

Վերջինիս ստեղծագործությունները հետագայում հրատարակվել են հետևյալ հաջորդականությամբ. «Ի նախավկայն սուրբ Ստեփաննոս» (№ 24, դեկտեմբերի երկրորդ կես): «Առ Յորդանան ողջոյնք» (1854, № 1, հունվարի առաջին կես): «Հմայակ Մամիկոնեան, հայոց գնդին համախմբող» (№ 4, փետրվարի, երկրորդ կես): «Գիշեր» (№ 5, մարտի առաջին կես): «Օրհնեցէք թոչունք երկնից» (№ 8, ապրիլի երկրորդ կես): «Յարեաւ աստուած» (№ 9, մայիսի առաջին կես): «Մանկութիւն» (№ 14, հուլիսի երկրորդ կես): «Առ Մարիամ, մայր աստուծո և մարդկան» (№ 20, հոկտեմբերի երկրորդ կես): «Ի սաղմոսն Թ. յարասութիւն» (№ 22, նոյեմբերի երկրորդ կես): «Մանկութիւն» (№ 24, դեկտեմբերի երկրորդ կես): «Ապագայք» (1855 թ. № 1, հունվարի առաջին կես): «Ի սգալի մահ ազնուագարմ սեպհոյ Աբրահամու Աղանուրեան» (№ 2, հունվարի երկրորդ կես): «Բնութիւնք կամ մեծութիւն մարդոյ» (№ 14, հուլիսի երկրորդ կես): «Առ նախահայրն» (№ 16, օգոստոսի երկրորդ կես): «Յամբառնալ ի մեծապայծառ... Պաւղոսի, Միհրանայ և Տիգրանայ աւագ սեպհոց հայոց» (№ 18, սեպտեմբերի երկրորդ կես): «Առ աստեղս» (№ 19, հոկտեմբերի առաջին կես): «Առ կանթեղն իմ» (№ 21, նոյեմբերի առաջին կես): «Յարփին» (1856 թ. № 3, փետրվարի առաջին կես): «Ի փոխումն աստուածամօրն» (№ 16, օգոստոսի երկրորդ կես): «Ի նա ուրախ եղիցն միտք մեր» (1856 թ. № 20, հոկտեմբերի երկրորդ կես): «Տէր, ե՞րբ տեսցես» (№ 22, նոյեմբերի երկրորդ կես): «Յիշատակ սիրելեաց» (1857 թ., № 1, հունվարի առաջին կես): «Յառաջին մանուշակն» (№ 6, մարտի երկրորդ կես): «Զղջութիւն» (№ 7, ապրիլի առաջին կես): «Անզղջութիւն» (№ 8, ապրիլի երկրորդ կես): «Գարուն» (№ 9, մայիսի առաջին կես) և այլն:

Հոկտեմբերի երկրորդ կես. «Բազմավեպը» (№ 20) արևմտահայերեն հրատարակում է «Լեոնարդո դա Վինչի» հոդվածը:

Հոկտեմբերի 22. Պոլսում արևմտահայության ուսման գործը կազմակերպելու և խթանելու նպատակով, ստեղծվում է «ՌԻսումնական խորհուրդ» Սերվիչենի (Սերովբե Վիչենյան) նախագահությամբ և ազգային 13 նշանավոր դեմքերի անդամակցությամբ (դրանց թվում են Կարապետ ՌԻթուջյանը, Նիկողոս Պալյանը, Խաչատուր Պարտիզպանյանը, Նահապետ Ռուսինյանը, Առաքել, Հարություն և Սիմոն Տատյանները և այլն): Հոկտեմբերի 28-ին, պաշտոնական «Հայտարարությամբ» «ՌԻսումնական

խորհրդի» գոյության փաստը տեղեկացվեց հայ ժողովրդին, իսկ այն գոյատևեց մինչև 1863 թ. սկիզբը:

«Բյուզանդիոն», 1903, № 2160 («Կրթական հիսնամյակ մը»)...

Հոկտեմբերի 25. Պոլսում ծնվեց գրահրատարակիչ, բանաստեղծ, արձակագիր, խմբագիր Ստեփան Տամատյանը: Վախճ. 1925 թ. օգոստոսին, Փարիզում:

1884 թ. Պոլսում հիմնադրել և մինչև 1906 թ. խմբագրել է (Զարեհ Յուսուֆյանի հետ) «Արևելք» ազգային օրաթերթը:

Թեոդիկ, Տիպ ու տառ, Պոլիս, 1912, էջ 113: **Թեոդիկ**, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1926, էջ 732:

Նոյեմբերի 6. «Արշալույս արարատյանը» (№ 454) արևմտահայերեն հրատարակում է «Քանի մը խոսք» խորագիրը կրող գրախոսականը: Ավարտ՝ № 460 (դեկտեմբերի 18): Այն ուղղված է «Նոյան աղավնիում» հրատարակված «Ճանապարհորդություն ի Երուսաղեմ» հոդվածաշարի դեմ (1853 թ., № 59 և հոն):

Նոյն համարում, Պետրոս Բոլատյանի՝ անգլերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակվում են վեց մանրապատումներ, «Հետաքրքրական պատմություն» ընդհանուր խորագրի ներքո:

Նոյեմբերի առաջին կես. «Բազմավեպը» (№ 21), Խորեն Գալֆայանի՝ անգլերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է մի հատված Ջ. Բայրոնի «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմից: Տպագրված է պոեմի առաջին երգի № 72-80 տները:

Նոյեմբերի 15. «Նյու-Յորք դեյլի տրիբյուն» թերթում («New-York Daily Tribune») հրատարակվում է Ֆր. Էնգելսի «Սրբազան պատերազմ» հոդվածը: Հեղինակը բնութագրում է Կովկասյան ռազմաճակատը, տալիս է Հայաստանի աշխարհագրական բնութագրությունը, ապա և՛ Արաքս գետ-Երևան, և Երևան-Կարս ճանապարհների ռազմական նկարագրությունը:

К.Маркс, Ф.Энгельс, Сочинения, т. 9, Москва, 1957, стр. 449-453.

Նոյեմբեր. «Արփի արարատյանը» (№ 5), Գարեգին-Հովհաննես Տեր-Կարապետյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալֆոնսու Լամարթինի «Հովիտ» բանաստեղծությունը, ինչպես նաև՝ ֆրանսերեն

բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, «Ի տապան վաղամեռիկ մանկան» եղերերգը:

Նույնների երկրորդ կես. «Բազմավեպը» (№ 22), գրաբար հրատարակում է Ղևոնդ Ալիշանի «Ճանապարհ երիտասարդի» բանաստեղծությունը:

Նույնությամբ արտատպված է Ալիշանի բանաստեղծությունների հինգհատորյա ժողովածվի՝ «Նուագրի» երկրորդ՝ «Մաղթունի» հատորում (Վենետիկ, 1857, էջ 136-139):

Նույնների 29. Թիֆլիսում ծնվեց բանասեր, լրագրող, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Համագասպ Պետրոսի Սաֆարյանը: Վենետիկի Միսիթարյան միաբանության անդամ էր 1873 թ. դեկտեմբերի 8-ից: Վախճ. 1919 թ. փետրվարի 28-ին:

«Բազմավեպ», 1921, № 7 («Համագասպ Սաֆարյան...»):

Դեկտեմբերի առաջին կես. «Բազմավեպը» (№ 23) արևմտահայերեն հրատարակում է «Հովհաննես (իմա՝ Ջովանի. Ս.Շ.) Բոկաչիո» հոդվածը (հեղ. Վ.Չ. = Նիկողայոս Չիքի?):

Դեկտեմբերի 4. «Արշալույս արարատյանը» (№ 456), Ռեթևոս Գրիգորյանցի՝ պարսկերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է «Չարիս հատուցանել փոխանակ բարեաց» բանաստեղծությունը:

Դեկտեմբերի 5. Գրիգորիոսյուլ քաղաքում (այժմ՝ Մոլդավական ՍՍՀ, Տիրասպոլի շրջան) ծնվեց գրական-մշակութային գործիչ, պատմաբան, բանասեր, լրագրող (հայերեն և ռուսերեն լեզուներով) Խաչատուր Հովհաննեսի Հովհաննիսյանը: Վախճ. 1920 թ.:

«Քուչուկ Հովհաննիսյան», «Մ. Շովրյան», «Խ. Ենգիբարյան» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 210: ՉԱԳԱԹ, Խ. Հովհաննիսյանի ֆոնդ, №№ 84, 85, 86 («Անձնական փաստաթղթեր»):

Դեկտեմբերի 18. «Արշալույս արարատյանը» (№ 457) գրաբար հրատարակում է Հովհաննես Մալեգյանի (Վահան Մալեգյանի պապը) «Մաղթանք առ Աստուած» և Ստեփաննոս Եղիազարյանցի «Զինուոր ոմն եւ ծրար նարտից» բանաստեղծությունները:

Դեկտեմբեր. «Արփի արարատյանը» (№ 6) գրաբար հրատարակում է Ռուբեն Անդրեաս Փափազյանի «Ի իրախոյս ուսումնասեր համբակաց» պոեմը: Հրատարակված է նաև «Երգ Հայաստանի (երգ ի գոյն «Գիւղական աղջիկ եմ» երգոյն)» բանաստեղծությունը, որի քառյակների առաջին տառերը կազմում են «Աբել» անունը (Մխիթարյան?):

Վերջեր. «Արփի արարատյանը» (հավելված), Կարապետ Տետեյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն արձակ թարգմանությամբ և թարգմանչի առաջաբանով ու ծանոթագրություններով, սկսում է հրատարակել Վիլյամ Շեքսպիրի «Կատակերգություն սիսլանաց» պիեսը: Երեք արարված հրատարակվելուց հետո (հինգ արարվածից), այն անավարտ է մնում:

«Գարուն», 1976, № 8, օգոստոս («Նորահայտ էջ Շեքսպիրի հայ թարգմանությունների պատմությունից»):

-Պոլսում ծնվեց բանաստեղծ, արձակագիր, գրական-մշակութային գործիչ, լրագրող Հովհաննես Սենեքերիմի Սեթյանը: Վախճ. 1930 թ. մարտի 27-ին, Կահիրեում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Եռսեյ Վանանդսեհ» կեղծանունով:

«Հայաստանի կոչնակ», 1930, № 19 («Անհետացող դեմքեր»): Ընդարձակ տարեցույց, Պոլիս, 1931, էջ 213: **Զարդարյան Վ.**, Հիշատակարան, Կահիրե, 1939, էջ 46-47:

-Պոլսում ծնվեց երաժիշտ-երգահան, բանաստեղծ, արձակագիր Ստեփան Սուրենյանը: Վախճ. 1899 թ. հոկտեմբերի 9-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1913, էջ 254-255:

-Պոլսում ծնվեց թարգմանիչ (գերմաներենից՝ հայերեն), լեզվաբան, հրապարակագիր Մելքոն Նազիկյանը: Վախճ. 1914 թ. սեպտեմբերի 25-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1915, էջ 398-399:

-Պոլսում (Սամաթիա) իր գոյությունն է սկսում կրթական-հրատարակչական «Ազգասիրական ընկերությունը»: Գոյատևել է մինչև 1860-ական թվականները և 1854 թվականից իր հովանավորության ներքո է վերցրել Պոլսի «Ընտանի իմաստասեր» բարոյական և մատենագրական ամսագիրը:

Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հ. Ա, Վիեննա, 1957, էջ 564:

-Մարաշում (Կենտր. Թուրքիա) ծնվեց հողվածագիր (հայերեն և անգլերեն լեզուներով), պատմաբան Սարգիս Ենուքյանը: Վախճ. Ադենում (Կալիֆորնիա, ԱՄՆ):

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 685:

-Մարաշում (Կենտր. Թուրքիա) ծնվեց կրթական-մշակութային գործիչ Ղևոնդ քահանա Տեր-Նահապետյանը: Վախճ. 1943 թ. Կահիրեում:

«Մարուքե ճգնավոր» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Սյուրմեչյան Ա., Պատմություն Հալեպի հայոց, հ. 2, Փարիզ, 1950, էջ 889-891:

-Աբլաստանում (Կիլիկիա, Հար. Թուրքիա) ծնվեց գրական-մշակութային գործիչ, թարգմանիչ (հայերենից՝ թուրքերեն), խմբագիր Ստեփաննոս Յաղուբյանը: Վախճ. 1925 թ. նոյեմբերի 2-ին, Բասսենտինայում (Կալիֆորնիա, ԱՄՆ):

1916 թ. Նյու-Յորքում հիմնադրել և մինչև 1920 թ. խմբագրել է «Կիլիկիա» հաստատ թուրքերեն շաբաթաթերթը:

«Հայաստանի կոչնակ», 1926, № 6 («Ստեփան Յաղուբյան»): **Թեոդիկ**, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1927, էջ 619:

-Կարինում ծնվեց մշակութային գործիչ, կրոնական մատենագիր Ավգուստինոս Ամրիկյանը: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ էր 1878 թ., վախճ. 1934 թ. փետրվարին Պոլսում:

«Հայաստանի կոչնակ», 1934, № 6 («Հանգիստ հայր Ամրիկյանի»):

-Վանում ծնվեց բանաստեղծ, կրթական-մշակութային գործիչ Միքայել Թերլեմեզյանը: Վախճ. 1928 թ., Թիֆլիսում:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 360:

-Թիֆլիսում ծնվեց լրագրող (հայերեն և ռուսերեն լեզուներով), հուշագիր, կրթական-մշակութային գործիչ Գևորգ Թումանյանը (Туманов): Վախճ. 1920 թ.:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 379:

-Խարբերդում ծնվեց գրական-մշակութային գործիչ, լրագրող Սարգիս Սողիկյանը: Վախճ. 1935 թ. մայիսի 28-ին Ռոչեստերում (Նյու-Յորքի նահանգ, ԱՄՆ):

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1916-1920, էջ 167-168: «Հայաստանի կոչնակ», 1935, № 26 («Պրոֆ. Ս. Սողիկյանի մահը»):

-Վենետիկում գրաբար հրատարակվում է Ղևոնդ Ալիշանի «Քաղաքական աշխարհագրութիւն նկարացոյց պատկերօք» աշխատությունը: 802 էջ:

Հրատարակության ազդարարությունը՝ «Բազմավեպ», 1854 թ. № 3 («Քաղաքական աշխարհագրութիւն Հ. Ղևոնդայ վ. Ալիշանեան»):

-Վենետիկում աշխարհաբար հրատարակվում է Ղևոնդ Ալիշանի «Նմանություն Ալոիսիոսի Գոնզակա, պաշտպանի մանկաց» աշխատությունը: 174 էջ: Վերջում, «Յաղթանակ սրբոյն Ալոյիզեայ» խորագրի ներքո, զետեղված են Ալիշանի գրաբար բանաստեղծությունները:

-Վենետիկում Ղևոնդ Ալիշանի՝ լատիներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ալֆոնսոս Լիգուորիի «Կրթություն սիրելի զՀիսուս» աշխատությունը: 466 էջ:

Նույնը 1885 թ., որոշ կրճատումներով՝ 357 էջ:

-Վենետիկում, գերմաներեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակվել Քրիստափոր Շմիդտի «Մատենադարան մանկանց» մատենաշարի հետագա հատորները: Հրատարակվում են «Քարայր ապաշխարության» («Մատենադարան մանկանց» հ. Ը), 95 էջ, «Թեոփիլե կամ պզտի ճգնավոր» (հ. Թ), 81 էջ, «Լյուդովիկոս կամ կորսված տղա» (հ. Ժ), 97 էջ, «Ռոզալիա, Պալերմո քաղաքին մեկ գեղեն» (հ. ԺԱ), 123 էջ, «Քրիստինե կամ գառնուկ» (հ. ԺԲ), 106 էջ, «Ֆենհեյմ կամ առաքինություն վարձատրյալ» (հ. ԺԳ), 119 էջ, և վերջապես՝ «Ֆելիչե կամ որբ տղա» (հ. ԺԴ), 167 էջ վիպակները: Այս գործերից մի քանիսը հետագայում վերահրատարակվել են (տե՛ս նաև **Ս.Շտիկյան**, Հայ նոր գրականության ժամանակագրություն, 1801-1850 թթ., Երևան, 1973, էջ 229-230):

-Վենետիկում, Էդուարդ Հյուրմյուզյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Ժան-Պիեր Ֆլորիանի «Նումա Պոմպիլիոս, երկրորդ արքա Հռովմայ» վեպը: 362 էջ:

Նույնը անփոփոխ՝ 1866 թ., 372 էջ:

-Վենետիկում գրաբար սկսում է հրատարակվել «Սոփերք հայկականք» ընդհանուր խորագրի ներքո լույս տեսնող առաջին գրքույկը, «Բանք խրատուց նախնի իմաստասիրաց» վերնագրով: Բնագրագիտական աշխատանքները, առաջաբանն ու ծանոթագրությունները Ղևոնդ Ալիշանի: 72 էջ:

«Սոփերք հայկականքի» հետագա հատորիկները, որոնցում հետաքրքրական տեղեկություններ կան մեր հին ու միջնադարյան հեղինակների, ազգային ու հոգևորական գործիչների մասին, Ալիշանը հետագայում հրատարակել է հետևյալ հաջորդականությամբ:

«Պատմութիւն վասն սրբոյն Սահակայ հայրապետին և Մեսրոպբայ վարդապետին» («Սոփերք հայկականք», հ. Բ): 162 էջ:

«Յովհաննու Սարկավագ վարդապետի յաղագս քահանայութեան և քահանայից և գլխոց նոցին» (հ. Գ): 84 էջ:

«Յովհաննու Ոսկեբերանի և Գրիգորի Սարկաւագապետի ներբողեանք ի սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» (հ. Դ): 157 էջ:

«Յովհաննու Սարկավագ, Վարդանայ Բարձրաբերդցոյ, Յովհաննու Երզնկացոյ ներբողեանք ի սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» (հ. Ե): 164 էջ:

«Պատմութիւն սրբոյն Ներսիսի Պարթևի հայոց հայրապետի» (հ. Զ): 147 էջ:

«Պատմութիւն սրբոյն Ներսիսի Պարթևի, հայոց հայրապետի» (հ. Է): 80 էջ:

Հաղորդում է նորանոր տվյալներ Ներսես Պարթևի ազգային-կրոնական գործունեության վերաբերյալ, որոշ կրճատումներ կատարելով նախորդ հատորիկում:

«Վկայաբանութիւն և գիտ նշխարաց սուրբ Թադէի առաքելոց և Սանդուխտ կուսի» (հ. Ը): 102 էջ:

Այս հատորի նյութի հենքի վրա հետագայում Ալիշանը գրեց իր հանրահայտ «Շուշանն Շավարշանա» պոեմը:

«Վկայաբանութիւն սրբոյն Շուշանկան, դստեր Մեծին Վարդանայ» (հ. Թ): 61 էջ:

«Ներբողեան յորդիս և ի թոռունս սրբոյ Լուսավորչին» («Սոփերք հայկականք», 1854, հ. Ժ): 73 էջ:

«Կորյուն վարդապետի պատմութիւն սրբոյ Մեսրոպբայ» (հ. ԺԱ): 59 էջ:

«Ողբք վասն չարեացն աշխարհիս հայոց և վկայաբանութիւն սրբոյն Վահանայ Գողթնացոյ» (հ. ԺԳ): 100 էջ:

«Սրբոյն Ներսիսի Շնորհալոյն պատմութիւն վարուց» (հ. ԺԴ): 87 էջ:

«Գրիգորի Սկեռացոց ներբողեան ի սուրբ Ներսէս Լամբրոնացի» (հ. ԺԵ): 90 էջ:

«Պատմութիւն վարուց սրբոյն Սարգսի զօրավարի, թարգմանեալ ի Ներսէսէ Շնորհալոյ» (հ. ԺԶ): 89 էջ:

«Աղօթամատոյց Յովհաննու Սարկաւազայ վարդապետի» (հ. ԺԸ): 145 էջ:

«Եղիշէի քահանայի ճառ յայլակերպութիւն տեառն» (հ. ԺԸ): 86 էջ:

«Պատմութիւն վարուց սրբոյն Շմաւոնի եպիսկոպոսի և ճառ ի վկայսն Արևելից» (հ. Ի): 158 էջ:

«Աղօթք Յովհաննու Վանանդեցոյ, Բենիկ կոչեցեալ վարդապետի» («Սոփերք հայկականք», 1861, հ. ԻԱ): 143 էջ:

«Պատմութիւն սրբոյն Յակովբայ Մծբնայ հայրապետին» (հատ. ԻԲ): 187 էջ:

-Վիեննայում, արևմտահայերեն մեկնաբանություններով, հրատարակվում է «Ոսկի գրքոյկ կամ գործնական խոնարհություն» դասագիրքը: 88 էջ:

-Վիեննայում, գրաբար մեկնաբանություններով, հրատարակվում է Սրապիոն Էմինյանի «Երեքլեզուեան բառգիրք, այսինքն՝ զաղղիերէն-հայերէն-տաճկերէն» աշխատությունը: 1358 էջ:

Նույնը՝ 1871 թ., 1224 էջ, որոշ հավելումներով:

-Պոլսում, արևմտահայերեն մեկնաբանություններով, հրատարակվում է Նահապետ Ռուսինյանի «Ուղղախոսություն արդի հայ լեզվին» աշխատությունը: 119 էջ:

-Պոլսում, արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Վարք հելվետիացի բարեկարգչին Ջուինկլի» գիրքը:

-Պոլսում գրաբար հրատարակվում է Ավետիս Ահարոնյանի «Հայկազեան, վասն լինելոյ ի սմա աղերսախառն բողոք յերեսաց հեստելոց առ սրբազան հարս և ազգասէր իշխանս Հայկազնեայս» պոեմը: 73 էջ:

-Պոլսում, Ստեփան Ոսկանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ ու առաջաբանով, հրատարակվում է Էոժեն Սյուի «Թափառական հրեա» վիպասանության առաջին հատորը:

Հաջորդ հատորները չեն հրատարակվել:

-Պոլսում, Ա.Լ.-ի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Արևելյան խնդիր. Տաճկաստանու և Ռուսիո բաղդաստությունը ուսումնական և կրթության մասին: Ռուսաց սկիզբն ու լեզուն և իրենց կառավարությանը տակ ըլող ժողովրդոց վիճակը» գրքույկը: 42 էջ:

-Պոլսում գրաբար հրատարակվում է «Հարիւրեակ բարոյական խրատուց, յորս բովանդակին բարոյական առածք և զուարճալի պատմութիւնք» ժողովածուն: 173 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Հռովմայի պապը հայոց ազգին հետ ինչ բան ունի» գրքույկը: 36 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Հայաստանյայց վարդապետի մը խոսք ի պատասխանի Գոլեժցվոց պարսավագրքին դեմ՝ Մխիթարյանց հանած տետրակինքանի մը հատվածոց» գրքույկը: 48 էջ:

Հատվածաբար հրատարակվում էր «Նոյան աղավնի», 1853 թ. № 52 (մարտի 15) - № 55 (մարտի 19): Նոյն պարբերականը վկայում է նաև, որ վերոհիշյալ «հոդվածը Էջմիածինեն ուղարկված ձեռագիր մըն է»:

-Պոլսում, «Սուրբ Սահակյան վարժարանի» աշակերտների՝ գրաբարից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ներսես Շնորհալու «Ընդհանրական թուղթք կամ նամակք» աշխատությունը: 151 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Ստեփան Ոսկանյանի «Ներքին համոզումն. Եվրոպա լրագրոյն ներքին համոզմանը դեմ բուն հայու մը ներքին համոզմամբ տրված Ա. պատասխանը» գրքույկը: 34 էջ:

-Պոլսում գրաբար հրատարակվում է Մկրտիչ Խրիմյանի «Անձնանուէր հայրենասիրի որումն բան առ Մխիթարեան ուխտն, ի դիմաց լուսաւորչական հայոց» գրքույկը: 32 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Պետիկին գրքույկը» ստեղծագործությունը: 48 էջ:

-Պոլսում, Գրիգոր վարդապետ Խապարաճի Կարապետյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, Կարապետ ՌԻթուջյանի ընծայականով, հրատարակվում է «Պարոն Տրյուվալի աղջիկները կամ հաղթանակ բարեկրթության» վիպակը: 80 էջ:

Հատվածաբար հրատարակվում էր «Մասիսում», 1852 թ. № 39 (հոկտեմբերի 22) մինչև № 44 (նոյեմբերի 26):

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Բարեկարգություն, գյուղական, եկեղեցական և դպրոցական իրողությանց Մունճուսունի, որ ի Կեսարիա» խորագիրը կրող օրենքների ժողովածուն:

-Պոլսում, Հովհաննես Պրուսացի Չամուռճյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Չորք եղբայրք. պատմություն, որ կցուցնէ, թե մարդույս երջանկությունը ինչպես կըլլա» վիպակը:

-Մոսկվայում գրաբար հրատարակվում է Ղազար Փարպեցու «Թուղթ առ Վահան տէրն Մամիկոնէից» գործը: Բնագրագիտական աշխատանքները, գրաբար առաջաբանն ու ծանոթագրությունները Մկրտիչ Էմինի: 221 էջ:

Առաջաբանից մի հատված հետագայում հրատարակել է «Արշալույս արարատյանը» 1859 թ. № 592 (մարտի 6) մինչև № 595 (ապրիլի 17):

-Մոսկվայում գրաբար հրատարակվում է Հովհաննես Վանանդեցու «Ճառ ներբողական ի սուրբ խաչն Քրիստոսի և պատմագրական առասացութիւն ի սուրբ նշանն Վարա-

գայ» չափածո ստեղծագործությունը: Գիրքը հրատարակության է պատրաստել Մսեր Գրիգորյանը (Մսերյան): 118 էջ:

Վերջում (էջ 103-118) Մսերյանը զետեղել է Սեբերիանոս եպիսկոպոս Գաբաղացու «Ճառ ի վերա բանին, թե հուր եկի արկանել յերկիր» գործը, որի ձեռագիրը 1827 թ. Ակնա Ս. Փրկիչ վանքում գտել է ինքը:

-Մոսկվայում գրաբար հրատարակվում է Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմութիւն հայոց» աշխատությունը: Բնագրագիտական աշխատանքները, գրաբար առաջաբանը և ծանոթագրությունները Մկրտիչ Էմինի: 219 էջ:

-Մոսկվայում աշխարհաբար հրատարակվում է Ստեփաննոս Նազարյանի «Վարդապետարան կրոնի, հասարակաց հայախոսությամբ» աշխատության առաջին մասը: Աշխատության հաջորդ մասերը չեն հրատարակվել:

-Մոսկվայում, աշխարհաբար մեկնաբանություններով, հրատարակվում է Ստեփաննոս Նազարյանի «Առաջին հոգեղեն կերակուր հայազգի երեխաների համար» ձեռնարկը: 103 էջ:

-Զմյուռնիայում գրաբար հրատարակվում է Հովհաննես Վանանդեցու «Հերքումն կարծեաց գնալոյ սրբոյն Պետրոսի ի Հռովմ» աշխատությունը: 44 էջ:

-Զմյուռնիայում արևմտահայերեն հրատարակվում է Ստեփան Փափազյանի «Նոր դասագիրք քերականության հայերեն գրաբար և աշխարհաբար լեզվաց» աշխատությունը:

Նույնը՝ Պոլիս, 1860 թ., 1863 թ., 1865 թ., 1868 թ., ամեն անգամ որոշ փոփոխումներով ու լրացումներով:

-Զմյուռնիայում, Հովհաննես Եզեկյանի՝ իտալերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Պիետրո Մետաստազիոյի «Ապաստանարան սիրոյ» դյուցազներգությունը: 16 էջ:

-Զմյուռնիայում արևմտահայերեն հրատարակվում է Կարապետ, Սարգիս և Հարություն Տետեյան եղբայրների համատեղ հեղինակություն հանդիսացող «Պատմություն օսմանյան, սկսյալ ի սուլթան Օսմանա մինչև ցմեր ժամանակս» աշխատությունը: 204 էջ:

Հիշյալ աշխատությունը հրատարակվում էր որպես «Արփի արարատյանի» հավելված (թեև կա նաև առանձին գրքով) և պարբերականի դադարելու հետևանքով անավարտ է մնացել: Օսմանյան կայսրության պատմությունը հասցված է մինչև Սուլթան Բայազիդ Բ-ի (887-1481) թագավորությունը:

-Թիֆլիսում, Հակոբ Կարենյանցի և Միքայել Պատկանյանցի՝ ռուսերենից կատարած համատեղ աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է Լեոնարդ Գալլուայի «Ինկվիզիցիա» աշխատության Ա հատորը: 102 էջ:

Երկրորդ հատոր՝ նույն թվականին, 63 էջ:

-Մինգապուրում, Ազարիա Միքայելյանի՝ անգլերենից (?) կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է «Միմոս կամ բանք զուարճալիք» ժողովածուն:

-Երուսաղեմում գրաբար հրատարակվում է Մարգար Խոճենց Երևանցու «Կտակագիր հոգեշահ բանից» աշխատությունը: 224 էջ:

1 8 5 4

Հունվար. «Արփի արարատյանը» (№ 7) գրաբար հրատարակում է Արամ Կարապետ Տետեյանի (սկզբում՝ Կարապետ Տետեյան) «Ամանորական» բանաստեղծությունը:

Նույն համարում, գրաբար հրատարակվում է Արմենակ Պալապանյանի «Ի պատասխան նախընթաց քերթուածոյն» բանաստեղծությունը, որը գրված է որպես պատասխան Ռուբեն Անդրեաս Փափագյանին (տե՛ս «Արփի արարատյան», 1853, № 6, դեկտեմբեր):

Հունվարի 28. Տրապիզոնում ծնվեց պատմաբան-բանասեր, գրող, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն), լրագրող (հայերեն և ֆրանսերեն լեզուներով) Մինաս Վարդևանի Նուրիխանյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1871 թ. օգոստոսի 2-ից, վախճ. 1929 թ. հունիսի 7-ին, Պաղուայում (Հս. Իտալիա):

«Բազմավեպ», 1923, № 9 («Հիսնամյա հոբելյան ...Մինաս Նուրիխանի...»): 1929, № 6 («Մինաս Նուրիխան»):

Փետրվարի 2. Պիոս 9-րդ պապի կոնդակը Պոլսի հայկական կաթոլիկ համայնքին, նրանց նկատմամբ Վատիկանի «ուշադրությունն ու հոգատարությունն» անպակաս անելու մասին:

Փետրվարի առաջին կես. «Բազմավեպը» (№ 3), Խորեն Գալֆայանի՝ ռուսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Վիկտոր Հյուգոյի «Մանուկ յորրանի» և «Գերդաստան» բանաստեղծությունները: Սկզբում տրված է նրանց ստեղծման գրական-բանասիրական պատմությունը: Հրատարակված է նաև Մանվել Զախջախյանի «Խաբուսիկ բարեկամ» գրաբար բանաստեղծությունը:

Փետրվարի 20. «Արշալույս արարատյանը» (№ 462) գրաբար հրատարակում է Մկրտիչ Հակոբյանի «Քառեակ եղանակք տարւոյ. Ա. Չմեռն» բանաստեղծությունը: Հետագայում հրատարակվել է «Բ. Գարուն» (Անդ, № 466), «Գ. Ամառն» (Անդ, № 475) և «Դ. Աշուն» (№ 479) գործերը, նվիրված տարվա եղանակներին:

Նույն համարում. Եղիազար Չայանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է նովել Ալեքսանդր Մակեդոնացու կյանքից:

Մարտի 3. Վենետիկում վախճանվեց աստվածաբան, բառարանագիր, բնագրագետ-բանասեր, թարգմանիչ (լատիներենից, հունարենից՝ հայերեն) Մկրտիչ Հայրապետի Ավգերյանը: Ծնվ. 1762 թ. նոյեմբերի 11-ին Գաղատիայում (Անկյուրա, Թուրքիա), Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1786 թ. հունվարի 4-ից:

«Բազմավեպ», 1854, № 5 («Հանգիստ... Մկրտիչ Ավգերյանի...»), Մխիթարյան հոբելյան, Վենետիկ, 1901, էջ 101-108, 218:

Մարտ. «Արփի արարատյանը» (№ 9) հրատարակում է Հարություն Ալամդարյանի «Սոխակն ի հոգևարս» բանաստեղծությունը, որի առաջին տառերը կազմում են «Ալամդարեանց»:

Մարտի 14. Պոլսում ծնվեց լրագրող, գրահրատարակիչ Տիգրան Տողրամաճյանը: Վախճ. 1941 թ. ապրիլի 1-ին, իր ծննդավայրում:

Թեոդիկ, Տիպ ու տառ, Պոլիս, 1912, էջ 127: «Հայաստանի կոչնակ», 1933, № 14 («Հայ ազգային կյանք»): 1941, № 40 («Տողրամաճյանի մահը»):

Մարտի 18. Շամշուղա գյուղում (Վրացական ՍՍՀ) ծնվեց արձակագիր, բանաստեղծ, լրագրող Ալեքսանդր Պետրոսի Արարատյանը: Վախճ. 1884 թ. դեկտեմբերի 23-ին, Թիֆլիսում:

Տեր-Աստվածատրյանց Հ., Բառարան հայ կենսագրությանց, Թիֆլիս, 1904, էջ 136-138:

Մարտի 22. «Եվրոպան» (№ 13) գրաքար հրատարակում է Բուալոյի հետևությանը գրված «Պատիւ, սուտ և ճշմարիտ» բանաստեղծությունը:

Ապրիլ. «Արփի արարատյանը» (№ 10), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ֆրանսուա Ռընե Շատոբրիանի «Խիղճ և տագնապ սրտի (անմահություն հոգվո)» պատմվածքը:

Ապրիլի 9. «Արշալույս արարատյանը» (№ 465), Համագասպ Եղիազար Չայանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Պետրոս, կամ աստուծո ըրած բաները ամենն ալ աղեկ են» վիպակը: Ավարտ՝ № 468 (մայիսի 21):

Ապրիլի առաջին կես. «Բազմավեպը» (№ 7), Մկրտիչ Ռափայելյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ֆրանսուա Ֆենելոնի «Դեպք պառավ թագուհվոյն և գեղջուկ Բերոնելին» նովելը:

Ապրիլի 12. «Եվրոպան» (№ 16), գերմաներեն բնագրից կատարված գրաքար թարգմանությամբ, հրատարակում է Յոհան Վոլֆգանգ Գյոթեի «Գիշերական երգ» քառյակը:

Ապրիլի 21. «Եվրոպան» (№ 17), իտալերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ֆրանցիսկոս Սոավյեի «Ուրուկեր Դանեմարքացին» պատմվածքը: Ավարտ՝ № 19 (մայիսի 3):

Մայիսի առաջին կես. «Բազմավեպը» (№ 9) գրաքար հրատարակում է Մանվել Ջախջախյանի «Բարոյական առակ» բանաստեղծությունը և նրա այլաբանական իմաստի մեկնությունը:

Մայիսի 17. «Եվրոպան» (№ 21) արևմտահայերեն հրատարակում է «Եզնիկ Կողբացի» հոդվածը:

Գրախոսված է Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցի»՝ 1853 թ. Փարիզում հրատարակված ֆրանսերեն թարգմանությունը (թարգ. Էդ. Ֆլորիվալ): Թարգմանական բնույթի մի քանի դիտողություններ անելով հանդերձ, աշխատանքն իր ամբողջության մեջ բարձր է գնահատված:

Հունիսի առաջին կես. «Բազմավեպը» (№ 11) ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Վիկտոր Հյուգոյի «Անցանէ ամենայն» բանաստեղծությունը:

Հունիսի 4. «Արշալույս արարատյանը» (№ 469), Սմբատ Պապայանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Անձրևոտ օր» պատմվածքը: Ավարտ՝ № 472 (հուլիսի 16):

Հունիսի 7. «Եվրոպան» (№ 24) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Պարոն Դյուլյո-րիէին հայոց վրա գրածը» ուսումնասիրությունը: Ավարտ՝ № 27 (հունիսի 28):

Դյուլյորիէն քննել է հին հայկական ավանդությունները, ապա նրանց լեզվական առանձնահատկությունները: Այնուհետև վերլուծված են հին հայերեն այն գործերի թարգմանությունները, որոնց հունարեն բնագրերը մեզ չեն հասել: Միջնադարյան հայ գրականությունը քննելուց և նրա առանձնահատկությունները բնութագրելուց հետո, վերլուծված են XIX դարի հայկական պոեզիան և մասնավորապես Ղևոնդ Ալիշանի չափածո ստեղծագործությունները: Ի վերջո բնութագրված են Մխիթարյանները (Վենետիկի և Վիեննայի) ու նրանց կատարած գործը:

Հունիս. «Արփի արարատյանը» (№ 12), Հակոբ Ոսկանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է «Երգ հայրենի ազատութեան (Մարսելեզ)» բանաստեղծությունը: Այն հրատարակվել է «Զվարճալիք» ընդհանուր խորագրի ներքո:

Հունիսի 27. Շուշիում (Լեոնային Ղարաբաղ) վախճանվեց մշակութային գործիչ, բառարանագիր Բաղդասար մետրոպոլիտ Դանիել-բեկի Հասան-Ջալալյանը: Ծնվ. 1775 թ. հունվարի 12-ին, Գանձասարում (այժմ՝ Վանք, Լեոնային Ղարաբաղ):

Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1915, էջ 99-178:

Հուլիսի 2. «Արշալույս արարատյանը» (№ 471), Գրիգոր Հովակիմյանի (իմա՝ Չիլինկիրյան – Ս.Շ.), հունարեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Ֆյուրտյուրի» պատմվածքը: Վերարտադրված է մի դրվագ պարսիկ բանաստեղծ Ֆիրդուսու կյանքից:

Հուլիս. Պոլսում (Նառլըգաբու) Մանուկ Գաբամաճյանի, Մինաս Թոգաթյանի, Ստեփան Թուղլաճյանի և Հովհաննես Մուպահաճյանի սատարմամբ, ստեղծվում է գրական-մշակութային «Մովսես Խորենացի» ընկերությունը: Այն գոյություն ունեցավ մինչև 1880-ական թվականները:

Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերությունների, հ. Ա, Վիեննա, 1957, էջ 589-593:

Հուլիսի 5. «Եվրոպան» (№ 25) արևմտահայերեն հրատարակում է «Ազգը առաջանալու համար պետք է որ հրապարակական արդյունք ցուցրնե» հոդվածը: Ավարտ՝ № 31 (հուլիսի 26):

Հուլիս. «Արփի արարատյանը» (№ 1) գրաբար հրատարակում է Սմբատ Ստեփան Սարգսյանի «Յաւերժութիւն» բանաստեղծությունը, իսկ № 3-ում (սեպտեմբեր)՝ «Վռամշապուհ խաղաղասէր արքայ» պոեմը:

Հուլիսի 30. «Արշալույս արարատյանը» (№ 473), Վռամշապուհ Մելքոն Ոսկանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Քրիստոնյա ընտանիք» պատմվածքը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Օգոստոսի 13. «Արշալույս արարատյանը» (№ 474) գրաբար հրատարակում է Համազասպ Չայանի «Ի սուրբ թարգմանիչս մեր» բանաստեղծությունը:

Օգոստոսի երկրորդ կես. «Բազմավեպը» (№ 17), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ժան Լաֆոնտենի «Օձ ու խարտոց» առակը:

Սեպտեմբեր. «Արփի արարատյանը» (№ 3) գրաբար հրատարակում է Ավետիս Պերպերյանի «Նուազք ի նուէր հնգետասաներորդ տարեդարձի Արշալուսոյ արարատեան» բանաստեղծությունը:

Սեպտեմբերի 27. Ակնում (Արևել. Թուրքիա) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, հրապարակագիր (հայերեն և թուրքերեն լեզուներով), բանաստեղծ, բանասեր Երվանդ Թիմուրյանը: Եղեռնամահ՝ 1915 թ. Սեբաստիայում:

«Երկաթյան Երվանդ», «Աշոտ Երկաթ» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, հ. Ա, Կահիրե, 1937, էջ 1201-1203: Պարսամյան Մ., Ակն և ակնեցիք, Փարիզ, 1952, էջ 691:

Սեպտեմբերի 30. «Մասիսը» (№ 140) Խաչիկ Կյումուշյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Պետրոս Ռավիեռ» վիպակը: Որոշ ընդհատումներով շարունակվում է մինչև № 145 (նոյեմբերի 4):

Հոկտեմբերի 23. Արտանուշում (Արևել. Թուրքիա, Ճորոխ գետի Արտանուշ վտակի ափին) ծնվեց մանկավարժ, լրագրող Կյուրեղ Եղոյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1878 թ. դեկտեմբերի 25-ից, վախճ. 1908 թ. փետրվարի 16-ին, Եկատերինոպոլսում (այժմ՝ Կրասնոդար):

«Բազմավեպ», 1908, № 4 («Կյուրեղ Եղոյան»):

Նոյեմբերի 5. «Արշալույս արարատյանը» (№ 480) գրաբար հրատարակում է Միքայել Առանձար Մարգարյանի «Ի մահ ազնուուհի օրիորդին Թագուհույ» եղերերգը:

Հետագայում հրատարակել է «Կեցցե ոգին ազգասէր» (№ 481, նոյեմբերի 19): «Մանուկ հայկազն հրաւիրեալ ի յԱյրարատ օգոստափառ» (1855 թ., հուլիսի 1, № 497): «Հրաժէշտ առ պարոն Մարտիրոս Թօթվայեան» («Մեղու», 1857 թ., № 15, ապրիլի 15):

Նոյեմբերի 18. «Մասիսը» (№ 147) Հարություն Չազրճյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Ռյու դը Լանֆեռ փողոցին տունը» վիպակը: Ավարտ՝ № 150 (դեկտեմբերի 9):

Նոյեմբերի 24. Վենետիկում վախճանվեց բառարանագիր, աստվածաբան, պատմաբան-բանասէր, թարգմանիչ (լատիներենից, անգլերենից, իտալերենից՝ հայերեն, հայերենից՝ իտալերեն) Հարություն Հայրապետի Ավգերյանը: Ծնվ. 1774 թ. հունիսին Անկյուրայում, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1798 թ.:

«Բազմավեպ», 1854, № 24 («Հանգիստ հավիտենից... Հարություն Ավգեր...»): Մխիթարյան հոբելյան, Վենետիկ, 1901, էջ 101-108, 220:

Դեկտեմբերի 1. Շուշիում (Լեռնային Ղարաբաղ) ծնվեց հայ գրականության դասական, ականավոր արձակագիր, դրամատուրգ Մուրացանը (Գրիգոր Աստվածատուրի Տեր-Հովհաննիսյան): Վախճ. 1908 թ. օգոստոսի 30-ին, Թիֆլիսում:

«Հանդես ամսօրյա», 1909, № 1 («Մուրացան»): **Տերտերյան Ա.**, Հայ կլասիկներ, Երևան, 1944, էջ 465-607 («Մուրացան»): **Պարտիզունի Վ.**, Մուրացան, կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 1956, 557 էջ: **Սարինյան Ս.**, Մուրացան, Երևան, 1976, 332 էջ:

Դեկտեմբերի 4. Կալկաթայում ծնվեց լրագրող (հայերեն և անգլերեն լեզուներով), գրական-մշակութային գործիչ (մասնագիտությամբ՝ բժիշկ) Սարգիս Թադևոսի Ավետույան-ցը:

«Հանդես ամսօրյա», 1896, № 6 («Սարգիս բժիշկ Թադևոսյան Ավետույանց»): **Оганесян Л.А.**, История медицины в Армении, т. 4, Ереван, 1947, стр. 207-208.

Դեկտեմբերի 17. «Արշալույս արարատյանը» (№ 483), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Վրեժինդրական ամուսնություն» պատմվածքը (թարգ. «Խաչիկ»): Ավարտ՝ № 491:

Դեկտեմբերի 18. «Եվրոպան» (№ 52) արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Մայրական սեր կամ ձմեռվան դժբախտ գիշեր մը» վիպակը: Ավարտ՝ 1855 թ. № 7 (փետրվարի 7):

Դեկտեմբերի 30. «Մասիսը» (№ 153), Մատթեոս Մամուռյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Վոլտերի «Ճերմակ ու սև» վիպակը: Ավարտ՝ 1855 թ. № 155 (հունվարի 13):

-Պոլսում ծնվեց Բանասեր-լեզվաբան, բառարանագիր, խմբագիր Միհրան Ասքանազյանը: Վախճ. 1904 թ. դեկտեմբերի 20-ին, Ալեքսանդրիայում (Եգիպտոս):

1891 թ. Պոլսում խմբագրել է «Ծաղիկ մանկանց» շաբաթաթերթը (լույս է տեսել 22 համար): 1903 թ. Ալեքսանդրիայում հիմնադրել և մինչև իր մահը խմբագրել է «Պարտեզ» շաբաթական հանդեսը:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Մեղրածած» կեղծանունով:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1911, էջ 244-245:

-Պոլսում ծնվեց լեզվաբան - բանասեր, աշխարհագրագետ, գրական-մշակութային գործիչ Առաքել Պիպեռճյանը: Վախճ. 1923 թ. սեպտեմբերի 26-ին, իր ծննդավայրում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1925, էջ 375:

-Պոլսում ծնվեց լրագրող, խմբագիր Մարտիրոս Պարոնյանը: Վախճ. 1910 թ. ապրիլի 6-ին:

1906 թ. Պոլսում խմբագրել է «Հանրագիտակ» գրական և գեղարվեստական-գիտական շաբաթաթերթը: Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Նոպաս» կեղծանունով:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1911, էջ 372:

-Պոլսում ծնվեց գրական-մշակութային գործիչ, հայկական թերթերի և թատրոնների գրաքննիչ, լրագրող (հայերեն և ֆրանսերեն լեզուներով) Մինաս Կամսարը (Մինաս Հակոբի Պոունսուզյան): Վախճ. 1908 թ. մայիսի 30-ին:

«Բյուզանդիոն» 1908, № 3551 («Մահ Մինաս էֆենդիի»): № 3552 («Հուղարկավորություն Մինաս էֆենդիի»):

-Թիֆլիսում ծնվեց գրական-մշակութային գործիչ, լրագրող (հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով), արևելագետ Միխայել Հովհաննեսի Թամամջյանը: Վախճ. 1908 թ. հունվարի 24-ին, իր ծննդավայրում:

«Արարատ», 1908, № 1 («Մանր լուրեր»): «Մշակ», 1908, № 19 («Միքայել Թամամջյան»), № 27 («Միքայել Թամամջյան»):

-Նոր-Ջուղայում (Պարսկաստան) ծնվեց մշակութային գործիչ, պատմաբան, լրագրող (հայերեն և անգլերեն լեզուներով) Դիանա Աղաբեկի Աբգարյանը: Վախճ. 1937 թ. հուլիսին, Յոկահամայում (Ճապոնիա):

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 12-13: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 9:

-Կարինում ծնվեց մշակութային գործիչ, լրագրող Հակոբ Նշկյանը: Վախճ. 1934 թ. փետրվարի 15-ին Ֆրեզնոյում (ԱՄՆ):

«Հայաստանի կոչնակ», 1934, № 8 («Մահ Հակոբ Նշկյանի»), № 13 («Հակոբ Նշկյան»):

-Ադրիանապոլսում (Եվրոպական Թուրքիա) ծնվեց բանաստեղծ (գրում էր հայերեն և թուրքերեն լեզուներով) Միհրան Աղասյանը: Եղեռնամահ՝ 1915 թ.:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 868:

-Կահիրեում, Կարապետ Տեր-Գալուստյանի նախաձեռնությամբ և Նազարեթ Աղազարմի տեսչությամբ, իր գոյությունն է սկսում քառամյա երկսեռ դպրոցը, «Խորենյան ազգային վարժարան» անունով, որն այդպես էր կոչվում ի պատիվ Մովսես Խորենացու: 1864 թ. վարժարանն ստանում է նոր՝ «Գալուստյան ազգային վարժարան» անունը,

դառնում է ութամյա և այդպես էլ գոյություն ունի առ այսօր, ունենալով 750 աշակերտ և 50 ուսուցիչ:

Արշարունի Վ., Մեր դպրոցները գաղութներու մեջ, Ալեքսանդրիա, 1932, էջ 53-74: Գալստյան ազգային վարժարան (հաղորդագրություն), Կահիրե, 1970, 15 էջ:

-Պոլսում (Կեստիկ փաշա) տիրացու Հակոբ Եվդոկիացու սատարմամբ, իր գոյությունն է սկսում տեղի արական դպրոցը, որն ուներ «Մեսրոպյան վարժարան» անվանումը: Ավանդվում էր քերականություն, ճարտասանություն և շարադրություն: Դարավերջին դպրոցն արդեն երկսեռ էր, ուներ 228 աշակերտ և 222 աշակերտուհի: «Մեսրոպյան վարժարանը գոյություն ունի առ այսօր և 1955 թ. ուներ 22 ուսուցիչ և 508 աշակերտ: Վարժարանի տնօրենն էր Պողոս Շապոյանը:

«Մասիս», 1856, № 234 («Ազգային»): «Հայաստանի կոչնակ», 1927, № 22 («Հայ կյանքը Թուրքիո մեջ»), 1955, № 18 («Պոլսո հայ վարժարանները»):

-Վենետիկում, գերմաներեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Քրիստափոր Շմիդտի «Բարդուղիմեոս կամ հովիվ քարոզիչ» վիպակը: 106 էջ («Մատենադարան մանկանց», հ. ԺԵ):

Նույնն անփոփոխ՝ 1866 թ.:

Ք. Շմիդտի և այս մատենաշարի մասին տե՛ս՝ **Ս.Շտիկյան**, Հայ նոր գրականության ժամանակագրություն (1801-1850), Երևան, 1973, էջ 229-230:

-Վենետիկում, Գրիգորիա Մերձանձյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Հարրիեթ Բիչըր Ստոուի (գրքի վրա նշված է «Հենրիկե Պիչըր Սթոյ») «Աղբար Թովմասի տնակը» վեպի առաջին հատորը: 368 էջ:

Երկրորդ հատոր՝ նույն թվականին, 495 էջ:

Երկու հատորների վերահրատարակությունն անփոփոխ՝ 1906 թ., 672 էջ: Նույնը սրբագրված և որոշ ուղղումներով՝ 1928 թ.:

-Վենետիկում, Գաբրիել Այվազովսկու՝ իտալերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Սիլվիո Բելլիկոյի «Հաղագս մարդկային պարտուց» մանկավարժական տրակտատը: 193 էջ:

Հատվածաբար հրատարակվում էր «Բազմավեպում», 1849 թ. № 9 (մայիսի առաջին կես) մինչև 1851 թ. № 24 (դեկտեմբերի երկրորդ կես):

-Վենետիկում, Պետրոս Մինասյանի՝ իտալերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Իգնատիոս Լոյոլայի «Հրահանգ կրթութեան յալիտենական կենաց» աշխատությունը: 468 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Մխիթար Գոշի առակների գրաբար ժողովածուն «Առակք» ընդհանուր խորագրով («Շարք ընտիր մատենագրաց նախնեաց», հ. Թ.): 187 էջ:

Ձեռնեղված են Գոշի 190 առակները: Վերջում (էջ 169-187) «Առակք Ողոմպիանու» խորագրի ներքո տրված են Ոլիմպիանոսի 23 առակները:

-Վենետիկում գրաբար հրատարակվում է Մկրտիչ Ավգերյանի կրոնական բանաստեղծությունների ժողովածուն «Նուէր սիրոյ» խորագրով: 186 էջ:

-Վիեննայում, լատիներեն և արևմտահայերեն համատեղ բնագրերով, հրատարակվում է Պիոս 9-րդ պապի ճառերի ժողովածուն, «Համառոտագիր Պիոսի Թ քահանայապետի առ ամենայն եկեղեցական և աշխարհական հավատացյալս ուղղափառ ազգին հայոց, գավառին Կոստանդնուպոլսոյ» խորագրով: 20 էջ:

-Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Սահակ Թոռնյանի «Արկածք Վարդա Մամիկոնենո» պատմավեպը: 215 էջ:

Նույնը որոշ վերամշակումներով՝ 1869 թ., 195 էջ:

«Վարդ Մամիկոնյան» խորագրով հատվածաբար հրատարակվում էր «Եվրոպայում», 1853 թ. փետրվարի 2-ից (№ 7) մինչև № 52 (դեկտեմբերի 14):

-Վիեննայում գրաբար հրատարակվում է «Նուագք ի վեշտասան լեզուս, ի յոբելինի քահանայութեան Տեառն Արիստակէայ Ազարեան արքեպիսկոպոս Կեսարիայ և ընդհանրական աբբայի Մխիթարեան ուխտին Վիեննայ» ժողովածուն:

-Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Աստվածատուր Ավագյանի «Զվարճալիք բնապատմության (Շուն)» գրքուկը («Կրթական և զբոսալի տետրակներ», հ. Լ): 96 էջ:

-Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է «Գյուտերուն պատմությունը, հին ժամանակներեն մինչև մեր ատենները» գրքուկը: («Կրթական և զբոսալի տետրակներ», հ. ԼԲ): 72 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Հայք և իրենց թշնամիները» գրքույկը: 22 էջ:

-Պոլսում, Պողոս Արփաճյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Բարի Ֆոխտուլենը և չար Թիերին» պատմվածքը: 116 էջ:

-Պոլսում, Հովհաննես Կրճիկյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Անբարեխառնություն (ճառ Ա.)» աշխատությունը: 55 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Հակոբոս Տիվիթճյանի «Առաջադիմություն ազգային դաստիարակության» աշխատությունը: 20 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Հակոբոս Տիվիթճյանի «Վարչություն ընդհանուր ազգաց» աշխատությունը: 156 էջ:

Տրված է փյունիկեցիների, Հունաստանի, Հայաստանի, Քաղբեղոնի, Հռովմեական կայսրության և այլ պետությունների համառոտ պատմությունը, այդ հենքի վրա տրված է նրանց գրական-հասարակական և իրավական կյանքի ընդհանուր բնութագրությունն ու վերլուծությունը:

-Պոլսում գրաբար հրատարակվում է Անդրեաս Ալեքսանդրյանի «Պատասխանի առ բանս ինչ տետրակին, անուանելոյ «Ճշմարտութիւն Կոստանդնուպօլսոյ հռովմեական հայոց նախագահ Հասուն գերապայծառին հետ ունեցած դատին վրայօք» գրքույկը:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Եղիշե Թեոդոսյանի «Ի պատասխանի «Մասիս» լրագրոյն, հրատարակելո 1854 թ., 1 ապրիլ, թիվ 114» գրքույկը: 20 էջ:

«Մասիս» պարբերականի հիշյալ համարում տպագրվել է Կարապետ Ութուջյանի «Պապություն և Մխիթարյանք» վերնագիրը կրող հոդվածը: Եղիշե Թեոդոսյանը հանդես է եկել այդ հոդվածի դրույթների դեմ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Հերքումն «Մասիս» լրագրոյն մեջ եղած «Պապություն և Մխիթարյանք» հոդվածոյն և ուղղափառ վարդապետություն գլխավորության հռովմեական սուրբ եկեղեցվո» գրքույկը: 30 էջ:

Խոսքը վերաբերում է «Մասիսի» 1854 թ. № 114 (հինգշաբթի, ապրիլի 1)-ում լույս տեսած Կ. Ուրբուջյանի «Պապություն և Միսիթարյանք» վերնագիրը կրող հոդվածին, որի դեմ էլ հանդես է եկել գրքույկի հեղինակը:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Խաչատուր Միսաքյանի «Եպիմենիդես ի Վոսթոր» աշխատությունը: 64 էջ:

Ընդդիմախոսական է, գրված «Հերքումն «Մասիս» լրագրույն մեջ եղած...» գրքույկի դեմ (տե՛ս վերևում):

-Պոլսում, Գաբրիել Գրասերյանցի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Հենրիկոս կամ անառակ տղա» վիպակը: 144 էջ:

Նույնը՝ Երուսաղեմ, 1861 թ.:

Զարբհանալյանը («Հայկական մատենագիտություն», Վենետիկ, 1883 թ., էջ 351) որպես գրքի երկրորդ հեղինակ նշում է «Էզանֆել», Ա. Ղազիկյանը («Հայկական նոր մատենագիտություն...», Վենետիկ, 1912 թ., էջ 1559)՝ «Էշանֆել»: Գրքի հայերեն թարգմանության վրա հեղինակի անունը նշված չէ:

-Զմյուռնիայում, Տիգրան-Հարություն Տետեյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Մովսեսի «Ակամա բժիշկ» կատակերգությունը: 27 էջ:

Նույնը որոշ լրացումներով՝ 1882 թ., 44 էջ:

-Զմյուռնիայում, Տիգրան-Հարություն Տետեյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Մովսեսի «Ագահն» կատակերգությունը: 50 էջ:

Նույնը անփոփոխ՝ 1881 թ.:

-Զմյուռնիայում, Հայկ-Հակոբ Տետեյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Երեսուն ու իրեք ծաղրաբանութիւնք Նասրեդդին խոջայի» գրքույկը: 18 էջ:

Նույնը անփոփոխ՝ 1858 թ. (ունի «Ծաղրաբանությունք Նասրեղդին խոջայի» վերնագիրը), 16 էջ:

-Զմյուռնիայում արևմտահայերեն հրատարակվում է «Լուսավորչական հայու մը ուղիղ դատողությունները Հռովմա Պիոս Թ. պապին՝ Պոլսի հայազգի պապականներուն ուղղված կոնդակի վրա» գրքույկը: 14 էջ:

-Զմյուռնիայում գրաբար հրատարակվում է Հովհաննես Շահինյանի (Հովհաննես Շահինյան Վանեցի Մարմետցի) «Խթան ընդդէմ լուսաւորչական ազգիս հայոց քրիստոսահիմն և առաքելական եկեղեցւոյ անիրաւութեամբ արացողաց» գրքույկը: 56 էջ:

-Զմյուռնիայում արևմտահայերեն հրատարակվում է «Չարափառ հայ մը»-ի (իմա՝ Ստեփան Մսկանյան – Ս.Շ.) «Հռովմեական պարզև» գրքույկը: 36 էջ:

-Զմյուռնիայում արևմտահայերեն հրատարակվում է «Պաշտպանություն Հայաստանյայց կաթողիկէ և առաքելական սուրբ եկեղեցվո» աշխատությունը: 92 էջ:

1853 թ. Վիեննայում, Ալեքսանդր Պալճյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ալլայսի «Աթոռ սրբոյն Պետրոսի առաքելապետի, կեդրոն միության, հիմն եկեղեցվո, աղբյուր իրավաբանության» աշխատությունը (40+288 էջ): Զմյուռնիայում հրատարակված վերոհիշյալ աշխատությունը սրա դեմ գրված ընդդիմախոսական է: Հեղինակն իրեն կոչում է «Արժանապատիվ վարդապետ ոմն, միաբան Ս. Էջմիածնի» ձևով (=Աբել Մխիթարյան (?)):

-Երուսաղեմում գրաբար հրատարակվում է Մկրտիչ Արծրունյանի «Բացատրութիւն հրաժարման և զղջման բանից սրբոյ հարց և «Յիշեցուք», «Աշխարհ ամենայն» և «Առաւօտ լուսոյ» երգոց Սրբոյն Ներսիսի Շնորհալոյ» աշխատությունը: 292 էջ:

-Երուսաղեմում գրաբար հրատարակվում է Գրիգոր Փեշտմալճյանի «Տրամաբանութիւն կամ արուեստ բանական» աշխատությունը: 312 էջ: Այն հրատարակության է պատրաստել Երուսաղեմի պատրիարք Հովհաննես արքեպիսկոպոս Զմյուռնիացին:

-Շուշիում, գրաբար մեկնաբանություններով, հրատարակվում է Միքայել Սալլանթյանի «Համառօտ քերականութիւն» աշխատությունը: 438 էջ:

Չնայած հանդիսանում է նույն հեղինակի՝ 1827 թ. Մոսկվայում հրատարակված համանուն աշխատության վերահրատարակությունը (տե՛ս՝ **Ս.Շտիկյան**, «Հայ նոր գրականության ժամանակագրություն (1801-1850)», էջ 156), բայց կատարված փոփոխումներն այնքան շատ են, որ վերջինս ինքնուրույն աշխատանքի արժեք է ստանում:

-Թիֆլիսում, գրաբար մեկնաբանություններով, հրատարակվում է Գաբրիել Երիցփոխյանի «Բառարան ի ռուսաց լեզուէ ի հայ» աշխատությունը: 12+591 էջ:

Նույնը՝ փոփոխումներով ու հավելումներով, 1876 թ., 922 էջ:

-Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Հովսեփ Գաթրըրճյանի «Քանի մը խոսք «Մասիս» լրագրոյն 114 թվոյն մեկ հատվածին վրա» գրքույկը: 12 էջ:

«Մասիս» հիշված համարում հրատարակվել է Կարապետ Ութուջյանի «Պապություն և Մխիթարյանք» հոդվածը, որի դեմ էլ գրված է Հովսեփ Գաթրըրճյանի վերոհիշյալ գրքույկը:

1855

Հունվար. Փարիզում, Գաբրիել Այվազովսկու խմբագրությամբ, Սարգիս Թեոդորյանի ու Ամբրոսիոս Գալֆայանի աջակցությամբ, ֆրանսերեն ու արևմտահայերեն զուգահեռ տեքստերով, սկսում է հրատարակվել «Մասյաց աղավնի, ավետաբեր Հայաստանյայց» ամսագիրը (հրատարակության պաշտոնական ազդարարությունը «Հայտարարություն Մասյաց աղավնո» խորագրով՝ «Արշալույս արարատյան», 1855, № 489, մարտի 11): 1857 թ. հունվարից պարբերականն ստանում է նոր՝ «Մասյաց աղավնի և ծիածան Հայաստանյայց, հնգետասանօրյա հանդես» անվանումը, իսկ որպես խմբագիրներ նշվում են «Գաբրիել վարդապետ Այվազյան և Ամբրոսիոս Գալֆայան»: 1859 թ. սկզբներին, Այվազովսկու՝ Թեոդոսիայում աշխատանքի անցնելու կապակցությամբ, պարբերականը փոխադրվում է Թեոդոսիա, սկսում է հրատարակվել այդ թվականի հուլիսից «Մասյաց աղավնի և ծիածան Հայաստանյայց» խորագրով, հայերեն և ռուսերեն զուգահեռ տեքստերով, Գաբրիել Այվազովսկու խմբագրությամբ: Այդ ձևով, իր գոյությունը շարունակում է մինչև 1865 թ. կեսերը:

Հունվարի 1. Երևանում ծնվեց գրական-մշակութային գործիչ, դրամատուրգ, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն), խմբագիր, ՍՍՀՄ գրողների մության անդամ (1934-ից) Էմին Հովակիմի Տեր-Գրիգորյանը: Վախճ. 1939 թ. հուլիսի 26-ին, իր ծննդավայրում:

1883 թ. Երևանում հիմնադրել և մինչև 1885 թ. վերջը խմբագրել է «Երևանի հայտարարություններ» երկօրյա թերթը:

1901 թ. Երևանում հիմնել է «Эриванские объявления» երկօրյա թերթը, որը խմբագրել է մինչև 1908 թ. հունիսը:

«Բազմավեպ», 1935, № 7-8 («Ռուսահայ թատրոնի պատմությունը»), «Երեկոյան Երևան», 1975, № 93 («Երախտավոր Երևանցի»): **Խաչատրյան Հ.**, Գրական տեղեկատու, Երևան, 1981, էջ 456-457:

Հունվարի 3. «Եվրոպան» (№ 2) արևմտահայերեն հրատարակում է «1854 տարեկան ծերու մը վերջին խոսքը» պոեմը:

Հունվարի 25. Պատրիարքարանի գլխավոր ուղերձը «Հայոց հոգևոր և ազգային կենտրոններուն» Նահապետ Ռուսինյանի «Տարեցույց» և «ՌԻՂՊախոսություն» աշխատություններն արգելելու մասին:

Հունվարի 31. «Եվրոպան» (№ 6) արևմտահայերեն հրատարակում է «Հունաց թատրոններուն շենքերն ու հորինվածքը: Անոնց թատերախաղը: Դիմակներուն գործածությունը» ուսումնասիրությունը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Փետրվար. «Արփի արարատյանը» (№ 8) գրաբար հրատարակում է Գրիգոր Միրզայանցի «Բանաստեղծութիւն»-ը:

Բանաստեղծության տողերի առաջին տառերը ստեղծում են «Առ քեզ ճարտասանն խաչաբաշխ» իմաստը, իսկ ընտրված բոլոր բառերն ունեն մեկ կամ մի քանի «Ա» տառ: Ստեղծագործություն կառուցելու այս ձևն ունի «Այբահավաք» անվանումը:

Փետրվարի երկրորդ կես. «Բազմավեպը» (№ 4) արևմտահայերեն սկսում է հրատարակել Գրիգորիս Ճելայյանի «Վիկտոր Ալֆիերի» ուսումնասիրությունը: Ավարտ՝ № 19 (հոկտեմբերի առաջին կես):

Մարտի 3. «Մասիսը» (№ 162), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Ոգին հակառակության» կատակերգությունը: Որոշ ընդհատումներով, ավարտ՝ № 173 (մայիսի 19):

Մարտի առաջին կես. «Բազմավեպը» (№ 5), Խորեն Գալֆայանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալֆոնսոս Լամարթինի «Տաղ գիշերոյ» բանաստեղծությունը:

Մարտ. «Արփի արարտյանը» (№ 9) գրաբար հրատարակում է Հովհաննես Տեր-Կարապետյանի (Իմա՛. Չամուռճյան – Ս.Շ.) «Դաշնակից բանակք ի Պալչիք» և Գրիգոր Միրզայանցի «Բանաստեղծութիւն» ստեղծագործությունները:

Վերջին բանաստեղծության համար հատկապես ընտրված են այնպիսի բառեր, որոնց մեջ «Ա» տառը չկա: Գեղարվեստական ստեղծագործության այս ձևն ունի «Անայք» անվանումը:

Մարտի երկրորդ կես. «Բազմավեպը» (№ 6) գրաբար հրատարակում է Վրոյրի (Իմա՛. Էդուարդ Հյուրմյուզյան – Ս.Շ.) «Ի սգալի մահ ազգասիրի պ[արոն] Աբրահամու Աղանուր, առ տիկինն նորա այրի» դամբանականը:

Ապրիլի 8. Մուշում (Արևել. Թուրքիա) ծնվեց կրթական-հոգևորական գործիչ, լրագրող Հակոբ Թոփուզյանը: Եղեռնամահ՝ 1915 թ. Կուտինայի շրջանում:

«Հանդես ամսօրյա», 1920, № 1-3 («Հայ կաթողիկե կղերին նահատակները»):

Ապրիլ. «Արփի արարտյանը» (№ 10) գրաբար հրատարակում է Գրիգոր Միրզայանցի «Բանաստեղծութիւն» ստեղծագործությունը: Վերջինիս համար ընտրված են այնպիսի բառեր, որոնք սկսվում են «Խ» տառով:

Ապրիլի 10. Թիֆլիսում ծնվեց մշակութային գործիչ, թարգմանիչ (իտալերենից, ֆրանսերենից, ռուսերենից՝ հայերեն) Հովսեփ Մարգարյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1878 թ. ապրիլի 21-ից, վախճ. 1939 թ. ապրիլի 10-ին, Վենետիկում:

«Բազմավեպ», 1939, № 3-5 («Հանգիստ հոգվո Հովսեփ վարդապետ Մարգարյանի»):

Ապրիլի 23. Թուրքական կառավարության հայտարարությունը Պոլսի հայկական, հունական, կաթոլիկ պատրիարքներին և հրեական մեծ Ռաբբիին, ոչ մահմեդական օսմանյան հպատակներին բանակ գորակոչելու մասին:

Մինչև սույն որոշումը, Թուրքիայում ապրող ոչ մահմեդական հպատակները պաշտոնապես ազատված էին զինվորական ծառայությունից, որի համար վճարում էին «Բեդել ասկերի» և «Ճեզիրե» կոչվող հարկերը:

Ապրիլի 29. Շուշիում (Լեռնային Ղարաբաղ) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, հրապարակախոս, արձակագիր, թարգմանիչ (ֆրանսերենից և ռուսերենից՝ հայերեն), խմբագիր Համբարձում Աստվածատուրի Առաքելյանը: Վախճ. 1918 թ. հուլիսի 6-ին, Թիֆլիսում:

1910 թ. Թիֆլիսում հիմնադրել և մինչև 1913 թ. խմբագրել է «Արոր» գրական-գիտական ամսագիրը: 1913 թ. հոկտեմբերից մինչև մահը խմբագրել է «Մշակ» օրաթերթը: Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Շահրիար» կեղծանունով:

«Մշակ», 1918, № 131 («Համբարձում Առաքելյան»), № 132 («Համբարձում Առաքելյան»):

Մայիս. «Արփի արարատյանը» (№ 11) գրաբար հրատարակում է Մարուգե դպիր Պողոսյանի «Ուխտամասիրիդ խնդալ ի տէր», Գրիգոր Միրզայանցի «Քաջուսումն եղբորդ ողջոյն սիրաշատ» և «Գարուն» բանաստեղծությունները (վերջինը՝ անստորագիր):

Առաջին բանաստեղծության՝ տողերի առաջին տառերը ձևացնում են «Գրիգոր ծաղիկ շնորհագեղ, քաջ վարժապետ իմաստագեղ, այս նորընծայ բանք են ցքեզ, սիրովդ քոյին ենս աղէկեզ» իմաստը, իսկ երկրորդը՝ «Տնկոյն ընտիր վսեմաբոյս, վեհ Մարուգե շնորհալոյս, զայս փանաքի փարահ թփոյս, ընկալ գոլով ոչ բժախոյզ» իմաստը:

Մայիսի 5. Վիեննայում վախճանվեց բառարանագիր, կրոնական-մշակութային գործիչ Արիստակես Ազարյանը: Ծնվ. 1782 թ. հուլիսի 28-ին Պոլսում: Մխիթարյան միաբանության անդամ էր 1803 թ.: Վիեննայի Մխիթարյանների արքահայր (II-ը) 1826 թ. ապրիլի 19-ից:

Հուշարձան (Գրական ժողովածու), Վիեննա, 1911, էջ 9-13:

Մայիսի 11. Պոլսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, գրող, գրական քննադատ, բառարանագիր Միհրան Հովհաննիսյանը (Փափագյան): Վախճ. 1925 թ. նոյեմբերի 20-ին, իր ծննդավայրում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1910, էջ 251-252, 1927, էջ 619-620: Զվարթնոց տարեգիրք, Պոլիս, 1931, էջ 81-84: «Հայաստանի կոչնակ», 1926, № 4 («Հովհաննես Միհրան»):

Մայիս. «Մասյաց աղավնին» (№ 5) արևմտահայերեն հրատարակում է Գաբրիել Այվազովսկու «Մուրատյան վարժարանին շփոթությանցը վրա մի քանի խոսք» հոդվածը: Ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակված է նաև Բարբիե դյու Բոքսժի «Առաջարկություն հռովմեական հայ ժողովրդին գաղթական տանելու ի Ճեզաիր» հոդվածը: Ավարտ՝ № 8 (օգոստոս):

Այվազովսկու հոդվածին հաջորդում է Արսեն Բագրատունու «Ի բարեմաղթութիւն Հնդկային ճանապարհի Սարգիս վարդապետի Թեոդորեան, խրախոյս» գրաբար բանաստեղծությունը:

Հունիսի 9. Պոլսում վախճանվեց կրթական-մշակութային գործիչ, տրամաբան Ֆիզիկա Պողոսը (Պողոս Սիմոնի Մելիքշահյան): Ծնվ: 1788 թ.:

Ֆիզիկա Պողոս, Տրամաբանութիւն ի պէտս դպրոցականաց..., Պոլիս, 1876, 88 էջ: **Զարդարյան Վ.,** Հիշատակարան, հ. Բ, Կահիրե, 1933, էջ 59-68: «Գիտություն և տեխնիկա», 1976, № 12 («Ֆիզիկա Պողոս»):

Հունիս. «Արվի արարատյանը» (№ 12) գրաբար հրատարակում է Գրիգոր Միրզայանցի «Բանաստեղծութիւն (պատասխանի գրույն պ. Յարութեան Քրքաղաճցոյ)» ստեղծագործությունը: Բանաստեղծության տողերի առաջին տառերը ձևացնում են «Յարութիւն սատանայ» իմաստը:

Հունիս. Պոլսում Մկրտիչ Խրիմյանի խմբագրությամբ, արևմտահայերեն (որոշ հոդվածներ և առաջնորդողներ տպագրվում էին գրաբար) սկսում է հրատարակվել «Արծվի Վասպուրական, թռուցյալ հայրենասեր թևք Արծրունի գահեն ի Վանտոսպ» ամսագիրը: 1858 թ. հունվարից ամսագիրն սկսում է հրատարակվել Վարագում (ըստ այդմ վերանվանվում է «Արծվի Վասպուրական, թռուցյալ հայրենասեր թևք Արծրունի մենաստանեն Վարագա») և որոշ ընդհատումներով շարունակում է իր գոյությունը մինչև 1864 թ. սեպտեմբեր:

Հունիսի 13. «Եվրոպան» (№ 25) արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Աննա կամ թշվառության մեջ կրոնքի գորությունը» վիպակը: Ավարտ՝ № 35 (օգոստոսի 22):

Հունիս. «Արծվի Վասպուրականը» (№ 1) արևմտահայերեն հրատարակում է «Գրաբառ և աշխարհաբառ լեզվին վրա» հոդվածը և գրաբար՝ «Թոբի արծուիդ իմ» բանաստեղծությունը:

Հուլիս. Փարիզում, Ստեփան Ոսկանյանի խմբագրությամբ, արևմտահայերեն սկսում է հրատարակվել «Արևելք» կիսամյա հանդեսը: 1856 թ. փետրվարին, 14 համար հրատարակելուց հետո, «Արևելքը» դադարում է:

Հուլիսի առաջին կես. «Արևելքը» (№1), Ստեփան Ոսկանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ֆելիցիտե Լամրնեի «Արի զինվոր» և «Վտարանդի» բանաստեղծությունները: Սկզբում տրված է Լամրնեի գրական-հասարակական գործունեության հակիրճ բնութագիրը: Սկսում է հրատարակվել նաև Դուրայի «Ուրիկա» վեպը: Ավարտ՝ № 6 (սեպտեմբերի երկրորդ կես):

Հուլիսի 4. «Եվրոպան» (№ 28) արևմտահայերեն հրատարակում է «Սևաստոպոլի առջև զիշեր մը» բանաստեղծությունը:

Հուլիս. «Արծվի Վասպուրականը» (№ 1) արևմտահայերեն հրատարակում է «Ազգային դպրոցաց անմիակերպ ընթացքին վրա» հոդվածը:

Հուլիսի առաջին կես. «Բազմավեպը» (№ 13) հրատարակում է Վարդան Այգեկցու «Առիւծն և աղուէն» առակը:

Հետագայում Այգեկցու առակները հրատարակվել են հետևյալ հաջորդականությամբ. «Փայտահարն եւ ծառ» (№ 18, սեպտեմբերի երկրորդ կես): «Առիւծն, աղուէն եւ էշն» (№ 22, նոյեմբերի երկրորդ կես): «Ագռան եւ ձագք իւր» (1856 թ. № 3, փետրվարի առաջին կես):

Հուլիսի երկրորդ կես. «Արևելքը» (№2) արևմտահայերեն հրատարակում է Ստեփան Ոսկանյանի «Հայր Ագուլիկ» պատմվածքը և նույնի՝ «Ժերար դե Ներվալ» գրականագիտական հոդվածը:

Հուլիս. «Մասյաց աղավնին» (№ 7) արևմտահայերեն հրատարակում է «Պարոն Գևորգ Ախվերդյան. – ազգային ռամկական երգ Սայաթ-Նովա բանաստեղծին» ուսումնասիրությունը: Ավարտ՝ 1856 թ. № 7 (հուլիս): Վերջում, ֆրանսերեն և արևմտահայերեն համատեղ տեքստերով, հրատարակված է Սայաթ-Նովայի «Արի ինձ անգաճ կալ» բանաստեղծությունը: Ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակված է նաև Ժան-Ժակ Բարտելեմիի «Առ վեհափառ Վիկտորիա թագուհի» բանաստեղծությունը:

Օգոստոս. «Արծվի Վասպուրականը» (№ 3) գրաբար հրատարակում է «Արձանական դիմառնություն ի տապան սրբոյ Եղիշէի» և «Դրուատ չափական, առ հանգուցեալ Վարդպատրիկ սեպուհին» բանաստեղծությունները:

Օգոստոս. «Մասյաց աղավնին» (№ 8), Նիկողայոս Զորայանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Առաջ գնացեքները» հոդվածը:

Օգոստոս. Փարիզում, Գաբրիել Այվազովսկու տեսչությամբ, Ամբրոսիոս և Խորեն Գալֆայանների, Սարգիս Թեոդորյանի ուսուցչությամբ, իր գոյությունն է սկսում «Արևելյան բազմալեզու վարժարանը»: Սկզբում ունեին տասներկու աշակերտ (ծաղկուն ժամանակ՝ 40), վարժարանը միդասյա էր (հետագայում՝ երեքդասյա) և ավանդվում էին հայոց պատմություն, կրոն, հայերեն, ֆրանսերեն, թուրքերեն և ռուսերեն լեզուներ: «Արևելյան բազմալեզու վարժարանը» հետագայում վերստացավ «Հայկազյան վարժարան» անունը և շարունակեց իր գոյությունը մինչև 1859 թ. նոյեմբերը:

Թեոդորյան Մ., Պատմություն Մուրատեան և Հայկազեան վարժարանաց, հ. 4, Փարիզ, էջ 1-263:
Օրմանյան Մ., Ազգապատում, մասն երրորդ, Երուսաղեմ, 1927, էջ 2682, 2695, 2700: **Պողոսյան Ե.**, Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հ. Ա, Վիեննա, 1957, էջ 679-681:

Օգոստոսի 7. Զմյուռնիայում վախճանվեց լրագրող, բանաստեղծ, արձակագիր Հովհաննես Շահինյանը: Ծնվ. Մարմետ գյուղում:

«Յ.Շ.», «Յ.Շ.Վ.», «Յ.Շ.Վ.Ս.» (իմա՝ Յոհաննէս Շահինեան Վանեցի Մարմետցի. – Ս.Շ.) ստորագրություններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Արշալույս արարատյան», 1855, № 500 («Մահ»): № 502 («Ի ցաւալի մահ պատուելի Յոհաննէս վարժապետի Շահինեան...»): «Արծվի Վասպուրականի», 1855, № 3 («Արծուին թափառեալ ի Զմյուռին, ողբայ ընդ մահ Յոհաննու վարժապետի Շահինեան»):

Օգոստոսի 20. Կուտինայում (նաև՝ Քյոթահիա, Թուրքիա) ծնվեց եկեղեցական-կրթական գործիչ, լրագրող Պողոս Թերզյանը (Պողոս Պետրոս ԺԳ Թերզյան, կաթողիկոս-պատրիարք տանն Կիլիկիոյ): Վախճ. 1931 թ. դեկտեմբերի 15-ին, Հռոմում:

«Հանդես ամսօրյա», 1910, № 7 («Պողոս Պետրոս ԺԳ Թերզյան...»): 1931, № 12 («Պողոս Պետրոս ԺԳ Թերզյան...»):

Օգոստոսի առաջին կես. «Արևելքը» (№ 3) արևմտահայերեն հրատարակում է Հարմայի (իմա՝ Ստեփան Ոսկանյան – Ս.Շ.)՝ ֆրանսիացի գրող և հրապարակախոս Էմիլ Դեշանելի ստեղծագործությանը նվիրված հոդվածը «Գրագիտական» խորագրով: Գրախոսված է նաև Աստվածատուր Ջունդի «Մուրատյան վարժարան» գրքույկը:

Օգոստոսի առաջին կես. «Բազմավեպը» (№ 15), Խորեն Գալֆայանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալֆոնսու Լամարթինի «Առանձնություն» բանաստեղծությունը:

Օգոստոսի երկրորդ կես. «Արևելքը» (№ 4) արևմտահայերեն հրատարակում է Ստեփան Ոսկանյանի «Վենետիկի վանքին նենգությունը» և «Գիշերադեմ միաբանություն մը» հրապարակախոսական հոդվածները, Հարմայի (իմա՝ Ստեփան Ոսկանյան)՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն չափածո թարգմանությամբ «Թշվառության հառաչը» և Տիգրան Փեշտիմալճյանի «Կոռնել» հոդվածը:

Մեպտեմբերի 1. «Մասիսը» (№ 188), Մատթեոս Մամուռյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Վոլտերի «Ժանո և Գոլեն» պատմվածքը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Մեպտեմբեր. «Արփի արարատյանը» (№ 9), Գրիգոր Չիլինկիրյանի՝ իտալերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, «Զվարճալիք» խորագրի ներքո, հրատարակում է վեց մանրպատում («Աշխարհս բանի օրեր կլորածն է, իսկ կիրակի օրեր քառակուսի», «Արժանավոր վարձատրություն», «Անձրևը մարդը կշփոթե», «Անձնանվեր բարերար», «Գեշ հայելի» և «Խուլ մը դեղ»):

Մեպտեմբերի 5. «Եվրոպան» (№ 5) արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Մեծին Պետրոսի վարքը» վիպակը: Ավարտ՝ 1856 թ. № 34 (օգոստոսի 11):

Մեպտեմբեր. «Մասյաց աղավնին» (№ 9), ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ և ֆրանսերեն-գրաբար զուգահեռ տեքստերով, հրատարակում է

Էդմոն Պերոնի «Կուինդոսի եգերքը երեկոյան զբոսանք» և Ալֆոնսու Լամարթինի «Յորդորակ հաշտից» բանաստեղծությունները:

Սեպտեմբերի առաջին կես. Բազմավեպը» (№ 17), Էդուարդ Հյուրմյուզյանի՝ լատիներեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Վիրգիլիոսի «Էնեականից» մի հատված (հրատարակված է 8-րդ գրքի 555-702 տողերը):

Սեպտեմբերի 20. Վերին Ագուլիսում (այժմ՝ Նախիջևանի ԻՍՍՀ Օրդուբադի շրջան) ծնվեց լրագրող, հրապարակախոս, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն), խմբագիր Ալեքսանդր Հայրապետի Քալանթարը: Վախճ. 1913 թ. հոկտեմբերի 20-ին, Թիֆլիսում:

1893 թ. մինչև իր մահը Թիֆլիսում խմբագրել է «Մշակ» օրաթերթը: Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Սիրող» և «Վրձին» կեղծանուններով:

«Հանդես ամսօրյա», 1909, № 12 («Ալեքսանդր Քալանթարի 30-ամյա հոբելյանը»), «Մշակ», 1913, № 234 (Ամբողջ համարը), № 235 (Ամբողջ համարը):

Սեպտեմբերի երկրորդ կես. «Արևելքը» (№ 6) արևմտահայերեն հրատարակում է Հարմայի (իմա՝ Ստեփան Ոսկանյան) «Աղեքսանդր Դյումա տղուն թատրերգությունը» հոդվածը: Նրա «Կես աշխարհ» թատրերգության վերլուծության հենքի վրա բացահայտված է թատերական արվեստի դերն ու նշանակությունը ժողովրդի կյանքում:

Հոկտեմբերի 10. Շամախիում (Ադրբեջանական ՍՍՀ) ծնվեց մշակութային գործիչ, լրագրող (հայերեն և ռուսերեն լեզուներով), թարգմանիչ (անգլերենից, ֆրանսերենից, գերմաներենից՝ հայերեն) Ներսես Հարությունի Աբելյանը: Վախճ. 1933 թ. դեկտեմբերի 15-ին, Թբիլիսիում:

«Մոսկովյան» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Коммунист», 1966, № 245 («Нерсес Абемян (Дорогие нам имена)»): **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 11:

Հոկտեմբերի առաջին կես. «Արևելքը» (№ 7) արևմտահայերեն հրատարակում է Ստեփան Ոսկանյանի «Լաշամպոտիին առակները» հոդվածը: Վերջում հոդվածագրի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, տրված են նրա «Անանկ է նե՝ հիմա պարե», «Փայտ ու ածուխ», «Ծաղիկ ու ամպ», «Կաթիլ ջրո», «Գառնուկ և թուփ» առակները:

Հոկտեմբեր. «Արծվի Վասպուրականը» (№ 5) գրաքար հրատարակում է «Ողբ ի վերայ մեծի քաղաքին Սոյ, հանեալ ի հին ձեռագիր յիշատակարանաց» բանաստեղծությունը:

Հոկտեմբերի երկրորդ կես. «Բազմավեպը» (№ 20), Խորեն Գալֆայանի՝ իտալերեն բնագրից կատարած գրաքար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Վիկտոր Ալֆիերիի «Սավուզ» ողբերգությունը: Ավարտ՝ «Բազմավեպ» № 23 (դեկտեմբերի առաջին կես):

Հոկտեմբեր. «Արփի արարատյանը» (№ 4), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Երգ գաղղիացի զինվորին, որ դառնա ի հայրենիս» բանաստեղծությունը, և Գրիգոր Զիլինկիրյանի՝ իտալերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, «Զվարճալիք» խորագրի ներքո՝ «Ծաղրածուի մը հանպատրաստից պատասխանը» և «Իմաստասիրի մը անմիտ հետաքրքրության դժբախտ հետևանքը» մանրապատումները:

Հոկտեմբերի երկրորդ կես. «Արևելքը» (№ 8) արևմտահայերեն հրատարակում է Հարմայի (Իմա՛. Ստեփան Ոսկանյան) «Մուրադյան ոգի» բանաստեղծությունը և Վահեի (Իմա՛. Ստեփան Ոսկանյան) «Հյուրմուգյան տետրակը» գրախոսականը: Նույնի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակվել Ժան Պիեր Տլորիանի «Ժանո և Կոլեն» կատակերգությունը: Ավարտ՝ «Արևելք» № 10 (նոյեմբերի երկրորդ կես):

Հոկտեմբերի 17. «Եվրոպան» (№ 43) արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Ազնվական վրեժխնդրություն» պատմվածքը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Նոյեմբեր. «Արծվի Վասպուրականը» (№ 6) գրաքար հրատարակում է Մարիամ Հովհաննեսյան Յաղուպյանցի «Դրուատ գովեստից առ անարատ յղութիւն ամենօրինեալ կուսին Մարիամու» բանաստեղծությունը, որի տողերի առաջին տառերը կազմում են հայկակ այբուբենը:

Նոյեմբերի 10. «Մասիսը» (№ 198), Մկրտիչ Պ. Տատյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Հեր անուն կարծեցյալ հայու մը տեսնիլը» պատմվածքը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Նոյեմբերի առաջին կես. «Բազմավեպը» (№ 21), Ղևոնդ Ալիշանի՝ անգլերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է ՈԻ. Բրայանդի «Նոյեմբեր» բանաստեղծությունը:

Նոյեմբերի առաջին կես. «Արևելքը» (№ 9) արևմտահայերեն հրատարակում է Հարմայի (Իմա՛. Ստեփան Ոսկանյան) «Հեժեզիբ Մորոյին գիրքը» գրախոսականը (գրախոսված է նրա բանաստեղծությունների «Միոգոտիս» խորագիրը կրող ֆրանսերեն ժողովածուն): Վերջում գրախոսի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Մորոյի «Հիվանդատունի հիշատակ մը» բանաստեղծությունը:

Նոյեմբերի երկրորդ կես. «Բազմավեպը» (№ 22) արևմտահայերեն հրատարակում է «Բուլալո բանաստեղծը» հոդվածը:

Նոյեմբերի երկրորդ կես. «Արևելքը» (№ 10) արևմտահայերեն հրատարակում է Հարմայի (Իմա՛. Ստեփան Ոսկանյան) «Դատական» գրաքննադատական հոդվածը և ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ՝ «Ամիսի կամ սիրո նահատակ օրիորդ մը» պատմվածքը:

Դեկտեմբեր. «Արծվի Վասպուրականը» (№ 7) գրաբար հրատարակում է Մարգար Թոխմախյան Վանեցու «Չափաբերական բանք» պոեմը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Դեկտեմբերի առաջին կես. «Արևելքը» (№ 11) Ստեփան Ոսկանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ֆրանսուա-Ռընե Շատոբրիանի «Հետին ապենսերաժ» վեպը: Շարունակվում է մինչև «Արևելք», 1856 թ. № 14-ը (հունվարի երկրորդ կես) և մնում է անավարտ: Թարգմանության սկզբում տրված է Շատոբրիանի կյանքի ու գործունեության համառոտ բնութագիրը: Հ. Փիրիմյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակված է նաև Շատոբրիանի «Սեր հայրենյաց» ակնարկը և տիկին Ժանլիսի (Ստեֆանիա-Ֆելիցիտե Դուկրե) «Ժանլիս տիկին ու Ժ.Ժ. Ռուստ» ակնարկը:

Դեկտեմբեր. «Մասյաց աղավնին» (№ 12), Նիկողայոս Զորայանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Հաջողություն գտնելու գաղտնիքը» հոդվածը և Կարապետ Գարագաշյանի «Ի վաղամեռիկ մահ

քաջատոհմիկ պայազատի Յովսեփայ Ալլահվերդեան, տաղ եղերերգական» գրաբար քանաստեղծությունը:

Դեկտեմբերի 15. «Մասիսը» (№ 203) գրաբար հրատարակում է «Ի մահ Տիզեան Կարապետի» եղերերգությունը (հեղ. Թ.Ե.):

Դեկտեմբերի երկրորդ կես. «Արևելքը» (№ 12) արևմտահայերեն հրատարակում է Ստեփան Ոսկանյանի՝ Ադամ Միցկևիչին նվիրված «Միքևիչ քանահյուսը» հոդվածը և Մ. Վ.-ի (Իմա՛. Ստեփան Ոսկանյան) «Պ. Ժյուլ Սիմոնին գիրքը» գրախոսականը (գրախոսված է վերջինիս «Իրավունք» ֆրանսերեն աշխատությունը. Փարիզ, 1854):

Դեկտեմբերի 30. «Արշալույս արարատյանը» (№ 510) գրաբար հրատարակում է Սմբատ Կարապետ Պապյանի «Շնորհաւորութիւն նորոյ տարւոյ առ արշալոյսն» քանաստեղծությունը: Նույնի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակվել «Հենրիկոս Իշենֆելյան, կամ ինչպես այս պատանին աստուծո վրա ծանոթություն ստացավ» վիպակը: Ավարտ՝ 1856 թ. ապրիլի 6 (№ 517):

-Պոլսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, տպարանատեր, լրագրող, խմբագիր Արամ Աշֆյանը: Վախճ. 1909 թ. իր ծննդավայրում:

1882 թ. Պոլսում, Սիմոն Գափամաճյանի հետ մեկտեղ, հիմնել և մեկ տարի խմբագրել է «Ընտանիք» կիսամյա հանդեսը: 1885-1888 թթ. խմբագրել է «Լապտեր Դիոգինյան» գավեշտական շաբաթաթերթը:

Պոտոլյան Մ., Հայ հանրագիտակ, 1938, Բուխարեստ, էջ 186: **Թեոդիկ**, Տիպ ու տառ, Պոլիս, 1912, էջ 108:

-Պոլսում ծնվեց քանասեր, լրագրող, գրաբարագետ (մասնագիտությամբ՝ բժիշկ), քանաստեղծ Տիրան Գափամաճյանը: Վախճ. 1926 թ. հունիսի 23-ին, իր ծննդավայրում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1927, էջ 627: Ընդարձակ տարեցույց, Պոլիս, 1929, էջ 145-147:

-Պոլսում ծնվեց մշակութային գործիչ, լրագրող Տիրան Գևորգի Փափազյանը: Վախճ. 1875 թ. սեպտեմբերի 25-ին, իր ծննդավայրում:

«Մասիս», 1875, № 1738 («Մահագույժ»):

-Պոլսում ծնվեց գրական-մշակութային գործիչ, լեզվագետ (թուրքերեն և արաբերեն լեզուներ) Միհրան Աբիկի Աբիկյանը: Վախճ. 1938 թ. դեկտեմբերի 15-ին, իր ծննդավայրում:

«Նոր լուր», 1938, № 6425 («Մահ հանրածանոթ թրքագետ-հեղինակ Միհրան Աբիկյանի»): № 6426 («Տիար Միհրան Աբիկյան»):

-Պոլսում ծնվեց նովելիստ, լրագրող, գրականագետ Տիգրան Փիլիպոսի Արփիարյանը: Վախճ. 1915 թ. դեկտեմբերի 15-ին:

«Գամեր» (երբեմն նաև՝ «Տիգրան») կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում: 1901-1902 թթ. Կահիրեում խմբագրել է «Փարոս» եռօրյա լրագիրը: 1908-ին Պոլսում՝ «Սուրհանդակ» թերթը:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1921, էջ 322: **Մեծարենց Մ.**, Երկերի ժողովածու, Երևան, 1956, էջ 343: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 161:

-Պոլսում ծնվեց քանդակագործ, նկարիչ, հնագետ, լրագրող Երվանդ Ոսկանը: Վախճ. հունիսի 10-ին, իր ծննդավայրում:

Ընդարձակ տարեցույց, 1932, էջ 104-405: «Սովետական արվեստ» 1965, № 2 («Երվանդ Ոսկան»):

-Աշտարակում ծնվեց մշակութային գործիչ, լրագրող, բանաստեղծ Եփրեմ Սուրբիասյանը: Էջմիածնի միաբանության անդամ էր 1876 թ. օգոստոսի 5-ից, վախճ. 1915 թ. օգոստոսի 4-ին, Էջմիածնում:

«Սեր» և «Սահրաթ» ստորագրություններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Արարատ», 1915, № 7-8 («Մայր աթոռ. Եփրեմ եպիսկոպոս Սուրբիասյան»):

-Ագուլիսում (Նախիջևանի շրջան) ծնվեց լեզվաբան, բանասեր, լրագրող Սարգիս Սարգսյանը: Վախճ. 1892 թ. Մոսկվայում:

«Լրաբեր հասարակական գիտությունների», № 6 («Եղիշե Մաղաթյանի և Գրիգոր Խալաթյանցի նամակագրությունից»):

-Ակնում ծնվեց լրագրող, երգիծաբան, խմբագիր Մելքոն Գալանտերը (Գալանտերյան): Վախճ. 1907 թ. հունիսի 20-ին, Պոլսում:

1881 թ. Պոլսում հիմնադրել և խմբագրել է «Վայելք» հանդեսը, իսկ 1886-1887 թթ.՝ «Եվա» պարբերականը:

Ընդարձակ օրացույց Ս. Փրկյան հիվանդանոցի, Պոլիս, 1908, էջ 467-468:

-Կամարակապ գյուղում (Ակնի շրջան) ծնվեց գրական-մշակութային գործիչ, լրագրող, լեզվագետ Նշան Թորոսյանը: Վախճ. 1918 թ. մայիսի 14-ին, Պոլսում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1921, էջ 324: **Ազատյան Թ.**, Ակն և ակնեցիք, Պոլիս, 1943, էջ 103-104:

-Վանում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, արձակագիր Սեդրակ Սարգսի Տեվկանցը (Տեր-Սարգսյանց): Վախճ. 1941 թ. մայիսին, Նիցցայում (Հար. Ֆրանսիա):

«Հայաստանի կոչնակ», 1941, № 20 («Սեդրակ Տեվկանց»):

-Վանում ծնվեց գրականագետ-բանասեր, արձակագիր Խաչատուր Լևոնյանը: Վախճ. 1915 թ. դեկտեմբերի 15-ին, Երևանում:

«Ծիլվան», «Լ. Տոսպունի», «Գագիկ», «Քննադատ», «Խոսնակ», «Դիտակ», «Շահ-Սվար», «Քրոնիկոս», «Ծերուկ» և այլ կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Աճեմյան Հ., Թուրքահայ աղետը, Էջմիածին, 1919, էջ 35-36: **Թեոդիկ**, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1921, էջ 322: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Բ, Երևան, էջ 28-29:

-Վանում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, պատմաբան-բանասեր Հարություն Ջանգուլյանը: Եղեռնամահ՝ 1915 թ.:

Թեոդիկ, Հուշարձան 1915 թ. ապրիլի 24-ի, Ալեքսանդրիա, 1939, էջ 61:

-Նոր-Ջուղայում (Պարսկաստան) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, բանաստեղծ, արձակագիր Գևորգ Կարապետի Ջորաբյանը (նաև՝ Ջոհրաբյան): Վախճ. 1926 թ. դեկտեմբերի 13-ին:

«Հայաստանի կոչնակ», 1927, № 48 («Գևորգ Կ. Ջոհրաբյան»): **Պոտուրյան Մ.**, Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 800-801:

-Շապին-Գարահիսարում (Հյուսիսարևելյան Թուրքիա) ծնվեց մշակութային գործիչ, լրագրող Վոամշապուհ (աշխարհական անվամբ՝ Նազարեթ) Քիպարյանը: Վախճ. 1940 թ. հունվարի 3-ին, Փարիզում:

Գևորգյան Կ., Ամենուն տարեգիրքը, Բեյրութ, 1959, էջ 305-306:

-Այնթապում (Հարավ. Թուրքիա) ծնվեց լրագրող (հայերեն և թուրքերեն լեզուներով), խմբագիր Հովհաննես Գրիգորի Գրիգորյանը: Վախճ. 1942 թ. դեկտեմբերի 14-ին, Վաշինգտոնում (ԱՄՆ):

1902-1910 թթ. Պոլսում խմբագրել է «Ավետաբեր» շաբաթաթերթը: 1910 թ. Պոլսում հիմնել և մինչև 1915 թ. խմբագրել է «Բահնումա» («Ուղեցույց») հայաստանորբերեն շաբաթաթերթը: Այն շարունակել է վերահրատարակել 1921-1930 թթ. Նյու-Յորքում:

«Հայաստանի կոչնակ», 1930, № 7 («Պրոֆ. Հովհ. Գրիգորյանի ծննդյան 75-ամյակը»), 1942 № 51 («Պրոֆ. Հովհ. Գրիգորյանի մահը»), 1943, № 2 («Պրոֆ. Հովհ. Գրիգորյան»), № 5 («Պրոֆ. Հովհ. Գրիգորյան»):

-Լերրաք քաղաքում (Հարավային Գերմանիա) ծնվեց գերմանացի հայագետ, թարգմանիչ (հայերենից՝ գերմաներեն) Ադոլֆ Բաումգարտները (Adolf Baumgartner):

Զարբհանայան Գ., Ուսումնասիրությունք հայ լեզվի և մատենագրության հարևանուսու, Վենետիկ, 1895, էջ 218-321:

-1855 (?) Պոլսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, հուշագիր, բանաստեղծ Գասպար Չերազը: Վախճ. 1928 թ.,

Ազատյան Թ., Ակն և ակնեցիք, Պոլիս, 1943, էջ 79-80:

-1855 (?) Պոլսում ծնվեց թարգմանիչ (գերմաներենից՝ հայերեն), լրագրող, խմբագիր Աթարքի Սանտալճյանը: Վախճ. 1926 թ. հունվարի 18-ին, իր ծննդավայրում:

«Հայաստանի կոչնակ», 1926, № 10 («Գաղութներ»): **Թեոդիկ**, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1927, էջ 621:

-1855 (?) Զմյուռնիայում ծնվեց լրագրող, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Գևորգ Խորասանճյանը: Վախճ. 1910 թ. հոկտեմբերի 7-ին:

«Բյուզանդիոն», 1910, № 4255 («Մահ Գևորգ Խորասանճյանի»): **Թեոդիկ**, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1911, էջ 379:

-1855 (?) Պրուն-Գըշլա գյուղում (Կեսարիայի շրջան, Կենտր. Թուրքիա) ծնվեց դպրոցական-մշակութային գործիչ, լրագրող Մինաս Պետրոսյանը: Եղեռնամահ՝ 1915 թ. հունիսի 8-ին, Կեսարիայի շրջանում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Ասուպ», «Պիտար» կեղծանուններով:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, հ. Ա, Կահիրե, 1937, էջ 1229:

-1855 (?) Կեսարիայում ծնվեց հրապարակախոս, գրական կյանքի տեսաբան, արձակագիր, խմբագիր Ս. Սապահգյուլյանը (Պետրոս Կյուրեղյան): Վախճ. 1928 թ. ապրիլի 28-ին, Նյու-Յորքում:

1898 թ. Վառնայում (Բուլղարիա) հիմնադրել և հրատարակել է «Աշխարհ» շաբաթաթերթը: 1903 թ. Բոստոնում հիմնադրել և մինչև 1917 (?) թ. խմբագրել է «Երիտասարդ Հայաստան» եռօրյա թերթը: 1919 թ. Չիկագոյում հիմնել և մինչև 1920 թ. խմբագրել է «Կռան» շաբաթաթերթը:

«Հայաստանի կոչնակ», 1928, № 18 («Ս. Սապահգուլյան մեռած»): **Մկրտիչ Աղավունի**, Միասնք և այցելուք հայ Երուսաղեմի, Երուսաղեմ, 1929, էջ 533:

-1855 (?) Կեսարիայում (Կենտր. Թուրքիա) ծնվեց կրթական գործիչ, լրագրող Հակոբ Չամուրյանը: Եղեռնամահ՝ 1915 թ.:

«Արմեն» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում: «1886-ի «Մասիսի» մեջ «Վտարանդին» կկասկածիմ թե ինքն է» (Ա. Ալպոյաճյան):

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, հ. Ա, Կահիրե, 1937, էջ 1226-1227:

-1855 (?) Զեյթունում (Հար. Թուրքիա) ծնվեց գրական-մշակութային գործիչ, պատմաբան-բանասեր, խմբագիր Վարդավառ Գարանֆիլյանը: Վախճ. 1925 թ. Հալեպում:

1922 թ. Հալեպում հիմնադրել և մինչև 1925 թ. խմբագրել է «Սուրիական մամուլ» օրաթերթը: Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Վարդ-Մեխակ» կեղծանուններով:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1926, էջ 727: **Պոտուրյան Ս.**, Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 480:

-1855 (?) Սարգամիշ գյուղում (Բալուի շրջ. Արևել. Թուրքիա) ծնվեց կրթական-մշակութային և եկեղեցական գործիչ, լրագրող Կ. Կյուլյանը: Վախճ. 1920 թ. սեպտեմբերի 8-ին, Նյու-Յորքում:

«Կոչնակ Հայաստանի», 1920, № 39 («Պատվելի Կ. Կյուլյան»):

-1855 (?) Ալեքսանդրապոլում ծնվեց գրական-մշակութային գործիչ, լրագրող, խմբագիր Եղիշե Թոփչյանը (Երվանդ Թամարյան): Վախճ. 1909 թ. հոկտեմբերի 13-ին, Հազրան գյուղում (Բաբերդի մոտ, Արևել. Թուրքիա):

1904 թ. Թիֆլիսում հիմնադրել և մինչև 1905 թ. խմբագրել է «Լույս» պատկերազարդ տարեգիրքը:

«Մշակ», 1909, № 228 («Ներքին լուրեր»): № 229 («Ե. Թոփչյանի սպանության առթիվ»): № 231 («Ներքին լուրեր»):

-1855 (?) Շումենում (Բուլղարիա) ծնվեց լրագրող, բանաստեղծ Տիգրան Աճեմյանը: Վախճ.

1927 թ. հունիսի 11-ին, Վառնայում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1928, էջ 650-651:

-1855 (?) ծնվեց մշակութային գործիչ, լրագրող, արձակագիր Եղիազար Աղզարենցը: Վախճ.

1928 թ. նոյեմբերի 29-ին, Նյու-Յորքում:

«Հայաստանի կոչնակ», 1928, № 51 («Ե.Տ. Աղզարենցի մահը»): **Պոտուրյան Մ.**, Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 104:

-Ծնվեց ֆրանսիացի հայագետ, թարգմանիչ (հայերենից՝ ֆրանսերեն) Հովսեփ-Անդրեաս

Գատտերիասը: Վախճ. 1883 թ. մայիսի 28-ին:

Զարբհանայան Գ., Ուսումնասիրությունք հայ լեզվի և մատենագրության հարևմուտս, Վենետիկ, 1895, էջ 237-238:

-Վենետիկում գրաբար հրատարակվում է Ղևոնդ Ալիշանի «Տեղեկագիր հայոց մեծաց» աշ-

խատությունը: 105 էջ:

Նույնը ֆրանսերեն, Էդուարդ Դյուլյորիեի թարգմանությամբ, «Ժուռնալ Ազիատիկ», 1863, № 3:

-Վենետիկում արևմտահայերեն հրատարակվում է Մանվել Քաջունու «Հնախոսություն

Հայաստանի ի պետս դպրոցաց» աշխատությունը: 303 էջ:

-Վենետիկում, Էդուարդ Հյուրմյուզյանի՝ լատիներեն բնագրից կատարած գրաբար չափածո

թարգմանությամբ, հրատարակվում է Փեդրոսի (իմա՝ Ֆեդրա) «Առակք» խորագիրը կրող ժողովածուն: 111 էջ:

Զետեղված են Ֆեդրայի ինքնուրույն կամ նրա վերագրվող 222 առակները:

-Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Հարություն Յագուրճյանի

«Ուաշինկտոն, Հյուսիսային Ամերիկայի միացյալ տերությանց գահերեց» աշխատությունը («Կրթական և զբոսալի տետրակներ», հատ. ԺԲ): 54 էջ:

-Վիեննայում, արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Շալիցբերկի նավա-

կոծյալները կամ աստուծո վստահելուն ու գործունյա կենաց օգուտը» վիպակը: 246 էջ:

-Մոսկվայում, Ոսկան Հովհաննիսյանցի (Երևանցի) ջանքերով ու նախաձեռնությամբ, հրատարակվում է հայկական աշուղական և ազգային երգերի առաջին ժողովածուն «Նոր քնար Հայաստանի, տետրակ Ա» ընդհանուր խորագրով: 98 էջ: Ժողովածուն ունի «Զանազան երգք հանգուցեալ Աղամայ Երևանեցւոյ, Ազբար մականունելոյ» ենթավերնագիրը և զետեղված են վերջինիս քսանհինգ ստեղծագործությունները:

Հիշյալ տետրակների հրատարակությունը հետագայում ընթացել է հետևյալ հաջորդականությամբ.

«Զանազան երգք պարոն Հովհաննիսի Կարապետյան աշրգ Շիրին մականունելո» (Տետրակ Բ) Մոսկվա, 1856: 51 էջ:

«Զանազան երգք պարոն Հովհաննեսի Շահրամանյանց Նիրանի մականունելո» (Տետրակ Գ) Մոսկվա, 1856: 22 էջ:

«Զանազան երգք պարոն Պետրոսի Տեր-Հովսեփյան Մաղաթյանց Շամախեցվո, Սեյադ մականվանելո» (Տետրակ Դ) Մոսկվա, 1857: 87 էջ:

«Երկասիրությունք ազգային երգչաց» (Տետրակ Ե) Մոսկվա, 1858: 119 էջ:

«Զանազան երգք տ. Պետրոսի Տեր-Հովսեփյան Մաղաթյանց Շամախեցվո, Սեյադ մականվանելո» (Տետրակ Զ) Մոսկվա, 1859: 156 էջ:

«Երկասիրությունք ազգային երգչաց» (Տետրակ Է) Մոսկվա, 1859: 85 էջ:

-Մոսկվայում, Մսեր Մսերյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է «Յետին ժամք կենաց կայսեր Նիկողայոսի առաջնոյ» գրքուկը: 44 էջ:

-Պոլսում, Մաղաքիա-Տրդատ Մինասյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն համառոտ թարգմանությամբ, հրատարակվում է «Հենրիկոս Էշանֆել. բարոյական պատմություն» վիպակը: 94 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Նահապետ Ռուսինյանի կազմած «Տարեցույց 1855 թվականին Քրիստոսի» աշխատությունը: 180 էջ:

Գրքի կազմողի մասին հավաստում է «Մասիսը» (1855 թ. № 154), թեև դա հաստատող ոչ մի փաստ գրքի վրա չկա:

-Պոլսում, Հովհաննես Խորասանճյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն համառոտ թարգմանությամբ, հրատարակվում է «Ռոտուլֆ կամ չարություն զգաստացյալ» վեպը:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Աբել Մխիթարյանի «Ճանապարհորդություն յԱնի» աշխատությունը: 100 էջ:

-Փարիզում, Սարգիս Թեոդորյանի, Գաբրիել Այվազովսկու և Ամբրոսիոս Գալֆայանի համատեղ հեղինակությամբ, արևմտահայերեն հրատարակվում է «Հայտարարություն անցից Մուրատյան վարժարանին» աշխատությունը: 243 էջ:

-Փարիզում արևմտահայերեն հրատարակվում է Աստվածատուր Ջունդի «Մուրատյան վարժարան» գրքույկը: 91 էջ:

-Փարիզում, արևմտահայերեն տրվող բացատրություններով, հրատարակվում է Ամբրոսիոս Գալֆայանի «Առաջնորդ անգղիարեն և հայերեն զրուցատրության, հնչմամբ անգղիարենին» բառարանը: 246 էջ:

-Փարիզում, արևմտահայերեն տրվող բացատրություններով, հրատարակվում է Ամբրոսիոս Գալֆայանի «Առաջնորդ գաղղիարեն և հայերեն զրուցատրության, հնչմամբ գաղղիարենին» աշխատությունը: 260 էջ:

-Զմյուռնիայում, Տիգրան Հարություն Տետեյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Մովսեսի «Մերը բժիշկ է» կատակերգությունը: 19 էջ:

Նույնը՝ 1870 (?) և 1881 թ. (32 էջ)՝ որոշ վերամշակումներով:

-Զմյուռնիայում, Հայկ Հակոբ Տետեյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Հասկաքաղ աղջիկը» թատերախաղը: 61 էջ:

Նույնը՝ 1863 թ., որոշ կրճատումներով: 48 էջ:

-Թիֆլիսում, գրաբար և աշխարհաբար համատեղ տեքստերով, հրատարակվում է «Բարոյական խրատք և հատուածք արձակք և չափաւորք ի պէտս ընթերցանութեան մանկանց» ժողովածուն (Գիրք երկրորդ): 96 էջ:

Երրորդ գիրք՝ 1866 թ., 107 էջ:

Առաջին գրքի վերաբերյալ մանրամասնություններ չկարողացանք գտնել:

-Պետերբուրգում աշխարհաբար հրատարակվում է Գևորգ Քանանյանի, Մնացական Թիմուրյանի և Ռափայել Պատկանյանի համատեղ հեղինակություն հանդիսացող «Գամառ Քաթիպայի արձակ և չափաբերական աշխատությունները» խորագիրը կրող ժողովածվի առաջին (փորձնական) տետրը: 14 էջ: Առաջին (հիմնական) տետր՝ նույն թվականին, 16 էջ, երկրորդ տետր՝ 1856 թ., 14 էջ, երրորդ տետր՝ նույն թվականին, 32 էջ, չորրորդ տետր՝ 1857 թ. 32 էջ:

1856

Հունվարի 1. Աշտարակում ծնվեց գրականագետ-բանասեր, պատմաբան, Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1946 թ.) Երվանդ Ակիմի (Հովակիմի) Շահազիզը: Վախճ. 1951 թ. օգոստոսի 12-ին, Երևանում:

Աճառյան Հր., Երվանդ Շահազիզի երեսուն և հինգ ամյա հոբելյանի առթիվ..., Ն. Նախիջևան, 1917, 47 էջ:

Հարությունյան Շ. Հայ ժողովրդի պատմության համառոտ ժամանակագրություն (1801-1917), Երևան, 1955, էջ 108: Նույնի՝ Սովետական Հայաստանը 40 տարում (տարեգրություն), Երևան, 1960, էջ 334:

Հունվարի 10. «Մասիսը» (№ 208), ընթերցողներին ներկայացնելով ֆրանսիացի բժիշկ Կենիարի նամակը՝ ուղղված Ստեփան Ոսկանյանին (արտաստված է «Արևելք», 1855, № 10-ից, նոյեմբերի 15), դրվատում է նրա պարբերականն ու խմբագրին:

Հունվարի առաջին կես. «Արևելքը» (№ 13) արևմտահայերեն հրատարակում է Հարմայի (Իմա՛-Ստեփան Ոսկանյան) «Պ[արոն] Բոնսարին կատակերգությունը» հոդվածը: Դրամատուրգ Ֆրենսիս Բոնսարի կյանքի ու գործունեության համառոտ բնութագրությունը տալուց հետո, քննադատը վերլուծում է նրա «Պատիվ և արծաթ» կատակերգությունը:

Հունվարի առաջին կես. «Բազմավեպը» (№ 1) արևմտահայերեն հրատարակում է «Հերդեր գերմանացին» ուսումնասիրությունը: Ավարտ՝ № 3 (փետրվարի առաջին կես):

Հունվարի երկրորդ կես. «Բազմավեպը» (№ 2), Պոլսի գավառաբարբառով, հրատարակում է «Հրիտակատար» անստորագիր կատակերգությունը: Ըստ Ա. Ղազիկյանի (տե՛ս «Հայկական նոր մատենագիտություն», Վենետիկ, 1912, էջ 1061) հեղինակը Գևորգ Հյուրվյուզյանն է:

Հունվարի 21. Վաղարշապատում ծնվեց երաժիշտ-խմբավար, երգահան Մակար Գրիգորի Եկմայանը: Վախճ. 1905 թ. մարտի 6-ին, Թիֆլիսում:

Շահվերդյան Ալ., Հայ երաժշտության պատմության ակնարկներ, Երևան, 1959, էջ 308-351: **ՉԱԳԱԹ**, Երաժշտական բաժին, Մակար Եկմայանի ֆոնդ:

Հունվար. «Մասյաց աղավնին» (№1), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ժան Լաֆոնտենի «Կաղնի և եղեգն» առակը:

Հունվարի 23. «Եվրոպան» (№ 5) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Համառոտ տեսություն մը Գաղղիայի պատմության վրա, ի սկզբանե մինչև հիմա» ուսումնասիրությունը: Ավարտ՝ № 17 (ապրիլի 16):

Հունվարի 25. Ամասիայում (Հյուս. Թուրքիա) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, լրագրող, խմբագիր Հակոբ Շահվելեղյանը: Վախճ. 1931 թ. օգոստոսի 30-ին, Սոֆիայում (Բուլղարիա):

1903 թ. Ռուսչուկում (նաև՝ Ռուսե. Բուլղարիա) հիմնադրել և խմբագրել է «Զիթենի» կիրակնօրյա մանկական թերթը: 1904 թ. թերթը փոխադրվել է Սոֆիա և որոշ ժամանակ անց դադարել է:

«Հայաստանի կոչնակ», 1931, № 44 («Հակոբ Շահվելեղյան»):

Փետրվարի 11. «Եվրոպան» (№ 6), իտալերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ֆրանցիսկոս Սոավյեի «Հիվանդ այրի» պատմվածքը:

Սոավյեի գեղարվեստական գործերի թարգմանությունները «Եվրոպան» հրատարակել է հետևյալ հաջորդականությամբ: «Պատկեր» (№ 7, փետրվարի 6), «Ռիքարտոս Մաքվիլ» (№ 9, փետրվարի 20), «Դամոն ու Փիդիա» (№ 14, մարտի 26), «Եղեյրեսոս» (№29, հուլիսի 7), «Ալիմեք կամ երջանկություն» (№ 32, հուլիսի 28, ավարտ՝ հաջորդ համարում), «Սիտնի և Բադի» (№ 35, օգոստոսի 18), «Սիտնի և Ուորներ» (№ 36, օգոստոսի 25), «Փրեդերիկոս Լանուչի» (№ 38, սեպտեմբերի 8), «Փիբբո և Մենիգուչչիո» (№ 44, հոկտեմբերի 20, ավարտ՝ հաջորդ համարում), «Անտոն Լեոնելլի» (№ 48, նոյեմբերի 17) և այլն:

Փետրվար. «Մասյաց աղավնին» (№ 3) արևմտահայերեն հրատարակում է «Աշխարհաբառ լեզուն ծաղկացնելու վրա» հոդվածը: Ժամանակի լեզվի բնորոշ հատկանիշները թվե-

լուց հետո, հեղինակը քննադատում է Մկրտիչ Խրիմյանի, Ստեփաննոս Նազարյան-
ցի, Գրիգոր Մսերյանցի լեզվագիտական աշխատությունները»:

Փետրվարի 18. Սուլթան Աբդուլ Մեջիդը հրապարակում է «Խաթթի հումայուն» (իմա՛. Ար-
քայական հրավարտակ) կոչվող օրինագիծը («Թանգիմաթ»), որով մի շարք արտո-
նություններ էր խոստացվում հպատակներին:

Юзефович Т., Договоры России с востоком, политические и торговые, СПб, 1869, стр. 175-181.
Թումանյան Վ., Պատմություն արևելյան խնդրո և առաջնորդ Հայկական հարցի, Լոնդոն, 1905, էջ
613-623:

Փետրվարի 23. Էդիրնեում (նաև՝ Ադրիանապոլիս, Եվրոպական Թուրքիա) ծնվեց հուշագիր,
հոդվածագիր (մասնագիտությամբ իրավաբան) Հակոբ Պապիկյանը: Վախճ. 1909 թ.
հուլիսի 20-ին, Պոլսում:

Ադանայի եղեռնը (հայացուց Հակոբ Սարգիսյան), Պոլիս, 1919, էջ 3-7:

Փետրվարի 27. «Եվրոպան» (№ 10), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն
թարգմանությամբ, հրատարակում է Ալֆոնսոս Լամարթինի «Թիթեռնիկ» բանաս-
տեղծությունը և Ժան Լաֆոնտենի «Ճոեկն ու մրջյուն» առակը:

Լաֆոնտենի թարգմանածո առակների հրատարակությունը «Եվրոպայում» հե-
տագայում ընթացել է հետևյալ հաջորդականությամբ: «Ագռավն ու աղվեսը» (№
11, մարտի 5), «Գորտն ու կովը» (№ 12, մարտի 12), «Երկու ջորի» (№ 13, մարտի
19), «Երինջը, այծն ու ոչխար, առյուծին հետ ընկերացած» (№ 14, մարտի 26),
«Գայլն ու շունը» (№ 15, ապրիլի 2), «Քաղքրցի մուկն ու դաշտի մուկը» (№ 16,
ապրիլի 9), «Տուպրակը» (№ 17, ապրիլի 16), «Գայլն ու գառնուկը» (№ 18, ապրիլի
23), «Մահն ու դժբախտը» (№ 19, ապրիլի 30), «Մահն ու փայտահատը» (№ 20,
մայիսի 7), «Աղվեսն ու արագիլը» (№ 21, մայիսի 14), «Թեղուշն ու եղեգը» (№ 22,
մայիսի 21), «Հոլամուկն (Չղջիկ) ու ագիսը» (№ 23, մայիսի 28), «Մատակ շունն ու
իր ընկերը» (№ 24, հունիսի 4), «Սպունգակիր էշն ու աղակիր էշը» (№ 25, հունիսի
11), «Առյուծն ու մուկը» (№ 26, հունիսի 16), «Աղավնին ու մրջյունը» (№ 27, հունի-
սի 23), «Պար բռնող արջ մը» (№ 28, հունիսի 30), «Նապաստակն ու գորտերը» (№
29, հուլիսի 7), «Հերային տրտնջող սիրամարգը» (№ 30, հուլիսի 14), «Հովիվ եղած
գայլը» (№ 31, հուլիսի 21), «Թագավոր մ' ուզող գորտերը» (№ 32, հուլիսի 28), «Աղ-
վեսն ու այծը» (№ 33, օգոստոսի 4), «Գայլ ու արագիլը» (№ 35, օգոստոսի 18),
«Գայլերն ու ոչխարները» (№ 36, օգոստոսի 25), «Աղվեսն ու խաղողը» (№ 37,

սեպտեմբերի 1), «Առյուծին նմանիլ ուզող ագռավը» (№ 43, հոկտեմբերի 13), «Օերացած առյուծը» (№ 46, նոյեմբերի 3), «Աքիսը շտեմարանի մը մեջ մտած» (№ 47, նոյեմբերի 10), «Էշն ու պզտիկ շունը» (№ 48, նոյեմբերի 17), «Մկներուն ու աքիսներուն կռիվը» (№ 49, նոյեմբերի 24), «Սիրամարգի փետրով զարդարված ագռավը» (№ 50, դեկտեմբերի 1), «Եղջերուն վրեժ առնուլ ուզող ձին» (№ 51, դեկտեմբերի 8), «Սոկրատին խոսքը» (№ 52, դեկտեմբերի 15) և այլն:

Լաֆոնտենի առակներից յուրաքանչյուրին, մեծ մասամբ նախորդում է Վիեննայի Մխիթարյան հայերի գրչի պատկանող, ավել կամ պակաս ծավալուն մի քանաստեղծություն՝ գրաբար կամ արևմտահայերեն:

Փետրվարի երկրորդ կես. «Բազմավեպը» (№ 4) արևմտահայերեն հրատարակում է «Հումբոլտի Իլիական և Ոդիսական դյուցազներգություններուն վրա եղած խնդիրները» ուսումնասիրությունը: Ավարտ՝ № 5 (մարտի առաջին կես):

Փետրվար. «Արծվի Վասպուրականը» (№ 9), Հովհաննես Նուբյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ժան Ռուսսոյի «Ավետարան» գեղարվեստական մանրապատումը և մի առակ Մխիթար Գոշից:

Մարտի 1. Ճավա կղզու Բատավիա քաղաքում (Ինդոնեզիա) սկսում է գործել Մարիամ Հարությունյան և Թագուհի Մանուկյան քույրերի նախաձեռնությամբ հիմնված դպրոցը, որն ուներ «Ռուսումնարան Մանուկ-Հարությունյան» անվանումը: Առաջին տեսուչն էր Խաչիկ Թովմասյանը: Ռուսումնարանը փակվեց 1872 թվականին, սակայն հետագայում, նույն անվանումով վերաբացվեց Սուրաբայա քաղաքում:

Հետագա մանրամասնությունները մեզ չհաջողվեց պարզել: Հայտնի է միայն, որ 1926 թվականին ուսումնարանը Սուրաբայայում շարունակում էր գոյություն ունենալ:

«Արշալույս արարատյան», 1856, № 521 («Ազգային»), «Բազմավեպ», 1926, № 12 («Աթանաս Տիրոսյանի հիշատակը ի Ճավա»): «Տեղեկագիր», 1963, № 7 («19-րդ դարի հայ ազատագրական շարժումները և Ինդոնեզիայի հայ գաղութը»):

Մարտի 1. Թիֆլիսում ծնվեց պատմաբան, բանասեր, թարգմանիչ (ռուսերենից, ֆրանսերենից՝ հայերեն, գրաբարից՝ աշխարհաբար) Գյուտ քահանա Աղանյանը (Հարություն Տեր-Առաքելյան): Վախճ. 1919 թ. դեկտեմբերի 16-ին:

1896 թ. Թիֆլիսում հիմնադրել և մինչև 1912 թ. խմբագրել է «Լուսն» ամսագիրը (սկզբում՝ կիսամյա):

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1921, էջ 327:

Մարտի 5. «Եվրոպան» (№ 11), արևմտահայերեն, հրատարակում է «Շահավետ ծառայություն» պատմվածքը և «Ամենաանհնազանդ հիվանդ մը» առակը:

Մարտի 12. Մարաշում (Կենտ. Թուրքիա) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, լրագրող Սարգիս Սամվելյանը: Եղեռնամահ՝ 1895 թ.:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1915, էջ 128-129:

Մարտ. «Մասյաց աղավնին» (№ 4) արևմտահայերեն հրատարակում է Մկրտիչ Պեշիկթաշյանի «Ի վաղամեռիկ մահ ազնվական պատանվոյն Չամչյան Հակոբա» բանաստեղծությունը (տե՛ս **Պեշիկթաշյան Մ.**, Տաղեր, Երևան, 1961, էջ 77-79: Բանաստեղծությունն այստեղ ունի «Ի մահ Հակոբա Չամչյան» վերնագիրը): Ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակված է նաև Ժան Լաֆոնտենի «Գայլ և գառն» առակը:

Մարտի առաջին կես. «Բազմավեպը» (№ 5), ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Հակոբ (Իմա՛. Ժակ – Ս.Շ.) Դըլիլի «Կարապ» բանաստեղծությունը: Հրատարակված են նաև Թովմաս Թերզյանի «Մանուկն և վտակ» և «Լերինք» բանաստեղծությունները:

Մարտի 29. «Մասիսը» (№ 218) Մատթեոս Մամուրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Վոլտերի «Միկրոմեգաս. պատմությունն իմաստասիրական» վիպակը: Որոշ ընդհատումներով, ավարտ՝ № 229 (հունիսի 13):

Ապրիլի 5. «Դը պիպլս պեյպըր» թերթը («The people's Paper») սկսում է հրատարակել Կ. Մարքսի հոդվածաշարը, «Կարսի անկումը» խորագրով:

Տրված է Կարս քաղաքի և մասնավորապես, նրա բերդի ռազմաստրատեգիական նկարագրությունը, թուրքական բանակի ցածր մարտունակության և նրա հետամնաց տեխնիկայի բնութագրությունը, ապա բացահայտված են համաշ-

խարհային-քաղաքական ու ռազմական այն բարդ իրադարձությունները, որոնց հարկադրական ճնշման ներքո, թուրքերը պետք է հանձնեին Կարսը:

К.Маркс, Ф.Энгельс, Сочинения, т. 2, Москва, 1958, стр. 633-6672.

Ապրիլի առաջին կես. «Բազմավեպը» (№ 8), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ժան Լաֆոնտենի «Ժանտամահեն բռնված կենդանիներ» առակը:

Ապրիլի 11. «Մասիսը» (№ 220) հրատարակում է Մ. Մամուրյանի նամակը, որտեղ նա պաշտպանում է «Միկրոմեգասի» իր թարգմանությունը և նրա հեղինակ Վոլտերին, Չամուռճյանի «Զոհալի» (իմա՝ «Երևակ») հարձակումներից:

Ապրիլի 20. «Արշալույս արարատյանը» (№ 518), Ռ. Մեսրոպ Նուպարյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Արկածք Պրիլյան իշխանին» վիպակը: Որոշ ընդհատումներով շարունակվում է մինչև օգոստոսի 10-ը (№ 526):

Մայիս. «Արծվի Վասպուրականը» (№ 12) արևմտահայերեն հրատարակում է Էդուարդ Հյուրմյուզյանի «Հասարակաց դյուրագին ծանրաչափներ» հոդվածը: Վերջում, հոդվածագրի՝ լատիներեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, զետեղված է մի հատված Վիրգիլիոսի «Մշակականքից» (Ա. երգի 362-476-րդ տողերը):

Հունիսի 1. Տրապիզոնում Աղաջան Հովհաննիսյանի և Մելքոն Թուրքյանի նախաձեռնությամբ, իր գոյությունն է սկսում իզական ուսումնարանը, որն ուներ «Ս. Գայանյան» անվանումը: Սկզբում ունեին 72 աշակերտուհի, ավանդվում էր հայոց լեզու, կրոն և ձեռագործ:

«Մասիս», 1856, № 236 («Ազգային»), № 253 («Ազգային»):

Հունիսի երկրորդ կես. «Բազմավեպը» (№ 12), Էմմանուել Եսայանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Շարլ Միլվուայի «Անկումն տերևոց» բանաստեղծությունը:

Հունիսի 23. «Եվրոպան» (№ 27), արևմտահայերեն, սկսում է հրատարակել «Մատենագրական խորհրդածություններ» հոդվածը (Հեղինակ՝ * = Փիլիպոս Ճամճյան ?): Ավարտ՝ № 37 (սեպտեմբերի 1):

Տրված է հայ մատենագրության գնահատությունը, սկսած Սահակ-Մեսրոպից մինչև Մխիթար Սեբաստացին, որը բնութագրված է որպես «միայն թարգմանական»: Նոր վերելքը հոդվածագիրը կապում է Մխիթար Սեբաստացու և մանավանդ Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյանների ծավալված հայագիտական-բանասիրական և գրական գործունեության հետ, որը երբեմն հակադրվում է մյուս գաղթօջախներում ծավալված համանման գործունեությանը:

Հուլիսի 1. Պոլսում ծնվեց բառարանագիր, աշխարհագրագետ, թարգմանիչ (ֆրանսերենից և իտալերենից՝ հայերեն) Դանիել Ստեփանյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1878 թ. դեկտեմբերի 25-ից: Վախճ. 1931 թ. օգոստոսի 22-ին, Վենետիկում:

Մխիթարյան հոբելյան, Վենետիկ, 1901, էջ 225, «Բազմավեպ», 1931 թ. № 7-8 («Դանիել Ստեփանյան»):

Օգոստոսի 11. «Եվրոպան» (№ 34), արևմտահայերեն հրատարակում է «Երասխին քովերը մանուկ մը» պոեմը:

Օգոստոսի 19. Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական) ծնվեց երգահան-երաժիշտ, հայկական ազգային երաժշտության մշակող, ՀՍՍՀ ժողովրդական երաժշտագետ (1933 թ.) Նիկողայոս Թադևոսի Տիգրանյանը: Վախճ. 1951 թ. փետրվարի 17-ին, Երևանում:

«Բազմավեպ», 1912, № 10-11 («Երաժշտագետ Նիկողայոս Տիգրանյան»): 1926, № 7 ... («Նիկողայոս Տիգրանյանի ինքնակենսագրությունը»): **Հարությունյան Շ.**, Սովետական Հայաստանը 40 տարում (Տարեգրություն), Երևան, 1960, էջ 202, 331:

Օգոստոսի 24. «Արշալույս արարատյանը» (№ 527) Պերճ Ավետիս Թագվորյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է «Տարեդարձ որբոյն» բանաստեղծությունը:

Սեպտեմբերի 8. «Եվրոպան» (№ 38) ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ժան Պիեր Ֆլորիանի «Հայլին ու ճշմարտությունը» առակը:

Սեպտեմբերի 15. Պոլսում, Հարություն Սըվաճյանի խմբագրությամբ, արևմտահայերեն սկսում է հրատարակվել «Մեղու» («Հավաքածու բանասիրական, բարոյական, գրագիտական, տնտեսական, առևտրական և զվարճալի գիտելյաց») կիսամյա հանդեսը: Սըվաճյանին, սկսած 1863 թ. սկզբներից, տարբեր ժամկետներով փոխարինել են Հովհաննես Հովույանցը, Աբրահամ Մուրադյանը, Արմենակ Հայկունին, Գրիգոր Պարտիզպանյանը: 1870 թ. սեպտեմբերից պարբերականի խմբագիրը կրկին դառնում է Հարություն Սըվաճյանը, որը 1872 թ. նոյեմբերին այդ պարտականությունը վերջնականապես հանձնում է Հակոբ Պարոնյանին: «Մեղուն» գոյատևել է մինչև 1874 թ. մարտը:

Սեպտեմբերի 15. «Եվրոպան» (№ 39) գերմաներեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Բոլլաքի «Թեհրանեն Համադան ճամբորդություն մը» ուղեգրական երկը: Ավարտ՝ № 41 (սեպտեմբերի 29):

Սեպտեմբերի 15. «Մեղուն» (№ 1) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Թոքսիտավորի մը վերջին ժամը և իր կնոջը ըրած պատվերները» վիպակը: Ավարտ՝ № 6 (նոյեմբերի 30):

Կեսեր. Կարապետ Շահնագարյանի՝ հայ ընթերցող և գիտական հասարակայնությանն ուղղված «Հայտարարությունը» Փարիզում, «Շար հայ պատմագրաց» մատենաշարով հայ պատմիչների քննական հրատարակություն սկսելու մասին: Նախորոշված էր տալ հայերեն ճշգրտված բնագիրը իր՝ Շահնագարյանի կատարած ֆրանսերեն թարգմանության հետ համատեղ և դրան համապատասխանող ծանոթագրություններ այդ երկու լեզուներով: Մատենաշարի առաջին գործը՝ Ղևոնդ երեցի «Արշաւանք արաբաց ի հայս» աշխատությունը հրատարակվել է 1857 թ. (տե՛ս այդ թվականը): Ընդհանուր առմամբ հրատարակվել է յոթ անուն գիրք, որոշված տասնչորսի փոխարեն: «Շար հայ պատմագրացը» դադարում է 1862 թ.:

«Մասիս», 1856, № 249 («Հայտարարություն»):

Սեպտեմբերի 15. Հարավային Թոնրիջում (Անգլիա) ծնվեց անգլիացի հայագետ, ձեռագրագետ, թարգմանիչ (հայերենից՝ անգլերեն) Ֆրեդերիկ Կոնիբերը (Frederick Conybeare): Վախճ. 1924 թ. հունվարի 9-ին, Ֆոլկստոնում (Անգլիա):

«Հանդես ամսօրյա», 1924, № 5-6 («Frederick Cornwallis Conybeare»): «Բազմավեպ», 1926, № 2 («Ֆ. Կոնիբիբի հիշատակին»):

Մեկտեմբերի երկրորդ կես. «Բազմավեպը» (№ 18), Խորեն Գալֆայանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալֆոնսու Լամարթինի «Աշուն» բանաստեղծությունը: Արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակված է նաև Ժան Լաֆոնտենի «Ծիծեռնիկ և թռչնիկ» առակը:

Մեկտեմբերի 21. «Արշալույս արարատյանը» (№ 529) գրաբար հրատարակում է Դեմետրիոս Պրուսելի «Ի վսեմափայլ պայազատ Պողոս պեյ Տյուզեան» բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 8. Թիֆլիսում ծնվեց դրամատուրգ, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն), մանկագիր, թատերական գործիչ Արամ Թովմասի Սարդարյան-Արևշատյանը: Վախճ. 1913 թ. հուլիսի 1-ին, իր ծննդավայրում:

«Ռշտունի» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Մշակ», 1913, № 144 («Ադամ Սարդարյան-Արևշատյան»), № 147 144 («Ադամ Սարդարյան Ռշտունի, Արևշատյան»):

Հոկտեմբերի առաջին կես. «Բազմավեպը» (№ 19), Ղևոնդ Ալիշանի՝ գերմաներեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Լյուդվիգ Ռիլանդի «Երգ աղքատին» բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 8. «Մեղուն» (№ 2) արևմտահայերեն հրատարակում է «Ով աշխատի, ով վատրկի» նովելը (հեղինակ՝ ***) և Վանի բարբառով մի հանելուկ՝ «Վանեցվոց հանելուկ» խորագրով:

Հոկտեմբերի 15. «Մեղուն» (№ 3), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ֆելիցիտե Լամընյեի «Մշակներ» արձակ բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 31. «Մեղուն» (№ 4) արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Հովհաննա Գրեյ» պատմվածքը: Հրատարակված է նաև «Հարուստ երիտասարդի մը սենյակը» պատմվածքը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Նոյեմբերի առաջին կես. «Բազմավեպը» (№ 20), Խորեն Գալֆայանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալֆոնսու Լամարթինի «Անմահություն» բանաստեղծությունը:

Նոյեմբերի 24. «Եվրոպան» (№ 49) արևմտահայերեն հրատարակում է «Երգ ռամկական. ձյուն» բանաստեղծությունը:

Նոյեմբերի երկրորդ կես. «Բազմավեպը» (№ 22), Խորեն Գալֆայանի՝ հունարեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Պլատոնի «Էրկամ Արա Հայկազն» գործը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Թարգմանված է Պլատոնի «Հասարակապետություն» աշխատության երկրորդ գրքի այն հատվածը, որտեղ հեղինակը պատմում է Էրկամ Արա Հայկազն դուցազն արքայի մասին: Սա վերակառուցում է իր երկիրը, բնակության տեղ տալով իր որդիներից ու թոռներից յուրաքանչյուրին, և հաղթական պատերազմներ է մղում իրենց նվաճելու եկած հարևան պետության հետ:

Նոյեմբեր. «Մասյաց աղավնին» (№ 12) ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ժան Լաֆոնտենի «Աղվես և ագռավ» առակը:

Դեկտեմբերի 15. Ակնում (Արևել. Թուրքիա) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, պատմաբան-բանասեր, խմբագիր Սմբատ Գաբրիելյանը: Վախճ. 1919 թ. հունիսի 3-ին, Նյու-Յորքում:

1891 թ. Նյու-Յորքում հիմնել և մինչև 1898 թ. խմբագրել է «Հայք» կիսամյա հանդեսը:

Մուշեղ եպիսկոպոս, Ամերիկահայ տարեցույց, Բոստոն, 1912, էջ 262: **Ստեփանյան Գ.,** Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 212, «Կոչնակ», 1919, № 23 («Մահգույժ»), № 24 (Տոբոտր Սմբատ Գաբրիելյան. ...Հուղարկավորություն»), № 26 («Սմբատ Գաբրիելյան»):

Դեկտեմբերի 15. «Եվրոպան» (№ 52), արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Ռենոս գետին ողողելը» վիպակը: Ավարտ՝ 1857 թ. № 7 (փետրվարի 2):

Դեկտեմբերի 15. «Մեղուն» (№ 7), Արմենակ Ութուջյանի և Նորայր Վարժապետյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Վարձակալին աղջիկը կամ որդիական սեր» վիպակը: Ավարտ՝ 1857, № 18 (մայիսի 31): Հրատարակված է նաև Հ. Տոլայյանի (Հ. Սըվաճյան ?) «Առ նորին բարձրաթոռ ընծայաբերություն հ. Գրիգոր վարդապետ Կարապետ Խապառաճյան» պամֆլետը և գրաբար՝ Միքայել Առանձար Մարգարյանի «Մահ Հերիքայ» եղերեգությունը:

Դեկտեմբերի երկրորդ կես. «Բազմավեպը» (№ 24), գրաբար հրատարակում է Թովմաս Թերգյանի «Մահ Ահարոնի» բանաստեղծությունը և ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ՝ Անտուան Առնոյի «Տերևն անտառի» բանաստեղծությունը:

-Պոլսում վախճանվեց կրթական-մշակութային գործիչ, բանասեր Ճանիկ Սիմյոնի Փափագյանը (նաև՝ Սիմյոնյան-Փափագյան): Ծնվ. 1766 թ. Ակնում (Արևել. Թուրքիա):

Ազատյան Թ., Ակն և ակնցիք, Պոլիս, 1943, էջ 58-59:

-Պոլսում ծնվեց գրական-մշակութային գործիչ, թարգմանիչ (հայերենից և ֆրանսերենից՝ թուրքերեն), լրագրող, խմբագիր Հովհաննես Թոլայանը: Վախճ. 1936 թ. մայիսի 16-ին, իր ծննդավայրում:

1885 թ. Պոլսում հիմնադրել և մինչև 1914 թ. խմբագրել է «Մեջմուայի ախպար» (իմա՝ «Լուրերի տեղեկատու») հայաստառ թուրքերեն պարբերականը: Վերջինս 1912 թ. հունիսի 9-ին բանադրվել է Պողոս ԺԳ Թերգյան կարդինալի կողմից, հակակաթոլիկական նյութեր հրատարակելու համար:

Թեոդիկ, Տիպ ու տառ, Պոլիս, 1912, էջ 114: «Նոր լուր», 1936, № 5492 («Մահ Հովհաննես Թոլայանի»), № 5493 («Հովհաննես Թոլայան»):

-Պոլսում ծնվեց լրագրող, ճշգրիտ գիտությունների դասագրքերի հեղինակ Գարեգին Գավաֆյանը: Վախճ. 1923 թ. նոյեմբերի 29-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1925, էջ 376:

-Պոլսում ծնվեց երաժիշտ, հայկական երաժշտության տեսաբան և պատմաբան, լրագրող Արիստակես (մինչև հոգևոր կոչում ստանալը՝ Վրթանես) Հիսարյանը: Վախճ. 1937 թ.:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 184:

-Պոլսում ծնվեց լրագրող, բանաստեղծ, գրական-մշակութային գործիչ Գրիգոր Հովհաննեսի Մարգարյանը: Վախճ. 1909 թ. հունիսի 26-ին, Զմյուռնիայում:

«Գ. Տրենց Մարգարյան», «Գ.Տ.Մ.» ստորագրություններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Արևելյան մամուլ», 1909, № 28 («Գրիգոր Տրենց Մարգարյան»): «Բյուզանդիոն», 1909, հուլիսի 14, № 3868 («Գրիգոր Էֆենդի Տրենց Մարգարյան»):

-Պոլսում ծնվեց լրագրող, մշակութային գործիչ Հովհաննես Թաթարյանը: Վախճ. 1899 թ. հունվարի 24-ին, իր ծննդավայրում:

«Բյուզանդիոն», 1899, № 691 («Մահ»):

-Թիֆլիսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, բանասեր Գևորգ Աբուլյանը: Վախճ. 1933 թ. սեպտեմբերի 16-ին, Կլամարում (Հյուսիսային Ֆրանսիա):

Պոտոլյան Մ., Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 22:

-Ռոդոստոյում ծնվեց լրագրող, ճշգրիտ գիտությունների դասագրքերի հեղինակ (հայերեն և ֆրանսերեն լեզուներով) Հակոբ Պոյաճյանը: Վախճ. 1922 թ. դեկտեմբերի 8-ին, Պոլսում:

Թեղղիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1925, էջ 370-371:

-Տրապիզոնում ծնվեց լրագրող, խմբագիր Հովհաննես Խահնազարը (Շահնազարյանը): Վախճ. 1942 թ. Պոլսում:

1891-1909 թթ. (ընդհատումներով) Պոլսում խմբագրել է «Հայրենիք» օրաթերթը:

Ընդարձակ տարեգիրք ազգային հիվանդանոցի, Պոլիս, 1942, էջ 300-301:

-Չերնովոյե ավանում (Լեհաստան, Ստանիսլավի վոևոդություն. այժմ՝ Ուկրաինական ՍՍՀ, Իվանովո-Ֆրանկովսկի մարզ) ծնվեց լեհահայ բանասեր, արձակագիր, լրագրող (լեհերենով) Կայետանոս Աբգարովիչը: Վախճ. 1909 թ. հուլիսի 27-ին, Տրուսկովեց քաղաքում (այժմ՝ Լվովի մարզ, Ուկրաինա):

Պարբերականներում հանդես էր գալիս «Աբգար-Սոլթան» կեղծանունով: Իր գեղարվեստական ստեղծագործություններում ու գիտական աշխատություններում Աբգարովիչը բազմիցս անդրադարձել է հայկական կյանքին ու հայ մշակույթին:

Պոտոլյան Մ., Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 13-14: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 9:

-Անջրդի գյուղում (Կենտր. Թուրքիա, Արաբկիրի գավառ) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, լրագրող Սարգիս Ամատյանը: Վախճ. 1920 թ. Զմյուռնիայում:

Տեր-Աստվածատրյանց Հ., Բառարան հայ կենսագրության, Թիֆլիս, 1904, էջ 86-87: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 79: **Պոտոլյան Մ.**, Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 123-124:

-Օշականում ծնվեց բառարանագիր, պատմաբան-բանասեր, լրագրող Սահակ Ամատունին (Բաղդասար Գևորգի Բաղդասարյան): Էջմիածնի միաբանության անդամ: Վախճ. Էջմիածնում 1917 թ.:

«Ս.Վ.», «Սահակ Վարդապետ», «Բաղդասարյան Սահակ» «Բաղդասարյան Բաղդասար» ստորագրություններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 80: Հայկական սովետական հանրագիտարան, հ. Ա, Երևան, 1974, էջ 276-277:

-Վենետիկում արևմտահայերեն հրատարակվում է Ռափայել Թրյանցի «Նոր մարդավարություն ի պետս ազգային վարժարանաց» աշխատությունը: 155 էջ:

Նույնը անփոփոխ՝ 1885 թ., 157 էջ:

-Վենետիկում արևմտահայերեն հրատարակվում է Հովհաննես Ճամպազյանի «Բարեկիրթ պատանի (Բարեկիրթ դաստիարակության պտուղները արդյունավոր ընելու նախարհեստ զգուշություններ)» աշխատությունը: 111 էջ:

-Վենետիկում, Աբրահամ Ճարյանի՝ լատիներեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Գայոս Սալուստիոսի «Պատմութիւն Կատիլինեան դաւակցութեան և յուզութեան պատերազմին» աշխատությունը: 369 էջ:

-Վենետիկում արևմտահայերեն հրատարակվում է Գարեգին Զարբհանայանի «Պատմություն մատենագրության հունաց, հռովմայեցվո և հարց եկեղեցվո» աշխատությունը: 855 էջ:

-Վենետիկում, Ռափայել Թրյանցի՝ իտալերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Թովմաս Թրոիզի «Տրամաբանություն» աշխատությունը: 299 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Մատթեոս արքեպիսկոպոսի (իմա. Մատթեոս Չուխաճյան, հետագայում՝ Մատթեոս Ա. Կաթողիկոս ամենայն հայոց) «Բարի մարդ և բարի քրիստոնյա» աշխատությունը: 319 էջ:

Նույնը՝ Թիֆլիս, 1860, 287 էջ:

Կրոնադավանաբանական բնույթի խնդիրների քննությունից հետո, աշխատության վերջում, հեղինակն անդրադառնում է հայ մշակույթի հետ առնչվող մի շարք հարցերի:

- Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Հակոբ Տիվիթճյանի «Գիրք բնության» ստեղծագործությունը: 44 էջ:
- Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Էդուարդ» վիպասանության Ա. հատորը: 49 էջ: Հետագա հատորները չեն հրատարակվել:
- Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Լուսավորյալ դար ու հարգելի ժամանակ, որ շարադրեց հռովմեական ճշմարտասեր ու ազատամիտ հայազգի մը» գրքույկը: ԺԲ+91 էջ:
- Պոլսում, ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Վիկոնտ Առլենկուրի «Օտար աղջկանը պատմությունը» վեպի առաջին հատորը: 477 էջ:

Երկրորդ հատոր՝ 1858 թ., 130 էջ:

- Պոլսում արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Երջանիկ ազատություն» պատմվածքը: 28 էջ:
- Պոլսում, ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Ճշմարիտ բարեկամ տղայոց» վիպակը: 128 էջ:
- Փարիզում, Ամբրոսիոս Գալֆայանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ և ֆրանսերեն-արևմտահայերեն զուգահեռ բնագրերով, հրատարակվում է Ֆրանսուա Ֆենելոնի «Հաղագս դաստիարակության աղջկանց» մանկավարժական ստեղծագործությունը: 378 էջ:
- Փարիզում, Ամբրոսիոս Գալֆայանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ և ֆրանսերեն-գրաբար զուգահեռ բնագրերով, հրատարակվում է Բեռնարդեն դը Սեն-Պիերի «Պօղ և Վիրգինե» վեպը: 172 էջ: Նույն թվականին հրատարակվել է միայն գրաբար տարբերակը: 85 էջ:

-Փարիզում արևմտահայերեն հրատարակվում է Գրիգոր Խապատաճի Կարապետյանի (հետագայում՝ Գրիգոր Գապարաճյան) «Ընծա, հորդորանք միաբանության, ստկով չծախվիր, ձրի կբաշխվիր» երգիծական վիպակը: 180 էջ:

-Փարիզում արևմտահայերեն հրատարակվում է Թ. (երբեմն՝ Թոռնակ) Կրոկիկյանի «Ընդունելություն ընծայի, ստրկով կծախվի, ձրի չը բաշխվիր» գիրքը: 140 էջ:

Վերջինս պատասխան է գրված նախորդ երգիծական վիպակի դեմ: Դեռ իր ժամանակ բանավեճի առարկա դարձավ այն հարցը, թե ո՞վ էր թաքնված «Թ. Կրոկիկյան» կեղծանվան ներքո: Հնարավոր թեկնածուների թվում հիշատակվում էին Խաչատուր «պուլետ» Միսաքյանը, Ճանիկ Արամյանը և Աստվածատուր Ջունդը: Գրքի լույս տեսնելուց անմիջապես հետո, «Մասիսում» հանդես եկավ Խաչատուր «պուլետ» Միսաքյանը և իր ու Աստվածատուր Ջունդի անունից հայտնեց, որ «Թ. Կրոկիկյանը» իրենք չեն («Մասիս», 1857, № 260): Նույն հավաստումը շուտով կրկնեց նաև Աստվածատուր Ջունդը (Անդ, 1857, № 261), հավելելով, որ կեղծանվան ներքո թաքնված անձնավորությունը նույնիսկ պոլսեցի չէ: Շուրջ երեք ամիս անց այս ամենը նորից ու վերջնականապես հավաստեց Խաչատուր Միսաքյանը (Անդ, 1857, № 267) և ըստ այդմ հեղինակների թվում մնաց միայն Ճանիկ Արամյանը, որն, իրոք, պոլսեցի չէր, այլ նիկոմեդիացի: Ավելացնենք, որ «Թ.Կրոկիկյանի»՝ միայն Ջանիկ Արամյան լինելը ուղղակիորեն հավաստում է նաև Ա. Ղազիկյանը (Տե՛ս Հայկական նոր մատենագիտություն, Վենետիկ, 1912, էջ 227, 697, 1282):

Մեր օրերի անվանի պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը գրքույկի հեղինակ է համարում Խաչատուր Միսաքյանին, իսկ Արամյանը «ըստ երևույթին գրքի հրատարակողն էր սոսկ»: (Տե՛ս Նալբանդյանը և նրա ժամանակ, գիրք 2, Երևան, 1956, էջ 437):

-Փարիզում արևմտահայերեն հրատարակվում է Օ. Թույսուզյանի «Հայու գրով տաճկերեն օրագիր հանելու վրա «Մեճմուայը հավատիսի» խմբագրին պատասխան» գրքույկը: 22 էջ:

-Փարիզում գրաբար հրատարակվում է Գաբրիել Այվազյանի (Այվազովսկի) «Օրենք վայելուչ կենցաղավարութեան ի պէտս ուսումնասէր մանկտույն» չափածո ստեղծագործությունը: 44 էջ:

Նույնը Թեոդոսիայում, 1871 թ., 47 էջ:

-Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Ղևոնդ Հովնանյանի «Պատմություն քաղաքականության եվրոպական տերությանց ընդհանրապես» քառահատոր աշխատության Ա հատորը («Մատենադարան Արամյան ընկերության», հ. Ե), էջ 24+358: Երկրորդ հատոր, 1865, 16+334 էջ («Մատենադարան»... հ. Զ): Երրորդ հատոր (առաջին մաս), Անդ, 1857, 17+360 էջ («Մատենադարան»... հ. Թ): Չորրորդ հատոր (երրորդ հատորի երկրորդ մասը), Անդ, 1860, էջ 18+445 («Մատենադարան»... հ. Ժ):

-Վիեննայում, ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Մայրական սեր կամ ձմեռվան դժբախտ գիշեր մը» վիպակը («Կրթական և զբոսալի տետրակներ», հ. ԼԴ) և «Աննա...» պատմվածքը: 120 էջ:

-Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Մեսրոպ Ծաղիկյանի «Պետրոս Մեծ և իր նորոգությունք» աշխատությունը: 254 էջ:

-Մոսկվայում գրաբար հրատարակվում է Սմբատ Սպարապետի (իմա. Սմբատ Գունդստար) «Պատմութիւն յունաց ի Կոստանդնուպոլիս և հայոց մեծաց ըստ կարգի ժամանակաց» աշխատությունը: Բնագրագիտական աշխատանքները, գրաբար առաջաբանն ու ծանոթագրությունները Ոսկան Հովհաննիսյանի (Երևանցի): 134 էջ:

-Մոսկվայում աշխարհաբար մեկնաբանություններով, հրատարակվում է Զարմայր Մսերյանցի «Նոր այբբենարան հայերեն լեզվի, ռուսերեն թարգմանությամբ» աշխատությունը: 96 էջ:

Նույնը՝ անփոփոխ, 1863 թ.:

-Մոսկվայում գրաբար հրատարակվում է Մսեր Մսերյանի «Յիշատակարան կենաց և գործոց մեծանուն պայազատաց Լազարեան տոհմի» աշխատությունը: 60+109+159 էջ:

-Զմյուռնիայում արևմտահայերեն հրատարակվում է Գալուստ Կոստանդյանի «Միպիլ կամ բնական գիտության պիտանի մասերուն համառոտ պատմությունը» աշխատությունը: 72 էջ:

-Զմյուռնիայում գրաբար հրատարակվում է Հովհան Վանանդեցու «Տեսարան հանդիսիցն Հայկայ, Արամայ և Արայի» դյուցազներգությունը: 151 էջ:

-Զմյուռնիայում, Գրիգոր Հովակիմյանի (ի՛մա. Չիլինկիրյան)՝ հունարեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ֆերդինանդոսի և Վալերիայի «Պատմություն բարոյական» վիպակը: Հատվածաբար հրատարակվում էր «Արշալույս արարատյանի» 1855 թ. №№ 493-496, 498-499 և 501-106-ում, «Սպանիական պատմություն» վերնագրով:

-Երուսաղեմում գրաբար հրատարակվում է «Ճառք և խոստովանութիւնք հաւատոյ» գիրքը, 216 էջ:

-Պետերբուրգում հրատարակվում է Ռափայել Պատկանյանի կազմած ժողովածուն «Ազգային երգարան հայոց. ծաղկաքաղ հին և նոր գործածական ամեն պարունակության երգերու կամ տաղերու, այբուբենական կարգով» խորագրով: 211 էջ: Վերջում (7 էջ)՝ «Երաժշտական խազեր» խորագրի ներքո, տրված են ժողովածվում եղած մի քանի հայկական երգերի նոտագրությունները, որոնք կատարել է Նիկոլայ Տրիֆանովը:

-Թիֆլիսում գրաբար հրատարակվում է Աբել Մխիթարյանի «Պատմութիւն մենաստանին Հառիճոյ ի Շիրակ» աշխատությունը: 90 էջ:

-Շամախիում հրատարակվում է Մովսես Զոհրապյանց Արցախեցու «Պարապոյ ժամք» խորագիրը կրող գրաբար ժողովածվի առաջին մասը: 156 էջ:

Երկրորդ մաս՝ 1859 թ., 127 էջ:

1857

Հունվարի 1. Պոլսում (Խասգյուղ), Հովհաննես Թույսուզյանի և Հովհաննես Հովույանի սատարմամբ, իր գոյությունն է սկսում կրթալուսավորական «Ընթերցասիրաց ընկերությունը»: Այն իր առջև նպատակ էր դնում բոլոր միջոցներով զարկ տալ գրականությանն ու մշակույթին: 1860-ական թվականներին ընկերությունը դեռ գոյություն ուներ:

Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հ. Ա, Վիեննա, 1957, էջ 456:

Հունվարի սկիզբ. Փարիզում արևմտահայերեն հրատարակվում է Գրիգոր Կարապետյան Խապառաճյանի (իմա՛. Գրիգոր Խապառաճի Կարապետյան) «Թ. Կըռկիկյան և իր մանտալ (իմա՛. ավեղցփեղ-Ս.Շ.), ծուռքերան, թացվարտիկ, անօրենք և այլն թղթակիցներուն պատասխանի» ընդդիմախոսականը: Վերջինս պատասխան է իր «Ընծա,

հորդորանք միաբանության...» գրքի առթիվ ծայր առած թեր և դեմ քննադատության (տե՛ս 1856 թ.):

Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. № 185, վավ. № 110: «Մասիս», 1857, № 260 («Ազգային»):

Սկիզբ. Ապուշեի գյուղում (Ակնի գավառ, Արևել. Թուրքիա) Աբրահամ Պեկյանի և Արիստակես Տեր-Պողոսյանի սատարմամբ, իր գոյությունն է սկսում կրթական-մշակութային «Արշալույս բարենպաստակ ընկերությունը»: Այն գոյություն ունեցավ մինչև 1880-ական թվականները:

«Հանդես ամսօրյա», 1964, № 1-3 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Հունվարի առաջին կես. Պոլսում, Հովհաննես Պրուսացի Տեր-Կարապետյան Տերոյենցի (իմա՛. Չամուռճյան) խմբագրությամբ, արևմտահայերեն սկսում է հրատարակվել «Երևակ» կիսամյա պարբերականը: 1862 թ. հուլիսից մինչև 1863 թ. վերջը հրատարակվում է անկայուն պարբերականությամբ, իսկ 1864 թ. հունվարից վերածվում է ութօրյա հանդեսի: «Երևակը» դադարում է 1866 թ. դեկտեմբերին:

1855 թ. հունվարից Հովհաննես Տերոյենցը Պոլսում սկսում է հրատարակել «Ձոհալ» (իմա՛. «Երևակ») հայատառ թուրքերեն ամսագիրը: Չնայած նրան, որ 1856-ին «Ձոհալը» դառնում է երկշաբաթաթերթ և ընթերցողների ավելի մեծ քանակություն է հավաքում, տարվա վերջից խմբագիրը դադարեցնում է իր պարբերականը և լեզուն ու անվանումը փոխելով հայերենի, սկսում է հրատարակել նոր՝ «Երևակ» անվամբ: Չամուռճյանը «Երևակը» համարում էր «Ձոհալի» բնականոն շարունակությունը, բայց վերջինս նոր և ինքնուրույն պարբերականի սկիզբ է համարվում: «Երևակում» զետեղված ինչպես ինքնուրույն, այնպես էլ թարգմանական նյութերի գերակշիռ մասը ստորագրված չեն, բայց ելնելով այն փաստից, որ պարբերականն ունի «Տնօրինե և հորինե Հովհաննես Տերոյենց» նշումը, պետք է մակաբերել, որ նրանք պատկանում են Չամուռճյանի գրչին:

Հունվարի 5. «Եվրոպան» (№ 3), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ժան Լաֆոնտենի «Գանձը կորսունցընող ազահը» առակը:

Հետագայում Լաֆոնտենի առակների թարգմանությունը «Եվրոպայի» էջերում ընթացել է հետևյալ հաջորդականությամբ. «Հողե պտուկն ու երկաթե սանը» (№

5, հունվարի 19), «Ծերն ու տղաք» (№ 6, հունվարի 26), «Նապաստակին ականջները» (№ 7, փետրվարի 2), «Պոչը կտրած աղվեսը» (№ 8, փետրվարի 9), «Ձին ու գայլը» (№ 9, փետրվարի 16), «Ծննդական լեռը» (№ 11, մարտի 2), «Հողագործն ու իր տղաքը» (№ 16, ապրիլի 6), «Ոսկեղեն հավկիթ ածող հավը» (№ 17, ապրիլի 13) և այլն:

Հունվարի երկրորդ կես. «Երևակը» (№ 2), անգլերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել կղերապահպանողական պատմաբան ՌԻ-այզմենի «Պատմություն գիտությանց լեզվաց» ուսումնասիրությունը: Շարունակվում է մինչև 1858 թ. № 29 (մարտի առաջին կես):

Հունվարի 15. «Մեղուն» (№ 9) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Պանդուխտն ի պանդոկ մահու մահճին մեջ» վիպակը: Ավարտ՝ № 20 (հունիսի 30):

Հունվարի 22. Կարինում (Արևել. Թուրքիա) ծնվեց հայագետ, բանասեր, թատերագիր, թարգմանիչ (լատիներենից և իտալերենից՝ հայերեն) Աթանաս Տիրոյանը (սկզբում՝ Թիրոյան): Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1873 թ. հունիսի 8-ից, վախճ. 1926 թ. սեպտեմբերի 1-ին, Վիեննայում:

1883-1888 և 1906 թթ. խմբագրել է «Բազմավեպ» պարբերականը:

«Բազմավեպ», 1926, № 9 («Հանգիստ Աթանաս Տիրոյան Մխիթարյան վարդապետի»):

Հունվարի երկրորդ կես. «Բազմավեպը» (№ 2), Պոլսի գավառաբարբառով, հրատարակում է «Հնախույզ» կատակերգությունը: Թեև հեղինակը նշված չէ, բայց այն պատկանում է Գևորգ Հյուրմյուզյանի գրչին (տե՛ս **Ղազիկյան Ա.**, Հայկական նոր մատենագիտություն, Վենետիկ, 1912, էջ 1061):

Հունվարի 27. Քյաֆթառլու գյուղում (այժմ՝ ՀՍՍՀ, Արթիկի շրջան, Փանիկ գյուղ) ծնվեց պատմաբան, բանասեր, լրագրող (հայերեն, իտալերեն և ֆրանսերեն լեզուներով), խմբագիր Գաբրիել Նահապետյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1878 թ. դեկտեմբերի 25-ից, վախճ. 1939 թ. մայիսի 29-ին, Վենետիկում:

1919-1920 թթ. խմբագրել է «Բազմավեպ» ամսագիրը, որտեղ հանդես է եկել «Մեղու Շիրակա» կեղծանունով:

«Բազմավեպ», 1939, № 11-12 («Հանգիստ հոգվո Գաբրիել վարդապետի Նահապետյան»):

Հունվարի 31. «Մեղուն» (№ 10) արևմտահայերեն հրատարակում է «Հայաստան մայր» և Հովհ. Ազլազանյանի՝ իտալերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ «Ի ստորև կարծված կատու մը» պատմվածքները:

Փետրվարի 7. «Մասիսը» (№ 263) գրաբար հրատարակում է Դ. Մելիքյանի «Պատմութիւն սրբոյ Եղիշէ վարդապետի պատերազմին հայոց, թարգմանեալ երկասիրութեամբ պարոն Շանշեան ի ռուսաց լեզու...» գրախոսականը: Ավարտ՝ հաջորդ համարում: Հոդվածը թարգմանված է ռուսական «Кавказ» լրագրից:

Փետրվարի 9. «Եվրոպան» (№ 8), գերմաներեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Գուլիլեմոս (իմա՛. Վիլիելմ – Ս.Շ.) Տել» պատմվածքը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Փետրվարի 13. Վերին Ազուլիսում (այժմ՝ Նախիջևանի ԻԽՍՀ, Օրդուբաթի շրջան) ծնվեց գրական-մշակութային գործիչ, ականավոր հրապարակախոս, խմբագիր, թարգմանիչ (գերմաներենից՝ հայերեն) Ավետիք Մկրտումի Արասխանյանը: Վախճ. 1912 թ. դեկտեմբերի 3-ին, Ախալքալակում:

1889 թ. Թիֆլիսում հիմնադրել և մինչև 1901 թ. խմբագրել է «Մուրճ» ամսագիրը, որտեղ հանդես է եկել «Լուսինի», «Z» և այլ կեղծանուններով:

Արասխանյան Ա., Ինքնակենսագրություն, Թիֆլիս, 1912, 8 էջ: «Մշակ», 1912, № 270 («Ավետիք Արասխանյան») ... Սարինյան Ս.Ն., Ավետիք Արասխանյան, Երևան, 1980, 146 էջ: Մատենագիտություն «Մուրճ» ամսագրի, Երևան, 1977, էջ V-XX:

Փետրվարի 21. «Մասիսը» (№ 265) արևմտահայերեն հրատարակում է Տիգրան Յուսուֆյանի «Հայկական տեսարան ի Օրթագյուղ» գրախոսականը: Ավարտ՝ № 273 (ապրիլի 18):

Բնութագրված է Մկրտիչ Պեշիկթաշյանի մշակութային և գրական-թատերական գործունեությունը, ապա գրախոսված է նրա «Կոռնակ» ողբերգությունն ու դրա բեմադրությունը:

Փետրվարի 23. «Եվրոպան» (№ 10), գերմաներեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Շտրալի «Ո՞ր թռավ, ի՞նչ ըրավ» երգիծական բանաստեղծությունը: Նույն պարբերականի № 13-ում (մարտի 16) հրատարակվում է Շտրալի «Առաքինություն», իսկ № 17-ում (ապրիլի 13) «Մնաս բարով» բանաստեղծությունները:

Մարտի 1. Դիարբեքիրում (Արևել. Թուրքիա) հիմնվում է կրթական-մշակութային «Լուսավորչական ընկերությունը». Վերջինս «շուտով ունեցավ քառասուն անդամ, որք ... բացին մեծ դպրոց մը, որով երկու հարյուր տղաք սկսան ուսում առնել... երկու եկեղեցիի մեջ ալ երկու աղջկանց դպրոց բացվեցավ, ուր 70 և 50 աղջիկներ կկրթվին»:

Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հ. Բ, Վիեննա, 1963, էջ 443-444:

Մարտի 1. Վարազում (Վանից հյուսիս-արևելք), Մկրտիչ Խրիմյանի նախաձեռնությամբ, իր գոյությունն է սկսում «Ժառանգավորաց վարժարանը» (որոշ ժամանակ՝ «Հայրիկյան ժառանգավորաց վարժարան»): Այն չորսդասյա էր (ծաղկուն ժամանակ՝ վեցդասյա), ուներ 43 աշակերտ (ծաղկուն ժամանակ՝ 100), չորս ուսուցիչ և ավանդվում էր հայերեն, կրոն, եկեղեցու պատմություն, թվաբանություն, աշխարհագրություն, հետագայում ավելացվեց նաև ֆրանսերեն, թուրքերեն, երգեցողություն: Նույն թվականին վարժարանը, Գարեգին Սրվանձտյանցի վերատեսչությամբ, ունենում է իր տպարանը, որը գոյատևում է մինչև 1862 թ.: «Ժառանգավորաց վարժարանը» 1910 թ. հունիսի 20-ին հանդիսավորաբար նշեց իր գոյության հիսնամյակը (քաղաքական աննպաստ դեպքերի պատճառով հորեյանը նշվեց որոշ ուշացումով) և 1914 թ. ապրիլին դադարեց գոյություն ունենալ:

Բաֆֆի, Արծիվ Վասպուրականի, Թիֆլիս, 1893, 134 էջ: «Մշակ», 1908, № 250 («Հայ ժողովրդին»), 1910, № 90 («Վարագի վանքի հորեյանի առթիվ»), № 116 («Վարագի 50-ամյա հորեյանի շուրջը») ... «Հանդես ամսօրյա», 1908, № 12 («Վարագա դպրոցին 50-ամյակը»), 1909, № 4 («Վարագա Հայրիկյան վարժարանը»):

Վարժարանի մասին մեզ որոշ տեղեկություններ են հաղորդել Մարտիրոս Վեսպերը, Մայրանուշ և Հարություն Դերձակյանները, ում հայտնում ենք մեր շնորհակալությունը:

Մարտի 2. «Եվրոպան» (№ 11), գերմաներեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Գայլասարի մատուռը (հին գերմանական ավանդություն մը)» վիպակը: Ավարտ՝ № 17 (ապրիլի 13):

Մարտի 7. «Եվրոպան» (№ 12) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Իսլամ» ուսումնասիրությունը: Ավարտ՝ № 18 (ապրիլի 20):

Մարտի 7. «Մասիսը» (№ 267) արևմտահայերեն հրատարակում է մի հոդված, որտեղ վերլուծված է Մկրտիչ Պեշիկթաշյանի «Կեսար» ողբերգությունն ու նրա բեմադրությունը: Հոդվածն ունի ** ստորագրությունը և գրվել է նույն թվականի փետրվարի 1-ին:

Մարտի 8. «Արշալույս արարատյանը» (№ 540) արևմտահայերեն հրատարակում է Մկրտիչ Ճանըմյանի «Հայկական տեսարանին վերջին հանդեսը» գրախոսականը և «Քանի մը խոսք հայկական թատրոնին վրայոք, որ ի Կոստանդնուպոլիս» (հեղ. **) թատերագիտական հոդվածը: Թե գրախոսականում, և թե այստեղ քննության են առնված Մկրտիչ Պեշիկթաշյանի «Կոռնակ» ողբերգության և «Սավուղ», «Մահ Կեսարու» գործերի թարգմանությունների ու նրանց բեմադրությունների հետ առնչվող հարցերը:

Մարտի առաջին կես. «Բազմավեպը» (№ 5), Ղևոնդ Ալիշանի՝ անգլերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Ն. Ուիլյամսի «Աբիստղոմ» բանաստեղծությունը:

Մարտի 15. «Մեղուն» (№ 13) հրատարակում է Հարություն Սվաճյանի «Վերջին թվով ծանուցված նամակը և նրա պատասխանը» հրապարակախոսական հոդվածը:

Մարտի 20. Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական) ծնվեց գուսան Շերամը (Գրիգոր Կարապետի Տայյան): ՍՍՀՄ Գրողների միության անդամ 1936 թ.: Վախճ. 1938 թ. հուլիսի 3-ին, Երևանում:

«Բազմավեպ», 1930, № 7-8... («Աշուղ Գրիգոր Տայյան (Շերամ)»): «Գրական թերթ», 1948, № 25 («Շերամ. մահվան տասնամյակի առթիվ»): «Գրական տեղեկատու», կազմեց Հ.Խաչատրյանը, Երևան, 1975, էջ 554-555:

Մարտի երկրորդ կես. «Բազմավեպը» (№ 6) ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Աննա-Մարիամի «Աքսորյալն հոգի» վիպակը: Որոշ ընդհատումներով հրատարակությունը շարունակվում է մինչև տարվա վերջ:

Մարտ. «Մաայաց աղավնին» (№ 3) ֆրանսերեն թարգմանությամբ և ֆրանսերեն-հայերեն զուգահեռ տեքստերով, վերահրատարակում է Ռաֆայել Պատկանյանի «Արաքսի արտասուքը» բանաստեղծությունը:

Բանաստեղծության ֆրանսերեն թարգմանությունը կատարել է հայագետ Էդ. Դյուլյորիեն, ով դրվատանքով է արտահայտվել դրա մասին:

Մարտի 31. «Մեղուն» (№ 14) Հովհաննես Հովոյանցի՝ ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Ալ. Դյումայի «Գաբրիել Լամբեռ» վիպակը: Ավարտ՝ № 22 (հուլիսի 31):

Ապրիլի 5. «Արշալույս արարատյանը» (№ 542) գրաբար հրատարակում է Մարգար Հովհաննեսի Վանանդեցու «Ողբերգությունն ի սգալի փոխումն յայստեացս Ներսիսի Ե...» եղերերգությունը:

Ապրիլի 17. Շուշիում (Լեռնային Ղարաբաղ) ծնվեց երգիծաբան, լրագրող (մասնագիտությամբ գյուղատնտես) Տմբլաչի Խաչանը (Կոստանտին Կարապետի Մելիք-Շահնազարյան): ՍՍՀՄ գրողների միության անդամ 1934-ից: Վախճ. 1940 թ. հուլիսի 10-ին Երևանում:

Ամերիկահայ հանրագիտակ (տարեգիրք), Բոստոն, 1925, էջ 165-170: «Գրական թերթ», 1940, № 20 («Կոստանտին Մելիք-Շահնազարյան»): **Հայ նոր գրականության պատմություն**, հ. 4, Երևան, 1972, էջ 572-576: **Խաչատրյան Հ.**, Գրական տեղեկատու, Երևան, 1981, էջ 463:

Ապրիլի երկրորդ կես. «Բազմավեպը» (№ 8) ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ժան Լաֆոնտենի «Գայլն ու գառը» առակը: Հրատարակված է նաև Խորեն Գալֆայանի «Անզոջութին» գրաբար բանաստեղծությունը:

Մայիսի 2. «Մասիսը» (№ 275) հրատարակում է Մկրտիչ վարդապետ Խրիմյանի «Նուէր նախահայրեաց Արծուոյն Վասպուրականի» գրաբար բանաստեղծությունը:

Մայիս. Վանում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, լրագրող, հուշագիր Համբարձում Հարությունի Երամյանը: Վախճ. 1929 թ. դեկտեմբերի 20-ին, Ալեքսանդրիայում (Եգիպտոս):

Երամյան Հ., Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Ա, Ալեքսանդրիա, 1929, 502 էջ, հ. Բ, անդ. ն.թ., 542 էջ: «Հայրենիք (ամսագիր)», Բոստոն, 1930, № 4, էջ 176: «Հայաստանի կոչնակ», 1930, № 4 («Համբարձում Երամյանի մահը»):

Մայիսի 9. «Մասիսը» (№ 276), Կարապետ Ութուջյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն համառոտ թարգմանությամբ, հրատարակում է Վիկտոր Լանգլուայի «Հայաստանի բռնած տեղը աշխարհի պատմության մեջը» հոդվածը: Ավարտ՝ № 278 (մայիսի 23):

Մայիս. «Մասյաց աղավնին» (№ 5) գրաբար հրատարակում է Խորեն Գալֆայանի «Առ քոյրն իմ սիրեցեալ Ա.Հ.Վարդուհի» բանաստեղծությունը:

Մայիսի 15. «Մեղուն» (№ 17) արևմտահայերեն հրատարակում է Կ.Ս. Քոխատոֆի «Հարգո հրատարակիչ «Մեղու» պատվական հանդեսին» հոդվածը: Դրական գնահատելով վերջին շրջանում հրատարակված հայ հեղինակներից մի քանիսի ժողովածուները՝

Մայաթ-Նովա, Սեյադ, Գամառ-Քաթիպա, Ազբար Ադամ), հողվածագիրը հրատարակության է ներկայացրել Գաբրիել Պատկանյանի «Արամ-երգ» պոեմից մի հատված:

Մայիսի երկրորդ կես. «Բազմավեպը» (№ 10), Արսեն Բագրատունու՝ անգլերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է մի հատված Ջոն Միլտոնի «Դրախտ Կորուսյալի» հինգերորդ գրքից:

Մայիսի 30. «Մասիսը» (№ 279) արտատպում է Ստեփաննոս Նազարյանցի «Հանդես նոր հայախոսության» աշխատության առաջաբանը (ավարտ՝ հաջորդ համարում) և այդ առիթով տալիս է նրա գործունեության համառոտ բնութագրությունը:

Մայիսի 31. «Մեղուն» (№ 18) հրատարակում է Գևորգ Միրիմանյանի «Հայոց աղջիկներ» բանաստեղծությունը:

Հունիսի 10. Նոր Բայազետում (այժմ՝ Կամո, ՀՍՍՀ) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, բառարանագիր, խմբագիր (մասնագիտությամբ՝ բժիշկ), արձակագիր, գիտության վաստակավոր գործիչ (1930 թ.) Վահան Մարգարի Արծրունին: Վախճ. 1947 թ. հուլիսի 29-ին, Երևանում:

1903 թ. Թիֆլիսում հիմնադրել և մինչև 1905 թ. խմբագրել է «Առողջապահիկ թերթ» կիսամյա հանդեսը: Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Վահունի», «Ֆելիքս» կեղծանուններով:

Փարսադանյան Ռ., Հայ բժշկության պատմությունից, Երևան, 1958, էջ 198-256: «Առողջապահություն», 1967, № 2 («Ականավոր բժիշկն ու գիտնականը»):

Հունիսի առաջին կես. «Բազմավեպը» (№ 11) իտալերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ֆրանչեսկա Պետրարկայի «Լաւրա յերկինս», «Տեսիլ», «Խոնարհութիւն առաջի աստուծոյ» և «Զիղջ» սոնետները: Սկզբում տրված է Պետրարկայի կյանքի ու գործունեության համառոտ բնութագրությունը:

Հունիսի երկրորդ կես. «Բազմավեպը» (№ 12) գերմաներեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Հայնիխ Հայնեի «Անմխիթարքն» և «Բարեաւ մնայք» բանաստեղծությունները:

Հունիսի 15. «Մեղուն» (№ 19) արևմտահայերեն հրատարակում է Նազարեթ Ասլանյանի «Թե հայոց փառաց դարձավ առավոտ» և «Վարդ ու սոխակ» բանաստեղծությունները:

Հունիսի 27. «Մասիսը» (№ 283) արևմտահայերեն հրատարակում է «Ազգային միության և կրթության վրա քանի մը խորհրդածություններ» հոդվածը (ունի *** ստորագրությունը): Ավարտ՝ հաջորդ համարում:

Հուլիսի առաջին կես. «Բազմավեպը» (№ 13) ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ժան Լաֆոնտենի «Գայլ և շուն» առակը և գրաբար չափածո թարգմանությամբ՝ Վիկտոր Հյուգոյի «Գոհություն» բանաստեղծությունը:

Հուլիսի 14. Նոր Ջուդայում (Պարսկաստան) ծնվեց լրագրող, թարգմանիչ (անգլերենից՝ հայերեն), արձակագիր (մասնագիտությամբ՝ բժիշկ) Մինաս Բարսեղյանը: Վախճ. 1922 թ. հուլիսի 19-ին, Նիցցայում (Հար. Ֆրանսիա):

«Պազիլ խան» ստորագրությամբ հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Թեղիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1923, էջ 416-417:

Հուլիսի 15. «Մեղուն» (№ 21) աշխարհաբար հրատարակում է «Աղասիի երգը» բանաստեղծությունը, հանված Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» պատմավեպից:

Նույն համարում. Ծանուցելով Սրապիոն Հեքիմյանի «Տաղք, քերթուածք և թատրերգությունք» ժողովածվի հրատարակությունը, գետեղված է նրա «Առաջին իմ երգ սիրոյ» գրաբար բանաստեղծությունը:

Հուլիսի երկրորդ կես. «Բազմավեպը» (№ 14), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ժան Լաֆոնտենի «Երինջ և այծ և ոչխար» առակը:

Հուլիս. «Մասյաց աղավնին» (№ 7) հրատարակում է Ռափայել Պատկանյանի «Ի հրաժեշտ Ղահրամանյան պարոնին» և «Ի հրաժեշտ Իզմիրյանց պարոնին» բանաստեղծությունները (տե՛ս՝ **Ռ. Պատկանյան,** Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1963, էջ 70-72):

Հուլիս. «Մեղուն» (№ 22) արևելահայերեն հրատարակում է Սմբատ Շահազիզի «Հայոց աղջիկ» բանաստեղծությունը և առանց ստորագրության՝ «Որդիական սեր» պատմվածքը: Ավարտ՝ № 24 (օգոստոսի 31):

Օգոստոսի 8. «Մասիսը» (№ 289), Կարապետ ՌԻթուջյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Նամակ Պոլսո շան մը, առ Փարիզի շուն մը» երգիծական պատմվածքը (ունի «Իթողլու» (ի՛մա. Շանորդի – Ս.Շ.) ստորագրությունը): Ավարտ՝ հաջորդ համարում:

Օգոստոս. «Մասյաց աղավնին» (№ 8) գրաբար հրատարակում է Խորեն Գալֆայանի «Յաւուր երկնապարգէւ ծննդոց սիրայնոց հօր իմոյ ծնելասէր սրտի դոյզն ինչ թելադրութիւնք» բանաստեղծությունը:

Հետագայում Գալֆայանի ստեղծագործությունները հրատարակվել են հետևյալ հաջորդականությամբ. «Օրհնեալ, որ սիրեն ըզիեզ Հայաստան» (պոեմ, 1858, № 1, հունվար): «Առ քոյրն իմ Վարդուհի-Աննիկ», «Աստղն երեկորին» (№ 2, փետրվար): «Առ ազնուագարմ և մեծապատիւ Առաքել Էֆենտի Տատյան», «Լուսին», «Անձուկք հայրենեաց» (№ 4, ապրիլ, ունեն «Խորխոռունի» կեղծանունը): «Ո՛հ, հիշեցեք զՀայաստան» (№ 5, մայիս, ստոր. «Խորխոռունի»): «Աղօթք վասն հայրենեաց» (№ 6, հունիս): «Հայկազուն մօր օրորք, առ մարս Հայկազանց» (№ 7, հուլիս): «Վահան Մամիկոնեան» (№ 9, սեպտեմբեր, ունի «Խորխոռունի» կեղծանունը): «Աստղն առաւօտու» (№ 10, հոկտեմբեր, ունի «Խորխոռունի» կեղծանունը): «Ազգատեացք առ որդիս Մերուժանայ» (№ 11, նոյեմբեր): «Ի մեծահանդէս աւուր օծութեան... Մատթէոսի սրբազնակատար քահանայապետի» («Մասյաց աղավնի», 1860, № 3, մարտ): «Յետին ողջոյնք տուեալ սրբոյ աղօթատան Հայկազեան վարժարանին» («Արծվի Վասպուրականի», 1860, ապրիլ, № 4): «Լոյս, պարոն, նահատակ Թէոդոսիոյ» («Մասյաց աղավնի», 1860, № 6, հունիս): «Աստղ բևեռական» (№ 8, օգոստոս) և այլն:

Օգոստոսի 31. «Մեղուն» (№ 24) հրատարակում է Հարություն Սվաճյանի «Կուսակցական ոգին» հրապարակախոսական հոդվածը:

Սեպտեմբերի 7. Պոլսում, Արմենակ Ճիզմեճյանի (ի՛մա. Արմենակ Հայկունի) խմբագրությամբ, արևմտահայերեն սկսում է հրատարակվել «Մուգայք Մասյաց» թատերական շաբաթաթերթը: Իր գոյությունը շարունակում է մինչև 1858 թ. հունվարը:

Այս համարից. Արմենակ Ճիզմեճյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակվել «Հերսիլիա» ողբերգությունը: Ավարտ՝ № 6 (նոյեմբերի 2):

Սեպտեմբերի 9. Պոլսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, դրամատուրգ, մանկագիր, խմբագիր Վահրամ Հարությունի Մարգարյանը: Վախճ. 1950 թ.:

1910 թ. Պոլսում հիմնել և խմբագրել է «Նոր բեմ» շաբաթաթերթը: Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Պահլավունի» կեղծանունով:

Թեոդիկ, Տիպ ու տատ, Պոլիս, 1912, էջ 101-102:

Սեպտեմբերի առաջին կես. «Բազմավեպը» (№ 17), գերմաներեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Լյուդվիգ Ուլանդի «Անէծք գուսանի» բանաստեղծությունը: Արևմտահայերեն սկսում է հրատարակվել նաև «Սկանդինավիո հին բանաստեղծությունը» հոդվածը: Ավարտ՝ № 20 (հոկտեմբերի երկրորդ կես):

Սեպտեմբերի 14. Իստ Օրեյնջում (Նյու Ջերսիի նահանգ, ԱՄՆ) ծնվեց ամերիկացի լրագրող, մշակութային գործիչ, թարգմանիչ (հայերենից՝ անգլերեն) Ալիս Սթոուն Բլեքվելը (Alice Stone Blackwell): Վախճ. 1950 թ. մարտի 15-ին, Քեմբրիջում (ԱՄՆ, Մասսաչուսեթս նահանգ):

«Коммунист», 1969, №124 («Друг и переводчик армянской поэзии»):

Հոկտեմբերի 3. Մոնախում (Վրացական ՍՍՀ) ծնվեց ականավոր նկարիչ, արձակագիր Գևորգ Չաքարի Բաշինջաղյանը: Վախճ. 1925 թ. հոկտեմբերի 4-ին, Թիֆլիսում:

Հարությունյան Շ., Սովետական Հայաստանը 40 տարում (Տարեգրություն), Երևան, 1960, էջ 142:

Հոկտեմբեր. Ռուսչուկում (նաև՝ Ռուսե. Բուլղարիա) ծնվեց եկեղեցական գործիչ, մատենագիր, բանաստեղծ Կարապետ Կարապետի Պոյաճյանը: Վախճ. 1911 թ. դեկտեմբերի 10-ին, Պոլսում:

Գաղութահայ տարեգիրք (խմբ. Մ. Պոտուրյան), Բուխարեստ, 1929, էջ 241-242:

Հոկտեմբերի 12. «Մուգայք Մասյաց» շաբաթաթերթը (№ 3) սկսում է հրատարակել Արմենակ Հայկունու «Տեղեկություն թատրոնական» ուսումնասիրությունը: Շարունակվում է մինչև № 10-ը և անավարտ է մնում:

Հոկտեմբերի առաջին կես. «Բազմավեպը» (№ 19), Ղևոնդ Ալիշանի՝ անգլերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ուիլյամ Բրայանդի «Առ աստղն հիւսիսոյ» բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 25. Ախալցխայում (Վրացական ՄՍՀ) ծնվեց լեզվաբան, բառարանագիր, պատմաբան-բանասեր, քննական բնագրերի հրատարակիչ, թարգմանիչ (անգլերենից, գերմաներենից՝ հայերեն), Հայկական ՄՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ (1943 թ.) Ստեփաննոս Սարգսի Մալխասյանը: Վախճ. 1947 թ. հունիսի 21-ին, Երևանում:

Ստեփան Սարգսի Մալխասյանց (Մատենագիտություն, կազմ. Ռ. Բաբաջանյան) Երևան, 1962, 79 էջ:

Հոկտեմբերի 26. «Եվրոպան» (№ 45), Եղիշե Գաֆթանճյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Եղիսաբեթ, խաչակրաց ժամանակն վեպ մը» գործը: Ավարտ՝ № 52 (դեկտեմբերի 14):

Նոյեմբերի 9. «Մուզայք Մասյաց» շաբաթաթերթը (№ 7), Արմենակ Հայկունու (Արմենակ Ճիզմեճյան)՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Կատարինե» ողբերգությունը: Ավարտ՝ № 13 (դեկտեմբերի 21):

Նոյեմբերի առաջին կես. «Բազմավեպը» (№ 21), Խորեն Գալֆայանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալֆոնսոս Լամարթինի «Բանաստեղծություն Գեթսմանի, կամ մահ Յուլիայ» ստեղծագործությունը:

Նոյեմբերի 16. «Մուզայք Մասյաց» շաբաթաթերթը (№ 8), արևմտահայերեն հրատարակում է «Օտար երկրի մը մեջ անցուցած առաջին գիշերս» և «Ինչ եղավ իմ նազելվույս» բանաստեղծությունները: Այդ երկունս էլ ուղարկված են Բուլղարիայից:

Դեկտեմբերի 7. Կարինում (Արևել. Թուրքիա) ծնվեց աստվածաբան-բանասեր, բառարանագիր, թարգմանիչ (իտալերենից՝ հայերեն) Անանիա Գոնտաքճյանը (նաև՝ Ղոնտախճյան): Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1883 թ. օգոստոսի 15-ից: Վախճ. 1925 թ. հուլիսի 7-ին, Վենետիկում:

Մխիթարյան հոբելյան, Վենետիկ, 1901, էջ 226: Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1926, էջ 731:

Դեկտեմբերի 7. «Մուզայք Մասյաց» շաբաթաթերթը (№ 11), արևմտահայերեն հրատարակում է «Ողջույն հրաժարական», «Պանդիստություն» և «Ձեյթունցին իր զինյալ սիրուհվույն» բանաստեղծությունները (վերջինս ունի *** ստորագրությունը):

Դեկտեմբերի 13. «Արշալույս արարատյանը» (№ 560) գրաքար հրատարակում է Մսեր Մսերյանի «Օթեւանք դիւցազանց հայոց» պոեմը (ավարտ՝ 1858 թ. № 565, փետրվարի 21) և «Արտասուք յիշեալ քերթողի» բանաստեղծությունը:

Դեկտեմբերի երկրորդ կես. «Բազմավեպը» (№ 24) արևմտահայերեն հրատարակում է «Գոթաց գրականությունը» հոդվածը:

-Պոլսում ծնվեց գեղանկարիչ, լրագրող Սիմոն Հակոբյանը: Վախճ. 1920 թ. մայիսի 16-ին, իր ծննդավայրում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1912, էջ 247-248, 1922, էջ 210:

-Պոլսում ծնվեց թատերական-մշակութային գործիչ, դերասան Գևորգ Հոլասը: Վախճ. 1907 թ. մայիսի 9-ին, իր ծննդավայրում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1908, էջ 257, 1913, էջ 263:

-Պոլսում ծնվեց լրագրող, կրթական-մշակութային գործիչ Հովսեփ Բարդուղիմեոսի Յուսուֆյանը: Վախճ. 1913 թ. օգոստոսի 12-ին:

«Արա» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Բյուզանդիոն», 1913, № 5120: **Թեոդիկ**, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1914, էջ 397-398: **Ասատուր Հր.**, Դիմաստվերներ, Պոլիս, էջ 236, 285:

-Պոլսում ծնվեց լրագրող, արձակագիր Մեսրոպ Ամատունին: Վախճ. 1939 թ. Այթոս քաղաքում (Բուլղարիա):

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 124-125:

-Պոլսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, լրագրող Գրիգոր Շահբազը: Վախճ. 1921 թ. հոկտեմբերի 16-ին, իր ծննդավայրում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1922, էջ 417:

-Մոսկվայում ծնվեց հնագետ-բանասեր, լրագրող Սիմեոն Սիմեոնի Աբամելեք-Լազարևը (Աբամելեք-Լազարյան): Վախճ. 1916 թ. սեպտեմբերի 19-ին, Կիսլովոդսկում, թաղում՝ Պետրոգրադում:

Ստեփանյան Գ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 7:

«Պատմա-բանասիրական հանդես», 1982, («С.С. Абамяк-Лазарев»):

-Երևանում ծնվեց լրագրող (հայերեն և ռուսերեն լեզուներով), գրական-մշակութային գործիչ, խմբագիր Սիմեոն Ստեփանոսի Գուլամիրյանը: Վախճ. 1899 թ. հոկտեմբերի 12-ին:

1887 թ. Պետերբուրգում հիմնադրել և մինչև 1898 թ. խմբագրել է «Արաքս» գրական-գեղարվեստական հանդեսը (վեցամսյա):

«Մշակ», 1899, № 191 («Սիմեոն Գուլամիրյանց»), «Հանդես ամսօրյա», 1899, № 12 («Սիմեոն Գուլամիրյանց»): Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի, Պոլիս, 1903, էջ 105:

-Օրբագարում (Ղրիմ) ծնվեց գեղանկարիչ, գրական-մշակութային գործիչ Մանուկ Մահտեսյանը: Վախճ. 1908 թ. նոյեմբերի 6-ին, Սիմֆերոպոլում:

«Մշակ», 1908, № 248 («Սիմֆերոպոլից ... հեռագրում են», «Մանուկ Մահտեսյան»):

-Չենկիլերում (Պրուսայի շրջան, Թուրքիա) ծնվեց դերասան, կրթական-թատերական գործիչ, թարգմանիչ (թուրքերենից՝ հայերեն) Հարություն Խաչիկի Ալիքսանյանը: Վախճ. 1918 թ. հունվարի 1-ին, Պոլսում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1914, էջ 264-271, 1926, էջ 413-430:

-Ներքին Ագուլիսում, Մկրտիչ Զարգարյանցի և Պողոս Աղամալյանցի սատարմամբ, Հակոբ քահանա Տեր-Անդրեասյանցի վերատեսչությամբ, սկսում է գործել Ներքին Ագուլիսի հոգևոր դպրոցը: Ավանդվում էին հայերեն և ռուսերեն լեզուներ, կրոն, ազգային պատմություն, իսկ 1866 թվականից ավելացվեց նաև ֆրանսերեն լեզու: Ներքին Ագուլիսի հոգևոր դպրոցը 1868 թ. սեպտեմբերին դադարեց գոյություն ունենալ:

«Մեղու Հայաստանի», 1864, № 42 («Ազգային»): 1867, № 13 («Նամակ»): 1869, № 12 («Ներքին Ագուլիսի ուսումնարան»):

-Վենետիկում, Վարդան Շիշմանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Պողոս Պիղոպեի (Պաուլ Բիտոբե) «Հովսեփ գեղեցիկ» վիպասանությունը: 259 էջ:

Նույնը որոշ վերամշակումներով, 1867 թ., 271 էջ:

-Վենետիկում արևմտահայերեն հրատարակվում է Ռափայել Թրյանցի «Տարեգիրք ժամանակագրության, ի պետս ազգային վարժարանաց» աշխատությունը: 46 էջ:

-Վենետիկում գրաբար հրատարակվում է Ղևոնդ Ալիշանի չափածո ստեղծագործությունների ժողովածվի («Նուագք») **Ա. հատորը** («Մանկունի»), 229 էջ: Բ. տիպ, 1881, 171 էջ:

Բ հատորը («Մաղթունի», «Խոհունի», «Բնունի»), 1857, 267 էջ: Բ. տիպ, 1885, 258 էջ:

Գ հատորը («Հայրունի»), անդ, 1858, 298 էջ: Բ. տիպ, 1867, 357 էջ:

Դ հատորը («Տերունի»), անդ, 1858, 286 էջ: Բ. տիպ, 1886, 291 էջ:

Ե հատորը («Տխրունի»), անդ, 1858, 236 էջ: Բ. տիպ, 1886, 244 էջ:

Երկրորդ հրատարակության պատրաստելով իր «Նուագք»-ի հինգհատորյակը, Ալիշանը գրեթե բոլոր գործերում կատարել է լեզվա-ոճական բնույթի զգալի մշակումներ, իսկ «Երգք Նահապետի» շարքում ավելացրել է «Վերջին երգ վիրավոր բամբուռահարին» և «Հայ հանճար» բանաստեղծությունները:

-Վենետիկում, անգլերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է ՌԻայզմենի «Փաբիոլա կամ ստորերկրյա գերեզմանաց եկեղեցի» վեպը: Թարգմանությունը կատարել են Ռափայելյան վարժարանի չորրորդ դասարանի աշակերտները:

-Վենետիկում Արսեն Բագրատունու խմբագրությամբ, գրաբար հրատարակվում է «Սկզբունք ուղիղ խորհելոյ և բարուք կելոյ» աշխատությունը: 144 էջ:

-Վենետիկում արևմտահայերեն հրատարակվում է Մանվել Քաջունու «Աշխարհագրություն հին և նոր Հայաստանյայց» աշխատությունը: 298 էջ:

-Վիեննայում, իտալերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Սոավյեի պատմվածքների ժողովածուն «Փրանցիսկոս Սոավյեին բարոյական պատմությունները» խորագրով: («Կրթական և զբոսալի տետրակներ», հատ. ԼԷ):

-Վիեննայում, Եփրեմ Չազրճյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Նանդուգեղցի Արտուր Կորտոն Բիմին պատահարները» վիպակը : («Կրթական և զբոսալի տետրակներ», հատ. ԼԵ): 93 էջ:

Հատվածաբար հրատարակվում էր «Եվրոպայում» նույն թվականի օգոստոսի 10-ից (№ 34) մինչև հոկտեմբերի 26 (№ 45):

-Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Գրիգորիա Տոնիկյանի «Գուգ (իմա՛. Ջեմս Կուկ – Ս.Շ.) նավապետին վարուցն և իր՝ աշխարհքիս բոլորտիքն ըրած երեք ճամբորդությանց պատմությունը» գործը: («Կրթական և զբոսալի տետրակներ», հատ. ԼԶ): 100 էջ:

Հատվածաբար հրատարակվում էր «Եվրոպայում» նույն թվականի ապրիլի 27-ից (№ 19) մինչև օգոստոսի 10 (№ 34):

-Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Պողոս Հովնանյանի «Մարդկային լեզուին սկզբան, հանգամանաց, միության ու բաժանման և ազգային լեզվաց վրա քննական տեսություն մը» աշխատությունը: 138 էջ:

Հատվածաբար հրատարակվում էր «Եվրոպայում», 1856 թ. սեպտեմբերի 15-ից (№ 39) մինչև դեկտեմբերի 15 (№ 52), որտեղ, սակայն, ունի +* ստորագրությունը: Քանի որ գրքի առանձին հրատարակության վրա արդեն նշված է հեղինակի ով լինելը, ուրեմն բացահայտվում է «Եվրոպայում» եղած ստորագրությունը:

-Փարիզում, Աստվածատուր Ջունդի՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Հայեր» գրքուկը: 51 էջ:

-Փարիզում արևմտահայերեն հրատարակվում է Գաբրիել Այվազովսկու «Ուրվագիծ ոգվո և ընթացից Մխիթարյան միաբանության Վենետկո» աշխատությունը: 160 էջ:

Նույնը Պոլսում, 1875 թ., 107 էջ, Թեոդոսիայում, 1876 թ., 107 էջ, ամեն անգամ որոշ ուղղումներով ու լրացումներով:

-Փարիզում գրաբար հրատարակվում է Ղևոնդ Երեցի (նաև՝ Ղևոնդ պատմիչ) «Արշավանք արաբաց ի հայս» աշխատությունը: («Շար հայ պատմագրաց», հատ. Ա): Բնագրագիտական աշխատանքները, գրաբար առաջաբանն ու ծանոթագրությունները Կարապետ վարդապետ Շահնագարյանի: 240 էջ:

-Մոսկվայում աշխարհաբար հրատարակվում է Ստեփաննոս Նազարյանցի՝ «Հանդես նոր հայախոսության» աշխատության Ա մասը: 503 էջ:

Բ մաս, նույն թվականին, 504 էջ:

-Մոսկվայում գրաքար հրատարակվում է Սերովբե Պատկանյանի չափածո ստեղծագործությունների ժողովածուն, «Երգք Սերովբե վարժապետի Պատկանեան» խորագրով: Այն հրատարակության է պատրաստել Ավետիք Խազեզյանը: 92 էջ:

-Մոսկվայում, Միքայել Նալբանդյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած աշխարհաքար թարգմանությամբ, հրատարակվում է Էոժեն Սյուի «Թափառական հրեա» վիպասանության առաջին հատորը: 382 էջ: Հետագա հատորները չեն հրատարակվել: Թարգմանության սկզբում (1-98), «Հիսուսյանք» խորագրի ներքո, Նալբանդյանը զետեղել է իր ուսումնասիրությունը, նվիրված Հիսուսյան (իմա՛. Ճիզվիտական) կարգին:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Աբել Մխիթարյանի «Վեպ գաղթականության հայոց Տրապիզոնու» աշխատությունը: 163 էջ:

-Պոլսում գրաքար հրատարակվում է Սրապիոն Հեքիմյանի չափածո ստեղծագործությունների ժողովածուն «Տաղք, քերթուածք և թատրերգութիւնք» խորագրով: 527 էջ:

-Շամախիում, Մովսես Ջոհրայանի՝ անգլերեն բնագրից կատարած գրաքար չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Ջորջ Բայրոնի «Շիլիոնյան կալանավոր» պոեմը: 24 էջ:

Գիրքն ունի «երկրորդ տիպ» նշումը: Թարգմանության առաջին հրատարակությունը զետեղված է «Պարապո ժամք» ժողովածվի առաջին մասում (տե՛ս՝ 1856 թ.: Տե՛ս նաև. **Դավթյան Հ.**, Հայ գիրքը 1801-1850 թվականներին, Երևան, 1967, էջ 224):

-Թիֆլիսում գրաքար հրատարակվում է «Պատմութիւնք և պատճառք վերադարձի երից վարդապետացս հայոց Սարգսի, Գաբրիելի և Ամբրոսեայ ընդ հովանեաւ Լուսաւորչական սուրբ աթոռոյ Հայաստանեայց եկեղեցոյ» գրքույկը: 48 էջ: Վերահրատարակվել է նույն թվականին Հակոբ Կարենյանի սատարմամբ ու առաջաբանով:

-Պետերբուրգում Գամառ Քաթիպայի (իմա՛. Ռափայել Պատկանյան)՝ ֆրանսերեն համառոտ օրինակից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Դանիել Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզոյի պատմությունը» վեպը: 187 էջ: Գիրքը նկարագարդել է թարգմանչի ավագ եղբայր Հովհաննես Պատկանյանը:

-Զմյուռնիայում, Սարգիս Գասպարյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ջոնաթան Սվիֆտի «Ճամբորդութիւնք Կուլիվերի ի զանազան հեռակա ազգս աշխարհի» վեպը: 643 էջ: Սկզբում (էջ Է-ԻԳ) թարգմանիչը տվել է Սվիֆտի համառոտ կենսագրությունն ու նրա ստեղծագործության բնութագրությունը «Կենսագրական տեղեկություն Հովնաթան Սվիֆտա» խորագրի ներքո:

-Երուսաղեմում գրաբար հրատարակվում է Մխիթար Սկևռացու «Պատասխանիք յաղագս համապատուութեան երկոտասան առաքելոց» աշխատությունը: Բնագիրը հրատարակության է պատրաստել Անտոն-Մադաթիա Գարագաշյանը: 70 էջ:

Նույնը՝ 1860 թ. անփոփոխ և 1865 թ.՝ որոշ լրացումներով ու հավելումներով: 88 էջ:

1 8 5 8

Հունվար. Մոսկվայում, Ստեփաննոս Նազարյանցի խմբագրությամբ, աշխարհաբար սկսում է հրատարակվել «Հյուսիսափայլ (օրագիր ընդհանուր ազգային լուսավորության և դաստիարակության)» ամսագիրը: Հրատարակության ազդագիրը եղել է 1857 թ. մայիսի 30-ին, Գրաքննչական կոմիտեն առաջին համարը հրատարակության է թույլատրել նույն թվականի դեկտեմբերին: «Հյուսիսափայլը» իր գոյությունը շարունակեց մինչև 1864 թ. վերջը, 1863 թ. հունվարից մինչև դեկտեմբերը այն չի հրատարակվել:

Հունվարի 1. «Մեղու Հայաստանին» (№ 1) արևելահայերեն հրատարակում է Գևորգ Բարխուդարյանցի «Առակ (հավատարմություն կամ գող և շուն)», «Օրորոցի երգ», «Առ Հայաստան», «Փոթորիկ» բանաստեղծությունները և Իսահակ Սահառունու «Հանելուկը»:

Վերջինիս ստեղծագործությունները հետագայում հրատարակվել են հետևյալ հաջորդականությամբ. «Ագռավ և աղվես» (առակ. № 2, հունվարի 11): «Հիվանդ առյուծ և աղվես» (առակ. № 3, հունվարի 18): «Հանելուկ» (№ 4, հունվարի 25): «Առյուծ և կապիկ» (առակ. № 5, փետրվարի 1): «Հանելուկ» (№ 6, փետրվարի 8): «Գայլ և կռունկն», «Հանելուկ» (№ 9, մարտի 1): «Հանելուկ» (№ 19, մայիսի 10): «Հանելուկ» (№ 23, հունիսի 7): «Հանելուկ» (№ 24, հունիսի 14): «Հանելուկ» (№ 26,

հունիսի 18): «Հանելուկ» (№ 29, հուլիսի 19): «Հանելուկ» (№ 37, սեպտեմբերի 13): «Հանելուկ» (№ 44, նոյեմբերի 1, անստորագիր): «Հանելուկ» (1859 թ., № 5, հունվարի 31) և այլն:

Հունվարի 1. Թիֆլիսում, Ստեփաննոս քահանա Մանանդյանցի խմբագրությամբ, արևելահայերեն սկսում է հրատարակվել «Մեղու Հայաստանի» քաղաքական, բանասիրական և առևտրական շաբաթաթերթը: Հրատարակությունն սկսելու պաշտոնական ազդագիրը («Հայտարարական թուղթ») լույս է տեսել 1857 թ. սեպտեմբերի 4-ին: «Մեղու Հայաստանին» պարբերականության որոշ փոփոխություններով, իր գոյությունը շարունակեց մինչև 1886 թ.: 1863 թ. հունվարից այն դառնում է տասնօրյա լրագիր և խմբագիր նշվում է Պետրոս Սիմոնյանցը: Մերթ ընդ մերթ որպես խմբագիր հիշատակվում է նաև Ստեփաննոս Ստեփանեն (իմա՝ Խորեն Ստեփանեն):

Հունվար. Ամարաս գյուղում (Լեռնային Ղարաբաղ), Ներսես վարդապետ Միրզա-Ավագյանցի և Գևորգ Ամբրոսյանի ջանքերով, հիմնադրվում է հայկական տղայոց դպրոց, իր քառասուն աշակերտներով: Ավանդվում էին կրոն, հայերեն և ռուսերեն լեզուներ: Նույն թվականի ապրիլի 23-ին դպրոցը հիմնում է իր տպարանը:

«Մեղու Հայաստանի», 1859, № 5 («Խառն լուրեր»), № 22 («Ղարաբաղ»): «Ճռաքաղ», 1861, № 13 («Լուրեր»):

Հունվարի 1. «Մուզայք Մասյաց» շաբաթաթերթը (№ 14) արևմտահայերեն սկսում է հրատարակել Արմենակ Հայկունու (Ճիզմեճյան) «Երընջակ» պատմական ողբերգությունը: Ավարտ՝ № 18 (հունվարի 25):

Հունվար. «Արծվի Վասպուրականը» (№ 1) արևմտահայերեն հրատարակում է Գարեգին Սրվանձտյանցի «Բուրաստան բարոյական առաքինությանց» հոդվածը:

Հետևելով Եվրոպայում լայնորեն տարածված այն սովորույթին, որ տվյալ անձնավորությունը հասարակական առումով որոշ դիրքի ու կոչման հասնելուց հետո իր առաջին, այսինքն «ծննդյան անվան առջևից ավելացնում էր նաև երկրորդը՝ հարգականը», Գարեգին Սրվանձտյանցն էլ իր գործերի մեծ մասը ստորագրում էր Գարեգին Հովհաննես Սրվանձտյանց (կամ համառոտ՝ «Գ.Հ. Սրվանձտյանց», «Գ.Հ.Ս.»): Շփոթություն չառաջացնելու նպատակով մշտապես պահպանել ենք հանրահայտ Գարեգին Սրվանձտյանց ձևը:

Հունվարի սկիզբ. Մոսկվայում, Մսեր Մսերյանցի և նրա որդու՝ Ջարմայր Մսերյանցի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Ճռաքաղ» բանասիրական ամսագիրը: Այն հրատարակվում էր թե գրաբար, և թե աշխարհաբար, թեև գերիշխում էր գրաբարը: Ամսագիրն իր գոյությունը շարունակում է մինչև 1862 թ.:

1858 թ. ընթացքում հրատարակվում էր որպես կիսամյա հանդես և ուներ «Ճռաքաղ արձակ և ի չափածոյ բանից հին և նոր մատենագրաց» անվանումը: 1859 թ. հունվարից այն դառնում է ամսագիր և շարունակվում է այդպես մինչև դադարելը, թեև հիշյալ ժամանակաշրջանում նրա պարբերականությունը փոփոխվել է:

Հունվարի 11. «Մեղու Հայաստանին» (№ 2) գրաբար հրատարակում է Գրիգոր Հակոբ Ամիրայան Մամիկոնյանցի «Հանելուկը»: Համանման մի գործ էլ՝ հաջորդ (№ 3, հունվարի 18) համարում:

Հունվար. «Հյուսիսսփայլը» աշխարհաբար հրատարակում է Միքայել Նալբանդյանի «Կրիտիկա, հանդես նոր հայախոսության» հոդվածը (տե՛ս **Մ. Նալբանդյան**, ԵԼԺ, հ. 2, Երևան, 1947, էջ 142-149): Ստեփաննոս Նազարյանցի՝ գերմաներեն բնագրից կատարած աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակված է նաև «Շեյխը և նորա դուստրը» պատմվածքը:

Հունվարի առաջին կես. «Բազմավեպը» (№ 1) արևմտահայերեն սկսում է հրատարակել Մաղաքիա Տվլիկյանի «Պլատոնի փիլիսոփայության համառոտ բովանդակությունը» ուսումնասիրությունը: Ավարտ՝ № 12 (դեկտեմբերի առաջին կես):

Հունվարի առաջին կես. «Եվրոպան» (№ 1), Եփրեմ Չազըճյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Ճավայի դատապարտյալը» վիպակը: Ավարտ՝ № 16 (օգոստոսի առաջին կես):

Հունվարի 15. «Մեղուն» (№ 1) Խաչատուր Կյումուշյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն համառոտ թարգմանությամբ, հրատարակում է «Կանժի մարկիզուհին» վիպակը: Ավարտ՝ № 6 (մարտի 31): Սկսում է հրատարակել նաև «Ժոնդասի վաստակի միջոցները» կատակերգությունը: Ավարտ՝ № 8 (ապրիլի 31):

Հունվարի 18. «Մեղու Հայաստանին» (№ 3) գրաբար հրատարակում է Դավիթ Մշեցու (իմա՛. Դավիթ Սալաձորեցի) «Գովասանութիւն ի վերայ ծաղկանց» բանաստեղծությունը

(սկզբում տրված է նրա հայտնաբերման բանասիրական պատմությունը) և արևելահայերեն՝ Հովսեփ Թիֆլիզեցու «Ազգային երգեր» չափածո ստեղծագործությունները:

Հունվարի 18. «Մուզայք Մասյաց» շաբաթաթերթը (№ 17) արևմտահայերեն հրատարակում է Արմենակ Հայկունու (Ճիզմեճյան) «Տաղք, քերթվածք և թատերգությունք Սրապիոնի Հեքիմյան» թատերախոսականը:

Հունվար-հունիս. «Ճռաքաղը» (№ 1) գրաբար հրատարակում է Մսեր Մսերյանցի «Տերունական աղօթք», «Իմաստք ՃԸ-երորդ սաղմոսի», «Ազոաւ և աղուէս», «Դիմառնութիւն (տապան Նոյի, Գրգուռ, Մասիս)», «Ջայլ Շամիրամայ ի վերայ Արայի անկելոյ ի մարտի»), Գևորգ Մայաթնյանցի («Տփղիս») և աշխարհաբար, աշուղ Թուրինջի («Երգ նախաստեղծից վերա» բանաստեղծությունները: Գրաբարով հրատարակված է նաև «Նուէր բանի առ Տ. Ներսէս Ե կաթողիկոս» ներբողը (ունի «ոգեալ ի բանասիրէ ումեմնէ» ստորագրությունը):

Հունվարի 25. «Մուզայք Մասյաց» շաբաթաթերթը (№ 18) արևմտահայերեն հրատարակում է Արմենակ Հայկունու (Ճիզմեճյան) «Ո՛հ, մինչև ե՞րբ զիս չեն ձգեր գիշերադեմ տխուր դեպքեր» և Գարեգին Չափրաստյանի «Քաջ զինվորի մը սև աչքով», «Քեզ տեսա սիրուն» բանաստեղծությունները: Արմենակ Հայկունու՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է նաև «Ծերունի գերիին ողբը» բանաստեղծությունը, որին կցված համառոտ ներածականում («Ամերիկայի գիշերները») թարգմանիչը պախարակում է գերեվաճառությունը և այդ առիթով անդրադառնում Հ. Բիչըր Ստոուի «Քեռի Թովմասի տնակը» վեպին:

Հունվարի երկրորդ կես. «Եվրոպան» (№ 2) արևմտահայերեն հրատարակում է «Երգ բարեկենդանի (Ակոռիի խորհուրդը)» բանաստեղծությունը: Զուգահեռ տրված է բանաստեղծության նոտագրությունը:

Համանման ձևն ունեցող գործեր «Եվրոպան» հետագայում հրատարակել է հետևյալ հաջորդականությամբ. «Արտավազդ ի վիհն Մասյաց» (№ 11, հունիսի առաջին կես): «Պատանեկություն» (№ 26, դեկտեմբերի երկրորդ կես, հավելված): «Սեղանի երգ (բարեկենդան)» (1859 թ. № 4, փետրվարի երկրորդ կես): «Մասյաց ստորոտը հրաժեշտ» (1860 թ. № 3, փետրվարի առաջին կես): «Բոսպորոս» (իմա՛. Բոսֆոր) (№ 12, հունիսի երկրորդ կես) և այլն:

Հունվարի 25. «Մեղու Հայաստանին» (№ 4) գրաբար հրատարակում է Խաչատուր Աբովյանի նամակ-բանաստեղծությունը Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցին: Տրված է նաև նրա հայտնաբերման բանասիրական պատմությունը (տե՛ս **Խ.Աբովյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Երևան, 1948, էջ 235-236):

Փետրվարի առաջին կես. «Բազմավեպը» (№ 2), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ժան Լաֆոնտենի «Պարկն» առակը և «Հունաց ողբերգության ընդհանուր պատմությունը» հոդվածը:

Փետրվարի 8. «Մեղու Հայաստանին» (№ 6) գրաբար հրատարակում է Հարություն Ալամդարյանի «Սոխակ ի հոգեւարս» բանաստեղծությունը: Տրված է նաև Ալամդարյանի համառոտ կենսագրությունը:

Փետրվար. «Մասյաց աղավին» (№ 2) արևմտահայերեն հրատարակում է Գամառ-Քաթիպայի նամակը (ունի «1857 թ. նոյեմբերի 20, Ս.Պետերբուրգ» թվագրությունը) հասցեագրված Գաբրիել Այվազովսկուն (տե՛ս՝ **Ռ.Պատկանյան**, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1970, էջ 177):

Փետրվարի 15. «Մեղու Հայաստանին» (№ 7) արևելահայերեն հրատարակում է Գ. Փափազյանցի «Թափառական հրեա» բանաստեղծությունը և Միքայել Միանսարյանցի «Մի քանի մտքեր ազգային առաջադիմության համար» հոդվածը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Նույն համարում, գրաբար հրատարակվում է Առաքել Արարատյանի «Նուսխայ հոգևոր բժշկութեան» բանաստեղծությունը: Սրան գրաբար և աշխարհաբար հաջորդել են. «Ընդակաթ սրբոյ Էջմիածնի» (№ 28, հուլիսի 12): «Կաչաղակ և սոխակ» (№ 46, նոյեմբերի 15, առակ): «Մեղուն շնորհավորելով ձեր նոր տարին... խնդրեալանջ դնել իրան» (1859 թ. № 1, հունվար): «Մի քանի կաթ արտասուք հավերական Անվո» (№ 4, հունվարի 24): «Բարդի և թթենի» (№ 9, փետրվարի 28): «Մեղվի գատկի շնորհավորությունը» (№ 15, ապրիլի 12): «Ալանք և Շամիլ ի ձեռս Ռուսաց» (№ 38, սեպտեմբերի 19): «Ջորի և կապիկ» («Ճռաքաղ», 1859 թ. նոյեմբեր, № 11): «Լույս և առավոտ բարի քեզ» («Մեղու Հայաստանի», 1860 թ., հունվարի 1, № 1): «Հեծութիւն և աղաղակ առն, ի ... վախճան ամուսնոյ իւրոյ» (№ 9, փետրվարի 27): «Առեղծուած դիմառնութեամբ մասանց բառին» (№ 23, հունիսի 4): «Սև խուրմի ծառ» (№ 38, սեպտեմբերի 17): «Ղորչաղալա, Նարինդալա,

Մթածմինդա և Մետեխի» (նոյեմբերի 5, № 45): «Նոր տարի» (1861 թ., № 1, հունվարի 1):

Փետրվար. «Հյուսիսափայլը» (№ 2) արևելահայերեն հրատարակում է Կոմս Էմմանուելի (Իմա՛ Մ. Նալբանդյան) «Վայր ընկնող աստղեր» բանաստեղծությունը: Չնայած այն հանդիսանում է Պիեր-ժան Բերանժեի նույնանուն բանաստեղծության՝ ռուսերենից կատարված փոխադրությունը, բայց կատարված հավելումներն ու լրացումներն այնքան շատ են, որ այն ինքնուրույն ստեղծագործության արժեք է ստանում: (Տե՛ս՝ Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 1, Երևան, 1945, էջ 74-76): Հրատարակվել է նաև «Մահացուցակ» (հ. 2, Երևան, 1947, էջ 150-157. այստեղ ունի «Գևորգ Գեղամյանց» վերնագիրը) և «Դամբանական ճառ» (էջ 158-159) հոդվածները: Սրանք ունեն «Մ. Նալբանդյանց» ստորագրությունը:

Փետրվարի 15. «Մեղուն» (№ 3) գրաբար հրատարակում է Հովսեփ Մալեգյանի (Վահան Մալեգյանի պապը) «Ի հանդես բարեբաստիկ հարսանեաց...» ներբողականը:

Փետրվարի 25. Խարբերում (Արևել. Թուրքիա) ծնվեց գրական-մշակութային և կրթական գործիչ, լրագրող Կարապետ Հովհաննեսի Պեշկոթուրյանը: Վախճ. 1941 թ. օգոստոսի 16-ին, Դետրոյտում (ԱՄՆ):

«Հայաստանի կոչնակ», 1941, № 35 («Պրոֆ. Կ.Հ. Պեշկոթուրյանի մահը»), № 37 («Կարապետ Հ. Պեշկոթուրյան»):

Մարտի 1. «Մեղու Հայաստանին» (№ 9) արևելահայերեն հրատարակում է Սեյադի (Պետրոս Մադաթյան) «Առ հարազատ մեղուն Հայաստանի» և Հովհաննես Սայաթնովյանցի «Ազգային երգ. աշխատասիրություն» բանաստեղծությունները:

Մարտ. «Արծվի Վասպուրականը» (№ 3) գրաբար հրատարակում է Գարեգին Սրվանձտյանի «Ռեդերձ ի դիմաց աշակերտաց ժառանգավորաց դպրոցին» բանաստեղծությունը:

Մարտ. «Բազմավեպը» (№ 3), ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Քսավիե դը Մեստրի «Թիթեոնիկն» բանաստեղծությունը: Սկզբում տրված է հեղինակի կենսագրությունն ու բանաստեղծության գրության պատմությունը:

Մարտի 8. «Մեղու Հայաստանին» (№ 10) արևելահայերեն հրատարակում է Բաղդասարյանցի «Գանգատ բախտի վրա (ազգային երգ)» բանաստեղծությունը և Մ.Ս. Մանդինյանցի (Մեղրակ Մանդինյանց?) «Առակ (շուն և շվաք)» գործը:

Մարտ. «Հյուսիսափայլը» (№ 3) արևելահայերեն հրատարակում է Կոմս Էմմանուելի (իմա՛ Մ. Նալբանդյան) «Աղքատ կին» բանաստեղծությունը: Չնայած այն հանդիսանում է Պիեր-Ժան Բերանժեի նույնանուն բանաստեղծության՝ ռուսերենից կատարված փոխադրությունը, բայց կատարված հավելումներն ու լրացումներն այնքան շատ են, որ այն ինքնուրույն ստեղծագործության արժեք է ստանում: Տպագրված է նաև նույնի «Հայ մարդու հայրենիքը» բանաստեղծությունը (տե՛ս՝ Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 1, Երևան, 1945, էջ 77-79 և 80-81):

Նույն համարում. «Ազգային բանաստեղծություն» ընդհանուր խորագրի ներքո հրատարակվում է «Մի քանի ասիական առասպելք», «Երախտագետ հոգին», «Մի թագավոր, որ յուր ծերության օրերումը բաղդավորվում է», «Չինական առակ հյուրասիրության վարձքի մասին» և «Մի խայտառակված քուրմ» ավանդությունները: Դրանք հավաքել, թարգմանել և հրատարակության է պատրաստել Ստ. Նազարյանցը:

Մարտի 8. «Մեղու Հայաստանին» (№ 12), Հովհաննես Ղայթմազյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Վասիլի Ժուկովսկու «Ընտրություն խաչի» բանաստեղծությունը և Աբրահամ Բաբայանցի թարգմանությամբ՝ «Խուլեր» պատմվածքը:

Մարտի 29. «Մեղու Հայաստանին» (№ 13), Ս.Բ.-ի գրաբար ազատ թարգմանությամբ, հրատարակում է «Կլու և տատրակ» բանաստեղծությունը և Գարեգին Տեր-Գրիգորյան Մուրադյանցի (հետագայում՝ Մելքիսեդեկ Մուրադյանց)՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, «Քաջասիրտ բարեկամություն» պատմվածքը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Ապրիլ. «Արծվի Վասպուրականը» (№ 4) արևմտահայերեն, «Թանգարան հայկական դպրությանց» խորագրի ներքո, հրատարակում է Րաֆֆու (Հակոբ Միրզայան Մելիք-Հակոբյան) նամակը Մկրտիչ Խրիմյանին և անստորագիր՝ «Բարոյական առակ» բանաստեղծությունը:

Ապրիլի 5. «Մեղու Հայաստանին» (№ 14) արևելահայերեն հրատարակում է Սեյադի (Պետրոս Մադաթյան) «Ռեդերձ Մեդվին նորածին», Մովսես Զոհրապյանցի «Գարուն Հայաստանի» և գրաբար՝ Հակոբ քահանա Էմիսիացու «Աշխարհ» բանաստեղծությունները:

Մովսես Զոհրապյանցի (նաև՝ Մովսես Զոհրապյանց-Արցախեցի, Մ.Զ., Մ.Զ.Ա.) գործերը հետագայում հրատարակվել են հետևյալ հաջորդականությամբ. «Ռեդերձ վերստին Մեդվին նորածին» (անդ, № 15, ապրիլի 12): «Բարեմադրություն Մեդվին» (անդ, 1859, № 3, հունվարի 17): «Արկածք Շամախվո» (անդ, № 34, օգոստոսի 22) և այլն:

Ապրիլի 7. Շամախիում (Ադրբեջանական ՄՍՀ) ծնվեց ականավոր ռեալիստ գրող, արձակագիր, դրամատուրգ, Հայաստանի և Ադրբեջանի ժողովրդական գրող (1930 թ.), Անդրկովկասի կուլտուրայի վաստակավոր գործիչ (1930 թ.) Ալեքսանդր Շիրվանզադեն (Ալեքսանդր Մինասի Մովսիսյան): Վախճ. 1935 թ. օգոստոսի 7-ին Կիսլովոդսկում, թաղումը օգոստոսի 16-ին Երևանի քաղաքային պանթեոնում (այժմ՝ Կոմիտասի անվան զբոսայգի):

«Ադ. Մովսիսյանց», «Ա.Մ.», «Մադբոս», «Մելիտե», «Մել.», «Մենավոր», «А. Шенкский» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Տերտերյան Ա., Շիրվանզադե. հայ ընտանիքի և ինտելիգենցիայի վիպասանը, Թիֆլիս, 1911, 197 էջ: **Տերտերյան Ա.** Շիրվանզադեի գրական տիպերի հանրագիտարանը, Երևան, 1959, 424 էջ: **Թամրազյան Հր.**, Ալեքսանդր Շիրվանզադե, Երևան, 1956, 179 էջ: Նույնը՝ վերափոխված ու լրացված, 1961, 591 էջ: Тамразян Гр., Ширванзаде, М., 1967, 386 стр. **Թամրազյան Հր.**, Շիրվանզադեի դրամատուրգիան, Երևան, 1954, 212 էջ: Ալեքսանդր Շիրվանզադե, Մատենագիտություն, Երևան, 1959, 244 էջ:

Ապրիլի 5. «Մեղու Հայաստանին» (№ 15) արևելահայերեն հրատարակում է Հովհաննես Սայաթնովյանցի «Շնորհագարդ հայր, խմբագիր «Մեղու Հայաստանի» պատվական լրագրի» հոդվածը: Քննության է առնված Սայաթ-Նովայի, Ազբար Ադամի, Շիրինի, Նիրանու և Սեյադի գործերը, որոնք հիմնականում բարձր են գնահատված:

Ապրիլի առաջին կես. «Երևակը» (№ 31) սկսում է հրատարակել «Որսորդություն» վիպակը՝ արևմտահայերեն: Շարունակվում է մինչև հունիսի առաջին կեսը (№ 35):

Ապրիլի 15. «Մեղուն» (№ 7) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Քաթինքա (ճշմարիտ պատմություն մը)» վիպակը: ավարտ՝ № 17 (սեպտեմբերի 15):

Ապրիլի 19. «Մեղու Հայաստանին» (№ 16) արևելահայերեն հրատարակում է Մեյադի (Պետրոս Մադաթյան) «Երգ Մադաթովա», Հովհաննես Արզանյանի «Պատասխանի Սայաթնովա» և գրաբար՝ Մխիթարյանի (Աբել?) «Խօսք ընդ անձին» բանաստեղծությունները, Հովհաննես Բաղդասարյանցի՝ ռուսերեն բնագրից կատարված արևելահայերեն ազատ թարգմանությամբ, հրատարակում է Ալ. Պուշկինի «Ձուկն և ձկնորս» (իմա՝ «Ոսկե ձկնիկը») հեքիաթը:

Նույն համարում. արևելահայերեն հրատարակվում է Ստեփաննոս Մանդինյանցի «Մի քանի խոսք գերապատվելի Ստեփաննոս Տեր-Եսայան Նազարյանցի գրած մատյանների վրա» հոդվածը: Գրախոսը բացասաբար է գնահատում Նազարյանցի ինչպես հրապարակախոսական, այնպես էլ գրական-հասարակական գործն ու գործունեությունը:

Ապրիլի 20. Պոլսում ծնվեց գրականագետ-բանասեր, լրագրող, կենսագիր (մասնագիտությամբ՝ բժիշկ) Վահրամ Թորգոմյանը: Վախճ. 1942 թ. ապրիլի 20-ին Փարիզում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Թոտյուն» և «Վրան» ծածկանուններով:

«Հանդես ամսօրյա», 1912, № 7 («Մատենագիտական»), 1947, № 1 («Մահվան հունձքը հայագիտական դաշտի վրա»): «Բազմավեպ», 1943, № 7-12 («Վահրամ Թորգոմյան»):

Ապրիլ. «Հյուսիսափայլը» (№ 4) արևելահայերեն սկսում է հրատարակել Կոմս Էմմանուելի (իմա՝ Մ. Նալբանդյան) օրագիրը «Հիշատակարան Կոմս Էմմանուելի օրագրության թերթերից» ընդհանուր խորագրով: Որոշ ընդհատումներով շարունակվում է մինչև 1860 թ. № 6-ը (հունիս), իսկ 1859 թ. № 9-ում (սեպտեմբեր) հրատարակվում է հռչակավոր «Երգ ազատության» բանաստեղծությունը (տե՛ս՝ Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 1, Երևան, 1945, էջ 305-488: Այստեղ ունի «Հիշատակարան» խորագիրը): Հրատարակված է նաև Կոմս Էմմանուելի «Լուսին» բանաստեղծությունը, «Նամակ առ հրատարակողը» հոդվածը (տե՛ս՝ նշվ. հրատարակությունը էջ 82 և հ. 2, 1947, էջ 182-184), ինչպես նաև՝ արևելահայերեն թարգմանությամբ, «Պրոպերցիա Բոսսի (Լյուդովիկոս Դելատրի պատմությունը)» պատմվածքը: Թարգմանությունն ունի «Մ.Նալբանդյանց» ստորագրությունը:

Ապրիլ. «Բազմավեպը» (№ 4) հրատարակում է Ղևոնդ Ալիշանի՝ Նահապետ ստորագրությամբ «Լուսընկայն գերեզմանաց հայոց» աշխարհաբար բանաստեղծությունը, որին

նախորդած ծանոթագրության մեջ պաշտոնապես հավաստվում է, որ «Նահապետը» Ղևոնդ Ալիշանի կեղծանունն է:

Ապրիլի երկրորդ կես. «Երևակը» (№ 32) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Ակակիոս և Փոտինե» պատմվածքը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Ապրիլի 26. «Մեղու Հայաստանին» (№ 17), Միքայել Պատկանյանի՝ ռուսերենից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Ով է կերել երրորդ հացը» պատմվածքը: Ավարտ՝ № 21 (մայիսի 24): Գրաբարով հրատարակված է նաև Հակոբ երեց Էմիասիացու «Ի մահ դստեր իւրոյ» բանաստեղծությունը:

Մայիս. «Բազմավեպը» (№ 5), ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ժան Բատիստ Ռուսսոյի (հայերեն ունի «Հովհաննես Մկրտիչ Ռուսսո» ստորագրությունը) «Ի սոխակն» բանաստեղծությունը և անստորագիր՝ «Անդրեաս Շենիե» հոդվածը:

Մայիսի 2. «Արշալույս արարատյանը» (№ 570) գրաբար հրատարակում է Հակոբ Ոսկանի «Ի յիշատակ արքունի ճարտարապետ վաղամեռիկ Նիկողոս աղայի Պալեան» բանաստեղծությունը:

Մայիս. «Մասյաց աղավնին» (№ 5) արևմտահայերեն թարգմանությամբ հրատարակում է իսպանացի դրամատուրգ Լոպե դե Ռուետայի «Ձիթապտուղ» գավեշտը, արևմտահայերեն՝ «Կայծոռիկ և խխունջ», «Ցորեանք և չոր կնձի» առակները և գրաբար՝ Եղիազար Մելիքյանի «Ի սգալի մահ արքունի ճարտարապետ Նիկողոսի Պալեան, յիշատակ տխուր» բանաստեղծությունը:

Մայիս. «Մեղու Հայաստանին» (№ 19) գրաբար հրատարակում է Հարություն Ալամդարյանի «Վարդակորոյս» բանաստեղծությունը:

Մայիս. «Հյուսիսափայլը» (№ 5) արևելահայերեն հրատարակում է Կոմս Էմմանուելի (իմա՝ Մ. Նալբանդյան) «Առօրյա աշխարհ» բանաստեղծությունը, որը ռուս բանաստեղծ Վլադիմիր Բենեդիկտովի «Ի՞նչ ես աղմկում» բանաստեղծության ազատ փոխադրությունն է (տե՛ս՝ Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 1, Երևան, 1945, էջ 83): Հրատարակված է նաև «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանք» ուսումնասիրությունը (շարունակվում է № 6 (հունիս), № 11 (նոյեմբեր) և մնում է անավարտ) և «Կրիտիկա (Ժողովրդական լեզվով թարգմանված և տպված Ռոբինզոնի պատմությունը)» գրախոսականը (տե՛ս՝

Մ. Նալբանդյան, վերը նշվ. հրատ., հ. 2, Երևան, 1947, էջ 185-231 և 232-235): Վերջին երկուսն ունեն «Մ.Նալբանդյանց» ստորագրությունը: Ստեփաննոս Նազարյանցի՝ դանիերեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակվել է «Շատ թանկ գնով ստացած (ընտանեկան անցք)» պատմվածքը:

Մայիսի 13. Սկոմորոյի ավանում (Լեհաստան) ծնվեց հայագետ, պատմաբան-բանասեր (գրում էր լեհերեն, ֆրանսերեն, գերմաներեն և հայերեն լեզուներով) Հովհաննես Անտոնիևիչը: Վախճ. 1922 թ. սեպտեմբերի 29-ին, Լվովում:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 173:

Մայիսի 15. «Մեղուն» (№ 9), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ժան Բատիստ Ռուսսոյի «Խիղճ մտաց», Ժորժ Բյուֆոնի «Խակ բնությունը և մշակված բնությունը» արձակ մանրապատումները և սկսում է հրատարակել «Մտացածին ձվածեղ մը» կատակերգությունը: Ավարտը՝ № 14 (հուլիսի 31):

Մայիսի 23. Ակնում (Արևել. Թուրքիա) ծնվեց գրականագետ-բանասեր, լեզվագետ, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն), արձակագիր, խմբագիր Սմբատ Դավթյանը: Վախճ. 1926 թ. հոկտեմբերի 1-ին, Պոլսում:

1901-1903 թթ. Պոլսում խմբագրել է «Բյուրակն» շաբաթաթերթը: Ժամանակի պարբերականներում հանդես է եկել «Ապրսամ», «Արծվիկ», «Ծվիկ», «Սիբարիս» կեղծանուններով:

«Հայաստանի կոչնակ», 1926, № 47 («Սմբատ Դավթյան»): **Թեոդիկ**, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1927, էջ 600-601, 1928, էջ 635: Ընդարձակ տարեգիրք ազգային հիվանդանոցի, Պոլիս, 1927, էջ 437: **Ազատյան Թ.**, Ակն և ակնցիք, Պոլիս, 1943, էջ 75:

Մայիսի 24. «Մեղու Հայաստանին» (№ 21) արևելահայերեն հրատարակում է Մեյադի (Պետրոս Մադաթյան) «Ներգործություն երևակայության» պոեմը:

Մայիսի 30. «Արշալույս արարատյանը» (№ 572), «Բանասիրականք» ընդհանուր խորագրի ներքո, հրատարակում է տեսական-բանասիրական վերլուծություն հայկական հանելուկների մասին (հեղինակ՝ ***) և ապա զետեղում է Ներսես Շնորհալու քառասունութ անուն հանելուկները:

Մայիսի երկրորդ կես. «Երևակը» (№ 23) արևմտահայերեն հրատարակում է «Մաքինոբ և յուր ամուսինը (Կնկան մը ամուսնական սերը և իշխանի մը անգթությունը. հռովմեացվոց պատմութենե առնված)» պատմվածքը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Հունիսի 7. «Մեղու Հայաստանին» (№ 23) գրաբար հրատարակում է Գևորգ Մայաթնյանցի «Նուէր գոհութեան առ Մկրտիչ Սանասարեանց» բանաստեղծությունը:

Հունիս. «Բազմավեպը» (№ 6), Խորեն Գալֆայանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալֆոնսու Լամարթինի «Առ ծով» բանաստեղծությունը: Գերմաներեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ հրատարակված է նաև Էմիլ Տեշանի «Ովկեան», Լեոպոլդ Շտոլբերգի «Առ ծով» բանաստեղծությունները և անգլերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ՝ Ուիլյամ Բրայանդի «Նուագք ի ծով» և Ջորջ Բայրոնի «Առ Ովկեան» բանաստեղծությունները: Վերջին երկուսի թարգմանիչը Ղևոնդ Ալիշանն է:

Հունիսի 14. «Մեղու Հայաստանին» (№ 24) արևելահայերեն սկսում է հրատարակել Վահան Արամյանի (ի՛մա. Սսեր Սսերյանց) հողվածաշարը՝ ուղղված Ստ. Նազարյանցի և նրա «Հյուսիսափայլի» դեմ: Ավարտ՝ № 35 (օգոստոսի 30), և գրաբար՝ Հակոբ Մխիթարյանի «Երգ ի գարունն կամ մայիս» բանաստեղծությունը:

Հունիս. «Մասյաց աղավնին» (№ 6), Խորեն Գալֆայանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալֆոնսու Լամարթինի «Տաղ Առավօտու» բանաստեղծությունը:

Հունիս. «Հյուսիսափայլը» (№ 6), Ստեփաննոս Նազարյանցի՝ դանիական բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Ծերունի Բաբունին» պատմվածքը:

Հունիսի 18. Պոլսում վախճանվեց կրթական-մշակութային գործիչ, բանասեր Նիկողոս Հովոյանը: Ծնվ. 1796 թ. Ապուջեխ գյուղում (Ակնի շրջ., Արևել. Թուրքիա):

«Մասիս», 1858, № 335 («Մահագույժ»): **Ալիշան Ղ.**, Նամակներ, բնագիրը, առաջաբանը ու ծանոթագրությունները Ս. Շտիկյանի, Երևան, 1969, էջ 13-14: «Ընդարձակ օրացույց Ազգային հիվանդանոցի», Պոլիս, 1901, էջ 56: **Ազատյան Թ.**, Ակն և ակնցիք, Պոլիս, 1943, էջ 105:

Հունիսի 27. «Արշալույս արարատյանը» (№ 574), Հակոբ Դավթյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Գուաքերն ու գողը» պատմվածքը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Հունիսի 28. «Մեղու Հայաստանին» (№ 26), Աբրահամ Բաբայանցի՝ ռուսերենից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Հիմարներ» պատմվածքը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Հունիսի 31. «Մեղուն» (№ 12) արևմտահայերեն հրատարակում է Խաչատուր Կյումուշյանի «Այրի կնոջ մը իր վերջին խոսքերը իր մատղաշ աղջկան» բանաստեղծությունը:

Հուլիսի առաջին կես. «Երևակը» (№ 37) արևմտահայերեն հրատարակում է Գրիգոր-Հակոբ Ամիրայան Մամիկոնյանցի (Կարնեցի) «Մարզվանու չարխափան Ս. Աստվածածնի վանքը» հոդվածը: Վերլուծված են Հովհաննես Եպիսկոպոսի, Աբրահամ պատրիարքի և Գևորգ Եպիսկոպոսի չափածո գեղարվեստական ստեղծագործությունները: Հրատարակված է նաև «Լեզվագետներուն պարտականությունը» ուսումնասիրությունը: Ավարտ՝ № 39 (օգոստոսի առաջին կես):

Հուլիսի 12. «Մեղու Հայաստանին» (№ 28), Սամսոն Հարությունյանցի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Վոլտերի «Ժանոտ և Կոլեն» պատմվածքը:

Հուլիսի 13. Կոլոդենկա գյուղում (Ստանիսլավի շրջան, Արևմտյան Ուկրաինա) ծնվեց լեհ հայագետ, արևելագետ, թարգմանիչ (հայերենից՝ լեհերեն) Հովհաննես (Յան) Հանուշը (Jan Hanusz): Վախճ. 1887 թ. հուլիսի 26-ին, Փարիզում:

«Մշակ», 1887, № 103 («Խառն լուրեր»): «Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 2 (Иван Гануш, как исследователь языка западноукраинских армян):

Հուլիս. «Բազմավեպը» (№ 7), հունարեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է մի հատված Վիրգիլիոսի «Մշակականք» (իմա՝ «Գեորգիկա»)-ից:

Հուլիս. «Արծվի Վասպուրականը» հրատարակում է Բաֆֆու (Հակոբ Միրզայան Մելիք-Հակոբյանց) նամակը՝ ուղղված Մկրտիչ Խրիմյանին:

Հուլիսի 15. «Մեղուն» (№ 13), հունարեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Պլուտարքոսի «Տադո» գրվածքը և Խաչատուր Կյումուշյանի՝ ֆրանսերենի հետևությամբ գրված «Աշնան վերջին օրերը» պատմվածքը:

Հուլիսի 19. «Մեղու Հայաստանին» (№ 29) արևելահայերեն հրատարակում է «Պարոն Ստեփաննոս Նազարյանցը և նորա գրավոր վաստակքը» հոդվածը (հեղ. Մ.Ղ.): Ավարտ՝ հաջորդ համարում:

Հուլիս. «Հյուսիսափայլը» (№ 7) արևելահայերեն հրատարակում է Բեստենի (իմա՛. Քերովբե Պատկանյան) «Հայաստանի աղջիկ» բանաստեղծությունը (տե՛ս՝ **Սադյան Մ.**, «Հյուսիսափայլի» պոեզիան, էջ 243-255) և «Նամակ առ հրատարակողը» հոդվածը, որն ունի «Մերովբա Խաչատուրյան Շահբեգ» ստորագրությունը: Ենթադրվում է, որ այս կեղծանունով ստորագրել է Մ. Նալբանդյանը (տե՛ս՝ **Մ. Նալբանդյան**, ԵԼԺ, հ. 2, Երևան, 1947, էջ 236-239):

Հուլիսի 26. «Մեղու Հայաստանին» (№ 30) արևելահայերեն հրատարակում է Մովսես Զոհրապյանցի «Տեղեկություն ազգային երգոց» հոդվածը: Կից բերված է «Այ գյուլում» ժողովրդական երգը:

Հուլիս-դեկտեմբեր. «Ճռաքաղը» (№ 2) գրաբար հրատարակում է Մսեր Մսերյանցի «Ի մեծալաղթն Տրդատես», «Ծխախոտ» բանաստեղծությունները, «Հովի և ոչխար», «Գեղջուկ և Դիոս» առակները և արևմտահայերեն՝ «Ներսես Շնորհալի» և «Հին ավանդություն Հայաստանյայց» հոդվածները: Հրատարակված է նաև Մանուկ Սաղաթյանցի «Արտաւազդ» գրաբար բանաստեղծությունը:

Հուլիս. «Մասյաց աղավնին» (№ 7) գրաբար հրատարակում է Մկրտիչ Եկենյանի «Ի գալուստ կայսերապսակ առաջնորդի Գաբրիելի (իմա. Գաբրիել Այվազովսկու – Ս.Շ.) հայրենասեր վարդապետի» և «Խրախոյս աստուածասեր և հայրենասեր հայկազունս» բանաստեղծությունները:

Օգոստոսի 2. «Մեղու Հայաստանին» (№ 31) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Մանդինյանցի «Չորս եղանակ տարվո» գեղարվեստական ստեղծագործությունը: Ավարտ՝ № 43 (հոկտեմբերի 25):

Հեքիաթի հորինվածքով, սկզբում արձակով, հեղինակը տալիս է տարվա տվյալ եղանակի (ամառ, աշուն, գարուն, ձմեռ) գեղարվեստական նկարագրությունը, ապա չափածոյով շարադրում է այդ եղանակի ժամանակ երկրագործի կամ պարտիզպանի անելիքները:

Օգոստոս. «Բազմավեպը» (№ 8), ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Վիկտոր Հյուգոյի «Ի Լյուդովիկ ԺԷ» բանաստեղծությունը: Արևելահայերեն սկսում է հրատարակվել նաև «Անդար, արաբացի քերթված» ուսումնասիրությունը: Ավարտ՝ 1859 թ. № 5 (մայիս):

Օգոստոսի 15. «Մեղուն» (№ 15), հունարեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Պլուտարքոսի «Հայրերուն և մայրերուն սերը իրենց որդվոց վրա» հոդվածը և անստորագիր՝ «Սուրբ Ժըննիել» պատմվածքը: Հրատարակված է նաև «Առ չքնադածունդ մանկիկ Գ.Ե.Ս.Ս. (իմա՛. Գևորգ-Երվանդ Մարտիրոսի Սյուհենդիգյան – Ս.Շ.)» գրաբար անստորագիր ներբողը:

Օգոստոսի 22. Քիլում (Հյուսիսային Գերմանիա) ծնվեց գերմանացի հայագետ, թարգմանիչ (հայերենից՝ գերմաներեն) Էդուարդ Շվարցը (Eduard Schwarz): Վախճ. 1940 թ. փետրվարի 13-ին, Մյունխենում:

«Հանդես ամսօրյա», 1947, № 1 («Մահվան հունձքը հայագիտական դաշտի վրա»):

Օգոստոսի 23. «Մեղու Հայաստանին» (№ 34) արևելահայերեն հրատարակում է Հովհաննես Սայաթնովյանցի «Հայելի կենաց կամ խնդիր երջանկության» բանաստեղծությունը:

Օգոստոսի 31. «Մեղուն» (№ 16), հունարեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Պլուտարքոսի «Կանոնք ամուսնության» աշխատությունը և անստորագիր՝ «Փրասքովի» պատմվածքը: Ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ սկսում է հրատարակվել նաև՝ «Լուսնի փողոցը» կատակերգությունը: Ավարտ՝ № 20 (հոկտեմբերի 31):

Սեպտեմբերի 6. «Մեղու Հայաստանին» (№ 36) արևելահայերեն հրատարակում է «Բառաքնություն» հոդվածը (հեղ. Մ.Ղ.), որն ուղղված է Ստ. Նազարյանցի դեմ:

Սեպտեմբերի առաջին կես. «Երևակը» (№ 41) արևմտահայերեն հրատարակում է «Մատթեոս Ուռուհայեցիին ժամանակագրությունը» հոդվածը:

Սեպտեմբերի առաջին կես. «Եվրոպան» (№ 17) արևմտահայերեն թարգմանությամբ սկսում է հրատարակել «Անիրավության պատիժը» վիպակը: Ավարտ՝ № 23 (նոյեմբերի առաջին կես):

Սեպտեմբեր. «Հյուսիսափայլը» (№ 9), Հ. Բերբերյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Նիկոլայ Կարամզինի «Թշվառ Եղիսաբեթը» պատմվածքը: Հրատարակված է նաև Կոմս Էմմանուելի (իմա՝ Մ. Նալբանդյան) «Առաջարկություն» բանաստեղծությունը: Ենթադրվում է, որ այն թարգմանություն է ռուսերենից (տե՛ս՝ **Մ.Նալբանդյան**, ԵԶԺ, հ. 1, 1945, էջ 85-87):

Սեպտեմբեր. «Արծվի Վասպուրականը» (№ 9) արևմտահայերեն հրատարակում է Սեյադի (իմա՝ Պետրոս Սադաթյան) «Քնար Հայաստանի» բանաստեղծությունը և Հ.Արշավիրի (իմա՝ Հակոբ-Արշավիր Փոխանյան) «Երկու շուն և գայլ» առակը:

Սեպտեմբերի 20. «Մեղու Հայաստանին» (№ 38) գրաբար հրատարակում է Գևորգ Տեր-Աղեքսանդրյանցի «Կանոնք խոհեմութեան» բանաստեղծությունը:

Սեպտեմբերի երկրորդ կես. «Երևակը» (№ 42) արևմտահայերեն հրատարակում է «Մատենական հիշատակարաններ» հոդվածը: Ավարտ՝ № 44 (հոկտեմբերի երկրորդ կես): Վերլուծաբար ներկայացվում է Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Ներսես Հայրապետի տեսիլքը, Ղուկաս, Իգնատիոս վարդապետների մեկնությունները, Մովսեսի հինգ գրոց մեկնաբանությունը և այլն:

Սեպտեմբերի 29. Շուշիում (Լեռնային Ղարաբաղ) ծնվեց խմբագիր-հրատարակիչ, թարգմանիչ (ֆրանսերենից, ռուսերենից՝ հայերեն), լրագրող, մանկագիր Տիգրան Նազարյանը: Վախճ. 1926 թ. սեպտեմբերի 14-ին, Թիֆլիսում:

1883 թ. Թիֆլիսում հիմնել և մինչև 1918 թ. խմբագրել է «Տարագ» գրական շաբաթաթերթը (1909-ից՝ ամսագիր): 1907-1912 թթ. «Տարագն» ուներ հավելված-ամսագիր «Գեղափնջիկ» անվամբ: Ժամանակի պարբերականներում Նազարյանը հանդես էր գալիս «Շուշեցի», «Արցախեցի», «Զարուհի» կեղծանուններով:

«Հանդես ամսօրյա», 1909, № 2 («Գրական»): Տոն ու ձոն, Թիֆլիս, 1908, 69 էջ: Խոսք և գործ, Թիֆլիս, 1914, 80 էջ: **Գուլնազարյան Խ.**, Ակնարկներ հայ մանկական գրականության պատմության, Երևան, 1961, էջ 63-73:

Սեպտեմբերի 31. «Մեղուն» (№ 18) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Թագուհի» վիպակը: Շարունակվում է հաջորդ համարում և մնում է անավարտ:

Հոկտեմբեր. «Բազմավեպը» (№ 10) հրատարակում է ժողովրդական «Երգ Արագլի» բանաստեղծությունը: Այն հրատարակության էր պատրաստել Ղևոնդ Ալիշանը (տե՛ս ներկա հատորը, 1852 թ., «Հայոց երգք ռամկականք»):

Հոկտեմբերի 3. «Արշալույս արարատյանը» (№ 581), Ստեփան Խարակոյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Զարմանալի ազատություն» պատմվածքը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Հոկտեմբերի 7. Շամախի քաղաքում (Ադրբեջանի ՄՍՀ) ծնվեց դրամատուրգ, արձակագիր Ալեքսանդր Հարությունի Աբեյանը: Վախճ. 1940 թ. մայիսի 6-ին, Դոնի Ռոստովում:

Հարությունյան Շ., Հայ ժողովրդի պատմության համառոտ ժամանակագրություն, Երևան, 1955, էջ 116:

Հոկտեմբերի առաջին կես. «Երևակը» (№ 43) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Հունդինդրնի դպրոցը» վիպակը: Ավարտ՝ № 46 (նոյեմբերի երկրորդ կես):

Հոկտեմբերի 12. Թեոդոսիայում (Ղրիմ), Գաբրիել Այվազովսկու վերատեսչությամբ և Հարություն Խալիպյանի ֆինանսական օժանդակությամբ, իր գոյությունն է սկսում «Խալիպյան ազգային ուսումնարանը»: Առաջին տեսուչն էր Սարգիս Տիգրանյանը: Սկզբում ունեին հիսուն, ծաղկուն ժամանակ՝ 300, աշակերտ: Ռիսումնարանը վեցամյա էր, ավանդվում էին ռուսերեն, ֆրանսերեն, հայերեն և տաճկերեն լեզուներ, կրոն, հայկաբանություն, պատմություն, աշխարհագրություն: «Խալիպյան ազգային ուսումնարանը» իր գոյությունը դադարեցրեց 1871 թ. սկզբներին (փակման Կայսերական վճիռը տրվել է 1870 թ. դեկտեմբերի 4-ին):

Այվազյան Գ., Պատմություն Խալիպյան ուսումնարանին ազգիս հայոց, Տիֆլիս, 1880, 395 էջ:

Հոկտեմբերի 15. «Մեղուն» (№ 19) արևմտահայերեն հրատարակում է «Լուկրեցիա Դավիթսոն» և «Մետաստազիո» հոդվածները:

Հոկտեմբերի 17. Լոնդոնում ծնվեց անգլիացի հայագետ Դավիթ Մարգոլիուիթը (David Margoliouth): Վախճ. 1940 թ. մարտի 22-ին:

«Հանդես ամսօրյա», 1947, № 1 («Մահվան հունձքը հայագիտական դաշտի վրա»):

Հոկտեմբերի 25. «Մեղու Հայաստանին» (№ 43), Հովհաննես Քուչուրեկյանցի՝ ռուսերենից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Հայկական գրականություն» հոդվածը: Այն թարգմանված է «Северная стрела» թերթից (1856, № 246, 6-го ноября):

Հոկտեմբերի 31. «Արշալույս արարատյանը» (№ 583) գրաբար հրատարակում է Թադևոս Խաչիկ Ավետույանի «Բանասիրականք» խորագիրը կրող հոդվածը: Հեղինակը

կենսագրական մի շարք տվյալներ է հաղորդում նոր վախճանված Մեսրոպ Թաղի-
աղյանի մասին, ապա հրատարակում է իր գրաբար բանաստեղծությունը գրված այդ
առիթով:

Հոկտեմբեր. «Արծվի Վասպուրականը» (№ 10) արևմտահայերեն հրատարակում է Արսեն
Թոխմախյանի «Պառավ և աղախին» առակը և Սեյադի (Պետրոս Մադաթյան) «Քնար
Հայաստանի (Ես տապան նստյալ ի գագաթ սարին)» բանաստեղծությունը:

Ինչպես ընդունված էր արևմտահայ մտավորականության շրջանում, Արսեն
Թոխմախյանն էլ, որոշ դիրքի հասնելուց հետո, իր գործերը տպագրում էր «Ար-
սեն-Հարություն Թոխմախյանց», «Ա.Հ. Թոխմախյանց», «Ա.Հ.Թ.» ձևերով: Հնարա-
վոր շփոթություններից խուսափելու համար պահպանել ենք մեկ՝ Արսեն Թոխ-
մախյան ձևը (տե՛ս ներկա հատորը, 1858 թ. հունվար):

Հոկտեմբեր. «Հյուսիսափայլը» (№ 10), Հարություն Համասփյուռի (իմա՛. Հովհաննես Քուչու-
բեկյան)՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատա-
րակում է «Նոր Անտիգոնա» վիպակը: Հրատարակված է նաև Մ. Նալբանդյանի
«Նկատողությունք» հոդվածը (տե՛ս՝ **Մ.Նալբանդյան**, ԵԼԺ, հ. 2, 1947, էջ 254-264) և
Ստ. Նազարյանցի «Կրիտիկա. Թափառական հրեա, գործ Էոժեն Սյու Ֆրանսիացու»
անավարտ գրախոսականը:

Նոյեմբերի 1. «Մեղու Հայաստանին» (№ 44) գրաբար հրատարակում է Գրիգոր Թամամ-
շյանցի «Պանդուխտ հայ» բանաստեղծությունը:

Նոյեմբեր. «Արծվի Վասպուրականը» (№ 11) գրաբար հրատարակում է Սեյադի (իմա՛. Պետ-
րոս Մադաթյան) «Քնար Հայաստանի» («Ես դալար ծառ մի տնկեալ ի Հայկայ»), Մար-
տիրոս Փափազյանի «Անձուկ հայրենեաց» բանաստեղծությունները, Արշամ Գրի-
գորյանի «Սոխակ և բազե» առակը և աշխարհաբար, Գեղամ Աբրահամյանի «Կատու
և մկներ» առակը:

Նոյեմբերի 8. «Մեղու Հայաստանին» (№ 45), Ստեփաննոս Մանդինյանցի՝ ֆրանսերեն (?)
բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Հաղագս
բաղդի» գրական-փիլիսոփայական տրակտատը: Ավարտ՝ 1859 թ. № 4 (հուլիսի 24):

Նոյեմբեր. «Բազմավեպը» (№ 11) գրաբար հրատարակում է Ղևոնդ Ալիշանի «Ի յիշատակի
ամենայն սրբոց» պոեմը: Այն ամսագրում ունի 1844 թ. նշումը:

Նոյեմբեր. «Մասյաց աղավնին» (№ 11) արևմտահայերեն հրատարակում է Նիկողայոս Զորայանի «Գերապատիվ և սրբասուն տեր» խորագիրը կրող նամակ-հոդվածը:

Նոյեմբեր. «Հյուսիսափայլը» (№ 11), Ստեփաննոս Նազարյանցի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Լոտեն դը Լավալի «Կոմս Սոնգոմմերի» վիպակը: Հրատարակված է նաև Կոմս Էմմանուելի (իմա՝ Ս. Նալբանդյան) «Երազ» բանաստեղծությունը, որը Հ. Հայնեի համանուն գործի՝ Ս. Միխայլովի ռուսերեն թարգմանությունից կատարված ազատ փոխադրությունն է (տե՛ս՝ **Ս.Նալբանդյան**, ԵԼԺ, հ. 1, 1945, էջ 88-91), և «Նամակ առ հրատարակողը» հոդվածը (**Անդ**, հ. 2, 1947, էջ 265-273):

Նոյեմբերի 22. «Մեղու Հայաստանին» (№ 43) արևելահայերեն հրատարակում է Սեյադի «Ի դիմաց յուրաքանչյուր հայկազնվո» բանաստեղծությունը:

Նոյեմբերի 23. Պոլսում (Սելամիե) Գրիգոր Օտյանի, Հովհաննես Մարգարյանի, Գարեգին Փափազյանի, Նշան Օտյանի և այլոց նախաձեռնությամբ, հիմնվում է կրթական-հասարակական «Բաժանորդական ընկերությունը», որի նպատակն էր «Բարոյապես ազգային միություն, իսկ նյութապես երկրագործություն»: 1860-ական թվականներին ընկերությունն արգելվեց թուրքական կառավարության կողմից:

«Հանդես ամսօրյա», 1954, № 11-12 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Նոյեմբերի 29. «Մեղու Հայաստանին» (№ 48) արևելահայերեն հրատարակում է Թովմաս Դավթյանի «Ժողովրդական լեզվի վրա» հոդվածը:

Խ. Աբովյանի, Ստ. Նազարյանցի, Հ. Կարենյանցի, Ս. Պատկանյանի և մեր գրականության այլ ներկայացուցիչների գործերի վերլուծության հենքի վրա, բնութագրված են արևելահայերենն ու արևմտահայերենը, բացահայտված են նրանց առավել քան հատկանշական առանձնահատկությունները:

Դեկտեմբերի 9. Փարիզում վախճանվեց կրթական-մշակութային գործիչ, բանասեր, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Ռափայել Թրյանցը: Ծնվ. 1799 թ. մայիսի 15-ին, Պոլսում: Վենետիկի Միսիթարյան միաբանության անդամ էր դարձել 1819 թ. օգոստոսի 29-ից:

«Բազմավեպ», 1859, № 3 («Հանգիստ հավիտենից... Հ. Ռափայելի Թրյանց...»):

Դեկտեմբերի 13. «Մեղու Հայաստանին» (№ 50) գրաքար հրատարակում է Հովհաննես Բաղդասարյանցի «Եզն և ձի» առակը, իսկ հաջորդ համարում (№ 51, դեկտեմբերի 20)՝ Աբրահամ Այվազյանի «Մարդ յաշխարհ» բանաստեղծությունը:

Դեկտեմբերի երկրորդ կես. «Եվրոպան» (№ 25, հավելված), Ներսես Շյուքյուրյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Գոնրատ կայսրը» վիպակը: Ավարտ՝ 1859 թ. № 10 (մայիսի երկրորդ կես):

Դեկտեմբեր. «Հյուսիսափայլը» (№ 12), Միքայել Նալբանդյանի՝ ռուսերենից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ֆաբր դ'Օլիվյեի «Թալիսմաններ» վիպակը:

Դեկտեմբերի երկրորդ կես. «Եվրոպան» (№ 24), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Սուսերամարտության վարպետ մը» պատմվածքը:

Դեկտեմբերի երկրորդ կես. «Երևակը» (№ 48) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Մովսես Խորենացի» հոդվածը: Ավարտ՝ հաջորդ համարում:

-Կեսարիայում (Կենտր. Թուրքիա), Մարտիրոս քահ. Տեր-Նիկողոսյանի ջանքերով, իր գոյությունն է սկսում երկդասյա իգական դպրոցը, «Ս.Կատարինյան» անվամբ: Դպրոցում ավանդվում էր հայոց լեզու, կրոն, կարուձև: Սկզբնական շրջանում այն ուներ շուրջ 50 աշակերտուհի: «Ս.Կատարինյան» իգական դպրոցը գոյություն ունի առ այսօր, ունի մինչև 350 աշակերտուհի և 20 ուսուցիչներ:

«Եղբայրասեր», 1862, № 10 («Եղբայրասեր»): «Արարատ», 1908, № 9 («Մանր լուրեր»), **Գևորգյան Վ.**, Ամենուն տարեգիրքը, Բեյրութ, 1958, էջ 477-480:

-Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական) ծնվեց պատմաբան, բանասեր, ազգագրագետ, լեզվագետ (ռուսերեն, հայերեն, գերմաներեն) Գրիգոր Աբրահամի Խալաթյանը: Վախճ. 1912 թ. փետրվարի 8-ին, Թիֆլիսում:

«Հանդես ամսօրյա», 1912, № 4 («Պրոֆեսոր Գրիգոր Ա. Խալաթյան»): «Արարատ», 1912, № 3 («Գրիգոր Խալաթյան»):

-Թիֆլիսում ծնվեց լրագրային գործիչ, լրագրող, թարգմանիչ (ռուսերենից, ֆրանսերենից, վրացերենից՝ հայերեն) Հովհաննես Սարգսի Տեր-Մարկոսյանը: Վախճ. 1903 թ. օգոստոսի 22-ին:

«Մշակ», 1913, № 185 («Հովհաննես Տեր-Մարկոսյան»), № 186 («Հովհաննես Տեր-Մարկոսյանի հիշատակին»):

-Թիֆլիսում ծնվեց արձակագիր, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն), գյուղագիր Սանդայրը (Ալեքսանդր Պողոսի Պետրոսյան): Վախճ. 1922 թ. իր ծննդավայրում:

Ղարաջյան Գ. (Ս.Տ. Արևմեդ), Սանդայրը և նրա վեպերը (Քննադատական վերլուծություն), Թիֆլիս, 1929, (կազմի վրա՝ 1930), 133 էջ: Հայ գյուղագիրներ (կազմ. Արմ. Թամազյան), Երևան, 1950, էջ 574:

-Պոլսում ծնվեց գրական-մշակութային գործիչ, լրագրող, բանաստեղծ, արձակագիր Ալեքսանդր Գևորգի Փանոսյանը: Վախճ. 1919 թ. հոկտեմբերի 28-ին, իր ծննդավայրում:

«Ալիալսան», «Սողոմոնյան», «Աստղիկ», «Աբխաղոմ», «Ապանոցյան», «Ա. Գևորգյան» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1911, էջ 137, 1912, էջ 74, 1916 – 20, էջ 207, 1921, էջ 327: Աղեքսանդր Փանոսյան, հոբելյանի հիշատակ..., Պոլիս, 1919, 80 էջ:

-Պոլսում ծնվեց լրագրող (թուրքերեն լեզվով), խմբագիր Սամվել Հարությունյանը: Վախճ. 1928 թ. մարտի 17-ին:

1880 (?) - 1914 թթ. Պոլսում խմբագրել է «Ավետաբեր» հայաստառ թուրքերեն շաբաթաթերթը:

«Հայաստանի կոչնակ», 1928, № 22 («Սամվել Գ. Հարությունյան»):

-Պոլսում ծնվեց երաժշտագետ, հայ երաժշտության տեսաբան Թադևոս Էքսերճյանը: Վախճ. 1913 թ. մարտի 10-ին, իր ծննդավայրում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1914, էջ 394:

-Յոպեում (հետագայում՝ Հոպե, այժմ Յաֆֆա, գտնվում է Իսրայելում) ծնվեց գրականագետ-բանասեր, լրագրող (գերմաներեն և հայերեն լեզուներով) Ֆրեդերիկ Հակոբի Մուրադյանը: Վախճ. 1931 թ. մայիսին, Երուսաղեմում:

Սկրոտիչ Ադավունի, Միաբանք և այցելուք հայ Երուսաղեմի, Երուսաղեմ, 1929, էջ 533-534: «Հայաստանի կոչնակ», 1932, № 23 («Հայ ազգային կյանք»):

-Պոլսում (?) ծնվեց մշակութային գործիչ, լրագրող Հովհաննես Կարապետյանը: Վախճ. 1940 թ. օգոստոսին, Օլդ Գրինիչում (ԱՄՆ):

«Հայաստանի կոչնակ», 1940, № 23 («Վեր. Հովհաննես Կարապետյան»), № 36 («Վեր. Հովհաննես Կարապետյան»):

-Պոլսում (?) ծնվեց գրական-մշակութային գործիչ, լրագրող, խմբագիր Ստեփան Մամիկոնյանը: Վախճ. 1923 թ.փետրվարի 28-ին, Թիֆլիսում:

Խմբագրել և հրատարակել է ռուսերեն մի քանի պարբերականներ:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1925, էջ 372:

-Բեռլինում (?) ծնվեց գերմանացի հայագետ, թարգմանիչ (հայերենից՝ գերմաներեն), խմբագիր Հովհաննես Ռիխարդի Լեպսիուսը (Jean Richard Lepsius): Վախճ. 1926 թ. փետրվարի 3-ին Մերբանում (Թիրոլի մարզ, Հս, Իտալիա):

1914 թ. հիմնադրել և խմբագրել է «Մեսրոպ» երկլեզվյան (հայերեն և գերմաներեն) ամսագիրը:

-Վենետիկում, Ղևոնդ Ալիշանի՝ գերմաներեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, գերմաներեն և գրաբար զուգահեռ տեքստերով, առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է Հովհաննես Բիրքերի (իմա՝ Յոհանն-Լադիսլավ Պուրկեր) «Ռոտովի Հալբերդունի» (իմա՝ «Ռուդոլֆ Հալբերդ» դյուցազնագությունը: 475 էջ:

Աշխատելով խստիվ կերպով հավատարիմ մնալ բնագրին, թարգմանիչը հայերեն է թարգմանել անգամ անձնանուններն ու տեղանունները: «Հալբերդ» թարգմանվել է «Հալբերդունի», «Լեմբերգը»՝ «Առյուծաթիլ», «Քյոնիգսբերգը»՝ «Արքայաթիլ», «Համբուրգը»՝ «Հոմբերդ», «Նյուրնբերգը»՝ «Նորիկ-թիլ», «Նեապոլը»՝ «Նորաքաղաք» և այլն:

-Վենետիկում գրաբար հրատարակվում է Հովհաննես Ավդալյանի «Ճառ ի ժողովի անդամոց Հայկական մարդասիրական ճեմարանի, որ ի Կալկաթա» գիրքը: 39 էջ:

-Վենետիկում, Գևորգ Հյուրմյուզյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ և ֆրանսերեն-գրաբար համատեղ տեքստերով, հրատարակվում է Պիեռ Կոռնելի «Պոլիկտոս վկա հայկազն» ողբերգությունը: 157 էջ:

Նույնը՝ 1873 թ., միայն գրաբար թարգմանությունը, 113 էջ:

Վերջում (էջ 84-113), «Նորին թարգմանչի ինքնատիպ քերթուածք» խորագրի ներքո, զետեղված են Հյուրմյուզյանի տասնյոթ գրաբար բանաստեղծությունները:

Թե՛ թարգմանությունը և թե՛ բանաստեղծությունները ունեն Ն.Գ.Վ.Ն. (Իմա՛. Հայր Գևորգ Վարդապետ Հյուրմյուզյան) ստորագրությունը:

-Վենետիկում, Եփրեմ Սեթյանի՝ հունարեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Ավգուստինոս Հիպպոնայի «Առանձնախօսութիւնք և առձեռնական» աշխատությունը: 250 էջ:

Թարգմանելով հույն նշանավոր փիլիսոփա-աստվածաբան Ավգուստին Երանելու (354-430 թթ., 395 թ.-ից՝ Աֆրիկայում գտնվող Հիպպոնա քաղաքի եպիսկոպոս) վերոհիշյալ երկու աշխատությունները, թարգմանիչն առաջաբանում զարգացնում է այն տեսությունը, որ դրանք, և մասնավորապես առաջինը՝ «Առանձնախօսութիւնք»-ը (ռուս. թարգ. «Исповедь»), աղբյուր են հանդիսացել Գրիգոր Նարեկացու «Մատենանոց տրեգութեան» գործի համար:

-Վենետիկում գրաբար հրատարակվում է Արսեն Բագրատունու «Հայկ Դիցագն» դյուցազներգությունը (քսան գլուխ, որոնք ունեն «Դրուագ» անվանումը, 22. 210 տող): 621 էջ:

«Հայկ Դիցագնից» մի հատված (9-րդ դրվագի 1120-րդ տողից մինչև վերջ, և 10-րդ դրվագի 119-221 տողերը) Հովսեփ Կապյուլետտու իտալերեն չափածո թարգմանությամբ, հրատարակվել է Վենետիկում, «Porane» խորագրով, 1859 թ., 16 էջ: Հետևելով եվրոպական գրականագիտության այն սկզբունքին, որ ստեղծագործության բովանդակությունն ու սյուժետային կառուցվածքն է որոշում նրա ժանրը, Բագրատունին իր գործն անվանել է «վեպ» (Հիշենք, որ Պուշկինն իր «Եվգենի Օնեգինն» անվանել է «Չափածո վեպ»), Գոգոլը «Մեռած հոգիները»՝ «Պոեմ» և այլն):

-Վիեննայում, Եղիշե Գաֆթանճյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Եղիսաբեթ. իսաչակրաց ժամանակեն վեպ մը» ստեղծագործությունը («Կրթական և զբոսալի տետրակներ», հատ. Խ):

-Վիեննայում, Եփրեմ Չազրճյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն ազատ թարգմանությամբ, հրատարակվում է «Ճավայի դատապարտյալք» վիպակը («Կրթական և զբոսալի տետրակներ», հատ. ԼԸ):

-Վիեննայում, գերմաներեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Բարոյական վեպեր կամ տղոց սիրտը կրթելու համար պատմու-

թյուններ» խորագիրը կրող ժողովածուն («Կրթական և գրոսայի տետրակներ», հատ. ԼԹ):

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Լուսավորյալներն ու լուսավորությունը» գրքույկը: 24 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Ընթերցարան մանկանց, որ է հավաքումն զվարճալի պատմություններու, պիտանի խրատներու, բարոյական առածներու և երգերու» ժողովածուն: 332 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Խաչատուր Կյումուշյանի «Առաջնորդ քաղաքակրթության, մայրերուն դաստիարակությունը» աշխատությունը: 134 էջ:

-Պոլսում, Խաչատուր Կյումուշյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն համառոտ թարգմանությամբ, հրատարակվում է «Կանժի մարկիզուհին» վիպակը, 90 էջ: Հատվածաբար հրատարակվում էր «Մեղու» կիսամսյա հանդեսում, նույն թվականի հունվարի 15-ից (№ 1), մինչև մարտի 31-ը (№ 6):

-Պոլսում գրաբար հրատարակվում է «Վարժութիւն նամակաց, որ է հաւաքածոյ փունջ իմն երփնագունեղ ծաղկանց շնորհագիծ ճոխիմաստ բանից պիտանացուաց» ժողովածուն: 600 էջ:

Պարունակում է ամենազանազան բնույթ ու բովանդակություն ունեցող մոտ հինգ հարյուր նամակաձևեր: Ժողովածուն, դպրոցի իր աշակերտների օգնությամբ, հրատարակության է պատրաստել Գրիգոր Դերձակյանը:

-Պոլսում գրաբար հրատարակվում է Գրիգոր Նարեկացու «Մատեան Ողբերգութեան» պոեմը: 368 էջ:

-Պոլսում, Գարեգին Չափրաստյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ֆրանսուա Շատոբրիանի «Աթալա. սիրավեպ» և «Ռընե» վիպասանությունները: 248 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Արմենակ-Համբարձում Ճիզմեճյանի (իմա՝ Արմենակ Հայկունի) «Վատ սիրտ կամ սոսկալի գիշեր մը Սիրակուզայի մեջ» ողբերգությունը: 12 էջ:

- Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Արմենակ-Համբարձում Ճիզմեճյանի «Ողիմպիադա» ողբերգությունը: 126 էջ:
- Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Արմենակ-Համբարձում Ճիզմեճյանի «Արա Գեղեցիկ» երաժշտական ողբերգությունը: 40 էջ:
- Պոլսում, Հովհաննես Պրուսացի Տերոյենցի (Իմա՛. Չամուռճյան)՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է ֆրանսիացի մանկավարժ Բարիզիի «Տղա կրթելու վրա» գրքույկը: 28 էջ: Առաջաբանում թարգմանիչը քննության առարկա է դարձրել իր թարգմանության և ժամանակակից մանկավարժության հետ առնչվող մի քանի անկյունաքարային հարցեր:
- Պոլսում, Խաչատուր ՌԻթուջյանի՝ իտալերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ջոն Պլաշարի «Սկզբունք դաստիարակության» աշխատության Ա հատորը: 226 էջ:

Երկրորդ հատոր՝ 1862 թ., 201 էջ:
- Պոլսում, Հովհաննես Պրուսացի Տերոյենցի (Իմա՛. Չամուռճյան)՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Գաղտնիք» վիպակը: 127 էջ:
- Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Սարգիս Վանանդեցյանի (Իմա՛. Վանանդեցու) «Միհրդատ» պատմական ողբերգությունը: 54 էջ:
- Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Սարգիս Վանանդեցյանի «Վիրգինիա» պատմական ողբերգությունը: 48 էջ:
- Պոլսում (?) Կարապետ Տեր-Հակոբյանի (Բինկյանցի)՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Հայր Պեթրոսի քարանձավը» վեպը: 224 էջ:
- Թիֆլիսում, աշխարհաբար առաջաբանով, հրատարակվում է Հակոբ Կարենյանցի «Բաղդատութիւն պատմութեան Մովսիսի Խորենացույ, տպագրելոցն ի Վենետիկ, ընդ երկուց ձեռագրաց» աշխատությունը: 130 էջ:
- Թիֆլիսում աշխարհաբար հրատարակվում է Ստեփաննոս Մանդինյանի «Չորս եղանակ տարվո» աշխատությունը: 55 էջ:

- Թիֆլիսում գրաքար հրատարակվում է Առաքել Արարատյանի «Դիմագրաւ ընդդէմ սատան յարուցելոյ ամենապատուական լեզուիս հայոց» աշխատությունը: 110 էջ:
- Թիֆլիսում հրատարակվում է հայ գրականության դասական Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի, ողբ հայրենասիրի. պատմական վեպ» ստեղծագործությունը, որը հրատարակության էր պատրաստել Հովսեփ Փոնդոյանը: 275 էջ:

Դեռ 1830 թվականին Աբովյանի մոտ ծնվում է հայ ժողովրդական հերոս Աղասու մասին գեղարվեստական ստեղծագործություն գրելու նախագաղափարը, որն ավելի խմորվում ու հասունանում է Դորպատում ուսանելու տարիներին (1830-1836 թթ.): Ուսումնառությունն ավարտելուց հետո վերադառնալով Թիֆլիս (1836 թ.) և ծառայության անցնելով տեղի գավառական պանսիոնատում (1837 թ. փետրվարի 12), նա մեծ շրջագայություններ է կատարում Հայաստանում (Շուլավեր, Հաղպատ, Սանահին, Լոռի, Անի, Երևան) և տեսնում ու գրի է առնում այն ամենը, ինչ անհրաժեշտ էր իրեն: 1838 թ. Աբովյանն արդեն որոշել էր, որ ինքը գրելու էր դարասկզբի հայկական հասարակական-քաղաքական կյանքն արտացոլող պատմական վեպ, որի առանցքային կերպարը լինելու էր ժողովրդական հերոս Աղասին: 1841 թ. փետրվարից նա ձեռնամուխ է լինում «Վերք Հայաստանի, ողբ հայրենասիրի» խորագիրը կրող իր պատմավեպի գրությանը (որի մի զգալի մասը՝ չափածո), որը քրտնաջան մշակումներից, կրճատումներից ու փոփոխումներից հետո, ավարտում է 1842 թ. վերջերին: Իր պատմավեպից ավել կամ պակաս մեծության հատվածներ նա կարդացել է Թիֆլիսի պանսիոնատի իր աշակերտների համար (Գ. Աքիմյան, Ալ. Խատիայան, Մ. Ռոտինյան), որոնք, այդպիսով, տեղյակ էին դրա մասին: 1850 թ. Դորպատյան ուսումնառությունից Թիֆլիս վերադարձած Գ. Աքիմյանը հանդիպում է երկու տարի առաջ «իր գլուխը մահու տված» Աբովյանի այրուն՝ Էմիլիե Լոռզեին, նրա թույլտվությամբ նայում է վերջինիս արխիվը, գտնում է «Վերքի» ձեռագիրը, արտագրում է այն և իր հետ արտագրությունը տանում Դորպատ: «Վերքը» դառնում է այնտեղ ուսանող հայերի հանապազօրյա ընթերցանության առարկան ու հորդաբուխ ոգևորության աղբյուրը, որից՝ ամբողջ գլուխներ անգիր իմանալու և այն գեղարվեստորեն կարդալու գործում առանձնապես աչքի էր ընկնում Բ. Պատկանյանը: 1853 թ. ավարտելով ուսումը Դորպատում, Գ. Աքիմյանը գալիս է Թիֆլիս և ձեռնամուխ լինում «Վերքի» հրատարակության աշխատանքներին: Երկարատև ջանքերից

հետո նա կարողանում է գործի մեջ ներգրավել Ներսիսյան դպրոցի նախկին տեսուչ Հովսեփ Փոնդոյանին, որն էլ, ի վերջո, կարողանում է վերևում հիշատակված գիրքը լույս ընծայել 1858 թ.: Փոնդոյանի հրատարակությունը, սակայն, պակասավոր էր, սխալաշատ, կատարվել են մեկից ավելի կրճատումներ բնագրից, ինչպես իր, այնպես էլ Գրաքննական կոմիտեի կողմից (տե՛ս՝ **Ե.Շահազիզ**, Խաչատուր Աբովյանի կենսագրությունը, Երևան, 1945, էջ 98-108: **Հակոբյան Պ.**, Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ստեղծագործական պատմությունը, Երևան, 1955, 255 էջ):

-Թիֆլիսում գրաբար հրատարակվում է Առաքել Արարատյանի «Միալանք գրոցն, որ կոչի Վարդապետարան կրոնի» աշխատությունը: 100 էջ:

-Թիֆլիսում արևելահայերեն հրատարակվում է Մովսես Զոհրապյան Արցախեցու կազմած «Վեպք զվարճալի անցից, որում պարունակին խրատական և իմաստալից ասացվածք» խորագիրը կրող ինքնուրույն և թարգմանական գործերի ժողովածուն: 109 էջ:

-Մոսկվայում գրաբար հրատարակվում է Մսեր և Զարմայր Մսերյանցների կազմած «Ճռաքաղ յարձակ և ի չափածոյ բանից հին և նոր մատենագրաց» ժողովածուն: Տետր Ա, 39 էջ, Տետր Բ, 32 էջ:

-Մոսկվայում, Միքայել Նալբանդյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Կլեմանս Ռոբերտի «Դքսուհի դը Շելվրեոզ» վիպակը: 50 էջ:

Նախապես հրատարակվել է նույն թվականի «Հյուսիսափայլի» № 2-ում (փետրվար): Թարգմանիչը գիրքը ձոնել է «Գևորգ Նազարյան Գեղամյանցի անմոռանալի հիշատակին»:

-Մոսկվայում գրաբար հրատարակվում է Ստեփաննոս Սյունեցու «Պատմութիւն ի վերայ ծագման տոհմին Օրպելեանց և ի վերայ յարձակման Թաթարաց ի Հայս» աշխատությունը: Այն հրատարակության է պատրաստել Ռսկան Հովհաննիսյանը (Երևան-ցի):

-Մոսկվայում, Ստեփաննոս Նազարյանցի՝ ֆրանսերեն բնագրից կատարած աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է Բեռնարդեն դը Սեն-Պիերի «Պավլոս և Վիրգինիա» վեպը և «Հնդկական խուղ» պատմվածքը: 175 էջ:

-Մոսկվայում գրաքար հրատարակվում է Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն հայոց» աշխատությունը: Բնագրագիտական աշխատանքները, առաջաբանն ու ծանոթագրությունները Ռսկյան Հովհաննիսյանի (Երևանցի):

-Փարիզում, Գրիգոր վարդապետ Խապարաճյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Յավալի պատմություն Կոնստ դը Սենվիյլ ազնվականին» պատմվածքը: 32 էջ:

-Փարիզում արևմտահայերեն հրատարակվում է Սարգիս Վանանդեցու «Սուրբն Ներսես կամ Հայաստանի բարերարը» պատմական ողբերգությունը: 73 էջ:

Նույնը որոշ փոփոխումներով՝ Երուսաղեմ, 1863 թ., 68 էջ և 1887 թ., 86 էջ:

-Փարիզում գրաքար հրատարակվում է Սարգիս Թեոդորյանի «Յաղագս դաստիարակութեան մանկանց» աշխատությունը: 172 էջ:

-Փարիզում գրաքար հրատարակվում է Սարգիս Թեոդորյանի «Յաղագս մարդկային իրանց և պարտուց» աշխատությունը: 151 էջ:

-Պետերբուրգում, Ավետիք Խազեգյանի՝ ռուսերեն բնագրից կատարած աշխարհաքար թարգմանությամբ, հրատարակվում է «Չվարճաբանությունք Բալակիրևի, պալատական զվարճախոսին կայսեր Ռուսաց Մեծին Պետրոսի» գիրքը: 104 էջ:

-Զմյուռնիայում արևմտահայերեն հրատարակվում է Գալուստ Կոստանդյանի՝ բնության երևույթների քննությանը նվիրված գրքույկների ժողովածուն, «Հասարակաց թանգարան» խորագրով: Այն բաղկացած է նույն 1858 թ. հրատարակված հետևյալ գրքույկներից. Ա. «Գանկաբանություն համառոտ», 20 էջ: Բ. «Երկրաբանություն համառոտ», 23 էջ: Գ. «Ձգողաբանություն համառոտ», 24 էջ: Դ. «Քիմիաբանություն համառոտ», 22 էջ: Զ. «Կենդանաբանություն համառոտ», 29 էջ: Է. «Բուսաբանություն համառոտ», 19 էջ: Ը. «Ջերմաբանություն համառոտ», 16 էջ: Թ. «Առողջաբանություն համառոտ», 35 էջ: Ժ. «Աստղաբանություն համառոտ», 23 էջ: ԺԱ. «Լուսաբանություն համառոտ», 22 էջ: ԺԲ. «Մագնիսաբանություն համառոտ», 12 էջ: ԺԳ. «Մեսմերաբանություն համառոտ» (ունի նաև երկրորդ՝ «Կենդանի մագնիսաբանություն համառոտ» ենթավերնագիրը), 20 էջ: ԺԴ. «Նմանաբուժություն համառոտ», 12 էջ: ԺԵ. «Մթնոլորտաբանություն համառոտ», 29 էջ, և վերջապես՝ ԺԶ. «Չայնաբանություն համառոտ», 17 էջ:

Հունվարի 1. «Մեղու Հայաստանին» (№ 1) գրաբար հրատարակում է Ռոստոմբեկ Երզնկյանցի «Պանդուխտ Դադստանի» բանաստեղծությունը:

Հունվար. «Հյուսիսափայլը» (№ 1) արևելահայերեն հրատարակում է Գ. Հ. Պախայանի (Իմա՛. Մ. Նալբանդյան) «Անթար» արևելյան գրույցը և Ստ. Նազարյանցի «Թե ինչ բարոյական խորհուրդ ունի մի ազգային թատրոն» հոդվածը:

Հունվարի 1. Պոլսում, հայ առաջադեմ մտավորականների ջանքերով, իր գոյությունն է սկսում գրական, մշակութային և թարգմանական «Հայկազյան ընկերությունը»: Այն բաղկացած էր տասը խորհրդական անդամներից, որոնք իրականացնում էին դեկավարությունը և 117 բաժանորդ-անդամներից (ծաղկուն ժամանակ), իսկ մի տարի անց՝ ունեցավ նաև իր Կանոնադրությունը (10 կետ): «Հայկազյան ընկերությունը» գոյություն ունեցավ մինչև 1883 թ. և շուրջ քսան անուն գիրք հրատարակեց:

«Փարիզ», 1860, № 29 («Այլևայլ»), **Դյումա Ալ.**, Անգուլոն Պետրոս, (թարգ. Հ. Ոսկան), Պոլիս, 1861, էջ 2 (կազմի վրա):

Հունվարի 7. Պոլսում, Մուրատյան և Ռափայելյան վարժարանների նախկին սաների սատարմամբ, իր գոյությունն է սկսում կրթալուսավորական «Մուրատյան և Ռափայելյան աշակերտաց ընկերությունը»: Այն ծաղկուն ժամանակ ուներ շուրջ 60 անդամ, իր գոյությունը դադարեցնում է 1871 թ.: Ընկերության գործադիր անդամների թվում հիշատակվում են Մկրտիչ Պեշիկյաշյանի, Թովմաս Թերզյանի, Գրիգոր Օտյանի անունները:

«Հանդես ամսօրյա», 1952, № 1-3 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Հունվար. Փարիզում, Ստեփան Ոսկանյանի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Արևմուտք (արձագանք Եվրոպայի լուսավորության)» երկշաբաթաթերթը: Քսանչորս համար հրատարակելուց հետո «Արևմուտքը» նույն թվականի վերջին դադարում է:

Հունվարի 9. «Արշալույս արարատյանը» (№ 588) արևմտահայերեն հրատարակում է Գալուստ Կոստանդյանի հոդվածը, որտեղ նա բանավիճելով Ստ. Ոսկանյանի հետ, անդրադառնում է գրական քննադատության մի քանի հարցերի:

Հունվարի 10. «Մեղու Հայաստանին» (№ 1) արևելահայերեն հրատարակում է Հովհաննես Սայաթնովյանցի «Կախարդական ջուր (իմաստնաքաղ թարգմանություն» բանաստեղծությունը:

Հունվարի սկիզբ. Պոլսում (Խասգյուղ) իր գոյությունն է սկսում «Թատերական ընկերությունը», որն իր առջև նպատակ էր դնում սատարել հայ թատերագիրներին, բեմադրել նրանց ստեղծագործությունները և դրանցից լավագույնները հրատարակել: Ընկերությունը գոյություն ունեցավ մինչև 1865 (?) թ.:

Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հ. Ա, Վիեննա, 1957, էջ 458-459:

Հունվար. «Ճռաքաղը» (№ 1) գրաբար հրատարակում է Մսեր Սսերյանցի «Պարոյր պսակեալ» պոեմը (Ավարտ № 11, նոյեմբեր) և «Մանրերգ» խրատականները: «Արամեան մանկունք, աշակերտք Լազարեան ճեմարանի» ստորագրությամբ, հրատարակված է նաև «Նուէր գոհութեան...» բանաստեղծությունը:

Հունվարի 10. «Մեղուն» (№ 1) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Անիձձա կամ սեր անպսակ» վիպակը (հեղինակ՝ Ն.Ս.Ն.): Շարունակվում է մինչև № 8 (մարտի 20) և մնում է անավարտ:

Հունվար. «Արծվի Վասպուրականը» (№ 1) գրաբար հրատարակում է Արսեն Թոխմախյանի «Նոր տարի» բանաստեղծությունը:

Վերջինիս գործերը հետագայում հրատարակվել են հետևյալ հաջորդականությամբ. «Սմբատ վտարանդի, Արտաշէս Արշակունի թագաժառանգ մանկիկն ի գրկի» (№ 2, փետրվար): «Գայլ և գառնուկ» (№ 4, ապրիլ, արևմտահայերեն): «Իղձք աշակերտիս առ մայր վարժարան իմ» (№ 5, մայիս, գրաբար): «Միայնիկ գիշեր» (№ 7, հուլիս): «Ցուլ և մուկ» (№ 8, օգոստոս, արևմտահայերեն): «Արսէն ի դաշտն Աւարայրի» (№ 11, նոյեմբեր, գրաբար):

Հունվարի երկրորդ կես. «Արևմուտքը» (№ 2) արևմտահայերեն հրատարակում է Ստեփան Ոսկանյանի «Բերանժե» հոդվածը:

Հունվարի 20. «Մեղուն» (№ 2) գրաբար հրատարակում է «Սահարձան» եղերերգությունը և արևմտահայերեն՝ «Օրթաքյոյի թատրոնը» թատերախոսականը:

Հունվարի 31. «Մեղուն» (№ 3) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Մանկասարին հարսնիքը» երգիծական վիպակը: Ավարտ՝ № 36 (դեկտեմբերի 31): Թուրքերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է նաև «Երկու ծովի արանքում» բանաստեղծությունը:

Հունվարի 31. «Մեղու Հայաստանին» (№ 5) արևելահայերեն հրատարակում է Հովհաննես (հետագայում՝ Սիիրդատ) Ամրիկյանի «Մասիս» բանաստեղծությունը:

Փետրվարի 7. «Մեղու Հայաստանին» (№ 6) արևելահայերեն հրատարակում է Սեյադի «Առ աշխատավոր հարազատ Մեղուն» բանաստեղծությունը և Գ. Տեր-Հարությունյանցի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, «Աշխարհի վտանգը առաջին հասակի մեջ» պատմվածքը:

Փետրվարի առաջին կես. «Արևմուտքը» (№ 3) արևմտահայերեն հրատարակում է Ստեփան Ոսկանյանի «Գաբրիկ» երգիծական բանաստեղծությունը, որ գրված է Գաբրիել Այվազովսկու դեմ: Սկսում է հրատարակվել նաև «Հայ դյուցազնուհի մը» պատմվածքը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Փետրվարի 10. «Մեղուն» (№ 4), Կ. Քոիստոֆի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Վիկտոր Հյուգոյի «Մովսես զերծեալ ի ջուրց» բանաստեղծությունը:

Փետրվարի 14. Շուշիում ծնվեց գրական-մշակութային գործիչ, լրագրող (հայերեն և ռուսերեն լեզուներով), բանաստեղծ, թարգմանիչ (ռուսերենից և ֆրանսերենից՝ հայերեն), խմբագիր Սիմյոն Գասպարի Հախումյանը: Վախճ. 1905 թ. փետրվարի 14-ին, Փարիզում:

1882 թ. Շուշիում հիմնադրել և մինչև 1884 թ. խմբագրել է «Գործ» ամսագիրը (վերջին երկու տարում «Գործը» լույս էր տեսնում Թիֆլիսում):

1901 թ. Փարիզում հիմնադրել և մինչև 1902 թ. խմբագրել է «Ժամանակ» վեցամսյա գրական հանդեսը: Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Ահրիման», «Շաիր Ջալալի», «Մար-Ամադ», «Ծերուկ» կեղծանուններով:

«Տարագ», 1905, № 7 («Սիմյոն Հախումյան»), №10 («Սիմյոն Հախումյան»...), Մխիթարյան Մ., 19-րդ դարի երկրորդ կեսի արևմտահայ պարբերական մամուլի պատմությունից, Երևան, 1976, էջ 515-519 և հտն: **ՉԱԳԱԹ**, Ս. Հախումյանի ֆոնդ:

Փետրվար. «Հյուսիսափայլը» (№ 2), Ստ. Նազարյանցի՝ գրաբար բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ներսես Լամբրոնացու «Ատենաբանությունը»: Փոքրիկ առաջաբանում («Ներսես Լամբրոնացի և նորա ատենաբանությունը») թարգմանիչը տալիս է նրա գործի ու գործունեության համառոտ բնութագրությունը: Վարդան Սուլթանյանցի՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է նաև «Մի բուռ հող» բանաստեղծությունը (տե՛ս **Սաղյան Մ.**, Հյուսիսափայլի պոեզիան, Երևան, 1956, էջ 322):

Փետրվարի 14. «Մեղու Հայաստանին» (№ 7) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Մանդինյանցի «Վարդան Մամիկոնյան» հերոսապատումը (ավարտ՝ հաջորդ համարում) և Ջալալ Ջալալյանցի «Ռիդերձ անձկալետ» գրաբար բանաստեղծությունը:

Փետրվար. «Ճոաքաղը» (№ 2) գրաբար հրատարակում է Մարտիրոս Խարահիսարցու «Տալուրախութեան», Մսեր Մսերյանցի «Հանդես հարսանեաց Արտաշիսի Բ.», «Ցուց ի գալուստ Սաթինկան ի հայս», Ս. Մարյանցի «Չայն առ Միհրդատ» բանաստեղծությունները: Հրատարակված է նաև Ջարմայր Մսերյանցի «Խալիպյան ուսումնարան» արևմտահայերեն հոդվածը, որտեղ զետեղված են Գ. Այվազովսկու «Զարթի՛ր Մայր Հայաստան...» և Մսեր Մսերյանցի «Մի՛ այլ լուսացող...» գրաբար բանաստեղծությունները:

Փետրվար. Լանկայում (Թուրքիա) ծնվեց գրահրատարակիչ, լրագրող, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Բյուզանդ Պոզաճյանը: Վախճ. 1934 թ. Պոլսում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Խարազան» և «Մտրակ» կեղծանուններով: 1901-1905 թթ. Պոլսում խմբագրել է «Հանրագիտակ» շաբաթաթերթը, 1885 թ.՝ «Լույս» ամսօրյա հանդեսը:

«Բազմավեպ», 1905, № 3 («Խմբագրի կյանք»): **Թեոդիկ**, Տիպ ու տառ, Պոլիս, 1912, էջ 128-129: «Ընդարձակ տարեցույց», Պոլիս, 1934, էջ 295:

Փետրվար. «Արծվի Վասպուրականը» (№ 2) արևմտահայերեն հրատարակում է «Ողբերգություն Անի քաղաքին» (հեղ.՝ «Ճանապարհորդ ազգասեր ոմն»), Սեյադի (իմա՛. Պետրոս Մադաթյան) «Քնար Հայաստանի» (Ո՛վ իմ գեղեցիկ բուրաստան), և գրաբար՝ Արշամ Գրիգորյանի «Գովասանութիւն ի Վասպուրական աշխարհն» բանաստեղծությունները:

Փետրվարի 20. «Արշալույս արարատյանը» (№ 591), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է մի հատված Ալեքսանդր Դյումայի «Բորջիաները» («Les Borgia») գրքից: Ուինի նաև «Ալեքսանդր Ջ. պապին ժամանակի դիպվածներեն փոքրիկ դիպված մը» ենթավերնագիրը:

Փետրվար. «Բազմավեպը» (№ 2), Սամվել Գանթարյանի՝ իտալերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Տորկվատո Տասսոյի «Երուսաղեմ ազատեալ» դյուցազներգության 7-րդ հատվածը: Տողատակում տրված է հատվածի արձակ բովանդակությունը:

Փետրվարի 21. «Մեղու Հայաստանին» (№ 8) գրաբար հրատարակում է Ջալալ Ջալալյանցի «Նուէր սիրոյն և երախտեան» բանաստեղծությունը:

Փետրվարի երկրորդ կես. «Երևակը» (№ 52), արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Մի՛ ըստ աչս դատեք» վիպակը: Ավարտ՝ № 58 (մայիսի երկրորդ կես):

Փետրվարի 28. «Մեղու Հայաստանին» (№ 9) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Մանդինյանցի «Հայոց լեզուն» թատերական ստեղծագործությունը: Ավարտ՝ №11 (մարտի 14):

Մարտի 5. «Մասիսը» (№ 371) արևմտահայերեն հրատարակում է Տիգրան Յուսուֆյանի «Հանդես թատերական» գրախոսականը: Բնութագրված են պոլսահայ թատերական ընկերությունները, ապա վերլուծված է Մ. Պեշիկթաշլյանի «Վահան» և «Թատրերգություն ավագակաց» ողբերգությունները:

Մարտի 11. Վերին Ագուլիսում (այժմ՝ Նախիջևանի ԻՍՍՀ, Օրդուբադի շրջան) ծնվեց կուսակցական գործիչ, լրագրող (հայերեն և ռուսերեն լեզուներով) Քրիստափոր Մկրտչի Միքայելյանը: Վախճ. 1905 թ. մայիսի 4-ին, Կնյաժևո գյուղում (Բուլղարիա):

«Սուրեն» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Քրիստափորի հիշատակին (հոդվածների ժողովածու), Պոլիս, 1909, 112 էջ: **Ֆրանգյան Ե.**, Քրիստափոր Միքայելյան, 1914, 56 էջ:

Մարտի առաջին կես. «Արևմուտքը» (№ 5), Ստեփան Ոսկանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն արձակ թարգմանությամբ, հրատարակում է Ֆելիցիտե Լամընյեի «Առակ» ստեղծագործությունը:

Մարտի 12. «Մասիսը» (№ 372), Մատթեոս Մամուրյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն արձակ թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Ֆիլդին» վիպակը: Ավարտ՝ № 402 (հոկտեմբերի 8):

Մարտի 14. «Մեղու Հայաստանին» (№ 11) արևելահայերեն հրատարակում է «Ափ հափո... հավուր հինգշաբթի մեծի Բարեկենդանի» պոեմը՝ «Ծառուկ» ստորագրությամբ:

Մարտ. «Արծվի Վասպուրականը» (№ 3), արևմտահայերեն հրատարակում է Սեյադի (Իմա՛. Պետրոս Մադաթյան) «Վասն իշխանաց» բանաստեղծությունը:

Մարտ. «Հյուսիսափայլը» (№ 3), Ստեփաննոս Նազարյանցի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ֆրիդրիխ Շիլլերի «Թուրանոթ (Չինաստանի իշխանուհին)» կատակերգությունը: Ավարտ՝ № 6 (հունիս):

Մարտի 21. «Մեղու Հայաստանին» (№ 12), թիֆլիսահայ բարբառով, հրատարակում է «Խոսակցություն Թիֆլիզի կնգդերաց մեջ» թատերական երկխոսությունը: Ավարտ՝ № 14 (ապրիլի 4):

Ոհնի «Գ...» ստորագրությունը: Ընդդիմախոսում է նույն պարբերականի 1859 թ. № 9-ում (փետրվարի 28) հրատարակված Ս. Մանդինյանի «Հայոց լեզուն» թատերական ստեղծագործության մեջ առաջ քաշված մի քանի հարցադրումներին:

Մարտի երկրորդ կես. «Արևմուտքը» (№ 6) արևմտահայերեն սկսում է հրատարակել Ստեփան Ոսկանյանի «Խաչատուր Աբովյան» հոդվածը: Որոշ ընդհատումներով շարունակվում է մինչև № 10 (մայիսի երկրորդ կես) և ավարտվում է «Վերք Հայաստանի» պատմավեպից բերված ընդարձակ հատվածով:

Մարտի 31. Կեսարիայում (Կենտր. Թուրքիա) ծնվեց լրագրող, գրական-մշակութային գործիչ, թարգմանիչ (անգլերենից՝ հայերեն) Հարություն Մոստիչյանը: Վախճ. 1919 թ. հունիսի 28-ին, Լոնդոնում:

«Կոչնակ», 1919, № 27 («Մահ»), № 29 («Հարություն Մոստիչյան»): **Թեոդիկ**, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1923, էջ 395-397:

Ապրիլի առաջին կես. «Արևմուտքը» (№ 7) արևմտահայերեն հրատարակում է Ստեփան Ոսկանյանի «Առ պարոն Հակոբ Կոճիկյան» հրապարակախոսական հոդվածը:

Պատասխանելով պետական ակնավոր գործիչ, Թուրքիայում հրատարակվող այլալեզու (ոչ թուրքերեն) հրատարակությունների վերահսկիչ Հակոբ Կրճիկյանի անհարգալից տոնով իրեն գրած նամակին, Ոսկանյանը բացահայտում է նրաներքին գծուծ էությունը, իր ժողովրդի հոգևոր շահերը Օսմանյան կայսրությանը վաճառքի հանելու աշխատանքային նրա «եղանակը»:

Ապրիլի 4. «Մեղու Հայաստանին» (№ 14) արևելահայերեն հրատարակում է Սեյադի (իմա՛. Պետրոս Մադաթյան) «Խորհրդակցություն իշխանացն հայոց Վարդանա Մամիկոնյանց և Վասակա Սյունյաց...» պոեմը:

Ապրիլ. «Բազմավեպը» (№ 4), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ժան Լաֆոնտենի «Մահ և փայտահար» առակը:

Ապրիլի 12. «Մեղու Հայաստանին» (№ 15) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Մանդինյանցի «Քրիստոս Հարյավ ի մեռելոց» թատերական ստեղծագործությունը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Ապրիլ. «Արծվի Վասպուրականը» (№ 4) արևմտահայերեն հրատարակում է Սեյադի (իմա՛. Պետրոս Մադաթյան) «Վասն գինվո և արբեցության» բանաստեղծությունը և գրաբար՝ Ա. Գասպարյանի «Այգ երթայ և ազգ գայ և յերկինս յափտեան կայ» չափածո ստեղծագործությունը:

Ապրիլ. «Հյուսիսափայլը» (№ 4), Ստեփաննոս Նազարյանցի՝ լատիներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Մարկոս Տուլիոս Կիկերոնի «Լեկիոսը կամ թե բարեկամության վերա խոսակցություն» գրվածքը: Թարգմանությանը նախորդող ներածականում («Նախաձանոթ գիտելիք») թարգմանիչը տալիս է Կիկերոնի կյանքի ու գործի, ինչպես նաև վերոհիշյալ աշխատության համառոտ բնութագիրը:

Ապրիլի 18. «Մեղու Հայաստանին» (№ 16) արևելահայերեն հրատարակում է Հովհաննես Պոռոջ Աշտարակեցու (իմա՛. Պերճ Պոռոջյան) «Առ անձկալին Շուշան, դուստր Վարդանա» պոեմը:

Ապրիլ. «Ճոռաքաղը» (№ 4) գրաբար հրատարակում է Զարմայր Մսերյանցի «Զատիկ, կարմիր ձու», Մսեր Մսերյանցի «Երգ ի Վարդան Մամիկոնեան» և Սմբատ Շահազիզի «Արարատեան դաշտ» բանաստեղծությունները և այլ չափածո գործեր:

Նույն համարում. արևմտահայերեն հրատարակվում է Զարմայր Մսերյանցի «Հայկազնյան տարեգիր» գրական-հրապարակախոսական աշխատությունը (Գրախոսված են Ն. Փուղինյանցի, Ն. Ալադաթյանցի, Մ.Մսերյանցի, Հովսեփ Օրբելու գործերը: Վերջում զետեղված է Մ. Խազանճյանի նամակը՝ ուղղված «Հյուսիսափայլում» հրատարակված մի թատերախոսության դեմ):

Ապրիլի երկրորդ կես. «Արևմուտքը» (№ 8), Ստեփան Ոսկանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Աբբա Պրևոյի «Մանոն Լեսկո» վեպը: Որոշ ընդհատումներով շարունակվում է մինչև № 19 (հոկտեմբերի առաջին կես) և մնում է անավարտ: Նույնի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակվել նաև՝ Ժան-Պիեր Ֆլորիանի «Երկու տոմսակ» կատակերգությունը (ավարտ՝ № 9, մայիսի առաջին կես) և ֆրանսերենից կատարած արձակ վերաշարադրությամբ, մի առակ Սասնիցի:

Ապրիլի 20. «Մեղուն» (№ 11, հավելված) արևելահայերեն հրատարակում է Պետրոս Տեր-Մադաթյանցի (իմա՝ Սեյադ) «Ի գովեստ... Լոռու-Մելիքյանի» բանաստեղծությունը:

Մայիսի 1. «Արշալույս արարատյանը» (№ 596) գրաբար հրատարակում է Կարապետ Շահնազարյանի գրած՝ Ստեփաննոս Ասողիկի «Պատմութիւն տիեզերական» գրքի առաջաբանը և Զարմայր Ստեփան Զախրրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, Ժիրերի «Վերջին դատաստան» պատմվածքը:

Մայիսի առաջին կես. «Եվրոպան» (№ 9) արևմտահայերեն հրատարակում է «Գաղթող հայ մը» բանաստեղծությունը (հեղինակ՝ «Ա.»): Բանաստեղծության մեջ հիշատակվում է Բայրոնը:

Մայիսի առաջին կես. «Երևակը» (№ 57) արևմտահայերեն հրատարակում է «Երգիծական բանաստեղծություն» հոդվածը: Քննության առարկա դարձնելով Ռ. Պատկանյանի «Անվնաս մարդ» բանաստեղծությունը, հեղինակը դրա հենքի վրա խոսում է երգիծական բանաստեղծության բնորոշ առանձնահատկությունների մասին:

Մայիս. Պոլսում իր գոյությունն է սկսում կրթահրատարակչական «Տպագրական ընկերություն հայոցը»: Վերջինս իր նպատակն էր համարում «Հայերեն լեզվով բարոյական, պատմական, ողբերգական, կատակերգական և միանգամայն զվարճալի ու օգտա-

կար գրքեր և նախնյաց ընտիր մատենագրությունները տպել տալ և արժան գնով ազգին վաճառել»: Ընկերությունը գոյություն ունեցավ մինչև 1860-ական թվականները:

«Հանդես ամսօրյա», 1957, № 6-7 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Մայիսի առաջին կես. «Արևմուտքը» (№ 9), Ստեփան Ոսկանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ֆրանսուա Շատոբրիանի «Հայրենիքի յիշատակ» բանաստեղծությունը:

Մայիս. «Հյուսիսափայլը» (№ 5) արևելահայերեն հրատարակում է Գ. Հ. Պախայանի (իմա՛. Մ. Նալբանդյան) «Մունեջիմ բաշի» (իմա՛. արքունական աստղագետ) ակնարկը: Արևելահայերեն հրատարակված են նաև Մ. Նալբանդյանի «Ազգային ժառանգությունք» հոդվածը (տե՛ս՝ **Մ.Նալբանդյան**, ԵԼԺ, հ. 2, Երևան, 1947, էջ 274-277) և Թեոդորոս Լալազարյանցի՝ գերմաներեն բնագրից կատարած չափածո թարգմանությամբ «Շիլլերի մի քանի խոսքը» բանաստեղծությունը: (Վերջինիս հետ կապված բանասիրական մանրամասնությունները տե՛ս **Սաղյան Մ.**, Հյուսիսափայլի պոեզիան, էջ 404 և 443):

Մայիս. «Ճոքադրը» (№ 5) արևմտահայերեն հրատարակում է Մսեր Մսերյանցի «Ձնությունք հրատարակյալ գրվածոց Ստեփաննոսի Նազարյանց, դոկտորի արևելյան լեզվագիտության» գրախոսականը (ավարտ՝ նոյեմբեր, № 11-ում): Գրախոսված է Նազարյանցի «Վարդապետարան կրոնի» աշխատությունը և տեսական-աստվածաբանական ու լեզվաոճական բնույթի մի շարք դիտողություններից հետո, բացասաբար է գնահատված: Տպագրված է նաև վերջինիս «Սարդ և ծիծառն» բանաստեղծությունը և երկու խրատականներ «Մանրերգ» խորագրով:

Նույն համարում. միջին հայերենով հրատարակված է «Այցելություն սոխակի առ ջարդ, ոգյալ բանաստեղծորեն» ոտանավորը «յանձանոթ հեղինակե» և արևմտահայերեն՝ Մսեր Մսերյանցի «Հայկազյան տարեգիր» գրական-հրապարակախոսական աշխատությունը (Բարձրացված է «ազգային ձրիական ուսումնարանաց» հարցը, գրախոսված է Ոսկան Հովհաննիսյանի (Երևանցի) հրատարակած՝ աշուղ Սեյադի երգերի ժողովածուն, Գաբրիել Հեջուբյանցի թարգմանած «Որբ Մատիլդ» բարոյավեպը, դրվատանքով ներկայացված է «Մեղու Հայաստանի»-ում հրատարակված Ստ. Պալասանյանցի «Տեղեկությունք ի վերա նամականի Պ. Նալբանդյանցի» հոդվածը: Վերջում զետեղված է Ալեք-

ասնդր Բ-ի հրովարտակը («Высочайшая грамота»)՝ Մատթեոս ծայրագույն պատրիարքին Ամենայն հայոց կաթողիկոս ճանաչելու մասին:

Մայիս. «Արծվի Վասպուրականը» (№ 5) գրաբար հրատարակում է Արսեն Թոխմախյանի «Իդձք աշակերտիս առ մայր վարժարանն իմ», Գարեգին Սրվանձտյանի «Աղօթք մանկանց» և «Տաղ ի մեծապանծ թագաւորս Հայաստանի» (ունի «Ոմն արդի բանահիւսից» ստորագրությունը) բանաստեղծությունները:

Նույն համարում. գրաբար հրատարակվում է «Տաղ Վարագայ խաչին» բանաստեղծությունը:

Մայիս. «Բազմավեպը» (№ 5) արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Կոնֆուցիոսի առածները»: Որոշ ընդհատումներով շարունակվում է մինչև տարվա վերջը:

Մայիսի երկրորդ կես. «Արևմուտքը» (№ 10) արևմտահայերեն հրատարակում է Ստեփան Ոսկանյանի «Սագ մը պուետ» երգիծական բանաստեղծությունը, որն ուղղված է Խաչատուր «պուետ» Միսաքյանի դեմ:

Մայիսի 20. Պոլսում ծնվեց դերասանուհի, թատերական-մշակութային գործիչ, հուշագրող Տիկին Ազնիվ Հրաչյան (Ազնիվ Գրիգորի Մինասյան): Վախճ. 1918 թ. մայիսի 20-ին, Դիլիջանում:

Ազնիվ Հրաչյա, Իմ հիշողություններս, Փարիզ, 1909, 180 էջ: «Մշակ», 1920, № 7 («Տիկին Ազնիվ Հրաչյա»): **Ստեփանյան Գ.,** Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. Ա, Երևան, 1962, էջ 371-376:

Մայիսի 23. «Մեղու Հայաստանին» (№ 21) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Մանդինյանցի «Հարսնախոսություն» դրաման (որոշ ընդհատումներով շարունակվում է մինչև № 27 (հուլիսի 4-ը), և «Քանի մի խոսք Հայոց վարդապետաց աշխատանքի վերա» ուսումնասիրությունը: Ավարտ՝ № 27 (հուլիսի 4):

Հունիս. «Հյուսիսափայլը» (№ 6), Վարդան Սուլթանյանցի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է երեք բանաստեղծություններ:

Հունիս. «Ճոքաբաղը» (№ 6) արևելահայերեն հրատարակում է Նիկոլայ Պապունաբեգի (Նիկոլայոս Ալադաթյան ?) «Վոդնիլ և картины» թատերագիտական հոդվածը: Հրատա-

րակված է նաև Զարմայր Մսերյանցի «Հայկազնյան տարեգիր» գրական-հրապարակախոսական աշխատությունը: Այստեղ հոդվածագրի նկատումներն են դպրոցի ու դաստիարակության մասին, Քերովբե Աստվածատրյան-Ասլանբեկի բերանով քննադատված է «Հյուսիսափայլի» գործունեությունը, դրվատված է «Նոր քնար Հայաստանի» ժողովածուն (Հինգերորդ տետր): Վերջում տեղեկություններ է հաղորդվում Փարիզի «Մասյաց աղավնու» դադարելու մասին:

Հունիս. «Արծվի Վասպուրականը» (№ 6) գրաբար հրատարակում է Հ. Արշավիրի (իմա՝ Հակոբ Արշավիր Փոխանյան) «Աղուէս և գայլ», իսկ № 8 (օգոստոս)՝ «Անդեայք և գայլք» առակները: Գրաբարով հրատարակված են նաև Բարդուղիմեոս վարդապետի «Տաղի Կարմրաւոր սուրբ Աստուածածին», «Մեծն Սմբատ Մամիկոնեան», «Գայլ Վահան, իշխան մեծ» (վերջին երկուսն ունեն «Ոմն ի բանահիւսից» ստորագրությունը) բանաստեղծությունները և աշխարհաբար՝ Սեյադի (Պետրոս Մադաթյան) «Քնար Հայաստանի», («Ո՛վ դու անցավոր հայ երիտասարդ») չափածո ստեղծագործությունը:

Հունիսի 25. «Մասիսը» (№ 387) արևմտահայերեն հրատարակում է ընդարձակ մի հոդված Ստեփան Ոսկանյանի և նրա «Արևմուտք» պարբերականի դեմ:

Հունիսի երկրորդ կես. «Երևակը» (№ 60) արևմտահայերեն հրատարակում է «Կիրակոս պատմիչ և պարոն Դյուլյորիե» հոդվածը:

Հունիսի 30. «Մեղուն» (№ 18) արևմտահայերեն հրատարակում է «Արևմուտք», արձագանք Եվրոպայի լուսավորության» հոդվածը, որտեղ բացասաբար է գնահատված Ստեփան Ոսկանյանի դերն ու գործունեությունը:

Հուլիսի սկիզբ. Զմյուռնիայում, Տիգրան Սավալանյանի, Գալուստ Կոստանոյանի, Սարգիս Վանանդեցու, Արամ Տետեյանի և այլոց նախաձեռնությամբ, իր գոյությունն է սկսում կրթական-մշակութային «Հաշտենից ընկերությունը», որն իր առջև նպատակ էր դնում «Հսկել ազգային վարժարանաց, խնամածություն որբոց և անտերունչ ուսանող մանկանց, ծավալումն օգտակար գրեւո ի կարոտյալ համազգիս, միով բանիվ, լինել ի ամենայնի օժանդակ ազգային առաջադիմության ըստ կարի»:

«Ճոթաթղ», 1859, № 12, էջ 448-449: «Արշալույս արարատյան», 1859, № 601 («Հայտարարություն»), № 602 («Հաշտենից ընկերություն»):

Հուլիսի 18. «Մեղու Հայաստանին» (№ 29), Սմբատ Կարինյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Մոսկվայի ժանտախտը» պատմվածքը: Ավարտ՝ № 33 (օգոստոսի 15):

Հուլիսի առաջին կես. «Երևակը» (№ 61) արևմտահայերեն հրատարակում է «Հայոց ոստիկաններուն վրա» հոդվածը: Ավարտ՝ № 63 (օգոստոսի առաջին կես): Շարադրված է Հայաստանի կառավարիչ ոստիկանների մասին եվրոպացիների հայտնած կարծիքները:

Հուլիս. «Բազմավեպը» (№ 7), Էդուարդ Հյուրմյուզյանի՝ լատիներեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ և ծանոթագրություններով, հրատարակում է Պուրլիոս Վիրգիլիոս Մարովնի «Հովուականքի» առաջին գլուխը: Հրատարակությունը որոշ ընդհատումներով, շարունակվում է մինչև 1860 թ. վերջը, և այդ ընթացքում լույս են տեսնում «Հովուականքի» բոլոր տասը գլուխները:

Հուլիս. «Հյուսիսափայլը» (№ 7), Ստեփաննոս Նազարյանցի՝ գերմաներենից կատարած արևելահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ջիովաննի Քաստիի «Խոսուն անասունքը (անասունները թագավոր են ընտրում յուրյանց վրա)» պոեմը (երկրորդ երգ) և Վիտտորիո Ալֆիերիի «Փիլիպպոս երկրորդ, թագավոր Սպանիայի» դրաման: Գևորգ Բարխուդարյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակված է նաև Ֆրիդրիխ Շիլլերի «Պատանին աղբյուրի մոտ», «Հովհաննայի հրաժարվիլը», «Կորած սերը» և «Խոսակցությունը լուսնակի հետ» բանաստեղծությունները (տե՛ս **Սադյան Մ.**, Հյուսիսափայլի պոեզիան, էջ 121-143, 167-204):

Հուլիս «Ճռաքաղը» (№ 7) գրաբար հրատարակում է Մսեր Մսերյանցի «Մուկն և գորտ» և «Աքաղաղ և մարգարիտ» առակները:

Նույն համարում. արևելահայերեն հրատարակվում է Զարմայր Մսերյանցի «Հայկազնյան տարեգիր» գրական-հրապարակախոսական աշխատությունը:

Հուլիս. «Արծվի Վասպուրականը» (№ 7) արձակ գրաբարով հրատարակում է «Շուն և կատու» առակը:

Օգոստոս. «Մեղու Հայաստանին» (№ 31) Թիֆլիսի բարբառով հրատարակում է Գևորգ Տեր-Աղեքսանդրյանցի «Մեկ խարազի կյանքից» երգիծական պոեմը:

Օգոստոսի 7. «Արշալույս արարատյանը» (№ 603), Տ.Հ. Գարագաշյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Մասիլյոնի «Վերջին օրվա մոռացումը» ակնարկը:

Օգոստոսի 8. Պոլսում ծնվեց գրական-մշակութային գործիչ, լրագրող, թարգմանիչ (ֆրանսերենից և թուրքերենից՝ հայերեն) Բյուզանդ Հովհաննեսի Քեչյանը: Վախճ. 1927 թ. հունիսի 29-ին:

1879-1884 թթ. Պոլսում խմբագրել է «Մասիս» լրագիրը: 1884 թ. Պոլսում հիմնադրել և մինչև 1890 թ. խմբագրել է «Արևելք» օրաթերթը: 1896 թ. Պոլսում հիմնել և մինչև 1915 թ. խմբագրել է «Բյուզանդիոն» օրաթերթը:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Բ.Պարույր», «Արամազդ», «Տանուտեր Հարո», «Փավստոս Բյուզանդացի» կեղծանուններով:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1910, էջ 291, 1914, էջ 65, 1922, էջ 44, 1928, էջ 651: Նույնի՝ Տիպ ու տառ, Պոլիս, 1912, էջ 121: «Հայաստանի կոչնակ», 1927, №№ 34, 35 («Բյուզանդ Քեչյան»): **Ջոհրասպ Գր.**, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1962, էջ 401-404 («Ծանոթ դեմքեր»):

Օգոստոս. «Հյուսիսափայլը» (№ 8) արևելահայերեն սկսում է հրատարակել Միքայել Նալբանդյանի «Մեռելահարցուկ» վեպը: Շարունակվում է մինչև հոկտեմբերը (№ 10) և մնում է անավարտ (տե՛ս՝ **Մ.Նալբանդյան**, ԵԼԺ, հ. 1, Երևան, 1945, էջ 221-303): Ստ. Նազարյանցի՝ գրաբար բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակված է նաև Ներսես Լամբրոնացու «Թուղթ դեպի հայոց թագավոր Լևոնը» աշխատությունը:

Օգոստոսի 8. «Մեղու Հայաստանին» (№ 32), Գարեգին Մուրադյանցի (հետագայում՝ Մելքիսեդեկ Մուրադյանց)՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ֆրանսուա Ֆենելոնի «Ճանապարհորդություն վայելչությանց կղզու մեջ» պատմվածքը և Ի. Մարդանովի «Ի հատված քաղաքին Շամախու երկրաշարժիվ...» բանաստեղծությունը:

Օգոստոս. «Ճռաքաղը» (№ 8) գրաբար հրատարակում է Մսեր Մսերյանցի «Անանիա Նարեկացի» հոդվածը:

Օգոստոսի 15. «Մեղու Հայաստանին» (№ 33), Գ. Տեր-Հարությունյանցի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն ազատ թարգմանությամբ, հրատարակում է «Երանուհի և Մանուշակ» պատմվածքը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Օգոստոսի երկրորդ կես. «Երևակը» (№ 64), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ և թարգմանչի ընդարձակ ծանոթագրություններով, հրատարակում է Ալեքսանդր Պերդրանի «Բուդդա» ուսումնասիրությունը: Շարունակվում է մինչև № 72 (դեկտեմբերի երկրորդ կես):

Օգոստոսի 29. «Մեղու Հայաստանին» (№ 35) արևելահայերեն հրատարակում է Ավետիք Այվազյանի «Երասիս» չափածո ստեղծագործությունը, իսկ հաջորդ համարում (№ 36, սեպտեմբերի 5), գրաբար, Ռոստոմբեկ Երզնկյանցի «Էջմիածին» բանաստեղծությունը և արևելահայերեն, Բագրատ Հասան-Ջալալյանցի «Հանելուկը»:

Սեպտեմբերի առաջին կես. «Արևմուտքը» (№ 17) արևմտահայերեն հրատարակում է Ստեփան Ոսկանյանի «Քսանկչորս ստություն» հրապարակախոսական հոդվածը:

Իրեն հատուկ կրքոտ ոճով, Ոսկանյանը բանավիճում է «Մասիսի» 1859 թ. հունիսի 25-ի համարում (№ 387, տե՛ս մեզ մոտ) հրապարակված հոդվածի դեմ և այս առիթով հաղորդում է ինչպես ինքնակենսագրական, այնպես էլ աշխարհայացքային բնույթի արժեքավոր մանրամասներ:

Սեպտեմբերի 17. «Մասիսը» (№ 399), «Քննաբանական» ընդհանուր խորագրի ներքո, արևմտահայերեն, Կարապետ ՌԻթուջյանի ներածականից հետո, սկսում է հրատարակել Խաչատուր Միսաքյանի «Արևմուտք». արձագանք Եվրոպայի լուսավորության» հոդվածաշարը, ուղղված Ստեփան Ոսկանյանի և նրա հիշյալ պարբերականի դեմ: Ավարտ՝ № 408 (նոյեմբերի 19):

Սեպտեմբեր. Հավալ գյուղում (Բալուի գավառ, Արևել. Թուրքիա) ծնվեց արձակագիր, բանասեր-լեզվաբան, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Մելքոն Կյուրճյանը: Եղեռնամահ՝ 1915 թ. ապրիլին, Անկարայի շրջանում:

«Հրանդ», «Շավասպ», «Մխիթար Պոնտացի», «Պոնտացի», «Թղթակից ի Պոնտոս», «Պահեն», «ԱԼՕ» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1913, էջ 336: **Հրանդ,** Ամբողջական երկեր (պանդուխտի կյանքեն), Փարիզ, 1931, 220 էջ:

Սեպտեմբերի առաջին կես. «Երևակը» (№ 65), Միհրան Մերվերյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Կայծողիկ» պատմվածքը: Ավարտ՝ № 68 (հոկտեմբերի երկրորդ կես):

Սեպտեմբեր. «Բազմավեպը» (№ 9), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ժան Լաֆոնտենի «Մահն ու չարաբախտ» առակը:

Սեպտեմբեր. Հավավ գյուղում (Բալուի գավառ, Արևել. Թուրքիա) ծնվեց արձակագիր, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն), լրագրող Գասպար Պետրոսի Նեմցեն: Վախճ. 1938 թ. դեկտեմբերի 3-ին, Պոլսում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1912, էջ 397-398: «Նոր-լուր», 1938, № 6414 («Մահ Գ. Նեմցենի»), № 6416 («Հուղարկավորություն Գասպար Նեմցենի»):

Սեպտեմբերի 26. «Մեղու Հայաստանին» (№ 39) գրաբար հրատարակում է Գևորգ Տեր-Աղեքսանդրյանցի «Բանք զինչ կրիտիկայէ» հոդվածը և Հովհաննես Սայաթնովյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ՝ Ի. Կոիլովի «Զրպարտող և օձ» առակը:

Սեպտեմբեր. «Ճռաքաղը» (№ 9) արևելահայերեն հրատարակում է Մսեր Մսերյանցի «Ազաթանգեղոս» հոդվածը:

Հոկտեմբերի սկիզբ. Պոլսում, Հակոբ Հայկյանի և Հովհաննես Գաբրիելյանի սատարմամբ, հիմնվում է «Ուսումնասեր ընկերությունը», որի նպատակն էր «թաղի դպրոցին առաջադիմությանը օգնել»: Ընկերությունը գոյություն ունեցավ մինչև 1870-ական թվականները:

Հոկտեմբերի 10. «Մեղուն» (№ 28), իր ընթերցողներին «Դաշնակ Լամարթինյա» ժողովածվի՝ Խորեն Գալֆայանի կատարած արևմտահայերեն թարգմանությունը վերլուծաբար ներկայացնելուց հետո, հրատարակում է Ալֆոնսու Լամարթինի «Որդն թևալոր» բանաստեղծությունը, Գալֆայանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ:

Հոկտեմբեր. «Արծվի Վասպուրականը» (№ 10) արևմտահայերեն հրատարակում է Վանի Ժառանգավորաց վարժարանի մի քանի աշակերտների չափածո ստեղծագործու-

թյունները, և գրաբար՝ Արսեն Թոխմախյանի «Մեծն Վարդան ի Շաւարշան» բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 10. «Մեղու Հայաստանին» (№ 41), Եղիա Բաստամյանցի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Մ. Մինիոչի «Ֆրանկլին» վիպակը: Շարունակվում է մինչև № 52 (դեկտեմբերի 26): Արևելահայերեն թարգմանությամբ հրատարակված են նաև ասույթներ Չոսերից, Գյոթեից, Ֆրանկլինից, Դեկարտից և Անսիլյոնից:

Հոկտեմբեր. «Հյուսիսափայլը» (№ 10) արևելահայերեն հրատարակում է Անանիա Սուլթանշահի «Հայոց ազգին լուսավորիչքը (ազգային կյանքից առած նկարագիր)» կատակերգությունը և Գևորգ Բարխուդարյանցի «Մտածությունք» բանաստեղծությունը (տե՛ս **Սաղյան Մ.**, Հյուսիսափայլի պոեզիան, էջ 175-176): Հրատարակված է նաև երկու նամակ արևելահայերեն, Փարիզից և Բեռլինից՝ «Ծատուր Պողոսյանց» և «Մարտիրոս Սառաֆյանց» ստորագրությամբ: Ենթադրվում է, որ դրանց հեղինակը Մ. Նալբանդյանն է (տե՛ս **Ինճիկյան Ա.**, Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը, Երևան, 1954, էջ 123):

Հոկտեմբերի 16. «Արշալույս արարատյանը» (№ 608), ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակում է մի ակնարկ Ալֆոնսու Լամարթինից:

Հոկտեմբերի 17. «Մեղու Հայաստանին» (№ 42) արևելահայերեն հրատարակում է Սեյադի (իմա՛. Պետրոս Մադաթյան) «Առ լյառն Կովկաս» բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 20. «Մեղուն» (№ 29), Խորեն Գալֆայանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալֆոնսու Լամարթինի «Առաջին վիշտ (եղերգ)» բանաստեղծությունը:

Հոկտեմբեր. «Ճռաքաղը» (№ 10) գրաբար հրատարակում է Զարմայր Մսերյանցի «Հայկազնյան տարեգիր» գրական-հրապարակախոսական հոդվածը: Հեղինակը թվարկում է որևէ պարբերականում տպագրվելու համար անհրաժեշտ համարվող պայմանները, դրվատանքով է արտահայտվում Հակոբ Կարենյանցի հրատարակած Մովսես Խորենացու բաղդատական բնագրի, «Համառօտ վարք և գործք Յովհաննու... Ոսկերչեանց Վաղարշապատեցոյ» գրքի և Աստրախանում գործող Աղաբաբյան վարժարանի մասին:

Հոկտեմբերի 24. «Մեղու Հայաստանին» (№ 43) գրաքար սկսում է հրատարակել Աբել Մխիթարյանցի «Ստորագրութիւն քաղաքաց ի նահանգսն Բեսսարաբիոյ, Ղրիմոյ և Նոր-Նախիջևանայ, յորս հայք» հուշագրությունը: Որոշ ընդհատումներով շարունակվում է մինչև № 50 (դեկտեմբերի 12):

Հոկտեմբերի 30. «Մեղուն» (№ 30) արևմտահայերեն հրատարակում է Հարություն Սըվաճյանի «Հայաստանի լուսավորությունը» հոդվածը:

Հոկտեմբեր. «Բազմավեպը» (№ 10) արևմտահայերեն հրատարակում է ընդարձակ ուսումնասիրության մի հատվածը հանդիսացող «Գերմանացի Միննեսինկերաց երգերը» հոդվածը:

Հոկտեմբերի 30. «Արշալույս արարատյանը» (№ 609) գրաքար հրատարակում է «Տեղեկութիւնք ոմանք, ի վերայ Սմբատայ Գունդստաբլ և տարեգրաց իւրոց» գրախոսականը: Գրախոսված է նույն թվականին Փարիզում Կարապետ Շահնազարյանի ջանքերով հրատարակված Սմբատ Գունդստաբլի «Տարեգիրք» աշխատությունը (տե՛ս մեզ մոտ, Փարիզ, 1859 թ.):

Նոյեմբերի 7. «Մեղու Հայաստանին» (№ 45) գրաքար հրատարակում է Ներսես կաթողիկոս Աշտարակեցու երկու երգիծական ոտանավորները: Այն ծանոթագրել և հրատարակության է հանձնել Առաքել Արարատյանը:

Նոյեմբերի առաջին կես. «Արևմուտքը» (№ 21) գրաքար հրատարակում է մի հատված Հովհան Վանանդեցու «Տեսարան հանդիսիցն Հայկայ, Արամայ և Արայի» դյուցազներգությունից: Ավարտ՝ հաջորդ համարում: Աշխարհաբարով սկսում է հրատարակվել նաև «Թափառական հրեայի» թարգմանությանը կցված Միքայել Նալբանդյանի առաջաբանը: Այն ևս ավարտվում է հաջորդ համարում (տե՛ս մեզ մոտ, Մոսկվա, 1857 թ.):

Նոյեմբերի 28. «Մեղու Հայաստանին» (№ 48) գրաքար հրատարակում է Մանուկ Սաղաթյանցի «Դրուատ առ ազգային երգիչն Սեյեադ...» ներբողական բանաստեղծությունը:

Նոյեմբեր. «Հյուսիսափայլը» (№ 11), Ստեփաննոս Նազարյանցի՝ ֆրանսերեն բնագրից կատարած աշխարհաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ֆրենսիս Բոնսարի «Լուկրեցիա» ողբերգությունը (երրորդ-հինգերորդ գործողություններ): Հրատարակված են նաև երկու աշխարհաբար նամակ՝ Պրուսիայից և Ավստրիայից,

որոնք ունեն «Մարտիրոս Սառաֆյանց» և «Ադոլֆ Բլումենթալ» ստորագրությունները: Ենթադրվում է, որ այդ նամակների հեղինակը Մ. Նալբանդյանն է (տե՛ս՝ **Ինճիկյան Ա.**, Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը, էջ 125):

Նոյեմբեր. «Արծվի Վասպուրականը» (№ 11) արևմտահայերեն հրատարակում է Գարեգին Սրվանձտյանցի «Հորդորակ», Նահապետ Փիրղալեմյանի «Պարսավանք բռնակալաց աշխարհիս և հորդորակ առ հանդերձյալն» բանաստեղծությունները և գրաբար՝ Եղիշե Մեսրոբյանի «Եղիշեն ի Շաւարշան» բանաստեղծությունները:

Նոյեմբերի երկրորդ կես. «Երևանկը» (№ 70) արևմտահայերեն հրատարակում է «Կարապետ կաթողիկոս Ուլնեցի» հոդվածը: Ավարտ՝ № 72 (դեկտեմբերի երկրորդ կես):

Դեկտեմբերի 5. «Մեղու Հայաստանին» (№ 49) արևելահայերեն հրատարակում է Պողոս Ներսիսյանցի «Արկած հասյալ ի վերա Շամխվո քաղաքի, ի 30 մայիսի 1859 ամի» եղերերգությունը, իսկ հաջորդ համարում (№ 50, դեկտեմբերի 12)՝ Սիմեոն Չմշկիկի «Անի» բանաստեղծությունն իր համապատասխան տեսական վերլուծությամբ:

Դեկտեմբեր. «Բազմավեպը» (№ 12) հրատարակում է Հովհաննես Թլկուրանցու «Հառաչանք մը առ մահ» բանաստեղծությունը:

Դեկտեմբերի 26. «Մեղու Հայաստանին» (№ 52), արևելահայերեն հրատարակում է Գրիգոր Կիրակոսյանցի «Ազգային աշխարհորեն առածից (մասալեքի) վրա» հոդվածը: Հայկական ժողովրդական առածների ու ասացվածքների հավաքման ու գիտական ուսումնասիրության ջերմ կոչ անելուց հետո, հեղինակը բերել է հարյուր օրինակ հիշյալ բնույթի գործերից:

Դեկտեմբեր. «Ճռաքաղը» (№ 12) գրաբար հրատարակում է Սմբատ Շահազիզյանցի «Աւետաբեր աղանի», «Սոխակ ողբերգակ» և աշխարհաբար՝ Սեյադի (ի՛մա. Պետրոս Մադաթյան) «Բարք և վարք օրհորդաց հայոց արարատյան աշխարհի» բանաստեղծությունները: Զարմայր Մսերյանցի՝ անգլերեն բնագրից կատարած աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է «Մաղերա կղզույն գտանվիլն» պատմական վեպը և նույնի՝ «Հայկազնյան տարեգիր» գրական-հրատարակախոսական աշխատությունը (վերլուծված է «Ճռաքաղի» միամյա գործունեությունը, ներկայացված է Մովսես Իսահակյանցի «Մտավոր վիճակ Ռուսիաբնակ հայ հոգևորականաց» հոդվածը, գրախոսված է Մովսես Զոհրապյանցի «Պարապո ժամք» աշխատությունը և

դրվատանքով ընթերցողին է ներկայացվում Զմյուռնիայի «Հաշտենից ընկերության» գործունեությունը):

Դեկտեմբեր. «Հյուսիսափայլը» (№ 12), Ստեփաննոս Նազարյանցի՝ լատիներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ ու ծանոթագրություններով, հրատարակում է Մարկոս Տուլիոս Կիկերոնի «Ատենական ճառեր ընդդեմ Լուկիոս Կատիլինայի» գործը (երկու ճառ): Երրորդ ճառը («Ճառ դեպի Կվիրիտացիք»), անդ, 1860 թ. № 5 (մայիս) և չորրորդը («Վասն ամերիացի Մեքստոս Բոսկիոսի»), անդ, № 8 (օգոստոս) ամսատետրակներում:

Դեկտեմբեր. «Արծվի Վասպուրականը» (№ 12) արևմտահայերեն հրատարակում է Գարեգին Սրվանձտյանցի «Ինչ որ ցանես, զայն կը հնձես» հոդվածը և գրաբար՝ «Պանդուխտ եմ ես անցաւոր» բանաստեղծությունը:

-Ստավրոպոլում, Մինաս Շմաթյանցի սատարմամբ, հիմնվում է երեսուն աշակերտ ունեցող հայկական արական դպրոց: Ավանդվում էր հայոց և ռուսաց լեզուներ և կրոն: Դպրոցն իր գոյությունը դադարեցրեց 1920-ական թվականներին:

«Մեղու Հայաստանի», 1861, № 50 («Ազգային տարեգիր»), 1865, № 19 («Հարգո խմբագիր»), 1873, №12 («Ազգային»), «Մշակ», 1911, № 201 («Հայկական կյանքը Ստավրոպոլում»):

-Պոլսում (?) ծնվեց լրագրող, բանասեր, մշակութային գործիչ, խմբագիր Գևորգ Թերզիբաշյանը: Վախճ. 1929 թ. փետրվարին, Պոլսում:

«Հայաստանի կոչնակ», 1929, № 7 («Գեր. Թերզիբաշյան մեռած»): **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 359:

-Պոլսում ծնվեց բանաստեղծ (գրում էր հայերեն և ֆրանսերեն լեզուներով), լրագրող Ճանիկ Յազըճյանը: Վախճ. 1886 թ. հոկտեմբերի 20-ին, իր ծննդավայրում:

Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի, Պոլիս, 1901, էջ 65: **Պոտուրյան Մ.**, Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 643:

-Խարբերդում ծնվեց լեզվաբան-բանասեր, լրագրող, կրթական-մշակութային գործիչ Առաքել Պետիկյանը: Վախճ. 1902 թ. հունիսի 27-ին, Պոլսում:

«Գիսակ» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Բյուզանդիոն», 1902, № 1749 («Մահ») և 1751 («Ազդ»):

Մարտի 15. Ադրիանապոլսում (Եվրոպական Թուրքիա) ծնվեց կուսակցական գործիչ, մարքսիզմի պրոպագանդիստ, լրագրող, թարգմանիչ (ֆրանսերենից, հայերենից՝

բուլղարերեն) Տիգրան Արթինի (Հարությունի) Իսմիյանը: Վախճ. 1931 թ. հունիսի 13-ին, Պլովդիվում (Բուլղարիա):

Խաչատրյան Ռ., Արտասահմանի հայ կոմունիստական մամուլի պատմությունից, Երևան, 1960, 150 էջ: «Սովետական Հայաստան», 1966, հունիսի 16 («Ականավոր հեղափոխականն ու սքանչելի մարդը»):

-Սիլվիբիում (Արևմտ. Թուրքիա) ծնվեց աշուղ, հոգևորական-մշակութային գործիչ Ներսես (աշխարհական անունով՝ Հակոբ) քահանա Նշանյանը: Վախճ. 1941 թ. հունիսի 3-ին, Սելանիկում (Հունաստան):

Հայտնի էր «Աշուղ Հակոբ» և «Ախթերի» (իմա՛. աստղային) անուններով:

Գևորգյան Կ., Ամենուն տարեգիրքը, Բեյրութ, 1960, էջ 410-411:

-Կեսարիայում (Կենտր. Թուրքիա) ծնվեց գրական-մշակութային գործիչ (մասնագիտությամբ՝ բժիշկ), լրագրող Համբարձում Նազգաշյանը: Վախճ. 1907 թ. փետրվարի 13-ին, Պոլսում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1908, էջ 225: Ընդարձակ օրացույց Ս. Փրկչյան հիվանդանոցի, Պոլիս, 1908, էջ 456-457:

-Պարտիզակում (Թուրքիա) ծնվեց լրագրող, թարգմանիչ (անգլերենից՝ հայերեն) Արմենակ Տեր-Հակոբյանը: Վախճ. 1924 թ. փետրվարի 22-ին, Պոլսում:

Ընդարձակ օրացույց, Պոլիս, 1925, էջ 380-381:

-Շապին-Գարահիսարում (Արևել. Թուրքիա) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, բանաստեղծ Սերովբե Պետրոսյանը: Վախճ. 1953 թ. սեպտեմբերի 12-ին, Ալեքսանդրիայում (Եգիպտոս):

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1927, էջ 604: «Հայաստանի կոչնակ», 1953, № 45 («Բազմամյա ուսուցիչ Սերովբե Պետրոսյանի մահը»): **Գևորգյան Կ.**, Ամենուն տարեգիրքը, Բեյրութ, 1954, էջ 470:

-Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական, ՀՍՍՀ) ծնվեց մանկավարժ, գրական և մանկավարժական աշխատությունների հեղինակ, մատենագետ, թարգմանիչ (գերմաներենից՝ հայերեն) Հովհաննես Տեր-Միրաքյանը: Վախճ. 1939 թ.:

Պետրոսյան Հ., Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ, Երևան, 1960, էջ 217-219: Հայ մշակույթի օրրանը (Ներսիսյանցիների հուշերը), Երևան, 1971, էջ 299-301:

-Թիֆլիսում ծնվեց լրագրող, թարգմանիչ (վրացերենից՝ հայերեն և հայերենից՝ վրացերեն), բանասեր Տիգրան Փիրումյանը: Վախճ. 1936 թ. հունվարին, իր ծննդավայրում:

«Գրական թերթ», 1935, № 1 («Տիգրան Փիրումյանի մահը»): Հայ մշակույթի օրրանը (Ներսիսյան-ցիների հուշերը), էջ 312-314: ՉԱԳԱԹ, Տիգրան Փիրումյանի ֆոնդ:

-Բալաբեախր գյուղում (Արևմտ. Թուրքիա) ծնվեց լրագրող (հայերեն և անգլերեն լեզուներով), թարգմանիչ (անգլերենից՝ հայերեն) Կարապետ Հովհաննեսի Փափազյանը: Վախճ. 1929 թ. հունվարի 4-ին, Նյու-Յորքում:

«Հայաստանի կոչնակ», 1929, № 2 («Մահ Կարապետ Փափազյանի»), № 4 («Կարապետ Փափազյան»), № 14 («Կարապետ Փափազյանի կյանքեն»): **Ալպոյաճյան Ա.**, Պատմություն հայ Կեսարիո (հ. Բ.), Կահիրե, 1937, էջ 2070-2071:

-Չմշկաձագում (Արևել. Թուրքիա) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, լրագրող, բանաստեղծ Պետրոս Ադամյանը: Վախճ. 1926 թ. նոյեմբերի 4-ին Սելանիկում (Հունաստան):

Մեզ չհաջողվեց պարզել Պ. Ադամյանի հայրանունը: Նրան չպետք է նույնացնել հոչակավոր դերասան Պետրոս Հերոնիմոսի Ադամյանի հետ:

Գևորգյան Կ., Ամենուն տարեգիրքը, Բայրութ, 1957, էջ 225-256: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 29:

-Մաշկերտում (Թուրքիա) ծնվեց հոգեբան-փիլիսոփա, բանասեր-լրագրող (հայերեն և անգլերեն լեզուներով) Մկրտիչ (նաև՝ Մանկասար) Մանկասարյանը: Վախճ. 1943 թ. հոկտեմբերին, Լոս Անջելեսում (ԱՄՆ):

«Հայաստանի կոչնակ», 1943, № 43 («Մկրտիչ Մանկասարյան»): **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 286:

-Պատանի ընթերցողներին հետաքրքրաշարժ և դաստիարակիչ գրականություն մատուցելու նպատակով, Վենետիկի Մխիթարյան միաբանությունը ձեռնամուխ է լինում «Զբոսարան մանկանց» ընդհանուր խորագրի ներքո, փոքրակտավ արձակ գեղարվեստական ստեղծագործություններ թարգմանաբար հրատարակելու աշխատանքներին: Թարգմանությունները հիմնականում կատարվում էին ֆրանսերենից, իսկ որոշ գործեր էլ նախապես լույս էին տեսնում «Բազմավեպում»: «Զբոսարան մանկանց» շարքի հրատարակությունը տևում է մինչև 1867 թ., այս ժամանակահատվածում լույս են տեսնում վեց հատորիկներ, որոնցից մի քանիսը հետագայում վերահրատարակվել են:

Ներկա՝ 1859 թ., Գրիգորիս Ճելալյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Պրոսպեր Մերիմեի «Ծննդյան խթումը» վիպակը: 127 էջ («Զբոսարան մանկանց», հ. Ա):

-Վենետիկում, արևմտահայերեն մեկնաբանություններով, հրատարակվում է «Համառոտ բառարան ի պետս նորավարժից, ի գրաբառէ յաշխարհաբառ» գիրքը: 167 էջ:

-Վենետիկում հրատարակվում է «Եղիշէ վարդապետի մատենագրութիւնք»-ը: Բնագրագիտական աշխատանքները, առաջաբանն ու ծանոթագրությունները Սուքիաս Սոմայանի ու Ներսէս Սարգիսյանի («Շարք մատենագրությանց նախնյաց», հ. ԻԳ): 382 էջ:

Հանդիսանում է նույն կազմողների՝ 1838 թ. հրատարակված Եղիշէի մատենագրության (տե՛ս **Շտիկյան Ս.**, Հայ նոր գրականության ժամանակագրություն (1801-1850), էջ 219) վերահրատարակությունը, զգալի փոփոխումներով ու լրացումներով:

-Վենետիկում, Էդուարդ Հյուրմյուզյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է մադամ Ժանլիի (իմա՛. Ստեֆանի Ֆելիցիտե Ժանլիս) «Վիպասանութիւն Բելիսարայ» վիպակը: 212 էջ:

-Պոլսում, Կարապետ Չուխաճյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Պլուտարքոսի «Բարոյականք» տրակտատի երկրորդ գիրքը: 60 էջ:

Երրորդ գիրք, անդ, 1860, 104 էջ:

Առաջին գրքի վերաբերյալ մանրամասնություններ չկարողացանք գտնել:

-Պոլսում, Եղիա Ներկարարյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ջեմս-Ջոն Էնջելի «Փրկություն փնտրող կամ փրկության հոգ ունեցող մեղավորներ» գիրքը: 310 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Ստեփան Փափազյանի «Կենսագրություն Ռուբեն Անդրեաս Փափազյան բազմարդյուն վարժապետի և ներքին վերատեսչի» գրքույկը: 38 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Ստեփան Փափազյանի (գրքի վրա նշված է Ստեփան-Պերճ Պողոս Փափազյան ձևով) «Համառոտ պատասխանի Զմյուռնիա տպված «Եղծ» անուն տետրակին մեջ պարունակված ստություններուն դեմ» գիրքը: (Տե՛ս ստորև Զմյուռնիա, 1850 թ.):

-Պոլսում, Հարություն Գ. Սըվաճյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Վ. Վեռնետի «Սենտ-Ամանտցի Լյուսիլ, կամ Սենեկալի առանձնակյացը» վիպակը: 111 էջ:

Հատվածաբար հրատարակվում էր «Մեղու» տասնօրյա հանդեսի՝ նույն թվականի մարտի 10-ից (N° 7) մինչև N° 22 (օգոստոսի 10), որտեղ, սակայն, թարգմանիչը նշված չէ:

-Պոլսում, Մատթեոս Մամուրյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Ֆիլդին» վիպակը: 142 էջ:

Վերջում տրված են եվրոպական 25 մտավորականների (Էդիսոն, Լարոշֆուկո, Սվիֆտ, Պոպպ, Շերիդան, Դիոգենես, Կատոն, Վոլտեր, Բեկոն և այլն) համառոտ կենսագրությունները:

-Պոլսում, Արմենակ Հ. Ճիգմեճյանի (իմա՝ Արմենակ Հայկունի) անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է բանաստեղծ, փիլիսոփա աստվածաբան Էդուարդ Յունգի «Յունգ փիլիսոփային ողբերը (իմա՝ խորհրդածությունները – Ս.Շ.) քսան և չորս գիշերներու բաժնված» գեղարվեստական ստեղծագործությունը (Հրատարակվել են երկու խորհրդածություններ): 31 էջ:

Բ. տիպ (չնայած ունի «Հատոր Ա.» նշումը, բայց հետագա հատորները չեն հրատարակվել), 1861 թ., (ունի «Յունգի ողբերգական գիշերները» վերնագիրը), 131 էջ: Հրատարակվել են չորս խորհրդածություններ: Սկզբում (էջ 5-8), «Պատմություն դարուց Էդուարդ Յունգ փիլիսոփայի» խորագրի ներքո, թարգմանիչը տվել է նրա կյանքի ու գործունեության համառոտ բնութագիրը:

-Փարիզում գրաբար հրատարակվում է Ստեփաննոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության Ա. հատորը: Բնագրագիտական աշխատանքները, առաջաբանն ու ծանոթագրությունները Կարապետ Շահնազարյանի: 346 էջ:

Երկրորդ հատոր՝ նույն թվականին, 371 էջ («Շար հայ պատմագրաց», հ. Գ):

-Փարիզում, Ամբրոսիոս Գալֆայանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն համառոտ թարգմանությամբ, հրատարակվում է Ֆրանսուա Ֆենելոնի «Տելեմաք» վիպասանությունը: 212 էջ:

- Փարիզում արևմտահայերեն հրատարակվում է Հովսեփի Պայանի (Կոստանդնուպոլսեցի) «Գիտություն մարդկային վարմանց» աշխատությունը: 447 էջ:
- Փարիզում, Խորեն Գալֆայանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ և առաջաբանով, հրատարակվում է Ալֆոնսու Լամարթինի բանաստեղծությունների «Դաշնակք» խորագիրը կրող ժողովածուն: 396 էջ: Համատեղ զետեղված են գրաբար և ֆրանսերեն բնագրերը:
- Փարիզում գրաբար հրատարակվում է Ստեփաննոս Ասողիկի «Պատմութիւն տիեզերական» գիրքը: Բնագրագիտական աշխատանքները, գրաբար առաջաբանն ու ծանոթագրությունները Կարապետ Շահնագարյանի («Շար հայ պատմագրաց», հ. Բ): 308 էջ:
- Փարիզում, Գրիգոր Թորոսյանի՝ իտալերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Փելիքս և Պավլինե, կամ Ժուրա լեռան տակի գերեզմանը» վիպակը: 192 էջ:
- Փարիզում գրաբար հրատարակվում է Սմբատ Սպարապետի (իմա՝ Գունդստար) «Տարեգիրք» և Վահրամ Բաբունու «Ոտանաւոր պատմութիւն Ռուբինեանց» աշխատությունները: Բնագրագիտական աշխատանքները, առաջաբանն ու ծանոթագրությունները Կարապետ Շահնագարյանի («Շար հայ պատմագրաց», հ. Դ): 248 էջ:
- Մոսկվայում, Գաբրիել Հեջուբյանցի՝ գերմաներեն բնագրից կատարած աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է «Մատանի» պատմական վեպը և «Անտոնը և նորա շունը» պատմվածքը: 132 էջ:
- Մոսկվայում, գերմաներեն բնագրից կատարված աշխարհաբար թարգմանությամբ (թարգմանիչ՝ Գ.Տ.=Գաբրիել Հեջուբյանց?) հրատարակվում է Վիլհելմ-Հենրիխ Ռիլի «Կոմսուհին Ռիբուլա» պատմական և բարոյական վեպը: 169 էջ:
- Մոսկվայում, Գաբրիել Հեջուբյանցի՝ գերմաներեն բնագրից կատարած աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է «Որք Մատիլդա. բարոյական վեպ երեխանց համար» գիրքը: 110 էջ:
- Մոսկվայում գրաբար հրատարակվում է «Յիշատակարան բազմերախտ հոգաբարձուի Լազարեան ճեմարանի արևելեան լեզուաց... Յովհաննու Յովակիմեան Լազարեանց»

խորագիրը կրող փաստաթղթերի ժողովածուն: 69 էջ: Ժողովածուն հրատարակության է պատրաստել Մսեր Մսերյանը: Պարունակում է քսանհինգ ուղերձներ, հրավարտակներ, մահախոսականներ, ցավակցական հեռագրեր, որոնք տրվել են Հովհաննես Լազարյանի մահվան կապակցությամբ:

-Թիֆլիսում, տեղական բարբառով, հրատարակվում է Միքայել Պատկանյանի «Միջի մարդկամ մոցիկուլ» կատակերգությունը: 61 էջ:

-Թիֆլիսում աշխարհաբար հրատարակվում է Ստեփաննոս Մանդինյանի «Հայելի դաստիարակության տղայոց» աշխատությունը: 136 էջ:

-Թիֆլիսում գրաբար հրատարակվում է Առաքել Արարատյանի «Համառոտ վարք և գրավոր գործք Յովհաննու ավագ քահանայ Մարտիրոսեան Ոսկերչեանց Վաղարշապատեցւոյ» աշխատությունը: 77 էջ:

-Զմյուռնիայում արևմտահայերեն հրատարակվում է Արմենակ Պալապանյանի «Եղծ գրպարտությանց, որ ի տետրակն տայալ ի Կ.Պոլիս» և մակագրյալ «Կենսագրությունն Ռուբեն Անդրեաս Փափագյան բազմարդյուն վարժապետի» աշխատությունը: 50 էջ:

-Զմյուռնիայում, Ղուկաս Մամուռյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Ռուլենի խորհրդածությունները դաստիարակության վրա» գրքուկը: 32 էջ:

-Պետերբուրգում, արևելահայերեն հրատարակվում է Գամառ-Քաթիպայի (ի՛մա. Ռափայել Պատկանյան) կազմած ժողովածուն, «Հատընտիր և պատկերազարդ առակք Եզոպուսի և առածք պեսպես ազգաց» խորագրով: 128 էջ: Սկզբում (էջ 10-16), «Եզոպոսի վարքը» խորագրի ներքո, կազմողը տվել է առակագրի համառոտ կենսագրությունը:

Զետեղված են Եզովպոսի 46 առակները: Վերջում (էջ 109-126)՝ «Առածք պեսպես ազգաց» խորագրի ներքո, հրատարակված են հայկական և այլազգի 121 առածներ ու ասացվածքներ:

-Վիեննայում, Ներսես Շյուքուրյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ամբախի «Գոնրատ կայսրն ու զարմանալի տղան» վիպակը («Կրթական և զբոսալի տետրակներ», հ. ԽԱ): 138 էջ:

Հունվարի 1. «Մեղու Հայաստանին» (№1) արևելահայերեն հրատարակում է Գրիգոր Թամամյանցի «Մուր քան զարծվիս թռչին ամք» և անստորագիր «Գանգատ զբաղդեն» բանաստեղծությունները:

Հունվար. Թիֆլիսում, Մարկոս Աղաբեկյանի խմբագրությամբ, արևելահայերեն սկսում է հրատարակվել «Կռունկ Հայոց աշխարհին» բարոյական, բանասիրական, նկարագրական և վիճակագրական ամսագիրը: Շարունակում է հրատարակվել մինչև 1863 թ. վերջերը:

Հունվարի 6. «Փարիզը» (№ 6) արևմտահայերեն հրատարակում է Ճանիկ Արամյանի «Մասնավոր հայտարարություն» խորագիրը կրող հոդվածը, որտեղ նա հրապարակավ բացազատում է իրեն Ստեփան Ոսկանյանից:

Հունվարի 9. «Մեղու Հայաստանին» (№ 2) արևելահայերեն հրատարակում է Պետրոս Մադաթովի (ի՛մա. Սեյադ) «Առ բազմաշխատ Մեղուն Հայաստանի», Գևորգ Բեկի «Առ հայրենակիցս իմ» բանաստեղծությունները, գրաբար՝ Քերովբեի «Առ սիրելի եղբարս ազգին հայոց» խրատականը և Գրիգոր Փեշտմալճյանի «Պատասխանի առ տեր Քերովբե պիղծն» անդրադարձությունը:

Հունվար. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 1) սկսում է հրատարակել Պերճ Պոռոջյանի «Մոս և Վարդիթեր (ազգային վիպասանություն)» վեպը: Ավարտ՝ հոկտեմբերի (№ 10) համարում: Հրատարակված է նաև Հովհաննես Ամրիկյանի (հետագայում՝ Միհրդատ) «Գարունք հայոց» արևելահայերեն պոեմը:

Հունվարի առաջին կես. «Երևակը» (№ 73), լատիներեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Կվենտինո Տերտուլիանոսի «Նախագրությունք» աշխատությունը (շարունակվում է մինչև հունիսի առաջին կեսը (№ 83), «Մովսես Խորենացիի վրա նոր քննություն» բանասիրական հոդվածը և բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ՝ «Կռկակար և ութը ոսկի» բարոյական վեպը: Ավարտ՝ № 76 (փետրվարի երկրորդ կես):

Հունվարի առաջին կես. «Եվրոպան» (№ 1) արևմտահայերեն սկսում է հրատարակել Ա. Ավագյանի «Մարիամ Սոյուարտ և Սոյուարտյանք» պատմական վեպը: Ավարտ՝ 1861 թ. № 5 (մարտի առաջին կես):

Հունվարի 16. «Մեղու Հայաստանին» (№ 3) գրաբար հրատարակում է «Սոխակ» (ունի «Բաղդազուրկ Մ.» ստորագրությունը), «Փախուստ բաղդի և մորմոք զնմանե» (ունի «Ա.Մ. Ղարաբաղցի» ստորագրությունը) բանաստեղծությունները և Գրիգոր Կիրակոսյանցի «Գավառական հանելուկի վրա» ուսումնասիրությունը: Վերջինս ավարտվում է հաջորդ համարում:

Հունվարի 20. «Մեղուն» (№ 86) «Հյուսիսափայլից» արտատպում է մի հատված Մ. Նալբանդյանի «Հիշատակարան կոմս Էմմանուելի օրագրության թերթերից» աշխատությունից, «Կոմս Էմմանուելի օրագրության հիշատակներեն» խորագրով:

Հունվարի 21. Կարսում ծնվեց արձակագիր, թարգմանիչ (պարսկերենից, ռուսերենից՝ հայերեն) Ատրպետը (Սարգիս Մկրտչի Մուրայաջյան): ՍՍՀՄ գրողների միության անդամ 1934 թվից: Վախճ. 1937 թ. մայիսի 27-ին, Լենինականում:

«Գրական թերթ», 1937, № 16 («Ատրպետի մահը»), № 17 («Ատրպետ»): **Ատրպետ**, Երկեր, Երևան, 1964 թ., 435 էջ: **ԳԱԹ**, Ատրպետի ֆոնդ: **Խաչատրյան Հ.**, Գրական տեղեկատու, Երևան, 1981, էջ 49-50:

Հունվարի 23. «Մեղու Հայաստանին» (№ 4) գրաբար հրատարակում է Ռոստոմբեկ Երզնկյանցի «Մտաբերություն ի Սանահին» և արևելահայերեն՝ Սեյադի (Պետրոս Մադաթյան) «Տեսիլ ի 1 հունվարի, 1860 ամի» բանաստեղծությունները:

Հունվարի 29. Պոլսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, հոդվածագիր, խմբագիր Հովնան Գրիգորի Փալագաշյանը: Վախճ. 1951 թ. հունվարի 22-ին, իր ծննդավայրում:

1890-93 և 1899 թթ. Պոլսում խմբագրել է «Ծաղիկ» հանդեսը: 1901 թ. Պոլսում հիմնադրել և խմբագրել է «Նյութ» ամսաթերթը, 1909 թ. «Գարուն» լրագիրը:

Թեոդիկ, Տիպ ու տառ, Պոլիս, 1912, էջ 127: «Հայաստանի կոչնակ», 1951, № 23 («Պոլսահայ նամականի»):

Հունվարի 29. Փարիզում ծնվեց բանասեր, աստվածաբան Գևորգ Պայանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1882 թ. դեկտեմբերի 25-ից:

Մխիթարյան հոբելյան, Վենետիկ, 1901, էջ 226:

Հունվարի 30. «Մեղու Հայաստանին» (№ 5) արևելահայերեն հրատարակում է «Պարոն Նազարյանցի աշխարհաբառ լեզվի վրա» հոդվածը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Փետրվար. Ախալցխայում (Վրացական ՍՍՀ) ծնվեց անվանի նկարիչ, գրքեր ձևավորող-նկարազարդող, թարգմանիչ (գերմաներենից և անգլերենից՝ հայերեն) Վարդգես Հակոբի Սուրենյանցը: Վախճ. 1921 թ. ապրիլի 6-ին, Յալթայում:

Ղազարյան Ս., Վարդգես Սուրենյանց, Երևան, 1960, 95 էջ:

Փետրվար. «Հյուսիսափայլը» (№ 2), Ստեփաննոս Նազարյանցի՝ գերմաներենից կատարած արևելահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Պիեդրո Կալդերոնի «Հաստատամիտ արքայազնը» դրաման և «Հայոց ազգի լուսավորություն կամ սուրբ թարգմանիչների դարը» ուսումնասիրությունը: Շարունակվում է մինչև № 9 (սեպտեմբեր) և մնում անավարտ:

Փետրվարի 13. «Մեղու Հայաստանին» (№ 7) արևելահայերեն հրատարակում է «Պարոն Հեջուբյանցի աշխարհաբառ լեզվի վրա» գրախոսականը:

Փետրվարի 17. Պոլսում ծնվեց գրական-մշակութային գործիչ, լրագրող (մասնագիտությամբ գյուղատնտես) Երվանդ Գրիգորի Աղաթոնը: Վախճ. Նիցցայում (հար. Ֆրանսիա) 1935 թ. հունիսի 12-ին:

Պոստոլյան Ս., Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 91-93: **Զարդարյան Վ.,** Հիշատակարան, հ. Գ, Պոլիս, 1934, էջ 43-48: **Ստեփանյան Գ.,** Կենսագրական բառարան, հ. Ա, Երևան, 1973, էջ 65:

Փետրվար. «Արծվի Վասպուրականը» (№ 2) գրաբար հրատարակում է Գարեգին Սրվանձտյանցի «Անձաք անձեւացեաց», Եղիշե Մեսրոբյանի «Իղձ եղբայրասիրութեան, առ վաղամեռիկ ուսումնակից տոհմական Յօհաննէս պատանին Թեռլեմեզեան» և անստորագիր՝ «Տիգրիս գետ և շիրիմ Տրդատայ» բանաստեղծությունները:

Փետրվարի 20. «Մեղու Հայաստանին» (№ 8), Հ. Բաղդասարյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Բարեկամություն շան» պատմվածքը: Հրատարակված է նաև Հովհաննես Եսայանցի «Հառաչանք Անվն վերա» բանաստեղծությունը:

Փետրվարի 23. Պոլսում ծնվեց հոգևորական-մշակութային գործիչ, բանաստեղծ, գրականագետ, բանասեր Եղիշե Աբրահամի Դուրյանը: Վախճ. 1930 թ. ապրիլի 27-ին, Երուսաղեմում:

Գուշակյան Թ., Եղիշե պատրիարք Դուրյան, Երուսաղեմ, 1932, 327 էջ: «Էջմիածին», 1960, № 1 ... («Եղիշե պատրիարք Դուրյան»):

Փետրվարի 27. «Մեղու Հայաստանին» (№ 9), «Բարոյական դասեր կամ խրատներ» ընդհանուր խորագրի ներքո, սկսում է հրատարակել Առաքել Արարատյանի հավաքած ժողովրդական առակները, ասացվածքները, խրատականները, կարճապատում պատմությունները: Հրատարակությունը որոշ ընդհատումներով և խորագրի փոփոխումներով, շարունակվում է մինչև 1861 թ. վերջը:

Մարտ. «Ճռաքաղը» (№ 1) գրաբար հրատարակում է Միքայել Ստեփանյանցի «Գարնանային երեկոյ և գիշեր յԱյրարատ» բանաստեղծությունը, և արևմտահայերեն՝ Ջարմայր Մսերյանցի «Տարեգիր» գրական-հրապարակախոսական հոդվածը:

Մարտի 4. Պոլսում ծնվեց երաժշտագետ, հայկական երաժշտության տեսաբան Լևոն Նազարեթի Խանջյանը: Վախճ. 1947 թ. հուլիսին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1923, էջ 255-256: Ընդարձակ տարեգիրք ազգային հիվանդանոցի, Պոլիս, 1947, էջ 427-428:

Մարտի 5. «Մեղու Հայաստանին» (№ 10) արևելահայերեն հրատարակում է Հակոբ Կարենյանցի «Մի քանի խոսք... հայոց լեզվով Թիֆլիսումը ներկայացրած թատրոնի վրա» գրախոսականը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Գրախոսը անդրադարձել է Մ. Պատկանյանցի «Միջի մարդ կամ մոցիկուլ» կատակերգությանը (տե՛ս ներկա հատորը, 1859 թ.) և թատերական արվեստի, նյութի գրական-գեղարվեստական մշակման, կերպարների ընտրության ու նրանց մարմնավորման, լեզվի ու ոճի հետ առնչվող մի շարք դիտողություններից հետո, այն բացասաբար է գնահատել:

Մարտ. «Հյուսիսափայլը» (№ 3), Գևորգ Բարխուդարյանցի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Քուենտին» պատմվածքը: Հրատարակված է նաև Ստեփաննոս Նազարյանցի «Հայկական թատրոնի մասին Մոսկվայի մեջ և մի քանի խոսք թատրոնական գործողության վերա ընդհանրապես» թատերախոսականը:

Անդրադառնալով Մոսկվայում բեմադրված հայկական ներկայացմանը և դրական գնահատելով այն («Ուսանողները կրկին ուրախացել են մի թատրոնական խաղարկությամբ», «Մեր ազնիվ հայկական պատանիք կամեցել են մի ազնիվ զբոսանք պատրաստել Մոսկվայի մեր պանդխտած հայերիս, կամեցել են ցուցանել մի հրապարակ հայկական խոսակցության, հայոց ազգի բարբառը դուրս

հանելով թատրոնական բեմի վրա»), Նազարյանցը, սակայն, չի նշում ոչ բեմադրության թիվը և ոչ էլ բեմադրված գործի անունն ու հեղինակին: Ջբաղվելով այդ հարցի քննությամբ, թատերագետ Վ. Թերզիբաշյանը ապացուցել է, որ խոսքը վերաբերում է 1860 թ. հունվարի 4-ին բեմադրված Անանիա Սուլթանշահի «Հայոց ազգի լուսավորիչքը» կատակերգությանը, ինչպես նաև մեկնաբանել է այն հասարակական-քաղաքական պատճառները, որոնք հարկադրել են Նազարյանցին որոշ զգուշավորության դիմել (տե՛ս **Թերզիբաշյան Վ.**, Հայ դրամատուրգիայի պատմություն, գիրք 1, Երևան, 1959, էջ 407-422):

Մարտի 18. «Արշալույս արարատյանը» (№ 619) արևմտահայերեն հրատարակում է «Դաշնակք Լամարթինյա» գրախոսականը: Գրախոսված է 1859 թ. Փարիզում, Խորեն Գալֆայանի թարգմանությամբ հրատարակված՝ Ալֆոնսու Լամարթինի «Դաշնակք» ժողովածուն (տե՛ս ներկա հատորը, նշվ. թվականը):

Մարտ. «Մասյաց աղավնին» (№ 3) ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ժան Լաֆոնտենի «Երկու այծք» բանաստեղծությունը:

Մարտի 19. «Մեղու Հայաստանին» (№ 12) Լոռվա բարբառով սկսում է հրատարակել Գրիգոր Կիրակոսյանցի «Վաղու Բգահատցիք» վիպակը: Ավարտ՝ № 16 (ապրիլի 16):

Մարտ. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 3) արևելահայերեն հրատարակում է Սեյադի (իմա՛. Պետրոս Մաղաթյան) «Առ հյուր կռունկն հայոց աշխարհի» բանաստեղծությունը: Հրատարակված է նաև Հովհաննես Եսայանցի «Պատասխան ի դիմաց Անի քաղաքին առ օրորողն յուր» բանաստեղծությունը: Վերջինս ուղղված է «Մեղու Հայաստանի» 1859 թ. № 50-ում (դեկտեմբերի 12, տե՛ս ներկա հատորում այդ թվականը) հրատարակված Սիմեոն Չմշկիկի «Անի» բանաստեղծության դեմ:

Մարտի 26. «Մեղու Հայաստանին» (№ 13) արևելահայերեն հրատարակում է Հովսեփ Զերբեգյանցի առաջին հոդվածը «Մոլորություն խրատով քավի...» խորագրով (ունի նաև փոքրիկ ներածական), ուղղված Ստեփաննոս Նազարյանցի և նրա «Հյուսիսափայլի» դեմ: Հաջորդ հոդվածը՝ «Նազարյանց և նորա նշանակությունը հայոց գրականության մեջ» խորագրով, անդ, № 31 (հուլիսի 30): Ավարտ՝ № 37 (սեպտեմբերի 10):

Ապրիլ. «Արծվի Վասպուրականը» (№ 4) արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Կոնիլովի «Ճպուռն ու մրջյունը» առակը:

Ապրիլ. «Հյուսիսափայլը» (№ 4), Գևորգ Բարխուդարյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Փորձիչը» պատմվածքը: Այն ունի հետևյալ ծանոթագրությունը. «Հանված «Das Hellermagasin» օրագրից, 1841 թ. №21 և 22-ից»:

Ապրիլի առաջին կես. «Երևակը» (№ 79) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Սիմոն Լուրդե քահանա» ուսումնասիրությունը: Ավարտ՝ № 84 (հունիսի երկրորդ կես): Տրված է ֆրանսիացի հայագետի կյանքի և գիտական-հայագիտական գործունեության բնութագիրը:

Ապրիլի 9. Ծուղրուտ գյուղում (Ախալցխայի շրջան) ծնվեց հայագետ, հայ պատմիչների բնագրերի քննական հրատարակիչ, խմբագիր Գալուստ Մկրտչի Տեր-Մկրտչյանը: Վախճ. 1918 թ. հունիսի 13-ին, Էջմիածնում:

1902 թ. սկզբից մինչև 1906 թ. վերջը խմբագրել է Էջմիածնի «Արարատ» ամսագիրը (օգնականներ՝ Սիրական Տիգրանյան և Հակոբ Մանանդյան): «Տ.Ս.» և «Միաբան» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Արարատ», 1901 № 11-12 («Արարատի ընթերցողներին»), 1907, № 1 («Կոնդակ...»): **Պետրոսյան Հ.**, Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ, Երևան, 1960, էջ 220-222: Մառը և հայագիտության հարցերը (ժողովածու), Երևան, 1968, էջ 205-264: Մատենագիտություն «Արարատ» ամսագրի, Էջմիածին, 1970, էջ XIV-XV: **Տեր-Մկրտչյան Գ.**, Հայագիտական ուսումնասիրություններ, հ. Ա, Երևան, 1979, 536 էջ:

Ապրիլի 10. Պոլսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, թարգմանիչ (անգլերենից և ֆրանսերենից՝ հայերեն) Գրիգոր Արիստակեսի Ոսկյանը: Վախճ. 1934 թ. մարտի 3-ին, իր ծննդավայրում:

«Հանդես ամսօրյա», 1953, № 7-9 («Ոսկյան գերդաստանը»):

Ապրիլի 14. Շուշիում (Լեռնային Ղարաբաղ) ծնվեց ականավոր պատմաբան, գրող, գրական քննադատ, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն) Լեոն (Առաքել Գրիգորի Բաբախանյան): Վախճ. 1932 թ. նոյեմբերի 14-ին, Երևանում:

«Գավառացի», «Ա.Բ.Գ», «Ռուսահայ», «Հ.Ա.Գ.», «Հրահատ» ծածկանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Օհանյան Ա., Լեռնի գեղարվեստական ստեղծագործությունը, Երևան, 1969, 163 էջ:

Ապրիլ. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 4), «Հավաքածու ազգային ասացվածոց» խորագրի ներքո, հրատարակում է հայկական ժողովրդական 234 ասացվածք, որոնք հավաքել և գիտական դասդասման է ենթարկել Միքայել Քոչարյանը: Շարունակվում է № 10-ում (հոկտեմբեր), որտեղ զետեղված է ևս 224 ասացվածք: Հրատարակված է նաև Հովհաննես (հետագայում՝ Միհրդատ) Ամրիկյանի «Ելանեն լեռնանան և իջանեն դաշտանան ի տեղի, ուր հաստեցեր գնուս» բանաստեղծությունը և Հովհաննես Քուչուբեկյանի «Նվեր «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագրին» պոեմը (երկուսն էլ՝ արևելահայերեն):

Ապրիլի 15. «Արշալույս արարատյանը» (№ 621), Տիգրան-Հայրապետ Սավալանյանի՝ բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Մարգրոնի երաժիշտը» պատմվածքը Ավարտ՝ հաջորդ համարում:

Ապրիլի 23. «Մեղու Հայաստանին» (№ 17) արևելահայերեն հրատարակում է Սկայորդու (Իմա՛. Ջարմայր Մսերյանց) հոդվածը (ապացուցում է, որ Անանիա Մուլթանշահի «Հայոց ազգի լուսավորիչքը» կատակերգությունն ինքնուրույն չէ), Հ. Ազատյանցի՝ ռուսերենից կատարած արևելահայերեն չափածո թարգմանությամբ, Կոիլովի «Էջ և սոխակ» առակը, և գրաբար՝ Հովհաննես Խոջայանցի «Հայաստան» բանաստեղծությունը:

Ապրիլի 30. «Մեղուն» (№ 96) արևմտահայերեն հրատարակում է «Մենք կգոցենք, Մեղուն՝ կբանա» երգիծական բանաստեղծությունը (ստորագր.՝ Ա.Գ.):

Մայիսի 7. «Մեղու Հայաստանին» (№ 19) արևելահայերեն հրատարակում է Հովհան Արահամբեկյանցի «Արժանապատիվ իմբագիր» հոդվածը (դրվատված է Խալիպյան վարժարանն ու Գաբրիել Այվազովսկու գործունեությունը, քննադատված է «Հյուսիսափայլ» ամսագիրն ու Անանիա Մուլթանշահի «Հայոց ազգի լուսավորիչքը» կատակերգությունը): Հաջորդ համարում (№ 20, հունիսի 14) հրատարակված է Եղիշե Տեր-Ազատյանցի «Առ իմ քաղցրիկ Հայաստան» բանաստեղծությունը:

Մայիսի 8. Լալի գյուղում (Ղազախ, այժմ՝ Նոր Լալա, Իջևանի շրջան, ՀՍՍՀ) ծնվեց արձակագիր, գյուղագիր Արշակ Սարգսի Ազապյանը: Վախճ. 1905 թ. հոկտեմբերի 10-ին, իր ծննդավայրում:

Ազապյան Ա., Երկերի ժողովածու (կազմեց՝ Ն. Ճուղուրյան), Երևան, 1934, 374 էջ: **Դանիելյան Ս.**, Ազապյան Ա, Երևան, 1968, 155 էջ: **Դանիելյան Կ.**, Հայ գյուղագրությունը 19-րդ դարում, Երևան, 1973, 570 էջ:

Մայիսի առաջին կես. «Երևակը» (№ 81), գերմաներեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Վիլհելմ Հաուֆի «Սաիդին պատմությունը» վիպակը: Ավարտ՝ № 93 (նոյեմբերի առաջին կես): Վիպակի սկզբում և հավելվածում թարգմանիչը խոսում է եվրոպական և արևելյան երկրների պոեզիայի և արձակի առանձնահատկությունների մասին:

Մայիսի 10. «Մեղուն» (№ 97) արևմտահայերեն հրատարակում է Հովհաննես Հյունքյարպեյենտյանի «Մենք կբանանք, Մեղուն կգոցե» երգիծական բանաստեղծությունը և «Առակ մ'ալ» ստեղծագործությունը:

Մայիս. «Բազմավեպը» (№ 5) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Միլտոն» ուսումնասիրությունը: Ավարտ՝ № 9 (սեպտեմբեր):

Մայիս «Մաայաց աղավնին» (№ 5), Գաբրիել Այվազովսկու՝ ռուսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Կոնիլովի «Արծուի և մեղու» առակը:

Մայիսի 12. Պոլսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, լրագրող, խմբագիր (մասնագիտությամբ՝ գյուղատնտես) Ղազար Բոլատը (Բոլատյան): Վախճ. 1927 թ. ապրիլի 27-ին, Կահիրեում:

1896 թ. Պոլսում հիմնադրել և մինչև 1899 թ. խմբագրել է «Հանրագիտակ» շաբաթաթերթը, 1889-1900 թթ.՝ «Ծաղիկ» հանդեսը:

Պոտուրյան Ս., Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 407: **Զարդարյան Վ.**, Հիշատակարան, Կահիրե, 1940, էջ 89-92:

Մայիսի 25. Շուլավերում (այժմ՝ Շահումյան, Վրացական ՍՍՀ) ծնվեց բանահավաք, արձակագիր, դրամատուրգ, բանաստեղծ, թարգմանիչ (ռուսերենից և գերմաներենից՝ հայերեն) Սարգիս Ավետիքի Քամալյանը: Վախճ. 1934 թ. Թիֆլիսում:

Ժամանակի պարբերականներում հանդես է եկել «**», «***», «Ս.Ք.Շ.», «Շմեղ», «Մխիթար», «Մխիթարիկ», «Ծիկլո գրող», «Աշխեն» կեղծանուններով:

Հայ մշակույթի օրրանը, Երևան, 1971, էջ 315-317: **ԳԱԹ**, Ս. Քամայանցի ֆոնդ:

Հունիսի 4. «Մեղու Հայաստանին» (№ 23) արևելահայերեն հրատարակում է Սեյադի (իմա՛. Պետրոս Մադաթյան) «Գովասանք Քուրթախ նահանգին» բանաստեղծությունը և Սեյադ Շամախեցու (իմա՛. Հովհաննես Սայաթնովյանց)՝ պարսկերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ՝ յոթ քառյակ Հաֆըզից:

Հունիս. «Ճռաքաղը» (№ 4) գրաբար հրատարակում է Մսեր Մսերյանցի «Օթեւանք դիցազանց հայոց» պոեմը: Որոշ ընդհատումներով շարունակվում է մինչև 1862 թ. № 10 (հոկտեմբեր):

Հունիսի 11. «Մեղու Հայաստանին» (№ 24) արևելահայերեն հրատարակում է Սկայորդու (իմա՛. Զարմայր Մսերյանց) հոդվածը (տրված է Լազարյան ճեմարանի քննությունների նկարագիրը և քննադատված է «Հյուսիսափայլի» 1860 թ. № 1 ամսատետրակը) և Աբրահամ Նազարյանցի «Դարձավ ի սուգ քնար...» բանաստեղծությունը:

Հունիս. «Հյուսիսափայլը» (№ 6) արևելահայերեն հրատարակում է Միքայել Տեր-Գրիգորյանի «Մի իրողություն Բերանժեի վարքից» հոդվածը և «Փոքրիկ երաժիշտը» պատմվածքը: Գևորգ Բարխուդարյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակված է նաև Ալ. Պուշկինի «Я пережил свои желания» («...Ո՛հ, իմ երջանիկ օրերը շատ շուտով անցան») և «Я вас любил» («...Այո՛, ես սիրում էի ձեզ») բանաստեղծությունները (տե՛ս **Սադյան Մ.**, Հյուսիսափայլի պոեզիան, էջ 167-204):

Հունիսի 18. «Մեղու Հայաստանին» (№ 25) հրատարակում է Գրիգոր Կիրակոսյանցի «Թե ժողովուրդը ինչպես ա պահում ավանդությունները և իրան կյանքի անցկացրած բաները» հոդվածը:

Հունիս. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 6), Սարգսի՛ վրացերեն բնագրից կատարած արևելահայերեն չափածո թարգմանությամբ, փոքրիկ դրվատական առաջաբանով, սկսում է հրատարակել Շոթա Ռուսթավելու «Ընձու մորթի հագած մարդ»: Որոշ ընդհատումներով շարունակվում է մինչև 1862 թ. № 11 (նոյեմբեր) և մնում է անավարտ:

Հունիսի 20. «Մեղուն» (№ 101) «Հյուսիսսփայլ» ամսագրից արտատպում է մի հատված Մ. Նալբանդյանի «Հիշատակարան կոմս Էմմանուելի օրագրության թերթերից» հուշագրությունից, «Կոմս Էմմանուելի հիշատակարանք» խորագրով, և աշխարհաբար՝ Հովհաննես Եսայանի «Պատասխանի ի դիմաց Անի քաղաքին առ օրորողն յուր» բանաստեղծությունը:

Հունիսի երկրորդ կես. «Եվրոպան» (№ 12), բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Գիտուն մը ու կոկորդիլոս» պատմվածքը: Ավարտ՝ № 14 (հուլիսի երկրորդ կես):

Հունիսի 25. «Արշալույս արարատյանը» (№ 626) արևմտահայերեն հրատարակում է Ստեփաննոս Նազարյանցի «Հյուսիսսփայլն» առ ճշմարիտ ազգասերս» հոդվածը: Ավարտ՝ № 628 (հուլիսի 23):

Հունիս. «Մայաց աղավնին» (№ 6), Գաբրիել Այվազովսկու՝ ռուսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Կոնիլվի «Փիղ և քոթոթ» առակը:

Հուլիսի 2. «Մեղու Հայաստանին» (№ 27) արևելահայերեն հրատարակում է Հակոբ Զրպետյանցի (իմա՝ Շահան-Զրպետյանց) «Հին հայոց իշխանության և կրոնի վրա» ուսումնասիրությունը: Ավարտ՝ № 30 (հուլիսի 23):

Հուլիս. «Ճոաքաղը» (№ 5) գրաբար հրատարակում է Զարմայր Մսերյանցի «Տեղեկություն ի վերայ Ջուանշիր իշխանի և Դալթակ ճարտասանի» ուսումնասիրությունը:

Մսերյանցն իր ձեռքի տակ եղած աղբյուրների հենքի վրա, տվել է հիշյալ անձանց, նրանց ժամանակաշրջանի, գործունեության գրական-բանասիրական վերլուծությունը: Վերջում, որպես հավելված, զետեղված է Դավթակ Քերթողի «Ողբ ի մահն Ջուանշիրի մեծի իշխանին Սիւնեաց» չափածո ստեղծագործությունը, իր համապատասխան բնագրագիտական աշխատանքներով ու ծանոթագրություններով:

Հուլիս. «Հյուսիսսփայլը» (№ 7), Միքայել Վայելյանի (իմա՝ Ռափայել Պատկանյան)՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Վիլհելմ Հաուֆի «Ուխտավորք» վիպակը: Որոշ ընդհատումներով շարունակվում է մինչև 1861 թ. № 4 (ապրիլ): Հրատարակված է նաև Կոմս

Էմմանուելի (իմա՛. Միքայել Նալբանդյան) «Մանկության օրեր» և Ստեփաննոս Ստեփանյանցի (իմա՛. Խորեն Ստեփանե) «Աղքատ աղջիկ» բանաստեղծությունները (տե՛ս **Սադյան Մ.**, Հյուսիսսփայլի պոեզիան, էջ 71, 280-281):

Հուլիսի 16. «Մեղու Հայաստանին» (№ 29) գրաբար հրատարակում է Իսրայել Մամիկոնյանցի «Ես եմ հովիվն քաջ...» ներբողը և արևելահայերեն, Բալագար Մամաջանյանի «Արժանապատիվ խմբագիր «Մեղու Հայաստանի» հոդվածը: Հոդվածում վերլուծված է Մարկոս Աղաբեկյանի, Ե. Մուրադյանցի և հատկապես Պերճ Պոռոջյանի չափածո և արձակ գեղարվեստական ստեղծագործությունները:

Հուլիս. «Մասյաց աղավնին» (№ 7), Գաբրիել Այվազովսկու՝ ռուսերեն բնագրից կատարած արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Կոնիլովի «Խաբյալ և խաբեբա» առակը:

Հուլիսի երկրորդ կես. «Երևակը» (№ 86) արևմտահայերեն հրատարակում է «Խայտառակության քննություն» հոդվածը, որն ուղղված է Ս. Շահբեգի (իմա՛. Միքայել Նալբանդյան) «Հրաշափառ խայտառակություն» հոդվածի դեմ: Ս. Շահբեգի հոդվածը լույս է տեսել «Մեղվի» 1860 թ. դեկտեմբերի 10-ի (№ 118) համարում (տե՛ս նաև «Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 2, Երևան, 1947, էջ 293-295):

Օգոստոսի 1. Պոլսում, Հարություն Մարգարյանի նախաձեռնությամբ, իր գոյությունն է սկսում կրթալուսավորական «Անձնվեր ընկերությունը», որի նպատակն էր «պանդուխտ հայերու կարողալ-գրել սորվեցնել»: Ընկերությունն իր մասնաճյուղերն ուներ Բաղեշում, Դիարբեքիրում, Սեբաստիայում, Դիվրիկում, Եվրոկիայում, Կյուրինում, Սդերդում, Տերենտում և հայաբնակ այլ վայրերում: «Անձնվեր ընկերությունը» իր գոյությունը դադարեցրեց 1890 (?) թվականին:

«Հանդես ամսօրյա», 1951, № 11-12 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Օգոստոսի 6. «Արշալույս արարատյանը» (№ 629) գրաբար հրատարակում է Նունե Տասյանի «Ունայնություն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է» բանաստեղծությունը, որի հոռետեսական ոգուն ու փիլիսոփայությանը հակադրվելով, «Առ ազնուափայլ օրիորդն Նունե... ի պատասխանի» բանաստեղծությամբ հանդես է գալիս Մարիամ Շաղուբաթյանցը («Մեղու Հայաստանի», № 47, նոյեմբերի 19): Բանա-

վեճն ամփոփող «Հող էիր և ի հող դարձցիս» գրաբար բանաստեղծությամբ, հանդես է գալիս Առաքել Արարատյանը (անդ, № 49, դեկտեմբերի 3):

Օգոստոսի 6. «Մեղու Հայաստանին» (№ 32) արևելահայերեն հրատարակում է Սկայորդու (իմա՛. Ջարմայր Մսերյանց) հողվածը (սկսվում է «Մոսկով, ի 18 հուլիսի...» ձևով), որն ուղղված է Մ. Նալբանդյանի հրապարակախոսական գործունեության և գրական-գեղարվեստական ստեղծագործությունների դեմ:

Օգոստոս. «Ճռաքաղը» (№ 6) աշխարհաբար հրատարակում է Հովհաննես Քուչուբեկյանցի «Սկզբնավորությունը հայկական սերնդույս և միապետական տերությունը Հայկա» հողվածը (քննաբար վերլուծված է Հայկ ու Բելի առասպելը) և, գրաբար, Մսեր Մսերյանցի «Հայկ» բանաստեղծությունը:

Օգոստոսի առաջին կես. «Երևակը» (№ 87) արևմտահայերեն հրատարակում է Հովհ. Չամուռճյանի «Նալբանդյանի մեկ նամակին վրա» հողվածը (տե՛ս. **Մ. Նալբանդյան**, ԵԼԺ, հ. 2, Երևան, 1947, էջ 302-306):

Նկատի ունի Մ. Նալբանդյանի՝ 1860 թ. դեկտեմբերի 20-ին «Մեղվում» (№ 119) հրատարակված «Նամակ հրատարակողին» (այսինքն՝ Հ. Սրվաճյանին) հողվածը, որտեղ նա պահանջում էր դատի տալ և քաղաքացիական օրենքներով պատժել ոճրագործ ու անբարոյական Պողոս վարդապետին:

Օգոստոս. «Մասյաց աղավնին» (№ 8), Գաբրիել Այվազովսկու՝ ռուսերեն բնագրից կատարած արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Կոնիլովի «Հայելի և կապիկ» առակը:

Օգոստոս. «Հյուսիսափայլը» (№ 8) արևելահայերեն հրատարակում է Իշխան Բագրատունու (ի՛մա. Խորեն Ստեփանե) «Խոստովանություն» բանաստեղծությունը (տե՛ս. **Սաղյան Մ.**, Հյուսիսափայլի պոեզիան, էջ 282-283):

Օգոստոսի 20. «Մեղուն» (№ 107), արտատպելով «Հյուսիսափայլից», հրատարակում է Կոմս Էմմանուելի «Մանկության օրեր» բանաստեղծությունը:

Մեպտեմբերի 1. Պոլսում, Գրիգոր Աղաթոնի նախագահությամբ և Մկրտիչ Պեշիկթաշյանի քարտուղարությամբ, Սերովբե Ալիշանյանի, Մկրտիչ Աղաթոնի, Սերովբե Թագվորյանի, Հովսեփ Շիշմանյան-Ծերենցի և Գրիգոր Օտյանի անդամակցությամբ,

սկսում է գործել երկրագործական-մշակութային «Բարեգործական ընկերություն հայոցը»: Ընկերության նպատակն էր. «Ազգին աղքատ ու խեղճ մասին զավակներին առնել ու պզտիկուց անոնց զանազան արհեստներ ու մանավանդ երկրագործություն սորվեցնել, գիտության ընծայած նոր լույսերուն համեմատ» և ծաղկուն ժամանակ ուներ 340 անդամ: Այն իր գոյությունը դադարեցրեց 1873 թ.:

«Հանդես ամսօրյա», 1952, № 1-3 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»), 1898, № 3 («Բժիշկ դոկտոր Հակոբ Դավուդյան»):

Մեպտեմբերի 3. «Մեղու Հայաստանին» (№ 36), Սարգիս Տեր-Միքայելյան Վարշամյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ի. Կոնյուվի «Ագռավ և աղվես» առակը:

Մեպտեմբերի 10. «Մեղուն» (№ 109), արտատպելով «Հյուսիսափայլից», հրատարակում է Միքայել Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծությունը:

Մեպտեմբեր. «Հյուսիսափայլը» (№ 9) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Նազարյանցի «Նվիրվում է հիշատակի Թագուհի օրհորդի Փանյանց» բանաստեղծությունը:

Մեպտեմբերի 11. Սղնախում, Թովմաս Նուպարյանցի, Հովհաննես Էնիկոլոպյանցի, Հարություն Հեքիմյանցի ջանքերով և Մովսես քահանա Սայադնյանցի տեսչությամբ, իր գոյությունն է սկսում տեղի «Մահակ Պարթևի անվան արական վարժարանը»: Վերջինս ծաղկուն ժամանակ ուներ 130 աշակերտ:

«Ճռաքաղ», 1860, № 7 («Ազգային»): «Մեղու Հայաստանի», 1861, № 41 («Ազգային լուր»), 1862, № 36 («Բանասիրականք»): «Կռունկ Հայոց աշխարհին», 1862, № 6 («Լուրեր»), 1868, № 44 («Ազգային»):

Մեպտեմբեր. «Մասյաց աղավնին» (№ 9), Գաբրիել Այվազովսկու՝ ռուսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Մ. Լերմոնտովի «Հրեշտակ» բանաստեղծությունը:

Մեպտեմբերի 20. «Մեղուն» (№ 110) արևմտահայերեն հրատարակում է «Որդեսեր մոր մ'անակնկալ վարձքը» պատմվածքը (թարգմանություն ?): Ավարտ՝ հաջորդ համարում:

Հոկտեմբերի 8. «Մեղու Հայաստանին» (№ 41), Առաքել Արարատյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Սոլոմոն Գեսների «Միրտիլ» պատմվածքը:

Հոկտեմբեր. Պոլսում իր գոյությունն է սկսում կրթական-մշակութային «ՌԻսումնատարած ընկերությունը»: Այն ուներ շուրջ 80 անդամ, ուներ երկու սեփական հավաքատեղի, որտեղ տասնհինգ օրը մեկ անգամ զեկուցումներ էին կարդացվում գրականության այլևայլ հարցերի մասին: «ՌԻսումնատարած ընկերությունն» իր գոյությունը շարունակեց մինչև 1870-ական թվականները:

Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հ, Ա, Վիեննա, 1957, էջ 593-595:

Հոկտեմբեր. «Ճռաքաղը» (№ 8) գրաբար հրատարակում է Թովմա Վանանդեցու «Բան չափեալ ի սրբազան տեղիս աշխարհին հայոց» բանաստեղծությունը: Բնագրագիտական աշխատանքներն ու ծանոթագրությունները Մսեր Մսերյանցի: Ավարտ՝ հաջորդ համարում:

Հոկտեմբեր. «Հյուսիսափայլը» (№ 10) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Նազարյանցի «Մենդելսոն, Լեսսինգ և Լավատեր, վիճաբանելով կրոնի վերա» հոդվածը:

Հոկտեմբեր. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 10) արևելահայերեն հրատարակում է Գարեգին Մուրադյանի (հետագայում՝ Մելքիսեդեկ եպիսկոպոս) «Նկատմունք Ս. Նազարյանցի մի ամենամեծ խնդրի պատճառով հրատարակած ամենաթույլ հատվածի վերա» հոդվածը, և Պերճ Պռոշյանի «Ռիդերձ ի մահ հանգուցյալ քեռ» բանաստեղծությունը:

Մուրադյանցի «Նկատմունքը» ուղղված է «Հյուսիսափայլի» 1860 թ. № 10-ում հրատարակված Ստ. Նազարյանցի «Մենդելսոն, Լեսսինգ և Լավատեր, վիճաբանելով կրոնի վերա» հոդվածի հիմնական սկզբունքների դեմ (տե՛ս վերևում):

Հոկտեմբեր. «Մասյաց աղավնին» (№ 10), Գաբրիել Այվազովսկու՝ ռուսերեն բնագրից կատարած արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ի. Կոխլովի «Գայլ և հովիվք» առակը և անստորագիր՝ «Հայ պանդուխտ» բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 20. «Մեղուն» (№ 113), արտատպելով «Հյուսիսափայլից», սկսում է հրատարակել Ստեփաննոս Նազարյանցի «Հայոց ազգի լուսավորության կամ սուրբ թարգմանիչների դարը» հոդվածը: Շարունակվում է մինչև նոյեմբերի 10-ը (№ 115) և մնում է անավարտ:

Հոկտեմբերի 22. «Մեղու Հայաստանին» (№ 43) արևելահայերեն հրատարակում է Հախվերդի Հախնազարյանցի «Լուր երկին և ունկն դիր...» բանաստեղծությունը և Սլաշոբոյու (իմա՛. Մսեր Մսերյանց) «Թղթակցությունը», որն ուղղված է Ստ. Նազարյանցի և նրա «Հյուսիսափայլի» դեմ:

Նոյեմբերի առաջին կես. «Երևակը» (№ 93) արևմտահայերեն հրատարակում է «Մեղուին պատասխան» հոդվածը: Նրա հեղինակ Հովհաննես Պրուսացի Տերոյենցը բանավիճում է Մ. Նալբանդյանի և Հ. Սըվաճյանի հետ, կրոնի՝ առ հայ ժողովուրդն ունեցած դերի հարցում:

Նոյեմբերի 10. «Մեղուն» (№ 115) գրաբար հրատարակում է Գաբրիել Պատկանյանի «Հայրենասեր Արամեանք...» և արևելահայերեն՝ Գամառ Քաթիպայի (ի՛մա. Ռափ. Պատկանյան) «Թե իմ ալևոր հերքս սննային» բանաստեղծությունը (վերջինը տե՛ս **Պատկանյան Ռ.**, Երկերի ժողովածու, հ. Ա, Երևան, 1963, էջ 33-34):

Նոյեմբեր. «Բազմավեպը» (№ 11), ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալֆոնսու Լամարթինի «Աստեղք» բանաստեղծությունը:

Նոյեմբերի 12. «Մեղու Հայաստանին» (№ 46), Հարություն Տեր-Գրիգորյանցի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Մեկ ձերունու մահվան ժամանակվա խոսակցությունը...» պատմվածքը:

Նոյեմբեր. «Հյուսիսափայլը» (№ 11) արևելահայերեն հրատարակում է Հակոբ Մելիք-Հակոբյանցի (իմա՛. Բաֆֆի) «Աղթամարա վանքը» պատմվածքը: Պատմվածքին կցված է «Չայն տուր ով ծովակ» բանաստեղծությունը, որը հետագայում բազում վերահրատարակությունների է արժանացել (տե՛ս **Բաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, 1957, էջ 280-309):

Նոյեմբերի 15. Գանձակում (այժմ՝ Կիրովաբադ, Ադրբեջանական ՍՍՀ) ծնվեց արձակագիր, բառարանագիր, թարգմանիչ (ռուսերենից, ֆրանսերենից՝ հայերեն), ՍՍՀՄ գրողների միության անդամ (1934-ից) Նիկողայոս Հովհաննեսի Մամիկոնյանը: Վախճ. 1937 թ. մայիսի 21-ին, իր ծննդավայրում:

«Գրական թերթ», 1937, № 19 («Նիկողայոս Մամիկոնյան»): «Սովետական գրականություն», 1967, № 9 («Նիկողայոս Մամիկոնյան»): Գրական տեղեկատու (կազմեց Հ. Խաչատրյանը), Երևան, 1981, էջ 508-509: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 277:

Նոյեմբեր. «Մայաց աղավին» (№ 11) արևմտահայերեն հրատարակում է Արմենակ Հ. Ճիգմեճյանի (իմա՛. Արմենակ Հայկունի) հոդվածը, «Պատվական խմբագիր» խորագրով և անստորագիր՝ «Առ Հայս» բանաստեղծությունը:

Նոյեմբերի 20. «Մեղուն» (№ 116), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Վիկտոր Լանգլուայի «Դիտողությունք Ֆրանսայի հետ Հայաստանի հարաբերությանց վրա միջին դարուց մեջ» ուսումնասիրությունը: Ավարտ՝ նույն թվականի դեկտեմբերի 20 (№ 119):

Նոյեմբեր. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 11) արևելահայերեն հրատարակում է Մարկոս Աղաբեկյանի «Պարոն Խաչատուր Աբովյանը և իր Ջանգին» հոդվածը, որին հաջորդում է «Վերք Հայաստանի» վեպի «Ջանգի» գլուխը: Թիֆլիսի բարբառով հրատարակված է նաև Գևորգ Տեր-Աղեքսանդրյանի «Ուխտագնացություն ի Թելեթ (գրույց Թիֆլիզու կանանց կյանքի տեսարաններից)» դրաման:

Նոյեմբեր. «Ճոաքաղը» (№ 9) արևելահայերեն հրատարակում է Հովսեփ Չերքեզյանցի «Հերքումն կարծյաց այնոցիկ, որ քարոզում են, թե պետք է վերանորոգություն (ռեֆորմ) առնել Հայաստանյայց եկեղեցումը» հոդվածը:

Նոյեմբերի երկրորդ կես. «Երևակը» (№ 94) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Մեղունի հրատարակչին քանի մը խրատներ» հոդվածը: Ավարտ՝ 1861 թ. հունվարի առաջին կեսում (№ 97):

Նոյեմբերի 30. «Մեղուն» (№ 117), Միքայել Նալբանդյանի կյանքի ու գործունեության մասին համառոտ տեղեկություններ հաղորդելուց հետո («Միքայել Նալբանդյան» խորագրի ներքո), «Կոմս Էմմանուել» ստորագրությամբ, հրատարակում է նրա «Օջական» բանաստեղծությունը: Արևմտահայերեն հրատարակված է նաև Գրիգոր Օտյանի «Ազգային լեզու» հոդվածը: Ավարտ՝ 1861 թ. հունվարի 20 (№ 122):

Դեկտեմբերի 10. «Մեղուն» (№ 118) արևմտահայերեն հրատարակում է Ս. Շահբեգի (իմա՛. Մ. Նալբանդյան) «Հրաշափառ խայտառակություն» պամֆլետը (Վերջինիս բանասիրական պատմությունը տե՛ս Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 2, Երևան, 1947, էջ 293-295):

Դեկտեմբերի 11. Պոլսում, Մանուկ Մանուկյանի նախաձեռնությամբ, իր գոյությունն է սկսում «Արամյան ընկերությունը», որն իր առջև նպատակ էր դնում կրթական-

մշակութային և լուսավորական գործունեություն ծավալել Կեսարիայում: «Արամյան ընկերությունը» գոյություն ունեցավ մինչև 1883 թ. կեսերը:

«Հանդես ամսօրյա», 1967, № 4-6 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Դեկտեմբեր. «Հյուսիսափայլը» (№ 12) արևելահայերեն հրատարակում է Պողոս Ղուկասյանցի «Մի քանի խոսք... վարդապետի արևելյան լեզվագիտության Ս. Նազարյանցի և նորա հակառակորդների վերա, բարեմիտ ընթերցողների դատաստանի առջև» հոդվածը և Մովսես Բուդաղյանցի «Հիշողություն» բանաստեղծությունը (վերջինը տե՛ս **Սաղյան Ս.**, Հյուսիսափայլի պոեզիան, էջ 261):

Դեկտեմբեր. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 12), Դավիթ Ռոստոմյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Վասիլի Ժուկովսկու «Տասն և երկու քնած կույս աղջիկներ (հին բանաստեղծական վեպ)» ստեղծագործությունը:

Դեկտեմբեր. «Մասյաց աղավնին» (№ 12) հրատարակում է «Հյուսիսափայլ օրագիր» հրատարակախոսական հոդվածը և անգլերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ՝ Ջորջ Բայրոնի «Այսօր աւարտեմ զերեսներորդ վեցերորդ ամ կենացս» բանաստեղծությունը:

Դեկտեմբերի 17. «Մեղու Հայաստանին» (№ 51) արևելահայերեն հրատարակում է Ռոստոմբեկ Երզնկյանցի «Կորուստ», «Գնաս բարյավ», «Մնաս բարյավ» բանաստեղծությունները և Ղունկիանոս Պողոսյանի «Տեսիլ» թատերակը: Այն ուղղված է Ստեփաննոս Նազարյանցի և նրա համախոհների դեմ:

Դեկտեմբեր. «Ճռաքաղը» (№ 10), գրաբար փոքրիկ վերլուծականից հետո, հրատարակում է Մովսես Ջոհրապյանցի հավաքած «Հայերեն բայաթիքը»: Շարունակվում է մինչև 1861 թ. հունիսի 1 (№ 21):

Դեկտեմբերի 24. «Մեղու Հայաստանին» (№ 52) արևելահայերեն հրատարակում է Հովհաննես Սայաթնովյանցի «Բաղդավոր մարդ կամ անտրտունջ բավականություն» պոեմը:

-Հալեպում իր գոյությունն է սկսում կրթական-մշակութային «Վարդանյան ընկերությունը»: Վերջինիս նպատակն էր օգնել Անջրդի գյուղի (Արաբկիրի գավառ, Թուրքիա) դպրոցին և այդ գյուղում գրական-մշակութային գործունեություն ծավալել, ինչը և արվում

է: «Վարդանյան ընկերությունը» շուտով ունենում է երկու մասնաճյուղ՝ Պոլսում և Ամերիկայում, և այդ ձևով էլ հարատևում է մինչև 1910-ական թվականները:

«Հանդես ամսօրյա», 1966, № 10-12 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

-Ալեքսանդրիայում, Կարապետ Գալուստյանի և Գաբրիել եպիսկոպոսի նախաձեռնությամբ, իր գոյությունն է սկսում «Պողոսյան վարժարանը»: Այն երկսեռ էր, ուներ երեսուն աշակերտ և երկու ուսուցիչ, ավանդվում էր երեք առարկա (թվաբանություն, ընթերցանություն, գեղագրություն): Ծաղկուն ժամանակ «Պողոսյան վարժարանը» ունեցավ 750 աշակերտ, դարձավ յոթնամյա և ավանդվում էր տասնմեկ առարկա (հայերեն, կրոն, թվաբանություն, գրահաշիվ, երկրաչափություն, ընդ. աշխարհագրություն, պատմություն, կենդանաբանություն, առտնին տնտեսություն, լեզուներ, մարմնամարզ):

Արշարունի Վ., Մեր դպրոցները գաղութներու մեջ, Ալեքսանդրիա (Եգիպտոս), 1932, էջ 30-52:

-Թիֆլիսում ծնվեց բնակարիչ, լրագրող, նկարչության տեսաբան Տրդատ Լիսիցյանը: Վախճ. 1885 թ., Պետերբուրգում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Տրդատ Լիսեցի» ստորագրությամբ:

Ալիշանը ժամանակակիցների հուշերում (կազմեց Ս. Շտիկյան), Երևան, 1974, էջ 92-95 (Գ. Բաշինջաղյանի հուշապատումը): **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 32:

-Պոլսում ծնվեց լրագրող, արձակագիր Թագուհի Հովսեփի Մելիք-Ազարյանը (նաև՝ Շիշմանյան Մելիք-Ազարյան, որովհետև դուստրն էր արձակագիր Հովսեփ Շիշմանյան-Ծերենցի): Վախճ. 1885 թ. հունվարի 22-ին, Թիֆլիսում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Օրիորդ Մենիկ» կեղծանունով:

Ծերենց, Երկունք Թ. դարու, Բաքու, 1895, էջ Ա-Թ (առաջաբանը): «Ընդարձակ տարեցույց ազգային հիվանդանոցի», Պոլիս, 1901, էջ 43: **Սաստուր Հր.**, Դիմաստվերներ, Պոլիս, 1921, էջ 283:

-Պոլսում ծնվեց լրագրող (հայերեն և անգլերեն լեզուներով), խմբագիր Փառնակ Մատթեոսի Այվատյանը: Վախճ. 1940 թ. մարտի 30-ին, Նյու-Յորքում:

1891-1894 թթ. Նյու-Յորքում խմբագրել է «Արարատ» հայերեն-անգլերեն օրագիրը:

«Հայաստանի կոչնակ», 1940, № 16 («Փառնակ Այվազի մահը»): **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 90:

-Պոլսում ծնվեց գրականագետ-բանասեր, գրող, թարգմանիչ (հունարենից, ֆրանսերենից, գրաբարից՝ հայերեն) Հարություն Սրմբյանը: Վախճ. 1926 թ. հուլիսի 21-ին:

«Հ.Գ.Մ.», «Խաչքար», «Ակումբիտ», «Ուիստավոր» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1908, էջ 252, 1911, էջ 274-275, 1927, էջ 628-630: **Սկրտիչ Աղավառնի**, Միաբանք և այցելուք հայ Երուսաղեմի, Երուսաղեմ, 1929, էջ 336-337: **Զոհրապ Գր.**, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1962, էջ 443-448 («Հարություն Սրմբյան»):

-Պարտիզակում (Արևմտյան Թուրքիա) ծնվեց մանկավարժ, պատմաբան-բանասեր Մինաս Ծալյանը: Վախճ. 1935 թ. փետրվարին, Կահիրեում:

Զարդարյան Վ., Հիշատակարան, Կահիրե, 1940, էջ 86-89: **Գևորգյան Կ.**, Ամենուն տարեգիրքը, Բեյրութ, 1956, էջ 207-210: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 77:

-Պարտիզակում ծնվեց գրական-մշակութային գործիչ, լրագրող (հայերեն և անգլերեն լեզուներով), թարգմանիչ (անգլերենից՝ հայերեն) Աբրահամ Տեր-Հակոբյանը: Վախճ. 1938 թ. հոկտեմբերի 8-ին, Պոլսում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1921, էջ 188-189: Ընդարձակ տարեգիրք, Պոլիս, 1938, էջ 352-354: «Հայաստանի կոչնակ», 1938, № 44 («Մահ պրոֆ. Աբրահամ Տեր-Հակոբյանի»), № 51 («Պրոֆ. Աբրահամ Տեր-Հակոբյան»):

-Դավալու գյուղում (այժմ՝ ՀՍՍՀ, Արարատ քաղաք) ծնվեց գյուղագիր, հրապարակախոս, լրագրող (հայերեն և ռուսերեն լեզուներով) Բաբկենցը (Գաբրիել Դոլուխանի Մնացականյան): Վախճ. 1917 թ. նոյեմբերի 24-ին, Երևանում:

Պարբերականների իր հոդվածները հաճախ ստորագրում էր «Գաբրիել մաճկալ» կեղծանունով:

Բաբկենց, Նորեկ, Երևան, 1961, 387 էջ: **Դանիելյան Կ.**, Հայ գյուղագրությունը 19-րդ դարում, Երևան, 1973, 570 էջ:

-Շապին-Գարահիսարում (Արևել. Թուրքիա) ծնվեց լրագրող, հրապարակագիր Հարություն Շահրիկյանը: Եղեռնամահ՝ 1915 թ.:

Թեոդիկ, Հուշարձան 1915 թ. ապրիլի 24-ի, Ալեքսանդրիա, 1939, էջ 9-11: **Գևորգյան Կ.**, Ամենուն տարեգիրքը, Բեյրութ, 1960, էջ 187-191:

-Թամգարա գյուղում (Շապին-Գարահիսարի շրջան, Հս.-արևելյան Թուրքիա) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, մանկավարժ, թարգմանիչ, լրագրող Գալուստ Մալաթյանը: Վախճ. 1940 թ.:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Գ.Սեպուհ» կեղծանունով:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 266:

-Իգդիրում ծնվեց պատմաբան-բանասեր, թարգմանիչ (գերմաներենից, անգլերենից, հունարենից, վրացերենից՝ հայերեն), գիտության վաստակավոր գործիչ (1920 թ.) Ստեփան Մկրտչի Կանայանը: Վախճ. 1937 թ. հոկտեմբերի 7-ին, Երևանում:

«Հայ», «Հայ-Արմեն», «Արմեն», «Հայ ճամբորդ» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Պետրոսյան Հ. Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ, Երևան, 1960, էջ 337-339: Հայ մշակույթի օրրանը, Երևան, 1971, էջ 161-163: **ԳԱԹ**, Ստեփան Կանայանի ֆոնդ:

-Ախալքալակում (Վրաց. ՍՍՀ) ծնվեց լրագրող, բառարանագիր Կարապետ Առաքելի Յաղուրյանը: Վախճ. 1911 թ. սեպտեմբերի 30-ին, Թիֆլիսում:

«Մշակ», 1911, № 214 («Կարապետ Առաքելյան Յաղուրյան»), № 215 («Կարապետ Յաղուրյան»):

-Մարաշում (Կենտր. Թուրքիա) ծնվեց կրթական-հոգևորական գործիչ, լրագրող Լևոն Քեչեճյանը: Եղեռնամահ՝ 1915 թ. Պոլսում:

«Հանդես ամսօրյա», 1920, № 1-3 («Հայ կաթողիկե կղերին նահատակները»):

-Խուլյու գյուղում (Խարբերդի գավառ, Արևել. Թուրքիա, պատմական անունը՝ Թլկատին) ծնվեց գրական-մշակութային գործիչ, արձակագիր Թլկատինցին (Հովհաննես Հարությունի Հարությունյան): Եղեռնամահ՝ 1915 թ. հունիսին, Խարբերդի շրջանում:

«Փառնակ», «Խարբերդցի», «Թղթակից», «Գեղացին» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Կարապետյան Լ., Թլկատինցի, Երևան, 1966, 201 էջ:

-Աստրախանում ծնվեց հրապարակախոս, լրագրող (ռուսերեն լեզվով), թարգմանիչ (անգլերենից՝ ռուսերեն), խմբագիր Արտեմի Կոտելնիկովը: Վախճ. 1910 թ. հունիսի 6-ին, Պետերբուրգում:

Աստրախանում հիմնադրել և խմբագրել է «Астраханский вестник» լրագիրը, Պետերբուրգում խմբագրել է «Наша жизнь» օրաթերթը: 1909 թ. Պետերբուրգում հիմնել և խմբագրել է «Жизнь Кавказа» երկշաբաթաթերթը:

«Մշակ», 1910, № 136 («Ա.Ն. Կոտելնիկովի հիշատակին»):

-Նոր Ջուդայում (Պարսկաստան) ծնվեց գրական-մշակութային գործիչ, պատմաբան-բանասեր Հորդանան Կարապետի Հորդանանյանը: Վախճ. 1940 թ. հոկտեմբերի 8-ին, Սուրաբայայում (Ճավա կղզի):

«Հայաստանի կոչնակ», 1940 թ., № 51 («Հորդանան Տեր Կ. Հորդանանյանի մահը»):

-Ապուլեիս գյուղում (Ակնի շրջան) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, լրագրող Շավարշ Հովհիվյանը:

Ազատյան Թ., Ակն և ակնցիք, Պոլիս, 1943, էջ 105:

-Ջրիկ գյուղում (Մուշի գավառ) ծնվեց երաժշտագետ, բանահավաք, բանաստեղծ Ղևոնդ Ավետիսի Տեր-Ավետիսյանը: Ատրպատականի հոգևոր միաբանության անդամ էր 1892 թ. մարտի 22-ից: Վախճ. 1923 թ. սեպտեմբերի 7-ին, Թավրիզում:

Աճեմյան Հ., Ղևոնդ քահանա Տեր-Ավետիսյան, Թավրիզ, 1924, 48 էջ:

-Շամախիում (Ադրբեջանական ՍՍՀ) ծնվեց մշակութային գործիչ, լրագրող (հայերեն և ռուսերեն լեզուներով), դրամատուրգ, արձակագիր, թարգմանիչ (ռուսերենից և գերմաներենից՝ հայերեն) Սեդրակ Թառայանը: Վախճ. 1916 թ. նոյեմբերի 25-ին, Թիֆլիսում:

1906 թ. Թիֆլիսում հիմնել և մինչև 1914 թ. խմբագրել է «Ընկեր» գրական շաբաթաթերթը: «Старик» կեղծանունով հանդես էր գալիս «Бакинские известия» թերթում: «Հանգուցյալը պատերազմի սկզբում (իմա՝ 1914 թ. – Ս.Շ.) սկսեց հրատարակել և «Восток» անունով ռուսերեն մի թերթ, սակայն ... հազիվ լույս ընծայեց երեք-չորս համար» («Մշակ»):

«Մշակ», 1916, № 265, 266 («Սեդրակ Թառայան»), № 267 («Ս. Թառայանի կենսագրությունը»), №268 («Սեդրակ Թառայան»), Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, Երևան, 1979, էջ 871-874:

-Վաղարշապատում ծնվեց մշակութային գործիչ, լրագրող, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն) Միսակ Ասիլյանը: Վախճ. 1936 թ. Թիֆլիսում:

Հայ մշակույթի օրբանը (Ներսիսյանցիների հուշերը), Երևան, 1971, էջ 80-82: Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 113:

-Պարսկաստանում ծնվեց լրագրող, խմբագիր Աբել Ապրեայանը:

1910 թ. Աստրախանում հիմնել և մինչև 1912 թ. խմբագրել է «Մեր կյանքը» կիրակնօրյա թերթը:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 104:

-(?) Վանում ծնվեց գրական-մշակութային գործիչ, լրագրող, խմբագիր Վարդան Պապիկյանը: Վախճ. 1918 թ. մարտի 26-ին, Օրկոֆում:

1919 թ. Երևանում խմբագրել է «Վանտոս» գրական շաբաթաթերթը: Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Սրինգ», «Ա. Հրաչյա», «Ա. Վրույր» կեղծանուններով:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1921, էջ 324:

-(?) Վանում ծնվեց լրագրող-հրապարակագիր Նշան Ղարասեֆերյանը: Վախճ. 1930 թ. մարտի 30-ին, Սենտ-Լուիզում (ԱՄՆ):

«Հայաստանի կոչնակ», 1930, № 16 («Ամերիկահայ կյանք»), № 17 («Նշան Ղարասեֆերյան»):

-(?) Վանում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, լրագրող Մարկոս Նաթանյանը: Վախճ. 1931 թ. մարտի 28-ին, Փարիզում:

Կյանք և արվեստ (տարեգիրք), Փարիզ, 1932, էջ 187-188:

-(?) Հազար գյուղում (Զմշկաձագի շրջան, Արևել. Թուրքիա) ծնվեց լրագրող-հրապարակագիր, խմբագիր Արամ (Համբարձում) Ամիրխանյանը: Վախճ. 1933 թ. Ֆրեզնոյում (ԱՄՆ):

1922թ. Ֆրեզնոյում հիմնել և մինչև 1929 թ. խմբագրել է «Նոր օր» շաբաթաթերթը:

Պոստոլյան Մ., Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 131, 877 (հավելված):

-(?) Զմյուռնիայում ծնվեց լրագրող, բանասեր Հովհաննես Ստեփանի Աբիկյանը: Վախճ. 1931 թ. Պոլսում:

Պոստոլյան Մ., Հայ հանրագիտակ, էջ 20-21:

-(?) Պոլսում ծնվեց լրագրող, թարգմանիչ (ֆրանսերենից և ռուսերենից՝ հայերեն) Մկրտիչ Շահնազարը (Շահնազարյան): Վախճ. 1900 թ. մարտի 10-ին, իր ծննդավայրում:

«Բյուզանդիոն», 1900, № 1040 («Մկրտիչ էֆ. Շահնազար»), № 1042 («Երկու վաղամեռիկները»):

-(?) Պարտիզակում (Արևմտ. Թուրքիա) ծնվեց լրագրող (հայերեն և թուրքերեն լեզուներով), խմբագիր, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Պետիկ Գյուսյանը: Եղեռնամահ՝ 1915 թ.:

1908 թ. Պոլսում հիմնել և խմբագրել է «Պայքար» օրաթերթը:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, էջ 512-513:

-(?) Խարբերդում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, բանասեր Հակոբ Բարեջյանը: Վախճ. 1924 թ. հունվարին, Բոստոնում (ԱՄՆ):

«Հայաստանի կոչնակ», 1922, № 5 («Տարաբախտ գոհը»): **Թեոդիկ**, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1923, էջ 415, 1926, էջ 631-632:

-(?) Մադրասա գյուղում (Շամախու շրջան, Ադրբեջանական ՍՍՀ) ծնվեց լրագրող Սահակ Մուրադյանը: Վախճ. 1918 թ. սեպտեմբերին, Բաքվում:

«Միսաք» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Մշակ», 1919, № 41 («Սահակ Մուրադյան»):

-(?) Ծնվեց լրագրող, արձակագիր Բերուզ (Փիրուզյա) Պոզաճյանը: Վախճ. 1894 թ., Պոլսում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Ա.Բ.Գ.» և «Քրիստոսայեցի» ծածկանուններով:

Թեոդիկ, Տիպ ու տառ, Պոլիս, 1913, էջ 129:

-(?) Ծնվեց պատմաբան-բանասեր, ազգագրագետ Տրդատ Եպիսկոպոս Պալյանը: Վախճ. 1923 թ. հուլիսի 2-ին, Աթենքում:

«Տ.Վ.Պ.», «Կապետ» ծածկանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Գևորգյան Կ., Ամենուն տարեգիրքը, Բեյրութ, 1960, էջ 26:

-Վենետիկում, ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է օրիորդ Ֆոժերի «Խորհրդական բերդը» վիպասանությունը: 354 էջ («Զբոսարան մանկանց», հ. Բ):

-Վենետիկում արևմտահայերեն թարգմանությամբ, առանձին գրքով, հրատարակվում է «Մոր մը քաշած վիշտերը», «Մանիշակ», «Օդային ճանապարհորդություն մը», «Ամեն իսաչ ծանր է», «Քթախոտի պտղունցը» հատորը («Զբոսարան մանկանց», հ. Գ, 184 էջ):

-Վենետիկում, Գրիգորիս Ճելայյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ժյուլ Մանտոյի «Մագթադինե» վիպակը, որը հատվածաբար հրատարակվում էր «Բազմավեպի» 1859 թ. հունվարից մինչև տարվա վերջը: 241 էջ: («Զբոսարան մանկանց», հ. Դ):

-Վենետիկում, արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Ձկնորսին հյուղը», «Որդեկոտոր մայր մը», «Մանրավաճառին աղջիկը», «Ալպյանց խրճիթը» հատորը: 237 էջ («Զբոսարան մանկանց», հ. Ե):

-Վենետիկում, բնագրագիտական աշխատանքներով, գրաբար առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է Հովհան Մանդակունու «Ճառք» խորագիրը կրող ժողովածուն («Շարք մատենագրութեանց նախնեաց», հ. ԻԲ): 221 էջ:

-Վենետիկում, Էդուարդ Հյուրմյուզյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Բեռնարդեն դը Սեն-Պիերի «Պօղոս ու Վիրգինիա» վիպակը: 221 էջ:

Նույնը անփոփոխ՝ 1872 թ.:

-Վենետիկում, Ղևոնդ Ալիշանի՝ անգլերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, անգլերեն-գրաբար զուգահեռ բնագրերով, առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է Ջորջ Բայրոնի «Չալդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմի չորրորդ երգը, «Իտալիա» խորագրով: 146 էջ: Հետագայում վերահրատարակվել է մի քանի անգամ:

-Վենետիկում, Մանվել Քաջունու՝ իտալերենից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ժան-Բապտիստ Պլանշարի «Դպրոց բարուց» մանկավարժական ուսումնասիրությունը և Ֆրանցիսկո Սոնվյեի «Նկարագիր զգոն և առաքինի մարդու» աշխատությունը: 934 էջ:

-Վիեննայում, Ներսես Շյուքյուրյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Ցավոց խղիկը կամ գիպուրկ» վիպակը

(«Կրթական և զբոսալի տեսրակք», հ. ԽԲ): 191 էջ: Հատվածաբար հրատարակվում էր «Եվրոպա» կիսամյա լրագրում, 1859 թ. հունիսի առաջին կեսից (№ 11) մինչև դեկտեմբերի առաջին կեսը (№ 27):

-Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է «Ամերիկա – համառոտ վիճակագրություն ի նպաստ ուսանողաց աշխարհագրության» աշխատությունը: 64 էջ:

-Պոլսում, Ատոմ Հովհաննեսի Տերոյենցի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Անտառաց մատուռը» պատմվածքը: 21 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Մարդու սատանան» գիրքը: 241 էջ:

-Պոլսում, Գրիգոր Թորոսյանի՝ իտալերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Մարիամ Ռոզա աղջկան պատմությունը» վիպակը: 84 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Հովհաննես Պրուսացի Տերոյենցի (Չամուռճյան) «Բանադատ» ընդդիմախոսականը, 162 էջ:

Լրիվ վերնագիրն է. «Բանադատ, Տեր Տ. Մատթեոսի սրբազան կաթողիկոսի Ամենայն հայոց «Բարի մարդ և բարի քրիստոնյա» անուն գրքին դեմ (տե՛ս մեզ մոտ՝ Պոլիս, 1856 թ.-Ս.Շ.) բողոքականներուն հանած նույնանուն գրքին վրա քննություն»:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում են «Հայոց եկեղեցին և ամերիկացի քարոզիչք «Իննսուն միլիոն մեծ սուտին» ու «Մեծ ու կարևոր հայտարարության վրա» աշխատությունը: 89 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Ազգային սահմանադրություն հայոց» գրքույկը (Ա տեսր), 46 էջ: Նույնը՝ 1863 թ., հանդերձ հայատառ թուրքերեն թարգմանությամբ, 54 էջ: 1870 թ. միայն հայերեն բնագիրը, 22 էջ:

Բ տեսր՝ «Ազգային սահմանադրությունն ու Մեճմուս» խորագրով, անդ, 1861, 16 էջ:

-Պոլսում, Ստեփաննոս Մոզյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Նախագիտելիք մանկանց» ձեռնարկը: 172 էջ:

Գիտահանրամատչելի մակարդակով մեկնաբանված են «Աստված, «Մարդ», «Զգայարանք», «Տիեզերք», «Տարերք», «Երկիր», «Երկրի բնակիչները», «Սողուններ», «Թռչուններ», «Միջատներ», «Գիտություններ», «Արվեստներ և քաղաքական պաշտոններ» և նման բնույթ ու նպատակաուղղվածությունն ունեցող այլ հասկացություններ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Արմենակ Ճիզմեճյանի (իմա՛. Արմենակ Հայկունի) «Պղատոն ի Վոսբոր. ընդդեմ դիմակավոր «Բարի մարդ և բարի քրիստոնյա» անուն գրքին» (47 էջ) և «Թուրքանտա տիկին և յուր գաղափարը Ամերիկայի երիցական քարոզչաց վրայոք» (21 էջ) աշխատությունները:

Սկզբում՝ կրոնաաստվածաբանական նեղ թեմաների քննարկումով սկսվող և հետագայում հասարակական-քաղաքական լայն հարցերի ոլորտները շոշափող բանավեճի միջոցով, բարձրացված են հայ ժողովրդի, նրա զարգացման ու հեռանկարի հարցերը:

-Փարիզում գրաբար հրատարակվում է Թովմա Մեծոփեցու «Պատմութիւն Լանկ-Թեմուրայ և հաջորդաց իւրոց» երկը: Բնագրագիտական աշխատանքները, գրաբար առաջաբանն ու ծանոթագրությունները Կարապետ Շահնազարյանի («Շար հայ պատմագրաց», հ. Զ): 134 էջ:

-Փարիզում գրաբար հրատարակվում է Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից» աշխատությունը: Բնագրագիտական աշխատանքները, գրաբար առաջաբանը՝ Կարապետ Շահնազարյանի («Շար հայ պատմագրաց», հ. Ե): 432 էջ:

Զետեղված են Կաղանկատվացու պատմության միայն առաջին և երկրորդ գրքերը:

-Փարիզում արևմտահայերեն հրատարակվում է Ճանիկ Արամյանի «Դասարան հայկազյան մանկանց» ձեռնարկը: 230 էջ:

-Փարիզում արևելահայերեն հրատարակվում է Խաչատուր Միսաքյանի գրական-հրապարակախոսական աշխատությունը՝ «Տքնությունք և սփոփանք հայրենասիրի» խորագրով: 52 էջ:

- Փարիզում գրաքար վերահրատարակվում է Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» աշխատությունը: Վերջում զետեղված է «Երզնկայ վարդապետի խրատք» հատվածը: 288 էջ:
- Փարիզում արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Ճանիկ Արամյանի «Համառոտագույն բառարան արդյան լեզվի, հայերենն ի տաճկերեն ի ֆրանսերեն» գիրքը: 178 էջ:

Սկզբում զետեղված երեքլեզվյան բառարանին, «Աշխարհագրական անվանք խորագրի ներքո (էջ 85-105), հաջորդում է նշանավոր տեղանունների և նրանց ֆրանսերեն տառադարձության այբբենական ցանկ, ապա՝ «Անվանք ազգաց և անձանց» բաժնում տրված է հայկական և եվրոպական անձնանունների այբբենական մի ցանկ հայերեն լեզվով, իրենց եվրոպական տառադարձությամբ (էջ 99-108): Վերջում (էջ 111-178) հարց ու պատասխանի ձևով, զետեղված է հայերեն-ֆրանսերեն խոսակցական բառգիրք, «Առաջնորդ ֆրանսերեն լեզվի, հաղագս ճամբորդաց ի Ֆրանսա» խորագրով:

- Փարիզում, Ամբրոսիոս Գալֆայանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ֆրանսուա Ֆենելոնի «Տելեմաք» վիպասանությունը: Այս գրքի առաջին գրաքար թարգմանությունը լույս է տեսել Նոր-Նախիջևանում, 1793 թ. (Տե՛ս. Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ (1512-1800 թթ.), Երևան, 1963, № 890 և 907):

- Փարիզում, Հովհաննես Հովակիմյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Պատմություն նախնյաց վաճառականության և ճանապարհ հարստության» աշխատությունը: 250 էջ:

- Փարիզում գրաքար հրատարակվում է Գրիգոր Նարեկացու «Մատեան Ողբերգութեան» պոեմը: 424 էջ:

Գիրքն ունի ավելի համառոտ՝ «Գրիգորի Նարեկացույ Ողբերգութիւն» վերնագիրը: Վերջում զետեղված են «Համառոտութիւն աղօթից... Մխիթարայ Գոշի... ասացեալ ի սուրբ պատարագին» և մի քանի այլ գործեր:

- Փարիզում արևմտահայերեն հրատարակվում է Մելիքշահ Բագրատունյանցի «Կարևոր խորհրդածությունք» աշխատությունը: 30 էջ:

Տրված է բաժան-բաժան եղած Իտալիայի ցավագին վիճակի նկարագրությունը և իտալացիների ազգային-հայրենասիրական ինքնագիտակցության գալը:

-Թիֆլիսում աշխարհաբար հրատարակվում է Միքայել Պատկանյանի «Պատասխանիք Հակոբա Կարինյանց գրվածքի դեմ» քննադատական աշխատությունը: 56 էջ:

Ընդդիմախոսական է, գրված Հակոբ Կարենյանի «Մի քանի խոսք... հայոց լեզվով Թիֆլիսումը ներկայացված թատրոնի վրա» հոդվածի առթիվ (տե՛ս ներկա հատորը, 1860 թ. մարտի 5):

-Թիֆլիսում արևելահայերեն հրատարակվում է տեղի հայկական գիմնազիայի աշակերտների ինքնուրույն և թարգմանական ստեղծագործությունների ժողովածուն «Բարոյական պատմությունք երեխայից համար» խորագրով: 85 էջ:

-Թիֆլիսում հրատարակվում է Պերճ Պռոշյանի «Մոսկուսի Վարդիթեր (ազգային վիպասանություն)» վեպը: 227 էջ:

Նույնը՝ անփոփոխ, Երևան, 1887 թ., 340 էջ:

-Մոսկվայում, Գաբրիել Հեջուբյանի և Նիկոլայ Ալադաթյանի համատեղ հեղինակությամբ, հրատարակվում է «Ընծա խելոք և ուսումնասեր երեխայոց» թարգմանած ժողովածուն: 159 էջ:

-Մոսկվայում աշխարհաբար հրատարակվում է Աբել Մխիթարյանի «Անուշավան ի գերեվարս» ազգային վիպասանությունը: 90 էջ:

-Մոսկվայում գրաբար հրատարակվում է Մխիթար Այրիվանեցու «Պատմութիւն հայոց» աշխատությունը: Բնագիրը հրատարակության է պատրաստել Մկրտիչ Էմինը: 69 էջ:

Վերջում. (էջ 3-18), զետեղված է «Պատմութիւն Լազարեան ճեմարանի» ուսումնասիրությունը, որը հանված է Մսեր Մսերյանի «Յիշատակարան Լազարեան տոհմի» աշխատությունից (տե՛ս ներկա հատորը, 1856 թ., Մոսկվա):

-Մոսկվայում գրաբար հրատարակվում է Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն աղուանից աշխարհի» աշխատությունը: Բնագրագիտական աշխատանքները, գրաբար առաջաբանը՝ Մկրտիչ Էմինի, 286 էջ:

-Մոսկվայում հրատարակվում է Սմբատ Շահագիզի «Ազատության ժամեր» քանաստեղծությունների ժողովածուն: 189 էջ: Այն ունի «Հատոր երկրորդ» նշումը: Չնայած արվող հավաստիացմանը, որ՝ «Առաջին հատորը (որ գրոց լեզվով է), եթե հաջողի, մի քանի ժամանակից հետո դուրս կգա», առաջին հատորը չի հրատարակվել (այս մասին տե՛ս **Սմբատ Շահագիզ**, Երկեր, Երևան, 1947, էջ 211-215):

-Վանում գրաբար հրատարակվում է Մանվել Արտամետցյանի «Գաղթականություն ի Վասպուրականէ Սենեքերիմայ արքային Արծրունւոյ» ողբերգությունը: 91 էջ:

-Էջմիածնում գրաբար հրատարակվում է Հովհաննես Արճիշեցու «Մեկնություն ահաւոր խորհրդոյ սրբոյ պատարագին, արտահանեալ ի մեկնութեանց Խոսրովու Անձևացեաց եպիսկոպոսի և Ներսիսի Լամբրոնացւոյ» աշխատությունը: 150 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Թադևոս Միհրդատյանցի «Նկարագիր աղետից Երուսաղէմի» ուսումնասիրությունը: 247 էջ:

Լրիվ վերնագիրն է. «Նկարագիր աղետից Երուսաղէմի, կամ ուրուագիծ ոգւոյ և ընթացից կառավարութեան Յօհաննէս պատրիարքին Երուսաղէմի Զմիւռնիացւոյ, ընդ նմին քանի մի խոսք ի վերայ վարչութեան ազգայնցս Կոստանդնուպօլսոյ և համառօտ դիտողութիւնք ի վերայ բարեկարգութեան միաբանից սրբոյ աթոռոյն Երուսաղէմի և այլ աթոռոյ և վանօրէից ազգիս»:

Շարադրված է Երուսաղէմի հայկական միաբանության պատմությունը, «Ի 1820 ամէ, մինչև ցվերջ նոյեմբերի, 1860 ամի»:

1861

Հունվարի առաջին կես. «Մասյաց աղավնին (№ 1), Գաբրիել Այվազովսկու՝ ռուսերեն բնագրից կատարած արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Իվան Կռիլովի «Ագռավ և աղվես» առակը:

«Մասյաց աղավնու» հերթական համարներում Այվազովսկին պարբերաբար հրատարակել է Ի. Կռիլովի առակների՝ ռուսերեն բնագրից կատարած հետևյալ չափածո թարգմանությունները. «Ոսկի» (№ 3, փետրվարի առաջին կես), «Կապիկ» (№ 4, փետրվարի երկրորդ կես), «Կատվածուկ և կատու» (№ 5, մարտի առաջին կես), «Մանկիկ և թրթուռ» (№ 6, մարտի երկրորդ կես), «Ածելի և տղա»,

«Առյուծին կրթությունը» (№ 10, մայիսի երկրորդ կես), «Խոզ» (№ 13, հուլիսի առաջին կես), «Մկունք» (№ 14, հուլիսի երկրորդ կես), «Թաթուլին գալաճոշը» (№ 15, օգոստոսի առաջին կես), «Կլու և աքլոր» (№ 16, օգոստոսի երկրորդ կես), «Երկու տակառք» (№ 17, սեպտեմբերի առաջին կես), «Սագեր» (№ 18, սեպտեմբերի երկրորդ կես), «Տակառ» (№ 19, հոկտեմբերի առաջին կես), «Գյուղական և օձ» (№ 20, հոկտեմբերի երկրորդ կես), «Բաժինք» (№ 21, նոյեմբերի առաջին կես), «Կապիկ և ակնոց» (№ 22, նոյեմբերի երկրորդ կես), «Կատու և խոհակներ» (№ 23, դեկտեմբերի առաջին կես), «Սանտր» (№ 24, դեկտեմբերի երկրորդ կես):

1862 թ. հունվարի առաջին կես. «Անցորդք և շունք» (№ 1), «Դեղձանիկ և աղավնյակ» (№ 2, հունվարի երկրորդ կես), «Ոսկի» (№ 3, փետրվարի առաջին կես), «Ձի և տերը» (№ 5, մարտի առաջին կես), «Ճանճ և մեղու» (№ 6, մարտի երկրորդ կես), «Էջ և սոխակ» (№ 7, ապրիլի առաջին կես), «Աղվես և կուզ» (№ 8, ապրիլի երկրորդ կես, «Գայլ և կկու» (№ 9, մայիսի առաջին կես), «Զրպարտություն» (№ 10, մայիսի երկրորդ կես), «Նապաստակ յորսի» (№ 11, հունիսի առաջին կես), «Կապիկք» (№ 12, հունիսի երկրորդ կես), «Թռռնիկին կապան» (№ 13, հուլիսի առաջին կես), «Հետաքրքիր» (№ 14, հուլիսի երկրորդ կես), «Գայլ փոխե զբուրդ, բայց ոչ զբնույթ» (№ 15, օգոստոսի առաջին կես), «Սարեակ» (№ 18, սեպտեմբերի երկրորդ կես), «Գեղացվույն փորձանքը» (№ 19, հոկտեմբերի առաջին կես), «Գյուղական և մշակ» (№ 20, հոկտեմբերի երկրորդ կես), «Գայլ և աղվես» (№ 22, նոյեմբերի երկրորդ կես):

1863 թ. հունվարի առաջին կես. «Կարապ, ձուկ և խեչափար» (№ 1), «Շներուն բարեկամությունը» (№ 3, փետրվարի առաջին կես), «Ստախոս» (№ 7, ապրիլի առաջին կես), «Արծիվ և հավք» (№ 10, մայիսի երկրորդ կես), «Տերևք և արմատք» (№ 11, հունիսի առաջին կես), «Գայլ և կորյուն» (№ 13, հուլիսի առաջին կես), «Գորտ և եզ» (№ 17, սեպտեմբերի առաջին կես), «Գայլք և ոչխարք» (№ 19, հոկտեմբերի առաջին կես), «Խիկարին էշը» (№ 23, դեկտեմբերի առաջին կես):

1864 թ. հունվարի առաջին կես. «Ամպ» (№ 1), «Երաժիշտք» (№ 5, մարտի առաջին կես), «Պառնաս» (№ 7, ապրիլի առաջին կես), «Էջ և գեղացի» (№ 9, մայիսի առաջին կես), «Անաստվածք» (№ 11, հունիսի առաջին կես), «Զրպարտիչ և օձ» (№ 13, հուլիսի առաջին կես), «Աքաղաղ և մարգարիտ» (№ 15, օգոստոսի առաջին

կես), «Սայլեր» (№ 17, սեպտեմբերի առաջին կես), «Տոպրակ» (№ 19, հոկտեմբերի առաջին կես):

1865 թ. հունվար. «Արծիվ և խլուրդ» (№ 1), «Բարեսիրտ աղջիկ» (№ 3, մարտ), «Առվակ» (№ 5, մայիս), «Ասպետ» (№ 6, հունիս) և այլն: Լեզվաոճական բնույթի որոշ մշակումներից հետո, Այվազովսկին այս ամենը գետեղել է իր կազմած «Առակք Կռիլովի յինն գիրս» ժողովածվում (Վաղարշապատ, 1896, 402 էջ, նույնը՝ Պոլիս, 1870, 128 էջ):

Հունվար. «Բազմավեպը» (№ 1), Հարություն Թերզոնցի (նաև՝ Հ.Թ., Ե.Հ.Թ., Թ., իմա՛. Նորայր Բյուզանդացի)՝ իտալերեն բնագրից կատարած արևմտահայերեն ազատ թարգմանությամբ, սկսում է հրատարակել Կեսար Գանտուի «Առակախոս Սերովբեն» բարոյախոսական վիպակը: Որոշ ընդհատումներով շարունակվում է մինչև № 12 (դեկտեմբեր): Վիպակի իտալական անվանում է «Պատանյակ»:

Հունվար. Ախալքալակում (այժմ՝ Վրացական ՍՍՀ) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, արձակագիր, լրագրող (հունարեն և թուրքերեն լեզուներով), ազգագրագետ Արշակ Մադոյանը: Վախճ. 1932 թ.:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Վ. Մատոյան», «Ալեուր», «Սեյլան» կեղծանուններով:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 261:

Հունվարի առաջին կես. «Երևակը» (№ 97) հրատարակում է «Թովմա Մեծոփեցի և պարոն Նև» աշխարհաբար հոդվածը:

Հունվարի 7. «Մեղու Հայաստանին» (№ 2) գերմաներեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Օգոստոս Լևալդի «Խեղճ Հակոբ» պատմվածքը:

Հունվար. «Արծվի Վասպուրականը» (№ 1) արևմտահայերեն հրատարակում է Գարեգին Սրվանձոյանցի «Երևան քաղաք» հոդվածը և «Ի նոր տարեդարձ ազգային սահմանադրության» բանաստեղծությունը: «Վանեցոց քանի մի առակներ» խորագրի ներքո, Վանի բարբառով հրատարակված է նաև տասնմեկ առած:

Հունվար. «Հյուսիսափայլ» (№ 1), Ստեփաննոս Նազարյանցի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ֆրիդրիխ Շիլլերի «Մեսսինական հարսը» դրաման: Ավարտ՝ հաջորդ համարում: Թարգմանությանը նախորդող առաջաբանում Նազարյանցը տվել է Շիլլերի կյանքի և գրական գործունեության ընդարձակ բնութագիրը: Հրատարակված է նաև Միքայել Միանսանյանցի «Մտածությունք հրապարակախոսության վերա» հոդվածը:

Հունվարի 20. «Մեղուն» (№ 122), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Վիկտոր Հյուգոյի «Դաստիարակության ազատություն» ճառը: ավարտ՝ № 124 (փետրվարի 10):

Հունվար. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 1) արևելահայերեն սկսում է հրատարակել Մարկոս Աղաբեկյանի «Գարեգին» պատմական ողբերգությունը: Ավարտ՝ մարտի համարում (№ 3): Ողբերգությանը կցված առաջաբանում հեղինակը շարադրում է իր տեսակետները թատրոնի մասին: Սկսում է հրատարակվել նաև Մատթեոս Մամուրյանի «Անգլիական նամականին»: Որոշ ընդհատումներով շարունակվում է մինչև 1862 թ. փետրվարը (№ 2) և մնում անավարտ: Գրաբարով հրատարակվում է նաև Գարեգին Սրվանձտյանի «Համապատասխանիք նախընթաց ոտանաւորին...», Հարություն Տեր-Դանիելյանցի «Դիմաւորութիւն Կոնկան Վասպուրական արծույն ի Տփղիս» և Իսրայել Մամիկոնյանցի «Առ կռունկն Հայոց աշխարհի» բանաստեղծությունները:

Հունվարի 21. «Մեղու Հայաստանին» (№ 4) արևելահայերեն սկսում է հրատարակել Ստեփաննոս Մանդինյանցի «Նախահարց կորուստը և մեղքի աշխարհ մտնելը» գեղարվեստական ստեղծագործությունը: Ավարտ՝ № 7 (փետրվարի 11):

Հունվարի երկրորդ կես. «Ճռաքաղը» (№ 12) աշխարհաբար հրատարակում է Մելքիսեթ քահանա Թիֆլիզեցու «Երգ ողբական ի վերա Տփղիս քաղաքի» բանաստեղծությունը և Զարմայր Մսերյանցի «Տարեգիր» գրական-հրապարակախոսական հոդվածը (վերլուծաբար ներկայացված են «Մեղու Հայաստանի», «Կռունկ Հայոց աշխարհին», «Ծիածան Հայաստանի» (իմա՝ «Մայայց աղավնի») և «Հյուսիսափայլ» պարբերականները):

Հունվարի 23. Եղիսաբեթուպոլում (Ելիզավետպոլ, Հունգարիա) ծնվեց լեզվաբան-բանասեր, խմբագիր, հոդվածագիր (հունգարերեն, գերմաներեն և հայերեն լեզուներով), ազգա-

գրագետ Ղուկաս Գրիգորի Բադրուպանյանը (Lukács Patrubány): Վախճ. 1926 թ. հունիսի 1-ին, Բուդապեշտում (Հունգարիա):

1897 թ. Բուդապեշտում հիմնադրել և մինչև 1898 թ. խմբագրել է («Schprachwissenschaftliche Abhandlungen») (իմա. «Լեզվագիտական հետազոտություններ») գերմաներեն ամսագիրը:

Գովրիկյան Գ., Հայք յեղիսաբերուպոլիս, Դրանսիլվանիո, Վիեննա, 1904, հ. Գ, 658 էջ: Magyar Eletrajzi lexikon, II k., Budapest, 1969, 370 1.

Հունվարի 31. «Մեղուն» (№ 123) արևմտահայերեն հրատարակում է Հովհաննես Չամուռճյանի «Խայտառակության քննություն» հոդվածը: Այն պատասխան է, գրված Ս. Շահբեգի (ի՛մա. Մ. Նալբանդյան) «Հրաշափառ խայտառակություն» հոդվածի դեմ (տե՛ս ներկա հատորը, «Մեղու», 1860 թ. դեկտեմբերի 10, № 118):

Փետրվարի 4. «Մեղու Հայաստանին» (№ 6) արևելահայերեն հրատարակում է Անդրեաս Պետրոսյանի «Հյուսիսափայլի № 6, 7 և 8 ամսատետրակներումը 1860 թվականի տպագրված նամակների վերա» հոդվածը:

Փետրվարի 7. Վաղարշապատում (այժմ՝ Էջմիածին) ծնվեց ազգագրագետ-բանասեր, բանահավաք Տիգրան Ավետիսի Նավասարդյանը: Վախճ. 1927 թ. ապրիլի 12-ին, Թիֆլիսում:

«Լրաբեր» (ՀՍՍՀ ԳԱ 1974, № 5 (մայիս). («Տիգրան Նավասարդյանը բանագետ-բանահավաք»): Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. Բ, (կազմեց Ա. Նազինյանը), Երևան, 1959, 659 էջ:

Փետրվարի 10. «Մեղուն» (№ 124) արևմտահայերեն հրատարակում է Հարություն Սըվաճյանի «Չքնաղ հյուրընկալություն» հոդվածը:

Փետրվարի 11. Պոլսում ծնվեց գրական-մշակութային գործիչ Գառնիկ Հայկյանը: Վախճ. 1926 թ. հուլիսի 15-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1922, էջ 310-311, 1927, էջ 628:

Փետրվար. «Բազմավեպը» (№ 2) արևմտահայերեն հրատարակում է «Փավստոս Բուզանդացի» հոդվածը:

Փետրվար. «Արծվի Վասպուրականը» (№ 2) արևմտահայերեն հրատարակում է «Հայկազանց առաջադիմության կենտրոն բուն հայրենիքն է» և Գարեգին Սրվանձոտյանցի «Շիրիմ նախնյաց» հոդվածները:

Փետրվար. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 2) արևելահայերեն հրատարակում է Պահլավունու (Իմա՛. Պերճ Պռոշյան) «Արագածոտնից և Արարատյան դաշտից ողջույն կռնկան» բանաստեղծությունը:

Փետրվարի առաջին կես. «Մասյաց աղավնին» (№ 3) արևմտահայերեն հրատարակում է «Ի մահն Արտավազդա առաջնո, բանաստեղծ թագավորի» բանաստեղծությունը:

Փետրվարի առաջին կես. «Ճռաքաղը» (№ 13) հրատարակում է Մկրտիչ Նաղաշի «Տաղ ուրախութեան» բանաստեղծությունը: Հրատարակված է նաև Ջարմայր Մսերյանցի «Դարձված բանից առ Սարգիս Տեր-Միքայելյան Վարշամյանց» աշխարհաբար հոդվածը: Ավարտ № 22 (հունիսի երկրորդ կես):

Սարգիս Տեր-Միքայելյան Վարշամյանցի՝ Մ. Նալբանդյանի կեղծանունը լինելու հարցը այսօր էլ լայն քննարկման ու վեճի առարկա է հանդիսանում (տե՛ս «Մի կարևոր փաստի վերականգնում», «Պատմա-բանասիրական հանդես», 1964 թ., № 3, «Նորից Սարգիս Վարշամյանցի նամակի առթիվ»: Անդ, 1981 թ., № 3, հուլիս-սեպտեմբեր):

Փետրվարի երկրորդ կես. «Ճռաքաղը» (№ 14) գրաբար հրատարակում է Հովհաննես Տարբերունու «Դաւանութիւն հաւատոյ» պոեմը, Բ...-ի «Բան առ Հայաստան ի բարենշան աւուրսն» բանաստեղծությունը և Մկրտիչ Խազանճյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, Վասիլի Ժուկովսկու «Վրեժինդութիւն» բանաստեղծությունը:

Փետրվարի 18. «Մեղու Հայաստանին» (№ 8) արևելահայերեն սկսում է հրատարակել Ստեփաննոս քահանա Մանդինյանցի «Դաստիարակություն, նկարագրություն» ակնարկը: Ավարտ՝ № 10 (մարտի 4):

Փետրվարի երկրորդ կես. «Մասյաց աղավնին» (№ 4) սկսում է հրատարակել Հովսեփ Չերքեյանցի «Նամակ առ Ստեփաննոս վարդապետ Նազարյանց» հոդվածը: Ավարտ՝ № 11 (հունիսի առաջին կես):

Փետրվարի 25. «Մեղու Հայաստանին» (№ 9) սկսում է հրատարակել Գրիգոր Մամիկոնյանցի հավաքած հայկական ժողովրդական առածներն ու ասացվածքները, «Տաճկական (Իմա. Տաճկահայաստանի-Ս.Շ.) առածներ» խորագրով: Շարունակվում է մինչև № 12 (մարտի 18): Հրատարակվում է ավելի քան հարյուր առած:

Ամառ. Պոլսում, Առաքել Ալթունտյուրբու, Հարություն Մերիեմգուլու, Գրիգոր Խուրտաճյանի և Գրիգոր Ֆրենկյանի սատարմամբ, իր գոյությունն է սկսում «Արևելյան թատրոնի ընկերություն» թատերական-մշակութային կազմակերպությունը: Իր գոյությունը դադարեցրել է 1863 թ. ապրիլին:

«Հանդես ամսօրյա», 1952, № 1-3 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Մարտի 11. «Մեղու Հայաստանին» (№ 11) արևելահայերեն հրատարակում է Համագասպ Աբովյանցի «Մեր խեղճ հայոց լեզուն այժմյան մի քանի նորաձև գործածությանց մեջ» հոդվածը: Ավարտ՝ № 13 (մարտի 25):

Մարտ. «Հյուսիսափայլը» (№ 3), Ստեփաննոս Նազարյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակում է «Զարմանալի մարգարեություն» պատմվածքը:

Մարտ. «Բազմավեպը» (№ 3) արևմտահայերեն հրատարակում է «Առատաբանության ոճ» տաղաչափական ուսումնասիրությունը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Մարտ. «Արծվի Վասպուրականը» (№ 3) արևմտահայերեն հրատարակում է Գարեգին Սրվանձտյանցի «Հայրենասիրություն և հայրենիք» հոդվածը, «Տիգրիս քաղաք» գրական-ազգագրական ուսումնասիրությունը (ավարտ՝ հաջորդ համարում) և Բաֆֆու (Հակոբ Մելիք-Հակոբյան) «Հայրենասիրի ողբ» բանաստեղծությունը (Բաֆֆի, Երկերի ժողովածու, Երևան, 1957, էջ 36, 697):

Մարտի առաջին կես. «Մասյաց աղավնին» (№ 5), ռուսերեն բնագրից կատարված արևելահայերեն չափածո թարգմանությամբ (թարգմանիչ՝ Գ. Այվազովսկի ?) հրատարակում է Գ. Դերժավինի «Արբեցող և ժուժկալ փիլիսոփայք» բանաստեղծությունը:

Մարտի 20. «Մեղուն» (№ 128) արևմտահայերեն հրատարակում է խմբագրական հոդված, որտեղ քննադատվում է «Արշալույս արարատյանի» ծավալած գրական-հրապարակախոսական գործունեությունը: Հրատարակված է նաև Գրիգոր Օտյանի «Արշակ Բ ողբերգություն» արևմտահայերեն գրախոսականը: Գրախոսված է 1861 թ. Թեոդոսիայում հրատարակված Խորեն Գալֆայանի՝ հիշյալ անունը կրող ողբերգությունը (տե՛ս ներկա հատորը):

Մարտի երկրորդ կես. «Ճռաքաղը» (№ 16) աշխարհաբար հրատարակում է Սեյադի (ի՛մա. Պետրոս Մադաթյան) «Մեր ազգի» բանաստեղծությունը:

Մարտի երկրորդ կես. «Մասյաց աղավնին» (№ 6) արևմտահայերեն հրատարակում է «Վերջին հայկազն» պոեմը:

Մարտի 30. «Մեղուն» (№ 122), արտատպելով «Հյուսիսսփայլից» (տե՛ս ներկա հատորը, «Հյուսիսսփայլ», 1861 թ. № 1, հունվար) սկսում է հրատարակել Միքայել Միանսարյանցի «Մտածությունք հրապարակախոսության վերա» հոդվածը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Ապրիլի 8. «Մեղու Հայաստանին» (№ 15) գրաբար հրատարակում է Աբրահամ Նազարյանցի «Նուէր հառաչանաց առ մայրն Հայաստան» և «Օրորք» բանաստեղծությունները:

Ապրիլի առաջին կես. «Ճռաքաղը» (№ 17) աշխարհաբար հրատարակում է Սեյադի «Նկարագիր ախտավոր բարուց» և Մելիք Հայկազնյանի «Երագ» բանաստեղծությունները:

Ապրիլի 10. «Մեղուն» (№ 130) գրաբար հրատարակում է Եսայի վարդապետի «Ի յիշատակ վեհ հանդիսի անուանակոչութեան Յիսուսի» պոեմը: Սկզբում տրված է Երուսաղեմի միաբան Եսայի վարդապետի կենսագրությունն ու գրական-հասարակական գործունեությունը:

Ապրիլ. «Բազմավեպը» (№ 4), ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ֆելիցիտե Լամընյեի «Աքսորեալն» արձակ բանաստեղծությունը:

Ապրիլ. «Հյուսիսսփայլը» (№ 4) արևելահայերեն հրատարակում է Ջալալյանցի (ի՛մա. Ռուբեն Հասան-Ջալալյան) «Վարդի ոստ» և Սմբատ Շահազիզյանցի «Սևորակ աչեր», «Առաջին սեր», «Առաջին տեսություն», «Աղջկա երգ» և «Գիշեր» բանաստեղծությունները (տե՛ս **Մաղյան Մ.**, Հյուսիսսփայլի պոեզիան, էջ 83-89 և 270-271):

Ապրիլ. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 4) արևելահայերեն հրատարակում է Գալուստ Շերմազանյանի «Իմ նշանածը Արազն ա» դրաման:

Ապրիլի երկրորդ կես. «Ճռաքաղը» (№ 18) աշխարհաբար հրատարակում է Սեյադի «Նկարագիր բարուց և վարուց Սեյադի Շամախեցվո» երգիծական բանաստեղծությունը և Մարտիրոս Ադամյանցի՝ «Պողոս Ղուկասյանի «Մի քանի խոսք» վերնագրով հոդվածի դեմ» ընդդիմախոսականը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Ապրիլի 29. «Մեղու Հայաստանին» (№ 18), Միքայել Սուլյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է մի հատված Ալ. Պուշկինի «Կապիտանի աղջիկը» վիպակից՝ «Մեծին Եկատերինեի հետ հանդիպելը» խորագրով:

Ապրիլի 30. «Մեղուն» (№ 132), արևելահայերեն որոշ կրճատումներով, հրատարակում է Միքայել Նալբանդյանի «Երկու տող» պամֆլետը (ունի «Հատվածք Մ. Նալբանդյանցի երկու տողեն» վերնագիրը): Ավարտ՝ № 136 (հունիսի 10):

«Երկու տողին» նախորդող Հ. Սըվաճյանի ներածական հոդվածում բացատրված են հասարակական-քաղաքական և կրոնական այն շարժառիթները, որոնք իրան են հանդիսացել Նալբանդյանի համար՝ հրատարակելու իր պամֆլետը:

Ապրիլի 30. «Արևելյան դարը» (№ 24) արևմտահայերեն հրատարակում է անստորագիր մի «քննաբանական», ուղղված Մ. Նալբանդյանի և նրա «Երկու տողի» դեմ:

Մայիսի առաջին կես. «Ճռաքաղը» (№ 19) աշխարհաբար հրատարակում է Սեյադի «Առյառն հայոց Մասիս» բանաստեղծությունը և գրաբար՝ Մսեր Մսերյանցի «Ստուգաբանութիւնք հայկական բառից» բացատրական բառացանկը: Վերջինս որոշ ընդհատումներով և նոր՝ «Ստուգաբանութիւն» անվամբ, շարունակվում է մինչև 1862 թ. հունիսը:

Մայիս. «Բազմավեպը» (№ 5) արևմտահայերեն հրատարակում է «Մոլիեր» հոդվածը և Ղևոնդ Ալիշանի «Ոսկեփորիկի մը մեջ եղած քանի մը ազգային երգեր» ուսումնասիրությունը: Ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակված է նաև Ժան Լաֆոնտենի «Ազոավն ու աղվես» առակը:

Մայիս. «Հյուսիսափայլը» (№ 5) արևելահայերեն սկսում է հրատարակել Գաբրիել Տեր-Հովհաննիսյանցի «Տեր Սարգիս (ազգային վիպասանություն)» ստեղծագործությունը: Շարունակվում է մինչև № 12-ը (դեկտեմբեր) և մնում անավարտ (տե՛ս **Տեր-Հովհաննիսյան Գ.**, Տեր Սարգիս, Երևան, 1938, 123 էջ): Հրատարակված է նաև Գևորգ Բարխուդարյանցի «Առակ» բանաստեղծությունը (տե՛ս **Մաղյան Մ.**, Հյուսիսափայլի պոեզիան, էջ 179-187):

Մայիս. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 5) հրատարակում է Խաչատուր Աբովյանի «Օվսաննա» պատմվածքը: Ավարտ՝ հաջորդ համարում (հարցի բանասիրական պատմությունը տե՛ս **Խ. Աբովյան**, ԵԼԺ, հ. 4, Երևան, 1947, էջ 263-285):

Մայիսի երկրորդ կես. «Ճռաքաղը» (№ 20) գրաբար հրատարակում է Մանուկ Ժամկոչյանցի «Այցելություն շիրմի ս. վարդապետին մերոյ և քերթողահոր Մովսիսի Խորենացոյ, որ ի Տարոն» և աշխարհաբար՝ Սեյադի «Մեղք» բանաստեղծությունները:

Մայիսի 27. «Մեղու Հայաստանին» (№ 22) արևելահայերեն հրատարակում է Ա. Ե. Սանահնեցու «Օրագրաց բարեկամի հիշատակարանից (նամակ առաջին և երկրորդ)» հոդվածը, որտեղ քննության է առնված ժամանակակից պոեզիան ու նրա առանձնահատկությունները, և Կամսար Տեր-Դավթյանցի «Պանդուխտ պատանի» պոեմը:

Հունիսի առաջին կես. «Ճռաքաղը» (№ 21) աշխարհաբար հրատարակում է Պետրոս Մադաթյանցի (Սեյադ) «Երգ... առ այրիացյալն Հայաստան», «Հատկանիշք ճշմարտասիրի» բանաստեղծությունները և Զարմայր Մսերյանցի «Տարեգիր» գրական-հրապարակախոսական հոդվածը (դրվատում է Վենետիկի Մխիթարյանների նախաձեռնությունը Հովհաննես Ոսկեբերանի երկասիրությունները հրատարակելու վերաբերյալ, այս կապակցությամբ անում է գրականագիտական-մատենագիտական բնույթի մի քանի նկատումներ):

Հունիսի 10. «Մեղուն» (№ 136) արևմտահայերեն հրատարակում է Հարություն Սըվաճյանի «Բերկրառիթ լուր մը» ներբողական բանաստեղծությունը, նվիրված Մկրտիչ Խրիմյանին:

Հունիսի առաջին կես. «Մասյաց աղավնին» (№ 11), Գաբրիել Այվազովսկու՝ ռուսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Գ. Դերժավինի «Աստված» բանաստեղծությունը:

Հունիսի 14. Պոլսում ծնվեց ականավոր նովելիստ, գրական-հասարակական գործիչ, լրագրող (հայերեն, թուրքերեն և ֆրանսերեն լեզուներով), իրավաբան Գրիգոր Խաչիկի Զոհրապը: Եղեռնամահ՝ 1915 թ. հուլիսի 7-ին, Ռի-ֆայի (Հար. Թուրքիա) շրջանում:

Ֆրանսերեն հրատարակված գործերն ունեն «Մարսել Լեար» («Marsel Léart») կեղծանունը:

Ազատյան Թ., Ակն և ակնցիք, Պոլիս, 1943, էջ 76: **Ճանաչյան Մ.**, Պատմություն արդի հայ գրականության, հ. Ա, Վենետիկ, 1953, էջ 440-478: **Հյուսյան Ս.**, Գրիգոր Զոհրապ. կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 1957, էջ 375: Հայ նոր գրականության պատմություն, հ. 4, Երևան, 1972, էջ 430-470 («Գրիգոր Զոհրապ»):

Հունիսի 17. «Մեղու Հայաստանին» (№ 25), Գևորգ Աբուլյանցի՝ վրացերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Խակ դատողություն» պատմվածքը և Ա.Ե. Սանահնեցու «Օրագրաց բարեկամի հիշատակարանից» հոդվածը (բացասաբար է գնահատված Երեմիա Իսահակյանցի բանաստեղծական ժառանգությունը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Հունիսի երկրորդ կես. «Ճռաքաղը» (№ 22) աշխարհաբար հրատարակում է Պետրոս Մադաթյանցի (Մեյադ) «Եղերերգություն ի դիմաց Երասխա առ Զանգի, որ է Հրազդան գետն Արարատյան աշխարհի» պոեմը: Ավարտ՝ № 24 (հուլիսի երկրորդ կես):

Հունիս. «Բազմավեպը» (№ 6), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ժան Լաֆոնտենի «Գորտ և կով» առակը և գրաբար չափածո թարգմանությամբ՝ Պետրոս դը Լաբրատի «Մեղու և ատահ (=ագահ?)» բանաստեղծությունը:

Հունիս. «Հյուսիսափայլը» (№ 6), Հովհաննես Սայաթնովյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Մ. Լերմոնտովի «Մարտ պատերազմի» բանաստեղծությունը (տե՛ս **Մադյան Մ.**, Հյուսիսափայլի պոեզիան, էջ 342-343): Հրատարակված է նաև Թուրունջի Հակոբ Հարությունյան Սերոբյանցի «Խոսակցություն զանազան տեղերից եկավոր հայերի մեջ» դրամատիկական ստեղծագործությունը և Ջալալեդդինի (ի՛մա. Ռուբեն Հասան-Ջալալյան) «Արաքս և Կուր գետերի գանգատը» չափածո գործը (տե՛ս **Մադյան Մ.**, նշվ. աշխ., էջ 288-295, 272-273):

Հունիս. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 6) արևելահայերեն հրատարակում է Գալուստ Շերմազանյանի «Ազգային հարսանիք» դրաման և Գարեգին Սրվանձտյանցի «Անդրադարձ պատասխանիք բանիցն Գողթան գավառի» բանաստեղծությունը:

Հունիսի 30. «Մեղուն» (№ 138), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ֆելիցիտե Լամայեի «Մաղթանք վասն Լեհաստանի» պամֆլետը:

Հուլիսի 1. «Մեղու Հայաստանին» (№ 27), հունարեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ (թարգմանիչ՝ Հ.Փ.), հրատարակում է Քսենոֆոնի «Սոկրատ և Գլավկոն» գործը և Թորոս Գևորգյանի «Եղերերգութիւն առ մայրաքաղաքն Անի և ի բերանոյ նորա դիմառնութիւն ի Հայաստան» բանաստեղծությունը՝ գրաբար:

Հուլիսի առաջին կես. «Ճոաքաղը» (№ 23) աշխարհաբար հրատարակում է Հովսեփ Չերքեզյանցի «Մեկնություն մեկնության որ տամե Նազարյանցը... հայոց եկեղեցու ռեֆորմին» հոդվածը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Հուլիսի առաջին կես. «Երևակը» (№ 109), գերմաներեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Ֆերդինանդ Շմիդտի «Աղվես» պատմվածքը: Ավարտ՝ «Երևակ»№ 114 (սեպտեմբերի երկրորդ կես):

Հուլիս. «Հյուսիսափայլը» (№ 7), Հարություն Մաղլումյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Պատահումն հանքային ջրերի եզերքում» պատմվածքը:

Հուլիս. Զմյուռնիայում, Գրիգոր Չիլինկիրյանի և Արմենակ Հայկունու համատեղ խմբագրությամբ, արևմտահայերեն սկսում է հրատարակվել «Ծաղիկ» տասնօրյա հանդեսը: 1865 թ. ապրիլի 1-ից թերթը փոխադրվում է Պոլիս և Զարեհ Ստեփանյանի խմբագրությամբ սկսում է հրատարակվել որպես կիսամյա հանդես, մինչև 1867 թ. ապրիլի 12-ը: Այդ ժամանակվանից, կրկին փոխադրվելով Զմյուռնիա, սկսում է խմբագրվել «ի ձեռն» Մատթեոս Մամուրյանի (որպես «օգնական աշխատակից» հաճախ հիշատակվում է Գրիգոր Չիլինկիրյանը), մինչև 1867 թվականը: Այդ թվականի նոյեմբերին «Ծաղիկը» դադարեցնում է իր գոյությունը:

Հուլիս. «Բազմավեպը» (№ 7), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ժան Լաֆոնտենի «Ճպուռն ու մրջյուն» առակը:

Հուլիսի 1. «Ծաղիկը» (№ 1), Մեսրոպ Նուպարյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Անտուան Առնոյի «Տերեւ» բանաստեղծությունը: Հրատարակված են նաև Արմենակ Հայկունու «Քնար հայրենի», «Քնար սիրո», «Սրինգ պանդխտ» արևմտահայերեն չափածո ստեղծագործությունները:

Նույն համարում. Գրիգոր Չիլինկիրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ և թարգմանչի առաջաբանով, սկսում է հրատարակվել Ժյուռ Սիմոնի «Խորհելու ազատություն» հրապարակախոսական աշխատությունը: Ավարտ՝ 1862 թ. № 29 (ապրիլի 10):

Հուլիս. «Կոունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 7) արևելահայերեն հրատարակում է Գամառ Քաթիպայի (իմա՝ Ռաֆայել Պատկանյան) «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմը, որը նվիրված է Մկրտիչ Սանասարյանին (տե՛ս Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, հ. Բ, Երևան, 1964, էջ 17-35): Հրատարակված է նաև Մ. Տեր-Ազարյանցի «Մեկ քանի խոսք Ապովյանի վերա (քանի մի նյութ նրա կենսագրության համար)» հոդվածը:

Հուլիսի 8. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդը (Սինոդ), Հովսեփ Չերքեզյանի՝ 1860 թ. դեկտեմբերի 26-ի նամակի, Ամենայն հայոց կաթողիկոսի՝ 1861 թ. հունվարի 29-ի հուշագրի և գրաքննիչներ Դանիել, Թորոս և Եսայի վարդապետների՝ 1861 թ. ապրիլի 28-ի զեկուցագրի հիման վրա, դատապարտում է «Հյուսիսափայլ» ամսագիրը և արգելում նրան որևէ տիպի կրոնական հարցերի անդրադառնալ:

«Երևակ», 1862, № 123 («Ազգային»)

Հուլիսի 10. «Ծաղիկը» (№ 2), Մեսրոպ Նուպարյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Պիեր-Շան Բերանժեի «Ձմեռն» և Ալֆրեդ դը Վինչեի «Զի քաղցր իցե զվեպս լըսել...» բանաստեղծությունները: Հրատարակված է նաև Արմենակ Հայկունու «Քնար սիրո» արևմտահայերեն բանաստեղծությունը:

Հուլիսի 20. «Ծաղիկը» (№ 3), Գրիգոր Չիլինկիրյանի՝ ֆրանսերենից (?) կատարած արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է «Հառաչանք սիրահարի» բանաստեղծությունը: Հաջորդ համարում (№ 4, օգոստոսի 1) հրատարակված է Արմենակ Հայկունու «Սրինգ պանդխտո» արևմտահայերեն բանաստեղծությունը:

Օգոստոս. «Բազմավեպը» (№ 8), ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է մի քանի բանաստեղծություն Ալֆոնս Լամարթինից:

Օգոստոսի 19. «Մեղու Հայաստանին» (№ 34), Մ. Տեր-Ազարյանցի՝ հունարեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Քսենոֆոնի «Սոկրատ և նրա որդի Լիմպոկլ» ստեղծագործությունը: Հրատարակված է նաև «Աշխարհաբառ լեզվի վրա» ուսումնասիրությունը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Օգոստոս. «Հյուսիսափայլը» (№ 8), Ստեփաննոս Նազարյանցի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ֆր. Շիլլերի «Ոհ, թող փորձե, ով յուր անձը միշտ կապում է...» բանաստեղծությունը (տե՛ս **Սաղյան Մ.**, Հյուսիսափայլի պոեզիան, էջ 146):

Օգոստոսի 20. «Ծաղիկը» (№ 6) արևմտահայերեն հրատարակում է Արմենակ Հայկունու «Ազգային գրականություն» հրապարակախոսական հոդվածը և «Առավոտ Հայաստանի», «Կիլիկիա», «Ձայն սիրո», «Հառաչանք սիրահարի» բանաստեղծությունները:

Մեպտեմբերի 2. «Մեղու Հայաստանին» (№ 36), Ա.Ե. Սանահնեցու՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Երեխա գողնողներ» պատմվածքը:

Մեպտեմբեր. «Հյուսիսափայլը» (№ 9), Գևորգ Բարխուդարյանցի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Ֆուլմինատի» պատմվածքը, Գևորգ Բարխուդարյանցի «Չորս հսկա», «Առ իմ սիրելին», Բասիլիոս Լուսինյանի (իմա՛. Սմբատ Շահազիզ) «Հուսահատություն (նվեր մի հայասեր աղջկա)», «Ցանկություն» բանաստեղծությունները և Ստեփաննոս Նազարյանցի «Մի քանի խոսք առ Հովսեփ Չերքեզյանցը և հրապարակախոսական նամակ առ պատվելի հայոց ազգը» հոդվածը:

Նույն համարում. արևելահայերեն հրատարակվում է «Ա, Ա.Ե. ...»-ի «Հիշատակ իմ անձանոթ ազգակցի հիշատակարաններին (իմ անձանոթ, ազնվամիտ և անխարդախ աշխատակից պ. Կոմս Էմմանուել)» նամակը: Ենթադրվում է, որ այն գրել է Մ. Նալբանդյանը (տե՛ս **Ինճիկյան Ա.**, Մ. Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը, էջ 181):

Մեպտեմբեր. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 9), Պետրոս Մադաթյանցի՝ պարսկերեն բնագրից կատարած արևելահայերեն չափածո թարգմանությամբ ու թարգմանչի առաջաբանով, հրատարակում է Հաֆիզի գազելները, «Ճաշակ պարսիկ

բանաստեղծության» խորագրով (ավարտ՝ հաջորդ համարում) և «Վասն անհաստատության սիրո» և «Գովասանք պարսից շահին» մուխամազները:

Սեպտեմբերի 9. Արաբկիրում (Արևել. Թուրքիա) ծնվեց գրական-մշակութային գործիչ, պատմաբան-բանասեր Նազարեթ Մամասի Աղազարմը: Վախճ. 1927 թ. ապրիլի 16-ին, Կահիրեում:

Զարդարյան Վ., Հիշատակարան, Կահիրե, 1940, էջ 77-80:

Սեպտեմբերի 16. «Մեղու Հայաստանին» (№ 38), Եղիշե Տեր-Ազարյանցի՝ հունարեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Քսենոֆոնի «Սոկրատ և Խերեկրատ» ստեղծագործությունները և Ա.Ե. Սանահնեցու «Օրագրաց բարեկամի հիշատակարանից» հոդվածը: Հոդվածում վերլուծված և բացասաբար են գնահատված Երեմիա Սահակյանցի՝ «Հյուսիսափայլում» հրատարակված բանաստեղծությունները:

Հոկտեմբերի 1. Թելավիում (Վրաստան), Ռոստոմբեկ Երզնկյանցի տեսչությամբ, իր գոյությունն է սկսում տեղի արական ուսումնարանը, «Ս. Վարդան» անվամբ: Ուսումնարանն ուներ 112 աշակերտ, ավանդվում էր կրոն, հայերեն և ռուսերեն լեզուներ:

«Մեղու Հայաստանի», 1862, № 35 («Թելավու նամակագիրը...»), 1873, № 49 («Ազգային»):

Հոկտեմբերի 10. «Ծաղիկը» (№ 11) արևմտահայերեն սկսում է հրատարակել Գրիգոր Զիլինկիրյանի «Հետաքրքիր այցելու» հրապարակախոսական պատմվածքը: Ավարտ՝ № 14 (նոյեմբերի 10):

Հոկտեմբերի 14. «Մեղու Հայաստանին» (№ 42) արևելահայերեն հրատարակում է Եղիշե Տեր-Ազարյանցի «Աստված հովանավոր է անմեղության» վիպակը (ավարտ՝ № 44, հոկտեմբերի 28) և Աբրահամ Նազարյանցի «Զգացմունք հայկազն պատանվո» բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 14. Մանդալեում (Արևելյան Հնդկաստան, այժմ՝ Բիրմա), Մկրտիչ Տեր-Մինասյանի և Թադևոս Ա. Խաչկյանի ջանքերով, հիմնվում է հայկական երկսեռ դպրոց «Հայկական բարբառասեր ճեմարան» անվամբ: Այն ուներ քսանհինգ աշակերտ: Ավանդվում էր հայոց լեզու, կրոն, գեղագրություն, ձեռագործ:

«Եղբայրասեր (լրագիր Կալկաթա)», 1862, № 10 («Առ վերատեսուչ «Եղբայրասեր» լրագրի»)

Հոկտեմբերի առաջին կես. «Մասյաց աղավնին» (№ 19), ռուսերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Մ. Լերմոնտովի «Աղօթք» բանաստեղծությունը:

Հոկտեմբեր. «Հյուսիսափայլը» (№ 10) արևելահայերեն հրատարակում է Ալֆոնզո Ռաթթիի «Հռոմեական նամակ» հոդվածը: Ենթադրվում է, որ այդ անվան տակ թաքնված է Մ. Նալբանդյանը (տե՛ս **Ինճիկյան Ա.**, Մ. Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը, էջ 181):

Հոկտեմբեր. «Բազմավեպը» (№ 10) արևմտահայերեն սկսում է հրատարակել Ղևոնդ Ալիշանի «Ուսումն հայրենյաց, բնախոսություն Հայաստանի» ուսումնասիրությունը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Հոկտեմբեր. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 10) արևելահայերեն հրատարակում է Գամառ Քաթիպայի «Ծեր այր (ազգային պարերգություն)» բանաստեղծությունը և Մ. Մինասիբյանի (իմա՛. Ռափայել Պատկանյան) «Թոմաս Բոցարիս» պատմվածքը (տե՛ս **Ռ. Պատկանյան**, Երկերի ժողովածու, հ. Ա, Երևան, 1963, էջ 75-77):

Հոկտեմբերի 20. «Ծաղիկը» (№ 12) արևմտահայերեն հրատարակում է Գրիգոր Զիլինկիրյանի «Էլիզա կամ վերջին արևելյան պատերազմի ժամանակ տեղի ունեցած իրական դեպք մը» գրախոսականը և Արմենակ Հայկունու «Քնար սիրահարական» բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 28. «Մեղու Հայաստանին» (№ 44) արևմտահայերեն հրատարակում է Մ. Բաստամյանցի «Մե աղունակ, մե լպստրակ, մե ձուկ» առակը:

Հոկտեմբերի 31. «Մեղուն» (№ 144), Խաչատուր Կյումուշյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Գաղտնի հրահանգ հիսուսյանց» ուսումնասիրությունը: Ավարտ՝ № 146 (նոյեմբերի 20):

Նոյեմբերի առաջին կես. «Մասյաց աղավնին» (№ 21) արևմտահայերեն սկսում է հրատարակել Հովսեփ Զերքեզյանի «Պատասխանատվություն առ բողոք պ. Ստեփաննոսի Նազարյանց» հոդվածը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Նոյեմբերի 10. «Մեղուն» (№ 145) արևմտահայերեն հրատարակում է Աբրահամ Նազարյանցի «Ստեփաննոս վարդապետի Նազարյանց նվեր» բանաստեղծությունը:

Նոյեմբերի 11. «Մեղու Հայաստանին» (№ 46), Վարդան Եղիազարյանցի՝ անգլերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Լեզու ունեցող կառասին» նովելը և Ս. Բաստամյանցի՝ ռուսերենից կատարած թարգմանությամբ, Մ. Բանդուզովի «Չորացած տերև» բանաստեղծությունը: Վերջինս հանդիսանում է Անտուան Առնոյի «Ոստիկ» բանաստեղծության փոխադրությունը:

Նոյեմբերի 18. Ավստրիայում ծնվեց չեխ հայագետ, լեզվագետ, թարգմանիչ (հայերենից՝ չեխերեն ու բոհեմերեն) Ալ. Կոուդելկան (Al. Koudelka):

Իր թարգմանությունները ստորագրում էր «O.S.Vetti» կեղծանունով:

«Հանդես ամսօրյա», 1903, № 3 («Ծաղկեփունջ»):

Նոյեմբեր. «Հյուսիսափայլը» (№ 11), Ե. Բ.-ի՝ ռուսերենից կատարած արևելահայերեն արձակ թարգմանությամբ, հրատարակում է Վիլյամ Շեքսպիրի «Վենետիկցի վաճառական» ողբերգությունը, Հակոբ Մելիք-Հակոբյանցի (իմա՛. Բաֆֆի) «Արգո բարեկամ Հովհաննես Քաթանյանց» նամակը (տե՛ս **Բաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1958, էջ 23-29), Կոմս Էմմանուելի «Իտալացի աղջկա երգ 1859 թվականից» բանաստեղծությունը (տե՛ս **Մ.Նալբանդյան, ԵԼԺ**, հ. 1, Երևան, 1945, էջ 93-95):

Նույն համարում. Մովսես Բուդաղյանի՝ հունգարերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Շանդոր Պետեֆու «Երգ մի գորականի» և «Դեպի գարունը» բանաստեղծությունները և Վահունու (իմա՛. Ստեփաննոս Տեր-Հովհաննիսյան) «Տեսիլ» և «Ազդ» չափածո ստեղծագործությունները (տե՛ս **Սաղյան Մ.**, Հյուսիսափայլի պոեզիան, էջ 262-265, 326-333):

Նոյեմբեր. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 11), Բարսեղ Աթամանյանի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Վիսարիոն Բելինսկու «Բանաստեղծության վրա» ուսումնասիրությունը: Շարունակվում է մինչև 1862 թ. № 3 (մարտը) և մնում անավարտ:

Նոյեմբերի 18. «Մեղու Հայաստանին» (№ 47) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Մանդինյանցի «Ազգային պակասությունք, թուլությունք և անհոգությունք» հրապարակախոսական հոդվածը: Ավարտ՝ № 49 (դեկտեմբերի 2):

Նոյեմբերի 20. «Ծաղիկը» (№ 15) արևմտահայերեն հրատարակում է Գալուստ Կոստանդյանի «Հայ բանադատությունը» հոդվածը:

Նոյեմբերի 28. Մունճուսունում (Կեսարիա, Կենտր. Թուրքիա) ծնվեց լեզվաբան-բանասեր, բառարանագիր Վահան Հակոբի Հակոբյանը: Եղեռնամահ՝ 1915 թ. օգոստոսի 12-ին, Սեբաստիայի շրջանում:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո (Բ հատոր), Կահիրե, 1937, էջ 2059-2061:

Նոյեմբերի 20. «Մեղուն» (№ 146) արևմտահայերեն հրատարակում է Հարություն Սըվաճյանի «Միքայել Նալբանդյանց» հոդվածը:

Դեկտեմբերի 1. «Օաղիկը» (№ 16), «Ազգային ռամկական երգեր» ընդհանուր խորագրի ներքո, անկանոն պարբերականությամբ, սկսում է հրատարակել ընտրանի գործեր արևելահայ «գրչեղբայրներեն»: Հրատարակվում է Ռ. Պատկանյանի «Հայոց աղջիկ», Գ. Միրիմանյանի «Հայոց աղջիկ» (1862 թ., № 20, հունվարի 10), Ռ. Պատկանյանի «Հայոց գինի» (1862 թ., № 23, փետրվարի 10) գործերը: Հրատարակված է նաև Արմենակ Հայկունու «Զելա» արևմտահայերեն բանաստեղծությունը:

Դեկտեմբերի առաջին կես. «Եվրոպան» (№ 23), գերմաներեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Սև թերթակալը» վիպակը: Ավարտ՝ № 26 (դեկտեմբերի երկրորդ կես, հավելված):

Դեկտեմբեր. «Բազմավեպը» (№ 12), ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Պիեր Բերանժեի «Թռչունք» բանաստեղծությունը:

Դեկտեմբեր. «Հյուսիսափայլը» (№ 12) արևելահայերեն հրատարակում է Երեմիա Սահակյանցի «Մի քանի խոսք մեր ազգի բարեմիտների հետ» հրապարակախոսական հոդվածը և «Առակ» բանաստեղծությունը: Հրատարակված է նաև Վահունու (իմա՛. Ստեփաննոս Տեր-Հովհանիսյան) «Երազ» բանաստեղծությունը (տե՛ս **Սաղյան Մ.**, Հյուսիսափայլի պոեզիան, էջ 298-300, 334-338):

Դեկտեմբերի 10. Մոսկվայում, Մսեր և Զարմայր Մսերյանների խմբագրությամբ, արևելահայերեն սկսում է հրատարակվել «Համբավաբեր Ռուսիո» երկշաբաթաթերթը: Դադարում է 1864 թ. վերջին:

Դեկտեմբերի 14. Պոլսում տրված առաջին ներկայացումով՝ Ռոտայի «Երկու հիսնապետներ» պիեսով (թարգ. Թովմաս Թերգյան) իր գոյությունն է սկսում հայկական առաջին պրոֆեսիոնալ դրամատիկական թատրոնը, որն ուներ «Արևելյան թատրոն» անվանում:

նումը: Այն ֆինանսավորել են Առաքել և Ստեփան Ալթունսյուրրի եղբայրները, Գրիգոր Խուրտաճյանը, Գրիգոր Ֆրենկյանը, գեղարվեստական ղեկավարությունն իրականացնում էին Պետրոս Մաղաքյանը, Հակոբ Վարդովյանը, Մարտիրոս Մնակյանը: «Արևելյան թատրոնի» հիշյալ առաջին ներկայացմանը ներկա էին նաև Հ. Սըվաճյանն ու Մ. Նալբանդյանը: «Արևելյան թատրոնը» որոշ ընդհատումներով, իր գոյությունը շարունակեց մինչև 1876 թ. կեսերը:

Ստեփանյան Գ., Ռեբվագիծ արևմտահայ թատրոնի պատմության (հ. 1). Երևան, 1962, էջ 213-380:

Դեկտեմբերի 20. «Մեղուն» (№ 147) արևմտահայերեն հրատարակում է Միքայել Նալբանդյանի «Ազգային թատրոն Պոլսո մեջ» հոդվածը և Կոմս Էմմանուելի «Իտալացի աղջիկ 1859 թվականից» բանաստեղծությունը: Վերջինս արտատպված է «Հյուսիսափայլից» (տե՛ս **Մ. Նալբանդյան, ԵԼԺ**, հ. 2, Երևան, 1948, էջ 307-311, հ. 1, Երևան, 1945, էջ 93-94):

Դեկտեմբեր. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 12), Մ. Մինասիբյանի (իմա՛. Ռափայել Պատկանյան) արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Թրովատորե» (իմա՛. Տրուբադուր) ստեղծագործությունը:

Դեկտեմբերի 31. «Մեղուն» (№ 148) արևելահայերեն հրատարակում է Կոմս Էմմանուելի «Ապոլլոնին» բանաստեղծությունը (տե՛ս **Մ. Նալբանդյան, ԵԼԺ**, հ. 1, Երևան, 1945, էջ 92) և Ստեփաննոս Տեր-Հովհաննիսյանի «Տեսիլ» բանաստեղծությունը: Այն արտատպված է «Հյուսիսափայլից» (տե՛ս **Մաղյան Մ.**, Հյուսիսափայլի պոեզիան, էջ 326-331):

-Պոլսում ծնվեց բանասեր, լրագրող Բարսեղ (հետագայում՝ Հմայակ) Էքսերճյանը: Վախճ. 1941 թ. հունիսի 12-ին:

«Հայաստանի կոչնակ», 1941 թ. № 45 («Հմայակ քահանա Էքսերճյան վախճանած»): **Ընդարձակ տարեգիրք**, Պոլիս, 1942, էջ 275-276: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 343:

-Խոտորջրում (Արևել. Թուրքիա) ծնվեց թարգմանիչ (լատիներենից՝ հայերեն) Գևորգ Փիրազյանը: Վիեննայի Միսիթարյան միաբանության անդամ էր 1881 թ. հոկտեմբերի 30-ից, վախճ. 1884 թ. սեպտեմբերի 11-ին, Տրիեստում:

«Հանդես ամսօրյա», 1948, № 7-8 («Տրիեստի մեջ թաղված հայ եկեղեցականներ»):

-Ադանայում (Հար. Թուրքիա) ծնվեց մշակութային գործիչ, իրավագետ, լրագրող (հայերեն և թուրքերեն լեզուներով) Արիստակես Գասպարյանը: Եղեռնամահ՝ 1915 թ.:

Թեոդիկ, Հուշարձան 1915 թ. ապրիլի 24-ի, Ալեքսանդրիա, 1939, էջ 60:

-Թիֆլիսում ծնվեց սոցիալ-դեմոկրատական շարժման ակնավոր ներկայացուցիչ, լրագրող (հայերեն և ռուսերեն լեզուներով), թարգմանիչ (ֆրանսերենից և ռուսերենից՝ հայերեն), պատմաբան, արձակագիր, ՍՍՀՄ գրողների միության անդամ (1934 թ.)
Գևորգ Հարությունի Ղարաջյանը: Վախճ. 1936 թ., Երևանում:

«Ս.Տ. Արկումեդ», «Բիձա», «Մավր», «Նուբար», «Օրթոդոքս» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Բարսեղյան Խ., Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք 1, Երևան, 1967, 606 էջ:
Ավետիսյան Վ., Հայ հասարակական մտքի զարգացման մարք-լենինյան փուլի սկզբնավորումը, Երևան, 1976, 571 էջ:
Խաչատրյան Հ., Գրական տեղեկատու, Երևան, 1981, էջ 507-508:

-Սուրբ Հովհաննես գյուղում (Ալաշկերտի գավառ) ծնվեց մշակութային գործիչ, պատմաբան-բանասեր, սեպագրագետ Աստվածատուր Խաչատրյանը: Վախճ. 1937 թ.:

Մեր անվանի դասախոսները, Երևան, 1970, էջ 110:

-Հուսեինիկ գյուղում (Թուրքիա) ծնվեց մշակութային գործիչ, լրագրող (անգլերեն լեզվով) Գրիգոր Գրիգորյանը: Վախճ. 1931 թ. փետրվարին, Սենտ-Լուիզում (ԱՄՆ):

Ամերիկյան գրական-մշակութային կյանքում հայտնի էր «Անտրետի Գրիգո» հորջորջմամբ:

«Հայաստանի կոչնակ», 1931, № 8 («Գրիգոր Գրիգորյան»):

-Շապին-Գարահիսարում (Հս. արևելյան Թուրքիա) ծնվեց բանասեր, մշակութային գործիչ, լրագրող, խմբագիր Գառնիկ Մազմանյանը: Վախճ. 1944 թ. Բեյրութում:

1897 թ. Վառնայում (Բուլղարիա) հիմնադրել և մեկ տարի խմբագրել է «Խուզակ» քաղաքական և գիտական երկշաբաթաթերթը: Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Մուրատ» կեղծանունով:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 262-263:

-Սերաստիայում (Արևել. Թուրքիա) ծնվեց գրականագետ-բանասեր, լրագրող, բառարանագիր Կարապետ Գաբիկյանը: Վախճ. 1925 թ. հունվարի 19-ին, Երուսաղեմում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Դիոնեսիոսյան ականջ» և «Կոչնակ Սերաստիո» կեղծանուններով:

«Հայաստանի կոչնակ», 1925, № 8 («Մահ Կարապետ Գաբրիկյանի»), № 24 («Կարապետ Գաբրիկյան»): **Գաբրիկյան Կ.**, Բառգիրք Սեբաստահայ գավառալեզվի, Երուսաղեմ, 1952, էջ Գ-ԺԴ («Փոխան առաջարանի»):

-Ակնում ծնվեց լրագրող, բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ Ավետիս Ժամկոչյանը:
Վախճ. 1940 թ. Լոս-Անջելեսում:

Ազատյան Թ., Ակն և ակնցիք, Իսթանպուլ, 1943, էջ 77:

-Սիրիայում ծնվեց մանկավարժ, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Հակոբ Գրիգորի Էդիլյանը: Վախճ. 1896 թ. հունվարին, Պոլսում:

Թեռղիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1912, էջ 386-387:

-Չանաքկալեում (Արևմտ. Թուրքիա) ծնվեց լրագրող (հայերեն և անգլերեն լեզուներով), խմբագիր Հ.Ս. Ճելայանը: Վախճ. 1942 թ. հոկտեմբերի 21-ին, Ուոթերթաունում (Մասսաչուսեթսի նահանգ, ԱՄՆ):

1887-1892 թթ. Պոլսում եղել է «Ավետաբերի» օգնական խմբագիրը:

«Հայաստանի կոչնակ», 1938, № 17 («Պատվո սեղան դոկտ. Հ.Ս. Ճելայանի»), 1942, № 44 («Մահ դոկտ. Հ.Ս. Ճելայանի»), № 45 («Դոկտ. Հ.Ս. Ճելայանի մահն ու հուղարկավորությունը»), № 48 («Դոկտ. Հ.Ս. Ճելայան»):

-Գործում, Պողոս վարդապետ Տեր-Մարգարյանի սատարմամբ և Մաղաքիա Պլուզյանցի տեսչությամբ, իր գոյությունն է սկսում տեղի հայկական արական դպրոցը: Սկզբում ուներ 45 աշակերտ, ավանդվում էր հայոց և ռուսաց լեզուներ, կրոն, հայկաբանություն, ազգային մատենագրության թարգմանություն, պատմություն և աշխարհագրություն:

«Ճոռաքաղ», 1861, № 24 («Նամակ»), «Մեղու Հայաստանի», 1868, № 25 («Հարգո խմբագիր»), 1875, № 6 («Գործի»):

-Վենետիկում, Դավիթ Նազարեթյանի՝ իտալերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Կեսար Քանդուի «Առաքինի ու քաղաքակիրթ պատանի» ստեղծագործությունը: 223 էջ: Հատվածաբար հրատարակվում էր «Բազմավեպում», 1860 թ. № 1 (հունվար) մինչև № 12 (դեկտեմբեր):

-Վենետիկում, Էդուարդ Հյուրմյուզյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Լյուդովիկոս (իմա՝ Ժան) Ռասինի «Ֆեդրա» ողբերգությունը: 62 էջ:

- Վենետիկում, Արսեն Բագրատունու՝ անգլերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Ջոն Միլտոնի «Կորուստ դրախտին» դյուցազներգությունը: 273 էջ:
- Վենետիկում արևմտահայերեն հրատարակվում է Գրիգորիս Ճելայյանի «Լյուդովիկոս ԺԶ. աղետք թագավորական ընտանյաց» պատմավեպը: 304 էջ: Հատվածաբար հրատարակվում էր «Բազմավեպում», 1855 թ. № 15-ից (օգոստոսի 1), մինչև 1858 թ. № 8 (օգոստոսի 1):
- Վենետիկում, հունարեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով, հրատարակվում է Հովհան Ոսկեբերանի ճառերի ժողովածուն, «Ճառք» ընդհանուր խորագրով: 922 էջ: («Շարք մատենագրությանց նախնյաց», հ. ԼԱ):
- Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Աստվածատուր Ավագյանի «Սկովտիացի Սթուարթյան թագավորաց և առանձինն Մարիամ Սթուարթ թագուհվոյն պատմությունը» աշխատությունը: 344 էջ:
- Վիեննայում, Վրթանես Յագութճյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն ազատ թարգմանությամբ, հրատարակվում է «Լյուդիա (Մարկոս Ավրելիոս կայսեր ժամանակեն պատմական նկարագիր մը)» վեպը: 213 էջ: Հատվածաբար հրատարակվում էր «Եվրոպա» կիսամյա օրագրում, 1861 թ. ապրիլի առաջին կեսից (№ 7), մինչև նոյեմբերի երկրորդ կեսը (№ 22):
- Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Եղիշե Գաֆթանճյանի «Բովանդակություն գիտությանց և արվեստից, որ է բնական, բարոյական, պատմական, ուսումնական և արվեստական գիտելյաց համառոտ նկարագիրը» աշխատությունը: 191 էջ:
- Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Սարգիս արքեպիսկոպոսի «Հրահանգ վասն կազմության գավառական ընդհանուր ժողովոց» գրքույկը: 22 էջ:
- Պոլսում, Արմենակ Ճիզմեճյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Յունկի ողբերգական գիշերները» խոհափիլիսոփայական աշխատության Ա գիրքը: 130 էջ: Հետագա գրքերը չեն հրատարակվել:

-Պոլսում, արևմտահայերեն բացատրականներով, հրատարակվում է Տիմիթրիոս Չոլագյանի «Տարերք քերականության հունական արդի լեզվի, հանդերձ ընտանեկան խոսակցությամբ ի պետս հայկական ուսումնարանաց» աշխատությունը: 304 էջ:

-Պոլսում, Հակոբ Ոսկանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ալեքսանդր Դյումայի «Անգուլոն Պետրոս» վիպակը: 78 էջ:
Հատվածաբար հրատարակվում էր «Փարիզ» շաբաթաթերթում, 1861 թ. № 56-ից (դեկտեմբերի 6) սկսած:

-Պոլսում, Կարապետ Ռիթուշյանի՝ իտալերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Սիլվիո Բելլիքոյի «Բանտք իմ» վեպը: 353 էջ:

Նույնն անփոփոխ՝ 1867 թ., 357 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Հակոբ Ոսկանի «Երեսունուրեք տարու միջոց. ներկայս անցյալին ծնունդն է և ապագային առաջնորդողը, կամ ազգիս վիճակին վրա ընդհանուր տեսություն մը» գրքույկը: 58 էջ:

-Պոլսում գրաբար հրատարակվում է Համբարձում Ալաճաճյանի «Նեկտարինե կոյս նահատակ» դյուցազներգությունը: Չորս նվագ, 84 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Երուսաղեմա (Ս.) խնդիրն ու Մեճմուս» գրքույկը: 16 էջ:

-Պոլսում, ֆրանսերեն-արևմտահայերեն համատեղ բնագրերով, հրատարակվում է Պ. Թրոայի «Խնդիր Հայկական (Կոստանդնուպոլիս անցած վերջին ազգային դեպքերուն վրա)» գրքույկը: 20 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Բարսեղ Երեքեղբարքյանցի «Հրեշտակ խաղաղության (աղերս)» աշխատության առաջին մասը: 38 էջ:

Երկրորդ մաս, նույն թվականին, 88 էջ: Չնայած երկրորդ մասն ավարտվում է «Շարունակելի» նշումով, բայց հաջորդ մասերը չեն հրատարակվել:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Ստեփան Փափագյանի «Կ.Բ.Վ.-ն քան զպապն պապական և յուր հրատարակություններն» աշխատությունը: 38 էջ:

-Պոլսում, Ատոմ Հովհաննեսի Տերոյենցի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն համառոտ թարգմանությամբ, հրատարակվում է Էոժեն Սյուի «Մաթիլդ» վիպակը: 50 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Ներսես Մեղպուրյանի «Արաքսիա, հատված գարնան գիշերո» ողբերգությունը: 118 էջ:

-Պոլսում, գրաբար բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է «Ծաղկաքաղ հատվածք կաթողիկեայց թուղթերուն Սարգսի Շնորհավո մեկնություններեն» գիրքը: 70 էջ:

Գիրքը հրատարակության պատրաստողը «Ե.Մ.Տ.»-ն է, որի ով լինելը պարզել չհաջողվեց:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Հարություն Սըվաճյանի «Մատնություն» պատմվածքը: 16 էջ:

-Պոլսում, ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Մովսեսի «Փուրսոնեագ» կատակերգությունը: 56 էջ:

-Փարիզում աշխարհաբար հրատարակվում է Միքայել Նալբանդյանի «Երկու տող» պամֆլետը: 48 էջ:

-Փարիզում արևմտահայերեն հրատարակվում է Ամբրոսիոս Գալֆայանի կազմած «Նոր ընթերցարան» դասագիրքը: 418 էջ:

-Փարիզում արևմտահայերեն հրատարակվում է «Խնդիր միության հայոց» գրքույկը: 46 էջ:
Հետագայում, հատվածաբար հրատարակվել է «Կռունկ հայոց աշխարհին» ամսագրի 1862 թ. № 1 (հունվար), № 2 (փետրվար) ամսատետրակներում:

Գրքույկն ունի «Երկրորդ տիպ» նշումը: Առաջին հրատարակության հետ կապված մանրամասնությունները մեզ հայտնի չեն:

Գրքույկը ստորագրված է «Հայասեր գաղղիացի D.S.A. de N***» ձևով: Երևանի Ս. Մաշտոցի անվան հետական մատենադարանում կա այդ գրքույկի մի օրինակը (№ 1287, նոր համարը՝ 2059), որն ունի հետևյալ ընծայականը. «Վասն գրատան Ս. Էջմիածնի նուէր հեղինակեն, այսինքն Ճ[անիկ] Արամեանի»: Ըստ այդմ պարզ

է դառնում, որ գրքույկի հեղինակը Ճանիկ Արամյանն է (տե՛ս նաև **Շտիկյան Ս.**,
Բանասիրական ճշգրտումներ, Լրաբեր, 1979, № 6, էջ 85-92):

-Փարիզում, գրաբար մեկնաբանություններով, հրատարակվում է Ա. Նար-Պեյի (Ամբրոսի-
ոս Գալֆայան) «Բառգիրք հայ-գաղղիարեն և գաղղիարեն-հայերեն» երկասիրություն-
նր: 1034 էջ:

Նույնն անփոփոխ՝ 1872 թ., 1031 էջ, 1881 թ., 1034 էջ, 1893 թ., 1036 էջ:

-Մոսկվայում գրաբար հրատարակվում է Ստեփաննոս Սյունեցու (իմա՛. Օրբելյան) «Պատ-
մութիւն տանն Սիսական» աշխատությունը: Բնագրագիտական աշխատանքները,
գրաբար առաջաբանն ու ծանոթագրությունները Մկրտիչ Էմինի: 386 էջ:

-Մոսկվայում գրաբար վերահրատարակվում է Եղիշեի «Վասն Վարդանայ և հայոց պատե-
րագմին» երկը: Բնագիրը հրատարակության է պատրաստել Հովհաննես Բաբայան
Գաթանյանը: 432 էջ:

-Մոսկվայում գրաբար հրատարակվում է Մատթեոս Չուհաճյանի (հետագայում՝ Մատթեոս
կաթողիկոս) «Հերքումն գրախնդիր վայրաբանութեանց ոմանց մերագնեայ տկարա-
միտ անձանց» գրքույկը: 78 էջ:

-Մոսկվայում գրաբար հրատարակվում է Վարդան Բարձրբերդցու «Պատմութիւն տիեզե-
րական» աշխատությունը: Բնագրագիտական աշխատանքները, գրաբար առաջա-
բանն ու ծանոթագրությունները Մկրտիչ Էմինի: 217 էջ:

-Թեոդոսիայում, Ալեքսանդր Մազերովի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայե-
րեն թարգմանությամբ, հրատարակվում է Բերտեի «Դասագիրք ընդհանուր պատ-
մության» աշխատության Ա մասը (հին պատմություն), 255 էջ:

Բ մաս («Պատմություն միջին դարուց») նույն թվականին, 170 էջ:

-Թեոդոսիայում արևմտահայերեն հրատարակվում է Խորեն Գալֆայանի «Արշակ երկ-
րորդ» ողբերգությունը: 112 էջ:

-Թեոդոսիայում գրաբար հրատարակվում է Եղիշեի «Պատմութիւն Վարդանանց» աշխա-
տությունը: Բնագրագիտական աշխատանքները, առաջաբանն ու ծանոթագրություն-
ները Խորեն Գալֆայանի: 341 էջ:

-Թիֆլիսում արևմտահայերեն հրատարակվում է Մարկոս Աղաբեկյանի «Գարեգին Սրվանձտյան» պատմական ողբերգությունը:

-Թիֆլիսում, Մովսես Ջոհրապյանի աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է «Քանի մը խոսք հռովմեական եկեղեցվո գլխավորության մասին» գրքույկը: 51 էջ:

-Թիֆլիսում արևելահայերեն հրատարակվում է Գաբրիել Խատիսյանի կազմած արձակ և չափածո ստեղծագործությունների ժողովածուն «Մեր. հայ երեխանցը ընծա» խորագրով: 108 էջ: Ուրի «Հատոր Ա» նշումը: Հետագա հատորների մասին տեղեկություններ չկարողացանք գտնել:

-Թիֆլիսում աշխարհաբար հրատարակվում է Միքայել Պատկանյանի «Կրիտիք Հակովբա Կարենյանց հեղինակության վրա» ուսումնասիրություն-գրախոսականը: 84 էջ: Հատվածաբար հրատարակվում էր «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթում, նույն թվականի № 26-ից (հունիսի 24), մինչև № 32-ը (օգոստոսի 5):

Գրախոսված է Հակոբ Կարենյանի «Շուշանիկ դուստր մեծին Վարդանա Հայոց Սպարապետի» (Թիֆլիս, 1860 թ., տե՛ս ներկա հատորը) պատմական ողբերգությունը:

-Թիֆլիսում, Գևորգ և Սարգիս Սկանդարյանների՝ պարսկերեն բնագրից կատարած արևմտահայերեն ազատ թարգմանությամբ, հրատարակվում է «Վարդարան ի պետս վարժության դեռահաս մանկանց» ժողովածուն: 34 էջ: Չնայած այն ունի «Տետրակ Ա» նշումը, հետագա տետրակները, սակայն, չեն հրատարակվել:

-Զմյուռնիայում արևմտահայերեն հրատարակվում է Արմենակ Հայկունու «Էլիզա կամ վերջին արևելյան պատերազմի ժամանակ տեղի ունեցած իրական դեպք մը» վեպի առաջին հատորը: 232 էջ:

Երկրորդ հատոր՝ 1862 թ.:

-Զմյուռնիայում, Տիգրան-Հարություն Տետեյանի՝ ֆրանսերենից կատարած արևմտահայերեն ազատ թարգմանությամբ, հրատարակվում է գերմանացի մանկագիր Քրիստաֆոր Շմիդտի «Ժենըվիեվ» վիպակը: 134 էջ:

Նույնն անփոփոխ՝ 1865 և 1877 թթ.:

-Երուսաղեմում գրաբար հրատարակվում է «Բողոք երկրորդ առ ազգային ընդհանուր ժողովն, խոնարհաբար մատուցանել ամբողջ միաբանութիւնն Ս. Երուսաղեմի» գրքուկը: 39 էջ:

-Երուսաղեմում գրաբար հրատարակվում է «Հերքումն անիրաւ զրպարտութեանց և աղերս առ ընդհանուր բարեխորհուրդ ազգային ժողովն» գրքուկը: 10 էջ:

1862

Հունվարի առաջին կես. «Բազմավեպը» (№ 1) արևմտահայերեն հրատարակում է Ղևոնդ Ալիշանի «Ազգախնամ տեսչություն» հրապարակախոսական հոդվածը:

Հունվարի 6. «Մեղու Հայաստանին» (№ 1) գրաբար հրատարակում է Ստեփաննոս Տեր-Սարգսյանցի «Նոր տարի» բանաստեղծությունը և արևելահայերեն՝ «Մրջիմն և Ճանճ» (իմա՛. Ճպուռն ու մրջյունը – Ս.Շ.) թարգմանածո անստորագիր առակը:

Հունվարի 8. Քութախիում (Վրացական ՍՍՀ), Դավիթ քահանա Յարայանցի նախաձեռնությամբ, հիմնվում է 18 աշակերտ ունեցող արական դպրոց (հետագայում՝ 60 աշակերտ): Ավանդվում էր հայոց լեզու, ազգային պատմություն և կրոն:

«Մեղու Հայաստանի», 1862, № 28 («Նամակ»), 1868, № 34 («Սիրելի եղբայր»), 1869, № 45 («Հարգո խմբագիր»):

Հունվարի 10. «Ծաղիկը» (№ 20), Գրիգոր Չիլինկիրյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Հերմանս Լեկյուլիոնի «Վան Տիգ (իմա. Վան Դեյլ – Ս.Շ.) և իր կույսը» պատմվածքը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Հունվարի 11. «Մասիսը» (№ 518) արևմտահայերեն հրատարակում է Կարապետ Ութուջյանի (Ռ) «Մեճմուայր հավատիս լրագրին... քանի մը խոսք» անստորագիր գրախոսականը:

Գրախոսված է Թադևոս Միհրդատյանցի «Նկարագիր աղետից Երուսաղեմի» աշխատությունը և այս հենքի վրա քննադատված է «Մեճմուայր հավատիսի» մի քանի տեսակետները: Ելնելով այն բանից, որ «Մասիսում» նման գրախոսականներ հիմնականում գրում էր Կարապետ Ութուջյանը, ենթադրում ենք, որ սույն հոդվածը ևս պատկանում է նրա գրչին:

Հունվարի առաջին կես. «Եվրոպան» (№ 1), գերմաներեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Հին լուսատու աշտարակին պահապանը» վիպակը (ավարտ № 8, ապրիլի երկրորդ կես) և «Հեղինե» պատմական վեպը (ավարտ՝ № 26, դեկտեմբերի երկրորդ կեսի հավելվածում):

Հունվարի 13. «Մեղու Հայաստանին» (№ 2), արևելահայերեն հրատարակում է Գևորգ Սկանդարյանցի «Փառանձեմ» պատմական ողբերգությունը (ավարտ՝ № 4, հունվարի 27), Աբրահամ Նազարյանցի «Լուսնակ», «Սոխակ» բանաստեղծությունները և Հ. Տեր-Աբրահամյանի «Լեոնարդոս Վինչի» հոդվածը:

Հունվարի 14. Պետերգուրգում վախճանվեց բառարանագիր, թարգմանիչ (հայերենից՝ ռուսերեն), գրականության դասագրքերի հեղինակ Ալեքսանդր Մակարի Խուդաբաշյանը (Խուդոբաշև): Ծնվ. 1780 թ.:

«Համբավաբեր Ռուսիո», 1863, № 40-42 («Մահ»):

Հունվարի առաջին կես. «Մասյաց աղավնին» (№ 1) արևմտահայերեն հրատարակում է Գաբրիել Այվազովսկու «Առակի վրա և մասնավորապես Մասյաց աղավնույս մեջի առակներում վրա տեղեկություն» հոդվածը:

Հունվար. «Հյուսիսափայլը» (№ 1), Ստեփաննոս Նազարյանցի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Ֆրանսուա Շատոբրիանի «Ատալա» վիպակը: Ավարտ՝ № 3 (մարտ): Հրատարակված են նաև Աբրահամ Նազարյանցի «Հաշտարխան», «Հրավեր ազգասիրության» և Վ. Մահտեսյանցի «Քաջալերություն և զգաստություն (յուր քաղաքացիներին նվեր)» արևմտահայերեն բանաստեղծությունները (տե՛ս **Սադյան Մ.**, Հյուսիսափայլի պոեզիան, էջ 394-398, 401-403):

Հունվար. Զմյուռնիայում, Սարգիս Փափագյանի խմբագրությամբ, արևմտահայերեն սկսում է հրատարակվել «Հավերժահարս» (վիպասանական, արվեստից և գիտությանց, նորելուկի և զվարճալյաց) կիսամյա հանդեսը: Դադարում է նույն թվականի հուլիսին, տասներկու համար հրատարակելուց հետո:

Հունվար. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 1), Ե. Բաստամյանցի՝ ռուսերենից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել մի գլուխ Օգ-

յուստ Հակստհաուզենի «Ճանապարհորդություն» գրքից: Ընտրված է Հակստհաուզենի աշխատության այն գլուխը, որտեղ հեղինակը խոսում է Աբովյանի մասին:

Հունվարի առաջին կես. «Հավերժահարսը» (№ 1), Արամ-Կարապետ Տետեյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն արձակ թարգմանությամբ, սկսում է հրատարակել Վիլյամ Շեքսպիրի «Վենետիկի վաճառականը» դրաման: Ավարտ՝ № 12 (հունիսի երկրորդ կես): Թարգմանիչը սկզբում տվել է Շեքսպիրի ստեղծագործության համառոտ բնութագիրը:

Հունվար. «Ճռաքաղը» (№ 1, 2) գրաբար հրատարակում է Խաչատուր Աբովյանի «Երգ ելսն ի Մասիս» բանաստեղծությունը և արևելահայերեն, «Սուրբ Հովհան Ոսկեբերան» հոդվածը:

Հունվար. «Արծվի Վասպուրականը» (№ 1) արևմտահայերեն հրատարակում է Գարեգին Սրվանձոյանցի «Սկսենք մեր գործ, նորեն սկսենք» հրապարակախոսական հոդվածը, Եղբայր սարկավագի «Գիշեր ի հայոց ձոր, գրոհ Հայկա» պոեմը և Արամ Բժշկյանի «Հայեր սիրենք զիրար» բանաստեղծությունը:

Հունվարի երկրորդ կես. «Հավերժահարսը» (№ 2), ֆրանսերեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Ռոզալիա դը Գարվելլա» պատմվածքը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Հունվարի 20. «Մեղուն» (№ 150) արևմտահայերեն հրատարակում է Հարություն Սըվաճյանի «Թեաթրո» հոդվածը:

Հունվարի 20. «Ծաղիկը» (№ 21) արևմտահայերեն հրատարակում է Գրիգոր Զիլինկիրյանի «Թատրոն» հոդվածը:

Հունվարի 22. Ստրասբուրգում (Արևելյան Ֆրանսիա) ծնվեց հայագետ, թարգմանիչ (հայերենից և գերմաներենից՝ ֆրանսերեն, բառարանագիր Մարի-Լուիզ Կ. Բասմաճյանը: Վախճ. 1923 թ. հոկտեմբերի 27-ին, Փարիզում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1925, էջ 376:

Հունվարի 27. «Մեղու Հայաստանին» (№ 4), ռուսերեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Դենիս Ֆոնվիզինի «Ընդհանուր պալատա-

կան քերականություն» («Всеобщая придворная грамматика») երգիծական ստեղծագործությունը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Փետրվարի 3. «Մասիսը» (№ 521) արևմտահայերեն հրատարակում է Մ. Ճանըմյանի «Հայկական տեսարան Օրթագյուղի» գրախոսականը:

Գրախոսված է Մկրտիչ Պեշիկթաշյանի «Վահե» ողբերգությունը: Գրախոսը, որոշ դիտողություններ անելուց հետո, բարձր է գնահատում ստեղծագործությունը:

Փետրվարի 4. Ամասիայում (Հյուս. Թուրքիա) ծնվեց աշխարհագրագետ, բանասեր, հողվածագիր Հովհաննես Հակոբի Մանիսաճյանը: Վախճ. 1942 թ. հունիսի 13-ին, Դեթրոյդում (ԱՄՆ):

«Հայաստանի կոչնակ», 1935, № 36 («Ամուսնության հիսնամյակ»), 1942, № 26 («Պրոֆ. Հովհ. Հ. Մանիսաճյանի մահը»), № 27 («Պրոֆ. Հ.Հ. Մանիսաճյանի... հուղարկավորությունը»), № 35 («Պրոֆ. Հ. Մանիսաճյան»):

Փետրվարի 10. «Արշալույս արարատյանը» (№ 668) արևմտահայերեն հրատարակում է Մսեր Մսերյանցի «Զննությունք հրատարակյալ գրվածոց Ստեփաննոսի Նազարյանց, դոկտորի արևելյան լեզվագիտության» գրախոսականը: Ավարտ՝ № 689 (դեկտեմբերի 1):

Փետրվար. «Ճռաքաղը» (№ 3, 4), Մսեր Մսերյանի ծանոթագրություններով, հրատարակում է Գրիգոր Երեցի «Յիշատակարան» գրաբար պոեմը, իսկ հավելվածային համարում (տետրակ Է) գրաբար հրատարակված է Զաքարիայի կրոնական մի բանաստեղծությունը և Վանեցի Քուչակի հայրենները «Բան գղջական» ընդհանուր խորագրի ներքո:

Փետրվարի 10. «Մեղուն» (№ 152) արևմտահայերեն հրատարակում է «Բարեկենդան երթանք» երգիծական չափածո ստեղծագործությունը:

Փետրվարի առաջին կես. «Երևակը» (№ 123) արևմտահայերեն հրատարակում է «Հյուսիսափայլ պարբերականին դատապարտությունը» հոդվածը:

Փետրվար. «Բազմավեպը» (№ 2), Ղևոնդ Ալիշանի (?) գերմաներեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Իոհան-Վոլֆգանգ Գյոթեի «Առլուսին» բանաստեղծությունը:

Փետրվարի 10. «Ծաղիկը» (№ 23) արևմտահայերեն հրատարակում է Արմենակ Հայկունու «Անուշ Շուշան» բանաստեղծությունը:

Հայկունու բանաստեղծությունները հետագայում հրատարակվել են հետևյալ հաջորդականությամբ. «Առ Էլիզա» (№ 27, մարտի 20), «Քաջդ կույս», «Ով ոսկեմուկնա հայ չէ» (№ 30, ապրիլի 20), «Վարդը առանց փշո չլինիր» (№ 31, մայիսի 1), «Քաջ կույս» (№ 33, մայիսի 20), «Պարերգություն» (№ 35, հունիսի 10), «Հայ կույսեր» (№ 41, օգոստոսի 10), «Նվեր առ Պ.Կ.» (№ 44, սեպտեմբերի 10) և այլն:

Փետրվար. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 2), Իշխան Բագրատունու (իմա՛. Խորեն Ստեփանե)՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալ. Պուշկինի «Արձագանք» բանաստեղծությունը: Հրատարակված են նաև Ստեփաննոս Ստեփանյանի (իմա՛. Խորեն Ստեփանե) «Բանաստեղծ» և Մարտիրոս Շահնաբաթյանցի «Երգ Ագուլեցվո» բանաստեղծությունները:

Փետրվար. «Արծվի Վասպուրականը» (№ 2) արևմտահայերեն հրատարակում է Գարեգին Սրվանձոյանցի «Հանդես հակառակությանց հայոց գրաբառ և աշխարհաբառ լեզվաց», Մեսրոպ վարդապետի «Եկեք հայ եղբարք սիրտերնիս իրարու տանք», Եզնիկ վարդապետի «Հայրենասեր և փառասեր» հոդվածները և Մ. Իսկենտերյանցի «Արձագանք հայրենյաց ավերակներից առ հայս» բանաստեղծությունը:

Փետրվարի 17. Երևանում ծնվեց բանասեր, պատմաբան, հոդվածագիր (հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով), թարգմանիչ (ֆրանսերենից և ռուսերենից՝ հայերեն), կուսակցական գործիչ Ռուբեն Խանազատը (նաև՝ Խանազատյան, ծննդ. անունը՝ Նշան Կարապետյան): Վախճ. 1929 թ. դեկտեմբերի 23-ին, Թավրիզում:

Ղարաջյան Գ., Ռուբեն Խանազատի հեքիաթները. Ովքեր են հնչակյանները և ինչ են ասում նրանք իրենց մասին, Թիֆլիս, 1928, 43 էջ: «Կյանք և արվեստ», Փարիզ, 1931, էջ 258-259:

Փետրվարի 17. «Մեղու Հայաստանին» (№ 7), Սամվել Աբրահամյանի՝ ռուսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակում է Ի. Կոնիլովի (?) «Ստեղծագործութիւն քարտուղարի» առակը:

Փետրվարի 20. «Մեղուն» (№ 153) հրատարակում է աշուղ Օհան օղլու «Աստվածածնի մոտ օրերը» բարբառային բանաստեղծությունը:

Փետրվարի երկրորդ կես. «Երևակը» (№ 124) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Նորատիպ մատյանք» խորագիրը կրող հոդվածաշարը: Որոշ ընդհատումներով շարունակվում է մինչև տարվա վերջ և այդ ընթացքում լույս է տեսնում ութ հոդված:

Հոդվածագիրը քննության է առնում 60-ական թվականներին լույս տեսած մի շարք աշխատություններ (Ստեփան Փափազյան «Հայերեն քերականություն», Թադևոս Միհրդատյանց «Նկարագիր աղետից Երուսաղեմի» և այլն), բնութագրում է մշակութային ընկերությունների (օր. «Հայկազյան ընկերություն») գործունեությունը, ներկայացնում է հայկական թատերական ներկայացումների հասարակական արժեքը և այլն:

Մարտ. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 3) արևելահայերեն հրատարակում է Գամառ Քաթիպայի «Դև մրուս (ազգային ավանդություն)» (տե՛ս Ռ. Պատկանյան, ԵԺ, հ. 2, Երևան, 1964, էջ 43-46), «Աղասիի օրորոցի երգը մորից երգած (նվեր Աբովյանի անմահ հիշատակին)», (տե՛ս անդ, հ. 1, Երևան, 1963, էջ 81-82. այստեղ ունի «Աղասու մոր երգը» վերնագիրը), «Իմ սոխակին» (տե՛ս անդ, էջ 83), «Էգուց արի» (տե՛ս անդ, 80 էջ) բանաստեղծությունները և Բերանժեի հետևությամբ կատարված «Մուրացիկ կին» փոխադրությունը (տե՛ս անդ, հ. 2, էջ 285-286):

Մարտի 1. «Ծաղիկը» (№ 25), Նուբար Գաղտաղլյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն արձակ և համառոտ թարգմանությամբ, սկսում է հրատարակել Վիլյամ Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետա» ողբերգությունը: Ավարտ՝ հաջորդ համարում: Ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակված է նաև մի վեցյակ Վիկտոր Հյուգոյից («Լռե՛ ով դու, ալ ի՞նչ կուզես մըրմըրալ...»): Իր թարգմանությանը կցած փոքրիկ առաջաբանում թարգմանիչը տալիս է Շեքսպիրի կենսագրության մի քանի դրվագները և հիշյալ ողբերգության ստեղծման բանասիրական պատմությունը:

Մարտի առաջին կես. «Հավերժահարսը» (№ 5), Հակոբ Մարկոսյանի թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Ալֆրեդ ու Եվգինե» վիպակը: Շարունակվում է մինչև մայիսի երկրորդ կեսը (№ 10):

Մարտի 3. Ջեյթունում (Հար. Թուրքիա) ծնվեց գրական-մշակութային գործիչ, արձակագիր, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Սմբատ Բյուրատը (Սմբատ Ղազարի Տեր-Ղազարյանց): Եղեռնամահ՝ 1915 թ. վերջերին, Այաշում:

1899-1900 թթ. Կահիրեում խմբագրել է «Փյունիկ» կիսամյա հանդեսը, 1900-1901 թթ.՝ «Նոր օր» երկօրյա լրագիրը:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Սմբատ Բյուրատաղենց», «Հայկ-Լևոն», «Ապտակ», «Թարթ», «Մտրակ», «Խայթոց», «Լեռնորդի» կեղծանուններով:

«Բազմավեպ», 1932, № 2... («Սմբատ Բյուրատ»), 1935, № 1... («Լեռնականի մը հուշատետրը»):
Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 378:

Մարտի առաջին կես. «Մասյաց աղավնին» (№ 5) արևմտահայերեն հրատարակում է «Ի նախավկայուհին Սանդուխտ» պոեմը:

Այս համարից սկսած, «Մասյաց աղավնին» անկանոն պարբերականությամբ, սկսում է հրատարակել նույն անձի գրչի արգասիք հանդիսացող բանաստեղծություններ, պոեմներ, այլևայլ չափածո ստեղծագործություններ, որոնց հեղինակը հավանորեն Խորեն Գալֆայանն է: Հրատարակվում են «Խեղճ մայր մը (եղերերեզ)» պոեմը (№ 6, մարտի երկրորդ կես), «Հսկայն հայոց Տորք» բանաստեղծությունը (№ 8, ապրիլի երկրորդ կես), «Պանդուխտն առ ծիծառնիկ» բանաստեղծությունը (№ 9, մայիսի առաջին կես), «Արտավազդ Բ, հայոց վրիժահան» պոեմը (№ 10, մայիսի երկրորդ կես), «Արտաշես մեծ տիեզերակալ» պոեմը (№ 12, հունիսի երկրորդ կես), «Զարմայր և Շուշան» պոեմը (№ 14, հուլիսի երկրորդ կես) և այլն:

Մարտի 5. Կալկաթայում, Եղիազար Տեր-Հարությունյանցի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Եղբայրասէր» քաղաքական, բանասիրական և զանազան գիտելյաց տասնօրյա վիմատիպ գրաբար լրագիրը: Իր գոյությունը շարունակում է մինչև 1863 թ. մարտի վերջը:

Մարտ. «Հյուսիսափայլը» (№ 3) հրատարակում է Սմբատ Շահազիզյանցի «Ազգային վիճակ» և Հովհաննես Քուչուբեկյանի «Խոսակցություն իմ սրտի հետ», «Առ իմ սիրելին Ա.», «Մի անցք», «Անհույս սեր» բանաստեղծությունները (տե՛ս **Մաղյան Մ.**, Հյուսիսափայլի պոեզիան, էջ 90-93 և 210-214):

Մարտի 5. «Գարուն Հայաստանի» հանդեսը (№ 3), Տիգրան Գարագաշյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել

Մոլիերի «Բռնի ամուսնություն» կատակերգությունը: Շարունակվում է հաջորդ համարում (№ 4, մարտի 20) և մնում անավարտ:

Մարտի 7. Բիելից քաղաքում (Կենտր. Ավստրիա) ծնվեց ավստրիացի հայագետ Յոզեֆ Ստրիգովսկին (նաև՝ Ստրժիգովսկի. Josef Strzygowski): Վախճ. 1941 թ. հունվարի 2-ին, Վիեննայում:

«Հանդես ամսօրյա», 1947, № 1 («Մահվան հունձքը հայագիտական դաշտի վրա»):

Մարտ. «Բազմավեպը» (№ 3), հին հունարեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ովիդիոս Նազոնի «Դեդալոս» բանաստեղծությունը:

Մարտի 15. Պոլսում ծնվեց հայագետ-բանասեր, հայ մամուլի պատմաբան, թարգմանիչ (գերմաներենից՝ հայերեն) Գրիգորիս Ֆրանի Գալենքյարյանը: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ էր 1880 թ. սեպտեմբերի 15-ից: Վախճ. 1917 թ. մայիսի 20-ին, Վիեննայում:

«Հանդիսատես» և «Տեղեկատու» կեղծանուններով հանդես էր գալիս «Հանդես ամսօրյա» պարբերականում:

«Հանդես ամսօրյա», 1912, № 7, 9 («Մատենագիտական»), 1917-1918, էջ 114-130 («Գրիգորիս Գալենքյարյան»):

Մարտի 17. «Մեղու Հայաստանին» (№ 11) արևելահայերեն հրատարակում է Մանվել Սիսակյանցի «Եղծ գրախոս գրվածոց Երեմիայի Սահակյանց» հոդվածը:

Մարտի 31. «Մասիսը» (№ 529) արևմտահայերեն հրատարակում է Կարապետ ՌԻթուշյանի (?) «Բերայի Նաումի թատրոն...» գրախոսականը:

Ֆրանսիական պարբերականներից արված վկայակոչումներով, բնութագրված է Մկրտիչ Պեշիկթաշյանի դրամատուրգիան: (Գրախոսի ով լինելու մասին՝ տե՛ս ներկա թվականի հունվարի 11-ը):

Մարտ. «Արծվի Վասպուրականը» (№ 3) արևմտահայերեն հրատարակում է Գարեգին Սրվանձոյանցի «Շինական հայոց կյանք ի Հայաստան, թշվառ նկարագրություն» հրապարակախոսական հոդվածը և Մեսրոպ Փափազյանի «Բողոք մորս մերո Հայաստանի, առ սուրբ Լուսավորիչսն և առ Հայկ Նահապետ» բանաստեղծությունը:

Մարտի 31. «Մեղու Հայաստանին» (№ 13) գրաքար հրատարակում է Հովհաննես Լալայանցի «Գարուն հայոց աշխարհի» բանաստեղծությունը, իսկ № 16-ում (ապրիլի 21) արևելահայերեն՝ Սեդրակ Մանդինյանցի «Նկարագրություն (Արտաշես)» թատերական ստեղծագործությունը:

Ապրիլի 1. «Ծաղիկը» (№ 28), Գրիգոր Զիլինկիրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն ազատ թարգմանությամբ, հրատարակում է Ժան Ռասինի «Անտրոմագ» ողբերգությունը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Ապրիլ. «Արծվի Վասպուրականը» (№ 4) արևմտահայերեն հրատարակում է Գարեգին Սրվանձտյանցի «Տեսարանք հայրենի աշխարհաց» հոդվածը:

Ապրիլ. Պոլսում, Տիգրան Զուխաջյանի և Գաբրիել Երանյանի ջանքերով, իր գոյությունն է սկսում «Երաժշտական ընկերությունը», որն իր առջև նպատակ էր դնում «Ազգային երգեր, թատերական նվագներ ու պարեր հրատարակել. ընտիր ժողովածուներ առաջ բերել և երաժշտության ճաշակը առհասարակ բոլոր հայոց մեջ ծավալել»: Ընկերությունն իր գոյությունը դադարեցրեց 1863 թ.: Նրա գործող անձանց թվում հիշատակվում էին Մ. Մամուրյանը, Մ. Պեշիկթաշյանը, Հակոբ Ոսկանը, Ս. Հեքիմյանը, Նահապետ Ռուսինյանը, Ստ. Փափագյանը և ուրիշներ:

Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, Վիեննա, 1957, էջ 79-81:

Ապրիլի առաջին կես. «Հավերժահարսը» (№ 7) արևմտահայերեն հրատարակում է Արամ Կարապետ Տետեյանի «Թիվ մեկ ապրիլ», իսկ հաջորդ համարում (№ 8, ապրիլի երկրորդ կես) «Անվանակոչություն հավերժահարսին» երգիծական բանաստեղծությունները:

Ապրիլ. «Հյուսիսափայլը» (№ 4), Ստեփաննոս Նազարյանցի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ֆրանսուա Շատոբրիանի «Ռենե» վիպակը և Սմբատ Շահագիզյանցի «Ազատ մարդ» բանաստեղծությունը (տե՛ս **Մաղյան Մ.,** Հյուսիսափայլի պոեզիան, էջ 94-95):

Ապրիլ. «Բազմավեպը» (№ 4) արևմտահայերեն հրատարակում է «Մանձոնի» հոդվածը:

Իտալական նոր գրականության դասական, բանաստեղծ, դրամատուրգ, արձակագիր և պատմաբան Ալեքսանդր Մանձոնիի կյանքն ու գրական-մշակութային

գործունեությունը շարադրելուց հետո, բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակված է նրա մի բանաստեղծությունը:

Ապրիլի 16. Երևանում ծնվեց թատերական գործիչ, թատերագետ, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն) Պողոս Արաքսյանը (Պողոս Հարությունի Քալանթարյան): Վախճ. 1918 թ. օգոստոսի 26-ին, Թիֆլիսում:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 144-145: Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1, Երևան, 1974, էջ 704:

Ապրիլի 20. «Ծաղիկը» (№ 30), Գրիգոր Զիլինկիրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել տիկին Դուրայի «Էտուար» վիպակը: Ավարտ՝ № 53 (դեկտեմբերի 10):

Ապրիլի 28. «Մեղու Հայաստանին» (№ 17) արևելահայերեն հրատարակում է Ղազար Ս. Աղայանի «Հարկավոր է օգնել չքավորներին» բանաստեղծությունը, իսկ հաջորդ համարում (№ 18, մայիսի 5)՝ Փիլիպոս Նավասարդյանի «Երգ», «Առ հայրենիս» բանաստեղծություններն ու «Կրթության օգուտն ու տգիտության վնասը» բարոյախոսական պատմվածքը (վերջինը՝ անստորագիր):

Ապրիլի 30. «Եղբայրասերը» (№ 6) հրատարակում է աշուղ Դուլ Հովհաննեսի «Մարդույս կենաց անցավորության վրա» բանաստեղծությունը:

Ապրիլի երկրորդ կես. «Երևակը» (№ 128) արևմտահայերեն հրատարակում է «Ազատություն» հոդվածը:

Ապրիլի 30. «Մեղուն» (№ 160) արևմտահայերեն հրատարակում է Հարություն Սըվաճյանի «Ալաֆրանկա կատակերգություն» գրախոսականը՝ նվիրված Խորեն Գալֆայանի համանուն խորագիրը կրող գործին:

Մայիսի 1. Ակնում, Հովսեփ Ճանիկյանի, Գրիգոր Տեր-Գրիգորյանի, Մարտիրոս Պարսամյանի և այլոց ջանքերով, իր գոյությունն է սկսում «Ազգասիրական ընկերությունը», որն իրեն նպատակ էր դնում «քաղքիս մեջ դպրոցական արդի վիճակը բարելավցնել, ուսման ու գիտությանց հարզը ճանչցնել ու ծավալել...»: «Ազգասիրական ընկերությունը» գոյություն ունեցավ մինչև 1880-ական թվականները:

«Հանդես ամսօրյա», 1963, № 7-9 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Մայիսի առաջին կես. «Եվրոպան» (№ 9), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Սեկյուրի «Փոքր սխալմունք» պատմվածքը:

Մայիս. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը արևելահայերեն հրատարակում է Գամառ Քաթիպայի «Օտար օրհորդ և հայ պատանի» բանաստեղծությունը (տե՛ս **Ռ. Պատկանյան**, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1963, էջ 84-87) և Հովհաննես (հետագայում՝ Միհրդատ) Ամրիկյանի «Մշո թռչուն օտար երկրում» չափածո ստեղծագործությունը:

Մայիսի 2. Պոլսում ծնվեց գրական-մշակութային գործիչ, թարգմանիչ (հայերենից և թուրքերենից՝ ֆրանսերեն) Գրիգոր Գասպարի Սինապյանը: Վախճ. 1933 թ. դեկտեմբերի 22-ին, Փարիզում:

«Բազմավեպ», 1936, № 8-12 («Գրիգոր Սինապյան»):

Մայիս. «Հյուսիսափայլը» (№ 5), Միքայել Տեր-Գրիգորյանցի՝ ռուսերենից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ֆերդինանդ Շմիդտի «Ռեյնեկե աղվես» պատմվածքը:

Մայիսի 2. Թիֆլիսում ծնվեց նկարիչ, մշակութային գործիչ Գրիգոր Հովհաննեսի Գաբրիելյանը: Վախճ. 1898 թ. մայիսի 11-ին, Վարշավայում:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 211-212:

Մայիսի 5. Վերին Ագուլիսում (այժմ՝ Նախիջևանի ԻՍՍՀ, Օրդուբաթի շրջ.) Հայրապետ և Նիկո Քալանթարյանցների ջանքերով և սրանց տանը, իր գոյությունն է սկսում Ագուլիսի մասնավոր օրհորդաց ուսումնարանը: Ավանդվում էր հայերեն և ռուսերեն լեզուներ, պատմություն, թվաբանություն, երգեցողություն, կրոն և ասեղնագործություն, ունեին շուրջ 40 աշակերտուհի: Ագուլիսի մասնավոր օրհորդաց ուսումնարանը 1871 թ. դադարեց գոյություն ունենալ:

«Մեղու Հայաստանի», 1865, № 30 («Հարգո խմբագիր»), 1870, № 38 («Ագուլիսի օրհորդաց ուսումնարանը»), 1872, № 21 («Ազգային»), «Մշակ», 1911, № 55 («Հայրապետ Քալանթար»):

Մայիսի 10. «Ծաղիկը» (№ 32) Վանի բարբառով հրատարակում է Վանին նվիրված հայկական ժողովրդական մի երգ: Այն հայտնաբերել և դրվատական փոքրիկ առաջաբանով «Ծաղկի» իր ընթերցողներին է ներկայացրել Արմենակ Հայկունին:

Մայիսի 12. «Մեղու Հայաստանին» (№ 19) արևելահայերեն հրատարակում է Մեղրակ Մանդինյանցի «Շուշանիկ Մամիկոնյան» պատմվածքը: Ավարտ՝ հաջորդ համարում: Պատմվածքում զետեղված է Հարություն Աբելյանց Վարդաբլուրցու «Պանդխտության մեջ արքայավաճի միսիթարությունը» բանաստեղծությունը:

Մայիսի 20. «Ծաղիկը» (№ 33) արևմտահայերեն հրատարակում է Արմենակ Հայկունու «Ազգային անհոգություն» հրապարակախոսական հոդվածը:

Մայիսի 20. «Գարուն Հայաստանի» հանդեսը (№ 8), Մադաթիա Հարությունյանի՝ հունարեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Սենեկա» հոդվածը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Մայիսի 23. Սիմֆերոպոլում (Ղրիմ), Սիմոն Ճուլարտյանի նախաձեռնությամբ, իր գոյությունն է սկսում տեղի ծխական դպրոցը, իր 13 աշակերտներով: Վերջինս գոյություն ունեցավ մինչև 1917 թվականը և ծաղկուն ժամանակ ուներ 45 աշակերտ:

«Բազմավեպ», 1936, № 8-12 («Ի հիշատակ դարադարձի Մուրատ-Ռափայելյան վարժարանաց»):

Մայիսի 23. «Մեղուն» (№ 162) արևմտահայերեն հրատարակում է «Մանդուխտ կույս նահատակ» թատերական գրախոսությունը: Գրախոսված է Թովմաս Թերզյանի՝ վերոհիշյալ խորագիրն ունեցող ողբերգությունը և դրական է գնահատված:

Մայիսի 25. Պոլսում ծնվեց ականավոր դերասանուհի, կրթական-թատերական գործիչ Սիրանույշը (Մերովրե Գանթարճյան): Վախճ. 1932 թ. հունիսի 10-ին, Կահիրեում (Եգիպտոս):

Զարյան Ռ., Սիրանույշ, Երևան, 1956, 346 էջ: Նույնը որոշ լրացումներով՝ 1957, 342 էջ:

Մայիս. «Արծվի Վասպուրականը» (№ 5) արևմտահայերեն հրատարակում է Հրաչյա Սևիկյանցի «Օրորան հայրենի» բանաստեղծությունը և Կ. Գալփակյանի «Խորհրդածություն ի վերա ազգային բանաստեղծությանց» հոդվածը: Հրատարակված է նաև Նաղաշի «Ղարիպի կյանքն է լալի ողբերգական» բանաստեղծությունը:

Մայիսի 30. «Եղբայրասերը» (№ 9) հրատարակում է Մեսրոպ Թաղիադյանի «Երգ» գրաբար ներբողական բանաստեղծությունը:

Հունիսի 1. «Ծաղիկը» (№ 34) արևմտահայերեն հրատարակում է Գրիգոր Զիլինկիրյանի «Վիկտոր Հյուգո, լե միգերաբլը (իմա. «Թշվառները»-Ս.Շ.)» գրախոսականը:

Չիլինկիրյանը վերլուծաբար ներկայացրել է իր թարգմանած ու ավարտած «Թշվառների» առաջին և երկրորդ հատորները, որոնք, սակայն, հրատարակելու ոչ մի հույս ինքը չունի, քանզի «սատար մը և հովանավոր մը չունի» (այդ թարգմանությունն աստիճանաբար սկսեց հրատարակվել Ջմյունիայում, 1869 թ. սկսած): «Թշվառների» հենքի վրա դրվատաբար գնահատված է ինչպես Վիկտոր Հյուգո-վիպագիրն առհասարակ, այնպես էլ նրա այս գործը:

Հունիսի 8. Թիֆլիսում ծնվեց գրական-մշակութային գործիչ, արձակագիր, լրագրող Բագրատ Հովակիմի Այվազյանը: Վախճ. 1934 թ. մարտի 3-ին, իր ծննդավայրում:

«Ռաշիդ» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Անմոռաց դեմքեր (Ներսիսյան դպրոցի սաներ), Երևան, 1965, էջ 216-217:

Հունիս. «Բազմավեպը» (№ 6) ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Լյուդովիկոս Բելմոնտեի «Որբք մանկունք» բանաստեղծությունը: Ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակվել Քսավիե դը Մեստրի «Միպերիացի օրիորդը» վիպակը: Ավարտ՝ № 10 (հոկտեմբերի 1):

Հունիսի 9. «Մեղու Հայաստանին» (№ 23), Գաբրիել Տուլոնյանցի՝ գերմաներեն (?) բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Խեղճերին օգնողը փոխ է տալի աստծուն» պատմվածքը: Ավարտ՝ № 26 (հունիսի 30):

Հունիսի 10. «Եղբայրասերը» (№ 10), պարսկերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակում է «Իմաստութիւն» գրական-փիլիսոփայական տրակտատը (թարգ. Ա.Բ.Ե.): Ավարտ՝ № 12 (հունիսի 30): Գրաբարով հրատարակված են նաև «Հայրենիք» և «Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է» բանաստեղծությունները:

Հունիս. «Հյուսիսափայլը» (№ 6), Ստեփաննոս Նազարյանցի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ֆրանսուա Շատոբրիանի «Անկարծելի պատահմունք (վերջին իբն Սերաջի)» վիպակը: Հրատարակված են նաև Ռուբեն Հասան-Ջալալյանցի «***» («Անցան, գնացին մի մի շատ դարեր...») և «Կյանք» բանաստեղծությունները (տե՛ս **Սադյան Մ.**, «Հյուսիսափայլի» պոեզիան, էջ 274-275):

Հունիսի երկրորդ կես. «Երևակը» (№ 132) արևմտահայերեն հրատարակում է «Վոլտերյան ազատություն» հոդվածը:

Հունիսի 20. «Եղբայրասերը» (№ 11) գրաբար հրատարակում է «Առաւօտ» նովելը, «Ունայնութիւն» բանաստեղծությունը և աշուղ Ղուլ Հովհաննեսի «Նվագ աշխարհի» աշխարհաբար տաղը:

Հունիսի 20. «Գարուն Հայաստանի» հանդեսը (№ 10), Մեսրոպ Նուպարյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ժան Լաֆոնտենի «Մարդ և օձ» առակը:

Հունիսի 30. «Մեղուն» (№ 166) արևմտահայերեն հրատարակում է Հարություն Սըվաճյանի «Գալֆայան Խորեն վարդապետին «Ալաֆրանկային» մեզի պատճառած զբոսանքը» թատերախոսականը: Ի տարբերություն իր նախորդ գրախոսականի (տե՛ս ներկա թիվը, ապրիլի 30), Սըվաճյանն այս անգամ հիմնականում քննության առարկա է դարձրել «Ալաֆրանկայի» բեմադրության հետ կապված հարցերը:

Հունիս. «Ճռաքաղը» (տետրակ ԺԱ) գրաբար հրատարակում է Մովսես Բջնեցու «Առեղծուած զգրոց» բանաստեղծությունը, որը հրատարակության է պատրաստել Մսեր Մսերյանցը:

Հունիսի 30. «Եղբայրասերը» (№ 12) գրաբար հրատարակում է Անդրեաս Սամյանի «Ղունկիոս կամ Լուկիա կամ սեռն սեր» չափածո ստեղծագործությունը: Ավարտ՝ № 14 (հուլիսի 21):

Հուլիսի 3. Շուշիում (Լեռնային Ղարաբաղ) ծնվեց գյուղագիր, արձակագիր, ՍՍՀՄ գրողների միության անդամ Սողոմոն Կարապետի Մելիք-Շահնազարյանցը: Վախճ. 1942 թ. Թիֆլիսում:

«Հայ գյուղագիրներ», կազմ. Արմ. Թամազյան, Երևան, 1950, էջ 574-575: Հայ նոր գրականության պատմություն, հ. Բ, Երևան, 1962, էջ 499: **Խաչատրյան Հ.**, Գրական տեղեկատու, Երևան, 1981, էջ 513:

Հուլիս. «Ճռաքաղը» (տետրակ ԺԲ) գրաբար հրատարակում է Մսեր Մսերյանցի «Յաղթանակ հաւատոյ մեծին Վարդանայ» բանաստեղծությունը: Նույնի առաջաբանով ու ծանոթագրություններով հրատարակվում է Հովհան Ոսկեբերանի «Ներբողեան ի սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» և Ներսես Շնորհալու «Մեկնութիւն «Բարձրացուցէք՝ ճառի» գրաբար գործերը:

Հուլիսի առաջին կես. «Եվրոպան» (№ 13), արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Ոսկվո տակառը» պատմվածքը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Հուլիսի 10. «Եղբայրասերը» (№ 13) գրաբար հրատարակում է «Յուսահատութիւն անձին» (ունի «Տարաբաղդ ով ի Կալկաթա» ստորագրությունը) և «Հանելուկ» գործերը:

Հուլիսի առաջին կես. «Մասյաց աղավնին» (№ 13) արևմտահայերեն հրատարակում է Խոբեն Գալֆայանի «Պոլսո «Մեղուին» 160 թվոյն մեկ հատվածին պատասխան» հոդվածը (տե՛ս ներկա հատորը, 1862 թ. ապրիլի 30): Նույնությամբ արտատպությունը՝ «Արշալույս արարատյան», 1862 թ., № 679 (հուլիսի 14):

Հուլիս. «Արծվի Վասպուրականը» (№ 7) գրաբար հրատարակում է Ղուկաս Սարգիսյանի «Տեսիլ հայկազն պատանոյ» և Վահրամ Նազարյանի «Արագիլ և ճնճղուկ» արևմտահայերեն առակը:

Հուլիս. «Հյուսիսափայլը» (№ 7), Ստեփաննոս Նազարյանցի թարգմանությամբ, հրատարակում է «Մի խորհրդավոր ցավ» պատմվածքը: Այն ունի «հունգարացոց մատենագրութենից» նշումը:

Հուլիսի 20. «Ծաղիկը» (№ 39) արևմտահայերեն հրատարակում է Գրիգոր Զիլինկիրյանի «Հյուսիսափայլի դատապարտությունը» հոդվածը

Հուլիսի 28. «Մեղու Հայաստանին» (№ 30) գրաբար հրատարակում է Հարություն Աբելյանց Վարդաբլրեցու «Բաղդ և աղքատ» բանաստեղծությունը, իսկ հաջորդ համարում (№31, օգոստոսի 4)՝ Միքայել Պատկանյանի «Երախտագետ մարդ» դրաման: Ավարտ՝ № 35 (սեպտեմբերի 1), այստեղ ունի «թարգմանորեն հեղինակեց Միքայել Պատկանյանց» նշումը:

Հուլիսի 30. «Եղբայրասերը» (№ 15), Խ.Ա.Թ. Օթարյանցի՝ պարսկերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակում է Սաադիի «Ագահութիւն» չափածո ստեղծագործությունը և Մեթ Սամյանի «Կեանք մարդոյ» բանաստեղծությունը:

Մեթ Սամյանը (նաև՝ Մեթ Սամ, Ս.Ս.) հետագայում հրատարակել է «Ի ստորիլերին...» (№ 16, օգոստոսի 11), «Յորդոր» (№ 18, օգոստոսի 30, ավարտ՝ № 21, սեպտեմբերի 30), «Հին բարեկամ քոյ...» (№ 23, հոկտեմբերի 20, նույնությամբ արտատպվել է № 26, նոյեմբերի 20-ում) և այլ գործեր:

Օգոստոսի 2. Թուրքական բանակը (40.000 զինվոր, 2 հրանոթ) Ազիզ փաշայի հրամանատարությամբ, պատերազմական գործողություններ է սկսում Ջեյթունը պաշտպանող 5000 կամավորների դեմ: Սկսվում է Ջեյթունի հերոսական պաշտպանությունը, որը տևում է մոտ մեկ ամիս և ավարտվում թուրքական բանակի պարտությամբ:

Մնացական Մեմերձյան (Ջեյթունցի), Ջեյթունի անցյալն և ներկայն, հ. Ա, Պոլիս, 1909, էջ 121-146, հ. Բ, Վիեննա, 1900, էջ 104-125: **Պողոսյան Հ.,** Ջեյթունի պատմությունը, Երևան, 1969, էջ 152-275:

Օգոստոս. «Արծվի Վասպուրականը» (№ 8) արևմտահայերեն հրատարակում է Եղբայր սարկավագի «Դարձ գաղթական պատանեկի ի հայրենին» բանաստեղծությունը, «Շինականի մը ազնվաբարոյություն» անստորագիր պատմվածքը և Վարագի Ժառանգավորաց վարժարանի աշակերտների համատեղ հեղինակություն հանդիսացող «Վերջին Արտաշիր թագավոր» արձակ թատերական ստեղծագործությունը: Ավարտ՝ № 12 (դեկտեմբեր):

Օգոստոս. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը արևելահայերեն հրատարակում է Գ. Վայելյանի (իմա՝ Ռափայել Պատկանյան) «Բարբառ Քրիստոսի ի խաչեն» բանաստեղծությունը:

Օգոստոսի 10. Պոլսում ծնվեց գրական քննադատ, գրական-մշակութային գործիչ, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Հրանտ Ասատուրը (Հրանտ Աստվածատուրի Ասատուրյան): Վախճ. 1928 թ. հունիսի 5-ին, իր ծննդավայրում:

1892-1898 թթ. Պոլսում խմբագրել է «Մասիս» օրաթերթը: Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Արաքս», «Մոլորակ», «Հուր», «Սեթ» կեղծանուններով:

Ազատյան Թ., Ժամանակակից դեմքեր (Զապել և Հրանտ Ասատուր), Պոլիս, 1937 թ., «Տեղեկագիր», 1961, № 4 («Տիգրան Կամսարականի գրական ժառանգության շուրջը»), Պատմա-բանասիրական հանդես, 1973, № 3 («Հրանտ Ասատուրի գրական-քննադատական հայացքները»): **Հայրապետյան Մ.,** Հրանտ Ասատուր, Լոս Անջելես, 1979, 239 էջ:

Օգոստոսի 11. «Եղբայրասերը» (№ 16), այս համարից սկսած, անկանոն պարբերականությամբ, հրատարակում է այլևայլ բնույթի չափածո ասույթներ ու խրատականներ, թարգմանված պարսկերեն բնագրից՝ գրաբար, «Խրատ պարսից», «Առեալ ի պարսից» և այլ խորագրերով: Շարունակվում է մինչև պարբերականի դադարելը: Հաջորդ համարում (№ 17, օգոստոսի 20), անգլերեն բնագրից կատարված գրաբար թարգմանու-

թյամբ (թարգմանիչ՝ Պ.Յ.Ա.) հրատարակվում է «Բան ինչ ընդդեմ կռուելոյ և կարգելոյ» բանաստեղծությունը:

Օգոստոս. «Բազմավեպը» (№ 8) արևմտահայերեն հրատարակում է «Յունկ» հոդվածը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Շարադրված է անգլիացի մատենագիր, բանաստեղծ, դրամատուրգ, աստվածաբան Էդուարդ Յունկի կյանքն ու գրական-հասարակական գործունեությունը: Վերջում, անգլերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակված է Յունկի «Նարգէս» բանաստեղծությունը:

Օգոստոսի 20. «Համբավաբեր Ռուսիոն» (№ 27) արևմտահայերեն հրատարակում է Մսեր Մսերյանի «Թերթիկ» գրախոսականը: Գրախոսված է Ջ. Միլտոնի «Դրախտ կորուսեալի»՝ Ա. Բագրատունու կատարած գրաբար չափածո թարգմանությունը և այն բարձր է գնահատված: Վերջում զետեղված է մի հատված Բագրատունու թարգմանությունից:

Օգոստոսի երկրորդ կես. «Մասյաց աղավին» (№ 16) գրաբար հրատարակում է Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի (Սինոդ) որոշումը, ուղղված Ստեփաննոս Նազարյանցի դեմ: Սինոդի որոշումը տրված է 1861 թ. հունիսի 12-ին:

Օգոստոս. «Հյուսիսափայլը» (№ 8), Ստեփաննոս Նազարյանցի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Մարգարե կնոջ անեծքը» վեպը: Ավարտ՝ № 11 (նոյեմբեր):

Օգոստոսի 30. «Եղբայրասերը» (№ 18) գրաբար հրատարակում է Սիմոն Ֆելեկյանի «Հայրենիք» բանաստեղծությունը:

Օգոստոսի 31. «Մեղուն» (№ 170) արևմտահայերեն հրատարակում է Հարություն Սըվաճյանի «Հյուսիսափայլ օրագիր» հրապարակախոսական հոդվածը և Սմբատ Շահազիզյանցի «Ազգային վիճակ» բանաստեղծությունը: Վերջինս արտաստված է «Հյուսիսափայլ», 1862 թ. № 3-ից:

Օգոստոս-սեպտեմբեր. Պոլսում, տեղի ուսուցիչների նախաձեռնությամբ, իր գոյությունն է սկսում կրթալուսավորչական «Վարժապետական ընկերություն հայոց»-ը: Վերջինս իր առջև նպատակ էր դնում «1. Ազգային վարժարաններու մեջ ուսուցման եղանակը

բարեկարգել և միօրինակ ընթացք մը տալ անոր: 2. Վարժապետական վիճակի բար-
վոքության հոգ տանել»: Ընկերությունը գոյություն ունեցավ մինչև 1866 թ. կեսերը:

Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, Վիեննա, 1957, էջ 28-29:

Մեպտեմբեր. Պոլսում ծնվեց գրական-մշակութային գործիչ, գրականագետ-բանասեր,
թարգմանիչ (պարսկերենից, անգլերենից, ֆրանսերենից՝ հայերեն) Գառնիկ Հարու-
թյունի Ֆրնտրզյանը: Վախճ. 1937 թ. ապրիլի 15-ին, Մանչեստրում (Անգլիա):

«Գ. Փառնակ» ստորագրությամբ հանդես էր գալիս ժամանակի պարբերական-
ներում:

Սուշեղ արքեպիսկոպոս. Ամերիկահայ տարեցույցը, Բոստոն, 1913, էջ 131-134: «Հայաստանի
կոչնակ», 1937, № 19 («Գառնիկ Ֆրնտրզյանի մահը»), № 21 («Գառնիկ Ֆրնտրզյան»), № 45 («Գառ-
նիկ Ֆրնտրզյան»): **Ալպոյաճյան Ա.**, Պատմություն հայ Կեսարիո, Բ գիրք, Կահիրե, 1937, էջ 2081-
2083:

Մեպտեմբերի 5. «Գարուն Հայաստանի» հանդեսը (№ 15), ֆրանսերեն բնագրից կատարված
արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Երկու թշվառ և բարե-
բաղդ անձերու պատմությունը» վիպակը: Շարունակվում է մինչև հոկտեմբերի 20-ը
(№ 18) և մնում անավարտ: Արտատպելով «Մեդվից», հրատարակված է Սմբատ Շա-
հազիզյանցի «Ազգային վիճակ» բանաստեղծությունը:

Մեպտեմբերի 10. «Մեղուն» (№ 171), արտատպելով «Հյուսիսափայլից» (տե՛ս 1862 թ.,
հունվար), հրատարակում է Աբրահամ Նազարյանցի «Հրավեր ազգասիրության»
արևելահայերեն բանաստեղծությունը: Հրատարակված են նաև «Դասագիրք ազգա-
յին պատմության» գրախոսականը (գրախոսված է Ստեփան Փափազյանի՝ հիշյալ
խորագիրը կրող ձեռնարկը և դրական է գնահատված) և «Դիմակ. ընտանեկան հան-
դես» հոդվածը (բացասաբար է գնահատված Ա.Կ. Տետեյանի խմբագրությամբ հրա-
տարակվող «Դիմակ» պարբերականը):

Մեպտեմբեր. «Բազմավեպը» (№ 9), լատիներեն բնագրից կատարված գրաբար չափածո
թարգմանությամբ ու ծանոթագրություններով, հրատարակում է Ուլիդիոսի «Այլա-
կերպությունք» (իմա. «Մետամորֆոզա») գրքի 6-րդ հատվածի մի մասը կազմող
գլուխը «Արկածք Նիովբեայ» խորագրով:

Սեպտեմբերի 15. «Մեղու Հայաստանին» (№ 37), Միքայել Պատկանյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Միքայել Միանսարյանցի «Մատենագրություն հայոց» հոդվածը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Բանասիրական քննության է ենթարկված Եղիշեի, Մովսես Խորենացու, Ղևոնդ վարդապետի, Ստեփաննոս Ասողիկի, Սմբատ Գունդստարվ սպարապետի, Ստեփաննոս Օրբելյանի, իսկ նորերից՝ Ամբրոսիոս Գալֆայանի աշխատությունները: Ցույց է տրված բանասիրական այն մեծ աշխատանքը, որը կատարվել է հիշյալ պատմիչների գործերը հրատարակության պատրաստելու համար, իսկ Ամբրոսիոս Գալֆայանը որակված է որպես ժամանակի երևելի բանաստեղծներից մեկը:

Սեպտեմբեր. «Արծվի Վասպուրականը» (№ 9) գրաբար հրատարակում է Արամ Բժշկյանի «Անձուկք սրտի առ Լևոն Լուսինեան, վեցերորդ արքա հայոց» բանաստեղծությունը, Վահրամ Նազարյանցի «Մկունք և կատուն» արևմտահայերեն առակը և անհայտ հեղինակի «Բարոյական պատմություն» պատմվածքը:

Սեպտեմբերի 20. Կեսարիայում (Կենտր. Թուրքիա) ծնվեց լրագրող (հայերեն, ֆրանսերեն, թուրքերեն և անգլերեն լեզուներով), հրապարակագիր, թարգմանիչ (հայերենից՝ թուրքերեն) Տիրան Քելեկյանը: Եղեռնամահ՝ 1915 թ., Չանկրի շրջանում:

Խմբագրել է «Մանգումյեի էֆքյար» («Մտածումների շարք») օրաթերթը, 1881-1883 թթ. «Ճիհանը» («Աշխարհ»), 1884 թ. «Սապահը» («Առավոտ»), 1897-1899 և 1909 թթ. «Եենի ֆիքր» («Նոր միտք») երկշաբաթաթերթը (երկու տարի) և «Թարիդ» («Պատմություն») պարբերականը: Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Գլանիկ», «Վիքոնթ դը Գլանիկ», «Միրայր», «Տյունքե», «Տալ-Քաֆ» կեղծանունիարով:

Թեոդիկ, Հուլիսի 1915 թ. ապրիլի 24-ի, Ալեքսանդրիա, 1939, էջ 17-19: «Հայաստանի կոչնակ», 1924, № 46... («Ազգային նահատակ Տիրան Քելեկյան»): **Ալպոյաճյան Ա.,** Պատմություն հայ Կեսարիո, հ. Բ, Կահիրե, 1937, էջ 2071-2074:

Սեպտեմբերի 30. «Մեղուն» (№ 173), արտատպելով «Հյուսիսափայլից» (տե՛ս 1862թ., մարտ), հրատարակում է Հովհաննես Քուչուրեկյանի «Խոսակցություն իմ սրտի հետ», «Առ իմ սիրելին», «Մի անցք» և «Անհույս սեր» բանաստեղծությունները:

Հոկտեմբերի 1. «Համբավաբեր Ռուսիոն» (№ 31) գրաբար «Հատուածք ի գրուածոց նախնեաց» ընդհանուր խորագրի ներքո, սկսում է հրատարակել զանազան հատվածներ մեր մատենագիրների գործերից: Հրատարակվել են հատվածներ Մխիթար Գոշից, Գրիգոր Մագիստրոսից և Փիլիպոս կաթողիկոսից:

Հոկտեմբերի 6. «Մասիսը» (№ 556) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Ճանապարհորդություն ի Լոնտրա» ուղեգրական երկը (հեղինակ՝ ***): Ավարտ՝ № 558 (հոկտեմբերի 20):

Հոկտեմբերի 7. Արդանուջում (Հյուսիս-արևելյան Թուրքիա) ծնվեց պատմաբան-բանասեր, արձակագիր, լրագրող Առաքել Զատիկի Սարուխանյանը:

«Շեկպետ» և «Կ.Տյուրյան» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Հանդես ամսօրյա», 1912, № 8 («Մատենագիտական»), 1937, № 9-10 («Առաքել Սարուխանյան, հիսնամյա հոբելյար...»):

Հոկտեմբեր. «Արծվի Վասպուրականը» (№ 10) արևմտահայերեն հրատարակում է «Շինականի և քաղաքացվոց վեճ» հրապարակախոսական հոդվածը և Խորեն Խրիմյանի (Մկրտիչ Խրիմյանի եղբոր որդին) «Աղվես և կույր գայլ» առակը:

Հոկտեմբերի 13. «Մեղու Հայաստանին» (№ 41) գրաբար հրատարակում է Մկրտիչ Լալայանցի «Մեղու Հայաստանի» բանաստեղծությունը և Եփրեմ Մուրադյանցի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, «Բարեպաշտ ծերունի կամ գիշեր» պատմվածքը:

Հոկտեմբերի 20. «Եղբայրասերը» (№ 23) գրաբար հրատարակում է «Խորհուրդ մկանց» առակը և Սուքիաս Պարոնյանի «Հրաւեր հայրենեաց» բանաստեղծությունը:

Հոկտեմբեր. «Հյուսիսափայլը» (№ 10) արևելահայերեն հրատարակում է Սողոմոն Մերկուլյանցի «Բարի մարդ (գերապատիվ Հ.Բ...-յանցին նվեր)» բանաստեղծությունը: Նույնությամբ արտատպել է «Մեղուն», նույն թվականի հոկտեմբերի 20-ի (№ 175) համարում (տե՛ս **Սադյան Մ.**, Հյուսիսափայլի պոեզիան, էջ 399-400):

Հոկտեմբեր. «Բազմավեպը» (№ 10), իտալերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Հովսեփի (իմա՛. Զուգեպպե) Մոնտանելլու «Հանդեպ շիրիմաց հայրենի երկրին» բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 20. «Գարուն Հայաստանի» հանդեսը (№ 18), Գրիգոր Սսերյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ջ. Բայրոնի «Դաշնակք երբայական» ստեղծագործությունը: Տրված է նաև Ալեն Լըսաժի համառոտ կենսագրությունը և ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, մի հատված նրա «Ժիլ Բլյագ» վիպասանությունից: Անավարտ:

Հոկտեմբերի 30. «Եղբայրասերը» (№ 24) գրաբար հրատարակում է «Ողբերգութիւն ի վերայ լծակցին իմոյ» եղերերգությունը (ունի «Աթանաս դժբախտ» ստորագրությունը), իսկ հաջորդ համարում (№ 25, նոյեմբերի 10)՝ «Առակ ազգաց...» և «Արժանի է և օրէն...» չափածո առակները:

Նոյեմբեր. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 11) արևելահայերեն հրատարակում է Հակոբ Կարենյանցի «Մի քանի խոսք «Անուշավան» անվանյալ վիպասանության վրա» գրախոսականը:

Հեղինակը գրախոսել է Աբել Մխիթարյանի «Անուշավան ի գերևարս» վիպակը (Մոսկվա, 1860 թ., տե՛ս ներկա հատորը): Արված են մի քանի դիտողություններ՝ կապված վիպակի կառուցվածքի հետ, քննադատված են պատմական իրականությունը իր ժամանակի հայեցակետով մեկնաբանելու ու գեղարվեստորեն վերարտադրել կարողանալու հեղինակի սկզբունքները, մեր պատմիչների հաղորդած զանազան փաստերի ու իրողությունների վերաբերյալ հեղինակի բավականին անկաշկանդ մոտեցումը: Այդ բոլորով հանդերձ, Աբել Մխիթարյանի հիշյալ վիպակը դրական է գնահատված:

Նոյեմբերի 24. «Մասիսը» (№ 563) արևմտահայերեն հրատարակում է Անտոն-Մադաթիա Գարագաշյանի «Բանասիրական» հոդվածը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Տրված է գրական քննադատության, իբրև մեր կյանքում արդեն ձևավորված ինքնուրույն բնագավառի բնութագրությունը, մատնանշված է նրա կարևոր դերն ու նշանակությունը տվյալ ազգի գրականության կյանքում: Վերլուծված է նաև ազգային լեզվի՝ իբրև տվյալ ազգի գրականության և մտածողության ձևի, կատարած մեծ դերն ու նշանակությունը, և այս հենքի վրա բնութագրված են հայոց լեզվի էական առանձնահատկությունները: Վերջում առանձին տեղ է հատկացված թարգմանական գրականության բնութագրությանը, նշված է նրա կարևորությունը ազգային մշակույթի փոխհարստացման համար, և այդ

տեսանկյունից, հողվածագիրը պաշտպանում է թարգմանությունների իր լեզվաոճական սկզբունքները:

Նոյեմբեր. «Արծվի Վասպուրականը» (№ 11) արևմտահայերեն հրատարակում է Գարեգին Սրվանձոյանցի «Արծիվ գնաց ի Տարոն» հողվածը և գրաբար՝ «Մեծատուն ամբարիշտ» չափածո ստեղծագործությունը:

Նոյեմբերի 24. «Մեղու Հայաստանին» (№ 47), Միքայել Միանսարյանցի՝ հայկական ժողովրդական ազգային երգերի մասին արևելահայերեն տրված բնութագրականից հետո, հրատարակում է «Երգ մի զորականի» (թարգ. հունգարերենից՝ Մովսես Բուդաղյան), «Վերջին վարդ» (թարգ. գերմաներենից՝ Քերովբե Պատկանյան), «Ինձ համար չէ» (թարգ.՝ նույնը), Մեսրոպ Թաղիադյանի «Օրհներգութիւն ազգային» (գրաբար) և հայկական ժողովրդական «Սուգ Ջուղայեցվոց» բանաստեղծությունները:

Նոյեմբեր. «Բազմավեպը» (№ 11), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Քսավիե դը Մեստրի «Կովկասու գերիները» պատմվածքը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Նոյեմբերի 30. «Մեղուն» (№ 30) գրաբար հրատարակում է Մեսրոպ Թաղիադյանի «Համեմատութիւն Թաղիադեանց Մեսրովբայ վարժապետի և աթարակիր իշոյն, խօսեցեալ յամսեանն մարտի 1833 ամի» բանաստեղծությունը (տե՛ս Մ. Թաղիադյան, Գեղարվեստական գործեր, Երևան, 1965, էջ 45-49, 424): Ձեռնդրված է նաև «Հին ժամանակներ...» արևելահայերեն բանաստեղծությունը:

Դեկտեմբերի 1. «Մեղու Հայաստանին» (№ 48) աշխարհաբար հրատարակում է Միքայել Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգ», Ռափայել Պատկանյանի «Հայոց գինի», «Արաքսի արտասուքը», Մեսրոպ Թաղիադյանի «Հայաստանի պանդուխտ աղջիկ» (գրաբար), աշուղ Թուրինջի «Ո՛վ իմ սիրելի, մեկ մոտս արի...», Ազբար Ադամի «Ասում ես դիմացիր...», Հարություն Ալամդարյանցի «Պարերգութիւն» (գրաբար) և հայկական ժողովրդական «Երգ Արագլի» բանաստեղծությունները: Արտեմ Վարշամյանցի՝ գերմաներեն (?) բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակվել «Երեք գոտի» պատմվածքը: Ավարտ՝ № 50 (դեկտեմբերի 15):

Դեկտեմբեր. «Արծվի Վասպուրականը» (№ 12) արևմտահայերեն հրատարակում է Արամ Բժշկյանի «Ի վիշտս փրկչին», Եղիշե սարկավազի «Ի քեզ անկա Հայաստան» և աշ-

խարհաբար՝ Մկրտիչ Նաղաշի «Վասն ազահութեան» բանաստեղծությունները: Վերջինիս առթիվ նշված է, որ այն «օրինակված է հին ձեռագիր տաղարանն մը»:

Դեկտեմբերի 8. «Մեղու Հայաստանին» (№ 49) իր ամբողջ համարը նվիրել է հայ բանաստեղծների ինքնուրույն և թարգմանական ստեղծագործությունների հրատարակմանը: Նյութերը տրամադրել և համարը հրատարակության է պատրաստել Միքայել Միանսարյանցը:

Ձեռնեղված են. Գ. Պատկանյանի, Հ. Ալամդարյանցի, Հ. Վրթանեսի, Պետրոս Մադաթյանի (Սեյադ), Ռ. Պատկանյանի, Գյուրջի Նավեի, Գ. Դոդոխյանի, Մ. Նալբանդյանի, Սայաթ-Նովայի, Ղ. Ալիշանի, Գ. Միրիմանյանի բանաստեղծություններից: Հրատարակված են նաև թարգմանված բանաստեղծություններ և հայկական ժողովրդական «Սուգ դստեր մեծ իշխանի», «Ինչի կուլաս դուն գառնիկ», «Կռունկ», «Տաղ զատկի» ստեղծագործությունները:

Դեկտեմբերի առաջին կես. «Մասյաց աղավնին» (№ 23), Գաբրիել Այվազովսկու՝ ռուսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ի. Դիմիտրևի «Ճանճ» առակը:

Դեկտեմբեր. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 12) աշխարհաբար հրատարակում է Գալուստ Շերմազանյանի «Ասրի բեկ և Գիքի» դրաման: Ավարտ՝ 1863 թ., № 2 (փետրվար):

Դեկտեմբերի 15. «Մեղու Հայաստանին» (№ 50) իր համարի գերակշիռ մասը նվիրել է հայ բանաստեղծների գործերի հրատարակությանը: Նյութերը տրամադրել և համարի այդ մասը պատրաստել է Միքայել Միանսարյանցը:

Ձեռնեղված են. Մ. Մսերյանի, Մ. Պեշիկթաշլյանի, Գր. Զիլինկիրյանի բանաստեղծությունները, Խ. Աբովյանի, Ստ. Փափագյանի, Հ. Սըվաճյանի և ժողովրդական ստեղծագործություններ:

Դեկտեմբերի 20. «Եղբայրասերը» (№ 29) գրաբար հրատարակում է Խ.Ա.Թ.Օթարյանցի «Ազգու տապանաքար մի», «Թոռին գրեալ թէ վայել է» և «Ժամկոչ և երեց» առակը:

Դեկտեմբերի 22. «Մեղու Հայաստանին» (№ 51) իր համարի զգալի մասը նվիրել է հայ բանաստեղծների ստեղծագործությունների հրատարակությանը (արևելահայերեն):

Դեկտեմբերի 25. Պոլսում ծնվեց երաժշտագետ, հոդվածագիր Լևոն Չիլինկիրյանը: Վախճ. 1932 թ. Երուսաղեմում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1923, էջ 258-259: «Ընդարձակ տարեցույց», Պոլիս, 1933, էջ 217:

Դեկտեմբեր. «Հյուսիսափայլը» (№ 12) արևելահայերեն հրատարակում է Գևորգ Բարխուդարյանցի «Խոսք դեպի մի սիրուն», Սմբատ Շահազիզյանցի «Առ գեղեցկուհի Կ...» և Հովհաննես Քուչուրեկյանի «Անցած օրերի հիշատակ», «Սիրականի սեր», «Մանկության օրերը պատանեկության մեջ», «Առ իմ սիրելին Ա...», «Կրկին անցք», «Գաղտնի սեր» և «Երազ (նվեր Գ.Հ.Հ...-ի)» բանաստեղծությունները (տե՛ս **Սաղյան Ս.**, Հյուսիսափայլի պոեզիան, էջ 96-97, 196-197, 215-226):

Դեկտեմբերի 25. Սըվազում (նաև՝ Սեբաստիա, Կենտր. Թուրքիա) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, հոդվածագիր (հայերեն, թուրքերեն և ֆրանսերեն լեզուներով), խմբագիր, բանասեր (մասնագիտությամբ՝ բժիշկ) Նազարեթ Տաղավարյանը: Եղեռնամահ՝ 1915 թ.:

1885 թ. Պոլսում հիմնել և մինչև 1887 թ. խմբագրել է «Գիտական շարժում» ամսագիրը: Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Արարչահյութ», «Բորակածին», «Տիուն», «Սկսնակ բանասեր» և «Ս.Բ.» կեղծանուններով:

Թեոդիկ, Հուշարձան 1915 թ. ապրիլի 24-ի, Ալեքսանդրիա, 1939, էջ 32-35: **Оганесян Л.,** История медицины в Армении, ч. IV, Ереван, 1947, стр. 135-139.

Դեկտեմբերի 29. «Մեղու Հայաստանին» (№ 52) արևելահայերեն հրատարակում է Սմբատ Շահազիզի «Իդձ սրտիս», «Այցելություն» բանաստեղծությունները և գրաբար՝ Կամսար Տեր-Դավթյանցի «Կորուսեալ մանուկ» պոեմը: Հրատարակված է արևմտահայերեն «A mon Amour» և գրաբար՝ «Անդորրություն», «Բաժակ ողջոյնի առ սահմանադրութիւն» բանաստեղծությունները:

-Թիֆլիսում ծնվեց գրական-մշակութային գործիչ, հոդվածագիր Թամարա Արտեմի Ադամյանը: Վախճ. 1888 թ, դեկտեմբերի 31-ին, իր ծննդավայրում:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 26: Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1, Երևան, 1974, էջ 63:

-Ագուլիսում (այժմ՝ Նախիջևանի ԻՍՍՀ, Օրդուբաթի շրջ.) ծնվեց գրականագետ, բանասեր, հրատարակչական գործիչ, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն), խմբագիր Մկրտիչ Կարապետի Բարխուդարյանը: Վախճ. 1927 թ. Մոսկվայում:

1888 թ. Մոսկվայում հիմնել և մինչև 1896 թ. խմբագրել է «Հանդես գրականական և պատմական» վեցամսյա պարբերականը:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 186-187: Հայկական սովետական հանրագիտարան, հ. 2, Երևան, 1976, էջ 319:

-Պեյթասում (նաև՝ Բիթաս, Մուսալեռի շրջ., Հար. Թուրքիա) ծնվեց հողվածագիր (հայերեն և անգլերեն լեզուներով), կրթական-մշակութային գործիչ, արձակագիր Աբրահամ Սեքլեմյանը: Վախճ. 1920 թ. դեկտեմբերի 12-ին, Ֆրեզնոյում (ԱՄՆ):

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Պերճ-Պարույր» կեղծանունով, 1890 թ. մինչև մահը, Ֆրեզնոյում խմբագրել է «Ասպարեզ» շաբաթաթերթը:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1922, էջ 414, «Հայաստանի կոչնակ», 1921, № 2 («Ա.Կ. Սեքլեմյան»), № 5 («Աբրահամ Սեքլեմյան»):

-Կուտինայում (նաև՝ Քյոթահիա, Արևմտ. Թուրքիա) ծնվեց մշակութային գործիչ, լրագրող (մասնագիտությամբ՝ իրավաբան) Հակոբ Սթանպուլյանը: Վախճ. 1912 թ. փետրվարի 1-ին, Պոլսում:

«Ատրուշան» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Բյուզանդիոն», 1912, № 4654 («Մահ»), № 4655 («Հակոբ Սթանպուլյան»):

-Յոնա գյուղում (Գողթն գավառ, այժմ՝ Օրդուբադի շրջ. Նախիջևանի ԻՍՍՀ) ծնվեց գրական-մշակութային գործիչ, լրագրող, խմբագիր Լևոն Սարգսյանը: Վախճ. 1927 թ. մայիսի 1-ին, Մոսկվայում:

1905-1907 թթ. Թիֆլիսում խմբագրել է «Մուրճ» ամսագիրը և հանդես է եկել «Անկախ» կեղծանունով:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1928, էջ 649-650, «Հայաստանի կոչնակ», 1928, № 26 («Վերջին մոհիկաններեն»), Մատենագիտություն «Մուրճ» ամսագրի, Երևան, 1977, 776 էջ:

-Զմյուռնիայում ծնվեց լրագրող (անգլերեն, ֆրանսերեն, հունարեն, հայերեն լեզուներով), հրապարակագիր Միհրան Սվազլյանը (Սվազլը): Վախճ. 1935 թ. հունիսի 19-ին, Նյու Յորքում:

«Հայաստանի կոչնակ», 1935, № 26 («Միհրան Սվազլի մահը»):

-Այնթապում (Հարավ. Թուրքիա) ծնվեց մշակութային գործիչ, պատմաբան-բանասեր, լրագրող (թուրքերենով) Ջենոբ Ալեքսանի Պեզճյանը: Վախճ. 1933 թ. հունվարի 30-ին, Պոլսում (?):

«Հայաստանի կոչնակ», 1933, № 10 («Պրոֆ. Ջենոբ Պեզճյան»), № 14 («Պրոֆ. Ջենոբ Պեզճյան»), № 18 («Նշմարներ մեր դիտարանեն»):

-Պոլսում ծնվեց հողվածագիր, գրական-մշակութային գործիչ, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն), խմբագիր Պետրոս Ատրունին: Վախճ. 1922 թ. հուլիսի 14-ին, իր ծննդավայրում:

1888 թ. Պոլսում հիմնադրել և մեկ տարի խմբագրել է «Կրթարան» ամսագիրը:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1923, էջ 416: **Պոտուրյան Մ.**, Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 248:

-Պոլսում (?) ծնվեց մշակութային գործիչ, լրագրող, բանասեր, արձակագիր Մ.Հ. Գնաճյանը: Վախճ. 1951 թ. օգոստոսի 23-ին, Սան-Ժոզեում (ԱՄՆ):

«Հայաստանի կոչնակ», 1951, № 38 («Վեր. Մ.Հ. Գնաճյանի մահը»):

-Ուփզունլար գյուղում (այժմ՝ Օձուն, Թումանյան շրջան, ՀՍՍՀ) ծնվեց գյուղագիր, արձակագիր, ՍՍՀՄ գրողների միության անդամ (1938 թ.) Անուշավան Մովսեսի Աբովյանը: Վախճ. 1938 թ. իր ծննդավայրում:

Հայ գյուղագիրներ (կազմ. Արմ. Թամազյան), Երևան, 1950, 575 էջ: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, Երևան, 1973, էջ 11, **Խաչատրյան Հ.**, Գրական տեղեկատու, Երևան, 1981, էջ 13:

-Վենետիկում գրաբար հրատարակվում է Էդուարդ Հյուրմյուզյանի «Գիրք Յոբայ, տաղաչափեալ և լուսաբանեալ» չափածո ստեղծագործությունը: 70 էջ:

-Վենետիկում գրաբար հրատարակվում է «Երգք Հայաստանեայց եկեղեցւոյ, յերիւրեալք ըստ կանոնաց նորոյ երաժշտութեան» ժողովածուն: 24 էջ:

-Վենետիկում, հունարեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է Հովհան Ոսկեբերանի գործերի ժողովածվի Ա հատորը: 942 էջ:

Բ հատոր, նույն թվականին, 924 էջ («Շարք մատենագրութեանց նախնեաց», հ. ԼԱ):

-Վենետիկում գրաքար հրատարակվում է Էդուարդ Հյուրմյուզյանի «Աստուածաբանութիւն տեսական համառօտեալ» աշխատության Ա հատորը: 613 էջ:

Բ հատոր, նույն թվականին, 496 էջ:

-Վենետիկում, գրաքար առաջաբանով ու բնագրով, ծանոթագրություններով ու անվանա-
ցանկով, հրատարակվում է Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց» գիրքը: 678 էջ:

Հանդիսանում է 1835 թ. Վենետիկի Ագաթանգեղոսի «Պատմության» վերահրա-
տարակությունը (տե՛ս **Ս. Շտիկյան**, Հայ նոր գրականության ժամանակագրու-
թյուն (1801-1850), էջ 204), և ըստ այդմ պետք է ենթադրել, որ այս հրատարակու-
թյունը ևս իրականացվել է Արսեն Բագրատունու ջանքերով: 1862 թ. հրատարա-
կությունը ունի նաև մի երկրորդ անվանաթերթ, որը նույնն է, ինչ 1835 թվակա-
նինը:

-Վենետիկում հրատարակվում է Վարդան վարդապետի «Հաւաքումն պատմութեան» աշ-
խատությունը: Բնագրագիտական աշխատանքները, գրաքար առաջաբանն ու ծանո-
թագրությունները Ղևոնդ Ալիշանի («Շար մատենագրութեանց նախնեաց», հ. ԼԲ): 184
էջ:

-Վենետիկում, Գրիգորիս Ճելայանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն
թարգմանությամբ, հրատարակվում է Լամե Ֆլեորիի «Համառոտ պատմություն
Անգղիո» աշխատությունը: 346 էջ:

-Վենետիկում, գրաքար և երեսուներկու լեզուների թարգմանությամբ, հրատարակվում է
Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանեմ» գործը: 560 էջ:

Նույնը՝ 1872 թ., անփոփոխ:

Տրված են. Հայերեն (գրաքար) և հունարեն, իտալերեն, լատիներեն, ֆրանսերեն,
իսպաներեն, գերմաներեն, հոլանդերեն, դանիերեն, շվեդերեն, անգլերեն, իռլան-
դերեն, ռուսերեն, լեհերեն, սերբերեն, վալաքերեն, պորտուգալերեն, հունգարե-
րեն, իսլանդերեն, կրեոլանտերեն, կելտերեն, դալմատերեն, վրացերեն, եթովպե-
րեն, պարսկերեն, արաբերեն, տաճկերեն, եբրայերեն, ասորերեն, քաղդեարեն,
չինարեն, հին ու նոր մալայերեն կատարված թարգմանությունները:

-Թեոդոսիայում հրատարակվում է Խորեն Գալֆայանի «Հանգարան կամ բառգիրք հանգաց հայկազյան լեզվի» աշխարհաբար բառերի հանգաբառարանը: 312 էջ:

«... Ընդգրկում է շուրջ 12 000 բառ, բառերը դասավորված են ըստ բառի վերջին վանկի ձայնավորի: Գալֆայանի բառարանը ... պատմական մեծ արժեք է ձեռք բերում այն տեսակետից, որ նախ՝ աշխարհի առաջին տպագիր հանգարանն է, և ապա՝ առաջին աշխարհաբար հանգարանը» (Հայոց լեզվի հանգաբառարան, Երևան, 1976, էջ 8):

-Թեոդոսիայում, ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ (թարգմանիչ՝ Ե.Մ.), հրատարակվում է Պուլյիի «Մայրախրատ պատմությունը» ընդհանուր խորագիրը կրող ժողովածվի Ա տետրը, «Անխոհեմ որդեսիրություն» պատմվածքը: 33 էջ:

Բ տետրը, «Մայրենի չար օրինակին վնասները» պատմվածքը (թարգմանիչ՝ Աբրահամ Այվազյան), անդ, ն.թ., 34 էջ:

-Թեոդոսիայում արևմտահայերեն հրատարակվում է Ամբրոսիոս Գալֆայանի «Պատմություն աստվածաշունչ սուրբ գրոց Հին կտակարանի» աշխատությունը: 445 էջ:

Նույնը Վաղարշապատում, որոշ փոփոխումներով ու լրացումներով, 1897 թ., 475 էջ:

-Թեոդոսիայում արևմտահայերեն հրատարակվում է Խորեն Գալֆայանի «Ալաֆրանկա» կատակերգությունը: 180 էջ:

-Թեոդոսիայում, գրաբար մեկնաբանություններով, հրատարակվում է Գաբրիել Այվազովսկու «Ընթերցարան լեզուին ռուսաց, ի պետս ժողովրդական դպրոցաց» («Русская азбука для армянского юношества») դասագիրքը: 44 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Անդրանիկ Հովհաննիսյանի «Հայ գրականության զարգացման համար կարևոր տեղեկություն մը» աշխատությունը: 12 էջ:

Գրքի գոյության մասին հավաստում է «Բազմավեպը» (1863 թ., էջ 29) և հավանորեն նրա հետևությամբ Գ. Զարբհանալյանը (Հայկական մատենագիտություն, Վենետիկ, 1883, էջ 325) և Ա. Ղազիկյանը (Հայկական նոր մատենագիտություն..., Վենետիկ, 1912, էջ 120): Այն գտնել մեզ չի հաջողվել:

- Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Գրիգոր Էնֆիեճյանի «Ազգային առաջարկություն մը» գրքույկը: 11 էջ:
- Պոլսում, Մատթեոս Մամուռյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն ազատ թարգմանությամբ, հրատարակվում է Ռենցիո դը Պրեբուայի «Մենաստանին աղորին կամ տարաբաղդ Վարդուհի» ողբերգությունը: 77 էջ:
- Պոլսում, Մատթեոս Մամուռյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Պիեր Բոմարշեի «Սեվիլյի սափրիչը» կատակերգությունը: 55 էջ:
- Պոլսում գրաբար հրատարակվում է Գալուստ Լճեցու «Կ.Պոլիս հայոց դուռ կորստեան և դուռ կենաց բացեալ» գրքույկը: 56 էջ:
- Պոլսում, Մկրտիչ Ճանըվյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ժան-Պիեր Ֆլորիանի «Գուլիլեմոս Թելլ կամ ազատումն Զվիցերիո» վիպասանությունը: 130 էջ:
- Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Աբրահամ Այվազյանի «Արտասուք հայ մանկան, ի մահ Մամիկոնյան Վարդանա հայ դյուցազնին» դյուցազներգությունը:
- Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Ներսես Մեզպուրյանի «Չորս օրիորդք կամ ուսումնասեր և ուսումնատյացք» թատերգությունը: 96 էջ:
- Պոլսում, գրաբար տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Անտոն Մադաթիա Գարագաշյանի «Դպրութիւն կամ նոր քերականութիւն հայերէն» աշխատությունը: ԻԴ+223 էջ:
 - Նույնը՝ 1864 թ. (121 էջ), 1868 թ. (263 էջ), 1871 թ. (271 էջ), 1875 թ. (301 էջ), 1878 թ. (120 էջ), 1881 թ. (293 էջ), 1888 թ. (320 էջ) և 1891 թ. (313 էջ), ամեն անգամ որոշ փոփոխումներով ու լրացումներով:
- Պոլսում գրաբար և արևմտահայերեն հրատարակվում է «Թանգարան ազգային երգոց» ժողովածուն:
- Պոլսում, գրաբար տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Համբարձում Ալաճաճյանի «Հավաքածոյ հայկական ասացուածոց, ի պէտս նորավարժ ուսանողաց» աշխատությունը: 170 էջ:

Ասացվածքները (սրանց թվում զգալի մաս են կազմում փոխաբերաբար ասված արտահայտությունները, անոյուրըմբռնելի ոճերը) դասավորված են այբբենական կարգով և նրանց թիվը հասնում է 1000-ի: Օրինակներ բերված են ինչպես պատմիչների գործերից, այնպես էլ Աստվածաշնչից: Կան բառեր էլ, որոնք բացատրված են պարզ բառարանային սկզբունքով, անհրաժեշտության դեպքում օգտագործելով նաև հայատառ թուրքերեն համագործերը:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Թովմաս Թերզյանի «Սանդուխտ» պատմական ողբերգությունը: 48 էջ: Նույնը՝ անփոփոխ, Վենետիկ, 1871 թ., 51 էջ:

Նույնը՝ Մատիլդ Ֆերուհիսանյանի՝ ֆրանսերեն թարգմանությամբ և հայերեն-ֆրանսերեն զուգահեռ տեքստերով, Երուսաղեմ, 1881 թ. 239 էջ:

-Պոլսում, ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն ազատ թարգմանությամբ (թարգմանիչ՝ Յ.Ն.), հրատարակվում է «Պատուհանեն նետվող կին մը» կատակերգությունը: 36 էջ:

-Պոլսում, Տիգրան Տոմինյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Վոլտերի «Ալգիր կամ ամերիկացիք» ողբերգությունը: 64 էջ:

-Պոլսում, Ատոմ Տերոյենցի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ ու թարգմանչի ծանոթագրություններով, հրատարակվում է «Խոճկորակք» պատմվածքը: 84 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Ստեփան-Պերճ Փափազյանի «Դասագիրք ազգային պատմության» աշխատությունը: 216 էջ:

Նույնը՝ 1863 թ. (230 էջ), 1866 թ. (248 էջ), 1870 թ. (317 էջ), ամեն անգամ որոշ փոփոխություններով ու լրացումներով:

-Վանում արևմտահայերեն հրատարակվում է Տիգրան Ամիրջանյանի դրամատիկական ստեղծագործությունների «Ողբերգություն» անունը կրող ժողովածուն: 174 էջ: Ձեռտեղված են «Վարդան Մեծ» (չափածո) և «Տրդատ Մեծ» պատմական ողբերգությունները:

-Զմյուռնիայում, Տիգրան-Հարություն Տետեյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Անգեղա Գաճիոլի կամ նախախնամության գաղտնիքը» պատմվածքը: 32 էջ: Հատվածաբար հրատարակվում էր «Արփի արարատյան» ամսագրի 1854 թ. № 7 (հունվար), № 8 (փետրվար) և № 12 (հունիս) համարներում:

-Զմյուռնիայում, Տիգրան-Հարություն Տետեյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ալեքսանդր Դյումայի «Կատերին Հովարդ» դրաման: 74 էջ: Վերջում՝ «Թատերգությանս պատմությունը» խորագրի ներքո, թարգմանիչը վերլուծաբար ներկայացրել է «Կատերին Հովարդի» բովանդակությունը:

-Զմյուռնիայում, Տիգրան-Հարություն Տետեյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Վիկտոր Հյուգոյի «Լուկրեցիա Պորճիա» դրաման: 48 էջ:

-Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Նիկողայոս Ավգերյանի «Ընդհանուր պատմություն ազգային բարձրագույն դպրոցաց և առանձնական ընթերցվածո համար» աշխատությունը: 390 էջ:

-Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Պողոս Հովնանյանի «Առաջնորդ դաստիարակության առանձին ծնողաց համար» աշխատությունը: 112 էջ:

-Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Պողոս Հովնանյանի «Ուսումն ազգային դաստիարակության, որ է ազգային տղոց միտքը, կամքն ու սիրտը կրթելու գիտություն, առանձինն դաստիարակաց համար» աշխատությունը: 340 էջ:

-Թիֆլիսում վերահրատարակվում է Խաչատուր Աբովյանի «Նախաշավիղ կրթության ի պետս նորավարժից» դպրոցական դասագիրքը: 96 էջ:

-Թիֆլիսում աշխարհաբար հրատարակվում է Ռոստոմ Երզնկյանցի «Հրապարակախոսական պատասխանի ընդդեմ զրպարտությանց Դաբաղ Ղազոյի» ընդդիմախոսական աշխատությունը: 43 էջ:

Հեղինակը բանավիճում է Գևորգ Տեր-Աղեքսանդրյանցի հետ, որն, ինչպես հայտնի է, Թիֆլիսի պարբերականներում հանդես էր գալիս «Դաբաղ Ղազո»,

«Քաղկրցի Շաքար Մանուշակյանց», «Քաղկրցի վաճառական Գեո Ավետիսով» կեղծանուններով (տե՛ս **Մխիթարյան Մ.**, Հյուսիսսփայլ ամսագիրը, Երևան, 1958, 262 էջ):

- Մոսկվայում աշխարհաբար հրատարակվում է Աբել Մխիթարյանի «Հայոց ազգի քաղաքական վիճակը, միջին դարերեն մինչև մեր ժամանակը» գրքույկը: 24 էջ:
- Փարիզում աշխարհաբար հրատարակվում է Սիմյոն Մանիկյանի (իմա. Միքայել Նալբանդյան) «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը: 112 էջ:
- Փարիզում արևմտահայերեն հրատարակվում է Կարապետ Շահնագարյանի «Դաշանց թղթո քնությունն ու հերքումը» աշխատությունը: 144 էջ:

Խոսքը վերաբերում է հայոց թագավոր Տրդատ Գ-ի, հոգևոր առաջնորդ Գրիգոր Լուսավորչի և Հռոմի Կոստանդինոս ինքնակալ կայսեր ու Սեղբեստրոս հայրապետի միջև կնքված դաշնագրությանը, որը որոշում է երկու պետությունների իրավական, հասարակական-քաղաքական ու մշակութային հարաբերությունների սահմանները, և որը համեմատաբար ամբողջական ձևով պահպանվել է Ազաթանգեղոսի մոտ: Նման «Դաշանց թուղթ» երկու պետությունների ղեկավարների միջև իսկապես եղել է, սակայն բանասիրությունը երկարատև թեր ու դեմ վեճերից հետո հանգեց այն եզրակացության, որ ազաթանգեղոսյան տարբերակը հետագա դարերում արված կեղծիք է: Այդ կարծիքը պաշտպանում էր նաև Կարապետ Շահնագարյանը:

1863

Հունվարի 1. Պոլսում իր գոյությունն է սկսում կրթամշակութային «Գրասիրաց ընկերությունը», որն իր առջև նպատակ էր դնում «Ստակ շահիլ և միանգամայն նպաստել ուսումնական առաջադիմության ազգիս: Օգտակար և պիտանի գրվածոց հեղինակություններ արժանավոր վարձատրությամբ ստանալ, տպագրել տալ և ջանալ խիստ աժան գնով ծախել»:

Պողոսյան Ե. Պատմություն հայ մշակութային ընկերություններու, Վիեննա, 1957, էջ 694-695:

Հունվարի 1-20. «Համբավաբեր Ռուսիոն» (№ 40-42), Մսեր Մսերյանի գրաբար ծանոթագրություններով, հրատարակում է Գրիգոր Մագիստրոսի հինգ թղթերը, Խոսրովիկ

Թարգմանչի «Ի մենամարտութիւնն Դաւթի և Գողիաթու» ճառը, Հակոբ Երեցի «Տաղ վասն կենաց մարդկան» բանաստեղծությունը և իր՝ Մսեր Մսերյանի «Արտասուք քերթողի, ի վերայ շիրմի վաղամեռիկն դստեր» գրաբար թարգմանությունը:

Հունվարի 8. «Մեղուն» (№ 183) արևմտահայերեն հրատարակում է «Լորդ Բայրոն, քերթող անգղիացի» հոդվածը: Ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակվել նաև՝ Ալեքսանդր Դյումայի «Մուրատ» (նկատի ունի Նապոլեոնի զորավար Յոսիփ Մյուրատին – Ս.Շ.) վիպակը: Ավարտ՝ № 192 (մարտի 12):

Հոդվածում Բայրոնի կենսագրությունը շարադրելուց հետո, քննված են նրա աղերսները հայկական մշակույթի և հատկապես Վենետիկի Մխիթարյանների հետ, հայերենի նրա ուսումնառությունը Հարություն Ավգերյանի մոտ: Ապա, արևմտահայերեն թարգմանությամբ, բերված են Բայրոնի երկու նամակները, որտեղ նա հայտնում է իր տպավորությունները հայոց լեզվի, հայ գրականության, Մխիթարյան միաբանության ու հայ ժողովրդի մասին:

Հունվար. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 1) գրաբար հրատարակում է Հովհաննես Թլկուրանցու «Տաղ ի վերայ արբեցողութեան» և «Տաղ վասն սիրոյ» բանաստեղծությունները: Դրանք հրատարակության է պատրաստել Սաթենիկ Չմշկյանցը:

Հունվարի 8. «Պեգասյան թռչնիկը» (№ 1) արևմտահայերեն հրատարակում է «Նոր դարուս ոգին» հրապարակախոսական հոդվածը: Համապատասխան բնութագրականներով ներկայացված են շուրջ հիսուն անուն հայերեն և հայատառ թուրքերեն պարբերականներ:

Հունվարի 10. «Մեղու Հայաստանին» (№ 1) արևելահայերեն հրատարակում է Աշուղ Կարապետի (ի՛մա. Ռափայել Պատկանյան) «Գինին դեղ է» բանաստեղծությունը (տե՛ս Ռ.Պատկանյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1963, էջ 90): Այստեղ ունի «Գինի և ջուր» վերնագիրը:

Հունվար. «Բազմավեպը» (№ 1), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Հուլիոս Սանտոյի «Օլիվե» վիպակը: Ավարտ՝ № 3 (մարտ):

Հունվարի 12. «Արշալույս արարատյանը» (№ 692) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Նազարյանցի «Ծանուցումն Հյուսիսսփայլի բարեմիտ ընթերցողներին» հոդվածը:

Հայտնում է «Հյուսիսսփայլի» տպագրության դադարեցման մասին:

Հունվարի 19. «Ժամանակ» հանդեսը (№ 2) արևմտահայերեն հրատարակում է Ստեփան Փափագյանի «Իլտեկոնտա. թատերգություն երիս արարվածս» թատերախոսականը:

Հունվարի 20. «Մեղու Հայաստանին» (№ 2) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Պալասանյանի «Նախնյաց ձեռագիրներու տպագրությանը վրա» հոդվածը (ավարտ՝ № 4, փետրվարի 10) և Աշուղ Կարապետի «Աղջիկ քեզ կասեմ, հարսիկ դու լսե» բանաստեղծությունը (տե՛ս **Ռ. Պատկանյան**, Երկերի ժողովածու, հ. 1, էջ 92-93):

Հունվարի 22. «Մեղուն» (№ 185) Վանի բարբառով հրատարակում է «Ցավակցություն կնոջ» բանաստեղծությունը (ունի *** ստորագրությունը):

Հունվարի 22. «Պեգասյան թռչնիկը» (№ 2) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Հայ թերթերուն կյանքը ինչո՞ւ համար կարճատև է» հրապարակախոսական հոդվածը: Ավարտ՝ № 4 (փետրվարի 22):

Հունվարի 23. Նոր Ջուղայում (Պարսկաստան) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, լրագրող (հայերեն և անգլերեն լեզուներով), թարգմանիչ (հայերենից՝ անգլերեն) Ստեփաննոս Տեր-Մեսրոպրեի Գրիգորյանը: Վախճ. 1938 (?) թ., Լոնդոնում:

«Հայաստանի կոչնակ», 1938, № 10 («Ս. Տեր Մ. Գրիգորյան»):

Հունվարի 26. «Մասիսը» (№ 572) արևմտահայերեն հրատարակում է Վաղարշակ Պ. Պառնասյանի (հետագայում՝ Պողոս Պառնասյան) «Էլիզա Արմենակ Հայկունվո» գրախոսականը:

Հունվարի 28. «Մեղուն» (№ 186), արտատպելով «Հյուսիսսփայլ» 1862 թ. № 12-ից, արևելահայերեն հրատարակում է Հովհաննես Քուչուրեկյանի «Առ իմ սիրելին Ա...» և Սմբատ Շահազիզյանցի «Առ գեղեցկուհի Կ...» բանաստեղծությունները:

Փետրվարի 1. «Ծաղիկը» (№ 58) ազատ շարադրանքով բերում է Գաետանո Դոնիցետիի «Լուչիա դը Լամերմուր» ստեղծագործության բովանդակությունը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Փետրվարի 3. «Եղբայրասերը» (№ 30) գրաբար հրատարակում է «Փառաբանութիւն առ Աստուած ի նոր արուր տարւոյ» (հեղինակ՝ Ա.Բ.Գ.=Դավիթ Խաչկոնց?: **Ղազիկյան Ա.**, Հայկական նոր մատենագիտություն..., Վենետիկ, 1912, էջ 1130), «Խոկումն Պարսիացւոյն» և «Նոր տարի» (ունի «Վերա Եղբայրասիրի» ստորագրությունը) բանաստեղծությունները:

Փետրվարի 5. «Մեղուն» (№ 187), արտատպելով «Հյուսիսափայլ» 1862 թ. № 12-ից, արևելահայերեն հրատարակում է Գևորգ Բարխուդարյանցի «Կույր երգիչը», Հովհաննես Քուչուբեկյանի «Գաղտնի սեր» և «Առ օրիորդն ***» բանաստեղծությունները (վերջինն ունի *** ստորագրությունը):

Փետրվարի 10. «Եղբայրասերը» (№ 31) հրատարակում է Նաղաշ Հովնաթանի «Հորժամ եղև...» բանաստեղծությունը: Տողատակում գրաբար տրված է Հովնաթանի կյանքի ու գործունեության համառոտ բնութագրությունը:

Փետրվարի 12. «Մեղուն» (№ 188), արտատպելով «Հյուսիսափայլ» 1862 թ. № 12-ից, արևելահայերեն հրատարակում է Հովհաննես Քուչուբեկյանցի «Անցած օրերի հիշատակ» և «Սիրականի սեր» բանաստեղծությունները:

Փետրվարի 12. Հրատարակվում է Բարձր Դոան կարգադրությունը, պարբերականներում անձնական բնույթի վիճաբանությունները և իրար վիրավորող հոդվածների հրատարակությունն արգելելու մասին: («Մեղու», 1863, № 187, փետրվարի 5, «Պաշտոնական ազդարարություն»):

Փետրվարի 19. «Մեղուն» (№ 189) արևմտահայերեն հրատարակում է Հարություն Սըվաճյանի «Հյուսիսափայլ օրագրին դադարիլը» հոդվածը:

Փետրվարի 20. «Մեղու Հայաստանին» (№ 5) արևելահայերեն հրատարակում է Եղիշե սարկավազի «Ի քեզ անկա Հայաստան» բանաստեղծությունը և «Զբոսարան» խորագիրը կրող գրախոսականը (հեղ. Ա.Ե.), որտեղ գրախոսն անդրադառնում է Մ. Պատկանյանի «Շուշանիկ», Ս. Հեքիմյանի «Սամել» ողբերգություններին և Ն. Փուղինյանցի «Դալալ Ղազո» վոդևիլին:

Փետրվարի 22. «Պեգասյան թռչնիկը» (№ 4) արևմտահայերեն հրատարակում է Արմենակ Հայկունու «Բանադատք և բանադատություն» նամակ-գրախոսականը, որտեղ պաշտպանում է իր «Էլիզա կամ վերջին արևելյան պատերազմի ժամանակ տեղի ունեցած իրական դեպք մը» վեպը (Զմյուռնիա, 1861, տե՛ս ներկա հատորը):

Փետրվարի 23. «Մասիսը» (№ 23) արևմտահայերեն հրատարակում է Վաղարշակ Պ. Պառնասյանի (հետագայում՝ Պողոս Պառնասյան) «ՌԻսումնական և գրագիտական տրամախոսությունք» հոդվածը:

ՌԻնի նաև հետևյալ ենթավերնագիրը. «Հայկական գրականություն. Պ. Ստեփաննոս Նազարյանցի գայրույթը: Լրագրի մը հաշիվները: «Բազմավեպ»: Տպագրական ազատություն: Վերծանությունք: Սըր Հենրի Պուլվերի ճառը: Սեն-Մարկ Ժիրարժեն ի Տեպա»:

Փետրվարի 28. «Եղբայրասերը» (№ 33), անգլերեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Շուն և արջառ» առակը և «Բամբասանք» բանաստեղծությունը, գրաբար՝ Սանթուր Հարությունյանի «Ողբ վասն մահուան... Թաղդեոսի Խ. Աւետումեան» եղերերգը և Հովակիմ Ադամյանցի «Մեռելահարցուկ» պոեմը: Այն շարունակվում է մինչև № 36 (մարտի 31) և մնում է անավարտ:

Փետրվարի 28. «Մեղու Հայաստանին» (№ 6) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Պալասանյանի «Երկու խոսք հայ գրականության վերա» հոդվածը և Գևորգ Տեր-Աղեքսանդրյանցի՝ ռուսերեն բնագրից թիֆլիսահայ բարբառով կատարած թարգմանությամբ, Ի. Կոնիլովի «Էջն ու բլբուլը» առակը:

Մարտ. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 3) արևելահայերեն հրատարակում է Պերճ Պոռոջյանի «Աղասի» ազգային ողբերգությունը: Շարունակվում է մինչև հունիս (№ 6): Տե՛ս՝ **Պ. Պոռոջյան**, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1962, էջ 355-423: Հրատարակված է նաև նույնի՝ «Երգ հայկական թատերականաց (նվեր Թիֆլիսու հայ համբարներին)» բանաստեղծությունը:

Մարտի 10. «Եղբայրասերը» (№ 34), անգլերեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Աղվես և խաղող» առակը, ինչպես նաև «Աղքատք հյուրանոցի» (ունի «Աղքատ ոմն հյուրանոցի» ստորագրությունը) և «Անտուն անտեր...» (անստորագիր) բանաստեղծությունները:

Մարտի առաջին կես. «Եվրոպան» (№ 5), գերմաներեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Նավական վիրաբույժը» վիպակը: Ավարտ՝ № 20 (հոկտեմբերի երկրորդ կես):

Մարտի 13. Պոլսում ծնվեց կատակերգակ, թատերագետ, թարգմանիչ (ֆրանսերենից, ռուսերենից, թուրքերենից՝ հայերեն), դրամատուրգ, խմբագիր Արամ Վրույրը (Արամ Մինասի Սաքասյան): Վախճ. 1924 թ. մարտի 5-ին, Թիֆլիսում:

1907-1912 թթ. Թիֆլիսում խմբագրել է «Հուշարար» թատերական երկշաբաթաթերթը (վերջին տարին՝ Գալուստ Իփեկյանի հետ համատեղ): Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Միանսարյան», «Քաջունի», «Հ.Սևյան», «Բաղդիկ» կեղծանուններով:

Փաշայան Ռ., Արամ Վրույր, Երևան, 1963, 169 էջ:

Մարտի 16. «Մասիսը» (№ 579) արևմտահայերեն հրատարակում է Վաղարշակ Պ. Պառնասյանի (հետագայում՝ Պողոս Պառնասյան) «Ուսումնական և գրագիտական տրամախոսությունք» հոդվածը: Ունի նաև հետևյալ ենթավերնագիրը. «Արվեստահանդես: Գրական առաջադիմություն: Բազմարվեստյան վարժարան Գաղղիո: Ատենաբանություն Նապոլեոն կայսեր: Գաղղիական ակադեմիա: Հայաստանի վիճակը»:

Մարտի 17. Սուլթան Աբդուլ Ազիզը երկարատև ձգձգումներից ու կրճատումներից հետո (150 հոդվածներից թողնելով 99-ը) վավերացնում է Նահապետ Ռուսինյանի, Նիկողոս Պալյանի, Գրիգոր Օտյանի, Սերվիլչենի, Կարապետ Ութուրյանի, Գրիգոր Աղաթոնի, Հովհաննես Սեթյանի և այլոց կազմած «Ազգային Սահմանադրությունը»:

Հարությունյան Շ., Հայ ժողովրդի պատմության համառոտ ժամանակագրություն (1801-1917), Երևան, էջ 121, 133: Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, 1967, 669 էջ:

Մարտ. «Բազմավեպը» (№ 3), Սամվել Կայսերյանի (հետագայում՝ Գանթարյան)՝ գերմաներեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Թեոդոր Ֆոնտանի «Յաղբիւրն Վիվիէ. տաղ» բանաստեղծությունը:

Մարտի 19. «Մեղուն» (№ 193), իտալերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Ձիթապտուղը» թատերգությունը:

Մարտի 20. «Մեղու Հայաստանին» (№ 8) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Պալասանյանի «Հանգարան կամ բառգիրք հանգաց հայկազյան լեզվի» գրախոսականը, նվիրված Խորեն Գալֆայանի համանուն գրքին (տե՛ս ներկա հատորը, 1862 թ.):

Մարտի 20. «Եղբայրասերը» (№ 35) արևելահայերեն հրատարակում է «Մ. Նալբանդյանցի «Երկու տողեն»» (բերված է «Մեք ազատական նվիրեցինք մեզ հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանելու...» հատվածը) և «Ի հիշատակարանս Մ. Նալբանդյանց» (բերված է «Երգ ազատության» բանաստեղծությունը): Գրաբար հրատարակված է «Եղբայրասերի» հատուկ թերթոնը, նվիրված Մ. Նալբանդյանի կյանքին ու գործին, որը ներկայացված է դրվատական գնահատականներով: Ավարտ՝ հաջորդ համարում: Անգլերեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակված է «Շուն և սովեր յուր» առակը:

Մարտի 30. «Մեղու Հայաստանին» (№ 9), լեհերենից (?) կատարված արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Ոչնչով երբեմն մարդ անուն է հանում» պատմվածքը և Մով. Պատրվակ-Հանողյանցի (Միքայել Պատկանյանց ?) «Մեկ քանի խոսք հայոց թատրոնի վերա» թատերախոսականը:

Մարտի 31. «Եղբայրասերը» (№ 36) գրաբար հրատարակում է Հովակիմ Ադամյանցի «Բան» եղերերգությունը և «Դեղ աղուհացեան հիւանդի» (ունի Բ.Շ. ստորագրությունը), «Ամավերջ Եղբայրասիրի» (անստորագիր) բանաստեղծությունները:

Ապրիլի 6. «Մասիսը» (№ 582) արևմտահայերեն հրատարակում է Վաղարշակ Պ. Պառնասյանի «Ուսումնական և գրականագիտական տրամախոսությունք» հոդվածը: Ունի հետևյալ ենթավերնագիրը. « «Մեղուն» և գեղեցիկ սեռը: Իշխանուհին յԱլեքսանդրիա: Մ. Սկրիպ: Մ. Օգտավ Ֆեոյլե: Սիբիլլա: «Կիթառ»: Հորդոր ազգային առաջադիմության»:

Ապրիլի 8. «Պեգասյան թռչնիկը» (№ 7), Բարթոլ Թեյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն ազատ թարգմանությամբ, հրատարակում է Ժան Լաֆոնտենի «Խոզակաղինը և դրմենին» առակը: Վերջում տրված է առակի թարգմանչի կատարած վերլուծությունը: Հրատարակված է նաև Աբրահամ Այվազյանի «Լեռներ, դաշտեր թնդացին», իսկ № 11-ում (հունիսի 8) «Հառաչանք պանդխտի առ ծիծեռնիկ» արևմտահայերեն բանաստեղծությունները:

Ապրիլ. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 4), Ստեփաննոս Պալասանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Վիկտոր Լանգլուայի «Մովսես Խորենացի և նրա պատմությունը» ուսումնասիրությունը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Ապրիլի 9. «Մեղուն» (№ 194) արևմտահայերեն հրատարակում է «Հրավեր միության», «Ո՞ր է բռնավորը» բանաստեղծությունները և մեկ «Հանելուկ»:

Ապրիլ. Թիֆլիսում ծնվեց գրական-մշակութային գործիչ, բանասեր-պատմաբան, լեզվաբան, թարգմանիչ (գերմաներեից՝ հայերեն) Իսահակ Ղազարի Հարությունյանը: Վախճ. 1928 թ. դեկտեմբերի 30-ին, իր ծննդավայրում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Լորդ», «Բրիչ», «Մանկավարժ», «ՌԻսուցիչ» կեղծանուններով:

«Արարատ», 1914, № 4 («Իսահակ Հարությունյանի հոբելյանը»): «Նոր դպրոց», 1914, № 10 (ամբողջ համարը): «Խորհրդային դպրոց», 1939, № 37 («Իսահակ Հարությունյան»):

Ապրիլի 16. «Մեղուն» (№ 195) արևմտահայերեն հրատարակում է «Շուտ ըրեք, մազ մնաց» և Հակոբ Սահակ Գուրգենյանի «Հայ սրտի մը արձագանքը» բանաստեղծությունները: Հրատարակված է նաև մեկ «Հանելուկ»:

Ապրիլի 20. «Մասիսը» (№ 584) արևմտահայերեն հրատարակում է Վաղարշակ Պ. Պառնասյանի «ՌԻսումնական և գրագիտական տրամախոսությունք» հոդվածը: ՌԻՆԻ նաև հետևյալ ենթավերնագիրը. «Լորդ Պալմերստոն ի Գլազգո: Կատարյան ուման ընթացք: Հայ վարժարաններ: Մեծ մատենագրի մը չքավորությունը»:

Ապրիլի 22. «Պեգասյան թռչնիկը» (№ 8) արևմտահայերեն սկսում է հրատարակել Արմենակ Հայկունու «Ամուսնական (թե՛ ծնողք ինչ ընթացք ունենալու են յուրյանց զավակներուն հետ, նոցա ամուսնական պարտավորության նկատմամբ») ուսումնասիրությունը: Ավարտ՝ № 12 (հունիսի 22):

Ապրիլ. Եղեսիայում (ՌԻրֆա, Հար. Թուրքիա), Գրիգոր արքեպիսկոպոսի նախաձեռնությամբ, հիմնվում է կրթական-մշակութային «Ռուբինյան ընկերությունը»: Վերջինս գոյություն ունեցավ մինչև 1890-ական թվականները:

«Հանդես ամսօրյա», 1962, № 1-4 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Ապրիլի 23. Կարինում (Արևել. Թուրքիա) ծնվեց պատմաբան-բանասեր, լեզվագետ, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Հակոբ Տիրոյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1881 թ., վախճ. 1933 թ. հուլիսի 29-ին, Բուդապեշտում:

«Բազմավեպ», 1933, № 11-12 («Հանդես հոգվո Հակոբ Տիրոյանի»):

Ապրիլի 30. «Մեղուն» (№ 197) արևմտահայերեն հրատարակում է «Ամեն Արիստարքոսունի յուր Զոհիլոս» հոդվածը և Թիֆլիսի բարբառով՝ «Ի Ռուսիա» բանաստեղծությունը:

Ապրիլի 30. «Մեղու Հայաստանին» (№ 12) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Պալասանյանի «Ղևոնդ երեց և ընդհանուր տեսություն Հայաստանի գրականության և պատմության վրա» գրախոսականը: Որոշ ընդհատումներով, շարունակվում է մինչև № 22 (հուլիսի 13) և մնում անավարտ:

Մայիսի 8. «Պեգասյան թռչնիկը» (№ 9), Խ. Թերքանյանի՝ իտալերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ֆրանչեսկո Սոավյեի «Կեսար և Էդուարդ» նովելը:

Մայիսի 11. «Մեղու Հայաստանին» (№ 13), ռուսերեն բնագրից թիֆլիսահայ բարբառով կատարված թարգմանությամբ, հրատարակում է Ալ. Պուշկինի «Ձրգնուրսի կընիկը» (ի՛մա. «Ոսկի ձկնիկ») հեքիաթը և Գևորգ Տեր-Աղեքսանդրյանցի թարգմանությամբ՝ Ի. Կռիլովի «Կատուն ու բլբուլը» առակը:

Մայիսի 14. «Մեղուն» (№ 199) արևմտահայերեն հրատարակում է «Թափառական հրեա» հոդված-գրախոսականը: Գրախոսված է նաև Էոժեն Սյուի այդ վեպի՝ Կարապետ Փանոսյանի կատարած հայաստաո թուրքերեն թարգմանությունը: Վեպը և թարգմանությունը բարձր են գնահատվել:

Մայիսի 18. «Մասիսը» (№ 588) արևմտահայերեն հրատարակում է Վաղարշակ Պ. Պառնասյանի «Թշվառք. վեպ Վիկտոր Հյուգոյի» գրախոսականը:

Մայիսի 18. «Արշալույս արարատյանը» (№ 701) արևմտահայերեն հրատարակում է Արամ Կարապետ Տետեյանի «Թատերական ներկայացումնք ի Զմյուռնիա» գրախոսականը: Ավարտ՝ № 705 (հուլիսի 13): Վերլուծված են «Լուկրեցիա Բորջիա», «Մեծն Ներսես», «Ֆրանչեսկա դա Բիմինի», «Մխիթար դյուցազն», «Դոն սեզար դը Բազան» և այլ ներկայացումներ:

Մայիսի 21. «Մեղուն» (№ 200) արևմտահայերեն հրատարակում է Կ. Կյուրճյանի «Նվագ երրորդ տարեդարձի ազգային սահմանադրության» բանաստեղծությունը:

Մայիս. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 5) Բայազեդի բարբառով հրատարակում է Սենեքերիմ Արծրունու «Նոր Բայազիդու գաղթական մշեցվոց նշանդրեքն ու հարսանիքը» դրաման:

Մայիս. «Բազմավեպը» (№ 5), Սամվել Կայսերյանի (հետագայում՝ Գանթարյան) իտալերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Բարդուղիմեոս (ի՛մա. Բենեդեկտո) Սեստինիի «Գարուն (գեղօնք)» բանաստեղծությունը:

Մայիսի 25. «Մասիսը» (№ 589), անգլերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Ալիքս Թհորն» պատմվածքը: Ավարտ՝ № 593 (հունիսի 22):

Հունիսի 4. «Մեղուն» (№ 202) արևմտահայերեն սկսում է հրատարակել Թադևոս Միհրդատյանցի «Մեր հրատարակած «Նկարագիր աղետից Երուսաղեմի» մակագրով գրքին վրայոք մինչև ցարդ եղած դատաքննությանց կամ լավ ևս անտեղի բարբանջմանց, և հատկապես «Երևակ» հանդիսի միջոցավ հրատարակված քննադատական հոդվածին դեմ մեր ընդհանուր պատասխանը» խորագիրը կրող հոդվածը: Շարունակվում է մինչև հունիսի 18-ը (№ 204) և մնում է անավարտ:

Հոդվածագիրը բանավիճում է «Մասիս», «Մեր», «Մեճմուսջիաս» (ի՛մա. «Շեփոր այգաբացի») պարբերականներում իր՝ վերոհիշյալ խորագիրը կրող գրքի (տե՛ս ներկա հատորը, 1860 թ.) առթիվ հրատարակված գրախոսականների հետ, հատկապես անդրադառնալով Չամուռճյանին ու նրա «Երևակին»:

Հունիսի առաջին կես. «Մասյաց աղավնին» (№ 11), «Մեսրոպ Դավթյան Թաղիադյանց և նորա մեկ առաջարկությունը» խորագրի ներքո, հրատարակում է Թաղիադյանի «Թուղթ երևանցիներին» ուղերձը (տե՛ս՝ Ընտիր էջեր հայ գրականության, Երևան, 1946, էջ 327-329):

Հունիսի առաջին կես. «Եվրոպան» (№ 11), բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Ամայի կղզին» վիպակը: Ավարտ՝ № 26 (դեկտեմբերի երկրորդ կես, հավելված):

Հունիսի 8. «Մասիսը» (№ 591) արևմտահայերեն հրատարակում է Վաղարշակ Պ. Պառնասյանի «Ուսումնական և գրագիտական տրամախոսությունք» հոդվածը: Ունի նաև «Բանաստեղծություն, Տ. Խորեն վարդապետ Գալֆայան: Վարդենիք: Քաղաքակրթություն և գրականություն: Սանդուխտ, ողբերգություն Թովմաս Թերգյանի» ենթավերնագիրը:

Հունիսի 10. Թիֆլիսում, Ս. Նադիրյանցի, Ա. Խոջայանցի և Պերճ Պոռոշյանցի ջանքերով, Եղիսաբեթ Հովհաննիսյանցի տեսչությամբ, իր գոյությունն է սկսում տեղի «Գայանյան օրհորդաց ուսումնարանը»: Ավանդվում էին հայոց և ռուսաց լեզուներ, կրոն, հայոց պատմություն, թվաբանություն և կարուձև: Որոշ ընդհատումներով ուսումնարանը գոյություն ունեցավ մինչև 1908 թ.:

«Մեղու Հայաստանի», 1864, № 8 («Գայանյան օրհորդաց ուսումնարան Թիֆլիսումը»), 1865, № 20 («Ազգ»), «Մշակ», 1908, № 85 («Գայանյան օրհորդաց դպրոցը»), № 266 («Գայանյան օրհորդաց դպրոցի վիճակը»:

Հունիսի 15. Եկատերինոդարում (այժմ՝ Կրասնոդար), Համբարձում Իփեկյանցի նախաձեռնությամբ, հիմնվում է հայկական արական դպրոց, որտեղ ավանդվում էին հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներ, կրոնագիտություն, Ս. գրոց պատմություն, թվաբանություն, ընդհանուր աշխարհագրություն, պատմություն, գեղագիտություն, նկարչություն և երգեցողություն: Նույն թվականին դպրոցն ունենում է իր «Ընթերցանության թանգարանը» (իմա՝ ընթերցարան), շուրջ 500 անուն գրքով: Դպրոցը ծաղկուն ժամանակ ուներ 200 սովորող, և 1913 թ. դեռ գոյություն ուներ:

«Մեղու Հայաստանի», 1864, № 22 («Ազգային»), «Մշակ», 1913, № 287 («Բաց նամակ Գրիգոր Չալխուշյանին»):

Հունիս. «Բազմավեպը» (№ 6), Սամվել Կայսերյանի (հետագայում՝ Գանթարյան) իտալերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Վիչենցո Մոնտիի «Առաւօտ» բանաստեղծությունը:

Հունիսի 22. «Մեղու Հայաստանին» (№ 19) արևելահայերեն հրատարակում է Արգոսի (իմա՝ Ստեփաննոս Պալասանյան) «Վարդենիք, տաղերգյաց Խորեն Գալֆայան» գրախոսականը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Հունիսի 22. «Պեգասյան թռչնիկը» (№ 12) արևմտահայերեն հրատարակում է մի հոդված, որտեղ բացասաբար է գնահատվում «Արշալույս արարատյանի» և նրա խմբագիր Ղուկաս Պալդազարյանի գործունեությունը:

Հունիսի 25. «Մեղուն» (№ 205) արևմտահայերեն հրատարակում է «Գաղտնիք բնության... և Գերեզմանք երիտասարդաց» գրախոսականը:

Հուլիսի 2. «Մեղուն» (№ 206) արևմտահայերեն հրատարակում է Գալուստ Թիրաքյանի «Երգ տարեդարձի ազգային սահմանադրության ի Երզնկա» բանաստեղծությունը:

Հուլիս. «Բազմավեպը» (№ 7), Սամվել Կայսերյանի (հետագայում՝ Գանթարյան) գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Դեցիմուս Ավսոնիոսի «Վարդք» բանաստեղծությունը: Հրատարակված է նաև «Սեր որդիական, բացատրություն զգացմանս ի հինսն» արևմտահայերեն հոդվածաշարը: Որոշ ընդհատումներով շարունակվում է մինչև 1865 թ. փետրվար (№ 2):

Հուլիսի 6. «Մեղու Հայաստանին» (№ 21), ռուսերեն բնագրից կատարված արևելահայերեն ազատ թարգմանությամբ, հրատարակում է Իվան Կոնյովի «Բադեր» առակը: Տպագրված է նաև «Երեք մեծ աքլոր» երգիծական բանաստեղծությունը:

Հուլիս. Եդեսիայում (Ուրֆա, Հար. Թուրքիա), Հակոբ Արևյանի և Գևորգ Աբուհայաթյանի ջանքերով, հիմնվում է կրթական-մշակութային «Լուսավորչական ընկերությունը»: Վերջինս ուներ ավելի քան 300 անդամ և իր առջև նպատակ էր դնում «Հայոց զավակունքը կարդացնել, անոնց կարդացած գրքերը ձրի առնել... աղքատաց ալ բաժին անել»: «Լուսավորչական ընկերությունը» գոյություն ունեցավ մինչև 1880-ական թվականները:

«Հանդես ամսօրյա», 1962, № 1-4 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Հուլիսի 6. «Մասիսը» (№ 595) արևմտահայերեն հրատարակում է Վաղարշակ Պ. Պառնասյանի «Ռիտունական և գրագիտական տրամախոսությունք» հոդվածը: Ունի նաև հետևյալ ենթավերնագիրը. «Նոր գյուտեր և հին ավանդություններ: Գիտության փափագը: Ճանապարհորդություն: Նեղոսի ակունքը: Բազմություն աշխարհաց: Գեղարվեստք: Հորաս Վերնե: Վիկտոր Հյուգո առ Լամարթին»:

Հուլիսի 6. «Ժամանակ» հանդեսը (№ 14) արևմտահայերեն հրատարակում է Մկրտիչ Պեշկոբաշյանի «Ի վերահաստատություն ազգային սահմանադրության (երգ)» բանաստեղծությունը:

Այս բանաստեղծությունը Պեշկոբաշյանի՝ մեզ հայտնի ոչ մի ժողովածվում չի գետեղված: Ուրիշ մանրամասնություններ ճշտել չենք կարողացել:

Հուլիսի 21. Սուրամիում (Գորու գավառ, Վրացական ՍՍՀ), Հովսեփի քահանա Առյուծյանի ջանքերով և Ջումշուդ Դավթյանի սատարմամբ, տեղի հայկական եկեղեցուն կից բացվում է արական երեքդասյա դպրոց: Այն սկզբում ուներ 35 աշակերտ, ավանդվում էր հայոց լեզու, գրականություն, թվաբանություն և կրոն: 1890-ական թվականներից դպրոցը դառնում է երկսեռ և երկդասյա և 1920-ական թվականներին դադարում է գոյություն ունենալ:

«Մեղու Հայաստանի», 1868, № 27 («Ազգային»): 1873, № 39 («Սուրամից հաղորդում են...»): «Մշակ», 1913, № 155 («Տեղեկություններ գավառից»), № 160 («Սուրամի դպրոցի հոբելյանը»):

Հուլիսի 23. «Մեղուն» (№ 209), արտատպելով Հնդկաստանի «Եղբայրասերից», հրատարակում է Մ. Թաղիադյանի «Առակ» («Առակ ազգաց հասարակեալ...») գրաքար քանաստեղծությունը:

Թաղիադյանի՝ մեզ հայտնի ոչ մի ժողովածվում այս քանաստեղծությունը չի գետեղված: Այս կապակցությամբ այլ մանրամասներ ճշտել չի հաջողվել:

Հուլիսի 27. «Մեղու Հայաստանին» (№ 24), ֆրանսերեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Ամայի կղզի (իսկական քրիստոնեական կենցաղավարություն)» պատմվածքը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Հուլիսի 27. «Մասիսը» (№ 598) արևմտահայերեն հրատարակում է Կարապետ ՌԻթուջյանի «Խորհուրդ գաղտնի ընկերությանց» գրախոսականը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Հուլիսի 30. «Մեղուն» (№ 210) ժողովրդական լեզվով հրատարակում է Սահակի (աշուղ?) «Հաղթություն» բանաստեղծությունը և, արտատպելով Կակաթայի «Եղբայրասերից», արևմտահայերեն հոդված Մ. Նալբանդյանի հնդկաստանյան գործունեության մասին:

Օգոստոս. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 8) արևելահայերեն հրատարակում է Մանվել Գյուլգադյանցի «Մանկասար կամ պատկեր տխմար մարդույն» և «Շահապիվանի ծեր հովիվն» բանաստեղծությունները:

Օգոստոսի 10. «Արշալույս արարատյանը» (№ 707), անգլերենից կատարված գրաքար թարգմանությամբ, հրատարակում է «Բեն Ալի. արևելյան վեպ» պատմվածքը:

Օգոստոս. «Բազմավեպը» (№ 8), Սամվել Կայսերյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալֆոնսու Լամարթինի «Խանդ ոգւոյ» բանաստեղծությունը:

Կայսերյանի՝ նույն սկզբունքով Լամարթինից կատարած թարգմանությունները հետագայում հրատարակվել են հետևյալ հաջորդականությամբ. «Օոնց Պայեայ» (№ 9, սեպտեմբեր), «Իմաստասիրութիւն (առ մարկիզն Մեզոնֆորեայ)» (№ 10, հոկտեմբեր), «Հովիւ և ձրկնորս» (№ 11, նոյեմբեր): «Որ էնն աստուած» (1864, № 1, հունվար), «Քնարական նուագք Սաուդայ» (№ 3, մարտ): «Հաւատք» (1865, №3, մարտ) և այլն:

Օգոստոսի 25. Աստրախանում ծնվեց լրագրող (հայերեն և ռուսերեն լեզուներով), խմբագիր, գրող Հովակիմ Սոլովյանը: Վախճ. 1919 թ. Թիֆլիսում:

1907 թ. Թիֆլիսում հիմնել և Ատրպետի հետ մինչև 1908 թ. խմբագրել է «Ապագա» օրաթերթը: Ժամանակի պարբերականներում հանդես է եկել «Տապար», «Հաղթանակ», «Սոխակյան», «Սոխ.» կեղծանուններով:

Պետրոսյան Հ., Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ, Երևան, 1960, էջ 488-490:

Օգոստոսի 27. «Մեղուն» (№ 214) արևմտահայերեն հրատարակում է Արամ Բժշկյանի «Ջութակ Հայաստանի» պոեմը:

Օգոստոսի 30. Խարբերդում (Արևել. Թուրքիա) ծնվեց հողվածագիր, կրթական-մշակութային գործիչ Վահան Գրիգորի Թամզարյանը: Վախճ. 1925 թ. հուլիսի 10-ին, Մետուենում (ԱՄՆ):

«Հայաստանի կոչնակ», 1925, № 30 («Մահ»), № 32 («Վերապատվելի Վահան Թամզարյան»): **Թեոդիկ**, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1926, էջ 731:

Օգոստոսի 31. «Ժամանակ» հանդեսը (№ 18) արևմտահայերեն հրատարակում է Ստեփան Փափազյանի «Պարոն Հայկունին և յուր ճերմակը (իմա՛. «Ճերմակ, կամ պարոն Ս. Փափազյան և յուր ժամանակը» տե՛ս ստորև, ներկա թվականի տակ – Ս.Շ.» գրախոսականը: Ավարտ՝ № 20 (սեպտեմբերի 28):

Օգոստոսի 31. «Մեղու Հայաստանին» (№ 29) արևելահայերեն հրատարակում է Գարեգին Սրվանձոյանցի «Հանդես հակառակությանց հայոց գրաբար և աշխարհաբար լեզվաց» ստեղծագործությունը:

Սեպտեմբերի 3. «Մեղուն» (№ 215) արևմտահայերեն հրատարակում է Աբրահամ Այվազյանի «Ուհերձ առ Խրիմյան Հայրիկն» բանաստեղծությունը:

Սեպտեմբերի առաջին կես. «Մասյաց աղավնին» (№ 17) աշխարհաբար հրատարակում է Վրթանես վարդապետի «Ոմն մեծատուն ուներ քարոզգիրք...» բանաստեղծությունը:

«Ժողովածու պատմագրքիս գրությունն եղած է ի Նոր Նախիջևան, համի տեառն 1787, ձեռամբ Ավետիքյան Մարտիրոս քահանայի Ս. Համբարձման եկեղեցւոյ»:

Սեպտեմբերի 14. «Մեղու Հայաստանին» (№ 31) արևելահայերեն հրատարակում է Խաչատուր Քալանթարյանցի «Մի քանի խորհրդածություններ և ցուցմունք Կովկասյան և այսկույս Կովկասյան հայոց այժմյան լուսավորության վրա» հոդվածը և «Թիֆլիզեցի ուսանողացուի բերանից» բանաստեղծությունը: Փոքրիկ վերջաբանով վերջինը հրատարակության է ներկայացրել Գևորգ Տեր-Աղեքսանդրյանցը:

Սեպտեմբեր. «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 9) արևելահայերեն հրատարակում է Եղիշե Մեծատունյանի «Պանդուխտ հայկազն (այրի մոր մը օրորոց)», Նատալիա Միրզոյանի «Ողջույն ծնողաց, ավուր տոնախմբության զատկին» և գրաբար՝ Առաքել Նալբանդյանի «Պատանեակ մայր և մահ» բանաստեղծությունները:

Սեպտեմբերի 16. Հալեպում (Սիրիա) ծնվեց արձակագիր, լրագրող, թարգմանիչ (հայերենից՝ թուրքերեն, գրաբարից՝ աշխարհաբար), խմբագիր Միսաք Գոչունյանը: Վախճ. 1913 թ. մայիսի 15-ին, Պոլսում:

«Անուշավան» կեղծանունով հանդես էր գալիս «Նոր-Դարում», «Քասիմ»-ով՝ Ժամանակի այլ պարբերականներում: 1901-ից խմբագրել է «Մանգումյեի էֆքյար» (իմա՝ «Մտածումների շարք») հայաստա թուրքերեն պարբերականը, 1908-ին Պոլսում հիմնադրել և մինչև մահ խմբագրել է «Ժամանակ» օրաթերթը:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1912, էջ 380-382, 1914, էջ 395: «Հանդես ամսօրյա», 1913, № 7 («Միսաք Գոչունյան»): «Բյուզանդիոն», 1913, № 5044 (մայիսի 15), № 5045 (մայիսի 16), № 5047 (մայիսի 18):

Սեպտեմբերի 26. Պոլսում ծնվեց բանաստեղծ, արձակագիր, գրական-մշակութային գործիչ, թարգմանչուհի (ֆրանսերենից՝ հայերեն) Սիպիլը (Զապել Հովհաննես Խանջյան, ապա՝ Զապել Տոնելյան, որից հետո՝ Զապել Ասատուր): Վախճ. 1934 թ. հունիսի 19-ին, իր ծննդավայրում:

«Հայ Աստրեա», «Անահիտ», «Օր. Ալիս» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Միայիլ (Զապել Ասատուր), Երկեր, կազմեց Լ. Ա. Գալստյան, Երևան, 1965, 452 էջ: Հայ նոր գրականության պատմություն, հ. 4, Երևան, 1972, էջ 691-695:

Հոկտեմբերի 1. Տրապիզոնում (Արևել. Թուրքիա) ծնվեց բնանկարիչ, մշակութային գործիչ Արշակ Ֆեթվաձյանը: Վախճ. 1947 թ. հոկտեմբերի 7-ին, Մետֆորդում (ԱՄՆ):

«Բազմավեպ», 1948, № 3-4 («Արշակ Ֆեթվաձյան և Ղևոնդ Ալիշան»): «Արարատ», 1947, № 11-12 («Մահ Արշակ Ֆեթվաձյանի»), 1948, № 1-2 («Արշակ Ֆեթվաձյան»):

Հոկտեմբեր. «Կոունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 10) գրաբար հրատարակում է Աբրահամ Փափազյանի «Ամենայն ինչ ընդունայն է» բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 23. Թիֆլիսի քաղաքային թատրոնում հայ դերասանների խումբը Գևորգ Չմշկյանի ղեկավարությամբ, առաջին անգամ բեմադրում է Գաբրիել Սունդուկյանի «Գիշիրվան սաբրը իւեր է» կատակերգությունը: Նույնը՝ Վաստ Աբաշիձեի վրացերեն թարգմանությամբ, 1883 թ. հոկտեմբերի 20-ին:

Սունդուկյան Գ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Երևան, 1951, էջ 459-464:

Նոյեմբերի 1. «Ծաղիկը» (№ 63), Գրիգոր Չիլինկիրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն հատվածաբար թարգմանությամբ ու թարգմանչի առաջաբանով, սկսում է հրատարակել Վիկտոր Հյուգոյի «Թշվառները»:

Նոյեմբեր. Թիֆլիսում (Բերթեհեմ արվարձանի «Ս. Աստվածածին» եկեղեցում), Վարդան Արշակունու սատարմամբ և Միքայել Տեր-Գրիգորյանցի տեսչությամբ, իր գոյությունն է սկսում «Մարիամյան օրիորդաց ուսումնարանը», որտեղ սովորում էին շուրջ 40 աշակերտուհիներ: Ավանդվում էր հայոց և ռուսաց լեզուներ, կրոնագիտություն, եկեղեցական երաժշտություն, ձեռագործ: «Մարիամյան օրիորդաց ուսումնարանը» դադարեց 1872 թ. կեսերին:

«Մեղու Հայաստանի», 1861, № 30 («Գերապատիվ խմբագիր»), № 39 («Հայտարարություն»), 1864 թ., № 8 («Գայանյան... ուսումնարան Թիֆլիսում»), 1866, № 45 («Հոփսիսիան օրիորդաց ուսումնարան»), 1870, № 15 («Մարիամյան ուսումնարան»), 1875, № 14 («Թիֆլիսից...»):

Նոյեմբերի առաջին կես. «Եվրոպան» (№ 21), արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Մավրիտանիայի իմաստնույն մագաղաթը» պատմվածքը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Նոյեմբեր. «Կոունկ Հայոց աշխարհին» ամսագիրը (№ 11) գրաբար հրատարակում է Սամվել Գյուլգադյանի «Առ մայրն իմ... Հայաստան» բանաստեղծությունը:

Նոյեմբերի 23. «Համբավաբեր Ռուսիոն» (№ 52) գերմաներեն բնագրից կատարված աշխարհաբար թարգմանությամբ (թարգմանիչ՝ Գ.Խ.) հրատարակում է «Ստրկաց նավ» բանաստեղծությունը:

Նոյեմբերի երկրորդ կես. «Մասյաց աղավնին» (№ 22) գրաբար հրատարակում է Գրիգոր Մազիստրոսի «Յաղագս իսաչանշան գաւազանին, գոր ընծայեաց տեառն Պետրոսի, հայոց կաթողիկոսի...» չափածո գործը և անանուն բանաստեղծի «Պատմութիւն թագաւորաց օսմանցոց, շարադրեալ ոտանաւորաւ» բանաստեղծությունը:

Դեկտեմբերի 7. Պոլսում ծնվեց բնագետ, աստվածաբան-բանասեր, հոդվածագիր Պողոս Գաֆթանյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1884 թ. ապրիլի 13-ից, 1900-ական թվականներին հրաժարվել էր միաբանությունից: Վախճ. 1920 (?) թ. ԱՄՆ-ում:

Մխիթարյան հոբելյան, Վենետիկ, 1901, էջ 226: **Պոտոլոբյան Մ.**, Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 487:

Դեկտեմբերի 7. «Մեղու Հայաստանին» (№ 43) արևելահայերեն հրատարակում է Գևորգ Տեր-Աղեքսանդրյանցի «Մեր Թիֆլիսի թեատրը» թատերական գրախոսությունը և Վահագն Պատկանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն չափածո թարգմանությամբ, Վիկտոր Հյուգոյի «Վարձատրություն առաքինության» բանաստեղծությունը:

Գ. Տեր-Աղեքսանդրյանցն անդրադարձել է հոկտեմբերից դեկտեմբեր ամիսների ընթացքում Թիֆլիսում բեմադրված՝ Ն. Փուլինյանի «Դալալ Ղազո» և «Հազար թումանոց կաբա», Հ. Տեր-Գրիգորյանի «Ժլատ», Գ. Սունդուկյանի «Գիշիրվան սաբրը խեր է» գործերին, շարադրել է համառոտ բովանդակությունները և մեկերկու դիտողություն անելով հանդերձ, նրանց բարձր է գնահատել: Բարձր է գնահատված նաև այդ գործերը ներկայացնող դերասանների (Մ. Ամրիկյան, Գ. Չմշկյան, Ա. Սուքիասյան, Ս. Մատինյան, Ն. Ղազարյան և այլն) խաղը:

Դեկտեմբերի 10. «Ծաղիկը» (№ 67), Գ.Պ.-ի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Սոլոմոն Գեսների «Երգ սիրո (հովիվ և հովվուհի)» բանաստեղծությունը և Գրիգոր Չիլինկիրյանի «Ազգային երես-

փոխանություն և հայ օրագրությունը» հրապարակախոսական հոդվածը: Ավարտ՝
№70 (հունվարի 10):

Դեկտեմբերի 12. Հալեպում (Սիրիա) ծնվեց գրական-մշակութային գործիչ, բանասեր, ար-
ձակագիր, խմբագիր Վահան Մ. Քյուրքճյանը:

1886 թ. Պոլսում հիմնել և մեկ տարի խմբագրել է «Մենտոր» կիսամյա հայա-
տառ թուրքերեն թերթը: 1901 թ. Բոստոնում հիմնադրել և մինչև 1904 թ. խմբա-
գրել է «Կոչնակ Հայաստանի» շաբաթաթերթը: 1904 թ. Կահիրեում հիմնադրել և
մինչև 1912 թ. խմբագրել է «Լուսաբեր» երկօրյա լրագիրը (1908 թվականից՝
«Լուսաբեր-արև»):

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1925, էջ 343-346: «Հայաստանի կոչնակ», 1953, № 41
(«Վահան Քյուրքճյան»):

Դեկտեմբերի 16. Շուշիում (Լեռնային Ղարաբաղ) ծնվեց նկարիչ, մշակութային գործիչ,
լրագրող, ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ (1938 թ.) Ստեփան Մելիքսեթի Աղաջանյանը:
Վախճ. 1940 թ. դեկտեմբերի 13-ին, Երևանում:

Մարտիկյան Ե., Ստեփան Աղաջանյան, Երևան, 1956, 185 էջ: **Պարսամյան Ռ.**, Ստեփան Աղա-
ջանյան, Երևան, 1963, 40 էջ:

Դեկտեմբերի 17. «Մեղուն» (№ 225) գրաբար հրատարակում է Սահակ Խանճյանի «Ուղերձ
առ արժանապատիւ Մկրտիչ վարդապետ Խրիմեան» ներբողը:

Դեկտեմբերի 21. «Մեղու Հայաստանին» (№ 45) Թիֆլիսի բարբառով հրատարակում է
Գաբրիել Սունդուկյանի «Թիֆլիսու հայու թեատրի պարուն կառավարիչներուն»
ընդդիմախոսական հոդվածը (տե՛ս **Գ.Սունդուկյան**, Երկերի լիակատար ժողովածու,
հ. 3, Երևան, 1952, էջ 427-437):

Անդրադառնալով Գևորգ Տեր-Աղեքսանդրյանցի գրախոսականին (տե՛ս «Մեղու
Հայաստանի», 1863, դեկտեմբերի 7), Սունդուկյանը ոչ միայն չի ընդունում և կէտ
առ կէտ հերքում է իր «Գիշիրվան սաբրը խեր է» կատակերգության վերաբերյալ
արված դիտողությունները, այլև մեղադրում է հոդվածագրին, որ նա սխալ է
հասկացել իր՝ որպէս քննադատի անելիքներն ու պարտականությունները:

Դեկտեմբերի 28. «Մեղու Հայաստանին» (№ 46) արևելահայերեն հրատարակում է Հովհան-
նես Քուչուբեկյանցի «Առ իմ Ռոզենհեյմա» և «Վարդենիկ» բանաստեղծությունները
(թարգմանություններ ?):

Դեկտեմբերի 28. «Արշալույս արարատյանը» (№ 717) գրաքար հրատարակում է Գևորգ Խորասանճյանի «Ի շնորհաւորութիւն մեծահանդէս տոնախմբութեան... Պօղոս սրբազան պատրիարքի... ուղերձ» բանաստեղծությունը:

Դեկտեմբերի երկրորդ կես. «Եվրոպան» (№ 24), գերմաներեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Ազահին ժառանգները» պատմվածքը: Ավարտ՝ № 26 (դեկտեմբերի երկրորդ կես, հավելված):

-Պոլսում, Անտոն, Օնիկ և Սիմոն Պապայան եղբայրների նախաձեռնությամբ, ստեղծվում է թատերական-հասարակական «Հայկյան ընկերությունը»: Վերջինս սատարում է հայ թատերագիրներին, բեմադրում էր նրանց գործերը, որոնցից հիշարժան են Մ. Պեշիկթաշյանի ողբերգությունները: «Հայկյան ընկերությունը» գոյություն ունեցավ մինչև 1870-ական թվականները:

Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, Վիեննա, 1957, էջ 421-422:
Ստեփանյան Գ., Ռիթմիկ արևմտահայ թատրոնի պատմության, հ. 1, Երևան, 1962, էջ 174-175:

-Պոլսում, Նիկանովր Յուսկուլճյանի, Աբրահամ Այվազյանի, Արմենակ Հայկունու և այլոց ջանքերով, իր գոյությունն է սկսում «Արտավազոյան ընկերություն» թատերական կազմակերպությունը: Այն իր աշխատանքային ծրագիրն էր համարում թատերական գործեր թարգմանել տալն ու բեմադրելը: «Արտավազոյան ընկերությունը» 1870-ական թվականներին դեռ գոյություն ուներ:

Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, Վիեննա, 1957, էջ 600:

-Պոլսում ծնվեց մշակութային գործիչ, արձակագիր (մասնագիտությամբ՝ աստղաբաշխ) Լևոն Ասատուրյանը: Վախճ. Փարիզում:

Պոտոլյան Մ., Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 223:

-Պոլսում ծնվեց հոդվածագիր, թարգմանիչ (իտալերենից՝ հայերեն) Գրիգոր Մալխասյանը (նաև՝ Մալխաս): Վախճ. 1925 թ. մարտի 4-ին, Վենետիկում (Լիդո կղզի):

«Բազմավեպ», 1925, № 3 («Գրիգոր Մալխասի մահը»): **Թեոդիկ,** Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1926, էջ 728: **Ստեփանյան Գ.,** Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 267:

-Պոլսում ծնվեց գրականագետ-բանասեր, բանաստեղծ, բառարանագիր Սիմոն Գաբամաճյանը: Վախճ. 1942 թ. մարտի 29-ին, Փարիզում:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 203:

-Պոլսում ծնվեց բառարանագիր, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն), ֆրանսերեն դասագրքերի հեղինակ Կոմիտաս Արիստակեսի Ոսկյանը: Վախճ. 1911 թ. փետրվարի 20-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1912, էջ 351: «Հանդես ամսօրյա», 1953, № 7-9 («Ոսկյան գերդաստանը»):

-Թիֆլիսում ծնվեց դերասան, լրագրող (հայերեն և վրացերեն լեզուներով), թարգմանիչ (վրացերենից՝ հայերեն), դրամատուրգ Գեղեոն Բարսեղի Միրադյանը (նաև՝ Միրադյան-Գեղևանով): Վախճ. 1919 թ. հունվարի 27-ին:

«Մշակ», 1910, № 94 («Գեղեոն Միրադյանի հոբելյանը»), № 95 («Այսօրվա հոբելյարը», «Երախտագիտական ձայն»), № 97 («Գեղեոն Միրադյան-Գեղևանովի հոբելյանը»), 1919, № 22 («Գեղեոն Միրադյան») ... **Սուևդակյան Գ.**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1952, էջ 711:

-Թիֆլիսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, լրագրող, խմբագիր Կոստանդին Հովհաննեսի Խատիսյանը (մասնագիտությամբ՝ ճարտարապետ): Վախճ. 1913 թ. հոկտեմբերի 24-ին, Բաքվում (թաղում՝ հոկտեմբերի 28-ին, Թիֆլիսում):

1908 թ. Բաքվում հիմնել և խմբագրել է «Զանգ» գրական-գեղարվեստական շաբաթաթերթը, որից հետո, նույն թվականին՝ «Պատանեկան գրադարան» կիսամսյա հանդեսը:

«Մշակ», 1913, № 237 («Կոստանդին Խատիսյան»), № 239 («Կոստանդին Խատիսյան»):

-Խարբերդում ծնվեց մշակութային գործիչ, բանաստեղծ, արձակագիր Հովհաննես Փաշկյանը: Վախճ. 1946 թ. հուլիսի 11-ին, Բասսետինայում (ԱՄՆ):

«Հայաստանի կոչնակ», 1946, № 30 («Հովհ. Ս. Փաշկյանի մահը»), № 33 («Հովհաննես Ս. Փաշկյան»):

-Խարբերդում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, հուշագիր, բանահավաք Եղիշե Զիլինկիրյանը: Երուսաղեմի միաբանության անդամ 1886 թ., վախճ. 1929 թ. փետրվարի 7-ին, Երուսաղեմում:

Սկրտիչ Աղավունի, Միաբանք և այցելուք հայ Երուսաղեմի, Երուսաղեմ, 1929, էջ 126-127, 521, «Հայաստանի կոչնակ», 1929, № 11 («Հանգիստ Եղիշե եպիսկոպոս Զիլինկիրյանի»):

-Հանդամեջ գյուղում (այժմ՝ Օրդուբադի շրջան, Նախիջևանի ԻՍՍՀ) ծնվեց մշակութային գործիչ, թատերական քննադատ Ներսես Դավթյանը: Վախճ. 1903 թ. հոկտեմբերի 28-ին, Թիֆլիսում:

«Մշակ», 1903, № 238:

-Բուրսայում (Արևմտ. Թուրքիա) ծնվեց հայկաբան, լեզվագետ, թարգմանիչ (պարսկերենից, արաբերենից, թուրքերենից՝ հայերեն և ընդհակառակը), մանկավարժ Ստեփան Հարությունի Կուրտիկյանը: Վախճ. 1944 թ. հունվարի 25-ին, Պոլսում:

«Բազմավեպ», 1929, № 3 («Ստեփան էֆ. Կուրտիկյանի հոբելյանին առթիվ»), «Ընդարձակ տարեգիրք Ազգային հիվանդանոցի», Պոլիս, 1944, էջ 362-374:

-Ապուջեխ գյուղում (Ակնա գավառ) ծնվեց դրամատուրգ, հողվածագիր, մշակութային գործիչ Հմայակ Ազատյանը: Վախճ. 1934 թ. օգոստոսին, Կահիրեում:

«Հայաստանի կոչնակ», 1934, № 36 («Մահ Հմայակ Ազատյանի»), Տարեցույց ազգային հիվանդանոցի, Պոլիս, 1935, էջ 397:

-Պարտիզակում (Արևմտ. Թուրքիա) ծնվեց գրականագետ-բանասեր, լրագրող Մկրտիչ արքեպիսկոպոս Աղավնունին: Երուսաղեմի միաբանության անդամ 1921 թ.: Վախճ. 1941 թ. օգոստոսի 24-ին, Երուսաղեմում:

«Հայաստանի կոչնակ», 1942, № 9 («Մկրտիչ արքեպիս. Աղավնունի»), **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 72:

-Զեյթունում ծնվեց պատմաբան-բանասեր, լրագրող, կրթական-մշակութային գործիչ Հովհաննես Ահարոնյանը: Վախճ. 1941 թ. Մոնտեվիդեոյում (Ռիբուոլայ, Հարավային Ամերիկա):

Զեյթունի պատմագիրք, Բուենոս-Այրես, 1960, էջ 461-464:

-Բինկյան գյուղում (Ակնա գավառ) ծնվեց աստվածաբան-բանասեր, լրագրող, թարգմանիչ (թուրքերենից՝ հայերեն) Վարդան Կարապետի Արալանյանը (նաև՝ Ասլանյան): Եղեռնամահ՝ 1915 թ. Խարբերդում:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 228, «Հայաստանի կոչնակ», 1951, № 15 («Մոռացված դեմքեր»):

-Ղզլարում (Հյուսիսային Կովկաս, այժմ՝ Դաղստանի ԻՍՍՀ) ծնվեց թատերագետ, լրագրող, թարգմանիչ (գերմաներենից՝ հայերեն), խմբագիր Ալեքսանդր Թարխանյանը: Վախճ. 1903 թ. հուլիսի 29-ին, Բաքվում:

1893 թ. Թիֆլիսում հիմնադրել և մինչև 1905 թ. խմբագրել է «Թատրոն» վեցամսյա հանդեսը: «Լուսն», 1903, № 4 («Ալեքսանդր Թարխանյան»), **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 354:

-Թիֆլիսում (?) ծնվեց գրականագետ, քննադատ, թարգմանիչ (ռուսերենից և գերմաներենից՝ հայերեն) Գարեգին Խաչատուրի Ենգիբարյանը: Վախճ. 1920 թ.:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Նուշիրվան» և «Գ.Ա.» կեղծանուններով:

Ենգիբարյան Գ., Մատենախոսություն, Թիֆլիս, 1909: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ, Ա, էջ 302-303:

-Նոր-Նախիջևանում (?) ծնվեց լրագրող, բանասեր, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն) Մելքոն Դանագյոզյանը (հոգևորական աստիճան ստանալուց հետո՝ Մուշե վարդապետ): Վախճ. 1926 թ.:

«Մ.Վ.», «Մուշե վարդապետ», «Ոստանիկ», «Ռոստոմբեկ» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 275:

-Պոլսում (?) ծնվեց արձակագիր, բանաստեղծ, թարգմանիչ (ֆրանսերենից, իտալերենից՝ հայերեն) Հրանտ Ալատինը (սկզբնական շրջանում Հրանտ Պերպերյան): Վախճ. 1933 թ. հոկտեմբերի 28-ին, Կահիրեում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Վեհակրոն» և «Հրանտ Վեհակրոն» կեղծանուններով:

«Բազմավեպ», 1934, № 2-3 («Հրանտ Վեհակրոն»):

-Վենետիկում, Արսեն Բագրատունու՝ հունարեն և լատիներեն բնագրերից կատարած գրաբար թարգմանությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է «Ճաշակ հելլեն և լատին ճարտարիսուսութեան» ժողովածուն: 363 էջ:

-Վենետիկում, Գրիգոր Ճելայյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Պրոսպեր Մերիմեի «Աղավնի» վիպակը: 253 էջ:

Հատվածաբար հրատարակվում էր «Բազմավեպում», 1863 թ. ապրիլից (№ 4), մինչև 1864 թ. հոկտեմբեր (№ 10): Հայ ընթերցողներին սույն վիպակն ավելի հայտնի է «Կոլումբա» անվամբ:

-Վենետիկում, Էդուարդ Հյուրմյուզյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Ֆրանսուա Ֆենելոնի «Արկածք Տելեմաքայ» վեպը: 692 էջ:

- Պոլսում գրաքար հրատարակվում է Գասպար Ավագյանի (Բինկյանց) «Մաստ մոլութեանց» չափածո ստեղծագործությունը:
- Պոլսում, Հ. Նուրիջանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ժան-Պիեր Ֆլորիանի արձակ ստեղծագործությունների ժողովածուն, «Հովվերգությունք» խորագրով: Զետեղված են «Կալաթեա» և «Էսթելլա» պատմվածքները: 189 էջ:
- Պոլսում, Ռեթևոս Թադևոսյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Աբե դը Գրիլեոնի «Բարոյական մարդը կամ առաքինությունք և մոլորությունք» գիրքը: 122 էջ:
- Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Ստեփան Փափագյանի «Համառոտ աշխարհագրություն Հայաստանի» աշխատությունը: 215 էջ:
- Պոլսում գրաքար մեկնություններով հրատարակվում է Մատթեոս Այվատյանցի «Առաջնորդ քերականության հայերեն լեզվի» ուսումնական ձեռնարկը: 65 էջ:
- Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Խաչատուր ՌԻթուջյանի «Օգտակար խոսակցությունք ընտանյաց կառավարության վերաբերյալ» աշխատությունը («Մատենադարան ժողովրդյան» ընդհանուր խորագրի ներքո): 60 էջ:

Հեղինակը ծրագրել էր վերոհիշյալ ընդհանուր խորագրի ներքո հրատարակել երեք գրքույկներ, նվիրված ընտանիքի և տնային տնտեսության սկզբունքներին: Դրանցից, սակայն, հրատարակվել է միայն հիշատակված մեկը, այդ պատճառով էլ այն ունի «Հատոր առաջին» նշումը:
- Պոլսում, Անտոն Գարագաշյանի՝ իտալերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ալեքսանդր Մանձոնիի «Իլտեկոնտա» թատերգությունը: 112 էջ:
- Պոլսում, Կարապետ ՌԻթուջյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Օլիվյեր Գոլդսմիտի «Վեքֆիլդի երեցը» վեպը: 569 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Ներսես Մեզպուրյանի բանաստեղծությունների ժողովածուն «Նվեր մանկանց (ողջույնք շնորհավորության նոր տարվո և տոնախմբության)» խորագրով: 64 էջ:

Նույնը որոշ լրացումներով՝ 1865 թ., 76 էջ:

-Պոլսում, Հովհաննես Անդրեասյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ և առաջաբանով, հրատարակվում է «Ֆութ և Մարգարիտ» թատերգությունը: 67 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Արմենակ Հայկունու «Գարնան ծաղիկներ կամ երիտասարդաց և օրիորդաց արդի վիճակը» գիրքը: 56 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Արմենակ Հայկունու «Գաղտնիք բնության կամ սկզբունք մարդկային ծննդականության, Եվրոպիո իմաստասիրաց արդի դրության համեմատ» աշխատությունը: 70 էջ:

Նույնը՝ 1870 թ. (94 էջ) և 1895 թ. (92 էջ):

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Արմենակ Հայկունու «Գերեզմանք երիտասարդաց կամ տոփական հիվանդությունք» գիրքը: 38 էջ:

Նույնը՝ 1869 թ., 62 էջ, 1871 թ., 58 էջ, 1882 թ., 64 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Արմենակ Հայկունու «Ճերմակ կամ պարոն Ս. Փափագյան և յուր ժամանակը» գրքույկը: 24 էջ: (Այս գրքի մասին գրախոսականը տե՛ս վերևում, օգոստոսի 31)

-Պոլսում գրաբար և հայատառ տաճկերեն զուգահեռ բնագրերով, հրատարակվում է «Հանդես մուսայից. վեհափառ կայսեր վերադարձին և Ազգային սահմանադրության Գ. տարեդարձի հայերեն և տաճկերեն երգերը» խորագիրը կրող ժողովածուն: 32 էջ:

-Պոլսում, Աբիսողոմ Գարիայանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Լոքրուայի և Սորվանի «Բարի իրիկուն պարոն Բանթալոն» կատակերգությունը: 63 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Հովսեփ Վարդանյանի «Սահմանադրական ճշմարտություններ ու անոնց պարտավորությունները» աշխատությունը: 87 էջ:

-Պոլսում, Բարթոլոմեոս Մադաքյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Վիկտոր Հյուգոյի «Դատապարտյալի մը վերջին օրը» վիպակը: 128 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Ներսես Մեզպուրյանի «Սահմանադրություն և առաջին պատրիարք սահմանադրական» պոեմը: 19 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Աքլոր եղբայր կամ մանկան մը պատմությունը առածալից իմաստյուք» գրքույկը (հեղինակ՝ «Մ. վարդապետ»): 80 էջ:

Նույնը՝ 1866 թ. (70 էջ), 1868 թ. (96 էջ), 1887 թ. (72 էջ), ամեն անգամ որոշ լրացումներով:

-Պոլսում, ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Վիկտոր Հյուգոյի «Մատուռն գոթական» պատմվածքը: 58 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Սրապիոն Մանասյանի «Պամելա կամ բարեկենդանի գիշերները» կատակերգությունը: 52 էջ:

Դատելով գործող անձանց անուններից, ինչպես նաև գործողության վայրերից (Փարիզ, Մարսել) պետք է ենթադրել, որ սույն կատակերգությունը թարգմանված է ֆրանսերենից: Այլ մանրամասներ ճշտել չենք կարողացել:

-Պոլսում, Հովհաննես Տերոյենցի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն համառոտ թարգմանությամբ, հրատարակվում է Ֆիլիպ Ժերար արբայի «Խորհուրդ գաղտնի ընկերությանց» աշխատությունը: 251 էջ: Հատվածաբար հրատարակվում էր «Երևակ» հանդեսում:

-Թիֆլիսում արևելահայերեն հրատարակվում է Պերճ Պոռոջյանի «Աղասի (ազգային ողբերգություն)» թատերական ստեղծագործությունը: 75 էջ:

Հատվածաբար հրատարակվում էր «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագրում, 1863 թ. մարտից (N° 3) մինչև հունիսը (N° 6) ներառյալ (տե՛ս ներկա հատորը, 1863 թ. մարտ): Այդ թվականին էլ բեմադրվել է հեղինակի մասնակցությամբ, որը կատարել է գլխավոր հերոսի՝ Աղասու դերը: Ներկայացվել է նաև 1879 թ. ապրիլի 3-ին, Երևանի Գայանյան հայոց օրիորդաց դպրոցի դահլիճում:

-Թիֆլիսում, արևելահայերեն տրվող բացատրություններով, հրատարակվում է Կարապետ Քոչարյանցի «Տանու բժիշկ» ձեռնարկը: 142 էջ:

Լրիվ վերնագիրն է. «Տանու բժիշկ կամ հասարակաց բժշկարան, ամենի համար հասկանալի լեզվով գրված և զանազան սովորական հիվանդությանց դեմ պատրաստի և դյուրին միջոցներ և դեղեր առաջ բերված. վերջիցը դրված է բառարան դեղորեից, հայերեն, տաճկերեն, արաբերեն և լատիներեն, հայոց գրով»:

-Թիֆլիսում, գրաբար մեկնաբանություններով, հրատարակվում է Դանիել Շահնագարյանցի (Տոսպեցի) «Մայր ցուցակ ձեռագիր մատենից սրբոյ աթոռոյն Էջմիածնի» տեղեկատու աշխատությունը: Այն հրատարակության է պատրաստել Հակոբ Կարենյանցը: 230 էջ:

-Թիֆլիսում աշխարհաբար հրատարակվում է Կարապետ Շահնագարյանի «Ծրագիր պատմություն Հայաստան աշխարհին և տեսություն հին Հայաստանի և նրա այժմյան վիճակին վրա» աշխատությունը: 112 էջ:

Հանդիսանում է նույն հեղինակի՝ ֆրանսերեն գրված համանուն աշխատության թարգմանությունը, կատարված իր՝ հեղինակի կողմից: Նախապես հրատարակվում էր «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագրի 1863 թ. № 1 (հունվար), № 2 (փետրվար), № 7 (հուլիս), № 8 (օգոստոս) համարներում:

-Թիֆլիսում, Ստեփաննոս Պալասանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ ու ծանոթագրություններով, հրատարակվում է Վիկտոր Լանգլուայի «Մովսես Խորենացի և նրա պատմությունը» աշխատությունը: 64 էջ:

-Պետերբուրգում աշխարհաբար հրատարակվում է «Վերջը կիմանաք»-ի (իմա՛. Գաբրիել Պատկանյան) «Միջնավեպք հայոց ազգի պատմութենից» աշխատությունը: 76 էջ: Այն բաղկացած է «Հայերի Երասխ գետեն անցնելը» և «Նոր-Նախիջևանա հիմնարկությունը և Տավրիկյան հայերը» խորագրերն ունեցող երկու ինքնուրույն գործերից:

-Պետերբուրգում աշխարհաբար հրատարակվում է «Աշխատասիրյաց վերջը կիմանաք»-ի (իմա՛. Գաբրիել Պատկանյան) «Հայոց ազգի պատմությունը» աշխատությունը: 282 էջ:

-Պետերբուրգում արևելահայերեն հրատարակվում է Ռափայել Պատկանյանի «Պատմություն մեծին Պետրոսի, կայսր ամենայն Ռուսաց» աշխատությունը: 134 էջ:

- Պետերբուրգում հրատարակվում է Գաբրիել Պատկանյանի «Քաջ Վարդան Մամիկոնյան (պատմական բանաստեղծություն)» պոեմը, 52 էջ: Հատվածաբար հրատարակվում էր «Հյուսիս» շաբաթաթերթում:
- Զմյուռնիայում արևմտահայերեն հրատարակվում է Գրիգոր Օտյանի «Ճառեր և խոսքեր, քաղված ազգային ընդհանուր ժողովի ատենագրություններե» գրքույկը: 48 էջ: Չնայած այն ունի «Առաջին մաս» նշումը, սակայն հետագա մասերը չեն հրատարակվել:
- Զմյուռնիայում, Մեսրոպ Նուպարյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ժան Ռասինի «Դատասերք» կատակերգությունը: 33 էջ:
- Զմյուռնիայում արևմտահայերեն հրատարակվում է Արամ Կարապետ Տետեյանի չափածո և արձակ ստեղծագործությունների ժողովածուն, «ՌԻմպր գրասիրության» խորագրով: 128 էջ:
- Զմյուռնիայում, Հայկ Հակոբ Տետեյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Վիկտոր Հյուգոյի «Անջելո» դրաման: 55 էջ:
- Զմյուռնիայում, Հայկ Հակոբ Տետեյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Էռժեն Սյուլի «Գաղտնիք Փարիզու» թատերգությունը: 120 էջ:
- Թեոդոսիայում հրատարակվում է Խորեն Գալֆայանի բանաստեղծությունների գրաբար ժողովածուն՝ «Վարդենիք» խորագրով: 349 էջ:
- Թեոդոսիայում արևմտահայերեն հրատարակվում է Գաբրիել Այվազյանի (Այվազովսկու) «Մխիթարյանց երազահյուս մեկ կարծյացը քննություն» աշխատությունը: 3 էջ:

Այվազովսկին քննում է Վենետիկի Մխիթարյան միաբանության հասարակական-հայագիտական գործունեությունը և ցույց տալիս, որ վերջիններս ավելի ու ավելի են հեռանում բուն հայկական իրականությունից, հակվելով դեպի Հռոմն ու պապականությունը: Այս հենքի վրա քննադատված են մխիթարյան մտավորականները և մանավանդ Ղևոնդ Ալիշանը:

-Թեոդոսիայում արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով հրատարակվում է Ամբրոսիոս Գալֆայանի «Առձեռն բառգիրք ի տաճիկ լեզուէ ի հայ» բառարանը (տաճկերեն բառերը բերված են հայերեն տառադարձությամբ): 245 էջ:

Գրաբար առաջաբանի հեղինակ՝ Գաբրիել Այվազովսկի:

-Մոսկվայում, Մարտիրոս Միմոնյանցի աշխարհաբար թարգմանությամբ ու առաջաբանով, հրատարակվում է «Եղիշե վարդապետի պատմությունը Վարդանի և հայոց պատերազմի համար» գիրքը: Վերջում զետեղված է «Նույն Եղիշե վարդապետի խրատը միանձանց (վարդապետների) համար» ճառը: 257 էջ:

-Մոսկվայում, Մովսես Բուդաղյանցի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն արձակ թարգմանությամբ, հրատարակվում է Ժան Պիեր Ֆլորիանի «Վիլիելմ Թել կամ Հելվետիայի ազատությունը» գեղարվեստական ստեղծագործությունը: 87 էջ:

-Էջմիածնում աշխարհաբար հրատարակվում է Աբել Միխիթարյանի «Անուշավան» ասացյալ վիպասանության վրա Հակոբ Կարենյանցի «Մի քանի խոսքի» հերքումը» գրքույկը: 40 էջ:

Ընդդիմախոսական է, գրված Հակոբ Կարենյանցի «Մի քանի խոսք «Անուշավան» անվանյալ վիպասանության վրա» խորագիրը կրող գրախոսականի առիթով, որը հրատարակվել է «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագրի № 11-ում (նոյեմբեր. տե՛ս ներկա հատորը):

-Վիեննայում, ֆրանսերենից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Հեղինե, որք օրիորդ մը տառապանաց դպրոցին մեջ» վիպակը: 274 էջ:

-Կալկաթայում գրաբար հրատարակվում է «Արկածք տեառն Յովհաննու Խաչկեան խաչակիր աւագ քահանայի և ասպետի, յերկամեայ դժուարին դատին իւրում» աշխատությունը: Այն հրատարակության է պատրաստել Մ.Խ.Հովակիմյանը:

-Մարսելում, Տիմոթեոս Անեայանի արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Հ. Պեադուսի «Դստերք առաքինիք» բարոյական վեպը: 149 էջ:

Նույնը անփոփոխ՝ Պոլիս, 1877 թ., 144 էջ:

Սկիզբ. Շուշիում, Մարիամ Հախումյանցի սատարմամբ, հիմնվում է հայկական իգական դպրոց: Նույն թվականի փետրվարի 27-ին տեղի է ունենում դպրոցի պաշտոնական ճանաչումը և նրան տրվում է «Շուշու Մարիամյան օրիորդաց դպրոց» անվանումը: Սկսած 1900-ական թվականներից դպրոցն ունենում է նաև մեկ առանձին տղաների դասարան և մինչև 270 աշակերտ-աշակերտուհի: «Շուշու Մարիամյան օրիորդաց դպրոցը» հետագայում դարձավ երկդասյա և, մի քանի ընդմիջումներից հետո, վերջնականապես դադարեց 1919 թ. կեսերին:

«Մեղու Հայաստանի», 1864, № 11 («Ազգային»), № 14 («Ազգային»), 1865, № 17 («Պատվելի խմբագիր»), «Մշակ», 1911, № 208 («Շուշու Մարիամյան օրիորդաց դպրոցի շուրջը»), 1913, № 173 («Իմ այցը... Ջավեն վարդապետին»):

Հունվարի 6. Խարբերդում (Արևել. Թուրքիա) ծնվեց լեզվագետ, բանաստեղծ, դրամատուրգ, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Թադևոս Թումաճանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1887 թ. ապրիլի 10-ից: Վախճ. 1948 թ. մարտի 19-ին, Վենետիկում:

«Բազմավեպ», 1937, № 10-11 («Հիսնամյա հոբելյան... Թադևոսի Թումաճան»), 1948, № 5-6 («Հանգիստ հոգվո Թադևոս վարդապետի Թումաճան»):

Հունվարի 7. Արմավիրում (Հյուս. Կովկաս, Կրասնոդարի երկրամաս) ծնվեց գրականագետ-բանասեր, լրագրող (հայերեն և ռուսերեն լեզուներով), մանկավարժ Կարապետ Բարսեղի Կուսիկյանը: Վախճ. 1915 թ. դեկտեմբերի 12-ին, Մոսկվայում:

«Մշակ», 1915, № 277 («Կարապետ Կուսիկյան»), № 280 («Կարապետ Կուսիկյանի հիշատակին»), № 289 («Կարապետ Կուսիկյան»): **Իգնատյան Ա.**, Լազարյան ճեմարան, Երևան, 1969, 355 էջ: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 131:

Հունվարի 8. Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական) ծնվեց ազգագրագետ, ազգագիր-բանահավաք, խմբագիր Երվանդ Ալեքսանդրի Լալայանը: Վախճ. 1931 թ. փետրվարի 24-ին, Երևանում:

1895 թ. Շուշիում հիմնել և խմբագրել է «Ազգագրական հանդես» եռամսյա պարբերականը: 1896 թ. պարբերականը փոխադրելով Թիֆլիս, Լալայանը շարունակել է խմբագրել այն մինչև դադարելը՝ 1906 թ.:

Հարությունյան Շ., Սովետական Հայաստանը 40 տարում (տարեգրություն), Երևան, 1960, էջ 184:

Հունվարի 9. Տարոնում (Մուշ), Թադևոս Ատովմյանի ատենապետությամբ և Բենիամին Մերունու ատենադպրությամբ, իր գոյությունն է սկսում կրթական մշակութային «Բարեսիրաց ընկերությունը»: Այն գոյություն է ունեցել մինչև 1880 թ. դեկտեմբերը:

Հունվար. «Հյուսիսափայլը» (№ 1) արևելահայերեն սկսում է հրատարակել Ստեփաննոս Նազարյանցի «Ազգային մտածությունք» հրապարակախոսական հոդվածը (ավարտ՝ «Հյուսիսափայլ», № 3) և նույնի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, Պատվ ժաննետի «Ընտանեկան կյանք» մանկավարժական տրակտատը (ավարտ՝ հաջորդ համարում): Մանուկ Սաղաթյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն չափածո թարգմանությամբ, սկսում է հրատարակվել նաև Մ. Լերմոնտովի «Դեր (արևելյան վիպասանություն)» պոեմը (ավարտ՝ «Հյուսիսափայլ», № 3): Թարգմանությանը կցված առաջաբանում Նազարյանցը, Լերմոնտովի կյանքն ու գործը բնութագրելուց հետո, ներկայացնում է նրա «Մարգարե» բանաստեղծության արևելահայերեն չափածո թարգմանությունը (տե՛ս **Սաղյան Մ.**, Հյուսիսափայլի պոեզիան, էջ 148-149, 348-387):

Հունվարի 11. «Մեղու Հայաստանին» (№ 2) արևելահայերեն հրատարակում է Հովհաննես Քուչուրեկյանցի «Առաջին սիրո հարվածը» բանաստեղծությունը:

Հունվար. «Բազմավեպը» (№ 1) արևմտահայերեն հրատարակում է «Հերոդոտոս» հոդվածը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Հունվար. «Արծվի Վասպուրականը» (№ 1) գրաբար «Տաղաչափութին գերապատիւ Թօփուզեան Յակոբ եպիսկոպոսի, վանահոր Լիմ անապատայ» ընդհանուր խորագրի ներքո հրատարակում է մի բանաստեղծություն, որի քառյակների առաջին տառերը կազմում են հայկական այբուբենը: Հրատարակված է նաև Խորեն Խրիմյանի (Մկրտիչ Խրիմյանի եղբոր որդին) «Նոր տարի» բանաստեղծությունը:

Խորեն Խրիմյանի գործերը հետագայում հրատարակվել են հետևյալ հաջորդականությամբ. «Աստղիկն իմ սիրելի» (Անդ, № 3. մարտ), «Գիշեր կամ միջին դար» (Անդ, № 6, հունիս), «Խոսք Խորենայ Խորխոռունոյ ի դաշտն Շաւարշանայ», «Հայրենիք» (Անդ, № 7, հուլիս), «Առ գորովագութ հայրիկն մեր, կարոտ որդիական» (№ 8, օգոստոս), «Անբախտ կյանք իմ» («Մեղու», 1865, № 259, փետրվարի 26) և այլն:

Հունվարի 25. «Մեղու Հայաստանին» (№ 4), գերմաներեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ հրատարակում է Գրիմ եղբայրների «Երկայնակեցու-

թյուն» նովելը, իսկ հաջորդ համարում (№ 5, փետրվարի 1), Կատարինե Տեր-Միքայելյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած թարգմանությամբ, անհայտ հեղինակի «Բժժանք» պատմվածքը:

Հունվարի 28. Պարտիզակում (Արևմտ. Թուրքիա) ծնվեց բանասեր, պատմաբան, թարգմանիչ (գերմաներենից և իտալերենից՝ հայերեն), խմբագիր Հովհաննես Թորոսյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1880 թ. ապրիլի 5-ից, վախճ. 1940 թ. հուլիսի 8-ին, Ազոլոյում (Հս. Իտալիա):

1889-90 և 1896-98 թթ. խմբագրել է «Բազմավեպ» ամսագիրը:

«Բազմավեպ», 1933, № 2 («Հովհաննես Թորոսյանի քահանայության հիսնամյա հոբելյանը»), 1940 թ., № 4-7 («... վերջին պահուն...»), № 8-12 («Հանգիստ հոգվո Հովհաննես վարդապետի Թորոսյան...»):

Փետրվարի 1. Փարիզում, Ստեփան Ոսկանյանի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Արևմուտք (արձագանք Եվրոպայի լուսավորության)» արևմտահայերեն երկշաբաթաթերթը: 1864 թ. ընթացքում լույս տեսնելով ինը համար, իսկ 1865 թ.՝ երեք, «Արևմուտքը» այդ թվականի մարտին վերջնականապես դադարում է: Այս համարում (№1) «Ազգային» խորագրի ներքո հրատարակվում է Ոսկանյանի հոդվածը «Ազգային Սահմանադրության» մասին:

Փետրվարի 8. «Մեղու Հայաստանին» (№ 6), Քեթևան Տեր-Միքայելյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Բարի գործ» պատմվածքը: Ավարտ՝ հաջորդ համարում (№ 7, փետրվարի 15), որտեղ տպագրված է Հովհաննես Քուչուրեկյանցի «Քանի այսպես տարիներ» արևելահայերեն բանաստեղծությունը:

Փետրվարի սկիզբ. «Երևակը» (№ 7), բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Ժակմեն Գլես» վիպակը: Շարունակվում է մինչև տարվա վերջ:

Փետրվար. Պոլսում (Ռումելի-հիսար) իր գոյությունն է սկսում կրթական-դաստիարակչական «Մեսրոպյան» ընկերությունը: Նույն թվականի հուլիսին ընկերությունը հիմնում է երեկոյան դասընթացներ, որտեղ ավանդվում էր հայերեն, թվաբանություն, աշխարհագրություն և ֆրանսերեն: Ընկերությունը գոյություն ունեցավ մինչև 1881 թ.:

Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, Վիեննա, 1959, էջ 289-290:

Փետրվարի 10. «Ծաղիկը» (№ 73) արևմտահայերեն հրատարակում է Գրիգոր Զիլինկիրյանի «Հայ ժեզուիթ մը» հոդվածը: Վերջում ֆրանսերեն զետեղված է Վիկտոր Հյուգոյի «Ժեզուիթ» բանաստեղծությունը:

Փետրվար. «Արծվի Վասպուրականը» (№ 2) գրաբար «Տաղաչափութիւն գերապատիվ Թօփուզեան Յակոբ եպիսկոպոսի, վանահոր Լիմ անապատոյ» ընդհանուր խորագրի ներքո, հրատարակում է վերջինիս գրչին պատկանող «Առ երեխայն», «Առ տղան», «Առ մանուկ հասակն», «Առ պատանի հասակն», «Առ երիտասարդ հասակն» և «Առ այր լի կատարեալ հասակն» բանաստեղծությունները:

Փետրվարի 16. Կուտինայում (Քյոթահիա, Արևմտ. Թուրքիա) ծնվեց բանասեր-լեզվաբան, քերականագետ Պողոս Չաքարյանը: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ էր 1885 թ., վախճ. 1925 թ. հուլիսի 5-ին, Վիեննայում:

«Հանդես ամսօրյա», 1925, № 9-10 («Պողոս Չաքարյան»):

Փետրվար. «Հյուսիսափայլը» (№ 3) հրատարակում է Միքայել Նալբանդյանի «Ազգային թշվառություն» և Ստ. Նազարյանցի «Պատմություն կրթության նորագույն ժամանակի, մինչև սկիզբը 19-րդ դարու» հրապարակախոսական հոդվածները: Վերջինը՝ անավարտ:

Չնայած առաջին հոդվածն ունի «Ս. Նազարյանց» ստորագրությունը, բայց ապացուցված է, որ հեղինակը Միքայել Նալբանդյանն է (տե՛ս Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 3, Երևան, 1940, էջ 101-117, 466-472: **Ինճիկյան Ա.**, Միքայել Նալբանդյանի ... տարեգրությունը, Երևան, 1954, էջ 270):

Փետրվարի 22. «Մեղու Հայաստանին» (№ 8), Սարգիս Խալաթյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն արձակ թարգմանությամբ, հրատարակում է Ի. Կոխլովի «Թաղմունք» առակը, իսկ հաջորդ համարում (№ 9, փետրվարի 29) գերմաներեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ (թարգմանիչ՝ Կ.Տ.) Գրիմ եղբայրների «Միմսի լեառը» հեքիաթը:

Փետրվար. Շուշիում (Լեռնային Ղարաբաղ) ծնվեց հասարակական գործիչ, աստվածաբան-բանասեր Արշակ Տեր-Միքելյանցը: Վախճ. 1901 թ. հուլիսի 5-ին:

«Բյուզանդիոն», 1901, № 1455 («Մահ»), № 1457 («Արշակ Տեր-Միքելյանց»):

Փետրվարի 23. Թեհրանում ծնվեց ականավոր թարգմանիչ (անգլերենից՝ հայերեն), կրթական-մշակութային գործիչ Հովհաննես Ծերունի Մասեհյանը: Վախճ. 1931 թ. նոյեմբերի 19-ին, Խարբինում (այժմ՝ Չինաստան): Թաղում՝ 1932 թ. ապրիլի 1-ին, Թիֆլիսում:

«Հանդես ամսօրյա», 1931, № 10-11 («Մահ Հովհաննես Խան Մասեհյանի»), «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 2-3 («Հովհաննես Մասեհյան»): **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 297:

Փետրվար. Վերին Ագուլիսում (այժմ՝ Նախիջևանի ԻՍՍՀ, Օրդուբադի շրջան), Հայրապետ Քալանթարյանցի սատարմամբ, իր գոյությունն է սկսում «Տղայոց մասնավոր ուսումնարանը», որտեղ ավանդվում էր հայերեն, ռուսերեն լեզուներ և պատմություն: Գոյատևել է մինչև 1870 թվականը:

«Մեղու Հայաստանի», 1865, № 30 («Հարգո խմբագիր»), 1869, № 17 («Ներքին Ագուլիսի ուսումնարան»), 1874, № 22 («Ազգային»), «Մշակ», 1911, № 55 («Հայրապետ Քալանթար»):

Փետրվարի 29. «Մեղուն» (№ 233) արևմտահայերեն հրատարակում է Իգնատիոս Հավկուրյանի (Հարություն Սըվաճյան ?) «Մեչուխեչան պահ մը Ռուսիո հորիզոնին վերա» հոդվածը:

Հեղինակը բարձր է գնահատում ինչպես «Հյուսիսափայլի», այնպես էլ Նալբանդյանի գործունեությունը:

Փետրվարի երկրորդ կես. «Արևմուտքը» (№ 2) հրատարակում է Ստեփան Ոսկանյանի ««Կիթաո» անուն հանդեսը» և «Գյուրջիներու վրա գրված վեպ մը» հոդվածները: Վերջինն ավարտվում է հաջորդ համարում:

Մարտի 1. «Ծաղիկը» (№ 75), Ստեփան Չախրրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Վիկտոր Հյուգոյի «Ժեզուիթ խմբագիր մը» բանաստեղծությունը:

Մարտ. «Արծվի Վասպուրականը» (№ 3) արևմտահայերեն հրատարակում է Մարգար Սևիկյանցի «Կորուստ Դրախտին» բանաստեղծությունը:

Մարտի 7. «Մեղու Հայաստանին» (№ 10), Քեթևան Տեր-Միքայելյանցի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Գրիմ եղբայրների «Չյունանման» հեքիաթը (ավարտ՝ հաջորդ համարում) և Մարգիս Խալաթ-

յանցի՝ ռուսերենից կատարած արձակ թարգմանությամբ, Ի. Կոնիլովի «Աղվեսը և սարի մուկը» առակը:

Մարտի առաջին կես. «Երևակը» (№ 10), «Աղոթք ընելուն հարկը և պատշաճությունը» հոդվածին որպես վերջաբան, գետեղում է մի հատված Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպից:

Մարտի 14. «Մեղու Հայաստանին» (№ 11) արևելահայերեն հրատարակում է Խաչատուր Աբովյանի «Նամակ Հախվերմագին» ստեղծագործությունը (ունի «Աղա» վերնագիրը) և դրան կից, «Հախվերմագի գովքը» բանաստեղծությունը (տե՛ս **Խ. Աբովյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Երևան, 1948, էջ 178-180):

Մարտ. «Հյուսիսափայլը» (№ 4), Ստեփաննոս Նազարյանցի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ֆրանց Հոֆմանի «Ինչ որ կը սերմանես, այն ևս կը հնձես» վիպակը: Ավարտ՝ հաջորդ համարում: Հրատարակված է նաև «Փառախոտ Յուլյանցի» (իմա. Մ. Նալբանդյանց) «ՈՒղերձ առ Մեչուխեչայն ի Կոստանդնուպոլիս» բանաստեղծությունը (տե՛ս **Մ. Նալբանդյան**, ԵԼԺ, հ. 1, Երևան, 1945, էջ 100, 507):

Մարտի առաջին կես. «Արևմուտքը» (№ 3) արևմտահայերեն հրատարակում է Ստեփան Ոսկանյանի «Պատասխան քանի մը ազգայիններու» հոդվածը և «Կարմիր քիթ» երգիծական բանաստեղծությունը (հեղ. Ստ. Ոսկանյան ?):

Մարտի 18. Շապին-Գարահիսարում (Հս.-արևելյան Թուրքիա) ծնվեց ճարտարապետ-պատմաբան, հայկական հուշարձանների ակնավոր հետազոտող, գիտության վաստակավոր գործիչ (1933 թ.) Թորոս Հարությունի Թորամանյանը: Վախճ. 1934 թ. մարտի 1-ին, Երևանում:

«Խորհրդային Հայաստան», 1934, № 51 («Թորոս Թորամանյան»): **Հարությունյան Վ.**, Թորոս Թորամանյան, Երևան, 1959, 89 էջ: **Թորամանյան Թ.**, Նամակներ (կազմեց և ծանոթագրեց Նազիկ Թորամանյան), Երևան, 1968, 511 էջ:

Մարտի 21. «Մեղու Հայաստանին» (№ 12), Խաչատուր Աբովյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ ու թարգմանչի առաջաբանով, հրատարակում է «Ազնես» գեղարվեստական ստեղծագործությունը: Ավարտ՝ № 14 (ապրիլի 4) (տե՛ս՝ **Խ. Աբովյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Երևան, 1948, էջ 289-305):

Մարտի 28. «Մեղուն» (№ 236) արևմտահայերեն հրատարակում է Հարություն Սըվաճյանի «Հյուսիսսփայլ, Երկրագունդ և Արևմուտք» հոդվածը:

Մարտի երկրորդ կես. «Արևմուտքը» (№ 4) արևելահայերեն հրատարակում է Ստեփան Ոսկանյանի «Լեռնականք» հրապարակախոսական էսսեն և «Ծանեալ էջն զմտոր իր» ինքնակենսագրական ակնարկը: Ավարտ՝ № 7 (մայիսի առաջին կես):

Ապրիլի 3. Պոլսում ծնվեց հայագետ-բանասեր, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Գաբրիել Գևորգի Մենևիշյանը: Վիեննայի Միխրայրյան միաբանության անդամ էր 1882 թ. մարտի 25-ից, վախճ. 1936 թ. նոյեմբերի 14-ին, Նովիսադում (Սերբիա, այժմ՝ Հարավ-սլավոնիայի ՖՄՀ)

«Թաթուլ Վանանդեցի», «Մանուշակ», «Բնապատում» և «Մեծածորեցի» կեղծանուններով հանդես էր գալիս «Հանդես ամսօրյա»-ում:

«Հանդես ամսօրյա», 1936, № 10-12 («Գաբրիել Մենևիշյան»), «Բազմավեպ», 1937, № 1 («Գաբրիել Մենևիշյան»):

Ապրիլի 10. «Ծաղիկը» (№ 79), Զարմայր-Ստեփան Չախրրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Վիկտոր Հյուգոյի «Թե ինչ է հիսուսյանց նպատակը» բանաստեղծությունը:

Ապրիլ. «Արծվի Վասպուրականը» (№ 4), «Տաղաչափութիւն գերապատիւ Թօփուզեան Յակոբ եպիսկոպոսի, վանահօր Լիմ անապատայ» ընդհանուր խորագրի ներքո, հրատարակում է վերջինիս հետևյալ գրաբար գործերը. «Յաղագս աղքատաց թշուառ վիճակի», «Յուսահատութիւն աղքատաց», «Առ ողորմած անձն հետեւեալ վերնոցն», «Առ ծերութեան հասակն», «Յանձն յօրինողիս. դիմառնութիւն ընդ ծերունւոյն», «Առ զառամեալ վերջին վիճակն» և «Իբր վերջաբանութիւն դարձեալ յանձն յօրինողիս»:

Ապրիլի 11. «Մեղու Հայաստանին» (№ 15) արևելահայերեն հրատարակում է Խաչատուր Աբովյանի «Ազնվամտություն և շնորհակալություն» պատմվածքը: Ավարտ՝ հաջորդ համարում (տե՛ս **Խ. Աբովյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Երևան, 1948, էջ 309-317): Հրատարակված է նաև Նատալիա Միրզոյանցի «Ողջույն հրաժարական իմ սիրուն ծաղիկներին» բանաստեղծությունը:

Ապրիլ. «Հյուսիսափայլը» (№ 5), Գ. Թովմասյանցի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Մի նկարագիր, կամ քրիստոնյա և մահմեդական» պատմվածքը:

Ապրիլի 12. Վանում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, լրագրող, բանասեր Մկրտիչ Ավետիսյանը (Մկրտիչ Ավետիսի Թերլեմեզյան): Վախճ. 1896 թ. հունիսի 11-ին:

Տեր-Մկրտչյան Ե., Գանձեր Վասպուրականի, հ. Ա, Բոստոն, 1966:

Ապրիլի 25. «Համբավաբեր Ռուսիոն» (№ 63) արևելահայերեն տպագրում է Սեյադի «Փող» բանաստեղծությունը:

Ապրիլի 26. Վաղարշապատում (այժմ՝ Էջմիածին) ծնվեց հայ նշանավոր բանաստեղծ, թարգմանիչ (ռուսերենից, հունարենից, ֆրանսերենից, գերմաներենից՝ հայերեն) Հովհաննես Մկրտչի Հովհաննիսյանը: Վախճ. 1929 թ. սեպտեմբերի 29-ին, թաղումը՝ հոկտեմբերի 2-ին, Երևանում, քաղաքային կենտրոնական այգում (այժմ՝ Կոմիտասի անվան զբոսայգի):

Հովսեփյան Գ., Հովհաննես Հովհաննիսյան, Երևան, 1957, 293 էջ: **Ասմարյան Լ.,** Հովհաննես Հովհաննիսյան, Երևան, 1963, 161 էջ:

Ապրիլ. «Բազմավեպը» (№ 4) արևմտահայերեն հրատարակում է Պետրոս Մինասյանի «Ազգի մը երջանկությունը միաբան ընկերության վրա է» հրապարակախոսական հոդվածը (ավարտ՝ հաջորդ համարում) և «Հովերի «Իլիական» թարգմանություն Արսենի Կոմիտասա Բագրատունվո» անստորագիր գրախոսականը:

Ապրիլի երկրորդ կես. «Արևմուտքը» (№ 6) արևելահայերեն հրատարակում է Ստեփան Ոսկանյանի «Մարկիզ դը Վիլմեր» գրախոսականը:

Գրախոսված է Ժորժ Զանդի համանուն կատակերգությունը:

Մայիսի 2. «Արշալույս արարատյանը» (№ 726) արևմտահայերեն սկսում է հրատարակել Արամ Կարապետ Տետեյանի «Թատերական ներկայացումնք ի Զմյուռնիա» թատերախոսական հոդվածաշարը: Որոշ ընդհատումներով շարունակվում է մինչև № 733 (օգոստոսի 8):

Մայիս. «Արծվի Վասպուրականը» (№ 5) արևմտահայերեն հրատարակում է Հմայակ Մինասյանի «Քնար հայրենի» և Տիգրան Ամիրջանյանի «Ամենայն իրաց վախճանն է գովելի» բանաստեղծությունները:

Մայիսի 2. «Մեղու Հայաստանին» (№ 17) արևելահայերեն հրատարակում է Խաչատուր Աբովյանի «Հազար փեշեն» բանաստեղծությունը (տե՛ս **Խ. Աբովյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Երևան, 1948, էջ 166-175): Ավարտ՝ հաջորդ համարում:

Մայիս. «Հյուսիսափայլը» (№ 6), Ստեփաննոս Նազարյանցի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ֆրանց Հոֆմանի «Երկու եղբայր» վիպակը (ավարտ՝ հաջորդ համարում) և Սմբատ Շահազիզի «Երագ» բանաստեղծությունը (տե՛ս **Սադյան Ս.**, Հյուսիսափայլի պոեզիան, էջ 98):

Մայիսի 7. Շիկահող գյուղում (Զանգեզուր, այժմ՝ Ղափանի շրջ., ՀՍՍՀ) ծնվեց մշակութային գործիչ, բանասեր, պատմաբան, թարգմանիչ (գերմաներենից և ռուսերենից՝ հայերեն) Մեսրոպ Տեր-Մովսեսյանցը (ծննդյան անունով՝ Փարսադան): Էջմիածնի միաբանության անդամ էր 1893 թ.: Վախճ. Էջմիածնում:

«Մեսրոպ վարդապետ» և «Մեսրոպ եպիսկոպոս» ստորագրություններով հանդես էր գալիս «Արարատ» ամսագրում:

«Արարատ», 1909, № 10-11 («Մայր աթոռ»): «Հանդես ամսօրյա», 1941, № 7-12 («Դորպատի հայ ուսանողությունը»):

Մայիսի 8. «Պեգապյան թռչնիկը» (№ 13) արևմտահայերեն հրատարակում է «Թշվառություն» հոդվածը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Մայիսի առաջին կես. «Արևմուտքը» (№ 7) հրատարակում է «Փիլավի երգ» արևելահայերեն բանաստեղծությունը:

Մայիսի 16. «Մեղու Հայաստանին» (№ 19), Քեթևան Տեր-Միքայելյանցի անգլերեն (?) բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Իռատ, Կարիքս, երեխանց հափշտակողը (ամերիկյան կյանքից)» պատմվածքը (ավարտ՝ № 23, հունիսի 13) և Սարգիս Խալաթյանցի՝ գերմաներեն բնագրից կատարած թարգմանությամբ, Գրիմ եղբայրների «Պստիկ հովիվ» հեքիաթը:

Մայիսի 21. Բաքվում, Կայսերական բարձրագույն հրամանի համաձայն, իր գոյությունն է սկսում Կովկասյան Կոմիտեի տնօրինության ներքո գտնվող «Բաքվի հայոց մարդասիրական ընկերությունը»: Նախագահ՝ Դավիթ Հարությունի Ռոստոմյան (1869 թ. սեպտեմբերից, նրա մահվանից հետո՝ Մովսես Զոհրաբյան), ատենադպիր՝ Հովհաննես Տեր-Հակոբյան, գանձապետ՝ Գրիգոր Թումայան և անդամներ՝ Ներսես Կրասիլ-

նիկյան, Հակոբ Ապրեսյան, Խաչատուր Քանանյան, Իվան Ղազարյան: Ընկերության անդամների թիվը ծաղկուն ժամանակ հասնում էր 415 հոգու (որից հիմնադիր անդամներ՝ 12, պատվավոր անդամներ՝ 5): 1869 թ. հիմնվում է ընկերության միջոցներով ֆինանսավորվող «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» իգական դպրոցը, ապա՝ սեփական տպարանը ու գրադարան-ընթերցարանը, որը 1902 թ. ուներ շուրջ 14 000 հատոր գիրք և պարբերական՝ հայերեն, ռուսերեն և օտար լեզուներով: «Բաքվի հայոց մարդասիրական ընկերությունը» լայնորեն ֆինանսավորում էր հայ գրողներին ու գրական-մշակութային գործիչներին, կազմակերպում էր նրանց գրքերի հրատարակությունն ու վաճառքը, դրամատիկական ստեղծագործությունների ներկայացումը: «Ընկերությունը» դադարեց գոյություն ունենալ 1915 թ. կեսերին:

Կանոնադրություն մարդասիրական ընկերության, Մոսկվա, 1865, 31 էջ: Տեղեկագիր Բաքվի հայոց մարդասիրական ընկերության գործունեության, 1902 թ. (փաստաթղթերի ժողովածու), Բաքու, 1903 թ.: «Հայկական աշխարհ», 1870, № 3-4 («Լամակ դեպի խմբագրողը»): «Բաքվի հայոց մարդասիրական ընկերության վարչության զեկուցումը...», Բաքու, 1910, 15 էջ: «Հանդես ամսօրյա», 1914, № 5 («Կենսագրական»):

Մայիսի 23. «Համբավաբեր Ռուսիոն» (№ 65) արևելահայերեն հրատարակում է Սեյադի (Իմա՛. Պետրոս Մադաթյան) «Հիմար հովիվ» բանաստեղծությունը:

Մայիս. «Բազմավեպը» (№ 5) արևմտահայերեն հրատարակում է Հ.Ա.Ե.-ի «Ռափայել պատկերահան» հոդվածը և վերջինիս «Առ Ռափայել» խորագիրը կրող գրաբար բանաստեղծությունը:

Մայիսի 23. «Մեղուն» (№ 242) արևմտահայերեն հրատարակում է Թադևոս Միհրդատյանցի «Մեծարգո խմբագիր» խորագիրը կրող գրախոսականը: Գրախոսված է Մկրտիչ Տիգրանյանի «Հայելի գործոց» աշխատությունը և այն բացասաբար է գնահատված:

Մայիսի երկրորդ կես. «Արևմուտքը» (№ 8) արևմտահայերեն հրատարակում է Հրանտի (Իմա՛. Ստ. Ոսկանյան) «Հայրենիք և հայրենասիրություն» և «Լաֆոնտեն և Լամարթին» (ունի Ս.Ո. ստորագրությունը) հոդվածները:

Մայիսի 30. «Մեղու Հայաստանին» (№ 21) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Պալասանյանի «Հակոբ և Վիլիելմ Գրիմ» հոդվածը:

Գրիմ եղբայրների համառոտ կենսագրությունը շարադրելուց և նրանց կատարած մեծ գործը բնութագրելուց հետո, հեղինակը կոչ է անում հայ հանրությանը, զբաղվել հայկական ժողովրդական հեքիաթների հավաքմամբ և ուսումնասիրու-

թյամբ: Առաջարկված են մի քանի սկզբունքներ, այդ գործը հնարավորինս հաջողությամբ գլուխ բերելու համար:

Հունիսի 1. «Ծաղիկը» (№ 84), Զարմայր-Ստեփան Չարըխյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Վիկտոր Հյուգոյի «Ճարտարություն և ժողովուրդ» բանաստեղծությունը:

Հունիս. «Արծվի Վասպուրականը» (№ 6) արևմտահայերեն հրատարակում է Եղիշե Պետրոսյանի «Ես քեզ մատաղ, Հայաստան», Արսեն Թոխմախյանի «Ախ ու վախ» և «Հայաստանի գեղեր», Լևոն Մաթևոսյանի «Առ մայրն Արարատ» բանաստեղծությունները և Սմբատ Գրիգորյանի «Գայլ և գառն» առակը:

Հունիսի 2. «Մասիսը» (№ 642) արևմտահայերեն տպագրում է Կարապետ ՌԻթուջյանի «Հայելի գործոց Մկրտիչ վարդապետի Տիգրանյան» խորագիրը կրող գրախոսականը: Գրախոսված է այդ աշխատությունը և մեկ-երկու դրական հանգամանք նշելուց հետո, այն բացասաբար է գնահատված:

Հունիսի 6. «Մեղու Հայաստանին» (№ 22) Լոռու բարբառով հրատարակում է Հարություն Շահվելեյանցի գրի առած «Ազգային հեքիաթը» և Թիֆլիսի բարբառով՝ «Արծվի մինձացրած ասլանը, կամ օտար երկրում կրթված հայ» անստորագիր բանաստեղծությունը:

Հունիս. «Հյուսիսափայլը» (№ 7) արևելահայերեն հրատարակում է Սմբատ Շահազիզյանցի «Պոետ» և Երեմիա Սահակյանցի «Սրտի փափագ» բանաստեղծությունները (տե՛ս **Մաղյան Մ.**, Հյուսիսափայլի պոեզիան, էջ 99-100 և 311-312):

Հունիսի 8. «Պեգասյան թռչնիկը» (№ 15) արևմտահայերեն հրատարակում է «Բարբաջանք» հոդվածը, որտեղ բացասաբար է գնահատվում «Արշալույս արարատյանի» և նրա խմբագիր Ղուկաս Պալղազարյանի գործունեությունը:

Հունիսի 13. «Մեղու Հայաստանին» (№ 23) արևելահայերեն հրատարակում է Գևորգ Տեր-Աղեքսանդրյանցի «Մեր աշուղներու խաղերը» հոդվածը և Ստեփան Բաստամյանցի «Իմ անմոռանալի մանուշակներ» բանաստեղծությունը:

Հունիսի առաջին կես. «Արևմուտքը» (№ 9) արևմտահայերեն հրատարակում է Հրանտի (Իմա՛. Ստ. Ոսկանյան) «Նապոլեոն Գ. և դագերթիճի մը» հրապարակախոսական հոդ-

վածը (բարձրացված է հայ մամուլի և ժուռնալիստիկայի վիճակը Թուրքիայում և նրանց առաջնահերթ անելիքները ազգը կազմակերպելու հարցում): Օ. Օրբելի (Իմա՛. Ստ. Ոսկանյան) փոքրիկ ներածականով ներկայացված է նաև անգլիերեն բնագրից կատարված մի երգի չափածո թարգմանությունը, որին բնաբան է բերված Շեքսպիրից:

Հունիս. «Բազմավեպը» (№ 6), ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Արսեն Հուսսեի (Ճիշտ ձևը՝ Արսեն ՌԻսսժ) «Ճանապարհ կենաց» բանաստեղծությունը:

Հունիսի 27. «Մեղու Հայաստանին» (№ 25) Լոռու բարբառով հրատարակում է Հարություն Շահվելեղյանցի գրի առած «Ազգային հեքիաթը», իսկ № 28-ում (հուլիսի 18), խմբագրությունը տեղեկացնում է, որ եթե իրենց ուղարկված հեքիաթներում ճշգրտորեն պահպանված չլինի տեղական բարբառը, ապա այդպիսիները չեն հրատարակվի:

Հուլիս. «Արծվի Վասպուրականը» (№ 7) արևմտահայերեն հրատարակում է «Տաղ ի վերա Վարազա» (անստորագիր), Մարգար Սևիկյանցի «Պանդուխտ եմ ես իմ հայրենի երկրին մեջ» բանաստեղծությունները և Խոսրով Հովհանյանի «Շուն և նապաստակ» առակը:

Հուլիսի 10. «Ծաղիկը» (№ 87), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալֆրեդ դը Սյուսյեի «Առ օրիորդս» բանաստեղծությունը:

Հուլիս. «Հյուսիսափայլը» (№ 8), Ստեփաննոս Նազարյանցի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Ֆրանց Հոֆմանի «Դաստիարակություն ձախորդությամբ» վիպակը (ավարտ՝ հաջորդ համարում), Գ. Մալխասյանցի «Կնոջ սերը» պատմվածքը (թարգմանություն ?), Սմբատ Շահազիզյանցի «Խորհրդածություն բանաստեղծի» պոեմը, Երեմիա Մահակյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն չափածո թարգմանությամբ, Մ. Լերմոնտովի «Օդեղեն նավ» բանաստեղծությունը և նույնի՝ «Տեսչության խորհուրդ խոր է, անքննին...» չափածո ստեղծագործությունը (տե՛ս **Սաղյան Մ.**, Հյուսիսափայլի պոեզիան, էջ 101-109, 313-314, 315-317):

Հուլիսի 12. Զմյուռնիայում ծնվեց արձակագիր, բանաստեղծ, հոդվածագիր (հայերեն և ֆրանսերեն լեզուներով), Հարություն Ալիիարը: Վախճ. 1919 թ. ապրիլի 5-ին:

1896 թ. Կահիրեում հիմնադրել և մինչև 1898 թ. հրատարակել է «Փարոս» եռօրյա գավեշտաթերթը: Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Ռատամես» և «Քրիզանթեմ» կեղծանուններով:

Թեոդիկ, «Ամենուն տարեցույցը», Պոլիս, 1911, էջ 236-237, 1921, էջ 236: **Ստեփանյան Գ.,** Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 56:

Հուլիսի 25. «Մեղու Հայաստանին» (№ 29) արևելահայերեն հրատարակում է Հովհաննես (հետագայում՝ Միհրդատ) Ամրիկյանցի «Հայ պատանի և Մասիս» պոեմը (ավարտ՝ հաջորդ համարում), իսկ № 31-ում (օգոստոսի 8) Լոռու բարբառով՝ Հարություն Շահվելեյանցի գրի առած «Ազգային հեքիաթը»:

Օգոստոսի 8. «Արշալույս արարատյանը» (№ 733), Գրիգոր Դիլբերյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Անտոնիո և Ռոժե, կամ բարեկամական սիրո սրտաշարժ օրինակ մը» պատմվածքը:

Օգոստոս. «Արծվի Վասպուրականը» (№ 8) արևմտահայերեն հրատարակում է Մ. Արտամեոցյանի «Անձին ստգտանք», Մարգար Սևիկյանի «Աշուն», Լևոն Մաթևոսյանի «Պանդուխտ անջատյալ ի հայրենյաց» և գրաբար՝ «Հառաչանք սրտիս, առ քաջազոր նախնին մեր Հայկ, և բանք նորին առ իս» (անստորագիր) բանաստեղծությունները: Կարապետ Նաթանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակված է նաև Ֆրանսուա Ֆենելոնի «Կը ժողովին կենդանիներ թագավոր մը ընտրել» առակը:

Օգոստոսի 9. Կարինում (Արևել. Թուրքիա) ծնվեց բանասեր, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Ավետիք Գազեզյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1887 թ. ապրիլի 10-ից, վախճ. 1930 թ. նոյեմբերի 8-ին, Պաղուայում (Հս. Իտալիա):

«**Մխիթարյան հորեյան**», Վենետիկ, 1901, էջ 226: «Բազմավեպ», 1930, № 11 («Հանգիստ հոգվո Ավետիք Գազեզյան,,»):

Օգոստոսի 15. «Մեղու Հայաստանին» (№ 32) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Պալասանյանցի «Պետրոս Հովհաննես Բերանժե» հոդվածը: Որպես վերջաբան, Գևորգ Չմշկյանցի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն չափածո թարգմանությամբ, զետեղված է Բերանժեի «Կույր մարդ» բանաստեղծությունը:

Օգոստոս. «Հյուսիսափայլը» (№ 9) արևելահայերեն հրատարակում է Հովհաննես Քուչուբեկյանի «Հանգուցյալ աղան» և «Ա...Գ... ալբոմի մեջ» բանաստեղծությունները (տե՛ս **Սաղյան Մ.**, Հյուսիսափայլի պոեզիան, էջ 227-236):

Օգոստոսի 20. «Ծաղիկը» (№ 91), Մեսրոպ Նուպարյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալֆոնսոս Լամարթինի «Հուսահատություն» բանաստեղծությունը, համապատասխան փոքրիկ առաջաբանով:

Օգոստոս. «Բազմավեպը» (№ 8) գրաբար հրատարակում է «Գարուն» բանաստեղծությունը:

Բանաստեղծությունն ունի «Ազգային ուսումնասեր Պոլսեցի օրիորդի մը մեկ տարվան աշակերտության երկասիրություն է եղեր այս գրվածքս» նշումը: Ըստ գրականագետ Ա. Շարուրյանի, «Պոլսեցի օրիորդը» Սրբուհի Տյուսաբն է (տե՛ս **Շարուրյան Ա.**, Սրբուհի Տյուսաբ, Երևան, 1963, էջ 13-15):

Օգոստոսի երկրորդ կես. «Երևակը» (№ 31) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Ազգայնության վրա ընդհանուր տեսություն» ուսումնասիրությունը: Շարունակվում է մինչև № 36-ը (սեպտեմբերի երկրորդ կես):

Օգոստոսի 22. «Մեղու Հայաստանին» (№ 33) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Մանդինյանցի «Տփղիսու հայոց թատրոնի և դրամատիկական բանաստեղծության վրա» հոդվածը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Սեպտեմբերի 1. Թելավիում (Արևել. Վրաստան), Խաչատուր ավագ քահանա Սուքիասյանցի սատարմամբ և Եփրեմ Սուքիասյանցի, Զաքարիա Արղությանի, Գևորգ տեր-Սարգսյանցի ջանքերով, իր գոյությունն է սկսում տեղի իգական դպրոցը «Սուրբ Գայանե» անվամբ, որն սկզբում ուներ 30 աշակերտուհի:

«Մեղու Հայաստանի», 1864, № 39 («Ազգային»), 1873, № 49 («Ազգային»), 1875, № 2 («Հարգո խմբագիր»):

Սեպտեմբեր. «Հյուսիսափայլը» (№ 10) արևելահայերեն հրատարակում է Գևորգ Բարխուդարյանցի «Կախարդված աղջիկը և գանձը» պատմվածքը և «Վերջին համբույր», «Կապույտ երկնքում...» բանաստեղծությունները: Նույնի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Հ. Հայնեի «Գրենադերներ», Հովհաննես Քուչուբեկյանի «Սիրուհուս ջերմախտը», Հարություն

Ոստանիկի (Իմա՛. Հովհաննես Քուչուբեկյան) «Մարդկային հայեցվածք» և Սմբատ Շահազիզյանցի «Այն երազ էր», «Ես տխուր եմ և չգիտեմ...» բանաստեղծությունները (տե՛ս **Սադյան Մ.**, Հյուսիսափայլի պոեզիան, էջ 110-111, 201-203, 204-205, 237-240):

Մեպտեմբերի 7. «Մեղու Հայաստանին» (№ 35) հրատարակում է Խաչատուր Աբովյանի «Բայաթիները» (10 քառյակ, տե՛ս **Խ. Աբովյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Երևան, 1948, էջ 187-196): Ֆրանսերեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակված է նաև Ֆրանսուա Ֆենելոնի «Կենաց շուտություն» խրատականը:

Մեպտեմբերի 14. «Մեղու Հայաստանին» (№ 36), առակի և առակագրության մասին արևելահայերեն տրվող վերլուծությունից հետո, ռուսերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակում է Ի. Կոիլովի «Ղզարի շունը և ֆիլը» և «Անցվորական ու շունը» առակները:

Մեպտեմբերի 15. Խարբերդում (Արևել. Թուրքիա) ծնվեց լրագրող, հասարակական կյանքի տեսաբան, խմբագիր, թարգմանիչ (անգլերենից՝ հայերեն) Խաչատուր Կարապետի Պեննեյանը: Վախճ. 1944 թ. մայիսի 18-ին, Նյու Չորքում:

1907 մինչև իր մահը, Նյու Յորքում խմբագրել է «Կոչնակ» (1919 թ. հունվարից՝ «Հայաստանի կոչնակ») շաբաթաթերթը, որտեղ հանդես է եկել «Քնար», «Մենտոր», «Գ.Մ.Գեղամ», «Ասուպ», «Հրատ» կեղծանուններով:

«Հայաստանի կոչնակ», 1944, № 22, 23, 25 («Խաչատուր Կ. Պեննեյան»):

Մեպտեմբերի 21. Պոլսում, Առաքել Տատյանի սատարմամբ, իր գոյությունն է սկսում կրթալուսավորական «Դպրոցասիրաց սանուց ընկերությունը», որն իր առջև նպատակ էր դնում «նպաստել թաղին վարժարանին և սատարել մտավոր զարգացումին»: Ընկերությունը գոյություն ունեցավ մինչև 1880-ական թվերը:

Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հ. Ա, Վիեննա, 1957, էջ 491-493:

Մեպտեմբերի 21. Տաշղալա գյուղում (այժմ՝ Քարբերդ, Անիի շրջ., ՀՍՍՀ) ծնվեց գրական-մշակութային գործիչ, հողվածագիր, ազգագրագետ-երաժիշտ Արշակ Հովհաննես Բրուտյանը: Վախճ. 1936 թ. օգոստոսի 25-ին, Լենինականում:

Ռամկական մրմունջներ (կազմեց Ա. Բրուտյան), Ալեքսանդրապոլ, 1904, 287 էջ: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 203:

Սեպտեմբերի 22. «Մեղու Հայաստանին» (№ 37), Պետրոս Մադաթյանցի՝ պարսկերեն բնագրից կատարած արևելահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ֆիրդուսու՝ Շահին ուղղված «Ո՛վ արքայդ Մահմուդ...» բանաստեղծությունը, իսկ հաջորդ համարում (№ 39, սեպտեմբերի 27)՝ «Կենդանի ջրի աղբյուր» հեքիաթը:

Սեպտեմբերի 26. «Ժամանակ» հանդեսը (№ 46), Եղիազար Մուրադյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Պոնս-Դենիս Լեբրենի «Սեր և մեղու» և «Առ գարուն» բանաստեղծությունները:

Հոկտեմբեր. «Հյուսիսափայլը» (№ 11), Ստեփաննոս Նազարյանցի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ֆրանց Հոֆմանի «Ժամանակը արծաթ է» վիպակը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Հոկտեմբերի 3. «Մեղու Հայաստանին» (№ 39) արևելահայերեն հրատարակում է ազդ-գրախոսություն Խաչատուր Աբովյանի «Պարապ վախտի խաղալիք» ժողովածվի մասին և գետեղում է «Էս գրքի ճամբի խրատը» բանաստեղծությունը:

Հոկտեմբերի սկիզբ. «Երևակը» (№ 37) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Ռընանի գրքին դեմ» հոդվածը: Ավարտ՝ դեկտեմբերի առաջին կեսին (№ 45): Վերջինս գրված է Ժոզեֆ-Էրնեստ Ռենանի «Վարք Հիսուսի» աշխատության և հատկապես նրա հայերեն թարգմանության (թարգ. Արմենակ Հայկունի) դեմ:

Հոկտեմբերի 10. «Մեղու Հայաստանին» (№ 40) Լոռու բարբառով հրատարակում է Հարություն Շահվելեդյանցի գրի առած «Հեքիաթ լոռըցու լեզվով» ստեղծագործությունը:

Հոկտեմբերի 24. Խաշթառակ գյուղում (Իջևանի շրջան, ՀՍՍՀ) ծնվեց գյուղագիր, հոդվածագիր, ՍՍՀՄ գրողների միության անդամ (1934 թ.) Հարություն Գրիգորի Ճուղուրյանը: Վախճ. 1938 թ. հունվարի 28-ին, Երևանում:

«Սվին», «Գյուղացի», «Սեթ» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

ԶԱԳԱԹ, Հ. Ճուղուրյանի ֆոնդ, թղթ. № 141, 142, 178: Հայ գյուղագիրներ (կազմ. Արմ. Թամազյան), Երևան, 1950, էջ 572: Հայ նոր գրականության պատմություն, հ. 4, Երևան, 1972, էջ 521-532: **Խաչատրյան Հ.,** Գրական տեղեկատու, Երևան, 1981, էջ 284-285:

Նոյեմբեր. Թիֆլիսում, Ստեփաննոս Ստեփաննեի խմբագրությամբ, արևելահայերեն սկսում է հրատարակվել «Հայկական աշխարհ. օրագիր ուսումնական և գրականական»

(մինչև 1865 թ. կեսերը՝ «Հայկական աշխարհի կռունկ») ամսագիրը: Ձեռնադրվելով վարդապետ (1872 թ. փետրվարի 26) խմբագիրն ստանում է նոր՝ Խորեն Ստեփանե անվանումը, 1874 թ. սկզբներից փոխադրվում է Շուշի և այստեղ էլ, նույն թվականի ապրիլից, վերսկսում է իր պարբերականի հրատարակությունը: 1874 թ. վերջերից մինչև 1876-ը «Հայկական աշխարհը» հրատարակվել է Ելիզավետպոլում (Գանձակ), 1876 սկզբներից Խ. Ստեփանեն փոխադրվում է Բաքու, այստեղ շարունակում է «Հայկական աշխարհի» հրատարակությունը, որը տևում է մինչև 1879 թ. կեսերը: «Հայկական աշխարհը» հրատարակվել է պարբերականության խիստ խախտումներով, ամսատետրակների համարների անկանոն նշումներով, իսկ 1871 թ. հունիսից մինչև 1874 թ. մայիսը չի հրատարակվել:

Նոյեմբեր. «Հյուսիսափայլը» (№ 12) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Նազարյանցի «Մատենագիտական ծանուցումն» գրախոսականը (գրախոսված է Ստ. Շահագիզի «Լևոնի վիշտը և զանազան բանաստեղծություններ» ժողովածուն: Տե՛ս ներկա հատորը, 1865 թ.): Նույնի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Ֆրիդրիխ Շիլլերի «Կասսանդրա», ինչպես նաև՝ Գեղամ Սմբատյանցի «Հերոս» բանաստեղծությունները (տե՛ս **Մաղյան Մ.**, Հյուսիսափայլի պոեզիան, էջ 150-154, 405-406):

Նոյեմբեր-դեկտեմբեր. «Հայկական աշխարհը» (№ 1-2), իտալերեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ջիովաննի Բոկաչիոյի «Որպես սուրբ ընդունված անառակը» պատմվածքը, որը վերցված է «Դեկամերոնից» (առաջին օր, առաջին պատում): Իշխան Բագրատունու (իմա՛. Խորեն Ստեփանե) ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Պիեր-ժան Բերանժեի «Նորընտիր զինվորի նամակ Աֆրիկայից յուր նորահարսի մոտ, Ֆրանսիա» բանաստեղծությունը: Վերջում տրված է Բերանժեի համառոտ կենսագրությունը:

Նոյեմբերի 7. «Մեղու Հայաստանին» (№ 44), ռուսերեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Հավատարիմ ծառա» պատմվածքը: Հաջորդ համարում (№ 45, նոյեմբերի 14) Ղարաբաղի բարբառով հրատարակվում է Աստվածատուր Խանգաղյանի «Ղարաքլիսենցոց սուրբ Կիրակի ուխտ գնալը» հեքիաթը: Ավարտ՝ № 46 (նոյեմբերի 21):

Նոյեմբերի 14. «Արշալույս արարատյանը» (№ 740), Մաղաքիա Հարությունյանի՝ հունարեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Բարոյական տղայոց համար» պատմվածքը:

Նոյեմբեր. «Բազմավեպը» (№ 11) ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ամբերի «Հույն բանաստեղծից նկարագրական ճշտությունը» հոդվածը:

Նոյեմբերի 14. «Մեղուն» (№ 251), արտատպելով «Հյուսիսափայլից» արևելահայերեն, հրատարակում է Հովհաննես Քուչուրեկյանցի «Հանգուցյալ աղան» և «Ա.Գ.-ի այլոմի մեջ» բանաստեղծությունները:

Նոյեմբերի 23. Կերմիրում (Կեսարիա, Կենտ. Թուրքիա) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, պատմաբան-բանասեր Դավիթ Տեր-Մովսեսյանը: Վախճ. 1937 (?)թ. Վիեննայում:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, հ. Ա, կահիրե, 1937 թ., էջ 1242-1243:

Նոյեմբերի 28. «Մեղու Հայաստանին» (№ 47), Կատարինե Տեր-Միքայելյանցի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Սպիտակ աղջիկ (գերմանական վեպ)» ստեղծագործությունը, իսկ № 51-ում (դեկտեմբերի 26)՝ Գրիմ եղբայրների «Բրեմենի երաժիշտներ» պատմվածքը (թարգ. Ի.Տ.):

Դեկտեմբերի 3. Ներքին Ազուլիսում (այժմ՝ Նախիջևանի ԻՍՍՀ, Օրդուբադի շրջան) ծնվեց գրականության պատմաբան, բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ Լևոն Գևորգի Մանվելյանը: Վախճ. 1919 թ. փետրվարի 21-ին, Թիֆլիսում:

Ռուսահայ գրականության պատմություն, հ. 4, Թիֆլիս, 1911, էջ 104-114 («Լևոն Մանվելյան»): «Մշակ», 1919, № 42 («Լևոն Մանվելյան»): Հայ նոր գրականության պատմություն, հ. 4, Երևան, 1972, էջ 651-667:

Դեկտեմբերի 5. «Մեղուն» արևմտահայերեն հրատարակում է «Կտոր մը այվազովսքիաբանություն» պամֆլետը, ուղղված Գաբրիել Այվազովսկու դեմ:

Դեկտեմբերի 9. Ռայխենբախ քաղաքում (Հարավային Գերմանիա) ծնվեց գերմանացի հայազետ, բանասեր-պատմաբան Հովսեփ Մարկվարտը (Josef Marguart, երբեմն նաև՝ Markwart): Վախճ. 1930 թ. փետրվարի 3-ին Բեռլինում:

«Հանդես ամսօրյա», 1930, № 1-2 («Ռիսուցապետ Հովսեփ Մարկվարտ»), «Բազմավեպ», 1930, №3 («Հովսեփ Մարկվարտ»):

Դեկտեմբերի 20. Ախալցխայում ծնվեց մշակութային գործիչ, գիտահանրամատչելի բժշկական աշխատությունների հեղինակ, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն) Արտաշես Հովհաննեսի Բուդուդյանը: Վախճ. 1915 թ. ապրիլի 10-ին, Պետերբուրգում:

«Արարատ», 1915, № 4-5 («Բժշկապետ Արտաշես Հովհաննիսյան Բուդուդյան»): **Փարսադանյան Ռ.**, Հայ բժշկության պատմությունից, Երևան, 1958, էջ 151-197:

Դեկտեմբերի 23. Ներքին Ագուլիսում (այժմ՝ Նախիջևանի ԻՍՍՀ, Օրդուբադի շրջան) ծնվեց հասարակական գործիչ, արձակագիր, դրամատուրգ (մասնագիտությամբ՝ բժիշկ) Ռուստեմ (Արիստակես) Հայրապետի Զարգարյանը: Վախճ. 1935 թ. Թիֆլիսում:

ԶԱԳԱԹ, Արիստակես Զարգարյանի ֆոնդ: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, էջ 319:

Դեկտեմբերի 24. Զմյուռնիայում ծնվեց գրական-երաժշտական գործիչ, հայկական երաժշտության հետազոտող, կոմպոզիտոր Ստեփան Գևորգի Էլմասյանը (Էլմաս): Վախճ. 1937 թ. օգոստոսի 11-ին, Ժնևում:

Բրուտյան Գ., Սփյուռքի հայ երաժիշտները, Երևան, 1968, 624 էջ:

Դեկտեմբերի 25. Քութայիսում (Վրաց. ՍՍՀ) ծնվեց լեզվագետ, արևելագետ-բանասեր, հայագետ, մշակութային գործիչ Նիկողայոս Յակովի Սառը: Ակադեմիկոս՝ 1909 թ., գիտության վաստակավոր գործիչ՝ 1934 թ.: Վախճ. 1934 թ. դեկտեմբերի 20-ին, Լենինգրադում:

Миханкова В.А., Николай Яковлевич Марр (очерк его жизни и научной деятельности), изд. 3-е, М.-Л. 1949, стр. 553.

Դեկտեմբեր. Հրատարակվում է թուրքական կառավարության՝ 35 կետից բաղկացած օրենքը («Օրենք լրագրության»)՝ պարբերական հրատարակություններում գնաքննչական բնույթի սահմանափակումներ մտցնելու մասին: Օրենքը ուժի մեջ է մտնում 1865 թ. հունվարի 1-ից:

Դեկտեմբերի 30. «Մեդուն» (№ 254) արևելահայերեն հրատարակում է Սեյադի «Չայն առ հարազատ Վասպուրական արծվին, ի 1863 ամի» բանաստեղծությունը: Հեղինակը դրվատում է Խրիմյանի ազգանվեր գործունեությունը և այդ առիթով հաղորդում կենսագրական որոշ տեղեկություններ նրա մասին:

-Պոլսում ծնվեց արձակագիր, հողվածագիր (հայերեն, ֆրանսերեն և թուրքերեն լեզուներով), կրթական-մշակութային գործիչ, խմբագիր (մասնագիտությամբ՝ բժիշկ) Կարապետ Փաշայանը: Եղեռնամահ՝ 1915 թ.:

1904 թ. Ալեքսանդրիայում (Եգիպտոս) հիմնել և մինչև 1906 թ. խմբագրել է «Հորիզոն» շաբաթաթերթը:

Թեոդիկ, Հուշարձան 1915 թ. ապրիլի 24-ի, Ալեքսանդրիա, 1939, էջ 36-37:

-Պոլսում ծնվեց մշակութային գործիչ, հողվածագիր, թարգմանիչ (գերմաներենից՝ հայերեն) Վահե Մինասյանը (մասնագիտությամբ՝ բժիշկ): Վախճ. 1918 թ. փետրվարի 8-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1921, էջ 324:

-Պոլսում ծնվեց հայագետ-բանասեր, լրագրող, խմբագիր Կարապետ Բասմաճյանը (նաև՝ Պասմաճյան): Վախճ. 1942 թ. մայիսի 17-ին, Փարիզում:

1899-1907 թթ. Փարիզում խմբագրել է «Բանասեր» եռամսյա հանդեսը:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1927, էջ 586-590: «Հանդես ամսօրյա», 1947, № 1 («Մահվան հունձքը հայագիտական դաշտի վրա»):

-Պոլսում ծնվեց լրագրող, հրապարակախոս (մասնագիտությամբ՝ մանկավարժ) Հռիփսիմե Արապյանը:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1911, էջ 246: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ.Ա, էջ 141:

-Խաստուր գյուղում (Ալաշկերտի շրջան) ծնվեց վիպասաց, ՍՍՀՄ գրողների միության անդամ (1944 թ.) Թորոյենց Մանուկը (Մանուկ Հարությունի Թորոյան):

«Մասնա ծոեր» հայ ժողովրդական վեպի տասը լավագույն պատումներից մեկի հեղինակը Մանուկ Թորոյանն է (գրի է առել մեծանուն հայագետ Կարապետ Մելիք-Օհանջանյանը, 1932-ին):

Խաչատրյան Հ., Գրական տեղեկատու, Երևան, 1981, էջ 155-156:

-Հաճընում (Հար. Թուրքիա) ծնվեց բառարանագիր, լրագրող, բանաստեղծ, թարգմանիչ (անգլերենից՝ հայերեն) Հովհաննես Գայայանը: Վախճ. 1934 թ. հունիսի 10-ին, Ալեքսանդրիայում (Եգիպտոս):

«Մխիթար Պոնտացի» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Հայաստանի կոչնակ», 1934, № 28 («Պրոֆ. Հ. Գայայանի մահը»), № 32 («Պրոֆ. Հովհաննես Գայայան»), № 36 («Անհետացող դեմքեր»): Կյանք և արվեստ, Փարիզ, 1935, էջ 123-124:

-Զմյուռնիայում ծնվեց մշակութային գործիչ, լրագրող Միհրդատ Վարպետյանը: Վախճ. 1899 թ. դեկտեմբերին, իր ծննդավայրում:

«Բյուզանդիոն», 1899, № 968 («Իզմիրյան նոթեր ու բոթեր»):

-Մանիսայում (Թուրքիա) ծնվեց լրագրող, լեզվագետ, ճշգրիտ գիտություններին նվիրված աշխատությունների հեղինակ Գրիգոր Անմահունին (Յուլմեզյան): Վախճ. 1924 թ. մայիսի 15-ին, Երուսաղեմում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1926, էջ 723: «Հայաստանի կոչնակ», 1947, № 20 («Մփոփանք»):

-Բաքվում ծնվեց լրագրող, գրական-մշակութային գործիչ, թարգմանիչ (ռուսերենից և ֆրանսերենից՝ հայերեն), խմբագիր Երվանդ Թադևոսի Թադևոսյանը: Վախճ. 1948 թ. Երևանում:

ՉԱԳԱԹ, Երվանդ Թադևոսյանի ֆոնդ: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 349:

-Հին Բայազետում ծնվեց քրդագետ, արձակագիր, դրամատուրգ (հայերեն և քրդերեն լեզուներով), կինոսցենարիստ, դասագրքերի հեղինակ Հակոբ Ղազարյանը: Վախճ. 1926 թ. ապրիլի 2-ին, Թիֆլիսում:

Ժամանակակիցների շրջանում և պարբերականներում առավել հայտնի էր «Ապո» և «Աբե Լազո» ձևով:

Չաչանի Կ., Հայ և թուրք ժողովուրդների բարեկամության պատմությունից, Երևան, 1965, 129 էջ: «Գրական թերթ», 1981, № 43 («Մեծ երախտավորի «Արև»-ը»):

-Շուշիում ծնվեց լրագրող, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն) Հակոբ Ճաղարբեկյանը: Վախճ. 1900 թ. հունվարի 1-ին, Խանքենդում (?). Ադրբեջանական ՍՍՀ):

«Լուսա», 1900, № 2 («Հ. Ճաղարբեկյան»): «Մշակ», 1900, № 27 («Մահագո»):

-Վանում ծնվեց լրագրող, բանասեր Միքայել Կազմարարյանը: Վախճ. 1936 թ. Պոլսում:

«Ընդարձակ տարեգիրք ազգային հիվանդանոցի», Պոլիս, 1937, էջ 412:

-Ռոդոստոյում (Արևմտ. Թուրքիա) ծնվեց արձակագիր, մշակութային գործիչ Վահան Մանվելյանը: Վախճ. 1904 թ. Սասունում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Կարապետ Տողրամաճյան» կեղծանունով:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 289-290:

-Ծնվեց մշակութային գործիչ, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն), լրագրող Մխիթար Տեր-Մկրտչյանը: Էջմիածնի միաբանության անդամ էր 1893 թ.:

«Մխիթար վարդապետ» ստորագրությամբ հանդես էր գալիս «Արարատում»:

«Արարատ», 1909, № 10-11 («Մայր աթոռ»):

-Վենետիկում, Արսեն Բագրատունու՝ հունարեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Հովերոսի «Իլիականը»: 454 էջ:

Նույնն անփոփոխ՝ 1893 թ., 453 էջ:

-Վենետիկում գրաբար հրատարակվում է Եղիշեի «Վասն Վարդանանց և հայոց պատերազմին» զիրքը: Բնագրագիտական աշխատանքներն ու անվանացանկը՝ Արսեն Բագրատունու («Շարք ընտիր մատենագրաց նախնեաց», հ. Գ): 394 էջ: Հանդիսանում է 1852 թ. համանուն աշխատության վերահրատարակությունը (տե՛ս ներկա հատորը), լեզվաոճական բնույթի որոշ ճշգրտումներով ու առաջաբանի բացթողումով:

-Վենետիկում, Գևորգ Հյուրմյուզյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Հովհաննես (Իմա՛. Ժան) Ռասինի «Գոթոդիա» ողբերգությունը: 72 էջ:

-Վենետիկում, Արսեն Բագրատունու՝ իտալերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է Հուգոն Փոսկոլի «Յաղագս գերեզմանաց տաղ» պոեմը: 20 էջ:

-Վենետիկում գրաբար հրատարակվում է Ներսես Սարգիսյանի «Տեղագրութիւնք ի փոքր և ի մեծ Հայս» աշխատությունը: 291 էջ: Հատվածաբար հրատարակվում էր «Բազմավեպում», 1863 թ. հունվարից (№ 1) սկսած:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Աբրահամ Այվազյանի բանաստեղծությունների ժողովածուն, «Առաջին մրմունջք» վերնագրով: 80 էջ:

-Պոլսում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Տիգրան Գափամաճյանի «Համառոտ բառարան գործնական բառից, տաճկերենե հայերեն» աշխատությունը: 112 էջ:

- Պոլսում, Տիրուհի Արթինֆի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Գլարա կամ անմեղության վտանգները» վիպակը: 94 էջ:
- Պոլսում գրաքար վերահրատարակվում է Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» գիրքը: 288 էջ:
- Պոլսում գրաքար վերահրատարակվում է Գրիգոր Նարեկացու «Մատենանոցի ողբերգութեան» պոեմը: 476 էջ:
- Պոլսում, Սարգիս Չալրիյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ ու թարգմանչի առաջաբանով, հրատարակվում է «Ծաղկաքաղ բարոյական ընտիր պատմություններ» խորագիրը կրող ժողովածուն: 80 էջ:
- Պոլսում գրաքար հրատարակվում է Երեմիա քահանա Խասգյուղցու «Հետազոտութիւն տօմարական վրիպակաց» աշխատությունը: 31 էջ:
- Պոլսում, գրաքար մեկնաբանություններով, հրատարակվում է Եղիա Տնտեսյանի «Բովանդակութիւն նուագաց եղանակաց Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ ըստ ուրն ձայնից» աշխատությունը:
- Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Հովսեփ Գաթըրճյանի «Հիմնական տարբերություն կաթողիկէ և էջմիածնական դավանությանց» աշխատությունը: 520 էջ:
- Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Արքունի վառողապետ վսեմաշուք և քաջագուն Պողոս պէյ Տատյան ամիրային դարձը» պոեմը (հեղինակ՝ Կ.Բ.Վ.Ն.): 23 էջ:
- Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Անտոն Մադաթիա Գարագաշյանի «Սկզբունք տրամաբանության» աշխատությունը: 304 էջ:
- Պոլսում, թուրքերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ (թարգմանիչ՝ «Հայ երիտասարդ մը»), հրատարակվում է Կարապետ Փանոսյանի «Կարևոր բարեկարգությունք» գրքույկը: 34 էջ:
- Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Արևելյան քնար. սիրահարական երգեր. նվիրված հայ երիտասարդության» խորագիրը կրող ժողովածվի Ա տետրը: 14 էջ: Բ տետր՝ նույն թվականին, 12 էջ (հեղինակ՝ Ն.Գ.Վ.):

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Արմենակ Ճիզմեճյանի (Հայկունի) «Մահ Ոլիմպիադայի, թագուհվուն հայոց» ողբերգությունը:

Գրքի մասին հիշատակում է Ա. Ղազիկյանը (տե՛ս՝ «Հայկական նոր մատենագիտություն...», Վենետիկ, 1909, էջ 1459) և այն էլ՝ հարցականով: Այն գտնելու մեր բոլոր փորձերը անհաջող են անցել:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Տեղեկագիր ազգային ընդհանուր տղոց յանձնաժողովին, որ ընթերցավ յատենի քաղաքական ժողովոց և ընդունեցավ քանի մը մանր դիտողությամբ» գրքույկը: 10 էջ:

-Պոլսում հրատարակվում է Սրապիոն Հեքիմյանի ինքնուրույն ու թարգմանական թատերական ստեղծագործությունների ժողովածուն, «Թատրերգությունք» խորագրով: 120 էջ:

-Պոլսում, Արմենակ Հայկունու՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Լորենս Ստեռնի «Հենրիադա կամ անառակ կնկան մը պատմությունը» վիպակը: 64 էջ:

Հատվածաբար հրատարակվում էր «Պեգասյան թռչնիկ» երկշաբաթաթերթում, 1863 թ. մայիսի 8-ից (№ 13), մինչև 1864 թ. օգոստոսի 22-ը (№ 20): Առաջաբանում թարգմանիչը Լորենս Ստեռնի համառոտ կենսագրությունն ու գրական գործունեությունը շարադրելուց հետո, հավելում է, որ թարգմանության ընթացքում ինքը խստորեն հավատարիմ չի մնացել բնագրին, կատարել է կրճատումներ և դուրս է թողել ամբողջական հատվածներ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Արմենակ Հայկունու «Համառոտ պատմություն և աշխարհագրություն հայոց» աշխատությունը: 64 էջ:

-Պոլսում, Մանվել Ութուջյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Մկրտիչ Տատյանի «Իրավունք ազգաց» ուսումնասիրությունը: 200 էջ:

-Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Մ. Քիրեճճյանի «Հայերեն քերականություն աշխարհաբար լեզվի, նախակրթական դպրոցաց համար» դասագիրքը: 231 էջ:

- Պոլսում արևմտահայերեն հրատարակում է Ստեփան Փափագյանի «Կենսագրություն Հարություն Պեզճյան ազգային անգուգական բարերարի» աշխատությունը: 123 էջ:
- Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Ներսես Մեզպուրյանի արձակ ստեղծագործությունների ժողովածուն, «Պսակ տղայոց» խորագրով: 100 էջ:
- Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Հայելի գործոց և աշխատությանց Մկրտիչ վարդապետի Տիգրանյան» աշխատությունը: 148 էջ:
- Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Կաթոլիկի մը մտմտութենքերը և հայու մը մտմտալիքները» գրքուկը (հեղ. Կ.Բ.Ն.): 52 էջ:
- Պոլսում, Կարապետ ՌԻթուշյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Մ. Ֆերեայի «Գաղտնիք հավատաքննության» աշխատության Ա հատորը: 367 էջ:
 - Բ հատոր, անդ, 1866 թ., 478 էջ:
 - Նույնը՝ անփոփոխ, երկու հատորները միասին, 1873 թ., 468 էջ:
- Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Սահակ Գուրգենյանի «Պանդուխտ կամ կյանք աղվանցվո» գեղարվեստական ստեղծագործությունը: 62 էջ:
- Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Նահապետ Ռուսինյանի «Ազգային հանգանակություն» գիրքը: Այն հրատարակության է պատրաստել Ռուբեն Քյուրքճյանը: 148 էջ:
 - Նույնն անփոփոխ՝ 1865 թ.:
 - 1864 թ. հուլիսի 26-ին Կալկաթայում՝ տեղի հայկական ազգային դիվանում (իմա՝ Հայ ազգային ընտրանիների խորհուրդ) Ռուսինյանի կարդացած ճառն է, որտեղ նա զարգացնում է համազգային հանգանակություն կատարելու միջոցով ինքնուրույն դրամագլուխ ունենալու և զրական-մշակութային գործունեությանը զարկ տալու համար այն օգտագործելու իր տեսակետը:
- Պետերբուրգում, Օլգա Պատկանյանի (իմա՝ Ռաֆայել Պատկանյանի կինը)՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Դասագիրք համաշխարհական պատմության (նախնի դար)» աշխատությունը: 233 էջ:

Տրված է հին աշխարհի պատմությունը, սկսած Ասորեստանից ու Բաբելոնից, մինչև Հռոմեական կայսրության անկումը:

-Պետերբուրգում արևելահայերեն հրատարակվում է «Վերջը կիմանաք»-ի (իմա՛. Գաբրիել Պատկանյան) «Հայոց ազգի պատմութենեն (Նիկոլ կամ հայոց ազգի կրած տարաբախտությունը Լեհաստանի մեջ)» աշխատությունը: 198 էջ:

-Պետերբուրգում, Հովհաննես Սահրադյանցի՝ իտալերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Հովսեփ (իմա՛. Ջուզեպպե) Վերդիի «Թրովատորե» (իմա՛. «Տրուբադուր») ողբերգությունը: 187 էջ: Վերջում (էջ 135-187) տրված է «Տրուբադուրի» նոտագրությունը:

-Պետերբուրգում աշխարհաբար հրատարակվում է Գաբրիել Պատկանյանի «Շավարշ երկրորդ կամ նորոգյալ Հայաստան» պատմական քանաստեղծությունը: 50 էջ:

-Պետերբուրգում, Եվա Տեր-Գրիգորյանցի՝ ֆրանսերենից կատարած աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է «Գերմանական ազգային առակներ Գրիմա աշխատությամբ հավաքված (Տետրակ Ա)» ժողովածուն: 54 էջ:

-Վիեննայում, ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն ազատ թարգմանությամբ, հրատարակվում է Էմիլ Սուվեստրի վիպակների ժողովածուն, «Էմիլ Սուվեստրի հատընտիր վեպերը» խորագրով: 188 էջ:

-Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Փիլիպոս Վասայանի «Առաջնորդ ճամբորդության Կոստանդնուպոլիսեն դեպ Եվրոպա, Դանուբի վրայեն» աշխատությունը: Վերջում, «Չորեքլեզվյան խոսակցություն» խորագրի ներքո, զետեղված է հանրամատչելի զրուցարան ֆրանսերեն, հայերեն, թուրքերեն և գերմաներեն լեզուներով: 211 էջ:

-Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Պողոս Հովնանյանի «Պատմություն Իտալիայի, ի սկզբանե մինչև մեր օրերը» աշխատությունը: 478 էջ:

-Շուշիում, Պերճ Պռոշյանի՝ ռուսերեն բնագրից կատարած թարգմանությամբ, հրատարակվում է Կարապետ Եզյանի «Ներքին կյանք հին Հայաստանի. պատմաբանական քննություն» աշխատությունը: 199 էջ:

Ընդգրկում է Հայաստանի պատմաաշխարհագրական տեսությունը՝ Հայկ-Բելի ժամանակաշրջանից, մինչև 5-րդ դարը: Որպես հեղինակ գրքի գրա նշված է Գ. Եզյան, որը սխալի արդյունք է:

-Թիֆլիսում հրատարակվում է «Նոր երգարան, ժողովածու գործնական երգերի» գիրքը: 150 էջ:

-Թիֆլիսում հրատարակվում է Խաչատուր Աբովյանի «Պարապ վախտի խաղալիք, պարապ մարդու տանու միտք» աշխատությունը: 137 էջ:

-Երուսաղեմում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Պետրոս Խաչատուրյանի «Սկզբունք ձայնական երաժշտության» աշխատությունը: 54 էջ:

-Մոսկվայում հրատարակվում է Ռափայել Պատկանյանի չափածո ստեղծագործությունների ժողովածուն, «Գամառ Քաթիպայի բանաստեղծությունքը» խորագրով: 131 էջ:

-Մոսկվայում գրաբար, Զարմայր Մսերյանի գրաբար առաջաբանով, հրատարակվում է Մսեր Մսերյանի չափածո ստեղծագործությունների ժողովածուն, «Խմբագիր չափածոյ բանից» խորագրով: 211 էջ:

Վերջում. (էջ 127-211), «Բացատրութիւնք նախակարգելոցն ստուգաբանութեանց» ընդհանուր խորագրի ներքո, տրված են այն բոլոր հայկական անունների (տեղանուններ, անձնանուններ և այլն) ստուգաբանությունները, որոնք կիրառել է Մսերյանն իր բանաստեղծություններում:

-Զմյուռնիայում, Տիգրան Գարագաշյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Էոժեն Սկրիպի «Վալերիա» կատակերգությունը: 48 էջ:

-Զմյուռնիայում, Տիգրան Գարագաշյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Մովսեսի «Լը Պարպուլիե» կատակերգությունը: 16 էջ:

-Արմաշում, Հովհաննես Մավյանի՝ իտալերեն բնագրից կատարած արևմտահայերեն ազատ թարգմանությամբ, հրատարակվում է Կեսար Քանդուի «Բարոյական դաստիարակություն» աշխատությունը: 225 էջ:

Նույնը՝ 1875 թ., 224 էջ և 1889 թ., 230 էջ:

Քանդուի աշխատության իտալական վերնագիրն է «Առաքինի և քաղաքակիրթ պատանի» (տե՛ս ներկա հատորը, 1861 թ.): Թարգմանիչը, որը բավականին ազատ է վարվել թարգմանության հետ, փոխել է նաև վերնագիրը:

1865

Հունվարի 2. «Մասիսը» (№ 673) արևմտահայերեն հրատարակում է Սրապիոն Թղյանի «Թատրոն Արևելյան» գրախոսականը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Թատրոնի՝ տվյալ ազգի կյանքում ունեցած դերի ու նշանակության մասին տեսական դատողություններից հետո, վերլուծված է Մ. Պեշիկթաշյանի «Մանդուխտ» ողբերգությունը:

Հունվար. «Մասյաց աղավնին» (№ 1), Գաբրիել Այվազովսկու՝ ռուսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ֆ. Տյուտչևի «Պապին ընդհանրականը» առակը, Մկրտիչ Պալյանի «Լոյս» գրաբար բանաստեղծությունը և արևմտահայերեն՝ «Առ ծիածանն Մասյաց» անստորագիր չափածո ստեղծագործությունը:

Հունվարի առաջին կես. «Արևմուտքը» (№ 10) արևմտահայերեն հրատարակում է Օ. Օրբելի (Իմա՛. Ստ. Ոսկանյան) «Արևմուտքի դադարելու շուրջը» և «Հոռոմ և Հայաստան» հրապարակախոսական հոդվածները կրող նամակ-հոդվածը: Վերջինս նույնությամբ արտատպված է Մ.Մամուրյանի «Հայկական նամականի»-ում (Զմյուռնիա, 1872, 275 էջ, նամակը):

Հունվարի 10. Սամոշույվարում (հետագայում՝ Կեռլա, Հունգարիա) ծնվեց հասարակական-մշակութային գործիչ, թարգմանիչ (հայերենից՝ հունգարերեն) դոկտոր Լասլո Գոպչան (Լասլո Հովակիմի Գոպչայան): Վախճ. 1933 թ. փետրվարի 12-ին, Բուդապեշտում:

«Բազմավեպ», 1923, № 9 («Ականավոր հունգարահայեր»): Magyar életrajzi lexikon, I, Budapest, 1967, 608 s.

Հունվարի 15. «Ծաղիկը» (№ 104) արևմտահայերեն սկսում է հրատարակել Մատթեոս Մամուրյանի «Հայկական նամականի» գրական-հրապարակախոսական նամակ-

հողվածաշարը: Շարունակվում է մինչև 1867 թ. հոկտեմբերի 1-ը (№ 144), մինչև 1867 թ. հուլիսի 19-ի նամակը:

Հունվար-փետրվար. «Հայկական աշխարհը» (№ 3-4), Խորեն Ստեփանեի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն փոխադրությամբ, հրատարակում է «Լևոն առաջին, հայկական թագավոր» պատմական դրաման (ավարտ՝ հաջորդ համարում), Իշխան Բագրատունու (իմա՝ Խորեն Ստեփանե) անգլերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ՝ «Բարեկամություն» բանաստեղծությունը և «Թիֆլիսեցի հայի», «Մեր ներքին գործերը» հոդվածը: Ի թիվս այլ հարցերի, քննված է հայկական թատրոնի, ինքնուրույն և թարգմանական ողբերգությունների և նրանց ընտրության հետ առնչվող խնդիրները:

Հունվարի 22. Թիֆլիսում ծնվեց երաժշտագետ-տեսաբան, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1934 թ.) Վասիլի (Բարսեղ) Դավթի Ղորղանյանը (Կորգանով): Վախճ. 1934 թ. մայիսի 24-ին, Երևանում:

«Գրական թերթ», 1934, № 15 («Վ.Դ.Ղորղանյան»): **Корганов В.**, Статьи, воспоминания..., стр. 3. **Л. Семенов**, Ереван, 1968, 572 стр. **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 250-251:

Հունվարի 30. «Մասիսը» (№ 677) արևմտահայերեն հրատարակում է Պողոս Պառնասյանի «Տրովատոր ողբերգություն» գրախոսականը: Գրախոսված է 1864 թ. Պետերբուրգում հրատարակված՝ հիշյալ վերնագիրը կրող գիրքը (տե՛ս ներկա հատորը):

Հունվարի երկրորդ կես. «Արևմուտքը» (№ 11) արևմտահայերեն հրատարակում է «Պարոն Չամուռճյան և տեր Միշոն» հրապարակախոսական հոդվածը (հեղ. Ստ. Ոսկանյան?), որը շարունակվում է հաջորդ համարում և մնում անավարտ: Ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակված է նաև «Վեր նայե՛ք» բանաստեղծությունը:

Հունվարի 30. «Մեղու Հայաստանին» (№ 4) արևելահայերեն հրատարակում է Քեթևան Տեր-Միքայելյանցի «Սաադի պարսկական բանաստեղծ» հոդվածը: Ավարտ՝ № 6 (փետրվարի 20): Վերջում հոդվածագիրը, պարսկերեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, զետեղել է հատվածներ «Գուլիստանից»:

Փետրվար. «Մասյաց աղավնին» (№ 2) գրաբար հրատարակում է Միքայել Պլարամպեկյանի «Յուդևորութիւն Յովհաննու Այվազովսկի» և Մկրտիչ Պալյանի «Ի մահն Երուանդայ Բ.» բանաստեղծությունները: Հրատարակված է նաև Ալեքսանդր

Պոյաճյանի «Արդյոք ով էր կամ ինչ էր Նախիջևանի երկպառակության պատճառը» արևմտահայերեն հոդվածը, ուղղված Մ. Նալբանդյանի դեմ, ի պաշտպանություն Այվազովսկու:

Փետրվար. Սեբաստիայում (Կենտր. Թուրքիա), Պողոս Խաչատուրյանի, Գաբրիել Տեր-Խաչատուրյանի, Հակոբ Համբարձումյանի և Սովսես Սուրադյանի ջանքերով, իր գոյությունն է սկսում կրթական-մշակութային «Անձնվեր ընկերությունը»: Վերջինիս նպատակն էր «Կիրակի օրերը ձրի դասախոսություն սարքել մեծերու համար, հոգալով նաև գիրք և գրենական պիտույքներ»: Նույն թվականի փետրվարի 21-ին, ընկերությունը բացում է իր կիրակնօրյա դպրոցը՝ 51 աշակերտներով, իսկ 1868 թ. իր թանգարանն ու գրադարանը «արժեքավոր հին ձեռագիրներով»: «Անձնվեր ընկերությունը» 1895 թ. դադարեց գոյություն ունենալ:

Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հ. Բ, Վիեննա, 1963, էջ 304-308:

Փետրվարի երկրորդ կես. «Արևմուտքը» (№ 12) արևմտահայերեն հրատարակում է Օ. Օրբելի (իմա՛. Ստ. Ոսկանյան) «Սրբազան Պապին կոնդակը» հրապարակախոսական հոդվածը:

Փետրվարի 16. Պերեճիքում (Կիլիկիա, Հար. Թուրքիա) ծնվեց աստվածաբան-բանասեր, հոդվածագիր (անգլերեն և հայերեն լեզուներով) Մանասե Կարապետի Փափազյանը: Վախճ. 1943 թ. հուլիսի 11-ին, Ֆրեզնոյում (ԱՄՆ):

«Հայաստանի կոչնակ», 1939, № 24 («Պատիվ մը և հովիվ մը»), 1943, № 29 («Մահգույժ»), № 31 («Վեր. Մ. Կ. Փափազյան», «Կենսագրական գիծեր»), № 33 («Վեր. Մ. Կ. Փափազյան»):

Փետրվարի 20. «Արշալույս արարատյանը» (№ 747), Մաղաքիա Հարությունյանի՝ հունարեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Բարոյական պատմություն տղայոց համար» պատմվածքը:

Փետրվարի 20. «Մեղու Հայաստանին» (№ 6) արևելահայերեն հրատարակում է Պերճ Պռոշյանի «Պատվելի խմբագիր» թատերախոսականը (բարձրացված է թատրոնի ժողովրդականության հարցը) և ռուսերեն բնագրից կատարված չափածո թարգմանությամբ, Ի. Կոնյուկի «Էջերը Պառնասի վրա» առակը (թարգմանիչը չի նշված):

Փետրվարի 25. Շապին-Գարահիսարում (Արևելյան Թուրքիա) ծնվեց հայ ժողովրդի ազգային հերոս, զորավար, հուշագիր, ռազմական գործի տեսաբան Անդրանիկը (Անդրանիկ Թորոսի Օզանյան): Վախճ. 1927 թ. օգոստոսի 30-ին, Չիքոյում (Ֆրեզնո, ԱՄՆ):

Անդրանիկի թաղումը տեղի է ունենում սեպտեմբերի 7-ին, Ֆրեզնոյի հայկական «Արարատ» գերեզմանատանը: 1928 թ. կեսերին զորավարի աճյունը փոխադրվում է Փարիզ և թաղվում Պեր-Լաշեզում: 1945 թ. նոյեմբերի 4-ին, կատարվում է Անդրանիկի հուշարձանի հանդիսավոր բացումը:

Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1876, 872 էջ:

Փետրվարի 26. «Մեղուն» (№ 259) արևմտահայերեն հրատարակում է Գարեգին Սրվանձտյանցի «Շինական հայոց կյանք ի Հայաստան (թշվառ նկարագրություն)» ազգագրական ուսումնասիրությունը: Ավարտ՝ № 270 (հունիսի 23):

Փետրվարի 27. «Մեղու Հայաստանին» (№ 7), Գևորգ Տեր-Աղաքսանդրյանցի՝ ռուսերեն բնագրից թիֆլիսահայ բարբառով կատարած թարգմանությամբ, հրատարակում է Ի. Կոիլովի «Շեն մեռիլ» առակը, իսկ 11-ում (մարտի 27)՝ Ս-ի (Սկրտիչ Սանահյանց ?) «Հրաժարական ողջույն» բանաստեղծությունը:

Փետրվարի 27. «Մասիսը» (№ 681) արևմտահայերեն հրատարակում է «Երևակ» հոդվածը:

Փետրվարի 28. «Պեգասյան թռչնիկը» (№ 29) արևմտահայերեն հրատարակում է «Արտավազդի» «...Խմբագիր» նամակ-հոդվածը, որտեղ քննված են ժամանակի գրական-հասարակական բարքերը:

Մարտի 5. Հյուսեյնիկ գյուղում (Խարբերդի գավառ, Արևել. Թուրքիա) իր գոյությունն է սկսում կրթական-թատերական «Հայկյան ընկերությունը»: Վերջինս իր միջոցներով կազմակերպում էր թատերական ներկայացումներ, խրախուսում գեղարվեստական գրականությունը: «Հայկյան ընկերությունը» գոյություն ունեցավ մինչև 1880-ական թվականները:

«Հանդես ամսօրյա», 1959, № 9-11 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Մարտ. «Բազմավեպը» (№ 3) արևմտահայերեն հրատարակում է Քերովբե Քուշներյանի «Նշդարի և Լուբիա» առակը:

Մարտի 5. Աստապատ գյուղում (Հին Նախիջևանի շրջան) ծնվեց հայ գրականության պատմաբան, լեզվաբան, բանագետ, պատմիչների բնագրերի քննական հրատարակիչ Մանուկ Խաչատուրի Աբեղյանը: Գիտության վաստակավոր գործիչ (1935 թ.), Հայկական ՍՍՀ ԳԱ իսկական անդամ (1943 թ.): Վախճ. 1944 թ. սեպտեմբերի 25-ին, Երևանում:

«Գիսավոր», «Վարսամ» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Հարությունյան Ս., Մանուկ Աբեղյան (կյանքն ու գործը), Երևան, 1970, 668 էջ:

Մարտի 8. Խարբերդում (Արևել. Թուրքիա) ծնվեց հայ գրական-մշակութային գործիչ, թարգմանիչ (հայերենից՝ անգլերեն), խմբագիր (ազգությամբ իտալացի) Հերբերտ Ալենը: Վախճ. 1911 թ. հունվարի 12-ին, Պոլսում:

1901 թ. Բոստոնում հիմնել և մինչև 1905 թ. խմբագրել է «Կոչնակ Հայաստանի» շաբաթաթերթը: 1907 թ. մինչև մահը Պոլսում խմբագրել է «Ավետաբեր» շաբաթաթերթը:

«Բյուզանդիոն», 1911, № 4333 («Մահագույժ»), № 4334 («Մը. Հերբերտ Ս. Ալեն»), № 4336 («Հուրարկավորություն»), № 4342 («Հերբերտ Ալենի՝ Վանա հիշատակներն»):

Մարտի 11. Վանում ծնվեց նշանավոր գեղանկարիչ, Հայկական ՍՍՀ ժողովրդական նկարիչ (1935 թ.) Փանոս Պողոսի Թեղեմեզյանը: Վախճ. 1941 թ. ապրիլի 30-ին, Երևանում:

Մարտիկյան Ե., Փանոս Թեղեմեզյան, Երևան, 1941, 103 էջ: **Հարությունյան Շ.**, Սովետական Հայաստանը 40 տարում (տարեգրություն), Երևան, 1960, էջ 256:

Մարտ. Պոլսում ծնվեց մշակութային գործիչ, լրագրող (հայերեն և ֆրանսերեն լեզուներով) Լևոն Մկրտչի Մկրտչյանը: Վախճ. 1932 թ. մարտի 29-ին, Ալեքսանդրիայում (Եգիպտոս):

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Առյուծ», «Թղթակից» կեղծանուններով:

«Հայաստանի կոչնակ», 1932, № 18 («Հայ ազգային կյանք»), № 21 («Լևոն Մկրտչյան»):

Մարտի 20. «Մասիսը» (№ 684) արևմտահայերեն հրատարակում է «Ազգային հանգանակություն» գրախոսականը: Գրախոսված է Նահապետ Ռուսինյանի՝ հիշյալ խորագիրը կրող աշխատությունը (տե՛ս ներկա հատորը, 1864 թ.):

Ապրիլի 11. Չաքաթալայում (Ադրբեջանական ՄՍՀ) ծնվեց բանաստեղծ, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն) Ալեքսանդր Հովսեփի Ծատուրյանը: Վախճ. 1917 թ. մարտի 31-ին, Թիֆլիսում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Սնար», «Սլաքյան», «Արծիվյան», «Շիտակյան», «Քաթիպա» կեղծանուններով:

Ինճիկյան Ա., Ծատուրյանի կյանքը, Երևան, 1940, 115 էջ: **Բեժանյան Ա.**, Ալեքսանդր Ծատուրյան, Երևան, 1960, 183 էջ: **Ֆելեքյան Հ.**, Ալեքսանդր Ծատուրյան, Երևան, 1965, 271 էջ:

Ապրիլի 15. «Ծաղիկը» (№ 110), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալֆրեդ դը Սյուսյեի «Առ Նինոն» և Ջորջ Բայրոնի «Ծնունդ սիրո» և «Հոգիս է մութ» բանաստեղծությունները:

Ապրիլի 16. Պոլսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, լրագրող (հայերեն, ֆրանսերեն և թուրքերեն լեզուներով), իմբագիր Նշան Գալֆայանը: Վախճ. 1933 թ. հունվարի 18-ին, Թեհրանում:

1900-ական թվականներին Հայկազուն Պեկյանի հետ համատեղ, Պոլսում իմբագրել է «Բեսիմլի գրա'աթ կայեթասի» (իմա՝ «Պատկերագարդ գյուղատնտեսական լրագիր») պարբերականը:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1910, էջ 318: **Պոտուրյան Մ.**, Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 448-449:

Ապրիլի 17. «Մասիսը» (№ 688) արևմտահայերեն հրատարակում է «Ազգային առաջադիմության գործը» հրապարակախոսական հոդվածը: Ավարտ՝ № 691 (մայիսի 8):

Մարտ-ապրիլ. «Հայկական աշխարհը» (№ 5-6), Ստեփաննոս Ստեփաննի և Իշխան Բագրատունու (իմա՝ երկուսն էլ՝ Խորեն Ստեփաննե) ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ալ. Պուշկինի «Memento mori» և Ալ. Պոլեժանի «Գերի Իրոկեզի երգ» բանաստեղծությունները: Հրատարակված է նաև Մ. Քոչարյանցի «Հայկական թատրոն Ալեքսանդրապոլում» գրախոսականը (գրախոսված է Հ. Կարենյանցի «Շուշանիկ» ողբերգությունը), Հարություն Ոստանիկի (իմա՝ Հովհաննես Քուչուրեկյան) «Հոգս» բանաստեղծությունը և Սողոմե Ստեփանյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, Գրիմ եղբայրների «Երկու ճանապարհներ» հեքիաթը: Իշխան Բագրատունու՝ գերմաներեն

բնագրից կատարած արևելահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակված է նաև Հ. Հայնեի «Նոքա և նա» բանաստեղծությունը:

Ապրիլի 17. «Մեղու Հայաստանին» (№ 13), Ռափայել Պատկանյանի գրական գործունեությանը տրված համառոտ բնութագրականից հետո, տպագրում է նրա «Վարդան Մամիկոնյանի երգը», «Օտարուհի և հայ երիտասարդ» և «Հայկ ու Լևոնին մոռանանք եղբարք» բանաստեղծությունները:

Ապրիլ. «Բազմավեպը» (№ 4), Սամվել Կայսերյանի (հետագայում՝ Գանթարյան)՝ իտալերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալեքսանդր Մանցոնիի մի պոեմը:

Մայիսի 1. «Մեղու Հայաստանին» (№ 15) արևելահայերեն հրատարակում է Սերովբե Ռեստենի (իմա՝ Պատկանյան) «Հեքիաթ երեխեքի համար» պոեմը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Մայիս. «Բազմավեպը» (№ 5) արևմտահայերեն հրատարակում է Քերովբե Քուշներյանի «Անտառ ու կրակ» առակը, որն ունի «Կռիլովա հետևությամբ» նշումը:

Մայիսի 1. Պոլսում ծնվեց աստվածաբան-բանասեր, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն և հայերենից՝ ֆրանսերեն) Էդուարդ Սիրունյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1887 թ. ապրիլի 10-ից, վախճ. 1937 թ. հունիսի 25-ին, Վենետիկում:

«Բազմավեպ», 1937, № 6-9 («Եդուարդ Սիրունյան»):

Մայիսի 8. «Մեղուն» (№ 266) արևելահայերեն հրատարակում է Աշուղ Կարապետի (իմա՝ Ռափայել Պատկանյան) «Հայ և հայություն» բանաստեղծությունը (տե՛ս Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1963, էջ 40-42):

Մայիսի 15. «Մեղու Հայաստանին» (№ 17) արևելահայերեն հրատարակում է «Բուրաստան» բանաստեղծությունը, իսկ № 18-ում (մայիսի 22), Հովհաննես Քուչուրեկյանցի՝ ֆրանսերեն (?) բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, «Ոտը (ստույգ անցք)» պատմվածքը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Մայիս. «Հայկական աշխարհը» (№ 7) արևելահայերեն հրատարակում է «Մատենագրություն» հոդվածը (գրախոսված է Ս. Շահազիզի «Լևոնի վիշտը և զանազան բանաստեղծություններ» գրքում):

տեղծություններ» ժողովածուն), արտատպված է Ստ. Նազարյանցի՝ «Հյուսիսափայլում» (1864 թ. № 12, տե՛ս ներկա հատորը) տպագրված կարծիքը այդ ժողովածվի մասին. գրախոսված է Ռ.Պատկանյանի «Գամառ-Գաթիպայի բանաստեղծությունքը» ժողովածուն և «Կոմսուհի Ռիբսուլա» վիպակի հայերեն թարգմանությունը (հեղ. Վիլհելմ-Հենրիխ Ռիլ, թարգ. Գր. Մկրտչյան), ինչպես նաև «Մեր ներքին գործեր» ամենամսյա տեսությունը (նկարագրված է Հ. Ալամդարյանի մահվան հերթական տարելիցի նշումը, բնութագրված են հայկական թատրոնի ներկայացումները):

Մայիսի 23. Ալեքսանդրապոլում, Հակոբ Կարենյանցի «Շուշանիկ» ողբերգության բեմադրությամբ, իր գործունեությունն է սկսում հրետանու սպա Ալեքսանդր Մելիք-Հայկազյանցի ջանքերով ու սատարմամբ ստեղծված «Քաղաքային հայկական թատրոնը»: 1928 թ. նոյեմբերի 1-ին թատրոնն ստանում է «Լենինականի Ա. Մոսվյանի անվան դրամատիկական թատրոն» անվանումը և վերցվում է պետության հովանավորության ներքո: ՀԱՄԿ(Բ)Կ ԿԿ-ի 1932 թ. ապրիլի 23-ի որոշմամբ («Գրական-գեղարվեստական կազմակերպությունները վերակառուցելու մասին»), թատրոնը հիմնավոր վերակառուցման է ենթարկվում: Տարբեր տարիներին այնտեղ հանդես են եկել Գևորգ Չմշկյանը, Պետրոս Ադամյանը, Ամիրան Մանդինյանը, Սիրանույշը, Ա. Ոսկանյանը, Արմեն Արմենյանը, Յ. Ամերիկյանը, Վ Փափազյանը և ուրիշներ: 1965 թ. սեպտեմբերի 24-ին հանդիսությամբ նշվել է Լենինականի Ալ. Մոսվյանի անվան Պետական դրամատիկական թատրոնի 100-ամյա հոբելյանը և նրան շնորհվել է Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշան: Թատրոնն իր գոյությունը շարունակում է առ այսօր:

Մադոյան Ռ., Թատրոնի ուղին, Երևան, 1967, 270 էջ: **Հարությունյան Բ.,** XIX-XX դարերի հայ թատրոնի տպագրություն, հ. 1 (1801-1900), Երևան, էջ 66-67:

Մայիս. «Մալյաց աղավնին» (№ 5), ռուսերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Մ. Լոմոնոսովի «Նմանողութիւն Յովբայ» բանաստեղծությունը և Խալիպյան ուսումնարանի աշակերտների՝ «Ի հանդես յիսներեակ յոբելինի Լազարեան ճեմարանին արևելեան լեզուաց» գրաբար չափածո ստեղծագործությունը:

Մայիսի 27. Կարինում ծնվեց պատմաբան-բանասեր, լրագրող Հակոբ Պողոսի Քոսյանը: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ էր 1887 թ. հոկտեմբերի 2-ից, վախճ. 1937 թ. ապրիլի 27-ին, Վիեննայում:

«Հանդես ամսօրյա», 1937, № 11-12 («Հակոբ Քոսյան»): Աճեմյան Թ., Կենսագրական ակնարկ Բարսեղյանի վախճանած Վիեննական Միսիթարյան միաբաններու, Պոլիս, 1946, էջ 15:

Մայիս. Ադաբազարում (Արևմտ. Թուրքիա) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, լրագրող, բանասեր Սերովբե Պուրմայանը: Վախճ. 1949 թ. նոյեմբերի 30-ին, Պոլսում:

«Գեղջուկ տերտեր» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո (Ա հատոր), Կահիրե, 1937, էջ 959-966: «Հայաստանի կոչնակ», 1950, № 5 («Մահ Սերովբե ավագ քահ. Պուրմայանի»):

Մայիսի 29. «Մասիսը» (№ 694) արևմտահայերեն հրատարակում է «Մեչուխեչային կատաղությունը» հոդվածը:

Հունիսի 5. «Մասիսը» (№ 695) արևմտահայերեն հրատարակում է Պողոս Պառնասյանի «Դանտե և Իտալիա» հոդվածը:

Հունիսի 5. «Մեղու Հայաստանին» (№ 20) գրաբար հրատարակում է Հովհաննես Քուչուբեկյանցի «Կեցու հայութիւն» բանաստեղծությունը, իսկ հաջորդ համարում (№ 21, հունիսի 12) արևելահայերեն, «Հովիվ և վարձկան» մուխամազը:

Հունիսի 26. «Արշալույս արարատյանը» (№ 756) գրաբար հրատարակում է «Աղաղակ սրտի ընդդեմ թիր բաղդի» երգիծական բանաստեղծությունը:

Հունիսի 26. «Մեղու Հայաստանին» (№ 23) արևելահայերեն հրատարակում է «Մարդագայլ և մանուկ» պոեմը և Սերովբե Ռեստենի (իմա՝ Պատկանյան) «Արեգակ և հայ աղջիկ» բանաստեղծությունը:

Հունիս. «Բազմավեպը» (№ 6) գրաբար հրատարակում է Հակոբ Թոխաթեցու «Տաղ վասն կենաց մարդկան» բանաստեղծությունը, որի քառյակների առաջին տառերը կազմում են հայկական այբուբենը: Հրատարակված է նաև Քերովբե Քուչներյանի «Գորտք խնդրեն յԱրմազդայ ինքեանց թագաւոր» գրաբար առակը:

Հունիս-հուլիս. «Հայկական աշխարհը» (№ 8-9) արևելահայերեն հրատարակում է Ս. Ստեփանեի (իմա՝ Խորեն Ստեփանե) «Ազգայնություն» հոդվածը, նույնի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ Ժան Մասեի «Մի կտոր հացի պատմություն» վիպակը (ավարտ՝ 1867 թ. № 1-ում), Գևորգ Քալանթարյանցի «Մահ (հանգուցյալ Հովհաննես Սայաթնյանցի անմոռանալի հիշատակին նվեր)»

պոեմը, Իշխան Բագրատունու (Իմա՛. Խորեն Ստեփանե) բնագրերից կատարած թարգմանությամբ՝ բանաստեղծություններ Ֆ. Տյուտչևից (?) («Տրտում գիշեր»), Ն. Օզարևից («Հեղինեն նորան չէր սիրում...»), Ի. Տխորժևակուց («Անմխիթարին»), Ն. Վորմսից («Հայրենի ամայի տեղից») և Հայնեից («Եթե ունիս հարստություն...»): «Հայկական մատենագրություն» խորագիրը կրող գրախոսականում երկրորդ անգամ գրախոսված է Ռ. Պատկանյան բանաստեղծությունների ժողովածուն (տե՛ս 1865 թ. մայիս, № 7) և Ստ. Պալասանյանի «Պատմություն հայ գրականության» աշխատությունը: Վերջինս բացասաբար է գնահատված:

Հուլիսի 10. «Մեղու Հայաստանին» (№ 25) արևելահայերեն հրատարակում է Միքայել Նալբանդյանի «Նամակ առ խմբագիրը» (խնդրում է հրատարակել իր ուղարկած «մի համառոտ բանը») և «Հայտարարություն» (տեղեկացնում է, որ աշխարհագրական քարտեզի համար կատարված բաժանորդագրությունը չեղյալ է հայտարարվում) գործերը (տե՛ս **Ինճիկյան Ա.**, Միքայել Նալբանդյանի ... տարեգրությունը, Երևան, 1954, էջ 297-298): Հրատարակված է նաև Միքայել Պատկանյանցի «Ալամդարյան Հարություն վարդապետի հիշատակը» արևելահայերեն հոդվածը:

Հուլիս. «Բազմավեպը» (№ 7), Վիչեն Հոգոցյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակում է մի հատված Ֆրանսուա Շատոբրիանի «Մարտիրոսը» վիպակից: Գերմաներեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Մորթմանի «Բևեռաքանդակ կամ սեպագիր արձանք ի յԱյրարատյան աշխարհի» հոդվածը և լեհերեն բնագրից չափածո թարգմանությամբ՝ Ֆոմա Պադուրայի «Երգ Խազախի» գրաբար բանաստեղծությունը:

Հուլիսի 10. «Արշալույս արարատյանը» (№ 757) գրաբար հրատարակում է «Հակոբ հայ ըմբիշ» գեղարվեստական հատվածը: Հրատարակության է պատրաստել Թագուհի Աղանուրյանը և առաջաբանում տեղեկացնում է, որ այն ինքը հանել է «ի գրոց լեզու հայրենի զպատառիկ ինչ ազգային վիպի, հասեալ առ իս ի պատմական հաւատարիմ աւանդից»:

Հուլիսի 10. «Մասիսը» (№ 700) արևմտահայերեն հրատարակում է Պողոս Պառնասյանի «Բանասիրականք» գրախոսականը: Գրախոսված է Պ. Կարտիեի «Ուղևորություն Աբդուլ-Ազիզ կայսեր ի Կոստանդնուպոլսո Եգիպտոս» գիրքը և դրական է գնահատված:

Հովիտի 17. «Մեղու Հայաստանին» (№ 26), ռուսերեն բնագրից կատարված արևելահայերեն համառոտ թարգմանությամբ (թարգմանիչ՝ Մ.Ա.), հրատարակում է Վ. Բելինսկու «Русская литература в 1845 году» ուսումնասիրությունը, «Բանասիրական» խորագրով:

Օգոստոսի 7. «Մեղու Հայաստանին» (№ 29) արևելահայերեն հրատարակում է Մեյադի «Առբախտն անագորույն» բանաստեղծությունը, իսկ № 31-ում (օգոստոսի 21)՝ «Պատասխանի «Հովիվ և վարձկան» մուխամմազի» չափածո ստեղծագործությունը (տե՛ս հունիսի 5, № 20):

Օգոստոս. «Բազմավեպը» (№ 8) գրաբար հրատարակում է Առաքել Բաղիշեցու «Երգ ի սուրբ Աստուածածինն և ի Գաբրիել հրեշտակապետն, օրինակեալ ի վարդն և ի պլպուլն» բանաստեղծությունը և Քերովբե Քուշներյանի «Մատղաշ ծառը» արևմտահայերեն առակը:

Օգոստոսի 7. Գաղատայում (Անկյուրա, Արևել, Թուրքիա) ծնվեց աստվածաբան, բանասեր, լրագրող Ստեփաննոս Սարըյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1887 թ. ապրիլի 10-ից, եղեռնամահ՝ 1915 թ., Տրապիզոնի մերձակայքում:

1898-1899 թթ. խմբագրել է «Բազմավեպ» ամսագիրը:

Մխիթարյան հոբելյան, Վենետիկ, 1901, էջ 226: «Հանդես ամսօրյա», 1920, № 1-3 («Հայ կաթոլիկ կղերին նահատակները»), «Բազմավեպ», 1919, № 10 («Միաբանության նահատակները 1915-ի շարիին»), 1965, № 4-7 («Ստեփան վարդապետ Սարըյան»):

Օգոստոսի 21. «Արշալույս արարատյանը» (№ 760) գրաբար հրատարակում է «Ներածություն բարոյական» գեղագիտական-փիլիսոփայական տրակտատը, որին հաջորդում է «Քերթած բարոյական» բանաստեղծությունը:

Օգոստոս-սեպտեմբեր. «Հայկական աշխարհը» (№ 10-11) հրատարակում է Ս.Ս.-ի (իմա՛. Խորեն Ստեփանե) «Ժողովրդի նշանակությունը ազգային գործերի մեջ» արևելահայերեն հոդվածը, Հովհաննես Քուչուրեկյանի՝ ռուսերեն բնագրից կատարած չափածո թարգմանությամբ, Ի. Կոզլովի «Գերի հույն բանտի մեջ» բանաստեղծությունը և Ոստանիկի (իմա՛. Հովհ. Քուչուրեկյան) «Անբախտ էր», «Հետամնացություն» բանաստեղծությունները: Իշխան Բագրատունու (իմա՛. Խորեն Ստեփանե)՝ բնագրերից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակվում են Ֆ. Տյուտչևի (?) «Բարի խորհուրդ», «Մտավոր մշակին», Հ. Հայնեի «Իմ վերաս քեզ շատ են խոսած» և

Լերմոնտովի նամությամբ գրված «Բաժանվեցանք մենք...» բանաստեղծությունները:

Սեպտեմբերի 1. Պոլսում ծնվեց լրագրող, արձակագիր (մասնագիտությամբ՝ իրավաբան-օրենսգետ), հասարակական գործիչ Սարգիս Գարագոչը: Վախճ. 1944 թ. մարտի 8-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1912, էջ 338: «Ընդարձակ տարեգիրք ազգային հիվանդանոցի», Պոլիս, 1944, էջ 403-412:

Սեպտեմբերի 4. «Արշալույս արարատյանը» (№ 761) գրաբար հրատարակում է «Տրտունջ բանասիրի ուրումն, շարադրեալ վաղնջուց ժամանակաց» բանաստեղծությունը:

Սեպտեմբերի 4. «Մասիսը» (№ 705) արևմտահայերեն սկսում է հրատարակել Թովմաս Թերզյանի «Բանաստեղծություն» ուսումնասիրությունը: Ավարտ՝ № 712 (հոկտեմբերի 23):

Սեպտեմբերի 10. Թիֆլիսում ծնվեց մանկավարժ, գրական-մշակութային գործիչ, թարգմանիչ (լեհերենից, ռուսերենից՝ հայերեն), գիտության վաստակավոր գործիչ (1945 թ.) Ստեփան Դանիելի Լիսիցյանը: Վախճ. 1947 թ. հունվարի 4-ին, Երևանում:

Հարությունյան Շ., Հայ ժողովրդի պատմության համառոտ ժամանակագրություն (1801-1917), Երևան, 1955, թջ 140: Նույնի՝ Սովետական Հայաստանը 40 տարում, Երևան, 1960, էջ 303: **Լիսիցյան Ս.**, Ծաղկաքաղ (կազմեց Հ. Ղաջոյան), Երևան, 1969, 235 էջ: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 31

Սեպտեմբերի 11. «Ժամանակ» հանդեսը (№ 70), Եղիազար Մուրադյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ. հրատարակում է Անդրե Շենյեի «Կոյսն ի բանտի» բանաստեղծությունը:

Սեպտեմբերի 11. «Մեղու Հայաստանին» (№ 34), Սերովբե Ավշարյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Կ. Ստանյուկովիչի «Փոքրիկ Յունգա» պատմվածքը, իսկ № 36-ում (սեպտեմբերի 25)՝ «Նորատիպ մատյան» անստորագիր գրախոսականը (գրախոսված է Ստ. Պալասանյանցի «Պատմություն հայոց գրականության» աշխատությունը):

Սեպտեմբերի 15. Թիֆլիսում, Պետրոս Շանշյանցի ջանքերով, իր գոյությունն է սկսում «Հայկական ազգային դպրոցը», որը հավասարեցվում էր գիմնազիայի: Ավանդվում էին ռուսերեն, լատիներեն, ֆրանսերեն, հայերեն, վրացերեն և պարսկերեն լեզուներ,

կրոն, ընդհանուր պատմություն, ընդհանուր աշխարհագրություն, մաթեմատիկա, բնական գիտություններ, վայելչագրություն և նկարչություն:

«Մեղու Հայաստանի», 1865, № 30 («Ազգային»): **Սանթրոպյան Մ.**, Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, 1964, 447 էջ:

Սեպտեմբերի 18. «Արշալույս արարատյանը» (№ 762), Մաղաքիա Հարությունյանի՝ հունարեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Բարոյական տղայոց համար» մանկավարժական-գեղարվեստական հոդվածը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Սեպտեմբերի 20. «Պեգասյան թռչնիկը» (№ 37) արևմտահայերեն հրատարակում է Թովմաս Թերզյանի «Առավոտ» բանաստեղծությունը:

Սեպտեմբերի 21. Մարզվանում (Հյուս. Թուրքիա) ծնվեց գրական-մշակութային գործիչ, հոդվածագիր, բանաստեղծ, արձակագիր Ավետիս Կյուլպենկի Կյուլպենկյանը: Վախճ. 1944 թ. դեկտեմբերի 4-ին, Նյու Յորքում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Սովեր», «Ավո Պոնտացի», «Ավո Հայկազն», «Արամ» կեղծանուններով:

«Հայաստանի կոչնակ», 1935, № 46 («Հոբելիական հանդես»), 1945, № 2 («Պրոֆ. Ավետիս Կյուլպենկյան»), № 11 («Խոսք առ պրոֆ. Ավետիս Կյուլպենկյան»):

Սեպտեմբերի 21. Շամախիում (Ադրբեջանական ՍՍՀ), Դանիել Շահնազարյանցի (Տոսպեցի) նախաձեռնությամբ, Կարապետ Լալայանցի, Պետրոս Մաղաթյանցի, Մովսես Ներսիսյանցի և Գևորգ Թումանյանցի հոգաբարձությամբ, իր գոյությունն է սկսում «Շամախու ազգային հոգևոր դպրոցը», որն ուներ մինչև 300 աշակերտ: Դպրոցը, ուր ավանդվում էին հայոց և ռուսաց լեզուներ, կրոն, ազգային պատմություն և աշխարհագրություն, ուներ վեց ուսուցիչ, մեկ քարտուղար:

«Մեղու Հայաստանի», 1865, № 39 («Հարգո խմբագիր»), 1866, № 3 («Ձայն ի Շամախվո»), № 32 («Կանոնադրություն Շամախվո դպրոցի»), 1868, № 13 («Ազգային ուսումնարանը Շամախում», 1870, № 18 («Հարգո խմբագիր»):

Սեպտեմբերի 30. «Պեգասյան թռչնիկը» (№ 38) արևմտահայերեն հրատարակում է Թովմաս Թերզյանի «Աստղունք» բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 1. Խարբերդում (Արևել. Թուրքիա) իր գոյությունն է սկսում մշակութային «Սմբատյան» ընկերությունը, որի նպատակն էր «ազգային առաջադիմությունն ու լուսավորությունը»: Ընկերությունը դադարեց գոյություն ունենալ 1890-ական թթ.:

«Հանդես ամսօրյա», 1959, № 5-8 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Հոկտեմբեր. Երևանում, Գ. Չմշկյանի, Մ. Ամրիկյանի և Ս. Մանդինյանի ուժերով, քաղաքի Հոգևոր թեմական դպրոցի ուսուցիչներ Նահապետ Աթանասյանի, Սիմոն Հովակիմյանի, Էմին Տեր-Գրիգորյանցի և այլոց աջակցությամբ, թեմական դպրոցի դահլիճում տրված՝ Հ. Կարենյանցի «Շուշանիկ» ողբերգության բեմադրությամբ, իր գործունեությունն է սկսում Երևանի առաջին հայկական թատրոնը: Իր գոյությունը (վերջին շրջանում՝ որոշ ընդհատումներով) թատրոնը շարունակում է մինչև 1912 թ.:

Հարությունյան Շ., Հայ ժողովրդի պատմության համառոտ ժամանակագրություն (1801-1917), Երևան, 1955, էջ 140-141: **Հակոբյան Թ.**, Երևանի պատմությունը (1801-1879 թթ.), գիրք Ա, Երևան, 1959, էջ 629-634: Գիրք Բ (1879-1917 թթ.), անդ, 1963, էջ 456-474:

Հոկտեմբերի 1. Պոլսի Հիսար Տիպի թաղամասում իր գոյությունն է սկսում «Մեզպուրյան աղջկաց վարժարանը»: 1879 թ. վարժարանը փոխադրվում է Իսկյուտար, մասնագիտանում միայն աղջիկների դաստիարակության գործում: Փակվում է 1896-ին: Վերաբացվում է 1900 թ. հոկտեմբերին, Հովնան Փալազաշյանի և նրա երկու քույրերի ջանքերով: Ավանդվում էր հայերեն, թուրքերեն և ֆրանսերեն լեզուներ, կրոն, կարուձև, դաշնամուր: «Մեզպուրյան աղջկաց վարժարանը» 1930-ական թվականներին դեռ գոյություն ուներ:

«Ընդարձակ օրացույց», Պոլիս, 1901, էջ 63-64: **Թեոդիկ**, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1926, էջ 638:

Հոկտեմբերի 2. «Մեղու Հայաստանին» (№ 37) արևելահայերեն հրատարակում է Սեյադի (Իմա՛. Պետրոս Մաղաթյանց) «Մահ արծվո» առակը, իսկ № 41-ում՝ Հովհաննես Քուչուբեկյանցի «Քոստո մարդ» բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 10. «Պեզասյան թռչնիկը» (№ 39) արևմտահայերեն հրատարակում է Պետրոս Ադամյանի «Իդձք» բանաստեղծությունը (տե՛ս **Ադամյան Պ.**, Երկեր, Երևան, 1956, էջ 131-132):

Հոկտեմբեր. «Բազմավեպը» (№ 10) գրաբար հրատարակում է Ստեփան Յազըճյանի «Մեծ է և կարի մեծ...» հրապարակախոսական հոդվածը:

Հոկտեմբերի 17. Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական) ծնվեց արձակագիր, թարգմանիչ (ռուսերենից և գերմաներենից՝ հայերեն), լրագրող Տիրուհի Մկրտչի Կոստանյանը: Վախճ. 1951 թ. Թիֆլիսում:

«Տիկին Մարգարիտ» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Բազմավեպ», 1904, № 4 («Տիկին Տիրուհի Կոստանյանց»): **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 128-129:

Հոկտեմբերի 23. Շամախիում ծնվեց ականավոր դերասան, թատերական գործի կազմակերպիչ, Հայկական հանրապետության ժողովրդական դերասան (1925 թ.) Հովհաննես Հարությունի Աբելյանը: Վախճ. 1936 թ. հուլիսի 1-ին, Երևանում:

Մարդանյան Ֆ., Հովհաննես Աբելյան (կենսագրական տեղեկություններ), Թիֆլիս, 1907, 14 էջ: **Մելիքսեթյան Ս.**, Հովհաննես Աբելյան, Երևան, 1954, 295 էջ: Հովհաննես Աբելյան (կազմեցին Բ. Հովակիմյան և Ս. Հարդենյան), Երևան, 1965, 200 էջ:

Նոյեմբերի 1. «Պեգասյան թռչնիկը» (№ 41) արևմտահայերեն հրատարակում է Պերճի (իմա. Գրիգոր Չիլինկիրյան) «Սիրուն թռչնիկ» հրապարակախոսական հոդվածը, նվիրված Ստեփան Ոսկանյանին: Հրատարակված է նաև Թովմաս Թերգյանի «Երկյուղ» բանաստեղծությունը:

Նոյեմբերի 13. «Արշալույս արարատյանը» (№ 766), Մաղաքիա Հարությունյանի՝ հունարեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, տպագրում է «Հովհաննեսին ու Մարիամին պատմությունը» պատմվածքը:

Նոյեմբերի 13. «Մասիսը» (№ 715) արևմտահայերեն հրատարակում է Մարկոս Աղաբեկյանի «Եղբայր խմբագիր» հոդվածը: Բանավիճելով Մսեր Մսերյանցի՝ Լազարյան Ճեմարանին նվիրված փառաբանական գրաբար հոդվածի հետ (տե՛ս «Արշալույս արարատյան» 1865, № 764, հոկտեմբերի 16. «Ի պատիւ յոբելեան հանդիսի Լազարեան Ճեմարանի արևելեան լեզուաց. Բան»), Աղաբեկյանը գտնում է, որ այդ հաստատությունը շեղվել է իր հիմնական ուղուց և չի զբաղվում հայագետներ, մշակութային հայ գործիչներ, բանասերներ, հայ գրողներ ու արձակագիրներ աճեցնելով:

Նոյեմբերի 25. «Պեգասյան թռչնիկը» (№ 43) արևմտահայերեն հրատարակում է Գրիգոր Ալեաթճյանի (?) «Վերդի» (իմա՛. Ջուզեպպե Վերդի) հոդվածը՝ նվիրված վերջինիս կյանքին ու գործին, իսկ հաջորդ համարում (№ 45, դեկտեմբերի 10)՝ «Երկու ֆոսֆորիները» խորագիրը կրող հոդվածում վերլուծված է Վերդիի հիշյալ օպերան: № 43-ում հրատարակված է նաև Թովմաս Թերգյանի «Նմանություն» բանաստեղծությունը:

Նոյեմբեր. «Բազմավեպը» (№ 11) գրաբար տպագրում է Թովմաս Թերգյանի «Հողմն» բանաստեղծությունը:

Նոյեմբերի 27. «Արշալույս արարատյանը» (№ 767) արտատպում է Ստեփաննոս Նազարյանցի ստորագրությունը կրող «Ազգային թշվառություն» արևելահայերեն հոդվածը, որն, ինչպես հայտնի է, պատկանում է Մ. Նալբանդյանի գրչին (տե՛ս **Մ.Նալբանդյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1940, էջ 103-115, 466-468): Ավարտ՝ № 769 (դեկտեմբերի 25):

Նոյեմբերի 30. «Պեգասյան թռչնիկը» (№ 44) արևմտահայերեն հրատարակում է Թովմաս Թերզյանի «Երգ սիրո» բանաստեղծությունը: Ունի «Այս երգը պարսիկ տաղի մը հետևությամբ գրված է» ծանոթությունը:

Դեկտեմբերի 11. «Մասիսը» (№ 719) արևմտահայերեն հրատարակում է Պողոս Պառնասյանի «Հարմակ և Աշխեն. ողբերգություն պարոն Սրապիոն Հեքիմյանի» գրախոսականը:

Դեկտեմբերի 18. «Մեղու Հայաստանին» (№ 48) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Պալասանյանցի «Պարոն Ստեփանե» խորագիրը կրող ընդդիմախոսականը, որտեղ հեղինակը չի ընդունում Ստեփանեի՝ «Պատմություն հայոց գրականության» աշխատության առթիվ արված դիտողությունները (տե՛ս նշվ. պարբերականը, № 34, սեպտեմբերի 11):

Դեկտեմբերի 20. «Պեգասյան թռչնիկը» (№ 46) արևմտահայերեն հրատարակում է Մկրտիչ Աճեմյանի «Համառոտ նկարագրություն արդի ընկերության մարդոց» հոդվածը: Տպագրված է նաև մի նամակ Զմյուռնիայից (ունի «Զմյուռնիայեն» խորագիրը), որտեղ բացասաբար է բնութագրված Ս. Ոսկանյան-գործիչը:

Դեկտեմբերի 25. «Արշալույս արարատյանը» (№ 769), Հովհաննես Ճեզայիրցյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակում է Լըկուվյեի «Գերեզմանատուն ի գիւղօրէնս» բանաստեղծությունը:

Դեկտեմբեր. «Հայկական աշխարհը» (№ 12), Խորեն Ստեփանեի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ֆրանցիսկ Դյուկրոյի «Հայկական գրականություն» հոդվածը:

Գրախոսված է Ամբրոսիոս Գալֆայանի «Բառգիրք հայերենից-ֆրանսերեն» գիրքը և նույնի՝ Ֆենելոնի «Տելեմաքի» ֆրանսերեն բնագրից կատարած հայերեն թարգմանությունը, որոնք դրական են գնահատված: Այս հենքի վրա տրված է

հայ մատենագրության ընդհանուր բնութագրությունը, սկսած 5-րդ դարից մինչև 18-րդ դարի վերջը:

-Տիգրանակերտում (Թուրքիա) ծնվեց լրագրող (հայերեն և անգլերեն լեզուներով), խմբագիր, թարգմանիչ (հայերենից՝ անգլերեն) Հայկ Էկինյանը: Վախճ. 1919 թ. մարտի 25-ին, Ֆրեզնոյում (ԱՄՆ):

1888 թ. Ջերզի Սիտիում (ԱՄՆ) հիմնել և խմբագրել է «Արեգակ» ազգային և քաղաքական շաբաթաթերթը: 1889 թ. Նյու Յորքում հիմնում և մինչև 1890 թ. խմբագրում է «Սուրհանդակ» ամսաթերթը: 1890 թ. Նյու Յորքում, Խաչատուր Օսկանյանի հետ, հիմնում և մինչև 1892 թ. խմբագրում են «Ազատություն» ամսաթերթը: 1897-99 թթ. Նյու Յորքում խմբագրել է «Տիգրիս» շաբաթաթերթը: 1902 թ. Ֆրեզնոյում հիմնել և մինչև 1912 թ. խմբագրել է «Քաղաքացի» շաբաթաթերթը (1909-ից՝ «Նոր սերունդ»): 1914 թ. Ֆրեզնոյում հիմնել և մինչև իր կյանքի վերջը խմբագրել է «Նոր կյանք» շաբաթաթերթը:

Սուշեղ եպիսկոպոս, «Ամերիկահայ տարեցույցը», Բոստոն, 1912, էջ 268: **Թեոդիկ**, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1921, էջ 326:

-Աշտարակում, Պերճ Պոռշյանցի նախաձեռնությամբ, իր գոյությունն է սկսում տեղի արական դպրոցը: Այն պաշտոնապես ճանաչվում է 1868 թ. սեպտեմբերին, ունենում է դպրոցական հոգաբարձուների խումբ (Իսում Շահազիզյանց, Հովհաննես Հարությունյանց, Հովհաննես Ազատյանց և Ալեքսան Մակարյանց) և մինչև 80 աշակերտ: Ավանդվում էին հայոց պատմություն, հայոց և ռուսաց լեզուներ, թվաբանություն, քերականություն, կրոն:

«Մեղու Հայաստանի», 1869, № 44 («Արգո խմբագիր»):

-(?) Զաքարթալայում (Ադրբեջանական ՍՍՀ), Հովհաննես քահանա Ատովմյանցի նախաձեռնությամբ և Միքայել Քոչարյանի տեսչությամբ, իր գոյությունն է սկսում մեկդասյա ծխական դպրոցը «Սուրբ Գևորգ» անվամբ: 1870 թ. մայիսի 31-ից, դպրոցն ունենում է իր սեփական գրադարանը, շուրջ 600 հատոր գրքով (150 ո. արժողությամբ), որտեղից կարող էին օգտվել նաև քաղաքացիները: «Սուրբ Գևորգ» ծխական դպրոցը և գրադարանը 1918 թ. դադարեցին գոյություն ունենալ:

«Մեղու Հայաստանի», 1870, № 15 («Հարգո խմբագիր»), 1871 թ. 28 («Հարգո խմբագիր»): «Մշակ» 1919, № 37 («Զաքարթալան անցյալում»)...

-(?) Քղի գյուղում (նաև՝ Կեղի, Արևել. Թուրքիա) ծնվեց լեզվաբան-բանասեր, թարգմանիչ (ֆրանսերենից, անգլերենից, գերմաներենից՝ հայերեն) Մուշեղ Վայկունին: Վախճ. 1929 թ. հոկտեմբերի 16-ին, Սան-Ֆրանցիսկոյում (ԱՄՆ):

«Հայաստանի կոչնակ», 1926, № 49 («Դոկտոր Մ. Վայկունիի մահը»):

-(?) Սեբաստիայում (Կենտր. Թուրքիա) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, լրագրող, բանաստեղծ Միհրան Տերտերյանը: Վախճ. 1929 թ. նոյեմբերի 27-ին, Սիլիստրեյում (Բուլղարիա):

«Տերեանտեր» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Հայաստանի կոչնակ», 1930, № 1 («Մահ Միհրան Տերտերյանի»):

-Պարտիզակում (Արևմտ. Թուրքիա) ծնվեց հրապարակագիր, թարգմանիչ (ֆրանսերենից, գերմաներենից, անգլերենից՝ հայերեն), խմբագիր Երվանդ Տեր-Անդրեասյանը: Վախճ. 1945 թ. ապրիլի 26-ին, Լիոնում:

1908 թ. Պոլսում, Վ. Փափագյանի և Մ. Պապոնյանի հետ խմբագրել է «Հանրագիտակ» շաբաթաթերթը, իսկ 1909 թ.՝ «Օրագիր» օրաթերթը (Հ. Տեր-Հակոբյանի և Գ. Թուղլաճյանի հետ): Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Ետան», «Փարիզիեն», «X», «Ահուրամագվա» կեղծանուններով:

Ընդարձակ տարեգիրք Ազգային հիվանդանոցի, Պոլիս, 1946, էջ 268-271:

-Խեյբան գյուղում (Մշո գավառ) ծնվեց լրագրող, գրական-մշակութային գործիչ, արձակագիր Գեղամ Կարապետի Տեր-Կարապետյանը՝ Մշո Գեղամը: Վախճ. 1918 թ. նոյեմբերի 28-ին, Պոլսում:

«Գեղամ», «Տատրակ», «Ասողիկ» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Տեր-Կարապետյան Գ., Տարոնի աշխարհ (պատկերներ ու պատմվածքներ), Փարիզ, 1931, 340 էջ: «Հանդես ամսօրյա», 1933, № 1-2 («Գեղամ Տեր-Կարապետյան»): «Երիտասարդ գիտաշխատող (Երևանի պետական համալսարան)», 1969, էջ 126-137 («Գեղամ Տեր-Կարապետյան»):

-Թամարգայում (Հյուս. Թուրքիա) ծնվեց մշակութային գործիչ, թարգմանիչ (ֆրանսերենից, անգլերենից՝ թուրքերեն և հայերեն), լրագրող (հայերեն և թուրքերեն լեզուներով) Վարդան Թովմասյանը: Վախճ. 1935 թ. ապրիլի 2-ին, Պոլսում:

«Նոր լուր», 1935, № 5084 («Մահ Վարդան Թովմասյանի»), № 5085 («Մամլո ողբացյալ վաստակավորը»):

-Խարբերում ծնվեց հասարակական կյանքի տեսաբան, խմբագիր, թարգմանիչ (անգլերենից՝ հայերեն), արձակագիր Միքայել Մինասյանը: Վախճ. 1936 թ. օգոստոսի 3-ին, Բրուկլինում (ԱՄՆ):

1904-1908 թթ. Բոստոնում խմբագրել է «Լույս» ամսագիրը, 1916-1919 թթ.՝ «Ազգ» օրաթերթը:

«Բազմավեպ», 1934, № 4-5 («Մ. Մինասյան»), «Հայաստանի կոչնակ», 1936, № 33 («Պրոֆ. Մ. Մինասյանի մահը»), № 36 («Պրոֆ. Միքայել Մինասյանի հիշատակին»):

-Սեբաստիայում (Կենտր. Թուրքիա) ծնվեց լրագրող (հայերեն և թուրքերեն լեզուներով), երաժշտագետ, խմբագիր Ավետիս Կյոզուրյանը (հոգևորական աստիճան ստանալուց հետո՝ Զարմայր քահանա): Վախճ. 1955 թ.:

1910-1915 թթ. Պոլսում խմբագրել է «Տաճար» պարբերականը, իսկ 1913-1915 թթ.՝ նաև մանկական համանուն ամսագիր:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 195:

-Նուխիում (Ադրբեջանական ՍՍՀ) ծնվեց արձակագիր, հուշագիր, թարգմանիչ (ֆրանսերենից և ռուսերենից՝ հայերեն) Սիմոն Շխյանցը: Վախճ. 1947 թ., Թիֆլիսում:

Հայ մշակույթի օրրանը (ներսիսյանցիների հուշերը), Երևան, 1971, էջ 264-265:

-Պոլսում ծնվեց լրագրող, արձակագիր, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Մաքրուհի Չալյանը: Վախճ. 1891 թ. մարտի 18-ին, իր ծննդավայրում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Ֆիմի» կեղծանունով:

«Արևելք», 1891, № 2153 («Տիկին Մաքրուհի Չալյան»):

-Շուշիում (Լեռնային Ղարաբաղ) ծնվեց բանասեր, գրականագետ, թարգմանիչ (ֆրանսերենից և ռուսերենից՝ հայերեն), լրագրող (հայերեն և ռուսերեն լեզուներով) Եղիշե Միքայելի Մաղաթյանը: Վախճ. 1918 թ.:

«Վանգ» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում, իսկ «Փավստոս Բյուզանդ» մենագրությունը (Վիեննա, 1890 թ.) ստորագրել է «Մ.Ե.» ձևով:

«Լրաբեր հասարակական գիտությունների», 1973, № 6 («Եղիշե Մաղաթյանի և Գրիգոր Խալաթյանցի նամակագրությունից»), **ՉԱԳԱԹ**, Եղիշե Մաղաթյանի ֆոնդ:

-Վանում ծնվեց լրագրող, հուշագիր Մանվել Միրախորյանը: Վախճ. 1935 թ.:

«Տարեցույց ազգային հիվանդանոցի», Պոլիս, 1935, էջ 397:

-Վենետիկում գրաբար հրատարակվում է Էդուարդ Հյուրմյուզյանի «Վրոյրի Որմզդանաց առակացն գիրք» ժողովածվի առաջին հատորը: 60 էջ: Երկրորդ հատոր, նույն թվականին, 92 էջ: Հեղինակը սեփական ընտրությամբ չափածոյի է վերածել Մխիթար Գոշի, Եզովպոսի (առաջին հատորում) և Նասրեդդին Խոջայի (երկրորդ հատորում) առակները:

-Վենետիկում գրաբար հրատարակվում է Էդուարդ Հյուրմյուզյանի «Աստուածաբանութիւն բարոյական, համառօտեալ ի Ալփոնսոսէ Լիկուրեայ» աշխատության Ա հատորը: 486 էջ: Բ հատոր, նույն թվականին, 563 էջ:

-Վենետիկում գրաբար հրատարակվում է Կիրակոս Գանձակեցու «Համառօտ պատմութիւն ի սրբոյն Գրիգորէ ցաւուրս իւր» աշխատությունը: Բնագրագիտական աշխատանքները, գրաբար առաջաբանը, ծանոթագրություններն ու անվանացանկը Ղևոնդ Ալիշանի: Ժ+265 էջ («Շարք մատենագրութեանց նախնեաց», հ.ԼԳ):

-Վենետիկում գրաբար, բանասիրական առաջաբանով ու ծանոթագրություններով, վերահրատարակվում է Մովսես Խորենացու ստեղծագործությունների ժողովածուն «Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ Մատենագրութիւնք» խորագրով: («Շարք մատենագրութեանց նախնեաց», հ.ԻԷ): 640 էջ: